Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

681

Հանճարոյն

Մանկանց

845
Ծ-95

[illegible]

1876

84-93
Շ-95

ՇՏԵՄԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Թարգմանութիւն գաղղիերէնից։

Աշխատասիրութեամբ

ՆԱՏԱԼԵԱՅԻ ԽԱՍՊԱՐԵԱՆՑ

Շուշեցւոյ։

ԵԼԻՍԱՒԵՏՊՕԼ

1876.

84-93
Շ-95

ՃՏԵՄԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Թարգմանութիւն գաղղիերէնից

Աշխատասիրութեամբ

ՆԱՏԱԼԵԱՅԻ ԽԱՍԳԱԲԵԱՆՑ

1001
1913
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ

Ի 1876 ամի

ԵԼԻՍԱԻԵՏՊՈԼ

Ի Տպարանի Փեօդորովի և Թարումեանցի:

632

Дозволено Цензурою, Тифлисъ. 27 Октября 1874 г.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՁԻՆ

ԷՓԵՄԻԱՆ (մտանելով Յուլիանէի մօտ)

Ողջոյն քեզ, սիրելի բարեկամ, ես շատ ուրախ եմ որ այսօր կարող եմ կէսօրից յետոյ ժամանակ անցկացնել ձեզ հետ։

ՅՈՒԼԻԱՆԷ

Շատ շնորհակալ եմ, բարեկամ։ Դուռը թակում են, անպատճառ Շարլոտան պիտի լինի, նա ինձ ասել էր թէ գալու է այս իրիկուն։

ՇԱՐԼՈՏՏԱ

Բարի լոյս օրիորդներ։ Ես . . . . , . . ես շատ տխուր եմ Յուլիանէ։

ՅՈՒԼԻԱՆԷ

Ի՞նչ է պատահել քեզ, սիրելի աչքերդ ի՞նչի են կարմրած։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես բոլոր օրը լաց եմ էլել. այժմ էլ լաց լինելու ցանկութիւն ունիմ։ Եթէ չ՛ես նեղանալ, իմ տրտմութեան պատճառը ասեմ։

Պարոն Օրդէմօնդը իւրան եղբօր հետ եկել էր այսօր մեզ մօտ նախաճաշիկ ուտելու։ Նոքա մեծ դահլիճումը սպասում էին իմ հօրը, որը որ միւս սենեակում նամակներ էր կարդում։ Երբ որ իմացի թէ Պ. Օրդէմօնդը մեր տանն է շտապեցի գնալ նորա մօտ. ես շատ սիրում եմ

նորա հետ խօսել. որովհետև նա միշտ հաստատումէր որ ես խելօք եմ, պարկեշտ եմ, սիրելի եմ և ուրիշ շատ այդպիսի սիրուն բաներ էր ասում: Երբ որ գնացի դուան մօտ լսեցի որ ինձանից են խօսում: Ականջնեցի նրանց խօսակցութիւնը լսելու: Ինչպիսի դաւաճան մարդ է էլի: Ես սիրելիդ իմ. չեմ կարող զսպել ինձ լաց լինելուց, երբ որ միտս եմ բերում նորա ասած խօսքերը: —«Շարլոտտան մին չար հոգի է ասումէր նա որը որ ժանտախտ պիտի դառնայ հասարակութեան մէջ.» Ասաց, որ ես հպարտ եմ ինչպէս սատանայ, տնազանող եմ, ուրիշի վերայ ծիծաղող եմ, և թէ առաւել լաւ կ՚լինէր որ ես տգէտ մնացած լինէի, քան թէ կրթութիւն ստացած՝ բայց լի ունայնամտութեամբ: Ասել թէ ժանտ ա խ տ ե՛մ. լսումե՞ս, իմ աչքի լոյս. սրանից արդեօ՞ք վատ բան կ՚լինի աշխարհումս: Յետոյ քեզանից խօսք բացարաւ, ասաց թէ նա շատ սիրելի է, սակաւ է խօսում. բայց ինչ որ խօսումէ պատշաճ տեղն է խօսում, ես շատ կ՚ցանկանայի նորապէս որդի ունենալ: Նա շատ բաներ էր կամենում էլի ասել. բայց երբ որ լսեց որ հայրս գալիս է լռեց: Երբ որ այս բաները լսեցի, գնացի սենեակս որ լաց լինեմ: Ինձ կանչեցին որ գնամ նախաճաշիկ ուտեմ, բայց ես պատճառելով թէ գլուխս ցաւումէ, չ՚գնացի տեսնելու այն վատ մարդոյ երեսը. որը որ խօսումէ մի կերպ և մտածում ուրիշ կերպ: Ճաշից յետոյ մօրիցս իրաւունք խնդրեցի գալու քեզ մօտ և պատմելու այս ամեն բաները և խնդրելու քեզ թէ ինչպէ՞ս ես անում որ իմաստութիւն ես սովորում առանց ժանտախտ դառնալու:

ՅՈՒԼԻԱՆԷ

Ճշմարիտ չեմ իմանում ինչ ասեմ քեզ, սիրելի, բայց

ինչպէս կարծումեմ ես իմ խելօքութեան պատճառը իմ դաստիարակուհին է. նա միշտ կրկնումէ թէ երկու տեսակ իմաստութիւն կայ. մինը որ մեզ անում է զզուելի և ատելի ամենի առաջ. իսկ միւսը՝ մեզ անում է սիրելի պարկեշտ. հանճարեղ և մեր ծանօթ մարդկերանցը ստիպումէ լաւ խօսելու մեր վերայ: Երբ որ միտքս դէպի չարն եմ տանում, նա ինձ ուղղումէ

ՇԱՐԼՈՏՏԱ

Չ՛լինի թէ իմ մէջ չար հոգի կայ: Ի՞նչես մտածում այս մասին, խնդրեմ ասա: Կամենում չ՞ես արդեօք ինձ պատասխանել, դորանով ինձ չ՚ես նեղացնել, մանաւանդ թէ քեզ շատ կ՚սիրեմ այդ մասին:

ՅՈՒԼԻԱՆԷ

Որովհետև դու ցանկանումես ես կասեմ իմ կարծիքս. դու լաւ հոգի չ՚ես, բայց այդ քո մեղը չէ, քեզ ոչ ով չէ սովորացրել եթէ երկու տեսակ իմաստութիւն կայ, և ես հաւաստի եմ որ քեզ կ՚ուղղես. եթէ ասեն ինչպէս պիտի անես դորա համար:

ՇԱՐԼՈՏՏԱ

Դու շատ բարի ես ինձ արդարացնելուդ համար: Ես քեզ հաւատացնումեմ որ ինձ կ՚ուղղեմ. բայց վախումեմ չ՚կարողանամ յաջողութիւն ունենալ այդ բանումը: Եթէ քեզ նեղութիւն չ՚լինի՝ խնդրեմ քո դաստիարակուհուն որ ինձ սովորացնէ ինչպէս պիտի ինձ ուղղեմ: Ես շատ շնորհակալ կ՚լինիմ քեզ:

ՅՈՒԼԻԱՆԷ

Ես հաստատ իմանումեմ որ նա այդ բանը կ՚անէ, մե-

Ծաւ ուրախութեամբ: Նա ո՛չ երբէք այնպէս ուրախ չէ լինում. քան եթէ երբ որ գտանում է այնպիսի դեռահաս աղջկերք. որոնք յօժարութեամբ ցանկանումեն լինել հանճարաւոր և առաքինի: Երէկն իմ բարեկամներից մէկ քանիսին խօսք է տուել, որպէս զի գան նորա մօտ հաւագուլին շաբաթը երեք անգամ կէսօրերից յետոյ. մեր մտքերը զուարճալի եղանակաւ հրահանգելու համար: Ես կ'ասեմ նրան որ դու էլ ես կամենում լինել մեր ընկերութենից: Համաձայնում ես սիրելի:

ՇԱՐԼՕՏՏԱ

Ի բոլոր սրտէ, սիրելի բարեկամ: Բայց խնդրեմ ինձ իմացնէք երբ էք կամենում սկսել ուսումը:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Իսկոյն կ'յայտնեմ քեզ: Մեզ մնում է միայն գնալ Տիկին Դուրրէլի իմ դաստիարակուհուս սենեակը. որը որ մեզ սպասում է և մենք այն տեղ անպատճառ կ'հանդիպենք մեր բարեկամներից մէկ քանիսին:

ԵՐԿՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒ՛Ն

ԱՌԱՋԻ՛Ն ՕՐ

ՏԻԿԻ՛Ն ԴՈՒՐՐԷԼԸ, ՅՈՒԼԻԱ՛ՆԷ՛Ն ՇԱՐԼՕՏՏԱ՛Ն ԷՒԳԷ՛ՆԻԱ՛Ն ՄԱՐԻԱՄԸ ԵՒ ԱԴԷԼԸ:

ԷՒԳԷ՛ՆԻԱ

Տիկին Յուլիանէն ինձ ասել է թէ դուք շատ հրաշալի պատմութիւններ էք իմանում, և որովհետև ես շատ սիրումեմ խնդրեմ նրանցից մէկը ասէք:

ՏԻԿԻ՛Ն

Ճշմարիտ է, սիրելի ես շատ վէպեր և պատմութիւններ եմ իմանում որքան կ'կամենաս կ'պատմեմ:

ԷՒԳԷ՛ՆԻԱ

Եթէ այդպէս է. խնդրեմ մին առասպել և մին պատմութիւն ասէք որ գտնեմ թէ որն է նրանցից առաւել զուարճալին:

ՏԻԿԻ՛Ն

Ուրախութեամբ ես քեզ մին փոքրիկ պատմութիւն կ'տամ կարդալու և դու անգիր կ'սովորես: Բայց այժմ կամենումեմ ձեզ մին փոքրիկ առասպել պատմել. ականջ դրէք:

ՇԷՐԻ ԹԱԳԱՒՈՐԱԶՆ

Երբեւէ ժամանակաւ մին այնպիսի առաքինի թագաւոր. որուն իրա հպատակները Բ ա ր ի Թ ա գ ա ւ ո ր էին կոչում: Մին օր երբ որ նա որսի էր գնացել, մին սպիտակամորթ ճակար (кроликъ) որին որ շները ուզումէին պատառել, ընկաւ նորա գիրկը: Թագաւորը շոյոմեց այդ փոքրիկ ճագարը և ասաց: " Որովհետև սա իմ պաշտպանութեան ներքոյ ընկաւ, վասնորոյ չեմ կամենում ոչ մին վնաս հասցնել:,, Տարաւ նա նրան իրա հետ իւր պալատնքը մին սենեակ նշանակեց նորա համար և լաւ խոտ տուաւ ուտելու: Գիշերը, երբ որ նա միայնակ պառկած էր իրա անկողնոյ մէջ, մին գեղեցկադէմ տիկին երևաց նրան. նա ամենևին թանկագին զգեստներ չ'ունէր հագած, բայց նորա հանդերձները ձիւնի պէս սպիտակ էին և միայն մին վարդի պսակ ունէր գլխին: Բ ա ր ի Թ ա գ ա ւ ո ր ը շատ զարմացած մնաց այն կնկան տեսնելուն համար. քանզի դռները փակած էին, և չ'էր իմանում թէ ինչպէս է մտել այն տեղ:

— " Ես Կանդիտ դիցանոյշն (1) եմ, ասաց այն անծանօթ կինը, ես անց էի կենում անտառովը երբ որ դու որս էիր անում. կամեցայ իմանալ թէ արդեօ՞ք այնպէս ես, ինչպէս բոլոր աշխարհը ասումէ: Այդ պատճառաւ մին փոքր ճագարի կերպարանք ընդունեցի և ապաւինեցի իմ կեանքը քո գրկի մէջ. որովհետև իմանումեմ որ նոքա, որոնք կարեկցութիւն են ունենում անասնոց վերայ. էլ

(1) фея

առաւել կարեկից են լինում մարդկանց վերայ, և եթէ դու մերժելու լինէիր ինձ քո օգնութիւնը, այն ժամանակը ես անկասկած կ'իմանայի որ դու մին չարագործ մարդ ես: Այժմ եկել եմ քեզ շնորհակալութիւն անելու այն լաւութեան համար, որ դու ինձ արեցիր. և հաւատացնելու որ միշտ քո՝ բարեկամն պիտի լինիմ: Ինչ որ ցանկանում ես, խնդրիր, ես պատրաստ եմ կատարելու:

—Տիկին, ասաց թագաւորը, որովհետև դու մին դիցանոյշ ես. ուրեմն պիտի իմանաս, ինչ որ ցանկանում եմ. ես միայն մի որդի ունիմ, որին որ շատ սիրում եմ, և այդ մասին նորան Շէրի (1) թագաւորազն են ասում, եթէ դու որևիցէ բարութիւն կամենում ես ինձ համար, իմ որդուս բարեկամն եղիր միշտ:

Մեծաւ ուրախութեամբ, պատասխանեց Կանդիտը, ես կարող եմ քո որդուն անել կամ ամենից գեղեցիկը, կամ հարուստը կամ զօրաւոր թագաւորը, ընտրի՛ր այս երեքից մինն:

—Այդ քո ասածներից ոչ մէկը չեմ ցանկանում, ասաց թագաւորը, այն ժամանակը միայն երախտապարտ կ'լինիմ, երբ որ իմ որդուս ամենից ընտիր թագաւորը շինես. ի՞նչ օգուտ ունենալ շատ հարստութիւն, գեղեցկութիւն և աշխարհիս բոլոր թագաւորութիւնները, եթէ նա չարագործ լինի: Դու լաւ իմանում ես որ նա թշուառ կ'լինի և առաքինութիւնը միայն կարող է նրան բաւականութիւն տալ:

„Ըստ ամենայնի իրաւունք ունիս, ասաց Կանդիտը, բայց իմ ձեռումն չէ նորան բարեպաշտ անձն շինել, հակառակ նրա կամացը, պէտք է որ ինքն էլ աշխատի ա-

(1) սիրեցեալ

ռաքինի լինելու: Միայն այս կարող եմ խոստանալ որ նրան լաւ խորհուրդներ տամ, ուղղեմ նրա սխալանքը, յանդիմանեմ նրա յանցանքները և պատժեմ եթէ կամենալու չ՚լինի իրան ուղղացնել:,,

Բարի Թագաւորը շատ բաւական եղաւ այս խոստմունքից և մեռաւ մին քանի ժամանակից յետոյ: Շերի Թագաւորազնը շատ սուգ արաւ իրան հօր մահուան վերայ, քանզի ի բոլոր սրտէ սիրում էր նրան: Մին օր երբոր պառկած էր նա իրա մահճի մէջ, Կանդիտը երեւաց և ասաց նրան. ,,Ես խոստացի հօրդ ձեր բարեկամն լինելու և իմ խօսքըս կատարելու համար եկել եմ քեզ մին պարգև տալու:,, Միևնոյն ժամանակումը դրաւ Շերիի մատումը մին ոսկի մատանի և ասաց. ,,խնամքով պահիր այդ մատանին, դա անդամանդեայ մատանիներից առաւել թանկագին է, և ամենայն անգամ երբոր մին վատ բան գործելու լինիս, մատդ պիտի ծակէ, բայց եթէ չ՚մտիկ արած նրա պատճառացրած ցաւին, համառ մնալու լինիս քո չարութեան մէջ, կ՚կորցնես իմ բարեկամութիւնը և ես քո թշնամին կ՚լինիմ այն ժամանակ:,,

Այս խօսքերը ասելուց յետոյ Կանդիտը աներևութացաւ թողնելով Թագաւորազնին շատ զարմացած: Մին քանի ժամանակ Շերին այնպէս իմաստուն էր, որ մատանին ամենևին ծակում չ՚էր, և այդ բանը նրան այնպէս բաւականութիւն էր տալիս, որ նրան սկսեցին երջանիկ էլ անուանել. բայց աւաղ այդ վիճակը շուտով փոխուեց:

Շերին ստացել էր իրա դաստիարակութիւնը մին դայեակից, որը որ ապականել էր նորա բնաւորութիւնը մանկութեան ժամանակ. երբ որ սա մին բան էր կամենում ունենալ, միայն լաց էր լինում, բարկանում էր և ոտները տափումն էր տալիս, այդ կնիկը կատարում էր, ինչ որ նա պահանջում էր, էստուրով նրան կամակոր շինեց: Նորա դայեակը առաւօտից մինչև իրիկուն ասում էր թէ նա մին օր թագաւոր պիտի դառնայ և թէ թագաւորները միշտ երջանիկ են լինում, որովհետև բոլոր մարդիկը պիտի նրանց հնազանդեն, յարգեն և չ՚են կարող արգելք դառնալ բնաւ նրանց սրտի բաղձանացը: Երբոր Շերին չափահաս դառաւ, լա՛ւ ճանաչեց որ գոռոզ, հպարտ և բարկացոտ մարդուց առաւել անպիտան բան չ՚կայ: Ուստի մին քանի ջանք արաւ իրան ուղղացնելու, բայց նա այդ ամեն պակասութիւններից շատ վատ բնաւորութիւն էր վեր առել, և ձեզ արդէն յայտնի է որ մին վատ բնաւորութիւն ոչնչացնելը շատ դժուար բան է: Այդ ամենևին նրանից չ՚էր որ նա բընականաբար չար սիրտ ունէր: Նա լաց էր լինում բարկութենից. երբ որ մին վատ բան էր գործում, ասում էր թէ շատ թշուառ եմ իմ բարկութեանս և հպարտութեանս համար և եթէ իմ մանկութեան ժամանակ ինձ լաւ ուղղութիւն տուած լինէին. այսօրուայ օրը այսքան նեղութիւն չ՚էի ունենալ: Յաճախ մատանին ծակում էր մատը, երբեմն դադարում էր չարութիւն անելուց, երբեմն էլ շարունակում էր: Զարմանալին այն էր, որ քիչ էր ծակում մատանին, երբ որ փոքր յանցանք էր գործում, բայց երբ որ չարագործ դառաւ, արիւնը սկըսեց վազել մատիցը: Վերջապէս այս բանը նրա համբերութիւնը տարաւ և կամենալով իրա սրտի ուզածին պէս չարագործ դառնալ՝ հանեց մատանին մատից: Նա զինքը շատ երջանիկ համարեց, երբոր տեսաւ ինքը ազատուած մատանիի վերքերից: Այնուհետև ամենայն տե-

տակ չարութեանց անձնատուր եղաւ, այնպէս որ ոչ ոք չէր կարողանում նրան դիմանալ։

Մի օր երբ Թագաւորազնը զբօսանքի էր գնացել, տեսաւ մին այնպիսի չքնաղագեղ հովւական աղջիկ, որ մտքումը որոշեց նրա հետ ամուսնանալու։ Նրա անունը Զէլի էր և այնպէս խոհեմ էր, ինչպէս որ գեղեցիկ։ Շէրին կարծում էր թէ Զէլին իրան շատ երջանիկ պիտի համարէ Թագուհի դառնալովը. բայց այդ աղջիկը մեծ համարձակութեամբ ասաց. „Տէր, ես մին ողորմելի հովւական աղջիկ եմ և ամենևին էլ հարստութիւն չունիմ, բայց և այնպէս չեմ ցանկանալ քեզ հետ պսակուել երբէք։„

—Մի՞թէ ես քեզ անհաճոյ եմ թւում, հարցրաւ Շէրին, մին քիչ վրդովուած։

„Ո՛չ ասաց Զէլին, դու այնպէս ես թւում ինձ, ինչպէս որ կաս, այսինքն՝ շատ գեղեցիկ. բայց ի՞նչի են պէտք ինձ քո գեղեցկութիւնը, քո հարստութիւնը, քո թանկագին զգեստները, հոյակապ կառքերդ, որոնք դու պիտի ինձ տաս, եթէ այն չար գործքերը, որոնք պիտի անես ամենայն օր ինձ պիտի ստիպեն քեզ ատելու։

Շէրին այս բանիս վերայ շատ բարկացաւ և հրամայեց իրա պալատականներին բռնութեամբ տանել նրան իրա ապարանքը։ Շէրին ամենայն օր մտածում էր այն իրա անպատուութեան վերայ, որով վարուեց այն աղջիկը իրան հետ։

Թագաւորազնի սիրելիների մէջ գտնվում էր նոյնպէս նրա ծիծեղբայրը, որուն վերայ ամենևին վստահացած էր Շէրին. այս մարդը, որը որ շատ ցած բնաւորութեան տէր էր, շողոքորթում էր իրա տիրոջ կիրքերը և չար խորհուրդներ էր տալիս նրան։ Մին օր տեսաւ սա որ Շէ-

րին շատ տրտմած էր և հարցրաւ տխրութեան պատճառը։ Թագաւորազնը պատասխանեց թէ էլ չէ կարող դիմանալ Զէլիի արած անարգանացը, և թէ մտքումը վճռել է ուղղել գինքը այն սխալանքներից, պատճառը որ առաքինութիւնը միայն կարող է քաղցրացնել և հաճոյ ցոյց տալ իրան նրա աչքումը։

—Մի՞թէ կարելի է այդչափ բարութիւն ունենալ ասաց այն չար մարդը, կամենալով հնազանդել մին հովւական աղջկայ կամացը։ Մի՛տդ բեր որ դու Թագաւոր ես և թէ շատ ամօթ է նեղացնել քեզի մին փոքր աղջկայ համար։ Հրամայիր ցամաք հաց և ջուր տալ նրան, արգելի՛ր մին բանդի մէջ, և եթէ էլի շարունակելու լինի իրա ընդդիմութիւնը, չարաչար տանջանքներով սպանել տուր, որպէս զի խրատ լինի միւսներին թէ ի՞նչ կընշանակէ քո կամաց չ՚հնազանդուիլը։

„Մի՞թէ անպատիւ չեմ դառնալ, ասաց Շէրին, կամենալով սպանել մին անմեղի, պատճառը որ Զէլին ոչ մին յանցանքով մեղաւոր չէ։„

—Ամենևին անմեղ չէ՛ կարող լինել նա, ով որ մերժելու լինի քո կամքը կատարել, պատասխանեց նրա խորհրդակիցը։

Շէրին մտքումը դրաւ հենց միւնոյն իրիկունը գնալ Զէլիի սենեակը և բռնութեամբ վարվել նորա հետ, եթէ մերժելու լինի իրա հետ պսակուիլ։

Յիրաւի գնաց նա այն աղջկայ սենեակը և շատ զարմացած մնաց նրան այնտեղ չ՚գտնելուն համար, քանզի սենեակի բանալիքը իրա գրպանումը ունէր։ Նա սաստկի բարկութեան մէջ մտաւ և երդում կերաւ որ իսկոյն իրա վրէժը հանէ այն մարդկանցից, որոնցից կասկածում էր թէ օգնական են եղած Զէլիին այնտեղից փախչե-

լուն: Նրա խորհրդակիցները լսելով որ նա այնպէս է խօսում, իրանց մէջումը որոշեցին օգուտ քաղել նրա բարկութենից, կորցնելով մին իշխանի, որը որ Շէրիին դաստիարակն էր եղած: Այս պատուաւոր իշխանն երբեմն համարձակութիւն էր ունեցել յայտնելու թագաւորազնին իրա սխալանքները, որովհետև իրա որդւոյ պէս սիրում էր նրան: Սկզբումը Շէրին շնորհակալ էր լինում նրանից, բայց յետոյ ձանձրացաւ նրանից հակառակ խօսքեր լսելուն համար և վերջապէս հրամայեց նրան հեռանալ իրա պալատիցը: Այս միջոցումը նրա խորհրդակիցները վախենալով որ չլինի թէ թագաւորազնը կրկին յետ դարձնէ պալատը իրա ուսուցչին, ասացին Շէրիին թէ Սուլիմանը (այսպէս էր այն պատուելի մարդու անունը) պարծենալով սաել է թէ ինքն է տուել Զէլլին ազատութիւն: Երեք մարդ կաշառ կերած հաստատեցին այս բանը և Շէրին բարկութենից այլայլուած հրամայեց իրա ծիծեռօրը զինուորներ ուղարկել Սուլիմանի ետնէն. որպէս զի շղթաներով կապած բերեն նրան իբրև մին չարագործ: Այս հրամանը տալուց յետոյ. առանձնացաւ նա իրան սենեակը բայց հազիւ թէ մտաւ այնտեղ, երկիրը շարժեց, որոտմունքի ձայն լսուեցաւ և Կանդիտը երևեցաւ նրա աչքերին: „Ես խոստացի քո հօրը, ասաց դիցանոյշը բարկութեամբ, քեզ լաւ խորհուրդներ տալու և պատժելու քեզ եթէ մերժելու լինէիր նոնք կատարելու, ժամանակը հասել է արդէն որ իմ խոստմունքը կատարեմ: Դատապարտում եմ քեզ որ նմանուիս այն գազաններին, որոնց հակամիտութիւնները վեր ես առել: Դու նմանում ես առիւծի քո բարկութեամբը, գայլի երկրամոլութեամբդ, օձի քո չարաչար վարվելովդ այնպիսի մարդուն հետ, որը որ քո երկրորդ հայրն էր դա-

ռել, և ցուլի քո գազանութեամբդ ուրեմն վերառ քո նոր կերպարանքի մէջ այդ ամէն գազանների բնաւորութիւնը:„

Հազիւ թէ դիցանոյշը վերջացրուց այս խօսքերը, Շէրին տեսաւ որ ինքը այնպէս է, ինչպէս որ ցանկացել էր Կանդիտը: Նա մին առիւծի գլուխ ունէր. ցուլի եղջիւրներ, գայլի ոտներ և իժի պոչ: Միևնոյն ժամանակումը տեսաւ որ ինքը անտառի միջումը մին ականակիտ աղբիւրի մօտ է գտնվում, որտեղ որ տեսնում էր իրա սարսափելի կերպարանքը և լսում էր մին ձայն, որը որ ասում էր. „Մտադրութեամբ մտիկ արա այն վճակի վերայ, որին մէջ դու մտար քո չարագործութեամբդ: Քո հոգին աւելի սարսափելի է քան թէ քո մարմինը:„ Շէրին ճանաչեց Կանդիտի ձայնը և կատաղութեամբ շուռ եկաւ որ նրա վերայ յարձակուի և փառատէ, բայց նա ոչովին չտեսաւ և միևնոյն ձայնը ասաց: „Ես ծիծաղում եմ քո տկարութեան և չարութեան վերայ եւ հպարտութիւնը պատժելու համար կամենում եմ քո հպատակների ձեռքը մատնել քեզ:„

Շէրին կարծեց թէ հեռանալով այս աղբիւրից կարող էր իրա թշուառութեանց մին հնար գտնել, գոնեա աչքերի առաջին չի ունենալ իրա այլանդակութիւնը և տգեղութիւնը: Ուստի դուրս եկաւ այն անտառիցը, բայց հազիւ թէ մին քանի քայլ արաւ, յանկարծ ընկաւ մին փոսի մէջ, որը որ շինել էին արջեր բռնելու համար: Այս միջոցումը որսորդները, որոնք թաքս էին կացել ծառերի տակ ցածր եկին և շղթաներով կապած տարին Շէրիին իրանց մայրաքաղաքը: Ճանապարհին փոխանակ ճանաչելու որ այս պատուհասը իրան բարկութեան համար է, անիծում էր դիցանոյշին, կծոտում էր շղթաները և զինքը կատաղութեան էր տալիս: Երբ որ նա մօ-

տացաւ քաղաքիցը, մին ուրախութեան ձայն լսեց, և որսորդները հարցնելով թէ ինչ նոր բան է եղել քաղաքումը, պատասխանեցին թէ Շէրին, որը որ միայն իրա զուարճութիւնը գտանում էր իրա հպատակների տանջանքների մէջ՝ կայծակահար սպանուել է իրան սենեակի մէջ․ (այսպէս էին կարծում նրանք) և աստուածները չ'կարողանալով համբերել նրա չափազանց կատաղութեանը, ազատեցին երկիրը նրա ձեռից։ Զորս մեծ իշխան, որոնք հաղորդակից էին նրա չարագործութեանը, կամեցան շահվել, բաժանելով թագաւորութիւնը իրանց մէջ, բայց ժողովուրդը, որը որ իմանում էր թէ նրանց չար խորհուրդներն էին միանգամայն ապականել թագաւորողին, նրանց սպանել տուաւ և յանձնեց թագը այն պատուելի մարդուն որին որ չարագործ Շէրին կամենում էր սպանել։ Սուլէյմանը արժան է թագաւոր դառնալու և մենք տօնախմբում ենք այդ օրը, ինչպէս թագաւորութեան փրկութեան օրը, որովհետև նա առաքինի է և կհաստատէ վերստին մեր մէջ խաղաղութիւն և առատութիւն։ ,,Շէրին հոգւոց հանեց կատաղութենից լսելով այս խօսքերը, բայց ես առաւել բորբոքուեց նրա բարկութիւնը, երբ որ հասաւ մեծ հրապարակը, որը որ պալատի դէմ առ դէմ էր գտանվում։ Նա տեսաւ այնտեղ Սուլէյմանին թագաւորական գահի վերայ բազմած և ժողովուրդը երկարատև կեանք էր ցանկանում նրա համար․ որպէս զի իրա նախորդի արած չարութեանը դարման կարողանայ անել։ Սուլէյմանը նշանացի արաւ որ լռեն ամենքը, և ասաց ժողովրդին․ ,,Ընդունում եմ այն թագը, որը որ դուք ինձ յանձնեցիք, բայց Շէրինի համար եմ պահպանում, նա ամենևին մեռած չ'է, ինչպէս որ դուք կարծում էք, մին դիցանոյշ յայտնել է ինձ

այդ բանը, և շատ կարելի է որ դուք մին օր տեսնէք նորան նոյնպէս առաքինի, ինչպէս առաջին տարիներումն էր։ Աղաչենք ամենքս 'ի միասին աստուածներին, որպէս զի կրկին դարձուցանէ նրան մեզ։ Ես շատ երջանիկ կ'համարեմ ոռոգանել այդ գահը իմ արիւնովը․ եթէ նրան բազմած տեսնեմ այս գահի վերայ այնպիսի հակամիտութիւններով, որոնք կարողեն կատարել վայելչապէս այս պաշտօնը։

Սուլէյմանի այս խօսքերը մեծ ազդեցութիւն արին Շէրիի վերայ։ Այն ժամանակը նա իմացաւ թէ որքան այն մարդու սէրը և հաւատարմութիւնը անկեղծ է եղել և սկսաւ յանդիմանել առաջին անգամ իրա սխալանքները։ Զգալև թէ նա այս լաւ զգացմունքը ունեցաւ իրա սրտումը, և ահա՛ տեսաւ որ հանդարտվում է իրա կատաղութիւնը։ Նա դադարեց իրա երկաթի վանդակի մէջ դէս ու դէն ընկնելուց։ Նորան տարին մին տուն, որտեղ որ պահպանում էին հրեշներ և կատաղի գազաններ և սրան էլ նրանց հետ կապեցին։

Շէրին մտքումը դրաւ ուղղացնել զինքը այս սխալանքներից, միշտ հնազանդ մնալով իւր պահապանին։ Մին օր, երբ որ այս մարդը, որը որ շատ գազանաբարոյ էր, քնով անցաւ, մին վագր կոտրելով իրա շղթաները, յարձակուեցաւ նրա վերայ։ Շէրին ցանկացաւ իսկոյն որ այն բոպէին ազատ լինէր։ Ես չարութեան տեղ լաւութիւն կանէի, ասում էր ինքը իրան, ազատելով այս ողորմելի պահապանի կեանքը, որը որ զուր տեղը շատ անգամ չարչարում է ինձ։,, Այդ ցանկութիւնը ունեցաւ թէ չէ, իսկոյն վանդակը բացուեցաւ և Շէրին դուրս գալով այն տեղից՝ պաշտպանեց նրան վագրի դէմ, պահապանը զարթնանալով կարծեց թէ իրան բանը վերջացել է, բայց նորա տխրութիւնը շուտով ուրախութիւն փոխուեց,

այս բարերար հրեշը ընկաւ վազրի վերայ և խեղդեց նրան։ Պաշտպանը երախտագիտութիւնից սիրտը շարժուած կամեցաւ փայփայել այդ անասունին, յանկարծ մին ձայն լսեց որը որ ասում էր։ „Մին բարի գործ չի մնալ երբէք առանց վարձատրութեան.“ և միևնոյն ժամանակ մին շնիկ տեսաւ իւր ոտների տակ։ Շէրին զմայլած իւր կերպարանափոխութեան վերայ հազար ու մէկ անգամ քծնեց իւր պաշտպանի ոտները, որը որ իւր ձեռների վերայ բռնած տարաւ Շէրինին Թագաւորի մօտ, որում պատմեց խկոյն այդ սքանչելիքը։ Թագուհին կամեցաւ ունենալ այդ շնիկը։ և Շէրին շատ երջանիկ համարեց իրան այս նոր վիճակի մէջ։ Թագուհին շատ սիրում էր նրան և կամենալով որ հասակը աւելի չ'մեծանայ, որչափ որ էր խորհուրդ հարցրաւ իւր բժիշկներից, որոնք ասացին թէ այս բանի համար հարկաւոր է միայն նշանակուած չափով կերակրել նրան և միշտ միայն հաց և ջուր տալ։

Շէրին օրի կէսը քաղցածութիւնից մեռանում էր, բայց հարկաւոր էր համբերել։ Մին օր, երբոր մին կտոր հաց էին տուել նրան նախաճաշելու, ցանկացաւ պալատի պարտէզի մին քունջում ուտել։ Ուստի վեր առաւ հացը իւր բերանովը և գնաց դէպի մին ծանօթ ջրանցք, որը որ մին քիչ հեռու էր, բայց նա չ'գտաւ այն ջրանցքը և նրա տեղումը տեսաւ մին մեծ տուն ուրին արտաքին կողմը փայլում էր ոսկով և թանկագին ակնեղեններով։ Շէրին տեսաւ որ հոյակապ զգեստներ հագած մարդիկ և կանայք էին մտնում այդ տունը. Նրանք երգում էին, կաքաւում էին և լաւ ուտում խմում էին, բայց այդ տանից դուրս եկողները գունաթափ էին լինում և վէրքերով ծածկուած և համարեա' թէ մերկան-

դամ, որովհետև նրանց հանդերձները կտրկտոր պատառած էին. ոմանք վեր էին ընկնում, չ'կարօղանալով էլ ոտի վերայ կանգնել, ոմանք վեր էին դառնում գետնի վերայ քաղցածութիւնից մեռնելով և ոմանք էլ շատ դժուարութեամբ էին գնում։ Նրանք մին կտոր հաց էին խնդրում այնտեղ մնողներից, բայց նրանք արժան էլ չ'էին համարում նրանց վերայ մտիկ անելու։ Շէրին մօտացաւ մին փոքր աղջկանից, որը որ աշխատում էր խոտերը պոկ տալու որ ուտէ, և սիրտը շարժուած նրա վերայ ասաց ինքը իրան. „Ես լաւ ախորժակ ունիմ, բայց չ'եմ մեռնիլ մինչև ճաշը, եթէ իմ նախաճաշիկս այս աղջկան զոհելու լինիմ, շատ կարելի է որ ազատեմ նորա կեանքը։“ Նա դրեց իրան հացը այդ աղջկայ ձեռին, որը որ մեծ ագահութեամբ տարաւ բերանը և երևեցաւ թէ կատարելապէս առողջացաւ։ Շէրին անչափ ուրախացաւ այդպիսի յարմար ժամանակում օգնութիւն տալուն համար։ Սորանից յետոյ կամեցաւ յետ դառնալ պալատը և յանկարծ մին մեծ ճիչ լսեց։ Այդ չփոթ քցողը չորս մարդ էին, որոնք Օէլլին բռնած, տանում էին որ մտնէ այդ տունը։ Շէրին շատ ափսոսաց որ չ'ունէր հրէշի կերպարանքը, որով կարող էր պլտանի լինել Օէլլին, բայց ի՞նչ կարօղ էր անել ողորմելի շունը, եթէ ո՛չ հաչել նրա յափշտակողների ետևէն։ Շէրին այնտեղ մնաց որ տեսնէ թէ ի՞նչ պիտի պատահէ Օէլլին հետ, որոյ թշուառութեան վերայ ափսոսում էր. Շէրիի մտածմունքները ընդմիջուեցան մին ձայնով, որը որ լսելի էր լինում իւր գլխի վերայ. Նա տեսաւ մին բաց լուսամուտ և ինչպէս մեծ եղաւ նրա ուրախութիւնը, երբ որ տեսաւ Օէլլին, որը որ մին աման մս քցեց լուսամուտից այնպէս լաւ պատրաստած, որ

3

Публичная Библ… С.С.Р.А. 7/XI-1922 имени Мясникяна

նրան տեսնելիս մարդոյ ախորժակը բաց էր լինում: Շէրին, որը որ բոլոր օրը ոչինչ չէր կերել, կարծեց թէ դրանից առաւել էլ երջանկութիւն չի լինել իրան համար: Բիչ մնաց որ բերանն էր տանում. յանկարծ այն աղջիկը, որուն նա իրան հացը տուել էր, ասաց. ,,Ձեռք մի' տալ այդ մսին. այդ տունը սատութեան ապարանք է, և այնտեղից դուրս եկողները թունաւորուած են:,, Միևնոյն ժամանակումը Շէրին մին ձայն լսեց, որը որ ասում էր. ,,մին բարի գործ չէ մնալ սկի առանց վարձի: Շէրին իսկոյն փոխարկուեցաւ մին սպիտակ աղաւնի, նա միտը բերաւ իսկոյն որ այդ գոյնը Կանդիտի գոյնն էր և սկսեց յուսալ թէ կարող է վերջապէս նրան իրա շնորհակալութիւնը մատուցանել: Նախ կամեցաւ նա մօտենալ Զէլիին, և բարձրանալով օդի մէջ, թռչոտեց այդ տան չորս կողմովը. ուրախութեամբ տեսաւ որ այնտեղ մին բաց լուսամուտ կար, ներս մտաւ, բայց զուր տեղը պտռտեց, նա ամենևին չ'գտաւ Զէլիին, և նրա կորստեան վերայ յուսահատուած մտքումը դրաւ չ'կանգնել մինչև որ նրա չ'պատահէ: Մին քանի օր թռչոտելուց յետոյ՝ մէկ քարանձաւ նկատեց և տեսաւ որ Զէլին մին պատկառելի ճգնաւորի մօտ նստած մին սոսկական ճաշ էր ուտում: Շէրին թռչեց այդ սքանչելի հովւական աղջկայ ուսի վերայ և յայտնեց իւր քքուանքներով իրան սրտի ուրախութիւնը նորա տեսնելուն համար: Զէլին զմայլած այս թռչունի քաղցր բնաւորութեան վերայ, մեղմով շոյեց իւր ձեռով և թէպէտ իմանում էր որ նա հասկանում չէ իրան ասածը, այսուամենայնիւ ասաց թէ ընդունում է նորան, որը որ ինքը իրան պարգև է գալիս, և թէ պիտի միշտ նորան սիրէ:

— Այդ ի՞նչ արիր, Զէլի, ասաց ճգնաւորը. այդ խօսքով քեզի պարտաւորացրիր:

,,Այո՛ սքանչելի հովուուհի, ասաց Շէրին, որը որ հենց այն րոպէին վեր էր առել իւր բնական կերպարանքը, իմ կերպարանափոխութեան վախճանը կախուած էր քո համաձայնութենից, դու խօստացիր ինձ միշտ սիրել, հաստատի՛ր ուրեմն իմ բարեբաղդութիւնը. թէ ո՛չ կ'խնդրեմ Կանդիտից, իմ պաշտպանուհից ինձ այն կերպարանքի տակ քցել, որով հաճոյ երևեցայ քո աչքերին:,,

—Նորա անհաստատութենից երկիւղ կրելու տեղի չ'ունիս ասաց Կանդիտը, որը որ թողնելով ճգնաւորական կերպարանքը, երևաց նոցա աչքերին այնպէս, ինչպէս որ էր իրօք:,, Զէլին կարող է հաւատալ իրա անձնը այն հակամիտութեան, որը որ դու նորան հաղորդեցիր: Դուք երջանիկ կ'մնաք, որովհետև ձեր բաղդաւորութիւնը առաքինութեան վերայ պիտի հիմնուի:,, Շէրին և Զէլին ընկան նորա ոտները, և չ'էին դադարում շնորհակալութիւն անելուց:

—,,Վերկացէք, սիրելի երեխայք, ասաց դիցանոյշը, կամենում եմ տեղափոխել ձեզ ձեր արքունիքը Շէրին մին թագ տալու համար, որին որ անարժան էր արել իւր մոլութիւնները:,, Հաղիւ թէ Կանդիտը դադարել էր խօսելուց, յանկարծ տեսին որ գտնվում են Սուլէմանի սենեակումը, որը որ շատ ուրախացաւ տեսնելով իւր տիրոջ առաքինի դառած: Շէրին երկար ժամանակ թագաւորեց Զէլիին հետ: Ասում են թէ նա այնպէս սկսեց զբաղուել իւր գործերովը, որ մատանին որը որ վերստին վեր էր առել արիւն հանելու չափ մատը չ'վիրաւորեց:

ԵՒԳԵՆԻԱ

Ո՛հ, ի՛նչպէս գեղեցիկ վէպ է, տիկին, ես շատ սիրում եմ այն մասանին, որը որ արգելում էր Շերիին յիմարութիւններ անելը—:

ՏԻԿԻՆ

Արդէն ժամանակը անց է կացել ճաք բարով:

ԵՐՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ:

ՏԻԿԻՆ

Այժմ ես լաւ տեսնում եմ, սիրելի օրիորդներ, որ դուք էլ Եփեմիայի պէս չէք արել, որը որ եկել չէ երեւի իմ պատմած առասպելը դուր չէ եկել նորան: Ինչ որ խաղ չէ, նորա հաճոյ չէ թւում, վասնորոյ իրան բովանդակ կեանքումը կ'մնայ տգէտ և յիմար: Զ'հետեւէք նորա վատ օրինակներին: Ես հաւատացի եմ որ Եւգենիան շատ խելօք աղջիկ է և դասը իմանում է:

ԵՒԳԵՆԻԱ

Այո տիկին. դասս չորս անգամ կարդացել եմ իմ հօրը և իմ մօրս էլ պատմել: Կ'կամենաք արդեօք որ ձեզ էլ ասեմ:

ՏԻԿԻՆ

Ի բոլոր սրտէ, սիրելի երեխայ:

ԵՒԳԵՆԻԱ

Շա՛տ, շա՛տ ժամանակ է անցկացել որ Աստուած աշխարհս ստեղծել է: Նա այս մեծ գործը վեց օրուայ մէջ է աւարտել: Լուսինը, արեգակը, աստղերը, երկրի հաստատութիւնը, ջրերը, ծառերը, բոյսերը, ձկները և թռչունները: Նորա առաջի հինգ օրուայ գործքերն են:

Վեցերորդ օրումը ստեղծեց Աստուած մարդուս, որը որ վերջինը և ամենից կատարեալն էր իւր ստեղծածների մէջ: Եօթներորդ օրը վերջացրուց Աստուած իրան ամէն գործքերը և վասնորոյ սրբագործեց այդ օրը: Արարիչը մարդոյն դրեց մին գեղեցիկ պարտէզի մէջ և նորա անուանեց Ադամ: Այս պարտէզի մէջ մին ծառ կար ,,ծառ գիտութեան բարոյ և չարի անունով: Աստուած պատուիրեց Ադամին որ ձեռք չտայ այդ ծառին: ,,Եթէ նրանից ուտես, ասաց Տէրը, կ'մեռնես:,, Այս միջոցումը Աստուած կամեցաւ մարդոյն համար մին ընկեր ըստեղծել, ուստի Ադամին մին խոր քնի մէջ քցելով կողքերից մինը հանեց և նրանով ստեղծեց կին, որը որ Եւայ անուն ստացաւ: Սատանան, որը որ վաղուց աքսորուած էր իւր բարձր տեղից, Աստուծոյ անհնազանդ գտնուելուն համար նախանձուեցաւ մեր նախածնողների լաւ վիճակին վերայ: Նա օձի կերպարանք ընդունած. Եւան երբոր ծառի գեղեցիկ պտուղներովը զմայլում էր, ասաց՝ ի՞նչու համար այդ գեղեցիկ պտուղներիցը ուտում չես. ո՛հ, ինչպէ՜ս գեղեցիկ են նոքա:,,—Որովհետև Տէրը մահ է սպառնացել մեզ. եթէ նրանից ուտելու լինինք, պատասխանեց Եւան:—,,Աստուծոյ ասածին հարկաւոր չէ՛ հաւատալ, կրկնեց սատանան: Նա այն պատճառի է ձեզ արգելել, որովհետև իմանում էր որ եթէ դուք էլ ուտէք այն պտուղներիցը, իրան պէս դուք էլ ամենակարող, ամենաիմաստուն և ամենամեծ կ'դառնաք: Եւան այնքան յիմարացաւ որ հաւատաց սատանայի խօսքերին. ուստի վեր առաւ այն պտուղներից մինը կերաւ և տուեց Ադամին, որը որ ընդունեց: Նոքա շուտով իմացին իրանց արած սխալմունքը և ամենևին ամօթապարտ թաք կացին ծառերի մէջին. իբր թէ կարելի էր թաք կենալ

Աստուածանից: Մի՛ն քանի ժամից յետոյ Աստուած ասաց. ,,Ադա՛մ, ի՞նչի անհնազանդ գտնուեցար:,, Ադամ փոխանակ ներողութիւն խնդրելու, իրան անձը արդարացրուց, ասելով. ,,Տէ՛ր, այն կնիկը, որուն որ դու ինձ տուիր, նա ինձ յորդորեց որ ուտեմ:—Տէ՛ր, ասաց Եւան, օձը ինձ խորհուրդ տուեց նրանից ուտելու:,, Աստուած չբաւականացած այս պատասխաններովը, ասաց. ,,Որովհետև այդ այդպէս է, դուք երկքդ էլ կ'պատժուիք: Օձը անիծած լինի և կնկան գաւակը նորա գլուխը պիտի ջախջախէ: Եւան պիտի հնազանդուի իւր ամուսնոյ կամքին: Իսկ Ադամը՝ նոյնպէս կ'մեռնի, ինչպէս իւր կընիկը և պիտի հարկադրուի աշխատելու, եթէ կամենում է հաց ուտել:,, Սորանից յետոյ Աստուած աքսորեց Ադամին և Եւային այն գեղեցիկ պարտէզիցը, որին Երկրաւոր դրախտ էին ասում, և նրանց արգելելու համար որ միւս անգամ էլ այնտեղ չմտնին, դրանը մին հրեղէն սուր բռնած հրեշտակ դրեց:

ՏԻԿԻ՛Ն

Ե՛կ որ քեզ համբուրեմ, սիրելի Եւգենիա, դու քո դասդ պատմեցիր ինչպէս մին մեծ աղջիկ, Ադէ՛լ, այժմ քեզանից եմ հարցանում ի՞նչ օգուտես քաղում այդ պատմութենից:

ԱԴԷԼ

Երբ որ մին սխալմունք անելու լինիմ, իսկոյն ներողութիւն կ'խնդրեմ, և չե՛մ արդարացնել ինձ:

ՏԻԿԻ՛Ն

Այդ շատ լաւ պատասխան է, իսկ դու Մարիամ։

ՄԱՐԻԱՄ

Երբ որ որկրամոլ և անհնազանդ լինելու ցանկութիւն ունենամ, իսկոյն միտս կ՚բերեմ որ օձը կողքիս է գտանվում և ինձ այդ բաները յորդորողը նա՛ է, ուստի պիտի նրան ասեմ. ,,Ա՛յ չարագործ՛, ես բարի Աստուծուն կամքին պիտի հնազանդեմ, ոչ թէ քոյ։

ՏԻԿԻ՛Ն

Դու շատ խելօք աղջիկ ես, որ այդպէս ես մտածում։ Բայց դու սիրելի. Շարլոտա՛, ի՞նչ ե՞ս ասում այդ մասին։

ՇԱՐԼՈՏՏԱ

Իմ կարծիքով՝ Եւան շատ հպարտ կնիկ պիտի եղած լինի որ ցանկանում էր Աստուծոյ պէս իմաստուն դառնալ. դարձեալ նա պիտի եղած լինի նոյնպէս որկրամոլ։ Ինձ այնպէս է թւում, եթէ ես նորա տեղ լինէի. ամենեւին ձեռք չէի տալ այն վատ պտուղներին։

ՏԻԿԻ՛Ն

Այդպէս ե՞ս կարծում։ Ականջ դրեցէք, այդ մասին ես ձեզ մի յարմար պատմութիւն ասեմ։

Մի թագաւոր որսորդութեան անելու ժամանակ ճանապարհը կորցրուց. երբ որ նա դէս ու դէն ման էր գալիս. յանկարծ ականջը մի ձայն հասաւ։ Գնաց դէպի այն կողմը, որտեղից ձայնը դուրս էր գալիս, և տեսաւ մի մարդ և մի կնիկ, որոնք փայտ էին կտրում։ Կնիկը Շարլոտայի պէս ասում էր։ ,,Պէտք է խոստովանած որ մեր նախամայրը շատ ագահ է եղել արգելեալ պտղից ուտելուն համար, եթէ Եւան հնազանդ եղած լինէր Աստուծոյ կամքին, այսպէս նեղութեամբ ամենայն օր աշխատելու չէինք հարկադրուել։,,—Ճշմարիտ է, պատասխանեց մարդը, եթէ Եւան որկրամոլ է եղել, Ադամն էլ շատ յիմար մարդ պիտի եղած լինի, կատարելով կնկան խնդիրքը, և եթէ ես նորա տեղ լինէի. մի լաւ ապտակ կ՚հասցնէի Եւային և չէի հնազանդել նորա ասածին։,, Թագաւորը մօտացաւ և ասաց։ ,,Եկէք ինձ մօտ. ես ձեզ կ՚կերակրեմ առանց աշխատանաց։,, Այս միւնոյն միջոցումը պալատականները եկան և ողորմելի մարդիկը շատ զարմացին և շատ ուրախացին։

Երբ որ նոքա եկին արքայական ապարանքը, Թագաւորը նոցա համար լաւ զգեստներ հրամայեց որ տան, սպասաւորներ նշանակեց. նոյնպէս կառքեր, և ամենայն օր տասներկու տեսակ կերակուրներ պատրաստել տուեց նոցա համար։ Մի ամսից յետոյ քսանըչորս տեսակ կերակուրներ պատրաստել տուեց, և սոցա մէջ մի կերակուրը հրամայեց ծածկած դնել սեղանի վերայ։ Կնիկը, որը որ շատ հետաքրքիր էր, կամեցաւ բանալ այն ծածկած կերակուրը, բայց սպասաւորները որոնք այնտեղ էին գտնվում, ասացին թէ Թագաւորը արգելել է ձեռք տալու և կամենում չէ որ տեսնէք դուք այն ծածկած կերակուրը։

Երբ որ ծառայքը դուրս եկին, մարդը նկատեց որ կնիկը հաց չէ ուտում, վասնորոյ հարցրուց պատճառը, կնիկը պատասխանեց թէ կամենում է տեսնել այն ծածկած կերակուրը։—Դու շատ յիմար ես, ասաց մարդը. լսում չե՞ս որ ծառայքը ասում են հրաման չ՚է բանալ։

—Թագաւորը շատ անիրաւ մարդ է, որ չ՚է կամենում թէ տեսնենք ի՞նչ է այն ծածկած կերակուրը, պատասխանեց կնիկը և սկսաւ լաց լինել։ Մարդը, որը որ շատ սիրում էր կնկանը, յորդորեց որ ամենևին չ՚տրտմի, բաց արաւ ծածկած կերակուրը և յանկարծ մէջիցը մին մուկ դուրս պրծաւ սենեակի մէջ։ Նոքա վազեցին նրա հետից որ բռնեն, բայց մուկը մտաւ մին քունջի մէջ։ Թագաւորը ներս մտնելով հարցրաւ թէ ինչ տեղ է՞ մուկը։

—Թագաւոր, ասաց գիւղականը, կինս բռնադատեց տեսնել ի՞նչ է այն, ես ամանը բացի և մէջից մին մուկ դուրս թռաւ։

„Ո՛հ, ո՛հ, պատասխանեց թագաւորը, արդե՞օք դու ասում չ՚էիր որ եթէ Ադամի տեղ լինէիր, Եւային ապտակ կ՚տայիր նորա որկրամոլութիւնը և հետաքրքրութիւնը թողնել տալու համար։ Իսկ դու չար կնիկ, պիտի հետևես քո խոստմունքին. ամենայն բան առատութեամբ ունէիր ինչպէս Եւան և այդ բաւական չ՚էր քեզ, կամեցար ճաշակել այն կերակուրը, որը որ ձեզ արգելեցի, գնացէք փութով դարձեալ ձեր անտառը և առաջուայ պէս աշխատեցէք և էլ Ադամին և Եւային մի՛ նախատէք, որովհետև միևնոյն յիմարութիւնը դուք ինքեանքդ արեցիք։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես իմանում եմ, տիկին, այդ պատմութիւնը ինձ վերայ էք ասում։

ՏԻԿԻՆ

Ո՛չ, իմ սիրելի, ես այդ բանը մին տեղ կարդացել եմ, բայց ճշմարիտ է քեզ շատ սազ է գալիս. Ադէ՛լ, այժմ դու շարունակիր սրբազան պատմութիւնը։

ԱԴԷԼ

Ադամ և Եւայ դրախտից աքսորվելուց յետոյ՝ երկու որդի ունեցան։ Անդրանիկի անունը Կայէն էր, որը որ հողագործ էր, իսկ կրտսերինը՝ Աբէլ, որը որ խաշնարած էր։ Այս երկու եղբարքը պատարագ մատուցին Աստուծոյ։ Կայէնը երկրի պտուղներիցը, իսկ Աբէլը իրան ոչխարների մէջից ամենից պարարտը և ընտիրը։ Աստուած, որը որ միայն զոհագործութիւն անողի սրտին է նայում, Աբէլի զոհագործութիւնը ընդունեց։ Սրանով Կայէնի սրտումը ծագեց ատելութիւն։ Մին օր տարաւ նա իրան եղբօրը դաշտը և այնտեղ սպանեց նրան։ Այս յանցանքը անելուց յետոյ՝ կամեցաւ փախչել, բայց Աստուած նրան կանգնեցրուց և ասաց. „Ո՞ւր է քո եղբայր Աբէլը։„ — Մի՞թէ ինձ պահելու էք տուել նրան պատասխանեց կատաղած Կայէնը։—Դու անիծած ես, ասաց Ամենակարօղը, գնա՛ թափառի՛ր երկրի վերայ, դու քո կեանքումը մին րոպէ էլ հանգստութիւն չ՚պիտի ունենաս և քո յանցանքը պիտի քեզ տանջէ գիշեր և ցե-

բեկ։ Նա քեզ երկար ժամանակ չարչարելու համար՝ կ'արգելեմ Ադամի միւս երեխորցը որ քեզ չ'օգնեն։ Կայենը իրա կնոջ հետ 'ի միասին փախաւ այնտեղից գնաց մի ուրիշ երկրում բնակուեցաւ և շատ որդիք ունեցաւ։

ՏԻԿԻՆ

Դու հիանալի պատմեցիր քո դասդ։ Ասա' տեսնեմ, սիրելի Մարիամ, Կայենի պատմութիւնը լսելով ինչ ես մտածում։

ՄԱՐԻԱՄ

Ես կարծում եմ, տիկին, որ ես էլ Կայենի պէս նախանձ ունիմ իմ մէջ քրոջ դէմ։ Իմ ծնողներս նրան ինձանից շատ են սիրում և այս բանը շատ անգամ ինձ այնպէս բարկացնել է տալիս, որ կ'սպանէի քրոջս եթէ ձեռքովս գալու լինէր։

ՏԻԿԻՆ

Ո'չ երբէք չ'պիտի նեղանաս քո ծնողների վերայ, եթէ նոքա քրոջդ քեզանից շատ սիրեն։ Նորա պէս դու էլ բարի եղի'ր, և ես հաւաստի եմ, որ քեզ էլ շատ կ'սիրեն։

ՄԱՐԻԱՄ

Տիկին, հաստատ իմացէք որ ես իմ ամէն կարողութեամբս կ'աշխատեմ ինձ ուղղացնելու. որովհետև երբ որ ես չարագործ եղայ, շատ տարաբաղդ եմ, այդ բանը

այնպէս ճշմարիտ է որ միւս օրը ասացի իմ դաստիարակուհուս. „Ես շատ կ'ցանկանայի մեռած լինէի„

ՏԻԿԻՆ

Դու ինձ հիացնում ես, սիրելի երեխայ, այդ չարագործութեամբդ ինչ կ'անէի՞ր արդեօք եթէ մեռնէիր տակաւին Աստուածանից ներողութիւն չ'խնդրած։ Նա ամենաբարի է, Նա ժամանակ կ'տայ քեզ ուղղելու։ Պէտք է այս երեկոյ շնորհակալութիւն մատուցանես նրան այդ արած շնորհքի համար, և ասես որ դու կամենում ես սիրել նորան 'ի բոլոր սրտէ։ Մնաք բարով իմ երեխայք։

ՉՈՐՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻ՛Ն

Այսօր վաղ էք գալիս, աղջկերք, մի՛ն րոպէ է արդէն որ սեղանիցը վեր ենք կացել։ Ձեզ դաս ասել չ'պիտի տամ, վախենալով որ ձեզ նեղութիւն չ'պատճառեմ։

ՄԱՐԻԱՄ

Լաւ է, տիկի՛ն, այսօր մենք դաս չ'ենք ասիլ, բայց յուսով ենք որ դուք մի՛ն բան կ'պատմէք մեզ, այդ ամենևին ձանձրութիւն չ'ի լինիլ մեզ։

ՏԻԿԻ՛Ն

Տեսնում եմ, որ պէտք է կատարել այն, ինչ որ դուք ցանկանում էք։ Գնա՛նք ուրեմն պարտէզումը նստենք և այնտեղ ես ձեր ցանկութիւնը կ'կատարեմ։

ԳԵՂԱՄՈՒՀԻ ԵՒ ՀՐԷՇ

Մի՛ն չափազանց հարուստ վաճառական է եղել, որը որ ունեցել է վեց երեխայ, երեք տղայ և երեք աղջիկ. որովհետև այս մարդը խելօք էր, ոչինչ չէ՛ր խնայում իւր որդւոց ուսման համար, և նրանց ամէն տեսակ կրթութիւն էր տալիս։ Նորա աղջկերքը գեղեցիկ էին, մանաւանդ կրտսերը, որը որ իրան գեղեցկութեամբը ա-

մենեցուն զմայլեցնում էր, և մինչդեռ մանուկ հասակումն էր, ամենը նրան գեղեցիկ աղջիկ էին ասում այնպէս որ այդ անունը մինչև վերջը նորա վերայ մնաց. այնպէս որ ամենայն տեղ էլ սկսեցին Գեղամուհի անուանել նրան և այս բանը շատ նախանձեցրուց իրա մեծ քույրերին։ Այս կրտսեր աղջիկը որչափ որ որոշվում էր իրան քույրերից գեղեցկութեամբը, նոյն չափ էլ գերազանցվում էր իրա վարքով։ Երկու մեծ աղջկերքը շատ գոռոզ էին, իրանց մեծ տիկինների պէս էին ցոյց տալիս, և ցանկանում էին ազնուական մարդկանց հետ ժամանակ անցկացնել։ Բոլոր օրը գնում էին Թատրօն, զբօսարաններ, խնջոյքներ և ծաղր էին անում իրանց կրտսեր քրոջ վերայ, որը որ միշտ տանը նստած՝ օգտաւէտ մատեանք էր կարդում։

Ըստ որում իմանում էին որ այս աղջկերքը շատ փարթամ էին, շատ վաճառականներ ցանկացան նրանց հետ պսակուել, բայց նրանք մերժեցին, ասելով թէ ամուսնանալու չ'են երբէ՛ք, մինչև որ չ'գտնեն մի՛ն դուքս կամ թէ կոմս։ Իսկ Գեղամուհին քաղաքավարութեամբ պատասխանում էր իրա հետ ամուսնանալ ցանկացողներին թէ ինքը տակաւին շատ դեռահաս է, և թէ կամենում է մի՛ն քանի տարի ևս մնալ իրա հօր մօտ։

Յանկարծ վաճառականը կորցրուց իրան հարստութիւնը և մնաց միայն մի՛ն հին խրճիթ մի՛ն գիւղի մէջ, բաւականին հեռու քաղաքիցը։ Հայրը ասաց իրան որդւոցը թէ պէտք է գնալ գիւղը՝ և գիւղականների պէս աշխատել։

Ոչոքի սիրտը չ'էր ցաւում այն երկու էրեց աղջկանց անբաղդութեան վերայ, քանզի իրանց հպարտութեամբը և չարագործութեամբը զզուեցրել էին ամենեցուն, իսկ

Գիւղամուհուն համար բոլոր աշխարհը տխրում էր, որովհետև նրան միշտ համեստ, բարեսիրտ և պարկեշտ էին տեսել, և մինչև անգամ գտնուեցան շատ ազնիւ և չքնաղադէմ անձինք որոնք ցանկացան ամուսնանալ նորա հետ, թէպէտև ոչինչ չունէր: Այսու ամենայնիւ բարեսիրտ Գիւղամուհին պատասխանում էր նրանց թէ չէ կարող իրան խեղճ և թշուառ հօրը երեսից թողնել և թէ պիտոյ է գնալ նորա հետ իրանց գիւղը նրան մխիթարելու և օգնելու համար:

Երբ որ նրանք եկին իրանց գիւղի խրճիթը, անբաղդ վաճառականը իրան երեք տղերանցովը միակութիւնով էր պարապվում, որպէս զի իրան և իրա թշուառ երե-խորց օրական ապրուստը կարօղանայ հայթայթել:

Պարկեշտ Գիւղամուհին մտքումը դրաւ ամենևին չնե-ղանալ այս անբաղդութեան մէջ և իրա համար մը-խիթարութիւն գտնել: Սովորաբար զարթնում էր նա առաւօտեան չորս ժամուն երբ որ սոխակները երգում էին իրանց խրճիթի առաջ գտնուած փոքր պարտէզումը, աւլում էր սենեակը, աղբիւրիցը ջուր էր բերում, կրակը վառում էր և յետոյ շտապում էր պատրաստել կերակուր ընտանեաց համար: Երբ որ վերջացնում էր իւր գործը, երգում էր, խաղում էր մեծ տաւիղի վերայ, կամ թէ կարգում էր թել մանելով: Ընդհակառակը երկու էրեց քոյրերը կամենում էին մեռնել տրտմութենից: Վեր էին կենում տասը ժամուն, զբօսնում էին բոլոր օրը ափսոսելով իրանց ընկերութիւնը և թանկագին զգեստները, որոնց կորցրել էին:—,,Տեսնում էք արդեօք մեր փոքր քրոջը, ասում էին նոքա միմեանց, ինչպէս ցածր հոգի ունի նա, որը որ անբաղդութեան մէջ էլ իրան համար մխիթարութիւն է գտնում,, Վաճառականը իւր դստերց

պէս չէր կարծում, այլ զմայլում էր Գիւղամուհոյ առաքինութեան, մանաւանդ համբերութեան վերայ, որովհետև բաւական չէր որ բոլոր ընտանեկան գործքերը թողել էին ողորմելու վերայ, նախատում էլ էին ամենայն վայրկեան:

Մին տարի էր անցկացել որ այս տունը միայնակութեան մէջ էր բնակվում, երբ որ վաճառականը մին նամակ ստացաւ, որոյ մէջ հաղորդում էին նորան թէ յաջողութեամբ իւր տեղն է հասել մին նաւ, որին մէջ ապրանք էր ունեցել նա: Այս նոր համբաւը քիչ մնաց որ շուռտայ երկու մեծ աղջկերանց գլուխը և երբ որ տեսին թէ հայրը ճանապարհ է ընկնում դէպ ի քաղաքը, խնդրեցին բերել իւրանց համար ոսկի մանեակներ, զգեստներ, գլխի զարդարանքներ և ուրիշ շատ այդ օրինակ չնչին բաներ: Գիւղամուհին ոչինչ չէր ուզում, որովհետև այսպէս էր մտածում ինքը իրան թէ ապրանքից ստացած փողը բաւականանալու չէ առնել այն ինչ որ խնդրել էին իւր քոյրերը:—„Դու ոչինչ չես ցանկանո՞ւմ արդեօք որ քեզ համար առնեմ, սիրելի Գիւղամուհի, հարցրեց հայրը:„—Որովհետև դուք այդպէս բարեսիրտ էք որ իմ վերայ էլ էք մտածում, պատասխանեց Գիւղամուհին, խնդրեմ մին վարդ բերէք, քանզի նրանից գտնվում չէ այստեղ:„ Երբ որ վաճառականը այնտեղ հասաւ իսկոյն մին վէճ բացուեցաւ նորա վերայ և նա վերստին յետ դառաւ իւր տունը շատ տրտմութեամբ և այնպէս աղքատ, ինչպէս որ կար առաջ: Երեսուն մղոն էր մնացել մինչև իւր տուն հասնելը, բայց որովհետև պէտք էր մին ծմակի միջով անցկենալ, ճանապարհը կորցրուց. սաստիկ ձիւն էր գալիս և մին այնպիսի կատաղած մրրիկ բարձրացաւ որ խեղճ մարդը երկու ան-

գամ ձիւնը ցած ընկաւ: Գիշերը մերձենալով նա կոր-
ծեց թէ կ'մեռնի սովից կամ թէ ցրտից: Յանկարծ տե-
սաւ ծառերի միջով մին լոյս. որը որ բաւական հեռու
էր երեւում: Նա ուղղեց իրան ճանապարհը դէպ ի այն-
տեղ, և մօտենալով տեսաւ որ այս լոյսը մին հոյակապ
և մեծակառոյց ապարանքից է երեւում: Վաճառականը
Աստուծոյ շնորհակալութիւն մատուցանելուց յետոյ շտա-
պեց մտնել պալատը, բայց շատ զարմացաւ այնտեղ ոչ-
մի չգտնելուն համար: Նորա ձին, որը որ հետեւում էր
նորան, տեսնելով մին բաց ախոռ, ներս մտաւ, իսկ տէրը
գնաց մտաւ մին մեծ դահլիճ, որտեղ որ գտաւ վառ կը-
րակ և մին սեղան, վրէն կերակուրներ շարած և մին
մարդոյ համար սպաս դրած: Տասը ժամը լրացաւ, ոչով
չերեւաց և վաճառականը չկարողանալով էլ համբերել
քաղցածութեան, վեր առաւ մին էփած հաւ և մին ան-
գամ բերան դնելումը վերջացրուց, և մին քանի բաժակ
գինի խմելուց յետոյ՝ առաւել քաջալերվեց, և անցկենա-
լով զանազան գեղեցիկ սենեակների միջով՝ վերջապէս մը-
տաւ մին սենեակ, որտեղ մին փափուկ մահիճ գտաւ և
որովհետեւ շատ նեղացած էր և տասներկու ժամը արդէն
անց էր կացել, դուռը փակեց և քնեց: Առաւօտեան տա-
սը ժամը լրացած զարթեց նա, և շատ զարմացաւ տես-
նելով իւր հին և պատռուած զգեստների փոխանակ՝ խս-
տակները և նորերը: Մօտիկ սրա լուսամուտից և տե-
սաւ մին ծաղկանոց, որը որ զմայլեցնում էր տեսողին աչ-
քերը: Յետոյ մտնելով մեծ դահլիճը, որտեղ որ նախըն-
թաց երեկունը ընթրիք էր արել՝ տեսաւ մին բաժակ շո-
կոլադ սեղանի վերայ դրած որ և իսկոյն մեծ ախորժա-
կով խմեց: Գնաց յետոյ իւր ձիոյ մօտ, և անցկենալով
բուրաստանի միջով միտը բերեց որ Գեղամուհին մին

վարդ էր խնդրել, ուստի մին ճիւղ կտրեց շառերի մէջից:
Միեւնոյն վայրկենումը լսեց նա մին սարսափելի ձայն և
տեսաւ որ գալիս է դէպի իրան մի այնպիսի զարհուրե-
լի գազան որ քիչ մնաց սիրտը անցկենայ:—Դու շատ
ապերախտ մարդ ես, ասաց նրան հրէշը, քեզ ազատեցի
մահից, ընդունելով իմ ամարանոցի մէջ դու իմ արած ե-
րախտեաց համար, գողանում ես իմ վարդը, որը որ ամէն
բանից շատ եմ սիրում: Պէտք է մեռնիս քո սխալանքը
ուղղելու համար և ես քեզ մին քառորդ ժամ ժամանակ
եմ տալիս, որ Աստուածանից ներողութիւն խնդրես:„
Վաճառականը չոքեց ծնկների վերայ և ձեռները խա-
չելով, ասաց. „Տէր ներեցէ՛ք, ես չէի կարծում որ ձեզ
կ'նեղացնեմ, քաղելով մին վարդ իմ աղջկերանց մէկին
համար:„—Իմ անունս տէր չէ պատասխանեց գազանը,
այլ հրէշ է, չ'կարծես թէ կարողես խաբել ինձ քո շողո-
քորդութեամբը, բայց դու ինձ ասացիր թէ աղջկերք ու-
նիս, քեզ կ'ներեմ այն դաշամբ՝ որ քո աղջկերանց մէկը
յօժարութեամբ գայ քեզ տեղ մեռնելու, ուրեմն գնա՛, և
եթէ քո աղջկերքը ընդդիմանալու լինին քեզ տեղ մեռնե-
լու, երդում կե՛ր որ երկու ամսից յետոյ վերստին գաս
ինքդ:„ Վաճառականը երդում կերաւ:—Ես չեմ կամե-
նում որ դու դատարկ ձեռներով գնաս քո տունը, ուստի
գնա քո երեկուայ քնած սենեակը այնտեղ մին դատարկ
արկղ կ'գտնես, և ածիր նորա մէջ, ինչ որ ցանկանումես:„
Այս միեւնոյն րոպէում հրէշը հեռացաւ և վաճառակա-
նը այսպէս էր ասում ինքը իրան. „Թէպէտ ես պիտի
մեռնեմ, գոնեա՛ մխիթարութիւն կ'ունենամ թողնելու
մեկ կտոր հաց իմ թշուառ երեխայոց համար:„ Յետոյ
գնաց այն սենեակը և շատ ոսկի ածեց գազանի նշանա-
կած արկղի մէջ: Ապա դուրս եկաւ պալատից այնչափ

տրտմութենով, որչափ ուրախութենով ներս էր մտել: Մի քիչ ժամանակից յետոյ հասաւ նա իւր խրճիթը: Նորա երեխայքը չորս կողմը պատեցին և նա փոխանակ նրանց հետ փաթաթուելու, սկսեց դառն արտասուքներ թափել նոցա վերայ նայելով և տալով Գեղամուհուն այն վարդը, որը որ հրեշի բուրաստանից քաղել էր, ասաց. „Գեղամուհի՛, վեր ա՛ռ այս ծաղիկը, որը որ շատ թանկ է նստել քո խեղճ հօրդ վերայ:„ Եւ իսկոյն սկսեց պատմել գլխով անցածը: Լսելով այս բանը երկու երեց աղջկերքը սկսեցին գոռալ և հայհոյանք չ'մնաց որ չ'ասէին օղորմելի Գեղամուհուն, որը որ բնաւ լաց չէր լինում:—Ի՞նչի համար պիտի լաց լինեմ, ասաց նա, իմ հայրը ամենեւին չ'պիտի մեռնէ, քանզի դազանը ասել է թէ իրան փոխանակ՝ իւր աղջկերանց մէկը կ'ընդունի, ուրեմն իմ անձս հրեշի կատաղութեան կ'յանձնեմ, իմ հօր կեանքը փրկելու և իմ որդիական սէրը ցոյց տալու համար:„—Ես հիացել եմ Գեղամուհոյ առաքինութեան վերայ. ասաց հայրը, բայց չ'եմ կամենում նորա մահուան մատնել, ես արդէն ծերացած եմ, ուրեմն այդ մահը միայն երկու երեք տարուայ կեանքս պիտի խլէ ինձանից:„ —Ես ձեզ հաւատացնում եմ, սիրելի հայրիկ, ասաց Գեղամուհին, որ դուք ինձ ո՛չ մին եղանակաւ չ'պիտի կարողանաք արգելել հրեշի մօտ գնալու:„ Չ'մտիկ անելով ամենայն 'ի գործ դրած հնարքներին, Գեղամուհին հաստատ մնաց իւր ասածի վերայ: Վաճառականը այնպէս շփոթուել էր իւր աղջկայ կորցնելու կսկծից, որ մոռացել էր հրեշի տանից բերած գանձը, բայց երբ որ գնաց հանգստանալու շատ զարմացաւ տեսնելով մին ոսկով լի արկղ իւր անկողնոյ մօտ դրած: Նա այս գաղտնիքը միայն Գեղամուհուն յայտնեց, որը որ աղաչեց այս

հարստութիւնները գործ ածել իւր քվերանց հարսանեաց համար, նրանց ամուսնացնելու համար երկու ազնիւ երիտասարդների հետ, որոնք իրան բացակայութեան ժամանակը եկել էին և որոնք նրանց շատ սիրում էին:

Այն երկու չարաբարոյ աղջկերքը սոխով իրանց աչքերը ճմլեցին ցոյց տալու համար որպէս թէ լաց էին լինում այն միջոցին, երբ որ Գեղամուհին ճանապարհ էր ընկնում իւր հօր հետ: Նորա եղբայրքը շատ արտասւում էին վաճառականի հետ, միայն Գեղամուհին չ'էր լաց լինում, որովհետև կամենում չ'էր նրանց տխրութիւնը աւելացնել:

Ձին վեր առաւ ապարանքի ճանապարհը և նոքա իրիկնապահուն տեսին պալատը այնպէս լուսաւորուած ինչպէս որ առաջի անգամն էր: Վաճառականը իւր աղջկայ հետ ի միասին մտնելով մեծ դահլիճը, տեսաւ սեղանի վերէն երկու մարդոյ սպաս դրած: Տրտմութենիցը էլ աչքումը չ'էր գալիս հաց ուտելը, բայց Գեղամուհին քաջալերեց նրան իրան հանդիստ երևացնելով և նորան հաց ուտեցրուց: Երբոր նոքա ընթրիքը վերջացրին, յանկարծ մին ձայն լսեցին և վաճառականը լալով վերջին հրաժեշտը տուաւ իւր աղջկանը, քանզի իմանում էր՝ որ հրեշն էր: Գեղամուհին չ'կարողացաւ երկիւղը պահել տեսնելով այն սարսափելի կերպարանքը, բայց որչափ որ կարողացաւ զսպեց զինքը և հրեշը երբ որ հարցրաւ թէ արդեօք իւր յօժար կամօքն է եկել, պատասխանեց դողդողալով թէ այո՛, իւր կամօքն է եկել:
—„Դուք շատ բարեսիրտ աղջիկ էք, ասաց հրեշը ես ձեզ շատ պարտաւորեմ: „

Վաճառականը և իրան աղջիկը գնացին հանգստանալու, նոքա կարծում էին թէ բոլոր գիշերը չ'պիտի կա-

քօղանան քնել, բայց մօրն անկողինը թէ չէ իսկոյն նոցա աչքերը խփուեցան։ Գեղամուհէին տեսաւ երազումը մին կնիկ. որը որ ասաց. «Գեղամուհի՛, այն բարի գործը որ դու անում ես զօհելով քո անձը քո հօր անձը փրկելու համար, չի մնալ երբէք առանց վարձի։» Գեղամուհէին զարթնանալով պատմեց այս երազը իւրան հօրը և թէպէտ Փօքր 'ի շատէ մխիթարեց այս բանը նորան, բայց այսուամենայնիւ չկարօղացան իրանց աչաց արտասունքը դադարեցնել, երբ որ ստիպուած էին բաժանուել միմեանցից։ Երբ որ նա գնաց, Գեղամուհէին նստելով դահլիճումը լաց էր լինում և իրան անձը Ամենակարօղին յանձնում, քանզի այնպէս է կարծում թէ հրէշը այս երեկոյ ուտելու է։ Այսուամենայնիւ մտքումը դրաւ տեսնել այս ամարանոցը։ Նա չէր կարօղանում չզարմանալ նորա փառաւորութեան վերայ, բայց և առաւել մեծ եղաւ նրա զարմացումը, երբ տեսաւ մին սենեակ, որին դռան վերայ արձանագրուած էր «Գեղամուհոյ ննջարան» Շտապելով բացաւ նա այս դուռը և շատ զարմացաւ այն շքեղութեան վերայ, որը որ թագաւորում էր այնտեղ։ Առաւել նորա աչքերը գրաւողը երաժշտական գրեանքն էին և գրատունը։ «Երևի կամեցել չեն որ ձանձրանամ, ասաց նա, եթէ միայն մին օր պէտք է մնայի, այսպիսի մեծ պատրաստութիւններ չէին անել ինձ համար։ Այս մտածութիւնը փոքր ինչ քաջալերեց նորան։ Նա գրատնիցը մին մատեան վեր առաւ, որոյ մէջ գրած էր ոսկի տառերով այս խօսքերս։

«Ի՞նչ որ կամենում էք հրամայեցէ՛ք քանզի դուք այս տեղ թագուհի էք և տանտիկին.» —«Աւա՜ղ, ասաց Գեղամուհէին հոգւոց հանելով, սիրտս ոչինչ չէ ցանկանում, միմիայն կամենում եմ տեսնել իմ

վատաբաղդ հօրս և իմանալ թէ ի՞նչ է անում այժմ։» Ինչպէս մեծ եղաւ նորա զարմացումը. երբ աչքերը քցելով մին հայելու մէջ՝ որը որ կախուած էր սենեակի պատի վերայ՝ տեսաւ նորա մէջ, իւրեանց խրճիթը, որտեղ որ իւր հայրը շատ տրտմութեամբ հասել էր։ Նորա քուերքը պատել էին հօր չորս կողմը և չ'մտիկ արած նոցա սրտի ուրախութեանը, որը որ ակամայ փայլում էր երեսներին տխուր էին ձևանում իւրեանց հօր մօտ, Գեղամուհոյ կորստեան մասին։ Մին րոպէից յետոյ անհետացաւ այս տեսարանը։ Սորանից յետոյ տեսաւ որ սեղանը պատրաստի է, երբ որ նստեց հաց ուտելու յանկարծ մին երաժշտական ձայն լսեց, սակայն ոչովին չտեսաւ։ Յորժամ գնաց ընթրիք անելու, մին աղմուկ լսեց, որ գազանի մանգալուցն էր լինում։—«Գեղամուհի՛, կ'կամենա՞ք որ ձեզ հաց ուտելիս տեսնեմ։»—Իշխանութիւնը ձերն է, պատասխանեց դողդողալով Գեղամուհին։—Ո՛չ, բացի ձեզանից այստեղ ուրիշ տանտիկին չկայ։ Եթէ ձեր աչքումը գէշ եմ երևում ես, հրամայեցէ՛ք և իսկոյն կ'հրաժարուեմ։ Ասացէ՛ք խնդրեմ, շատ տգեղ չէ՞ք գտանում ինձ։»—«Այո՛ յիրաւի է, որ դուք շատ անհաճոյ էք, քանզի երեսպաշտութիւն չեմ իմանում, սակայն շատ բարեգութ էք։»—Ո՛չ թէ միայն տգեղ եմ, այլ և շատ յիմար եմ և խոստովանվում եմ որ ոչինչ այլ եմ, եթէ ո՛չ մին հրէշ։»—Չ'է կարելի, գազան անուանել նորան, որը որ զգում է իւր պակասութիւնը, պատասխանեց Գեղամուհին, յիմարը ո՛չ երբէք իմանալ չ'է էդ բանը։»—Հաց անուշ արէ՛ք Գեղամուհի, և աշխատեցէ՛ք որ չ'նեղանաք ձեր տան մէջ, որովհետև այս ամէնը 'ի վայելս ձեր է պատրաստուած, և ես շատ կ'տրտմեմ, եթէ դուք անգոհանակ լինիք։»—Դա ձեզ հա-

ւատացնում եմ որ շատ շնորհակալ եմ ձեր սրտիցը, ասաց աղջիկը, և երբ որ մտածում եմ այդ մասին, ամենևին չքանում է ձեր տգեղութիւնը։—Եթէ ես խելք ունենայի, պատասխանեց հրէշը, լաւ լաւ քաղաքավարութիւններ կ'բանացնէի, բայց այսչափ միայն կարող եմ ասել ձեզ թէ անչափ երախտապարտ եմ մնում ձեզ։„ Գեղամուհին ախորժակով ընթրիք արաւ և էլ ամենևին վախում չէր հրէշիցը, բայց մին օր քիչ մնաց որ մեռնէ երկիւղից. երբ որ գազանը ասաց նորան „Գեղամուհի՛, կ'կամենաք իմ կին լինել։—Ո՛չ, պատասխանեց դողդողալով աղջիկը։„ Այս րոպէին հրէշը կամենալով հոգւոց հանել մին այնպիսի սարսափելի շշնչիւն հանեց. որ բոլոր պալատը նորանով լցուաւ, բայց Գեղամուհին շուտով սթափուեցաւ, որովհետև հրէշը տխուր ձայնով „մնաս բարով ասելուց յետոյ՝ գնաց, ստէպ ստէպ դռնիցը նայելով։ Գեղամուհին իրան մենակ տեսնելով՝ մեծապէս կարեկցութիւն զգաց իւր սրտի մէջ այդ խեղճ հրէշի վերայ։„ Ա՜ւաղ որ դա այդպէս այլանդակ է դիմօք, ասում էր նա ինքը իրան, քանզի շատ բարեսիրտ է։„

Գեղամուհին երեք ամիս չափ ժամանակ անցկացրուց հրէշի պալատումը բաւականին հանգիստ, զոհելով իւր ժամանակի մեծ մասը ընթերցանութեան, որը որ կարճացնում էր իրան միայնակութեան ժամերը։ Նա ամենայն օր մին նոր նոր բարութիւններ էր գտնում գազանի մէջ, և որովհետև ամենայն օր տեսնում էր նորան, շատ ընտելացել էր նորա տգեղութեան հետ և այնուհետև ո՛չ թէ նորանից վախում չէր՝ այլ ստէպ ստէպ նայում էր ժամացոյցին վերայ, թէ արդեօք ժամը ի՞նն է, ըստ որում գազանը միշտ սովորաբար իննը ժամին էր գալիս։ Միայն մին բան էր դժուար թվում Գեղա-

մուհուն, այսինքն ամենայն օր գազանը հանգստանալուց առաջ հարցնում էր նորանից թէ կ'կամենայ արդեօք իւր կին դառնալ. և խորին ցաւերի մէջ ընկղմված էր երևում, երբ որ մերժվում էր իւր առաջարկութիւնը։ Մին օր Գեղամուհին տեսնելով հայելու մէջ որ հայրը հիւանդացել է իրան կորցնելու կսկծից, խնդրեց հրէշիցը որպէս զի թոյլտրութիւն տայ գնալու նորա մօտ տեսութեան։—Խոստացէ՛ք ինձ որ երբէք մենակ թողնելու չէ՛ք ինձ, ասաց գազանը։„—Ես կ'կատարէի ձեր խնդիրքը, պատասխանեց աղջիկը, բայց այնպէս ցանկութիւն ունիմ տեսնելու հօրս. որ կ'մեռնէի, եթէ մերժելու լինիք ինձ այդ ուրախութիւնը։—Քաւ լիցի, լաւ է որ ես մեռնիմ քան թէ դուք, պատասխանեց հրէշը. ես ձեզ կ'ուղարկեմ ձեր հօր տունը, սակայն ձեր տարաբաղդ գազանը պիտի մեռնի անշուշտ տրտմութենից։„—Ո՛չ, ասաց լալով Գեղամուհին, ես ձեզ այնպէս սիրում եմ, որ ձեր մահը ամենևին չեմ ցանկանալ, և ձեզ հաւատացնում եմ որ էլի կ'վերադառնամ ութ օրից յետոյ։ Դուք ինձ իմացրիք որ իմ քոյրերս ամուսնացել են և իմ եղբարքս գնացել են պատերազմ, հայրս այժմ ամենևին միայնակ է մնացել, թոյլ տուեցէ՛ք գնամ՝ ութ օր էլ մնամ այնտեղ։—Էգուց առաւօտը այնտեղ կ'լի՛նիք, պատասխանեց հրէշը, սակայն խնդրեմ չ'մոռանաք ձեր խոստմունքը և երբ որ կամենաք վերստին վերադառնալ ինձ մօտ՝ ձեզ ուրիշ ոչինչ բան անել հարկաւոր չէ, բայց եթէ ձեր մատանին դնել սեղանի վերայ։„

Երբ որ Գեղամուհին զարթնեց, տեսաւ որ իւր հօր տանն է գտնվում, և իրան անկողնոյ մօտ գտնուած զանգակը թխելուց յետոյ՝ տեսաւ որ աղախինը ներս մըտաւ, որը որ մին մեծ ճիչ բարձրացրուց տեսնելով Գե-

ղամուհուն։ Վաճառականը իմանալով այս բանը, իսկոյն վաղեց նոյն սենեակը և նոքա մի քառորդ ժամ միմեանց հետ փաթաթուած մնացին։ Գխեղամուհին այս ուրախութենից յետոյ՝ մտածեց թէ զգեստ չունի հագնելու, բայց այդ միջոցումը աղախինը նորան ասաց թէ միւս սենեակումը ոսկեթել և մարգարտաշար հանդերձներով մին արկղ է տեսել։ Գխեղամուհին շնորհակալութիւն արաւ զազանին, նորա այդ օրինակ ունեցած մտադրութեանը համար. վեր առաւ այդ հանդերձների միջից ամենից վատը և հրամայեց միւսները պահել, քանզի կամենում էր ընծայել իւր քոյրերին, բայց արտաբերեց թէ չ'է այս խօսքը, իսկոյն արկղը անհետացաւ։—„Երևի զազանը կամեցել է, ասաց վաճառականը, որ այս զգեստները ամենն էլ Գխեղամուհուն համար լինին պահած։„ և իսկոյն արկղը վերստին երևեցաւ։ Գխեղամուհին զգեստները հագնելուց յետոյ՝ տեսաւ որ իւր քոյրերը իրանց ամուսինների հետ վաղ 'ի վաղ գալիս էին։ Նոքա երկուսն էլ շատ անբաղդ էին. անդրանիկ քոյրը պսակուել էր մին երիտասարդ ազնուականի հետ, որը որ թէպէտ գեղեցիկ էր ինչպէս Ադոնիսը, (1) բայց այնպէս զբաղուած էր իւր գեղեցկութեամբը, որ ամենևին արհամարհում էր իրա կնկան գեղեցկութիւնը, իսկ կրտսերը ամուսնացած էր մի մարդոյ հետ. որը ժիրաւի շատ խելացի էր սակայն նա գործ էր ածում իւր խելքը ուրիշներին չարէք հասուցանելու համար։ Նորա քուերքը քիչ էր մնում մեռնին նախանձելուց, երբ որ տեսին որ Գխեղամուհին զարդարուել էր ինչպէս մին թագուհի և չքնաղագէմ էր ինչպէս մին ծաղկազարդ մայիսեայ օր։

(1) Սէրոյ չաստուած։

Թէպէտ և շատ սէր և գգուանք ցոյց տուաւ նոցա Գխեղամուհին, բայց այսուամենայնիւ չ'կարողացաւ հեղձուցանել նոցա սրտի նախանձը։ Նորանց ատելութիւնը է՛լ առաւել բորբոքուեցաւ, երբ որ լսեցին թէ որչա՞փ երջանիկ է եղած հրէշի մօտ։ Իսկոյն նոքա խօսք կապեցին նորան կորցնելու համար։—„Ես մին բան եմ մտածել քոյրիկ, ասաց անդրանիկ քոյրը, ջանք անենք նորա մին շաբաթից աւելի պահելու. նորա տխմար զազանը կ'բարկանայ, կարելի որ ուտի էլ։„—Շատ լաւ ես ասում, պատասխանեց միւսը, այդ բանը անելու համար հարկաւոր է նորա գլուխը շողոմել։„ Այս խորհուրդը անելուց յետոյ՝ գնացին Գխեղամուհուն մօտ և այնքան գգուեցին նորան, որ ողորմելին արտասուեց ուրախութենից։ Երբ որ սահմանեալ օրը եկաւ, և Գխեղամուհին պէտք էր որ գնար, մեծ քոյրերը իւրեանց գլխի մազերը փետեցին և այնքան տխուր կերպարանք ձևացրին, որ Գխեղամուհին խոստացաւ ութ օր էլ մնալ։

Այս միջոցումը Գխեղամուհին յանդիմանում էր ինքը իրան հրէշին նեղացնելուն համար և շատ ձանձրանում էր նորան չ'տեսնելուն համար։ Տասներորդ գիշերը, որ անցկացրուց իւր հօր տանը, տեսաւ երազումը, իբր թէ հրէշի պալատի պարտիզումն է գտանվում և տեսնում է որ զազանը ուշաթափ վեր ընկած է խոտի վերայ։ Գխեղամուհին զարթնանալով սկսեց արտասունք թափել։ „Մի՞թէ ես չարագործ աղջիկ չ'եմ, ասում էր նա ինքը իրան, վշտացնելով մի այնպիսի զազանի, որը որ այնքան բարութիւն է արել ինձ։ Իմ ապերախտութիւնս իմ բոլոր կեանքումս պիտի ինձ տանջի։„ Այս խօսքերը անելուց յետոյ մատանին դրաւ սեղանի վերայ և միւս առաւօտը տեսաւ որ արդէն հրէշի ապարանքումն է գտանվում։

Նա լաւ զարդարուեց գազանի աչքումը հաճոյ երեւալու համար և սպասում էր ժամը իննին, բայց ժամը ինն էլ թխեց, սակայն հրէշը չ՚երևեցաւ։ Գեղամուհին ման եկաւ բոլոր օրը բարձրաձիչ աղաղակ բարձրացնելով. Նա յուսահատուած էր։ Բոլոր արքունիքը մանգալուց յետոյ միտը բերեց իւր տեսած երազը, և իսկոյն վազեց պարտէզի ջրանցքի մօտ, տեսաւ որ յիրաւի խեղճ գազանը ուշաթափ գետնի վերայ տարածած է, և այնպէս կարծեց թէ մեռած է, բայց առանց վախելու նորա զարհուրելի կերպարանքից, ընկաւ նորա մարմնոյ վերայ և իմացաւ որ դեռ ևս զարկում է սիրտը։ Իսկոյն ջրանցքիցը ջուր վեր առաւ և ածեց նորա գլխի վերայ։ Գազանը աչքերը բացաւ և ասաց. „Դուք մոռացիք ձեր խոստմունքը և ձեզ չտեսնելուն ցաւը ինձ սովամահ արաւ, բայց այսուամենայնիւ ուրախ պատով եմ մեռնում, քանզի մի ևս անգամ արժանացի ձեր տեսութեանը։ — Ո՛չ, իմ սիրելի գազան, դուք ամենևին չէք մեռնիլ, ասաց Գեղամուհին, դուք կ՚ապրէք և այս րոպէից սկսած տալիս եմ ձեզ իմ ձեռս և խոստանում եմ որ այսուհետև ձեզ եմ պատկանում։" Այս խօսքերը հազիւ թէ ասաց նա, ամարանոցը ճրագներով զարդարվեցաւ, արուեստական հրաձգութիւններ (фейерверки) երևեցան, երաժշտութիւն լսուեցաւ և այդ ամենը աւետում էին մին մեծ տօնախմբութիւն։ Ինչպէ՞ս մեծ եղաւ նորա զարմացումն, երբ գազանը անհետանալով տեսաւ իւր ոտների տակ մին պատանի արքայազն, որը որ աւելի չքնաղ էր, քան թէ նոյն իսկ Աստղիկը և շնորհակալութիւն էր մատուցանում իւր կախարդական կապերը արձակուելուն համար։ Թէպէտ և այս գեղեցիկ թագաւորազնը արժանի էր մտադրութեան, սակայն Գեղամուհին չէր դադարում հար-

ցնելուց թէ ո՞ւր է իւր գազանը։ — Դուք նորան տեսնում էք ձեր ոտների տակ, պատասխանեց երիտասարդը։ Մին չար կախարդուհի պատժել էր որ ես մնամ այս պատկերի տակ մինչև որ մին գեղեցիկ օրիորդ իւր յօժար կամքը համաձայնի ինձ հետ ամուսնանալու. Նա նոյնպէս արգելել էր ինձ ոչովին չյայտնել իմ հանճարը. ուստի բացի ձեզանից ո՛չով չգտանուեցաւ աշխարհիս մէջ առաւել բարեսիրտ, ուրեմն իմ արքայական թագը ձեզ առաջարկելով՝ չեմ կարող չ՚մատուցանել ձեզ այն շնորհակալութիւնը, որը որ զգում է սիրտս։"

Գեղամուհին ժպտելով շնորհալի եղանակաւ մեկնեց ձեռքը թագաւորազնին բարձրացնելու համար։ Նոքա միասին գնացին պալատը և Գեղամուհին քիչ էր մնում ուշաթափ լինի, տեսնելով մեծ դահլիճումը իւր հօրը, իւր բոլոր ընտանիքը և այն տիկինը, որին որ երազումը տեսել էր, և որը որ մին մեծ դիցանոյշ էր։ — „Եկ՛, ընտացի՛ր, այն պարգևը, որը որ դու ինքդ ջոկեցիր, ասաց դիցանոյշը, դու նախապատիւ համարեցիր առաքինութիւնը իմաստութեան և բարորութեան վերայ, ուրեմն, արժանի ես դու գտանել այդ ամեն բաները մին անձնի մէջ, դու մին մեծ թագուհի պիտի դառնաս։ „Իսկ ինչ որ ձեզ է վերաբերվում տիկնայք" երեսը դարձնելով դէպ 'ի Գեղամուհոյ քուերը, ասաց նա. „Ես ճանաչում եմ ձեր սիրտը և նոցա մէջ պարունակուած նախանձը, դուք էլ երկու արձան դառէ՛ք, կանգնած կ՚լինիք դուք ձեր քրոջ ապարանքի դռանը, և ձեզ ուրիշ պատիժ չեմ նշանակում, բայց եթէ լինել նորա բաղդաւորութեանը վկաներ և դուք միայն այն ժամանակը կարող էք ստանալ ձեր բնական կերպարանքը, երբ որ լաւ մտածէք ձեր արած սխալանաց վերայ։ Մարդս կարող է ուղղել իւրան հպարտութենից, բարկութենից, որկրամո-

լութենից և ծուլութենից, բայց չար և նախանձոտ սրտի դարձը համարեա՛ թէ մին հրաշք է։» Այս վայրկենումը դիցանոյշը իւր գաւազանը գետնովը տուաւ և գահլիճի մէջ եղած բոլոր հիւրերը տեղափոխուեցան արքայական թագաւորութիւնը։ Թագաւորազնը պսակուեցաւ Գեղամուհոյ հետ և երկար ժամանակ երջանկութեամբ ապրեց նորա հետ, քանզի այս բաղտաւորութիւնը առաքինութեան վերայ է հիմնուած։

ՄԱՐԻԱՄ

«Նորա քոյրերը, արդեօք միշտ արձան մնացին։

ՏԻԿԻՆ

Այո՛, իմ սիրելի, պատճառ՝ նոքա միշտ չար սիրտ ունէին։

ՇԱՐԼՕՏՏԱ

Ես մին ամբողջ շաբաթ առանց ձանձրանալու լսեցի ձեր պատմած վէպը, ես այն Գեղամուհուն անչափ սիրում եմ, բայց ինձ այնպէս է թւում, որ եթէ ես նորա տեղ լինէի, ամենևին ցանկանալ չ՛էի ամուսնանալ հրէշի հետ, որովհետև շատ զարհուրելի է էլէլ կերպարանքով։

ՏԻԿԻՆ

Դու սխալվում ես, մարդս կարող է տգեղութեանը սովորել, բայց չարութեան հետ ո՛չ երբէք. Հարկաւոր

չէ որ հոգս անէ մարդ տգեղ լինելուն համար, սակայն պիտի որ ամենայն եղանակաւ ջանայ բարի լինելու, այնպէս որ մոռանան նորա տգեղութիւնը՝ տեսնելով նորա բարի սիրտը։ Նկատեցէ՛ք նոյնպէս, իմ սիրելի աղջկերք, որ մին բարի բան չէ մնում երբէք առանց վարձատրութեան։ Եթէ Գեղամուհին յանձն չ՛առնէր մեռանելը իւր հօր փոխանակ, և եթէ նա անկարեկից լինէր խեղճ գազանի ունեցած դառն վիճակի վերայ, հետևողաբար այնպէս մեծ թագուհի չ՛էր դառնալ։ Եւ իմացէ՛ք որ նախանձը ամեն մոլութիւններից վատթարն է։ Բայց արդէն ժամանակ է մեր պատմութիւնը շարունակելու, Ադէլ, քո կարգն է, պատմի՛ր։

ԱԴԷԼ

Մարդկային ազգը բազմանալուց յետոյ և մինոյն հոգին, որ ստիպել էր Կայենին սպանելու իւրան եղբօրը, տիրապետել էր առհասարակ ամենայն այն ժամանակի մարդկանցը։ Տէրը մտքումը դրեց բնաջինջ առնել մարդկանցը, նա միմիայն մին առաքինի մարդոյ պատահեց Նոյ անունով, որը որ շնորհ էր գտել իւր գերդաստանովը Աստուծոյ առաջին։ Տէրը հրամայեց նորան շինել մին տապան և յայտնեց նորա երկայնութեան և լայնութեան չափը։ Նոյ հարիւր տարուց յետոյ, աւարտեց տապանի շինութիւնը և յետոյ մտաւ այնտեղ իւր կնոջ և երեք հարսի և երեք տղերանց հետ, որոնց անուններն էին. Սէմ, Քամ, Յաբեթ։ Նոյնպէս հրամայեց Տէրը մուծանել այնտեղ եօթն ջուխտ սուրբ անասուններից և երկու ջուխտ անմաքուր անասուններից։ Այս ամենից յետոյ Աստուած այնքան ջուր թափեց երկնքից, որ ծածկեց բոլոր տները, լեռները և ծառերը, իսկ մարդ-

կանց և անասուններին էլ առհասարակ խեղդեց, բայց Նոյա տապանը անվտանգ ման էր գալիս ջրի վերայ։ Աստուած իւր վրէժը հանելուց յետոյ՝ հրամայեց ծովերին իւրեանց առաջուայ տեղը մնալ և էլ դադարեց երկնքից անձրև թափելը։ Սորանից յետոյ՝ Նոյ նահապետը բացարաւ տապանի լուսամուտը և մին ագռաւ արձակեց, որը որ էլ յետ չ'դառաւ։ Յետոյ մին աղաւնի ուղարկեց, որը որ դէպ 'ի երիկունը դարձաւ մին ձիթենու ոստ բերանումը բռնած։ Աստուած իսկոյն հրամայեց Նոյին դուրս գալ տապանիցը։ Նահապետը հնազանդեցաւ և ողջակէզ նուիրեց Աստուծոյ։ Միևնոյն վայրկեանումը տեսաւ նա երկնքի վերայ մին կամար, որը որ կապոյտակ, կարմիր, ծիրանի և կանաչ գոյներից էր բաղկացած։—„Այդ ծիածանը ձեզ համար ուղարկում եմ, ասաց նորան Տէրը, որ նշան լինի թէ միւս անգամ ջրեհեղեղ չ'պիտի անեմ։

ՏԻԿԻ՛Ն

Ասա՛, տեսնեմ Եւգենիա՛, իմ այսօրուայ ասած պատմութենիցը ի՞նչ բարի մտածողութիւն ես անում։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Ինչպէս Նոյը ամենից առաջ կամեցել է Աստուծոյ շնորհակալութիւն մատուցանել, նոյնպէս էլ ես չ'եմ մոռանալ ամենայն օր շնորհակալութիւն անելու այն բարիների համար, որ արել է և անում է մեզ համար։

ՏԻԿԻ՛Ն

Ձեր մտքումը պահեցէ՛ք, սիրելի օրիորդներ, թէ ինչ

որ ունի՛ք, Աստուածանից էք ստացած. վասն զի ամենայն բան Նորան է պատկանում և Նա է ամենայն բանի արարիչը։ Բայց կարծեմ անձրև է գալիս, մաննենք սենեակը։

ՄԱՐԻԱՄ

Ո՛հ, տիկին, նայեցէ՛ք այս կողմը, ես կարծեմ որ այս այն է, որին որ դուք ծիածան էք անուանում, ո՛հ զարմանալի գոյներ։

ՏԻԿԻ՛Ն

Ճշմարիտ ես ասում սիրելի, երբոր այդ տեսնենք, անշուշտ մեր միտը պիտի բերենք այն դաշնակցութիւնը, որը որ Աստուած կապել է մարդկանց հետ, ուրեմն չ'ըպիտի երբէ՛ք մտիկ տանք այդ աղեղի վերայ առանց շնորհակալութիւն մատուցանելու մեր սրտի մէջ Աստուծոյ բարութեանը, որը որ ներել է մեր յանցանքները։ Փութով մաննենք տուն, ես արդէն զգում եմ անձրևի մեծ մեծ կաթիլները։ Բայց եօթն ժամը լրացած է արդէն, պետք է բաժանուինք միմեանցից։ Ես ձեզ կ'սպասեմ էգուց և խոստանում եմ մին հրաշալի առասպել պատմելու ձեզ այսօրուայ փոխանակ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻՆ

Մարիամը ինձ խօստացել էր գրել իւր արած յիմարութիւնները։ Արդեօք Մարիամը չունի ոչինչ ինձ յանձնելու։

ՄԱՐԻԱՄ

Ներեցէ՛ք, տիկին, ահա՛ այն թուղթը, որոյ մէջ գրած է շատ վատ բաներ, բայց աղաչեմ կամաց ձայնով կարդացէ.ք։

ՏԻԿԻՆ

Այդ մասին հանգիստ կա՛ց, իմ նազելի Մարիամ։ Աղջիկ՛ըք, պէտքէ իմ խօսքին տէր լինիմ, ձեզ մի առասպել պատմեմ, ուրեմն նստեցէ՛ք, և ես կատարեմ իմ պարտքս։

ՓԱՏԱԼ ԵՒ ՓՈՐՏՈՒՆԷ

ԱՌԱՍՊԵԼ

Եղել է մին անգամ մին թագուհի, որը որ ունեցել է երկու գեղեցկատեսիլ որդիք։ Մին բարեկամ դիցանոյշի խնդրել էին որ արքայազնների կնքամայր դառնայ և նորանց վարձատրութիւն անէ։—„Անդրանիկ որդիդ պիտի շատ անբաղդ լինի, ասաց դիցանոյշը, մինչև քանի տարեկան հասակը և նորա անունը Փատալ (1) պիտի դնենք։„

(1) Վշտակիր։

Երբ որ այս խօսքերը լսեց թագուհին, սկսեց բարձրաձիչ աղաղակ բառնալ և խնդրել դիցանոյշից որ փոխէ իւր որդւոյ վիճակը։—„Քոյ խնդրածը, դու ինքդ էլ չ'ես իմանում, պատասխանեց դիցանոյշը, եթէ նա անբաղդ չլինի, անշուշտ չարասիրտ կ'լինի։

Թագուհին էլ ոչինչ չ'համարձակուեց ասել բայց միայն խնդրեց որ իրան թողնէ ընտրելու երկրորդ որդւոյ ճակատագիրը։

—„Դէ լաւ է, ասաց դիցանոյշը, ես ցանկանում եմ որ նա յառաջադիմութիւն ունենայ իւր ամենայն գործոյ մէջ և այս պարգևը տալիս եմ նորան մինչև քսանըհինգ տարին։„

Այս երկու արքայազններին համար դայեակներ վարձեցին, բայց երեք օր դեռ չ'լրացած մեծ որդւոյ դայեակը ջերմուտենդ ունեցաւ և գնաց։ Մի ուրիշ դայեակ բռնեցին, որը որ եկաւ թէ չ'է, իսկոյն ոտը կոտրվեցաւ. այնուհետև ո՛չ ով չ'կամեցաւ սնուցանել Փատալին, ո՛չ էլ մօտենալ նորան։ Այս խեղճ երեխայն լալում էր քաղցածութենից, բայց ո՛չ ով նորա վերայ կարեկցութիւն չէր ցոյց տամ։ Այս միջոցումը մին կոպիտ և աղքատ գիւղացի կնիկ, ասաց թէ կ'խնամէ թագաւորազնին, եթէ նորան մին մեծ գումար փող տալու լինին։ Թագաւորը և թագուհին կատարեցին նորա ասածը։ Կրտսեր թագաւորազնը, որին անունը Փորտունէ (2) էր, աքանչելի եղանակաւ անց էր կացնում իւրեան օրերը. նորա ծնողքը անչափ սիրում էին նորան, և էլ ամենևին մտածում չ'էին Փատալի վերայ։ Այն չարասիրտ կնիկը, որին որ յանձնել էին Փատալին որ սնուցանէ, հագցրուց թագա-

(2) Բաղդաւոր։

ւորազնի զգեստները իւրեան հասակակից որդւոյն և ո-
ղորմելի Ֆատալին փաթաթելով մի հին զգեստի մէջ տա-
րաւ անտառը և դրաւ մին փոսի մէջ, ուտեղ երեք կորիւն
կային, որպէս զի արքայազնը նոցա կերակուր դառնայ:
Բայց ընդհակառակը՝ այն կորիւնների մայրը ո՛չ թէ
վնաս տուաւ նորան, այլ այնպէս կերակրեց նորան որ
վեց ամսից յետոյ մենակ վազվզում էր անտառի մէջ:
Այս միջոցումը Ֆատալին տեղ համարուած դայեակի
որդին մեռաւ, թագաւորը և թագուհին էլ այնպէս կար-
ծեցին թէ նա իւրեանց որդին է եղած:

Ֆատալը երկու տարի կացաւ ծմակի մէջ, մի անգամ
պալատականներից մինն, որս գնալով այնտեղ, շատ զար-
մացաւ տեսնելով այս երեխային գազանների մէջ և խղճ-
ալով նորա վերայ, վեր առաւ տարաւ իւրեան տունը և
իմանալով որ Ֆորտունէի ընկերակցութեան համար մին
երեխայի էին մանդալիս, Ֆատալին ներկայացրուց թա-
գաւորին: Թագուհին Ֆորտունէի համար վարժապետ-
ներ վարձեց, հրամայելով նոցա որ ամենևին չլացցնեն
արքայազնին: Երիտասարդ թագաւորազնը լսելով այս
խօսքը, երբ գիրը վեր էր առնում ձեռքը, իսկոյն սկսում
էր լաց լինել, այնպէս որ հինգ տարուայ մէջ կարողա-
նում չէր կարդալ կամ գրել: Իսկ Ֆատալը լաւ կար-
դում էր և գրում: Ֆորտունէին վախեցնելու համար,
պատուիրեցին վարժապետներին որ Ֆատալին մորակով
ծեծեն ամեն ժամանակ, երբ որ Ֆորտունէն ճշտութեամբ
կ'կատարէ իւր պարտաւորութիւնը: Բայց չմոնիկ պրած
սրանից Ֆատալի դէմ 'ի գործ դրուած հարստահարութեանց՝
իւր ուսումը շատ լաւ յառաջ էր տանում: Ահա՛ խեղճ
Ֆատալը տասը տարի իւրեան ժամանակը անցկացրուց
այս եղանակ և թագուհին զարմանալով իւր որդւոյ յի-

մարութեան վերայ, ասաց ինքը իրան. „Դիցանուշը ինձ
խաբեց. ես կարծում էի թէ իմ որդիս բոլոր թագաւո-
րազներից գերազանցը պիտի լինի, քանզի նա ինձ խօս-
տացաւ որ որդիս յառաջադիմութիւն կ'ունենայ իւր ա-
մեն ուզած բաների մէջ:„ — Տիկի՛ն, դու ցանկացած պի-
տի լինէիր բարի կամք քո որդւոյդ համար, ասաց դիցա-
նուշը, և ո՛չ թէ տաղանդ: Նա կամենում է չար լինել
և յառաջանում իւր կամքը կատարել ինչպէս դու ինքդ
տեսնում ես:„ Այս խօսքերը թագուհուն ասելուց յետոյ՝
երեսը շուռ տուաւ նա: Երիտասարդ թագաւորազնը,
որը որ բարկանում էր, տեսնելով Ֆատալի յառաջադի-
մութիւնը՝ ասաց մօրը թէ կ'մեռնէ սովից: եթէ նորան
դուրս չ'դցեն պալատից: Կատարեցին Ֆորտունէի խըն-
դիրքը և մեր խեղճ Ֆատալը փողոցներումը ընկած և
մարզիկ վախենալով որ չ'լինի թէ թագաւորազնի աչքու-
մը առնէ երևան, ոչ ով չ'տարաւ այդ երեխային իւր
տունը: Ֆատալը անցկացրուց գիշերը մին քարանցաւի
մէջ, դողդողալով ցրտից, քանզի ձմեռ ժամանակ էր և
մին կտոր ցամաք հացից 'ի զատ ոչինչ չ'ունէր ընթրիք
անելու, որը որ տուել էին իբրև ողորմութիւն տանից
աքսորելու ժամանակը: Միւս առաւօտը Ֆատալը վեր-
կենալով, սկսեց իւր աղօթքը անել: Այս միջոցումը մին
գիւղական անցկենալով այն կողմովը, տեսաւ նորան, և
ասաց ինքը իրան. „Այս երեխան պիտի մին պատուա-
ւոր աղայ լինի, ես յօժարութեամբ կ'առնեմ նորան իմ
տունը որ իմ ոչխարներս պահէ և Աստուած անշուշտ
կ'վարձատրէ ինձ այդ բարի գործի համար:„ Համբերեց
մինչև աղօթքը վերջացրուց և յետոյ ասաց՝ „սիրելի բա-
րեկա՛մ, կ'կամենաս արդե՞օք գալ իմ ոչխարներս պահե-
լու, ես էլ քեզ կ'սնուցանեմ և կ'խնամեմ հայրաբար:„ —

Ի բոլոր սրտէ, պատասխանեց Փատալը, և որքան որ կարողանամ, կ'աշխատեմ քեզ լաւ ծառայելու։" Այս գիւղականը մին ագարակ պահող էր և շատ ծառայք ունէր, որոնք որ յաճախ գողութիւն էին անում։ (Գիւղականի կինը և երեխայքը խաբում էին նորան այսպէս ասելով։) Երբ որ գիւղականի կինը և երեխայքը տեսին Փատալին շատ ուրախացին։ "Այդ մին փոքր երեխայ է, ասում էր կինը ինքը իրան, և դա կ'կատարէ իմ ցանկացածը։" Մին օր ասաց նա Փատալին. "Սիրելի բարեկամ, իմ ամուսինս շատ ագահ մարդ է, ինձ փող չ'է տալիս, թոյլ տուր ոչխարներից մինը վեր առնեմ և դու կ'ասես թէ գայլը յափշտակել է։—Տիկին, ես 'ի բոլոր սրտէ կ'անէի ձեզ այդ ծառայութիւնը, պատասխանեց Փատալը, բայց առաւել լաւ է որ ես մեռնեմ, քան թէ խաբեմ և գող լինիմ։ Այս խօսքերը երբ որ լսեց գիւղականի կինը, սկսեց ապտակ տալ այս անմեղ երեխային և փետել մազերը։ Փատալի ձայնի վերայ դուրս գալով գիւղականը, հարցրուց կնոջիցը թէ ի՞նչի է ծեծում։—"Յիրաւի, այդ մին որկրամոլ երեխայ է, պատասխանեց կինը, ես այսօր սեր էի պատրաստել շուկայ տանելու համար, եկել է կերել։—Փ'ո՜ւ, ի՞նչ վատ բան է որկրամոլ լինելը, ասաց գիւղականը և իսկոյն հրամայեց ծառաներին որ Փատալին մտրակով ծեծեն։ Այս չարաբաստիկ երեխայն ասում էր թէ ամենևին սեր չ'է կերել. բայց գիւղականը առաւել իւր կնկանն էր հաւատում, քան թէ նորան։ Սակայն այս չարասիրտ կնիկը չ'բաւականացաւ սրանով իրան վրէժը հանել այն ողորմելի երեխայից՝ այլ և գրգռեց ծառաներին որ նորան տանիցը դուրս գցեն։ Խղճալի Փատալը գիշեր և ցերեկ անց էր կացնում մին անապատ դաշտի մէջ և փոխանակ

նորան էլ տալու այն կերակուրներիցը որ միւս սպասաւորները ուտում էին՝ միայն նորա համար մին քիչ ջուր էին ուղարկում և մին կտոր չոր հացի փշրանք. և երբ որ վերադառնում էր տունը, տանը ինչ որ վատ բան էր լինում պատահած՝ նորա վրէն էին քցում։ Փատալը մին տարի մնաց այս ագարակատիրոջ մօտ և չ'մոռնիկ արած որ նա չոր գետնի վերայ էր քնում և ցամաք հացից առաւել ոչինչ չ'էր ուտում, այնպէս զօրեղ դառաւ որ տասներկու տարեկան հասակումը ամենքը կարծում էին թէ տասնըհինգ տարեկան է։

Մին օր, երբ նա դաշտումը աշխատում էր, լսեց որ մին դրացի թագաւոր պատերազմ է բացել, Փատալը իրաւունք խնդրեց իւր տէրիցը և գնաց այն թագաւորի տէրութիւնը զինուոր դառնալու։ Նա ծառայութիւն մտաւ մին հարիւրապետի մօտ, որը որ թէպէտ մեծ իշխան էր, բայց այնպէս չարասիրտ էր որ բոլոր աշխարհը ատում էր նորան։ Այս հարիւրապետի մօտ, Փատալը աւելի վատ օրեր տեսաւ, քան թէ ագարակատիրոջ մօտ։ Նա տասը տարի ժամանակաւ վարձուած էր այդ մարդի մօտ, և թէպէտ տեսնում էր որ իւր ընկերակիցներից շատերը փախչում էին, այսուամենայնիւ հետևում չ'էր նոցա վատ օրինակներին և այսպէս էր ասում ինքը իրան։ "Ես տասը տարուայ փողը ստացել եմ, ուրեմն գողութիւն կ'անեմ, եթէ հաստատ չ'մնամ իմ խօսքիս։" Թէպէտ այս հարիւրապետը մին չարաբարոյ մարդ էր և չարչարում էր բոլոր ծառայողներին, այսուամենայնիւ չ'էր կարողանում չ'պատուել Փատալին, տեսնելով որ իրան պարտաւորութիւնը ճշտութեամբ կատարում էր։ Նա փող էր տալիս Փատալին իւր տան համար ծախս անելու և նոյնպէս տալիս էր տան բանալիքները, երբ որ ուրիշ

տեղ էր գնում ինքը: Այս հարիւրապետը թէպէտ կարդալ չէր իմանում, բայց այսուամենայնիւ մին մեծ գրատուն ունէր իրան մօտ եկողներին հաւատացնելու համար թէ ինքը մին իմաստուն մարդ է:

Ֆատալը իւր զինուորական գործքերը աւարտելուց յետոյ՝ փոխանակ գինի խմելու կամ թուղթ խաղալու իւր ընկերակիցների պէս, մտնում էր իւր սիրոջ գրատունը և խելօք մարդկան կենսագրութիւն էր կարդում, և վերջապէս ընդունակ եղև մինչև անգամ զօրաց վերայ հրամանատար դառնալու: Մին անգամ հարիւրապետը վեր առաւ Ֆատալին ուրիշ եօթն զինուորների հետ և. գնաց մին ծմակ, նորա դիրքը իմանալու համար: Երբ որ անտառը հասան, զինուորները կամաց ձայնով ասացին. „Եկէք սպանենք այս չարաբարոյ մարդին, որը որ չաչարում է մեզ և մեր հացը գողանում է:„ Ֆատալը կամեցաւ նոցա հրաժարացնել այդ չար դիտաւորութենիցը, բայց նոքա հնազանդելու տեղ, ասացին թէ քեզ էլ կ'սպանենք հարիւրապետի հետ 'ի միասին և իսկոյն նիզակները մեկնեցին դէպ 'ի նա. Ֆատալը սկսեց մենամարտել նոցա հետ և նորանցից չորսին սպանեց: Հարիւրապետը տեսնելով որ իւր կեանքը պարտաւոր է այնուհետև Ֆատալին, ներողութիւն խնդրեց նրանից իւր արած չարութեանց համար: Այս համբաւը թագաւորի ականջը հասնելով, Ֆատալը հարիւրապետի աստիճան ստացաւ և մին մեծ գումար ռոճիկ: Նա այս նոր պաշտօնի մէջ շատ սիրեցնել տուաւ իւրեան անձը զինուորներին:

Այս միջոցումը մին սաստիկ պատերազմ բացուեցաւ, զօրագլուխը սպանուեցաւ, պաշտօնակատարները և զինւորներն էլ փախան, իսկ Ֆատալը բարձր ձայնով ասաց

թէ լաւ է մեռնել պատերազմի դաշտումը զէնքերը ձեռին, քան թէ փախչել ինչպէս մին փոքրահոգի. „Զինւորները այս խօսքերը լսելով, միաբերան ասացին թէ հեռանալու չ'են նրանից, և նոցա այդ օրինակ քաջասրտութիւնը ամաչեցրուց միւսներին, որոնք կարգաւ շրջապատելով Ֆատալին այնպէս յաղթութեամբ պատերազմեցին որ թշնամի թագաւորի ժառանգին գերի բռնեցին: Ֆատալի այդ օրինակ ունեցած քաջութիւնը թագաւորը լսելով՝ ընդհանուր հրամանատար նշանակեց նորան և իսկոյն ներկայացրուց իւր կնկան և աղջկան: Ֆատալը քիչ մնաց պժուի, տեսնելով թագաւորի աղջկայ գեղեցկութիւնը, բայց այսուամենայնիւ մտքումը ղրեց ծածկել իւր սրտի զգացմունքը: Այս միջոցումը նա լսեց թէ Ֆորտունէն տեսնելով այդ թագաւորի աղջկայ պատկերը, որին անունը Գրացիօզա էր, կամեցել է ամուսնանալ նորա հետ, վաղորդ դեսպաններ էր ուղարկել նորա մօտ իրան համար 'ի կնութեան խնդրելու: Ֆատալը երբ որ լսեց այդ՝ շատ նեղացաւ, բայց Գրացիօզան իմանալով Ֆորտունէի չարասրտութիւնը և փոքրահոգութիւնը, աղաչել էր հօրը որ իրան չ'ստիպէ նորա հետ պսակուելու, վաղորդ պատասխանել էին դեսպաններին թէ Գրացիօզան կամենում չ'է դեռ ևս ամուսնանալ Ֆորտունէն, որը որ իւր կեանքումը ամենևին ընդդիմախօսութիւն չ'էր լսած, գազանի պէս կատաղեցաւ, լսելով Գրացիօզայի բացասական պատասխանը և պատերազմ բացաւ իսկոյն նորա հօր դէմ, որը որ այնպէս էր պատասխանել: „Քանի որ Ֆատալը ընդհանուր հրամանատար լինի իմ զօրաց վերայ, ամենևին երկիւղ չ'եմ ունենալ յաղթուելուց„ և յետոյ Ֆատալին ասաց որ պատերազմի պատրաստութիւն տեսնէ: Ֆատալը ընկ-

նելով Թագաւորի ոտները ասաց թէ չէ կարող Փորտունէի դէմ պատերազմել, քանզի նորա տէրութեան մէջ է ծնուած։ Թագաւորը շատ բարկացաւ նորա վերայ և ասաց թէ կ'սպանէ, եթէ կատարելու չլինի իւրեան հրամանը, իսկ եթէ յաղթութիւն գործէ, կարող է առնել Գրացիօզան 'ի կնութիւն։ Փատալը, որը որ սիրում էր Թագաւորի աղջկանը, թողեց իւր բոլոր հարստութիւնը, Թագաւորական պալատը և ճանապարհ ընկաւ առանց Թագաւորին մի բան ասելու։

Այս միջոցումը Փորտունէն իրան զօրքին առաջնորդ դառնալով, առաջ խաղաց, բայց հինգ օրը դեռ չլրացած՝ հիւանդացաւ նեղութենից և նորա պալատականները ասացին թէ տեսել են Գրացիօզայի հօր դռանը այն փոքր տղան, որին որ իրանք աքսորել էին պալատիցը, և որին որ խոստացել է Թագաւորը անպատճառ իրան աղջկայ Գրացիօզայի հետ ամուսնացնել նորան։ Խեղճ և թշուառ Փորտունէն այս նոր համբաւը լսելով, շատ բարկացաւ և հենց որ առողջացաւ, գնաց Գրացիօզայի հօրը դահավէժ անելու և խոստացաւ մին մեծ գումար փող տալ նորան՝ ով որ կարողանայ Փատալին բռնած բերել իւրեան մօտ։ Փորտունէն մեծ յաղթութիւն գործեց, թէպէտ և ինքը չէր պատերազմում, երկիւղ կրելով թէ մի՛ գուցէ սպանուի, և վերջապէս պաշարելով թշնամու մայրաքաղաքը մտքումը դրեց հիմնայատակ կործանել նորան և հրամայեց որ Փատալին շղթաներով կապած բերեն իւր մօտ, ըստ որում կամենում էր թշնամիների առաջ գլուխը կտրել տալ։ Այս միևնոյն օրումը նա մին մեծ հացկերութիւն տուաւ իւր պալատականներին, քանզի իւր ծննդեան օրն էր և քսանըհինգ տարին լրացել էր։ Այս մայրաքաղաքի մէջ ե-

ղած զինուորները, իմանալով որ Փատալը շղթաներով կապած է և մին քառորդ ժամ է մնում որ գլուխը կտրուի, իւրեանց մտքումը որոշեցին մտնել կամ ազատել նորան, քանզի անմոռաց իւրեանց մտքումը պահած էին այն բարի գործերը՝ որոնք արել էր նա իւր ընդհանուր հրամանատար եղած ժամանակը։ Նոքա իրաւունք խնդրեցին Թագաւորիցը պատերազմելու, և այս անգամը յաղթող հանդիսացան, և Փորտունէն կամենալով փախչել սպանվեցաւ։ Յաղթական զինուորները արձակեցին Փատալի շղթաները։

Յանկարծ տեսին որ օդի մէջ երկու արեգակի պէս լուսաւոր կառքեր, որոնցից մեկին մէջ զիցանուշն էր նստած, միւսի մէջ Փատալի ծնողները, բայց քնած։ Նոքա զարթնեցան իսկոյն, երբ որ կառքը գետնին դիպաւ և շատ զարմացած մնացին, տեսնելով իւրեանց զօրքերով շրջապատած։ Արանից յետոյ զիցանուշը մատով ցոյց տալով Փատալի վերայ, ասաց. „Տիկի՛ն, ճանաչէ՛ք այս դիւցազնի մէջ քո անդրանիկ որդի Փատալին, այն թըշուառութիւնները, որոնց երկար ժամանակ համբերել է նա, ուղղել են նորա բնաւորութիւնը, որը որ անգութ էր և զայրացկոտ։ Իսկ Փորտունէն, որը որ ընդհակառակը ծնուած էր բարի հակամիտութիւններով, ամենևին չարագործ դառաւ շարունակ. շողոքորդութիւններ ստանալու պատճառաւ և Աստուած էլ չկամեցաւ որ նա առաւել ապրի, որովհետև օր ըստ օրէ ևս առաւել չարագործ էր դառնալու։ Բայց քեզ մխիթարելու համար, ասում եմ որ նա մտադիր էր իւր հօրը դահավիժելու։„ Թագաւորը և Թագուհին շատ զարմացին և սկսեցին փաթաթուել Փատալին, որը որ պսակուեց Գրացեօզայի հետ և երկար ժամանակ երջանկութեամբ ապրեց նորա հետ 'ի միասին։

ՄԱՐԻԱՄԸ (հոգւոց հանելով։)

Ո՜հ, ինչպէ՞ս ուրախ եմ, տեսնելով ողորմելի Ֆատալին հանգստացած, շատ վախում էի որ չլինի թէ այդ չարաբարոյ Ֆորտունէն նորա գլուխը կտրելայ։

ՏԻԿԻ՛Ն

Մին քիչ խորհրդածութիւն անենք, սիրելի աղջիկերք։ Դուք ամենքդ սիրում էք Ֆատալին և ատում էք Ֆորտունէին։ Արդ՝ լաւ երևակայեցէք որ բոլոր մարդիկը ունին նոյն ցանկութիւնը, ինչպէս դուք, նրանք սիրում են լաւերին և նեղանում են, երբ որ վատ բան է պատահում նոցա հետ։ Ձեր մտքումը լաւ պահեցէք այս, իմ սիրելիք, որ հարստութիւնը և ազնուութիւնը չեն կարող սիրեցնել տալ և յարգոյ տանել ձեզ, բայց միայն ձեր բնաւորութիւնն է կարող։ Մարիա՛մ, չմոռանաս, եթէ դու քո չարութիւնները էլի շարունակես, ամենքը կ՚ատեն քեզ և կ՚արհամարեն, թէպէտև շատ հարուստ լինես և մեծ մեծ տիտղոսներ էլ ունենաս։

ՄԱՐԻԱՄ

Աւա՜ղ, տիկի՛ն, ճշմարիտ է, թէպէտև այժմ ո՛չ ով աչքով աչք չունի ինձ տեսնելու, սակայն դուք լաւ իմանում էք որ ես կամենում եմ ինձ ուղղել։

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, սիրելի, ես յոյս ունիմ, և եթէ դու աշխատես լսել իմ խրատներին, շուտով կ՚հասնենք մեր նպատակին, բայց ինձ թոյլ տո՛ւր կարդալ բարձր ձայնով այն թուղ-

թը, որը որ անցեալ օրը ծածուկ ինձ տուեցիր։

ՄԱՐԻԱՄ

Ո՛հ տիկի՛ն, ես կ՚ամաչեմ որ կարդաք . . . . . բայց եթէ իմանում էք որ այդ բանը կարող է ինձ օգուտ բերել, կարդացէ՛ք ուրեմն։

ՏԻԿԻ՛Ն

Եկ՛, քեզ համբուրեմ, նազելի Մարիամ, պատճառը որ շատ գոհ եմ քո այդ քաջասրտութենից, մէկ կողմիցն էլ վատ բան չէ ամաչելը։ Կարդում եմ։ „Ես չեմ կամեցել իմ դաստիարակուհուս հնազանդուել, ես ասել եմ
„որ նա շատ յանդուգն է այդպէս բաներ ինձ հրամայե-
„լուն համար, որովհետև նա իմ աղախինս է, ես նոյն-
„պէս ասել եմ նորան թէ շատ կ՚ցանկանայի նորա այն-
„պէս բարկացնել որ ինձ թակէ և ոտս կամ կուռս կոտ-
„րէ, որովհետև այդ առիթ կ՚տայ մեզ նորա տանիցը
„դուրս քցելու։„

ՄԱՐԻԱՄԸ ԱՐՏԱՍՈՒԵԼՈՎ

Ա՜խ, իմ սիրելի բարեկամ, այս աղջիկերքը էլ աւելի ընդունելու չեն ինձ իւրեանց հասարակութեան մէջ, իմանալով իմ արած չարութիւնները։

ՏԻԿԻ՛Ն

Բայց սիրելիդ իմ, նոքա տեսնում են թէ, որքան ցանկութիւն ունիս քեզ ուղղելու։ Ես կ՚ամենում չեմ ասել թէ որչափ սարսափելի են քո արած խօսքերը դաստիա-

բակուհիից վերայ, ուզում եմ մոռանալ, վասն զի դու արդէն ճանաչում ես քո սխալանքը։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Լաց մի՛ լինե՛լ, սիրելի Մարիամ, մենք ամենքս էլ քեզ սիրում ենք և ես հաւատաի եմ որ այսուհետև էլ այդ օրինակ սխալանք չ'ես ունենալ։

ՇԱՐԼՈՏՏԸ

Մի քանի օր սորանից առաջ կարդացի որ մի մեծ փիլիսոփայ է էլել, որին որ բոլոր աշխարհը պատիւ է էլել տալիս նորա բարի բնաւորութիւն ունենալուն համար։ Նա մի օր ասել է թէ ծնուել է որկրամոլ, գող, ստախօս և հարբեցող բնաւորութիւններով, բայց ո՛չ ով կամենում չէր հաւատալ, քանզի ամենևին իւրեան ուղղել էր։ Նոյնպէս երբ որ Մարիամը մեծանայ, ո՛չ ով չէ հաւատալ թէ նա մի ժամանակ չարաբարոյ աղջիկ է էլել, որովհետև նա այնպէս բարի կ'լինի, որ ամենեցուն կ'զմայլեցնէ։ Այս փիլիսոփայի անունը, եթէ չ'եմ սխալվում, Սոկրատես էր։ Ես երեկ մի պատմութիւն էլ կարդացի, որը որ նորա է վերաբերվում։

Սոկրատեսը մի չար կնիկ ունէր, որը որ բոլոր օրը հայհոյում էր մարդուն։ Մի օր, երբ որ նա շատ հայհոյութիւն էր անում նորան, փիլիսոփան դուրս եկաւ սենեակիցը, որպէս զի նորա խօսքերը չ'լսէ։ Այն չարաբարոյ կնիկը կատաղեցաւ ո՛չովին չ'գտնելուն համա՛ր որ հետը կռուի, վերջապէս երբ որ համբերութիւնը հատաւ, վեր առաւ մի սափոր կեղտոտ ջուր և ածեց իւր մարդու գլխին։ Կարելի՞ է դուք կարծէք թէ Սոկրա-

տեսը բարկացած լինի իւր կնկան վերայ։ Ամենևին ո՛չ, այլ նա սկսաւ ծիծաղել և ասել իւր բարեկամների մէջն, որը որ այնտեղ էր գտնվում։ „Որոտմունքից յետոյ՝ միշտ անձրև կ'գայ։" Կնոջ հայհոյանքը նա որոտմունքի էր նմանացնում, իսկ այն կեղտոտ ջուրը, որը որ իւր զգեստները թրջեց՝ անձրևի։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Ես հաւատաի եմ որ նորա կինը աւելի ուրախ կ'լինէր որ իւր մարդը ծեծէր իւրեան քան թէ ծիծաղէր։"

ՏԻԿԻ՛Ն

Ճշմարիտ ես ասում, հարկաւոր չէ հետամուտ լինել վրէժխնդիր լինելու, այդ շատ վատ բան է. բայց այս էլ ստոյգ է որ մարդ ցանկանում է վրէժխնդիր լինել, երբ իրան դէմ չարութիւն են անում, ծիծաղելով նոցա արած չարութեանց վերայ։ Այժմ էլ Ադէլը և Եւգենեան պիտի պատմեն իւրեանց դասը։

ԱԴԷԼ

Երբ Նոյ նահապետը դուրս եկաւ տապանիցը, խաղողի ծառ տնկեց։ Այս տունկիցը՝ խաղող դոյացաւ և նահապետը գինի շինեց։ Նոյ չ'իմանալով նորա զօրութիւնը, մի օր այնքան խմեց նորանից որ ամենևին բանականութիւնը կորցրուց։ Նորա որդի Քամը փոխանակ ծածկելու իւր հօր արած յիմարութիւնը, սկսեց ծիծաղել և կանչել երկու եղբարցը, որպէս զի նոքա էլ ծիծաղեն։ Բայց Սեմը և Յաբեթը ասացին թէ շատ վատ բան է հօր վերայ ծիծաղելը և հարկաւոր չէ եր-

չէ՛ք ուրիշի ասել, երբ որ ծնողները մին վատ գործ են անում։ Յորժամ հայրը Թմրութենից զարթնեցաւ և իմացաւ իւր որդւոյ արածը, ասաց. „Քամը անիծած լինի և իւր եղբօրց ծառաներին ծառան լինի, իսկ Սէմը և Յաբեթը օրհնած լինին և մին երկար կեանք վարեն։„

ԵՒԳԵՆԻԱ

Նոյ նահապետը մեռաւ 950 տարեկան հասակումը։ Նորա սերունդները բազմանալով, սկսեցին բաժանուել միմեանցից, որպէս զի գնան ուրիշ տեղ բնակուեն, բայց նախքան զամենայն հպարտութեան քամին փչեց նոցա մէջ։—„Եկէ՛ք, մին մեծ քաղաք շինենք, ասացին նոքա մեկը միւսին, և մին աշտարակ, որոյ բարձրութիւնը կարողանայ հասանել մինչև երկինքը, և այնպէս հուչակաւոր անենք մեր անունը մինչև մեր միմեանցից բաժանուելը, և եթէ Աստուած կամենալու լինի միւս անգամ ջրհեղեղով կորուսանել մեզ՝ կ՚բարձրանանք աշտարակը, վասն զի ջուրը կարող չ՚պիտի լինի հասանել մինչև այնտեղ։„ Ուստի նոքա սկսեցին շինութիւնը և քսաներկու տարի չափ էլ աշխատել էին, բայց Աստուած ծիծաղեց նոցա յիմարութեան և ունայնասիրութեան վերայ, և ցանկանալով որ նոքա միմեանց չ՚հասկանան՝ շփոթութիւն քցեց նոցա լեզուի մէջ։ Այս պատճառաւ նոքա հարկադրուեցան թողնել անկատար իւրեանց հպարտութեան սկսած գործը, վասն որոյ և այդ քաղաքի անունը մնաց Բաբել, որ կ՚նշանակէ շփոթութիւն։

Նոյ նահապետի որդիքը այսպէս բաժանուեցին։ Քամի և Քանանի որդիքը գնացին իւրեանց համար բնակութիւն հաստատեցին արևմուտքումը և Սէմի որդիքը Ասորեստանի երկրումը մնացին։

ԱԴԷԼ

Տիկի՛ն, ես այդ կողմերը ամենևին չ՚եմ ճանաչում։

ՏԻԿԻՆ

Ահա՛ այս վայրկեանումս ցոյց կ՚տամ քեզ մին աշխարհագրական քարտէզի վերայ։ Ամենից բարձր կողմը ասվում է հիւսիս, ամենից ցածր կողմը՝ հարաւ, քո աջի ձեռի կողքինը՝ արևելքն է իսկ ձախ ձեռի կողքինը արևմուտն է։

ԵՒԳԵՆԻԱ

Ի՞նչի այդ քարտէզը զանազան գոյներով է նկարած։

ՏԻԿԻՆ

Ջրերը ցամաքներից ջոկելու համար և իմանալու աշխարհիս հինգ մասը, որոնց անուններն են. Եւրոպայ, Ասիայ, Աֆրիկէ, Ամերիկայ, և Ովկիանոս։ Եւրոպան գտանվում է հիւսիսային կողմումը, Ասիան՝ արևելքումը, Աֆրիկէն՝ հարաւային կողմումը, իսկ Ամերիկան՝ արևմտեան կողմումը։ Մեր նախահայր Ադամը ծնուել է Ասիայի մէջ, իսկ մենք բնակվում ենք Եւրոպումը։

ՇԱՐԼՈՏՏԱ

Տիկի՛ն, Նոյի որդկերանցից, որը մեր հայրը դառաւ։

ՏԻԿԻՆ

Յաբեթը։

ՇԱՐԼՈՏՏԱ

Իմ սիրելի բարեկամ, առասպելախօսութեան մէջ շատ բաներ կան, որոնք նման են սրբազան պատմութեան, օրինակ, ոսկի դարը, հսկաների արած քաջութեան գործերը և ջրհեղեղը։

ՏԻԿԻՆ

Այդ նմանախօսութեան տեղերը այսպէս ենք պարզաբանում։ Ջրհեղեղից յետոյ՝ մարդիկը չէին իմանում գրել կամ կարդալ։ Ադամը աւանդեց իւր պատմութիւնը իւր յաջորդներին։ Նորա որդիքը պատմեցին մինչև Նոյի ժամանակը։ Նոյն էլ, երբ որ տապանից դուրս եկաւ, ասաց իւր որդւոցը և պատուիրեց նոցա, նոյնպէս աւանդել իւրեանց սերունդներին։ Սէմը հնազանդուեց նորան և երբէք նորա որդիքը չմոռացին, իսկ Քամը և Յաբեթը իւրեանց ուշադրութիւնը չդարձրին այդ պատմութեանց վերայ։ Յաբեթի չորս որդիքը գնացին Յունաստանի մէջ բնակուեցան և Յոյնք անուանուեցան, և որովհետև Յոյները շատ առասպելախօսութիւններ էին սիրում, վասնորոյ փոխանակ պատմելու իւրեանց նախնեաց պէս՝ նորանցից առասպելներ շինեցին։ Եւ ահա Բաբելոնի աշտարակաշինութեան մասին ինչ հնարեցին։ Բայց նախ քան ես ձեզ պատմեմ այդ առասպելը, պէտք սովորացնեմ ձեզ որ Յոյները փոխանակ երկրպագելու ճշմարիտ Աստուծուն՝ պաշտում էին մարդկանց և մին սուտ կրօն ունէին։ Նոքա շատ թագաւորներ էին ունեցել, որոնց Ե ու պ ի տ ե ր էին անուանում և այդ Եուպիտեր անուանեալ թագաւորին մին Աստուած շինեցին և նոցա արած ամէն չար և բարի գործերը ընծայեցին

մին մարդոյ, որը որ եղաւ Եուպիտեր, (այսինքն երկնքի Աստուած։)

Նոքա ասում էին նոյնպէս որ մարդիկը մեծ մեծ են էլել, ինչպէս մեր այս տները և որոնք կամեցել էին Եուպիտերին դուրս գցել երկնքից, բայց որովհետև մին այնպիսի բարձր սանդուղք չունէին, որպէս զի կարող լինէին այնտեղ հասանելու՝ ամենամեծ լեռները դրին մէկը միւսի վերայ և այս եղանակաւ մին սանդուղք շինեցին։ Երբ որ նոքա մօտացին երկնքից, Եուպիտերը կայծակահար արաւ նոցա, բայց երբ որ այս պատիժը նոցա վերայ ներգործութիւն չարաւ, այն ժամանակը՝ Եուպիտեր Աստուածը գցեց նոցա մարմինների վերայ իւրեանց հետ բերած սարերը։ Սիրելի օրիորդնե՛ր, իհարկէ դուք իմանում էք որ այս առասպելախօսութիւնը սուտ է։

ԵՒԳԵՆԻԱ

Սիրելի բարեկամ, այդ սարերը գործ են ածուած այն քարերի փոխանակ, որոնց Նոյի որդիքը բերել էին աշտարակաշինութեան համար, և այն շանթ ասելով, կամենում է ցոյց տալ թէ ինչպէս Աստուած պատժեց, նոցա լեզուի մէջ շփոթութիւն գցելով, այնպէս որ էլ չկարողացան միմեանց բարբառը հասկանալ։

ՏԻԿԻՆ

Ա՜հա, ինչ կ՚նշանակէ խելօք աղջիկ լինելը։ Որովհետև դուք արդէն իմանում էք, իմ սիրելի աղջկե՛րք, այդ առասպելը, կամենում եմ Յունաց մին ուրիշ յիմարութիւն էլ պատմեմ։ Իհարկէ չէ՞ք իմանում դուք ի՞նչ է երկրաշարժութիւնը, որ երբեմն երկիրը շարժում է մեր

ոտների տակ և կործանում է մեր տները։ Ուստի Յոյները ասում էին թէ երկիրը շարժում է այն ամեն անգամ, երբ սարի տակ մնացած հսկաները աշխատում էին դուրս գալ։

ՇԱՐԼՈՏՏԱ

Այդ շատ յիմար բան է, բայց ասացէք խնդրեմ, ինչից է որ երկիրը երբեմն շարժվում է։

ՏԻԿԻՆ

Կարծում են թէ երկրի տակին կրակներ կամ արգելուած օդ կան, որոնք որ աշխատում են դուրս գալու և բաց են անում երբեմն իրանց համար ճանապարհ, առաւել յաճախ մին սարի միջով և այն ժամանակը կերպաւորվում է մին հնոց, որուն բերանը ասվում է հրաշունչ բերան, (cratere), նոյն իսկ հնոցը հրաբուխ էլ է ասվում (volkan). Այդ բառերը լաւ ձեր մտքումը պահեցէք։ Եւրոպումը շատ հրաբուխ սարեր կան, որոնց գլխաւորները են, Էտնա կամ Կիբեր սարը Սիկիլեայի մէջ։ Սթրոմբոլի հրաբուխ սարը գտնվում է Լիպարիան կղզիներումը։ Վեզուվ սարը Իտալիայումը Նէապոլիս քաղաքի մօտ և էլի այդ օրինակ շատ սարեր կան Իսլանդիայ կղզումը, որոնց գլխաւորներն է Հէկլա սարը։ Բայց արդէն եօթն ժամը լրացած է, պէտքէ գնանք, մնաք բարով։

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻՆ

Բարի լոյս, սիրելի երեխայք, մին փոքր ինչ սպասեցէք, առանձին բան ունիմ Մարիամի հետ խօսելու։ Ես հաւաստի եմ որ էլ յիմարութիւն արած չէ, քանզի շատ զուարթ է երեւում։

ՄԱՐԻԱՄ

Տիկի՛ն, ես շատ յիմարութիւններ եմ սկսել, բայց նորանցից ո՛չ մէկն էլ չ՛եմ վերջացրել։ Երեկ ասացի իմ վարժապետուհուս թէ նա յանդու . . . . է, և յետոյ ինքս ինձ զսպեցի, մին անգամ էլ ձեռս բարձրացրի որ ծեծեմ նորան, էլի չարեցի։

ՏԻԿԻՆ

Ես քեզ առաջուց ասել եմ, այժմ էլ հաստատում եմ, որ դու քեզ կ՛ուղղես, օրէց օր առաւել կատարելութիւն կ՛ունենաս, և որովհետև դու կատարել ես իմ ասածս, պիտի ես էլ իմս կատարեմ։ Արդ՝ գնանք պարտէզ, ծառերի տակ նստենք և ձեզ մին գեղեցիկ վէպ պատմեմ։

ՇԱՐՄԱՆՏ ԹԱԳԱՒՈՐԱԶՆ։

Եղել է մին անգամ մին թագաւորազն, որը որ տասներեօթ տարին չ՛լրացած՝ զրկուեցաւ իր հօրիցը։ Առաջ նա այդ կորուստի վերայ շատ տխրեց, բայց շուտով թա-

դառը լինելու ուրախութիւնը, մխիթարեց նորան։ Այս արքայազն, որին անունը Շարմանտ էր, վատ սիրտ չ՚ունէր, սակայն իւր կամքին էր մնացած և այդ վատ բնաւորութիւնը անշուշտ չարագործ կ՚լինէր ապագայ ժամանակումը։ Այսուամենայնիւ նա մին լաւ ուսուցիչ ունէր, որին որ շատ սիրում էր, իւր մանկութեան ժամանակը, բայց երբ որ թագաւոր նստեց, մտածեց որ իւր վարժապետը շատ առաքինի մարդ է և պիտի նեղութիւն տայ իրան, ուստի մաքումը վճռեց նորան հեռացնել իրանից։ Միւս օրը Շարմանտը խորհուրդի նստեց և մեծամեծ գովութիւն տուաւ իւր ուսուցչին և ասաց 'ի մէջի այլոց թէ նորա արած բարութեանց համար՝ կամենում է մին նահանգ պարգևել նորան կառավարելու, որը որ բաւական հեռու էր իւր պալատիցը։ Երբ որ նորա վարժապետը գնաց վերյիշեալ նահանգը, Շարմանտը ծուլութեան և որսորդութեան անձնատուր եղաւ։ Մին օր, երբ որ նա մին թանձրախիտ անտառի մէջ էր, տեսաւ ձիւնի պէս սպիտակ մին եղնիկ (hane), որը որ ունէր մին ոսկի մանեակ իւր վզի վերայ։ Երբ որ նա մօտացաւ թագաւորիցը, աչքերը ուղղեց նորա վերայ մին քիչ մտիկ տուաւ և խկոյն փախաւ։—„Ես չ՚եմ կամենում դորան սպանել, ձայն արձակեց Շարմանտը։„ Եւ թողնելով այնտեղ իւր մարդկերանցը և շներին, ինքը գնաց եղնիկի հետևէն։ Այնպէս էր երևում, ինչպէս թէ եղնիկը նորան սպասում էր, բայց երբ որ թագաւորազն մօտացաւ, եղնիկը փախաւ թռչոտելով։ Շարմանտը այնպէս ցանկութիւն ունէր նորան բռնելու, որ երկար ճանապարհ գնաց նորա հետից առանց մտածելու։ Գիշերը վերահասնելով Շարմանտը կորցրուց նորան, իւր աչքերիցը, և մին մեծ շփոթութեան մէջ ընկաւ, որովհետև չ՚էր իմանում թէ ի՞նչ տեղ է գտանվում։

Յանկարծ երաժշտական ձայներ հասան նորա ականջին, որոնք բաւական հեռուից էին լսվում։ Այս քաղցրալուր ձայներից առաջնորդուած՝ վերջապէս թագաւորազն հասաւ մին հոյակապ ապարանք, որտեղ որ այլ և այլ դաշնակաւոր նուագներ էին ածում։ Պահապաններից մէկն դուրս եկաւ խկոյն և հարցրաւ թէ ի՞նչ է ուզում։ Շարմանտը միըստ միոջէ պատմեց իւր գլխով անցածը։—„Բարով էք եկել այստեղ, ասաց պալատականը, սպասում են ձեզ ընթրիք անելու, քանզի սպիտակ եղնիկը իմ տէրուհուս է պատկանում և ամեն ժամանակ նորա տանիցը դուրս ուղարկելու պատճառը, ոչինչ այլ է, եթէ ո՛չ իւր տիրուհուն համար սեղանակից բերելը։ „Միևնոյն ժամանակումը պահապանը շփվեցրուց և շատ ծառայք ճրագները ձեռին բռնած եկին և թագաւորին տարան մին շքեղ զարդարուած սենեակ։ Շարմանտը տեսնելով այնտեղ տանտիկնոջը, քիչ մնաց որ զժուի նորա գեղեցկութեննիցը և ընկնելով ոտները չ՚կարողացաւ մին բան բերանիցը դուրս հանել, այնքան զբաղուած էր նորա վերայ մտիկ անելով։—„Վերկացէ՛ք, թագաւո՛ր„ ասաց տիկինը, իւր ձեռը մեկնելով դէպ 'ի նա։ „Ես շատ զմայլած եմ ձեր այստեղ գալստեան պատճառ դառնալուս համար։ Իմ անունս Ճ՛շմարիտ—Փառք է և ես անմահ եմ։ Ես բնակվում եմ այս մեծաշուք պալատի մէջ 'ի սկզբանէ աշխարհիս, սպասելով մին փեսայացուի։ Բազմաթիւ թագաւորազներ եկել են ինձ տեսութեան և թէպէտ երդմամբ շատերը ինձ խօստացել էին յաւիտեան հաւատարիմ մնալու, սակայն, ո՛չ մէկը նորանցից, հաստատ չ՚է մնացել իւր խօսքին։

—„Ա՜խ, սիրելի թագուհի, ասաց Շարմանտը, կա-

ընե՞լ է արդեօք որ մարդ ձեզ մոռանայ, երբ որ մին ան-
գամ տեսած լինի: Երդնում եմ բացի ձեզանից ո՛չ մէկին
չսիրել և այս րոպէից սկսած տալիս եմ ձեզ իմ ձեռս
Թագուհի ընտրելով ինձ համար:—Ես էլ ընդունում եմ
ձեզ Թագաւոր ինձ վերայ, պատասխանեց Ճշմարիտ—
Փառքը, բայց այժմ չեմ կարող պսակուել ձեզ հետ,
ես ցոյց կ'տամ ձեզ մին ուրիշ Թագաւորազն էլ, որը որ
իմ պալատումն է և որը որ կամենում է նոյնպէս ամուս-
նանալ ինձ հետ: Եթէ իշխանութիւնը իմ ձեռքս լինէր՝
այս րոպէիս կ'պսակուէի ձեզ հետ, բայց այդ ամենեւին
ինձանից չ՛է կախուած, պէտք է դուք ինձ Թողնէք երեք տա-
րուայ ժամանակաւ և ով որ ձեզանից առաւել հաւատա-
րիմ լինի՝ նա պէտք է նախամեծար համարուի:„ Շար-
մանտը այս խօսքերիս վերայ շատ տրտմեց, բայց եւ ա-
ռաւել սաստկացաւ նորա տրտմութիւնը, երբ որ տեսաւ
այն Թագաւորազն, որի մասին խօսած էր Թագուհին:
Նա այնպէս չքնաղագեղ էր, այնպէս իմաստուն էր, որ
Շարմանտը կարծեց թէ Ճշմարիտ—Փառքը անշուշտ
նորա հետ կ'ամուսնանայ: Նորա անունը Աքսըլու էր,
և նա կառավարում էր մին մեծ Թագաւորութիւն: Նո-
քա երկուսն էլ Ճշմարիտ—Փառքի հետ ընթրիք արին,
բայց և այնպէս շատ տրտմեցան, երբ որ ստիպուած ե-
ղան հեռանալ նորանից, և Թագուհին ասաց թէ երեք
տարուց յետոյ նոցա կ'սպասէ:

Հազիւ թէ նոքա երկու հարիւր քայլ ճանապարհ ա-
րեցին, և ահա տեսին մին պալատ, առաւել գեղեցկաշէն,
քան թէ նոյն իսկ Ճշմարիտ—Փառքի ապարանքը: Հե-
տաքրքրութենից բռնադատուած՝ մտին այնտեղ և շատ
զարմացած մնացին Ճշմարիտ—Փառքին այնտեղ տես-
նելուն համար, բայց նա ամենեւին փոխուած էր, նորա

մազերը նոյնպէս զարդարուած էին այդ օրինակ Թանկա-
գին քարերով, իսկ անցեալ օրը նա հագած ունէր միայն
մին սոսկ սպիտակ հանդերձ, ծաղիկներով զարդարած:—
„Ես երեկ կամեցի ցոյց տալ ձեզ իմ գիւղիս տունը, ա-
սաց նա, երբեմն հաճոյ էր Թվում ինձ այդ տունը, բայց
որովհետև այժմ երկու արքայազն փեսայացու ունիմ,
էլ պատշաճ չ՛եմ համարում այնտեղ բնակելու, վասնորոյ
և յաւիտեան աչքից քցել եմ այն տունը, ուրեմն ձեզ
այստեղ կ'սպասեմ, որովհետև Թագաւորները միշտ
պիտի սիրեն շքեղութիւնը: Ոսկիքը և Թանկագին ակ-
ները նոցա համար են ստեղծուած և նոքա են, որ յար-
գելի են անել տալիս այդ բաները իւրեանց հպատակ-
ներին:„

Միևնոյն ժամանակումը Թագուհին տարաւ այս եր-
կու արքայազներին մեծ դահլիճը և ասաց. „Կամենում
եմ ցոյց տալ ձեզ բազմաթիւ Թագաւորների պատկերներ
որոնք կամեցել են պսակուել ինձ հետ Ահա՛ նորանցից
մեկին պատկերը, որին անունը Աղէքսանդր է էլել. դա
ցանկանում էր ինձ հետ ամուսնանալ, սակայն շատ երի-
տասարդ հասակում մեռաւ: Այդ Թագաւորը մին շատ
փոքր զօրքի հետ գնաց Ասիան ասպատակելու և յետոյ
տէր դառաւ նորան, նա ինձ անչափ սիրում էր և շատ
անգամ իւր անձնը վտանգի մէջ էր դցում ինձ հաճոյ ե-
րևալու համար: Ահաւասիկ մին ուրիշ մարդոյ պատկեր՝
դորա անունն էլ Կիւրոս է, ինձ հետ պսակուելու ցան-
կութիւնը ստիպեց նորան դուրս գալ իւր Թագաւորու-
Թենիցը ուրիշ տէրութիւն ձեռք բերելու համար: Նա
իւր բովանդակ կեանքումը Թափառեց երկրագնդի վերայ,
բայց վերջը տարաբաղդաբար սպանուեցաւ մին չար կնկան
ձեռամբ, որը որ քարով ջախջախել էր գլուխը: Այդ

միւսն էլ Յուլիոս Կեսարի պատկերն է, իմ սիրտս շահելու համար՝ տասը տարի պատերազմ արաւ դա Գաղղիայումը. յաղթեց Գոմպէոսին, և Հռովմայեցւոց իւրան հնազանդեցրուց: Նա իմ ամուսինս կ՚դառնար, բայց հակառակ իմ խորհուրդներին իւր թշնամիներին ներելուն համար՝ սպանուեցաւ նորանցից քանըերկու դաշնակի հարուած ստանալով:

Եւ ուրիշ շատ թագաւորների պատկերներ ցոյց տալուց յետոյ թագուհին տարաւ նորա մին ուրիշ սենեակ, որտեղ որ ոսկի սկուտեղներում նախաճաշիկ ուտեցրուց և յետոյ հրամայեց շարունակել իւրեանց ճանապարհը:

Երբ որ նոքա դուրս եկին պալատից, Աբսողուն ասաց Շարմանտին. „Ճշմարիտը ասեմ թագուհին այսօր հազար անգամ լաւ էր թւում ինձ իւր գեղեցիկ զգեստներովը, քան թէ երէկ, և բացի դորանից շատ հաճաբուոր էր երևում:„—Ես այդ իմանում չ'եմ, պատասխանեց Շարմանտը, բայց այսօր ներկել էր նա երեսը և ճշմարիտը ասեմ երեկ իւր հասարակ զգեստներովը աւելի հաճոյ էր թւում ինձ:„

Երկու թագաւորազները բաժանուեցան միմեանցից և ամենքն էլ գնացին իւրեանց տէրութիւնը: Երբ որ Շարմանտը հասաւ տուն, միտը բերեց որ իւր վարժապետը իւր մանկութեան ժամանակը շատ բաներ էր խօսած Ճշմարիտ—Փառքի մասին, վասնորոյ իսկոյն սուրհանդակ ուղարկեց նորան բերելու: Երբ որ Սենէքը եկաւ (այսպէս էր նորա ուսուցչի անունը) թագաւորազն պատմեց նորան մանրամասնաբար իւր արկածները, այս էլ յայտնելով նորան 'ի միջի այլոց թէ անպատճառ յաղթութիւնը Աբսողուն կ'տանի: Բարեսիրտ Սենէքը ուրախութենից արտասուելով, ասաց Շարմանտին. „Ո՜հ,

ինչպէ՞ս ուրախ եմ այստեղ գալուս համար, եթէ ես այստեղ եկած չ'լինէի անշուշտ կորցրած կ'լինէիր քո գեղեցիկ թագուհուն, պիտոյ է քեզ ասել որ Ճշմարիտ—Փառքը մին քոյր ունի, որի անունը Սուտ—Փառք է, այդ չարաբարոյ կնիկը շատ տգեղ է, բայց իւր պակասութիւնները ծածկելու համար՝ ներկում է երեսը: Նա սպասում է այն թագաւորազներին, որոնք դուրս են գալիս Ճշմարիտ—Փառքի ապարանքից, և որովհետև շատ նման է իւր քրոջ, վասնորոյ խաբում է նորանց նոքա կարծում են թէ Ճշմարիտ—Փառքի համար են աշխատում, բայց կորչում են, 'ի զուր հետևելով նորա քրոջ չար խորհուրդներին: Այժմ տեսնում ես՞ որդեա՛կ, որ Սուտ—Փառքի սիրողները չարաչար եղանակաւ ոչնչանում են: Աբսողու թագաւորը, որը որ հետևելու է նորա խորհուրդներին՝ երեսուն տարից աւելի չ'պիտի կարողանայ ապրել, իսկ եթէ դու լսես իմ խրատներին, քեզ խօսք եմ տալիս որ վերջը քո թագուհուն ամուսին կ'դառնաս: Նա պետք է պսակուի աշխարհիս մէջ ամենամեծ թագաւորի հետ, ուրեմն աշխատի՛ր հասնել այդ աստիճանին:„—Ա՛խ, սիրելի Սենէքր, ասաց Շարմանտը, մի՞թէ դու չ'ես իմանում որ այդ անկարելի բան է, որչափ որ մեծ էլ լինի իմ թագաւորութիւնս, այսուամենայնիւ հպատակներս այնպէս յիմար են, այնպէս անկիրթ են, որ ո՛չ երբէք չ'են կարող պատերազմել թըշնամեաց հետ: Արդ՝ մեծ թագաւոր լինելու համար՝ հարկաւոր չ'է արդեօ՞ք բազմաթիւ զօրք ունենալ, որ կարող լինին ուրիշ քաղաքներ նուաճել:„—Ո՜հ, իմ սիրելի բարեկամ, պատասխանեց Սենէքը, դու արդէն մոռացել ես իմ տուած դասերս՝ վասն զի եթէ քո ելած չ'էլածը միայն մին քաղաք լինէր և երկու կամ երեք հար-

իւր հպատակներ ունենայիր, ամենևին պատերազմ էլ չանէիր, էլի կարող կ'լինէիր ամենից մեծ թագաւորը դառնալ: Սորա համար հարկաւոր է միայն հեզահամբոյր և առաքինի լինի և ահա դոքա են թագուհու արժանի փեսայ դառնալու հնարները: Նոքա, որոնք նուաճում են իւրեանց դրացիների թագաւորութիւնները, մեծակառոյց ապարանքներ են շինում, թանկագին զգեստներ են առնում, ոտնակոխ են անում իւրեանց հպատակներին, խաբվում են, և միայն Սուտ—Փառքին են արժանանում. որը որ էլ իւր երեսի շքեղ գոյնը չպիտի ունենայ, այլ պէտք է երևի իւր բովանդակ տգեղութեամբ: Դու ասում ես թէ քո հպատակները տգետ են, պէտքէ ուղղես նոցա, պատերազմի՛ր յանցանքների և տգիտութեանց դէմ, յաղթի՛ր քո կրիցը և այսպէս դու կ'դառնաս ամենից մեծ թագաւորը, կ'լինիս աշխարհակալ կըգերազանցուիս քան զԿիւրոս, քան զԿեսար և քան զմեծն Աղէքսանդր, գերամեծար կ'համարուիս նաև քան այն դիւցազնզունքը, որոնց պատկերները Սուտ—Փառքը ցոյց է տուել քեզ:„

Շարմանտը մտքումը որոշեց հետևել իւր վարժապետի խրատներին, վասնորոյ իւր ազգականներից մէկին իւր թագաւորութեանը տեղեկալ կարգելով իւր բացակայութեան ժամանակ, ինքը Մենտէրի հետ գնաց ճանապարհորդելու աշխարհիս այլ և այլ տեղերումը իւրեան կրթելու, և իւր հպատակներին բաղդաւորացնելու հնարները ուսանելու համար: Երբ որ նա որ և իցէ թագաւորութեան մէջ մին հանճարեղ և իմաստուն մարդ էր տեսնում, ասում էր նոցա. „Կ'կամենաք արդեօք գալ ինձ հետ իմ թագաւորութիւնս, ես ձեզ շատ փող կ'տամ:„ Երբ որ նա կրթուեցաւ և բազմաթիւ ճարտարարուեստ

մարդիկ իւր մօտ ժողովեց, յետ դարձաւ իւր թագաւորութիւնը և նոցա վերայ պարտաւորութիւն դրաւ իւր հպատակներին կրթելու: Շարմանտը սկսեց մեծակառոյց նաւեր և բազմաթիւ քաղաքներ շինելու, երկրագործներին աշխատել սովորացնելու, հիւանդ աղքատներին էլ ինքն էր տալիս սնունդը:

Երկու տարի այդ օրինակ աշխատանքների մէջ իւր ժամանակը անցկացրուց և վերջը ասաց Մենտէրին. „Կարծում էք այժմ սիրելիդ իմ որ վերջը իմ թագուհուն արժանի պիտի դառնամ:„

—Տակաւին մին գործ է մնում քեզ անելու, պատասխանեց Մենտէրը, դու քո հպատակներին կրթեցիր, քո կրիցը և ունայնասիրութեանդ յաղթեցիր, բայց դեռ քո բարկութեանը գերի ես և այդ քո վերջի թշնամին է, որոյ դէմ պիտի պատերազմես:„

Շարմանտը այնպէս սիրում էր Ճշմարիտ—Փառքին, որ վերջի ճիգը թափեց իրան ուղղացնելու համար, և այս բանիս մէջ էլ յաջողութիւն ունեցաւ: Երբ որ երեք տարին լրացաւ, թագաւորազն իւր վարժապետի հետ հասարակ զգեստներով գնաց այն անտառը, որտեղ որ տեսած էր սպիտակ եղնիկին: Նա այնտեղ պատահեց Աբսոլու թագաւորին մին հոյակապ կառքի մէջ նստած, որոյ վերայ գրած էր այն պատերազմները, որոնց մէջ յաղթող էր հանդիսացել, այն քաղաքները, որոնց նուաճել էր և իբրև ստրուկներ բազմաթիւ շղթաներով կապած թագաւորներ տանում էր հետիցը: Երբ որ տեսաւ նա Շարմանտին, սկսեց ծիծաղել նորա վերայ և պատմել իւր արած քաջագործութիւնները:

Միևնոյն վայրկենումը տեսին նոքա երկու քրոջ պալատները, որոնք շատ հեռու չ'էին միմեանցից. Շար-

մանտ Թագաւորը վեր կալաւ դէպ 'ի առաջին պալատը տանող ճանապարհը, և Երգոլուն այդ մասին շատ ուրախացաւ: Բայց հազիւ թէ Հարմանտը բաժանուեց նորանից, մին էլ տեսաւ Ճշմարիտ—Փառքին իւր առաջ կանգնած:—Ո՛վ, բարեկամ, ասաց նորա Թագուհին, քո Սենեքէր վարժապետի շնորհիւը, որը որ սովորացրուց քեզ ջոկելու ինձ իմ քրոջիցը՝ արժանի ես իմ ամուսին դառնալու, Ճշմարիտ—Փառքը հրամայեց առաքինութիւններին, որոնք իւր հպատակները էին մին տօնախմբութեան հանդէս պատրաստել իւր Հարմանտի հետ պսակուելուն համար: Մինչդեռ սա զբաղուած էր իւր Թագուհու գեղեցկութեամբը, Երգոլուն գնաց Սուտ—Փառքի մօտ, որը որ մեծաւ ուրախութեամբ ընդունեց նորան և առաջարկեց նորան ամուսնանալ առանց ժամավաճառ լինելու: Թագաւորը համաձայնեցաւ և հազիւ թէ իւր կինը դառաւ: մին էլ տեսաւ որ ամենևին պառաւ է եղել և երեսը կնճիռներով ծածկուած, չ'մտիկ տրած որ նա երեան էլ ներկել էր իւր պակասութիւնները ծածկելու համար: Մինչդեռ խօսում էր սա Երգոլու արքայազնի հետ, յանկարծ կոտրուեցաւ նորա ատամները պնդացնող ոսկի թէլը և իսկոյն ատամները գետնի վերայ ընկան: Երգոլուն այնպէս բարկացաւ նորանից խաբուելուն համար, որ կատաղաբար յարձակուեցաւ նորա վրան որ ծեծէ, բայց ինչպէս մեծ եղաւ նորա զարմացումը, երբ տեսաւ նորա երկար և սև մազերը իւր ձեռումը, որովհետև նա կեղծծամ (парикъ) էր դնում, և երբ որ նորա գլուխը դատարկ մնաց, Երգոլուն նկատեց որ նա մին քանի հատ մազ է ունեցել, նոքա էլ ամենևին սպիտակած: Իսկոյն թողեց սա այս տգեղ կնոջ և շտապեց գնալ Ճշմարիտ—Փառքի մօտ և տեսնելով որ նա արդէն

պսակուել է Հարմանտի հետ, սրտի կսկիծից մեռաւ: Հարմանտը երկար ժամանակ երջանկութեամբ ապրեց Թագուհու հետ: Նա շատ աղջիկերք ունեցաւ, բայց միայն մէկը նորանցից իւր մօրը նմանում էր: Նորա մին ամարանոցի մէջ դրին, սպասելով որ նա մին փեսայացու գտնի, և չար մօրաքրոջ արգելելու համար որպէս զի չարութիւն չանէ նորա մօտ եկողներին՝ Հարմանտը նորա պատմութիւնը գրեց իմացնելու համար այն Թագաւորազներին, որոնք կամենալու լինեին ամուսնանալ իւր աղջկայ հետ, յայտնելով թէ Ճշմարիտ—Փառքը ձեռք բերելու հնարքն է աշխատել երջանկացուցանելու իւր հպատակներին և օգտաւէտ լինել նոցա, և թէ այս բանումը յաջողութիւն գտնելու համար, պիտոյ է Սենեքէր բարեկամ ունենալ, (այսինքն անկեղծ բարեկամ:) Իմ այսօրուայ ասած պատմութեան վերայ ի՞նչ ես մտածում, սիրելի Հարլոտա՝:

ՀԱՐԼՈՏՏԱ

Շատ բաներ, տիկի՛ն, մտածում եմ նախապէս թէ ես էլ Երգոլու Թագաւորազնի պէս եմ արել, Ճշմարիտ—Փառքի տեղ՝ Սուտ—Փառքին եմ ընդունել, կարծումէի թէ իմ խելքիս համար ամենքն էլ ինձ կ'յարգեն, բայց չ'էի մտածում թէ իմ խելքը ինձ զզուելի էր անում եթէ միևնոյն ժամանակումը բարեսիրտ չ'լինէի: Ես նոյնպէս կարծում եմ որ Հարմանտը նմանում է Ռուսաց կայսեր մեծին Պետրոսին, որին պատմութիւնը կարդացել եմ:

ՏԻԿԻՆ

Քո կարծիքը շատ լաւ է, մենք ամենքս սիրում ենք

Ճշմարիտ—Փառքը, այժմ իմանում ենք նորա ձեռք քցելու հնարները, ուրեմն աշխատենք առաքինի լինել, և ահա՛ այդ է ամենից հարկաւորը թէ՛ այս կեանքումը և թէ՛ հանդերձեալ կեանքումը։ Ադէ՛լ, պատմիր դասդ։

ԱԴԵԼ

Սէմի ցեղումը տասը դար ջրհեղեղից յետոյ՝ գտնուեցաւ մին առաքինի մարդ, Աբրհամ անունով։ Տէրը կամեցաւ նախահայր անել նորան մին ընտիր և հաւատարիմ ազգի։ Աստուած հրամայեց նորան դուրս գալ իւր երկրիցը և գնալ այն երկիրը, որտեղ որ ցոյց կ՚տայ ինքը։ Ուստի Աբրհամը վեր առաւ իւր հետ Սառային և իւր եղբօր որդու Ղովտին։ Աբրահամը շատ ծերացած էր և որդի չ՚ունէր, բայց այսուամենայնիւ արգելք չէր դառնում այդ բանը Աստուծոյ տուած խոստմունքին արդիւնագործուելուն։ Աբրահամը և Ղովտը շատ հարուստացին. նոքա բազմաթիւ ոչխարներ, կովեր և ծառայք ունէին։ Մին օր, Աբրահամու և Ղովտի հովիւների մէջ մին մեծ վէճ բացուեցաւ, և Աբրահամը ասաց Ղովտին. „Որդեա՛կ, ի՞նչի զուր տեղից իմ և քո մէջ անբաւականութիւն լինի, ահա՛ երկու երկիր, ընտրի՛ր որը որ քեզ հաճոյ է թւում։" Ղովտը քցեց իւր աչքերը Սոդոմ քաղաքի հարուստ ձորի վերայ և գնաց իսկոյն այնտեղ բնակուեց։ Այս քաղաքի բնակիչները շատ չարագործ էին. թէպէտ և նոքա իւրեանց մօտ եկողներին չարչարում էին սակայն Ղովտին ոչինչ վնաս չհասցրին։ Աբրհամը գնաց Մամբրէ ձորի մէջ բնակուեցաւ։ Մին օր, երբ որ նստած էր նա իւր վրանի դրան առաջ, տեսաւ որ երեք ճանապարհորդներ էին գալիս, Աբրհամը

իսկոյն մօտեցաւ և հրաւիրեց նոցա իւր մօտ իջեւանելու։ Նոքա ընդունեցին նորա առաջարկութիւնը։ Սորանից յետոյ Աբրահամը հրամայեց Սառային ճաշ պատրաստել։ Երբ որ այս երեք ճանապարհորդները հաց կերան, որոնք հրեշտակներ էին, ասացին որ Սառան պիտի շուտով որդի ծնի։ Սառան լսելով այս խօսքը, սկսեց ծիծաղել, ըստ որում շատ ծեր էր, բայց հրեշտակները ասացին նորան։ „Ինչի ես ծիծաղում, միթէ՞ Աստուծոյ ձեռին դժուար բան կայ։ Սառան ամենևին զարմացած ասաց թէ ինքը սկի չէ ծիծաղել։ Մին քանի ժամանակից յետոյ նա որդի ծնաւ, որին անունը Իսահակ դրին, որը որ ծիծաղ է նշանակում։

ՄԱՐԻԱՄ

Տիկի՛ն, միթէ Աբրահամը տուն չունէր որ վրանի մէջ էր բնակւում։

ՏԻԿԻՆ

Ո՛չ, իմ սիրելի, Աբրահամը տուն չ՚ունէր, թէպէտ և մեծ իշխան էր. այն ժամանակը հարուստ լինելու համար՝ հարկաւոր էր շատ հօտեր ունենալ։ Աբրհամն էլ շատ խաշինք ունէր։ Երբ որ նորա խաշինքը մին կողմի խոտը ուտում էին, տանում էր միւս կողմը արածացնելու։ Սորանից դու լաւ կարող ես եզրակացնել, իմ սիրելի Մարիա՛մ, որ նա կարող չէր հաստատ տուն ունենալ, նա մին վրան ունէր, որը որ տանում էր ամէն անգամ իւր հետ, երբ որ կամենում էր մին ուրիշ տեղ գնալ։

ԵՒԳԵՆԻԱ

Եթէ Աբրահամը հարուստ է եղել ի՞նչի Սառային է հրամայել պատրաստել ճաշը։ Ինձ թւում է որ լաւ բան չէր լինել, եթէ մայրս պատրաստեր կերակուրը։

ՏԻԿԻՆ

Ճշմարիտ ես ասում, սիրելի, բայց ամեն ժամանակ իւր առանձին սովորութիւնները ունի։ Եթէ այսօր տիկնայքը չ՛են պատրաստում կերակուրը, ենդուր համար է որ նոքա իւրեանց տան հոգսերն են քաշում, իւրեանց ուշադրութիւնը դարձնում ծառաների վերայ և մտածում են որ օրինաւոր կնիկը պիտի իւր տան մէջ առաջին հոգատար անձն լինի։

ՇԱՐԼՈՏՏԱ

Բայց այդ անկարելի է. տիկնայքը ա՛յդքան ժամանակ չ՛ունին, նոքա պիտի խնջոյքներ գնան, տեսարաններ մանդան և հիւրեր հրաւիրեն։

ՏԻԿԻՆ

Մտքումդ լաւ պահի՛ր ինչ որ կամենում եմ քեզ ասել։ Աստուած մեզ ստեղծել չ՛է թատրոններ, տեսարաններ և խնջոյքներ գնալու համար, այլ ամեն տան տիկին պիտի հոգացողութիւն անի իւր որդւոց և ծառաների վերայ։ Աստուած նորանցից հաշիւ պիտի հարցանէ և պիտի գտանուին շատ կանայք, որոնք պիտի պատժուին իւրեանց անհոգութեան համար։ Դա նոյնպէս լաւ բան չ՛է իզուր տեղ փող մսխելը, քանզի այդ նշա-

նակում է երեխանցից և աղքատներից գողանալ։

ՇԱՐԼՈՏՏԱ

Մի՞թէ մարդ կարող չ՛է իւր ուզածին պէս փող մսխել։

ՏԻԿԻՆ

Այո՛, ինձ, սիրելի Շարլոտտա՛, քո հայրը ագարակ պահող շատ ունի, որոնք ծախում են նորա հողի մէջ գտնուած ցորենը և պտուղները, ուրեմն նոքա այդ փողի տէ՞րն են։

ՇԱՐԼՈՏՏԱ

Նոքա չ՛են կարող տէր դառնալ, որովհետև այդ ամենը հօրս են պատկանում և հաշիւ պիտի ցոյց տան նոքա իմ հօրը։

ՏԻԿԻՆ

Մենք ամենքս էլ Աստուծուն տնտեսներն ենք, և ինչպէս ագարակ պահողները պարտաւոր են հաշիւ ցոյց տալու իւրեանց տէրերին, որոնք նոցա բանդը դրած կ՛լինէին, եթէ զուր տեղ մսխած լինէին իւրեանց փողերը. նոյնպէս էլ Աստուած հաշիւ է հարցնելու հարուստներից այն փողի մասին, որ տուել էր նոցա և պիտի պատժէ եթէ յիմարաբար գործածած լինին իւրեանց հարստութիւնները։ Նմանապէս էլ մարդս շատ յիմար պիտի լինի, որ այդ փողերը տեսարաններում, թուղթ խաղալում և խնջոյքներում մսխէ, մինչդեռ գտանվում են այնպիսի մարդիկ, որոնք կարօտում են մին կտոր հացի։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Մի՞թէ այդպիսի մարդիկ էլ կան, որոնք հաց չ՚ունին ամենեւին։

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, իմ սիրելի, կան այնպիսիները, որոնք հաց չ՚ունին, կան այնպիսիներն էլ, որոնք ձմեռն ցրտից մեռնում են եւ կան նոյնպէս այնպիսիները, որոնք ամենեւին մերկ են գտնվում։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Ա՜խ, տէր իմ Աստուած, ի՞նչպէս սիրտս ցաւում է այդ ողորմելի մարդկանց վերայ։ Վե՛ր առէք, 'ի սէր Աստուծոյ իմ բոլոր փողերս այդ մարդկանց օգնելու համար։

ՏԻԿԻ՛Ն

Շա՞տ փող ունիս արդեօք։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Երկու ոսկի ունիմ, սիրելի բարեկամ, վեր առէք խնդրեմ այդ թշուառներին համար։

ՏԻԿԻ՛Ն

Ե՛կ, քեզ համբուրեմ. սիրելի, ես քեզ շատ սիրում եմ եւ քեզ վարձատրելու համար՝ մի քանի խօսք կ՚ասեմ աշխարհագրութենից, երբ որ սրբազան պատմութիւնդ լաւ պատմես։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Մի՛ն օր Ղովտը նստած էր իւր դռան առաջ, տեսաւ որ երկու երիտասարդ ճանապարհորդներ էին գալիս, եւ որովհետեւ սովորել էր Աբրահամից օտարականներին օգնելու՝ գնաց նոցա հրաւիրեց իւր մօտ գիշերելու։ Հազիւ թէ հիւրերը եկան նորա մօտ քաղաքի բնակիչները պատեցին նորա տան չորս կողմը եւ մահ սպառնացին նորան, եթէ հիւրերին մատնելու չլինի իւրեանց ձեռը։ Աստուծոյ պատգամաւորները կուրացրին նոցա աչքերը եւ ասացին Ղովտին։ „Ամենեւին երկիւղ մի՛ կրի՛ր, մենք հրեշտակներ ենք եւ Աստուած ուղարկել է մեզ յայտնելու քեզ որ այստեղից դուրս գաս քո ընտանիքովը, քանզի կամենում է պատժել այս չար եւ անհնազանդ ժողովուրդին, բայց զգոյշ կացէ՛ք յետ մտիկ չ՚անէ՛ք. պատճառը որ Աստուած կ՚պատժէ ձեզի այդ անհնազանդութեան համար։" Ղովտը առանց ժամավաճառ լինելու վեր առաւ իւր գերդաստանը եւ դուրս եկաւ Սոդոմ քաղաքից։ Երբ որ նոքա հեռացին այնտեղից, մի սարսափելի ձայն լսեցին, եւ Ղովտի կինը հետաքրքրութենից բռնադատուած՝ յետ մտիկ արաւ եւ որովհետեւ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ կամքին, իսկոյն աղի արձան դառաւ։ Նա տեսաւ որ երկնքից ծծմբախառն անձրեւ էր գալիս եւ այրում էր Սոդոմ եւ Գոմոր քաղաքները։ Հրեշտակները նոցա կանգնեցրին մի սարի վերայ, որտեղից նոքա տեսին որ Սոդոմ եւ ուրիշ շատ քաղաքներ այրվում էին։

ԱԴԷԼ

Բայց շատ սարսափելի է կենդանի կենդանի այրուիլը։

ՏԻԿԻՆ

Ճշմարիտ ես ասում, դորանով կամենում է մեզ ցոյց տալ թէ չէ պէտք երբէք անհնազանդ լինել Աստուծոյ: Երբէն ժամանակը անցնում է, պիտի կատարեմ Եւգինեայի տուած խոստումները, այսինքն մին քանի բան ասեմ աշխարհագրութենից և մին քանի սահմաններով կ'բաւականանք այսօր:

Աշխարհագրութիւնը երկրիս նկարագրութիւնն է, աշխարհս բոլորշի է. ջուրը ծածկում է երկրի երեք մասը: Ցամաք է անուանվում այն տեղը, որտեղ որ առանց ծովի միջով անցկենալու կարելի է մանգալ: Երեք ցամաք կայ: Առաջինը՝ հին ցամաքը, որը որ ընդունում է իւր մէջ Ափրիկան, Եւրոպան և Ասիան: Երկրորդը՝ նոր ցամաքը, որը որ պարունակում է իւր մէջ Ամերիկան: Երրորդը նոր Հոլանդիան, որը որ Օվկիանոսի մին մասն է բաղկացնում: Կղզի ասելով պիտի հասկանանք մին փոքր տեղ ցամաքի չորս կողմը ջրով պատած: Թերակղզի է ասվում այն ցամաքի փոքր մասը, որը որ երեք կողմով ջրով պատած է, բացի մին կողմից Հրուանդան (мысь) է ասվում այն ցամաքի բարձրութեանը, որը որ երկարաձգվում է ծովի մէջ: Միայն Կետ կամ Կտուց ենք ասում այն տեղը, որը որ սակաւ է բարձրացել: Կիրճ կամ Պարանոց (перешеекъ) ասելով հասկանում ենք ցամաքի այն լեզուն, որը որ միաւորում է թերթակղզին ցամաքի հետ: Վերջապէս Լեռան ենք ասում ցամաքի բարձրաւանդակ տեղը: Շղթայ Լերանց (хребетъ) ասելով պիտի հասկանանք բազմաթիւ սարերի միաւորութիւնը, որոնք ընդարձակ տեղ ունին բռնած: Այսքան բացատրութիւններով կարծեմ կ'բաւականանք այսօր: Մնա՛ք բարև սիրելի աղջկերք:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

ՄԱՐԻԱՄ

Սիրելի բարեկամ ես բախտաւոր եմ ինչպէս մին Թագուհի, ես ինձ ուղղել եմ և բոլոր աշխարհք ինձ սիրում է: Տեսնում էք այս գեղեցիկ ժամացոյցը, իմ հայրս է տուել այդ ինձ իւր բաւականութիւնը յայտնելու համար:

ՏԻԿԻՆ

Շատ լաւ ժամացոյց է, բայց դու ասացիր թէ բախտաւոր ես ինչպէս Թագուհի, մի՞թէ կարծում ես թէ ամեն Թագուհի բաղդաւոր է լինում:

ՄԱՐԻԱՄ

Իմ կարծիքովս այդպէս է, որովհետև երբ որ կամենում են ասել թէ այս ինչ մարդ երջանիկ է, ասում են. „Նա բախտաւոր է ինչպէս Թագուհի:„

ՏԻԿԻՆ

Դու սխալվում ես. դորա վերայ ես քեզ մին յարմար պատմութիւն ասեմ:

ԱՅՐԻ ԿՆԻԿԸ ԵՒ ԻՒՐ ԵՐԿՈՒ ԱՂՋԻԿԸ

Մին այրի կնիկ երկու չափազանց գեղեցիկ աղջիկ ու-

նէր։ Անդրանիկ աղջկայ անունը Բլանշա (1) էր, իսկ կրտսերինը Վերմէյլ (2)։ Այս անունները տուել էին առաջինին երեսի շատ սպիտակ գոյն ունենալուն համար, իսկ երկրորդին, կարմիր այտեր և շրթունքներ ունենալուն համար։ Մին օր, երբ որ այրի կնիկը նստած դըռանը թէլ էր մանում, տեսաւ մին ողորմելի պառաւ կնիկ, որը որ մեծաւ դժուարութեամբ քաշքշվուելով գնում էր մին փայտի օգնութեամբ։—Ակամենաք արդեօք այստեղ նստել և մին բաժակ գինի խմել, հարցրաւ այրի կնիկը նորանից։

„Մեծաւ ուրախութեամբ, պատասխանեց նա, կ'յօժարէի փոքր ինչ նախաճաշիկ ուտելու, եթէ ունենայիք ինչ և իցէ բան պատրաստի ինձ տալու։

—Այս 'ի բոլոր սրտէ կ'տամ, ինչ որ ունիմ, բայց որովհետև շատ աղքատ եմ, ուրեմն իմ տուած բանս էլ չ'է կարող մեծ բան լինել։" Միևնոյն վայրկեանումը հրամայեց իւր անդրանիկ աղջկանը գնալ մին քանի չոր քաղել իւր սիրելի ծառից, որը որ ինքն էր տնկել։ Բլանշան փոխանակ հնազանդելու մօրը կամքին՝ տրտընջաց և ասաց ինքըիրան. „Միթէ այդ պառաւին համար այնքան հոգացողութիւն եմ ունեցել իմ չորենոյն վերայ" և յետոյ դժգոհութեամբ մին քանի վատ չոր քաղեց, և ակամայ բերաւ դրեց պառաւի առաջ։—Իսկ դու Վերմէյլ, ասաց մայրը, ոչինչ չունիս արդեօ՞ք այս պառաւին տալու։

„Իմ խաղողներս դեռ հասած չ'են, ասաց նա, բայց իմ հաւս մին ձու է ածել և եթէ այդ կնիկը կամենայ ուտել, յօժարութեամբ կ'տամ։ Վերմէյլը դեռ պատաս-

(1) Սպիտակ. (2) Կարմրագոյն.

խան չ'ստացած մօրից՝ վազ տալով գնաց և հաւի թէ ձուն բերաւ, պառաւը աներևութացաւ և նորա տեղ տեսին մին գեղեցիկ զգեստներով կնիկ, որը որ ասաց նոցա մօրը. „Ես կ'ամենում եմ վարձատրել քո աղջկերանց իւրեանց գործոց համեմատ, անդրանիկ աղջիկդ պիտի թագուհի դառնայ, իսկ կրտսերը՝ ագարակ պահող։" Եւ միևնոյն վայրկենումը թխելով իւր փայտովը տան յատակին՝ տունը փոխուեցաւ մին գեղեցիկ ագարակ։—Ահա՛ քո բաժինը, ասաց դիցանուշը Վերմէյլին, կարծեմ որ տալիս եմ ձեր ամեն մէկին այն՝ ինչ որ ձեզ հաճոյ է թվում։" Այս խօսքերը ասելուց յետոյ՝ այն կնիկը աներևութացաւ, թողնելով այրի կնոջ իւր աղջկերանցով շատ զարմացած։ Մտին նոքա ագարակը և զարմացին հոյակապ կահկարասեաց շքեղութեան վերայ։ Ախոռի մէջ քսան մաքի կար, քսան գառն, չորս կով և չորս գոմէշ, իսկ բակը ամեն տեսակ թռչուններով լի էր, զորօրինակ, հաւեր, սագեր, աղաւնիներ, բադեր և այլ ուրիշ զանազան գեղեցկախայտ թռչուններ։ Նոյնպէս այնտեղ մին գեղեցկատեսիլ պարտէզ կար, որում մէջ առատօրէն գտանվում էին հոտաւէտ ծաղիկներ և քաղցրահամ պտուղներ։ Բլանշը առանց նախանձելու նայում էր իւր քրոջ վիճակի վերայ և ինքը միայն զբաղուած էր թագուհի լինելու յուսովը։ Յանկարծ լսեց որ որսորդներ էին անցկենում, իսկոյն վազեց լուսամուտովը նոցա մտիկ տալու։ Նա այնպէս գեղեցիկ երևաց թագաւորի աչքումը, որ մաքումը դրաւ անպատճառ նորա հետ ամուսնանալու։ Բլանշը թագուհի դառնալով՝ ասաց քրոջը. „Կամենում չեմ որ դու ագարակ պահող լինիս, եկ ինձ հետ և ես քեզ մին ազնիւ մարդոյ հետ ամուսնացնեմ։—Շատ շնորհակալ եմ, սիրելի քոյրիկ, պատասխանեց Վերմէյլը,

ես գեղջկական կեանքի եմ սովորած, վանորայ և կամենում եմ այստեղ մնալ»: Բլանշը գնաց մենակ: Առաջի երեք ամիսը երջանիկ էր նա, տեսարանները, խնջոյքները և գեղեցիկ զգեստները, ամենքն էլ նոր էին նորա համար. բայց սովորելով յետոյ այդ բաների հետ, սկսեց ձանձրանալ: Թագաւորը փոշմանեց այդպիսի մի գիւղական աղջկայ հետ պսակուելուն համար: Երբ որ տեսին որ Թագաւորը իւր կնոջը էլ սիրում չէ, սկսեցին այնուհետև նորան էլ պատիւ չտալ: Բլանշը շատ անբախտ դառաւ, մին բարեկամ էլ չ'ունէր այն օտար երկրումը, որին կարող լինէր հաղորդել իւր տխրութեան պատճառը: Բլանշը այնպէս լղարեց, որ մարդուս կարեկցութիւնը շարժում էր:

Նա չ'էր տեսել իւր քրոջը երեք տարուց հետէ որ Թագուհի էր դառել, քանզի կարծում էր թէ իւր պէս մեծ աստիճան ունեցող անձին ամօթ է այցելութիւն գնալը մին աղքատ պահողի մօտ. բայց տեսնելով որ օրէց օր մելամաղձութեան մէջ է ընկնում, մաքումը որոշեց գնալ մին քանի օր անցկացնել իւր քրոջ մօտ. վանորայ հրաման խնդրեց Թագաւորից, որը որ մեծաւ ուրախութեամբ թոյլտուութիւն տուաւ, քանզի կարծում էր որ նորա բացակայութեան ժամանակ գոնեա՛ հանգիստ կ'լինի:

Բլանշը երիկնապահումը հասաւ Վերժէյլի ագարակը, հեռուից տեսաւ որ նա պտուղներ էր քաղում, մին քիչ էլ դէնը տեսաւ հովիւների և հովուական աղջկանց բազմութիւն, որոնք պար էին գալիս և ուրախութեան ձայներ էին արձակում:—«Աւա՜ղ, ասաց Թագուհին հոգւոց հանելով, ո՞ւր է այն ժամանակը, երբ որ ես էլ այս խեղճ մարդկանց պէս ուրախութիւն էի անում: Վեր-

ժէյլը հենց որ տեսաւ իւր քրոջ, իսկոյն վազեց և նորա վզովը ընկաւ: Նա այնպէս ուրախաղէմ էր որ Բլանշը չ'կարօղացաւ որ լաց չ'լինի: Վերժէյլը պսակուել էր մին երիտասարդ գիւղականի հետ, որը որ թէպէտ հարուստ չ'էր, բայց այսուամենայնիւ իւր կնոջը սիրում էր և նորա հետ սքանչելի եղանակաւ իւր օրերը անց էր կացնում:—«Ո՛հ, ասաց Բլանշը, դիցանուշը պատժեց «ինձ Թագուհի շինելով: Արքայական ապարանքների «մէջ ամենևին ուրախութիւն չ'է լինում, այլ այդ գտան«վում է անմեղ գեղջկական կեանքի մէջ:» Հազիւ թէ նա այս խօսքերը ասաց, իսկոյն դիցանուշը երևաց և ասաց. «Ամենևին մտքովս անց չ'էի կացրել վարձատրել քեզ Թագուհի շինելով, այլ ընդհակառակը կամեցել եմ պատժել քեզ, որովհետև քո շորները ակամայ տուիր ինձ:»

—«Տիկի՛ն, բաւականին ինձանից վրէժխնդրութիւնդ հանեցիր, վերջացրո՛ւ իմ թշուառութիւնս:»

—«Վերջացել է, պատասխանեց դիցանուշը, Թագաւորը, որը որ քեզ սիրում չ'էր, մին ուրիշ կնոջ հետ ամուսնացել է, և էքուց նորա պալատականները կ'գան քեզ յայտնելու որ էլ չ'վերադառնաս ապարանքը:»

Ինչ որ դիցանուշը կանխաւ ասաց, կատարուեցաւ, և Բլանշը իւր կեանքի մնացած օրերը անցկացրուց իւր քրոջ հետ ուրախութեան և բաւականութեան մէջ:

ՅՈՒՎԻԱՆԷ

Շատ լաւ պատմութիւն է, ինձ թւում է որ դորանից կարելի է քաղել այս բարոյականութիւնը թէ չ'է պիտոյ լինել փառասէր և ունայնասէր:

ՇԱՐԼՈՏՏԱ

Ինչ որ վերաբերվում է ունայնասիրութեան, կամենում եմ խոստովանել, որ ինձ մեծապէս սխալեցրել է: Երեկ մենք տիկին Դ. . . . տանն էինք, նա ինձանից հարցրուց թէ ինչով եմ պարապվում:—„Կուինտ—Կուրտին եմ կարդում„ պատասխանեցի նորան:

—„Այդ ի՞նչ գիրք է, ասաց նա:—Այդ մին շատ լաւ գիրք է, պատասխանեցի նորան, որոյ մէջ գրած է Աղէքսանդր Մեծին կենսագրութիւնը:—„Ո՞վ է էլել Աղէքսանդր Մեծը, հարցրաւ էլի այդ տիկինը: Բայց ես փոխանակ պատասխանելու այդ կնոջ՝ թաշկինակով երեսս ծածկած ծիծաղեցի և յետոյ գնացի մեծ դահլիճը, որտեղ որ պատմեցի ամենեցուն այն կնոջ յիմարութիւնը, որը որ լսած չ'է էլել երբէք Աղէքսանդր Մեծի անունը:

ՏԻԿԻՆ

Դու շատ վատ բան ես արել, և ես հաւաստի եմ որ այսուհետև էլ այդ օրինակ յիմարութիւն չ'ես անիլ:

ՇԱՐԼՈՏՏԱ

Ճշմարիտ էք ասում բայց իմ դիտաւորութիւնս այն չ'էր որ այդ կնոջ չարութիւն անեմ, այլ այդ իմ ունայնասիրութենից էր, որ ամենեցուն հասկացնեմ թէ ես մին իմաստուն աղջիկ եմ և շատ գրեանց վերայ տեղեկութիւն ունեցող:

ՏԻԿԻՆ

Ես քեզ հաւատացնում եմ, սիրելի, որ ամենևին այդ-

պէս չ'են կարծել: Այս օր առաւօտը գնացել էի այցելութեան կոմսուհի Ն. . . . մօտ, որը որ շատ հանճարաւոր կնիկ է: „Ինչպէ՞ս Շարլոտտան չարասիրտ աղջիկ է էլել„ ասաց նա, „երեկ ծիծաղեց խեղճ տիկին Դ. . . . վերայ: Եթէ նա իմ աղջիկս լինէր, մին լաւ ապտակ կ'հասցնէի:„ Եւգենիա՛, տա՛ դասդ:

ԵՒԳԵՆԻԱ

Աբրահամը շատ սիրում էր իւր որդուն: Մին օր Աստուած հրամայեց նորան զոհել Իսահակին: Աբրահամը իսկոյն վեր առաւ փայտ, հուր, դանակ և ճանապարհ ընկաւ իւր որդւոյ հետ, որպէս զի կատարէ Աստուծոյ հրամանը: Երբ որ հասաւ սահմանեալ տեղը, նահապետը սեղան պատրաստեց որ զոհէ Իսահակին, բայց յանկարծ Տէրոջ հրեշտակը երկնքիցը կոչեց և ասաց. „Աբրահա՛մ, Աբրահա՛մ, ձեռք մի՛ տար այդ երեխային, որովհետև արդէն ցոյց տուիր որ Աստուածանից երկնչում ես:„ Աբրահամը յետ մտիկ անելով տեսաւ ծառիցը մին ոչխար կապած և նորա զոհեց Իսահակի փոխանակ:

ՏԻԿԻՆ

Ադէ՛ր տա՛ Եւգենիայի պատմութեան շարունակութիւնը:

ԱԳԻԼ

Սարան մեռաւ տասնըմէկ տարի այդ զոհագործութենից յետոյ: Աբրահամը հանելով խորին ծերութեան կամեցաւ ամուսնացնել Իսահակին, բայց չ'էր ուզում

ամենևին Քանանացւոց երկրից հեթանոսի աղջիկ առնել։ Ուստի ուղարկեց իւր Եղեազար ծառային Միջագետ, որտեղ որ բնակվում էր իւր Նաքովր եղբայրը, որպէս զի այնտեղից Իսահակին համար հարսնացու բերէ։ Երբ որ Եղեազարը հասաւ այնտեղ, այսպէս աղօթեց առ Աստուած։ „Տէ՛ր, ցոյց տո՛ւր ինձ այն օրիորդը, որը որ պիտի իմ երիտասարդ տէրին հետ ամուսնանայ։„ Այս աղօթքը անելուց յետոյ՝ նստաւ մին ջրհորի մօտ և ասաց։ „Տէ՛ր, այս քաղաքիս աղջկերքը գալիս են ջուր հանելու այս ջրհորից, ես նորանցից ջուր եմ խնդրելու ով որ կատարէ իմ խնդիրքս, նա կ՚լինի Իսահակին կինն։„ Այս խօսքերը հազիւ թէ վերջացրուց, և ահա՛ մին ամենագեղեցիկ աղջիկ եկաւ ջուր տանելու։ Եղեազարը մօտացաւ և խմելու ջուր խնդրեց նորանից։ Աղջիկը իկոյն իւր սափորը առաջ բերաւ նորան։ Եղեազարը ջուր խմելուց յետոյ՝ հարցրաւ նորա անունը։—„Իմ անունս Ռեբեկայ է„ պատասխանեց նա „և ես Նաքովրի թոռըն եմ։„ Եղեազարը Աստուծոյ շնորհակալութիւն մատուցանելուց յետոյ՝ թանկագին պարգևներ տուաւ այդ աղջկանը։ Ռեբեկան վազեց իսկոյն տուն և պատմեց իւր ծնողներին այս դիպուածը։ Նորա եղբայր Լաբանը եկաւ աղբիւրի մօտ օտարականին իւրեանց տուն հրաւիրելու համար։ Երբ որ Եղեազարը տուն եկաւ, պատմեց իսկոյն նոցա իւր գալստեան պատճառը։ Այս բանիս վերայ Ռեբեկայի ծնողները համաձայնեցան և իւրեանց աղջկան նորա հետ ճանապարհ դրին։

ՄԱՐԻԱՄ

Տիկին, ես անցեալ տարին գնացել էի մին ծովի նաւահանգիստ, որտեղ տեսի բազմաթիւ նաւեր, որոնք

մտանում էին և դուրս էին ելանում այնտեղից, և որոնք խնամքով զգուշանում էին այնտեղ գտնուած քարաժայռերից, բայց ես կարծում եմ որ գիշերուայ ժամանակ նոցա նաւերը կ՚խորտակուին մեծամեծ ժայռերի խբուելով։

ՏԻԿԻՆ

Քո նկատողութիւնը իրաւացի է, իմ սիրելի և հենց դորա համար է որ շինել եմ փարոսը։ (Маякъ)

ՇԱՐԼՈՏՏԱ

Կ՚բարեհաճէ՞ք արդեօք ասել ի՞նչ կ՚նշանակէ փարոսը։

ՏԻԿԻՆ

Մեծաւ ուրախութեամբ, փարոսը կամ լուսատու աշտարակը մին այնպիսի բան էն որ դնում են գետերի եզերքումը, նաւորդներին իմաց տալու համար որ չ՚մօտանան վտանգաւոր քարաժայռերի գիշերուայ ժամանակ։ Դուք պիտի իմանաք որ փարոսը դնում են մին շատ բարձր տեղ, առաւել յաճախ մին աշտարակի վերայ, որպէս զի կարողանան հեռուից նշմարել։ Դուք պիտի իմանաք նոյնպէս որ փարոսը անձրևներից և սաստիկ մրրիկներից պէտք է ազատ պահած լինի, որոնց սաստկութիւնը չ՚էր թողլ տալ անշուշտ վառել և ազատել նաւորդներին վտանգաւոր փորձանքներից։ Փարոս բառը դուրս է գալիս մին մեծ աշտարակից, որը որ Եգիպտացւոց Պտղոմէոս եղբայրասէր թագաւորը շինել տուաւ փարոս կղզումը մին մեծ սարի վերայ, դէմ առ դէմ Աղէքսանդրիա քաղաքին, 470 տարի Հռոմ քաղաքի շինելուց յետոյ։ Եւ այդ աշտարակը այն կղզոյ անունովը

փարոս կոչուեցաւ։ Այդ Սոկրատ անունով ճարտարապետի շինած աշտարակը այնպէս գեղեցիկ էր որ աշխարհի եօթն հրաշքներից մինն համարուեցաւ։

ԱԴԷԼ

Դուք ասացիք թէ աշխարհում եօթն հրաշք կայ, խնդրեմ մէկ մէկ նոցա անունը ասէք։

ՏԻԿԻՆ

1, Բաբելոնի պարիսպները և պարտէզները։ 2, Աղէքսանդրիա քաղաքին Փարոսը։ 3, Մաւզոլի գերեզմանը։ 4, Հռոդոսի Սիւնը։ 5, Անահդայ մեհեանը Եփեսոսումը։ 6, Մինոսի Լաբիւրինթոսը Կրէտ կղզումը։ և 7, Եգիպտոսի Պիրամիդները։ Յուլիանէ, պատմիր այս աղջկերանց ինչ է Մաւզոլի գերեզմանը։

ՅՈՒԼԻԱՆԷ

Կարիումը մին Արտեմիզէ անունով թագուհի է եղել, որը որ շատ սիրում էր իւր Մաւզոլ մարդուն։ Երբ որ Մաւզոլը մեռաւ, Արտեմիզան հրամայեց մին հոյակապ գերեզման շինել նորա համար և այն ժամանակից սկսած՝ Մաւզոլի էին անուանում այն յիշատակարանները, որ շինում էին 'ի յիշատակ մեռելոց։ Թէպէտ և Արտեմիզա թագուհու շինած գերեզմանը շատ գեղեցիկ էր, բայց այսուամենայնիւ նա արժան չհամարեց իւր մարդոյ աճիւնները այնտեղ ամփոփելու։ Ամենայն օր իւր մարդոյ աճիւնները խառնում էր իւր խմիչքների հետ և այսպէս խմելով սպառեց մինչ իսպառ։ Նա մեռաւ երկու տարի

իւր մարդոյ մահուանից յետոյ։ Չ՚պէտի շփոթել սորա մին ուրիշ Արտէմիզայի հետ, որը որ պատերազմ բացաւ Պարսկաց Քսերքսես թագաւորի դէմ և Յունաց դէմ Սալամինայումը 480 տարի Քրիստոսից առաջ։

ՏԻԿԻՆ

Արդէն ժամանակը անց է կենում, սիրելի՛ աղջկերք, պետք է միմեանցից բաժանուենք, մնաք բարև։

ՈՒԹՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ։

ԵՒԳԵՆԻԱ

Բարի լոյս ձեզ Տիկին, արդեօք այսօր մեզ մին դիցանուշի պատմութիւն կ'ասէք։

ՏԻԿԻՆ

Ո՛չ, բայց փոխանակ դիցանուշների պատմութեան՝ Յուլիանէն կ'պատմէ ձեզ Լաբիւրինտոսի առասպելը։

ՅՈՒԼԻԱՆԷ

Կրետ կղզումը եղել է մին Մինոս անունով թագաւոր։ Որովհետև Աթենացիք սպաննել էին նորա որդուն։ Մինոսը նոցա դէմ պատերազմ բացաւ, յաղթեց նոցա և հարկադրեց ամենայն տարի եօթն տղայ և աղջիկ տալ Մինոտորին կերակուր դառնալու համար։ Այս Մինոտոր անունով հրէշը կիսով չափ մարդ էր և կիսով չափ էլ ցուլ։ Նա բնակում էր մին տան մէջ, որին Լաբիւրինտոս էին ասում։ Այդ տունը այնպէս շինած էր, որ չէր կարող մարդ ճանապարհը գտնել երբ որ այնտեղ մտնէր, որովհետև հազար ու մէկ ծուռ ու մուռ ճանապարհներ ունէր։ Այս Լաբիւրինտոսի մէջ ղրած ողորմելի Աթենացիք մեռնում էին սովից, եթէ հրէշին կերակուր դառած էլ չլինէին։ Աթենացւոց թագաւորի որդի Տեզէոսը մտքումը դրաւ Մինոտորին սպաննելու։ Երբ որ նա գնաց այնտեղ, շատ հաճոյ թուեց թագաւորի աղջկայ Արիադնայի աչքումը և խոստացաւ պակ-

ուել նորա հետ, եթէ իւր կեանքը ազատելու օգնութիւն անէ։ Արիադնան նորա մին թելի կծիկ տուաւ և ասաց որ մին ծայրը դռնիցը կապէ և միւս ծայրը ձեռումը բռնէ։ Տեզէոսը այս եղանակաւ հասաւ մինչ այն սենեակը, որտեղ որ կենում էր Մինոտորը և սպանեց նորան և հետևելով իւր թելին՝ վերստին դուռը գտաւ։ Այնուհետև Աթենացիք դադարեցին իւրեանց հարկը տալուց։ Տեզէոսը արհամարհեց Արիադնային և մինչ դեռ քնած էր նա մին կղզոյ մէջ, որտեղ որ վեր էին եկել գիշերը անցկացնելու համար՝ ինքը վեր կացաւ գնաց։ Երբ որ Արիադնան զարթեց և տեսաւ որ արդէն նաւերը գնացել են, սկսեց լալ և կոծել և փոշմանել իւր հօր տունը թողնելուն համար։ Գինու աստուած Բաքոսը (Bacchus) 'ի գութ շարժեց նորա վերայ և պսակուեց նորա հետ Բաքոսը տարաւ նորան երկինքը և նորան մին աստղ շինեց։

Երբ որ Տեզէոսը ճանապարհ էր ընկել Աթենքից, խոստացել էր իւր Եգէոս հօրը, որ սպիտակ դրօշակ կ'կանգնացնէ իւր նաւերի վերայ, եթէ յաղթանակաւ յետ դառնալու լինի։ Նա մոռացել էր այս խոստմունքը, և նորա հայրը, որը որ ամենայն օր գալիս էր մօտիկ տալու որ տեսնէ արդեօք սպիտակ դրօշակ կայ, և չ'տեսնելով կարծեց թէ իւր որդին սպանուել է և ինքն էլ ընկաւ ծովի մէջ խեղդուեց։ Տեզէոսը հոյակապ պարգևներ ուղարկեց Ապոլոն աստուծուն շնորհակալութիւն մատուցանելու իւր արած յաղթութեան համար, և հրամայեց որ ամենայն տարի միևնոյն նաւը պարգևներով ուղարկեն, և երբ որ այդ նաւը ճանապարհ էր ընկնում Աթենքից ոչ մին մահապարտի չէին սպանում մինչև որ նաւը չ'վերադառնար իւր տեղը։

ՇԱՐԼՕՏՏԷ

Ես շատ կ'ցանկանայի իմանալ, Տիկին, թէ արդեօք Յուլիանէի ասած պատմութիւնը ճշմարիտ է թէ ոչ:

ՏԻԿԻՆ

Համարեա՛ թէ ամենն ճշմարիտ է, բայց հրէշի փոխանակ՝ մին Տոբիա անունով Կրետացի հարիւրապետ է եղել, Կծիկի փոխանակ՝ պէտք է իմանաք որ Արիադնան Լաբիւրինտոսի քարտէզը տուել է Տեզէոսին և վերջապէս Բաքոսի փոխանակ էլ պէտք է իմանաք, սիրելի աղջիկերք, որ Արիադնան պսակուել է այդ չաստուծոյ մեհենումը գտնուած մին քրմի հետ: Այժմ էլ կամենում եմ միւս չորս հրաշքները պատմել ձեզ:

Բաբելոնի պարիսպները շրջապատում էին այդ քաղաքը, սիրելի օրիորդներ, որը որ աշխարհումս գտնուած տէրութիւնների մէջ ամենից հին մայրաքաղաքն էր: Նա տասներեք մղոն տարածութիւն ունէր, և երկու հարիւր ոտնաչափ բարձրութիւն: Այնպէս լայն էր շինած, որ վեց ձի կարող էր անցկենալ առանց մինը միւսին նեղութիւն տալու: Բաբելոնի կախուած պարտէզները այնպէս հրաշալի էին, ինչպէս այդ պարիսպների շինութիւնը:

Հռոդոսի սիւնը մին պղնձեայ արձան էր, տարապայման մեծութեամբ մարդոյ կերպարանքով: Հռոդացիք նուիրեցին այդ արձանը Ապոլոն աստուծուն և զետեղեցին Հռոդոս քաղաքի դռներումը մին համանոյն կղզոյ մէջ: Նա այնպէս բարձր էր, որ նորա երկու ոտների միջով կարող էր երկու նաւ անցկենալ առագաստները բարձրացրած: Նա կործանուեցաւ մին սաստիկ երկրաշարժութենից,

Անահդայ չաստուածուհուն տաճարը այն հոյակապ շինութիւնն է Եփեսոսումը, որը որ նուիրուած էր այդ չաստուածուհուն: Ցնորամիտ Երոստրատը նորան այրեց իւր անունը պատմութեանց մէջ հռչակաւոր անելու համար:

Եգիպտոսի Պիրամիդները շատ հռչակաւոր գործքեր են, որոնց հազիւ թէ չորս հազար տարումը կարողացան կառուցանել: Այդ Եգիպտոսի թագաւորների թաղման տեղն է: Այդ շինութեան համար երեք հարիւր վաթսուն հազար մշակ վարձեցին և նկատեցին որ մշակների վերայ միայն կանաչեղէնների համար 9,600,000 Ֆրանգ են ծախել: (այսինքն 2400000 մանէթ) Բաւական է ինչ որ խօսեցինք այսօր առասպելների վերայ, մին քիչ էլ աշխարհագրութեան վերայ խօսինք: Յուլիանէ ի՞նչ ես սովորել այսօր աշխարհագրութենից: Ինչպէ՞ս է բաժանվում Եւրոպան:

ՅՈՒԼԻԱՆԷ

Եւրոպան այժմ բաժանում է տասնըվեց գլխաւոր կողմեր: Որոնցից չորսը հիւսիսումն է, եօթն մէջտեղումը և հինգը հարաւային կողմումը: Հիւսիսային չորս կողմերը սոքա են: 1, Բրիտանիայի կղզիները, որոնց մայրաքաղաքը Լոնդոն է: 2, Տանեմարքա, որին մայրաքաղաքը Կոփենհագն է, 3, Շուէտ, որին թագաւորանիստ քաղաքը Սթօքոլմն է: 4, Ռուսաստան, որին մայրաքաղաքը Պետերբուրգն է:

Մէջտեղումը գտնուած եօթն կողմերը սոքա են: 1, Գաղլիա, որոյ մայրաքաղաքը Փարիզն է: 2, Պելճիքա, որոյ թագաւորանիստ քաղաքը Պրուքսելն է: 3, Հոլան-

տիա, որոյ մայրաքաղաքը Հայն է: 4, Զուիցերեան դաշնակցութեան, որոյ գլխաւոր քաղաքները են: Բալ, Ցուրիխ, Ժենեվայ, Պերնա: 5, Աւստրիա, որոյ մայրաքաղաքը Վիեննան է: 6, Պրուսիայ, որոյ մայրաքաղաքը Բերլինն է և 7 Գերմանիայի երկրորդական պետութիւնները են, որոյ գլխաւոր քաղաքները են Համբուրգ, Դրէզդէն, Լուբէկ, Հաննովեր, Բրեմէն, Մունիխ և Ֆրանգֆուրթմայնի վերայ: Հարաւային հինգ կողմերը են: 1, Պորտուգալիա, որոյ թագաւորանիստ քաղաքը Լիսբոննան է Տագս գետի եզրումը: 2, Իսպանիա, որոյ մայրաքաղաքը Մադրիտն է: 3, Իտալիա, որոյ գլխաւոր քաղաքները են, Հռոմ, Նէապլ, Միլան, Ֆլորենցիա, Վենետիկ և Թուրին: 4, Տաճկաստան, որոյ մայրաքաղաքը Կոստանդնուպօլիսն է: 5, Յունաստան, որոյ մայրաքաղաքը Աթէնքն է:

ՏԻԿԻՆ

Այդ չափը բաւական է, ինչ որ խօսուեցաւ այսօր աշխարհագրութեան վերայ: Եւգենիա՛, ասա սրբազան պատմութիւնդ:

ԵՒԳԵՆԻԱ

Երկու տարի Իսահակի պսակուելուց յետոյ՝ Աբրահամը մեռաւ 175 տարեկան հասակումը: Ռեբեկան քըսան տարի ամուլ մնալուց յետոյ՝ երկու որդի ծնաւ Անդրանիկը կոչվումէր Եսաւ իսկ կրտսերը Յակոբ: Առաջուայ ժամանակներումը երեց որդին էր լինում հօրը ժառանգը և նորա օրհնութիւն, ստանում: Մին օր Եսաւը յետ գալու որսորդութենից շատ նեղացած և քաղ-

ցածութենից նուաղած: Տեսաւ որ Յակոբը ապուր թան էր պատրաստում, խնդրեց որ իւրեան էլ բաժին տայ: Բայց Յակոբը համաձայնեց միայն այն դաշամբ որ իւր անդրանկութեան իրաւունքը իրան թողնէ: Եսաւը համաձայնեցաւ և այսպէս կորցրուց իւր անդրանկութեան իրաւունքը գերդաստանի մէջ:

ՏԻԿԻՆ

Տեսնո՞ւմ էք որդեօք, սիրելի աղջիկերք, որկրամոլութիւնը ինչքա՞ն չարութիւններ է անել տալիս: Որկրամոլութիւնը բացի մեղք լինելուց, հիւանդութիւն էլ է պատճառեցնում, մինչև անգամ մահ էլ երիտասարդ հասակում. և շատ ցածր և ամօթալի մոլութիւն է: Ադէլ, ասա՛ դասդ:

ԱԴԷԼ

Եսաւը իւր Յակոբ եղբօրը սիրում չէր, իրան անդրանիկութեան իրաւունքը խլելուն պատճառաւ և մտքումը դրեց որ սպանէ նորան իսկոյն, հենց որ իւրեանց հայրը վախճանելու լինի, նորա այդ մտադրութիւնը ծածուկ չմնաց Ռեբեկայից, որը որ ասաց Յակոբին. „Սիրելի որդեակ, ես վախումեմ որ Եսաւը քեզանից վրէժը առնէ, ուստի գնա իմ Լաբան եղբօր մօտ և այնտեղ կաց՝, մինչև որ Եսաւի բարկութիւնը հանդարտուի:„ Լաբանը երկու աղջիկ ունէր, անդրանիկը Լիա էր անուանվում, իսկ կրտսերը Ռաքէլ: Յակոբը խնդրեց Լաբանից որ Ռաքէլը իրան 'ի կնութիւն տայ: Իսկ նա պատասխանեց թէ այն դաշամբ միայն կ՚ամուսնացնէ Ռաքէլի հետ, եթէ եօթն տարի իրան ծառայելու լինի: Յակոբը հա-

մաձայնեցաւ այս առաջարկութեանը, բայց երբ որ սահմանեալ ժամանակը եկաւ, Լաբանը Ռաքելի փոխանակ Լիային տուաւ Յակոբին, ասելով թէ մեր երկրումը սովորութիւն չ'կայ կրտսեր աղջիկը երեց աղջկանից առաջ մարդոյ տալու, բայց եթէ եօթն տարի էլ ծառայելու լինիս, Ռաքելը կ'տամ քեզ: Յակոբը համաձայնեցաւ այս առաջարկութեանը: Նա Լիայից տասն որդի ունեցաւ, որոնց անուններն են. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Դան, և Նեփթաղիմ, իսկ Ռաքելից միայն մին որդի ունեցաւ Յովսէփ անունով: Յակոբը վեր առաւ իրան ընտանիքը որ գնայ իրան հայրենիքը, բայց երբոր ճանապարհին լըսեց որ իրան Եսաւ եղբայրը բազմաթիւ զօրքով գալիս է իրան հանդէպ, շատ վախեց, բայց Աստուած մին հրեշտակ ուղարկեց նորան քաջալերելու և Յակոբը իրան եղբօր բարկութիւնը անցկացրուց պարգևներով:

ՄԱՐԻԱՄ

Յակոբը իրան գերդաստանովը կանգնեց Սիքեմ քաղաքի մօտ: Նա մին Դինա անունով աղջիկ ունէր, որը որ շատ հետաքրքիրութիւն ունենալով դուրս եկաւ այդ քաղաքի աղջկերքը տեսնելու համար: Թագաւորի տղան նորա չքնաղ գեղեցկութէնիցը զմայլած՝ յափշտակեց նորան: Յակոբի որդիքը կամեցան իւրեանց վրէժը հանել նորանից: Նորա Ղեւի և Շմաւօն որդիքը մտին քաղաքը սուսերները ձեռներում մարդիկներին սպանեցին իսկ կանանցը գերի արին և Դինային տարին իրան հայրենի տունը: Այս արշաւանքը անելուց յետոյ՝ Յակոբը վախենալով որ դրացի քաղաքների բնակիչները իրան հետ

պատերազմ բանան, գնաց բնակելու Բեթելումը և այն ժամանակից սկսուած Բեթղեհեմ անուանեցին այն տեղը, Ռաքելը այնտեղ մին որդի ծնեց, որին անունը Բենիամին դրին և ինքը մեռաւ և համարեա՛ թէ միենոյն ժամանակումը Իսահակն էլ վախճանուեցաւ հարիւր ութսուն տարեկան հասակում:

ՏԻԿԻ՛Ն

Նկատեցէ՛ք թէ որքան վատ բան է մին աղջկան համար հետաքրքիր լինելը: Եթէ Դինան իւր հօր տանը մնացած լինէր, ամենեին այդ սարսափելի թշուառութիւնների պատճառ չէր դառնալ, որը որ լսեցինք հէմի: Մնաք բարև. այսօրուայ դասը կարճէր, միւս օրը գորա առաջը կ'կտրենք:

ԻՆՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻՆ

Բարև ձեզ սիրելի աղջկերք, այսօր ես մին շատ լաւ պատմութիւն եմ կարդացել, կամենում եմ ձեզ պատմել։

ԴԵԶԻՐ ԹԱԳԱՒՈՐԱԶՆ

Եղել է մին անգամ մին Թագաւոր, որը որ շատ սիրում է էլել մի Թագաւորի աղջկայ, բայց նա չէր կարողանում ամուսնանալ նորա հետ, որովհետև կախարդուած էր։ Թագաւորը գնաց մին դիցանուշի մօտ և խնդրեց որ սովորացնէ թէ ինչպէ՞ս պէտք է արած որ կարողանայ հասնել իւր նպատակին։

—Դու իմանում ես որ Թագաւորի աղջիկը մին մեծ կատու ունի, պատասխանեց դիցանուշը, որին որ նա շատ սիրում է և նա պէտք է ամուսնանայ նորա հետ, ով որ բաւականին ճարտարութիւն ունենայ կոխելու այն կատուի պոչը։ „Թագաւորը հեռացաւ այն տեղից, այսպէս մտածելով ինքը իրան. „Թէ շատ հեշտ բան է նորա պոչը կոխ տալը։„ Գնաց նա Թագաւորի պալատը և ահա տեսաւ որ կատուն ման է գալիս մէջքը ուռցնելով, Թագաւորը բարձրացաւ ոտը որ դնի կատուի պոչի վերայ, բայց նա այնպէս արագութեամբ շուռ տուաւ, որ Թագաւորը չ'կարողացաւ ոչինչ անել։ Նա ութ օր ի զուր աշխատեց այս կախարդուած պոչի վերայ, որը որ թվում էր թէ կենդանի արծաթով (ртуть) լցուած է, որովհետև անդադար շարժվում էր։ Վերջապէս նորա քնած

ժամանակը Թագաւորը յաջողութեամբ ոտը դրաւ պոչի վերայ։ Յանկարծ կատուն մարդոյ կերպարանք ընդունած զարթեց, բարկութեամբ մտիկ արաւ Թագաւորի վերայ և ասաց. „Դու կ'պսակուիս Թագաւորի աղջկայ հետ, որովհետև քանդեցիր այն կախարդութիւնը, որը որ արգելք էր դառնում այդ բանին, բայց իմ վրէժս քեզանից հանելու համար դու պէտք է ունենաս մին որդի, որը որ պիտի անբաղդ լինի մինչև այն ժամանակը երբ որ իմանայ թէ իւր քիթը շատ երկայն է։ Իսկ եթէ դու այս պայմանները մարդոյ ասես, իսկոյն կ'մեռնես։„

Թէպէտ Թագաւորը շատ զարհուրեց տեսնելով այդ կախարդին, բայց այսուամենայնիւ չ'կարողացաւ պահել ծիծաղը, և ասաց ինքը իրան այսպէս. „Գուցէ թէ իմ որդիս մեծ քիթ պիտի ունենայ, խօմ ձեռնատ չ'պիտի լինի, ամենայն ժամանակ կարող է զգալ թէ մեծ քիթ ունի։„

Կախարդը աներևութանալով, Թագաւորը գնաց Թագաւորի աղջկայ մօտ և պսակուեց նորա հետ առանց ժամավաճառ լինելու։ Բայց նա չ'կարողացաւ երկայն ապրել նորա հետ, ութ ամսից յետոյ մեռաւ։ Երեսուն օր այս աղետալի դիպուածից յետոյ, Թագուհին մին որդի ծնեց, որին անունը Դեզիր դրին։ Այս փոքր արքայազն մեծ մեծ և կապոյտ աչքեր ունէր, փոքր բերան, բայց նորա քիթը այնպէս մեծ էր որ համարեա՛ թէ երեսի կէսը ծածկում էր։ Թագուհին անմխիթար էր ճնում երբ որ տեսնում էր նորա քիթը, բայց պալատումը բնակվող տիկնայքը ասում էին թէ այս քիթը այնպէս մեծ չէ, ինչպէս քեզ երևում է և թէ այս հռոմայեցւոց քիթ է, և թէ պատմութեանց մէջ կարդացել են որ հսկաները մեծ քիթեր են ունեցել։ Թագուհին

շատ ուրախանում էր լսելով այս խօսքերը. և Գէզէրի քինթին շատ մօտիկ անկուց, էլ այնպէս մեծ չէր երևում իրան։

Երիտասարդ թագաւորազնին խնամքով դաստիարակեցին, և հէնց որ կարդալը սովորեց, բերին նորա առաջ կարդացին շատ վատ պատմութիւններ փոքր քինթ ունեցող անձանց վերայ։ Գէզէրը, որը որ սովորել էր իրան քինթի երկայնութեանը, էլ այնուհետև փոխել չէր իրան քինթը աշխարհիս բոլոր թագաւորութիւնների հետ։ Երբ որ նորա քսան տարին լրացաւ և մտադիր եղին նորան պսակելու, շատ թագուհիների պատկերներ բերին, որ ընտրէ նորանցից մէկին Գէզէրը իրան համար հարսնացու։ Նա զմայլեց Մինոնի պատկերի վերայ, որը որ մի մեծ թագաւորի աղջիկ էր և բազմաթիւ թագաւորութիւնների ժառանգ։ Նա մին փոքր արծիւանման քինթ ունէր, որը որ շատ գեղեցկացնում էր նորա երեսը, բայց մին մեծ աղմուկ քցեց պալատականների մէջ։ Այս միջոցումը նորանցից մէկը, որը որ առաւել համարձակ էր միւսներից, ասաց թէ մին մարդ առանց մեծ քինթ ունենալու կարող չէ սիրելի լինել, բայց կանանց գեղեցկութիւնը ամենևին ուրիշ է և թէ մին իմաստուն ասել է իրան թէ կարդացել է մին հին Յունաց ձեռագրի մէջ որ չքնաղագեղ Կլէօպատրան արծիւանման քինթ է ունեցել։ Թագաւորը մեծ պարգև տուաւ նորան, որը որ հաղորդել էր իրան այս բարի. համբաւը և դեսպաններ ուղարկեց Մինոնին խնդրելու 'ի կնութիւն և ինքը երեք մղոնից աւելի գնաց նորան առաջը վասն զի շատ փափագ ունէր նորան տեսնելու, և երբ որ մօտեցաւ որ ձեռքը համբուրէ, մին էլ յանկարծ տեսաւ որ կախարդը եկաւ յափշտակեց նորան իրան աչքի ա-

-ռաջից և իրան անմխիթար թողեց։ Գէզէրը մտքումը դրեց որ չ'գնայ իրան հայրենիքը, մինչև որ Մինոնին չ'գտնի։ Իրան պալատականներից ո՛չ մէկին չթողեց որ իրան հետ գան, այլ հեծաւ մին լաւ ձիի վերայ, սանձը գլխովը քցեց և թողեց որ գնայ, ինչ տեղ որ կամենում է։ Ձին վեր առաւ անտառի միջով մին ճանապարհ, գնաց բոլոր օրը առանց մին բնակութիւն գտնելու։ Գէզէրը և իրան ձին մեռնում էին քաղցածութենից, վերջապէս դէպ ի երեկունը նշմարեց թագաւորը մին քարանցաւ, որի մէջից լոյս էր երևում։ Մտաւ նա այս քարանցաւը, տեսաւ մին պառաւ կնիկ, որը որ հարիւր տարեկանից մեծ էր երևում։ Պառաւը կամեցաւ ակնոցը դնել, որ մտիկ տայ թագաւորի վերայ, բայց նա երկայն ժամանակ աշխատեց ակնոցի վերայ, որովհետև քինթը շատ փոքր էր և նա չէր կարողանում ակնոցը յարմարեցնել։ Թագաւորը և դիցանուշը (այս պառաւը մին դիցանուշ էր) սկսեցին ծիծաղել և միևնոյն ժամանակումը երկուսը միասին ասացին. „Ո՜հ ի՜նչպէս ծիծաղելի քինթ է։„

—Իմ այնպէս ծիծաղելի չէ, ինչպէս ձերը, ասաց Գէզէրը, բայց թողենք այժմ մեր քինթերը 'ի մի կողմ, միայն դուք բարեհաճեցէք տալ ինձ ինչ և իցէ ուտելու բան, որովհետև, ինչպէս ես, նոյնպէս էլ իմ խեղճ անասունը մեռնում ենք քաղցածութենից։„

„Ի բոլոր սրտէ, պատասխանեց պառաւը, թէպէտ քո քինթը շատ զարմանալի է, բայց այսուամենայնիւ պակաս մին իշխանի տղայ չես, որը որ իմ ընտիր բարեկամներից մէկն էր. ձեր հայրը շատ գեղեցիկ քինթ ունէր։„

—Իսկ իմ ի՞նչ պակասութիւն ունի, հարցրաւ Գէզէրը։

„Պակասութիւն չունի, ասաց դիցանուշը, բայց ընդհակառակը շատ նիւթ կայ մեջումը: Բայց այսուամենայնիւ մարդ կարող է պատուաւոր լինել երկայն քինթ ունենալով: Ես ձեզ ասացի որ քո հայրը իմ բարեկամն է էլել, ուրեմն պետք է որ ձեզ մին պատմութիւն ասեմ . . . .

—Ոխ տիկին, ասաց Դեզիրը, ես ձեզ ուրախութեամբ կ՚լսեմ, երբ որ ընթրիք անեմ, բայց այժմ սովից մեռնում եմ, բոլոր օրը հաց չեմ կերել ես:

„Խեղճ երեխա՛յ, ասաց պառաւը, ես ձեզ այս րոպէիս հաց կ՚տամ և մինչ դեռ դուք ընթրիք կ՚անէք, ես ձեզ կ՚ասեմ իմ պատմութիւնս չորս խօսքով, որովհետև երկայն խօսակցութիւնը չ՚եմ սիրել. երկայն քինթից, շատ երկայն թնթից, չափից աւել մեծ քնթից զզուելի բան չ՚կայ: Ինչպէս դուք տեսնում էք ինձ ես մին մեծ թագաւորի աղջիկ եմ, իմ հայրս . . . . .

—Երբ որ ձեր հայրը քաղցածանում էր, հարցրաւ Դեզիրը, հա՞ց էր ուտում:

„Յայտնի բան է, պատասխանեց պառաւը, և ես նոյնպէս այս րոպէիս հաց կ՚տամ ձեզ, միայն ես ասում եմ որ իմ հայրս . . . .

—Կամենում չ՚եմ լսել մինչև որ հաց չ՚ուտեմ, ասաց թագաւորը բարկանալով, բայց յետոյ կակղեցաւ, ըստ որում պառաւը հարկաւոր էր իրան, և ասաց. „Թէպէտ ես իմանում եմ որ ձեզ լսելու ուրախութիւնը կ՚մոռացնէ իմ քաղցածութիւնը, բայց իմ խեղճ ձին, որը որ հասկանում չ՚է ձեր ասածը, սովից սատկում է:

Պառաւը այս քաղաքավարութեան վերայ, ուրախացաւ և կանչելով իրան ծառաներին, հրամայեց թագաւորին համար ընթրիք պատրաստել: „Չ՚մոռնիկ արած որ

ձեր քինթը շատ երկայն է, ասաց նա Դեզիրին, այսուամենայնիւ շատ սիրելի էք, այնպէս սիրելի էք, ինչպէս ես քիչ խօսող եմ:„

—Այս պառաւ կնիկն էլ կորչի իմ քինթս էլ հետը, ասաց Դեզիրը ինքը իրան, որը որ իրան քիչ խօսող է համարում: Ահա՛ ինչ կ՚նշանակէ թագուհի ծնուիլը, շողոքորթողները նորա այնպէս են հասկացնում որ քիչ խօսող են: Իսկ ես ո՛չ մին ժամանակ խաբուել չ՚եմ, այլ միշտ կ՚ճանաչեմ իմ պակասութիւնս:

„Արքա՛յ, ասաց նորան պառաւը. երբ որ ընթրիք էր ուտում, փոքր ինչ դէնը կացէ՛ք, ձեր քինթը շվաք է անում և արգելում ինձ տեսնել իմ ամանիս մէջ եղած կերակուրը:

Դա՛ միտս եկաւ, մին քիչ ձեր հօր վերայ խօսենք: Ես շատ շատ գալիս էի նորա ապարանքը երբ որ նա փոքր տղայ էր, բայց արդէն քառասուն տարի է որ ես առանձնացել եմ այս անապատի մէջ: Խնդրեմ ասէք, ինչպիսի՞ կեանք են վարում այժմ պալատումը . . . . Տէր Աստուած ինչպէ՞ս երկայն է ձեր քինթը, սկի չ՚եմ կարողանում աչքերս սովորացնել նորա վերայ մտիկ անելու:

—Աստուած սիրէք, ա՜յ պառաւ, ասաց թագաւորը, ձեռք վեր առէ՛ք իմ քնթի վերայ խօսելուց: Նա այնպէս է ինչպէս որ կայ, ի՞նչ փոյթ ձեզ:

„Ո՜հ իմ սիրելի Դեզիր, ասաց դիցանուշը, ես իմանում եմ որ դուք բարկանում էք, բայց իմ մտադրութիւնս այն չ՚է որ ձեզ բարկացնեմ. ընդհակառակը ես ձեր բարեկամներից մէկն եմ, որ թէպէտ կամենում եմ ձեզ մին ծառայութիւն անել, բայց և չ՚եմ կարող չ՚ծիծաղել ձեր քնթի վերայ, և յիրաւի այնքան նիւթ կայ

մրջիւնը, որ կարելի է դորանից երեք սովորական քինթ կերպաւորել։

Դէզիրը, որը որ արդէն ընթրիքը վերջացրել էր պառաւ կնկայ իր քնթի վերայ արած խօսակցութիւններիցը այնպէս ձանձրացաւ որ հեծաւ ձին և շարունակեց իրան ճանապարհորդութիւնը, և ինչ տեղով որ անց էր կենում կարծում էր թէ ամենայն մարդ յիմարացել է, որովհետև ամենքն էլ նորա քնթի վերայ էին խօսում։ Բայց նորան այնպէս էին հասկացրել մանկութեան ժամանակից թէ նորա քինթը շատ գեղեցիկ է որ էլ համոզվում չէր թէ իրան քինթը շատ երկայն է։ Պառաւ դիցանուշը, որը որ խոստացել էր նորան մին ծառայութիւն անելու, Մինոնին փակեց մին ապակեայ պալատի մէջ և դրաւ Դէզիրի անցկենալու ճանապարհին վերայ։ Թագաւորը ուրախութենից զմայլուած՝ մօտացաւ խօսել նորա հետ, որը որ մեկնել էր ձեռը դէպի իրան։ Դէզիրը կամեցաւ համբուրել նորա ձեռքը, բայց որքան որ աշխատեց չ'կարողացաւ հասանել իրա նպատակին, որովհետև քինթը շատ մեծ էր և արգելք էր դառնում, և այս առաջին անգամն եղաւ որ նա հասկացաւ թէ իրան քինթը շատ երկայն է, և քնթիցը բռնած՝ ուզեց մի կողմ քաշել։ „Պէտքէ խոստովանած, ասում էր նա ինքը իրան, որ իմ քինթը տարապայման երկայն է։„ Հազիւ թէ ասաց նա այս խօսքը, յանկարծ ապակեայ ապարանքը կըտոր կտոր խորտակուեց և պառաւ դիցանուշը բռնած Մինոնին ձեռքից ասաց. „Խոստովանեցէ՛ք որ դուք ինձ շատ պարտաւոր էք, ո՛վ Թագաւոր. որչափ ես խօսեցի ձեր քնթի վերայ, այսուամենայնիւ դուք բնաւ յանձն չ'առիք ձեր սխալանքը։„

Դէզիրը, որուն քինթը սովորական քինթ էր դառել, մեծապէս օգուտ քաղեց այս դէպքիցը՝ պսակուեց Մինոնին հետ և երկայն ժամանակ նորա հետ երջանկութեամբ կեանք վարեց։

ՇԱՐԼՕՏՏԸ

Դուք իրաւունք ունիք ասելու թէ այդ պատմութիւնը գեղեցիկ է, բայց ի՞նչպէս կարելի է որ մարդ իրան սխալանքը չ'ճանաչէ։

ՏԻԿԻՆ

Մարդ շուտով ճանաչում է իրան սխալանքը, բայց շուտով էլ մոռանում է, որովհետև մին այնպէս բարեկամ միշտ չէ պատահում որ հասկացնէ մարդկանց իրանց սխալանքը։ Եւ այժմ կրկնենք մեր պատմութիւնը. ասա՛ Ըդէլ։

ԸԴԷԼ

Յակոբը Յովսէփին շատ էր սիրում միւս որդկերանցից, որոնք ատում էին Յովսէփին։ Բայց նոցա ատելութիւնը էլ առաւել սաստկացաւ, երբ որ Յովսէփը պատմեց նոցա իրան տեսած երազները։ „Ես տեսի երազում, ասաց նա, որ մենք կանգնած էինք ամենքս մին դաշտում և խուրձեր էինք կապում, ձեր ամենին խուրձերը խոնարհում էին իմ խուրձի առաջին։ Մին անգամ էլ տեսի որ արեգակը լուսինը և տասնըմէկ աստեղք երկրպագութիւն էին անում իմ առաջին։ Թէպէտ և Յակոբը իմանում էր, որ Աստուած է ուղարկել այս երազները Յովսէփին, բայց այսուամենայնիւ նախատեց նորան հայրաբար այս օրինակ անբարտաւանութեան համար։

Մին օր երբ որ Յակոբի որդիքը գնացին իրանց հօտերը արածացնելու, տեսին որ գալիս է Յովսէփը և ասացին միմեանց. „ահա՛ գալիս է երազատեսը, սպանենք նորան: Ռուբէնը, որը որ այնպէս չարասիրտ չէր, ինչպէս միւսները, ասաց. չսպանենք նորան, այլ գցենք մին փոսի մէջ.„ Որովհետև միտք ունէր գիշերը դուրս հանելու նորան, բայց երբ որ գնաց նա տուն, եղբայրքը հանեցին նորան այն փոսիցը և ծախեցին իբրև գերի Եգիպտացի վաճառականների վերայ, որոնք անց էին կենում այն տեղով: Երբ որ Ռուբէնը եկաւ նորա ազատելու և նորան չ՛գտաւ, շատ տրտմեց և լաց էլաւ: Նորա եղբարքը Յովսէփին զգեստները արիւնով թաթախեցին և ուղարկեցին իրանց հօրը, ասելով թէ վայրի գազանները պատառոտել են նորան և այսպէս Յակոբին խորին տրտմութեան մէջ գցեցին:

ՄԱՐԻԱՄ

Սիրելի մի՞թէ երազ ասած բանին պէտք է հաւատալ:

ՏԻԿԻՆ

Ո՛չ, իմ նազելի աղջիկ, աշխարհիս մէջ ամենից մեծ յիմարութիւնը երազի հաւատալն է: Ճշմարիտ է որ Աստուած երբեմն իրան կամքը յայտնում է իրան ծառաներին, բայց մենք այդ աստիճանի բարի չ՛ենք որ արժանանայինք այդպիսի առանձնաշնորհութեանց: Մէկ կողմիցն էլ պէտք է իմանալ որ այդ օրինակ առանձնաշնորհութիւնները շատ քիչ անգամ են պատահում, այն էլ շատ հարկաւոր դէպուածներում, իմ սիրելի աղջիկերք:

ԱԴԷԼ

Ես մին կնիկ եմ ճանաչում, որը որ բոլոր մարդիկների տեսած երազները մեկնում է, նա մին ամանից սուրճ (кофе) է ածում, և յետոյ այդ ածված սուրճի վերայ մտիկ անելով՝ յայտնում է ապագայ բաները իրան բարեկամներին. Ես կամենում եմ ձեզ ծանօթացնել նորա հետ: Նա տիկին . . . . է:

ՏԻԿԻՆ

Հարկաւոր չէ խօսել այն անձանց վերայ որոնք բարի չեն: Ձեր մտքումը լաւ պահեցէ՛ք թէ Աստուած է միայն որ իմանում է ապագայ բաները:

ՇԱՐԼՈՏՏԱ

Բայց ինչ կանէք, որ երբեմն երազների վերայ եղած մեկնութիւնները կատարվում են:

ՏԻԿԻՆ

Այո, հազարանց մէկ անգամ է պատահում այդ, ուրեմն շատ յիմարութիւն կլինի ուրախանալ կամ տրտմել երազների համար: Մարիա՛մ շարունակի՛ր Յովսէփի պատմութիւնը:

ՄԱՐԻԱՄ

Այն վաճառականները որոնք գնել էին Յովսէփին, վաճառեցին նորան մին Եգիպտացի իշխանի վերայ, որուն անունը Պետափրէս էր: Թէպէտ և Յովսէփը շատ

սիրել էր իրան տէրին, բայց Պետափրէսը դցեց նորան բանտի մէջ, լսելով իրան չարագործ կնոջ խօսքերին: Միևնոյն բանտումը ինչ տեղ որ Յովսէփն էր, գտնվում էին Եգիպտացւոց Փարաւօնի տակառապետը և մատակարարը: Մին օր տակառապետը ասաց Յովսէփին. „Ես երազումս տեսի խաղողոյ որթ, որոյ վերայ երեք ճիւղ հասած խաղող կար, ես ճմլում էի այն խաղողները Թագաւորի բաժակի մէջ և տալիս էի նորան.„ „Այդ երազը կնշանակէ, ասաց Յովսէփը, որ Թագաւորը երեք օրից յետոյ քեզ կրկին քո առաջուայ պաշտօնի մէջ անշուշտ պիտի կացուցանէ: Խնդրեմ քո գործը յաջողուած ժամանակը ինձ էլ յիշես փարաւօնի առաջ, որովհետև ես անմեղ եմ: „Իսկ ես, ասում էր մատակարարը, տեսնում էի երազումս որ երեք սաման կերակուր էի տանում գլխիս վերայ, և թռչունները ուտում էին այն կերակուրից:„—„Այդ էլ կնշանակէ, ասաց Յովսէփը, որ երեք օրից յետոյ Թագաւորը քո գլուխը կտրել է տալու և թռչունները ուտելու են քո մարմինը:„ Այս ամենը ինչպէս որ Յովսէփը գուշակել էր, ճշտիւ կատարուեցաւ, բայց տակառապետը մոռացաւ բարեխօսել Յովսէփին համար Թագաւորի առաջ:

ՏԻԿԻ՛Ն

Տեսնո՞ւմ էք իմ սիրելի աղջկերք, որ Աստուած է ուղարկել այդ երազները, և դոցա նման ուրիշ երազները, որոնց վերայ պէտք է մենք խօսենք, Յովսէփի անմեղութիւնը յայտնելու համար: Այդ մին հրաշք է որ Աստուած տուել է նորան վարձատրելու և երջանիկ անելու համար: Արդ՝ հարկաւոր չէ հաւատալ որ Աստուած հրաշքներ արած լինի 'ի զուր տեղը:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Ես շատ նեղացած եմ տակառապետի վերայ, որը որ մոռացել էր ողորմելի Յովսէփին:

ՏԻԿԻ՛Ն

Այո՛. ապերախտութիւնը շատ հասարակ է մարդկանց մէջ, բայց ձեր միտը բերեցէք որ ապերախտութիւնը մարդոյս անպատիւ է անում, դա միևնոյն է, ինչ որ մոռնութիւնն է, և այդ մոլութիւնը միայն անազնիւ և փոքրահոգի անձանց յատկութիւն է: Եւգենիա՛ Յովսէփի պատմութիւնը ասա՛:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Փարաւօնը տեսաւ երազումը որ Նեղոս գետիցը դուրս էին գալիս եօթն գեղեցիկ և պարարտ կովեր, նոցա հետևից էլ դուրս էին գալիս եօթն լղար կովեր, որոնք կուլ էին տալիս առաջիններին: Թագաւորը զարթնանալուն հրամայեց իրան մօտ կանչել Եգիպտացւոց իմաստուններին և երազագէտներին: Սակայն ոչ ով նորանցից չկարողացաւ երազները մեկնել: Այս միջոցումը տակառապետը միտը բերեց Յովսէփին և ասաց. „Թագաւո՛ր, բանտումը մին Եբրայեցի պատանի է գտնվում, որը որ երազներ է մեկնում:„ Իսկոյն ուղարկեցին Յովսէփի հետևից, որը որ այսպէս մեկնեց երազը: Եօթն պարարտ կովերը կնշանակեն եօթն տարուայ առատութիւն, իսկ եօթըն լղար կովերը, եօթն տարուայ սով:—„Որովհետև դու իմացար այդ պատահելու թշուառութիւնը, ասաց

Փարաւօնը, պէտք է որ նորա առաջը առնես. ես քեզ իրաւունք եմ տալիս, անել ինչ որ կամենում ես իմ թագաւորութեան մէջ։„ Յովսէփը մեծ մեծ շտեմարաններ շինել տուաւ, որոնք լցաւ ցորենով առատ տարիների ժամանակ։ Եօթն տարուց յետոյ մին մեծ սով վերկացաւ ամենայն տեղ, միայն Եգիպտոսումն էր գտնվում ցորեն։ Երեւելքից գալիս էին այնտեղ ցորեն գնելու։ Յակոբը նոյնպէս ուղարկեց իւր որդւոցը ցորեն գնելու, բաց 'ի Բենեամինից։ Երբ որ Յովսէփը տեսաւ նոցա, իսկոյն ճանաչեց, բայց իրան չ'ճանաչացրուց նոցա, եւ վախենալով որ Բենեամինին էլ չարչարած լինէին ինչպէս որ իրան, ասաց. „Դուք լրտեսներ էք, պիտի ձեզ պատժեմ„ Բայց նոքա իրանց արդարացնելու համար, ասացին թէ մենք ամենքս միենոյն հօր որդիք եմք եւ բնակում եմք Քանանացւոց երկրումը մեր կրտսեր եղբօր հետ։—Դուք սուտ էք ասում, ասաց Յովսէփը, ես ձեզ չ'եմ հաւատալ մինչեւ որ ձեր փոքր եղբայրը չ'բերէք. ուրեմն գնացէք եւ ձեզանից մէկը ինձ մօտ պատանդ կ'պահեմ. եթէ դուք չ'բերէք ձեր կրտսեր եղբօրը, սպանել կ'տամ նորան։„ Յակոբի որդիքը յետ դարձան տուն բաց 'ի Շմաւոնից։ Բայց նոքա շատ զարմացած մնացին գըտնելով իւրեանց քսակների մէջ այն փողը, որը որ տուել էին ցորենի համար։ Նոքա միրստմիօջէ պատմեցին ամեն եղելութիւնները իրանց հօրը, որը որ հակառակեց Բենեամինի գնալուն։

ՏԻԿԻՆ

Շարունակի՛ր, սիրելի Ադէ՛լ

ԱԴԷԼ

Օրէց օր սովը սաստկանում էր, այնպէս որ Յակոբը հարկադրուեցաւ ուղարկելու Բենեամինին։ Յովսէփը անչափ ուրախացաւ տեսնելով նորան. Դուրս հանել տուաւ իսկոյն Շմաւօնին բանտից եւ հրամայեց ճաշ պատրաստել եւ Բենեամինի բաժինը հնգապատիկ շատ էր միւսներից։ յետոյ Յովսէփը լցնել տուաւ նոցա քսակները ցորենով եւ հրամայեց իւր ոսկի բաժակը դնել Բենեամինի քսակի մէջ։ Հազիւ թէ նոքա դուրս եկին քաղաքից, տան տնտեսը գնաց նոցա հետից եւ ասաց. „Դուք գող էք փոխանակ շնորհակալութիւն անելու իմ տիրոջ, գողանում էք նորա բաժակը։„ Մենք այդ յանցանքը արել չ'ենք, ասացին նոքա, եթէ բաժակը մեր մէջ գտնուի, մենք ամենքս քո տիրոջ գերի կդառնանք։ Քըսակները դարտակեցին եւ բաժակը գտին Բենեամինի քսակի մէջ։ Այն ժամանակը Յուդան ընկնելով Յովսէփի ոտները, ասաց. „մենք երաշխաւոր եղանք մեր հօր մօտ Բենեամինը բերելիս, եթէ առանց նորա գնանք, մեր հայրը տխրութենից անշուտ կ'մեռնի։„ Այս խօսքերը լսելով Յովսէփը էլ չ'կարողացաւ արտասունքը պահել եւ ասաց նոցա. „Ես Յովսէփն եմ, եւ մին կառք ուղարկեց իւր հօր հետից։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՀԱՐԼՕՏՏԱ

Տիկի՛ն, ես մին լաւ պատմութիւն եմ իմանում, կցանկանա՞ք արդեօք որ հաղորդեմ այս աղջկերանց։

ՏԻԿԻՆ

Մեծաւ յօժարութեամբ, սիրելի աղջիկ։

ՀԱՐԼՕՏՏԱ

Մայրս ճանաչում է մին կնոջ, որը որ Յուլիանէ անունով մին աղջիկ ունի, այս աղջիկը շատ ընտիր անձն է աշխարհիս մէջ։ Նա իւրեան կեանքումը ո՛չ մի վնաս արած չէ, մինչև անգամ անասնոց էլ։ Մին օր, երբ որ նա զբօսնում էր, տեսաւ մին քանի տղերք, որոնք մին փոքր շան չուանով կապած, կամենում էին խեղդել գետի մէջ։ Այդ ողորմելի շունը շատ տգեղ էր և ցեխոտ։ Յուլիանէի գութը շարժուած ասաց. „Ես ձեզ տասը կոպէկ կ'տամ, եթէ այդ շունը ինձ վերայ վաճառէք։" —Ի՞նչ պիտի անես այդ տգեղ անասունը, ասաց նորա տան ծառայող կնիկը։ „Նա տգեղ է, պատասխանեց Յուլիանէն, բայց թշուառ է, եթէ ես այդ շանը թողնեմ, ոչով կարեկցութիւն չ'է ունենալ նորա վերայ։" Բարեսիրտ աղջիկը լուանալ տուաւ այդ շանը և դրեց իւր կառքումը, տարաւ իւրեանց տունը։ Բոլոր մարդիկ սկսեցին ծիծաղել նորա վերայ, երբ որ նա եկաւ տուն։

Բայց չ'մտիկ արած նոցա ծիծաղներին, Յուլիանէն պահեց այդ շանը իւր մօտ երեք տարի։ Մին իրիկուն երբ, որ, նա մտել էր իւր մահիճը որ քնէ, յանկարծ շունը վեր թռաւ իւր տեղիցը և սկսեց քաշքշել նորա թևիցը։ Յուլիանէն զարթեց և որովհետև սենեակումը մին վառ լապտեր կար, տեսաւ որ շունը հաչում է, աչքերը մահճակալի տակ ուղղած։ Այս ողորմելի աղջիկը վազեց դուռը բացաւ և կանչեց ծառաներին, որոնք բարեբաղտաբար դեռ քնած չ'էին։ Նոքա եկին և գտին մահճակալի տակ մին գող, որը որ ձեռումը դաշնակ ունէր բռնած և յանձն առաւ իւր մեղը, որ եկել է եղել այդ աղջկան սպանելու դիտաւորութեամբ և նորա թանկագին քարեղէնները յափշտակելու համար։ Ահա՛ այսպէս այն տգեղ և ցեխոտ շունը ազատեց նորա կեանքը։

ՏԻԿԻՆ

Դու իրաւունք ունիս ասելու թէ քո պատմած պատմութիւնը շատ գեղեցիկ է։ Այդ ճշմարիտ է որ անասնոց վերայ ունեցած կարեկցութիւնը, ազնուահոգութեան նշան է։ Ես շատ սիրում եմ Յուլիանէի դատողութիւնը։ „Թէ և նա տգեղ է, բայց թշուառ է։" Որ և իցէ թշուառ մարդ յարգոյ է դառնում առաքինասէր մարդոյ առաջ։ Օրինակի աղագաւ, խղճմտանաց ընդդէմ կ'լինի, եթէ պատուաւոր մարդիկը չարչարեն իւրեանց ծառաներին և մշակներին, և նոցա թշուառութիւնը ևս աւելի շատացնեն։

ՆԻԳԵՆԻԱ

Մի՞թէ ծառաները և մշակները թշուառ են։

ՏԻԿԻ՛Ն

Դու զինքդ նոցա տեղ դի՛ր, սիրելի Նուշենիս՛, զոր օրինակ քո ծառաները ենթարկվում են միշտ փողոցներումը անձրևի, քամիների և ցրտի, մինչ դեռ դու տաք նստած քո կառքումը ման ես գալիս քեզ համար: Նոքա այնպէս հազար ու մէկ տրտմութեան պատճառ ունին, ուրեմն շատ սոսկալի բան կ'լինի, եթէ նոցա նեղութիւնները էլ աւելի շատացնելու լինիս: Նմանապէս դու ուղարկում ես մին մշակի հետից, երբ որ նա գալիս է, սպասել ես տալիս նորան դռանը երկու երեք ժամ, կամ թէ ասում ես ժամանակ չ'ունեմ, միւս անգամ եկ': Դու միտք չ'ես անում որ նա այդ օրինակ գնալ գալով կորցնում է իւր ժամանակը, երբ որ նա կարող է աշխատել, առանց որոյ անկարելի է հաց գտնել: Մեղք չէ արդեօք այդ օրինակ վարուել նոցա հետ: Միշտ քաղաքավար կացէք ձեր ծառաների դէմ, իմ սիրելի աղջիկերք: Ձեր մտքումը լաւ պահեցէք Յիսուսի Քրիստոսի խօսքը, որ ասաց, թէ բոլոր մարդիկը եղբարք են և հաւասար են իւր առաջ: Եթէ դուք գերազանցում էք ձեր հարստութեամբը նորանցից, ձեր միտը բերէք որ այդ գերազանցութիւնը միայն կոյր բաղդի վիճուած է և թէ նոյն վիճուածը կարող է ձեզի այն բարձրութենից ցածր դցել: Եթէ ինչ և իցէ բան ծառաներին հրամայելու լինիք, միշտ այսպէս ասացէք. „խնդրեմ որ այս ինչ բան անէք": Այս օրինակով նոցա կ'պարտաւորացնէք և ձեզի սիրելի կանէք: Անցեալ երեկուն մենք մին լաւ պատմութիւն կարդացինք, թող Յուլիանէն ձեզ պատմէ:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Մին ճանապարհորդ կորցրաւ իւր ճանապարհը մին անտառի մէջ: Համարեա՛յ թէ ամենևին մթնած էր և նկատելով մին քարանձաւ, մտաւ այնտեղ գիշերը անցկացնելու: Բայց մին րոպէից յետոյ տեսաւ որ մին առիւծ էր անցկենում քարանձաւի կշտովը: Ճանապարհորդը շատ զարհուրեց և կարծեց թէ գիշատելու է նորան: Այդ առիւծը երեք ոտների վերայ էր մանգալիս, չորրորդ ոտը բարձր էր բռնած: Մօտացաւ նա ճանապարհորդիցը և ցոյց տուաւ իւր վիրաւորեալ ոտը, որոյ մէջ փուշ էր մտել: Այն մարդը հանեց փուշը և իւր վերարկուն պատառելով փաթաթեց վիրաւորեալ ոտը: Առիւծը նորան շնորհակալութիւն մատուցանելու համար՝ քծնեց նորա ոտներովը: Միւս օրը մարդը շարունակեց իւր ճանապարհը:

Մին քանի տարի այս դիպուածից յետոյ, ճանապարհորդը մին յանցանք արաւ և դատապարտուեցաւ որ վայրենի գազանների կերակուր դառնայ: Երբ որ նա գտանվում էր այն կրկեսումը, ուրեղ այդ օրինակ տեսարաններ էր լինում, արձակել տուին նորա վերայ մին կատաղած առիւծ, որը որ սկզբումը վազեց նորան գիշատելու, բայց երբ որ մօտացաւ այն մարդիցը, կանգնեց, նորա երեսին մտիկ արաւ և ճանաչելով որ այս հենց իւր ոտից փուշ հանող մարդն է, գլուխը և տուտը շարժեց, լիզեց նորա ոտները ցոյց տալու համար այն ուրախութիւնը, որ զգում էր իւր սրտի մէջ: Թագաւորը զարմացած այս բանի վերայ, հարցրաւ եղեռնագործիցը թէ ճանաչում է՞ այդ առիւծին: Ճանապարհորդը միրստ միջէ պատմեց իւր գլխով անցածը թագաւորին, որը որ նորան ազատութիւն պարգևեց:

ՄԱՐԻԱՄ

Մի՞թէ Թագաւորները ներկայ էին գտնվում մարդկանց սպանելու ժամանակը: Ինձ այդ շատ սոսկալի բան է թվում, իմ սիրելի բարեկամ:

ՏԻԿԻ՛Ն

Բայց աւելի սոսկալին այն է որ տիկնայք և ուրիշ շատ մարդիկ էլ գնում էին մօտիկ տալու այդ զարհուրելի տեսարանը: Այն տեղ գնում էին ինչպէս որ հիմի սովորութիւն է գնալ Թատրոն կամ Օպերա: Նոքա նոյնպէս գնում էին տեսնելու մարդկանց մենամարտութիւնը, որոնց ըմբիշ (барецъ) են անուանում, և որոնք փողի համար մինը միւսին սպանում են:

ՆԻԳԵ՛ՆԻԱ

Ո՛հ, ես ինչպէս ուրախ եմ, որ այդպէս վատ ժողովրդոց մէջ չ'եմ ծնուած:

ՏԻԿԻ՛Ն

Դու իրաւունք ունիս, ասելու թէ բաղտաւոր ես այդ մասին: Բայց արդէն ժամանակը անցնում է, շտապենք մեր պատմութիւնները ասելու: Ադէլ այժմ քո կարգն է:

ԱԴԷԼ

Յովսէփը իւր եղբօրց, մանաւանդ Բենիամինին համբուրելուց յետոյ՝ հոյակապ պարգևներ տուաւ նոցա և մին կառք ուղարկեց իւր հօր հետից: Յակոբը իմանալով որ իւր որդի Յովսէփը դեռ կենդանի է և բոլոր

Եգիպտոսի հրամանատար՝ շնորհակալութիւն մատոյց Աստուծոյ: Նա հարիւր երեսուն տարեկան հասակումը եկաւ Եգիպտոս: Փարաւօնը մին լաւ երկիր տուաւ Յակոբին և իւր որդւոցը, որտեղ որ նոքա իւրեանց հօտերին համար լաւ արօտներ ունէին: Յակոբը իւր մեռնելից առաջ մարգարէացել էր իւր որդւոցը, ինչ որ յետոյ պատահելու էր նոցա հետ: Իւր որդի Յուդային հաւատացրուց որ Թագաւորական Թագը մնալու է նորա տունը և էլ այն տանիցը դուրս չ'է գալու: Նորա մեռնելուց յետոյ, նորա մարմինը տարին իւր նախահօրց մօտ թաղեցին: Յովսէփը շատ տարիներ ապրեց և որովհետև Աստուած յայտնել էր նորան, որ Յակոբի սերունդները կամ Իսրայելացիները մին օր Եգիպտոսը պիտի թողնեն՝ երդում տուաւ իւր որդւոցը որ իրան մասունքները տանին Յակոբի մարմնի մօտ թաղեն:

ՇԱՐԼՈՏՏԱ

Իրաւ, ես չ'եմ կարող չլաց լինել, այդ պատմութիւնը լսելով: Յովսէփը շատ պատուաւոր մարդ պէտք է եղած լինի, այդքան բարութիւն անելուն համար իւր եղբօրցը, որոնք այնքան չարչարել էին նորա:

ՏԻԿԻ՛Ն

Երբ որ Յովսէփի հայրը մեռաւ, նորա որդիքը վախեցին, որ իւրեանց եղբայրը իւր վրէժը նորանցից հանէ, բայց Յովսէփը նոցա հաւատացրուց թէ 'ի բոլոր սրտէ ներել է նոցա յանցանքը:

ՅՈՎՀԱ՛ՆՆԷ

Ինչ որ ինձ է վերաբերվում, իմ սիրելի բարեկամ, զարմանում եմ Աստուծոյ իմաստութեան վերայ, որը որ մարդկանց չարութիւնը շատ անգամ իւր նպատակները յառաջ տանելու համար 'ի գործ է դնում: Այդ ո՞վ չի միտք անել, որ Յովսէփը շատ անբաղտ է եղել, այնպէս վատ եղբարք ունենալուն համար, իբրև գերի վաճառուած լինելուն համար: Պետափրէսի կնոջ պատճառաւ՝ բանտ դնվելուն համար: Բայց այդ միջոցումը եթէ այդ ամեն թշուառութիւնները Յովսէփին պատահած չլինէին, նա ո՛չ Եգիպտոսը ո՛չ էլ իւր գերդաստանը կարող էր սովից ազատել, և ո՛չ էլ իւր եղբարց ներելու այն քաղցր ուրախութիւնը կարող էր ունենալ:

ՄԱՐԻԱՄ

Մի՞թէ ուրախութիւն է մարդոյ համար, երբ իւր վնաս տվողին ներէ:

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, իմ սիրելի աղջիկ այդ մէկ մեծ զուարճութիւն է աշխարհիս մէջ:

ՅՈՎՀԱ՛ՆՆԷ

Սիրելի բարեկամ կամենում եմ մին պատմութիւն հաղորդել այս աղջկերանց:

Լիկուրկոս անունով մէկ իմաստուն է եղել, որը որ օրէնքներ է տուել Սպարտացւոց: Այս օրէնքները հաճոյ չ'թուեցին մին երիտասարդ մարդոյ, որը որ սիրում չ'էր Լիկուրկոսին, ուստի փայտով թխեց նա օրէնսդրին և հանեց նորա աչքը: Սպարտացիք տարին Լիկուրկոսին. „վեր առէ՛ք այդ չարագործ մարդին, և պատժեցէ՛ք ձեր սրտի ուզածին պէս:„

—Ոչ, լաւ, պատասխանեց Լիկուրկոսը, ես նորան այնպէս կ'պատժեմ, որ բոլոր աշխարհը կ'զարմանայ:„ Ուստի տարաւ նա այն երիտասարդ մարդոյն իւր տունը և նորա հետ այնպէս վարուեց ինչպէս իւր հարազատ որդոյն հետ: Ամենայն օր ասում էր իմաստունը, որ մեծ զուարճութիւն է ներել համեստ և պատուաւոր մարդ դառնալու համար: Այն երիտասարդ մարդոյ սիրտը այնպէս շարժուեց Լիկուրկոսի բարութեան վերայ, որ մտքումը որոշեց նորա պէս բարի մարդ լինելու, եթէ կարողանայ: Եւ յիրաւի բոլոր աշխարհը զարմացաւ Լիկուրկոսի արած վրէժխնդրութեան վերայ, բայց երիտասարդը այսպէս ասաց Սպարտացւոց. „Լիկուրկոսը պատժեց ինձ ձեր կարծածիցը առաւել խստութեամբ: Եթէ նա ինձ սպանած լինէր, ես միայն մին վայրկեան կ'չարչարուէի, բայց այժմ իմ բոլոր կեանքումը պէտք է չարչարուեմ իմ խղճմտանքիցը նորա աչքը հանելու համար:

ՆԻԳՈ՛ՂՈՍ

Տիկի՛ն, Յովհաննէն մին բառ ասաց, չ'հասկացի ի՞նչ կ'նշանակէ Օրէնստիր:

ՏԻԿԻ՛Ն

Օրէնստիր կամ օրէնսատու կ'նշանակէ այն մարդը, որը որ օրէնքներ է տալիս. օրօրինակ Լիկուրկոս իմաստունը տուել էր Սպարտացւոց: Այժմ սրբազան պատմութիւնդ ասա՛, Եւգինիա՛:

ՄՈՎՍԷՍ

Յակոբի որդիքը Եգիպտոսումը բազմանալով, մին մեծ ազգ դառան: Յովսէփի մահուանից յետոյ, նոքա Փարաւոնի նախանձը շարժեցին, որը որ թագաւորութիւն էր անում այն ժամանակը: Փարաւոնը անչափ սիրտը խառնացրուց նոցա վերայ, այսինքն՝ նոցա գործերով ծանրաբեռնել տուաւ, առանց խնայելու ստիպեց քաղաքներ շինելու, վերջապէս խստասիրտ թագաւորը հրամայեց սպանել ամեն նորածին արու երեխանցը: Ղեւի ցեղից մին Ամրամ անունով մարդոյ մին շատ գեղեցիկ որդի ծնուվեց: Նորա Յոկաբել մայրը ծածուկ պահեց երեք ամիս, բայց վախենալով որ վերջը յայտնուի այդ բանը, մին փոքր զամբուղ շինեց փակեց մանուկին այն տեղ և տարաւ դցեց Նեղոս գետը, և իւր Մարիամ աղջկանը թողեց այնտեղ որ տեսնէ թէ ի՞նչ պիտի պատահէ երեխի հետ: Փարաւոնի դուստրը եկաւ Նեղոս գետումը լողանալու և մին փոքր զամբուղ նշմարելով այնտեղ՝ հրամայեց աղախիններից մէկին բերել իւր մօտ այդ զամբուղը: Երբ որ տեսաւ Նա այդ գեղեցիկ երեխային, ասաց. „Ես պիտի դորա ազատեմ.„ Մարիամը լսելով այս խօսքերը, ասաց. „Եթէ կ'կամենաք, ես ձեզ համար մին դահեակ կ'բերեմ:„ Նա իսկոյն վազեց և իւր հարազատ մօրը բերաւ ծիծ տալու նորա: Թագաւորի դուստրը Մովսէս անուանեց այդ երեխային որ կ'նշանակէ ջրից հանած: Երբ որ Մովսէսը մեծացաւ Փարաւոնի աղջիկը իւր որդեգիր վեր առաւ և նորա մին մեծ իշխան շինեց: Բայց այն հարուստութիւնները և այն զուարճութիւնները, որ պատում էին նորա չորս կողմը, արգելք չ'դառան Մովսէսին մոռանալու իւր Իսրայելացի եղբարցը: Մին օր

տեսաւ Նա մին Իսրայելացի, որին որ չարչարում էր մին Եգիպտացի. սպանեց Մովսէսը այն Եգիպտացուն, ծածկեց աւազի տակ և կարծեց թէ ո՛չով չ'տեսաւ այդ բանը: Միւս օրը տեսաւ Նա երկու Իսրայելացիք, որոնք որ հայհոյում էին միմեանց, և նոցա ասաց. „Ինչի համար հայհոյում էք, դուք եղբարք էք, պիտի խաղաղութեամբ կենաք: „Իսրայելացիներից մէկը պատասխանեց: „Ի՞նչ բան ունիս դու, կամենում ես ինձ էլ սպանել այն Եգիպտացուն պէս:„ Մովսէսը շատ երկիւղ կրեց և իմանալով որ թագաւորը կամենում է իրան սպանել, գնաց մին ուրիշ երկրում բնակելու: Երբ որ նա շատ ճանապարհ արեց՝ նստեց մին աղբիւրի մօտ որ հանգստանայ: Նա այնտեղ տեսաւ եօթն աղջիկք, որոնք քոյրեր էին. նոցա հայրը Յոթոր էր կոչվում: Այս աղջիկերքը կամենում էին ջուր տալ իւրեանց հօտերին, բայց յանկարծ հովիւները վերայ հասան և նոցա այն տեղից դուրս դցեցին: Մովսէսը նոցա պաշտպանեց: Երբ որ աղջիկերքը գնացին տուն, Յոթորը նոցա ասաց. „Ինչի այն օտարականին չըբերիք մեր տուն:„ Յոթորը ուղարկեց Մովսէսի հետից և երբ որ նա եկաւ, իսկոյն իւր Սեփովրա աղջիկը տուաւ նորան 'ի կնութիւն:

ՏԻԿԻ՛Ն

Դու քո դասդ շատ լաւ ասացիր, սիրելի, բայց արդէն ժամանակը անցնում է, պիտի բաժանուենք միմեանցից:

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՄԱՐԻԱՄ

Տիկի՛ն, ես մի՛ն գրքի մէջ գտել եմ աշխարհագրութեան վերայ ձեր ասած բաները, և ուրիշ շատ բաներ էլ, որոնք սովորել եմ անգիր

ՏԻԿԻ՛Ն

Այդ շատ լաւ է, իմ սիրելի, բայց տեսնեմ ի՞նչ ես սովորել։

ՄԱՐԻԱՄ

Ես սովորել եմ ճանապարհորդութիւն անել Եւրոպայի ծովերումը, նեղուցների միջով անցկենալով։ Ես մտնում եմ մի՛ն ծով, որը որ Եւրոպայի արևելեան կողմումն է, Ազովեան ծովը. էնտեղից դուրս եմ գալիս Կաֆֆա կամ Ենիկալէ անուանեալ նեղուցովը և մտնում եմ Սև ծովը։ Դուրս եմ գալիս Սև ծովից Կոստանդնուպոլսի նեղուցովը և մտնում եմ Մարմարայ ծովը։ Այն տեղից դուրս եմ գալիս Դարդանելի կամ Գալիպոլի նեղուցովը և մտնում եմ Արշիպեղագոսի մէջ։ Իտալիայի և Սիկիլիայի մէջ գտնում եմ Մեսինայի նեղուցը կամ լուսատու աշտարակը։ Կորսիքայի և Սարդինայի մէջ գտնում եմ Բոնիֆացիայի նեղուցը։ Դուրս եմ գալիս Միջերկրական ծովից Գիբրալտարեան նե-

ղուցովը և մտնում եմ մեծ Ովկիանոսը։ Ֆրանցիայի և Անգլիայի մէջ գտնում եմ Լամանշը, այնտեղից հասնում եմ Պա—դը—քալէ և իսկոյն անցկենալով Հիւսիսային կամ Անգլիայի ծովովը, Շվէտիայի մօտով անց եմ կենում և մտնում եմ Բալթիկ ծովը։

ՏԻԿԻ՛Ն

Հանգստացի՛ր, իմ նազելի աղջիկ, որովհետև շատ ճանապարհորդութիւն ես արել։ Քեզ վարձատրելու համար, կամենում եմ մի՛ն լաւ պատմութիւն անել քեզ։

Եղել է մի՛ն անգամ մի՛ն կնիկ, որը որ երկու աղջիկ է ունեցել։ Անդրանիկը, որին անունը Արշալոյս էր, շատ չքնաղագեղ է էլել և շատ լաւ վարք է ունեցել, իսկ Երկրորդը, որը որ Մարիամ էր կոչվում, իւր քրոջ պէս թէպէտ գեղեցիկ էր, բայց շատ չար բնաւորութիւն ունէր։ Նորա մայրը առաջ շատ փարթամ էր եղած, բայց վերջը զրկվելով իւր բոլոր կարողութենիցը. հարկադրուեցաւ թողնել քաղաքը և գնալ բնակելու մի՛ն գիւղի մէջ։ Նախ նա իւր փոքր աղջկան հետ գնաց, յետոյ երբ որ այնտեղ հասաւ, և տեղաւորվեցաւ՝ հրամայեց մի՛ն մարդոյ, որ գնայ բերէ իւր Արշալոյսին այն մարդոյ տանից, որտեղ որ թողել էր նորան։ Այն մարդը համաձայնվեց. մի՛ն անտառի միջով անցկենալիս, գիշերը վերայ հասաւ, և նոքա մնացին այնտեղ գիշերելու։ Արշալոյսի ուղեկիցը գիշերաշրջիկ էր (Лунатикъ) վասնորոյ գիշերի կէսումը ամենևին քնած վերկացաւ, ինչպէս անում են այդ հիւանդութիւնով ախտաւորուածները, և հեռացաւ այն տեղից։ Երբ որ Արշալոյսը զարթեց և տեսաւ իրան ամենևին մենակ այն անտառի միջումը,

սկսեց լաց լինել: Նա կամենում էր դուրս գալ այն անտառից, բայց ես առաւել մոլորուեցայ, քանզի ամենևին մթնած էր: Վերջապէս նկատեց նա հեռուից մին լոյս, գնաց դէպի այն կողմը և մին փոքր խրճիթ գտաւ, սկսեց թակել դուռը: Մին հովւական կնիկ բացաւ դուռը և հարցրաւ թէ ի՞նչ կ'կամենայ:

—„Իմ բարի մայր, ասաց Երշալոյսը, իրաւունք տուէք, գիշերս ձեզ մօտ մնալու, քանզի եթէ մնամ այս անտառումը, վայրի գազանները կ'փարատեն ինձ:"

„՚Ի բոլոր սրտէ, գեղեցիկ աղջիկ, պատասխանեց նա, բայց ասա՛ տեսնեմ ի՞նչ ես անում այս անտառում այսպիսի գիշեր ժամանակ:

Երշալոյսը պատմեց նորան իւր գլխով անցածը, ասելով. „Անբաղդ չ'ե՞մ արդեօք ես, ի՞նչ եմ արել Աստուծոյ, որ ինձ այսպէս չարչարում է:"

—Իմ սիրելի երեխայ, ասաց հովւական կնիկը, ո՛չ երբէք չ'պիտի տրտնջաս Աստուծոյ դէմ, նա ամենակարող է, իմաստուն է և քեզ սիրում է և ինչ որ անում է քո բաղդաւորութեան համար է անում: Ինձ մօտ մնա՛յ, ես քեզ կ'սիրեմ, իմ աղջկայ պէս:"

Երշալոյսը համաձայնեց այս առաջարկութեան վերայ:

—Կամենում եմ քեզ մին հօտ տալ որ արածացնես, ասաց միւս օրը հովւական կնիկը, բայց վախում եմ որ այդ քեզ ձանձրացնէ, ահա քեզ մին լաւ գիրք, կարդա՛:

„Ես կարդալը չ'եմ իմանում, պատասխանեց Երշալոյսը կարմրելով, քանզի ամաչում էր յանձն առնել որ կարդալ իմանում չ'է, բայց այսուամենայնիւ ճշմարիտը պէտք էր ասել, ասաց թէ կարդալ չ'է կամեցել իւր մանկութեան ժամանակ և երբ որ մեծացել է, ժամանակ չ'է ունեցել կարդալու:

—Միթէ դու մեծ մեծ գործեր ես ունեցել, հարցրաւ հովուհին:

„Այո, սիրելի մայրիկ, պատասխանեց Երշալոյսը, բոլոր առաւօտները գնում էի զբօսնելու իմ սիրելի բարեկամների հետ, ճաշից յետոյ գլուխս զարդարում էի, երեկոյները տեսարան էի գնում, իսկ գիշերները խնջոյքներում էի անցկացնում:"

—Ճշմարիտ շատ մեծ զբաղմունքներ ես ունեցել, ասաց հովուհին, և իհարկէ չ'էիր ձանձրանալ:

„Թողութիւն եմ խնդրում ձեզանից, սիրելի մայրիկ, երբ որ մին քառորդ ժամ մենակ էի մնում, ինչպէս պատահում էր երբեմն, մահու չափ տաղտկանում էի, բայց երբ որ եկանք գիւղը, էլ աւելի վատ դառաւ, ես բոլոր օրը գլուխս զարդարում էի ժամանակ անցկացնելու համար, բայց այդ էլ բան չ'էր դառնում, մին օր առանց նեղութիւն կրելու չ'էի կարողանում անցկացնել օրս:

—Էլ Աստուծոյ նախախնամութեան վերայ չ'տրտնջաս, ասաց հովուհին, նա քեզ այս միայնակութեան մէջ առաջնորդելով, առաւել քո տրտմութիւնդ է խլել, քան թէ քո զուարճութիւնդ: Բայց այդ ամենը չ'է, դու յետագայ ժամանակումը էլ առաւել անբաղդ կ'լինէիր, որովհետև մարդս միշտ երիտասարդ չ'է մնում, տեսարանների և խնջոյքների ժամանակը անցնում է, երբ որ պառաւում են, էլ կարող չ'են կաքաւել, ուրեմն այն ժամանակը պէտք է ձանձրանալ և շատ տարաբաղդ լինել:"

„Բայց իմ սիրելի մայրիկ, ասաց Երշալոյսը, կարելի չ'է որ մարդ միայնակ կեանք վարէ, որովհետև օրերը տարիների պէս երկայն են թւում, երբ որ մարդ մենակ է անցկացնում իւր ժամանակը:"

—Ների՛ր, իմ սիրելի, պատասխանեց հովուհին, թէ-

պէտ ես այստեղ մենակ եմ, սակայն տարիները օրերի պէս կարճ են երևում ինձ։ Եթէ կ՚կամենաս, ես քեզ կ՚սովորացնեմ չ՚ձանձրանալու գաղտնիքը։„

„Շատ լաւ, ասաց Երշալոյսը, դուք կարող էք ինձ կառավարել, ինչպէս որ պատշաճ կ՚գտնէք, ես ձեզ կը-հնազանդեմ։„

Հովուհին Երշալոյսի բարի բնաւորութիւնը բարեպատեհ միջոց համարելով, սովորացրուց թէ ինչ պէտք է արած։ Բոլոր օրը բաժանել էր նա աղօթք անելու, կարդալու, աշխատելու և զբօսնելու։ Յետոյ ասաց Երշալոյսին որ գայ ճաշ ուտէ։

„Դուք շատ վաղ էք ճաշ ուտում այսօր, ասաց Երշալոյսը, շատ ժամանակ չէ որ վեր ենք կացել։„

—„Բայց արդէն ժամը երկուսն է, ասաց հովուհին ժպտելով, և հինգ ժամից աւելի է արդէն որ զարթել ենք, երբ որ մարդ օգտաւէտ բաներով զբաղուած է լինում, ժամանակը շատ արագ է անցկենում և էլ մարդ տաղտկանում չ՚է։

Երշալոյսը զմայլած բնաւ ձանձրութիւն չ՚զգալուն համար, իւր անձը ընծայեց ուսման։ Նա հազար անգամ իւրեան բաղդաւոր էր գտնում այս դեղջկական զբաղմանց մէջ, քան թէ քաղաքումը։

„Ես տեսնում եմ, ասաց նա հովուհուն, որ Աստուած ամենը մեր լաւութեան համար է անում, եթէ ես այս ծմակի մէջ ընկած չ՚լինէի, մնացած կ՚լինէի իմ տգիտութեան մէջ և ունայնասիրութիւնը, դատարկութիւնը և էլ ունայն ցանկութիւնները անշուշտ ինձի արած կ՚լինէին չարագործ և թշուառ։„

Մին տարի էր արդէն Երշալոյսի հովուհու մօտ գալը, երբ որ Թագաւորի եղբայրը եկաւ այնտեղ որս ա-

նելու այն ծմակումը, որտեղ որ Երշալոյսը արածացնում էր իւր հօտը։ Նորա անունը Լնժենու էր և աշխարհիս մէջ շատ ընտիր անձն էր, բայց նորա եղբայրը Թագաւորը, որուն անունը Փուրբան էր, ամենևին Լնժենուին նմանվում չ՚էր, որովհետև իւր համար զուարճութիւն էր համարած իւր հպատակներին չարչարել և դրացիներին խաբել։ Լնժենու Թագաւորազն զմայլած Երշալոյսի չքնաղ գեղեցկութեան վերայ՝ ասաց որ ինքը շատ բաղդաւոր կ՚համարէ, եթէ նա կամենայ ամուսնանալ իրա հետ։—Պարոն, պատասխանեց Երշալոյսը, եթէ ձեր ասածը ճշմարիտ է, կարող էք հարցանել իմ մօրիցը, որը որ բնակում է այն փոքր խրճիթումը. եթէ նա կամենայ այդ բանը, ես նորան կ՚հնազանդեմ, քանզի նա այնպէս խելօք է, այնպէս խոհեմ է, որ ո՛չ երբէք նորան անհնազանդ գտնուած չ՚եմ։ „Աստի Լնժենուն գնաց հովուհու մօտ, որը որ իսկոյն ճանաչեց նորա առաքինութիւնը և համաձայնեց այդ բանին։ Թագաւորազն Երշալոյսին մին մատանի տալուց յետոյ՝ գնաց և խոստացաւ երեք օրից յետոյ գալ վերստին։

Միւս օրը, երբ որ նա արածացնում էր հօտը, այնպէս վեր ընկաւ մին Թուփի մէջ, որ բոլոր երեսը վիրաւորեց, և մոտիկ անելով մին գետի մէջ, տեսաւ որ արիւնը երեսի ամեն կողմից վազում էր։ „Թշուառ չ՚ե՞մ արդեօք ես„ ասաց նա հովուհուն, „էքուց Լնժենուն կ՚գայ և էլ ինձ չ՚է սիրել, ինձ այսպէս տգեղ տեսնելուն համար։„

—Որովհետև Աստուած թոյլատրել է որ վեր ընկնես, ասաց հովուհին, անշուշտ քո բաղդաւորութեան համար է, քանզի նա քեզ սիրում է և ինչ որ անում է քեզ համար է անում։„ Հովուհին լուացաւ նորա երեսը և մին քանի փուշ հանեց։ Միւս օրը նա շատ զարհուրելի

էր դառել, որովհետև երեսը ուռել էր և աչքերը էլ տեսնվում չէին: Առաւօտեան ժամը տասին լսեցին որ մին կառք կանգնեց իրեանց դռան մօտ, բայց Լէնժենուի փոխանակ՝ տեսին Փուրբան Թագաւորին: Պալատականներից մինն, որը որ Լէնժենուի հետ որսի էր գնացել, ասել էր Թագաւորին թէ քո եղբայրը մին շատ գեղեցիկ աղջկայ հետ պատահել է, և կամենում է ամուսնանալ նորա հետ: „Դու շատ յանդուգն ես, ասաց նա իւր եղբօրը, որ կամենումես պսակուել առանց իմ հրամանին, քեզ պատժելու համար, ես պիտի ամուսնանամ այն աղջկան հետ, եթէ այնպէս գեղեցիկ լինի, ինչպէս ասում են:„

Փուրբանը մտնելով հովուհու մօտ, հարցրաւ թէ ո՞ւր է իւրան աղջիկը:

—„Ահաւասիկ, պատասխանեց հովուհին, ցոյց տալով Արշալոյսին:

„Ո՜հ, այդ հրէշը, ասաց Թագաւորը: Մի՞թէ դու ուրիշ աղջիկ չունիս, որին որ իմ եղբայրը տուել է իւր մատանին:„

—Ահա իմ մատումն է մատանին, ասաց Արշալոյսը:„

„Ես չէի կարծել, որ իմ եղբայրս այդպէս վատ ճաշակ ունենայ, բայց ես շատ ուրախ եմ նորան պատժելու առիթ ունենալուս համար, ասաց Փուրբանը:„ Միևնոյն վայրկենումը հրամայեց նա հովուհուն ծածկել Արշալոյսի երեսը քողով, և կանչելով իւր եղբօրը ասաց. „Լէնժենու, որովհետև դու սիրումես գեղեցիկ Արշալոյսին, կամենում եմ որ այս րոպէիս ամուսնանաս նորա հետ:„

—Իսկ ես կամենում չեմ ո՛չ մի՛ խաբել, ասաց Արշալոյսը, քաշելով երեսի քողը, մօտիկ արա՛ Լէնժենուն, իմ

երեսին, ես երեք օրուայ միջոցումը շատ զարհուրելի եմ դառել, կամենում ե՞ս էլի ամուսնանալ ինձ հետ:

„Դու ինձ շատ գեղեցիկ ես երևում, ասաց Լէնժենուն, և դու այնպէս առաքինի ես, որչափ ես չէի կարծում:

—Որովհետև ես հրէշներին սիրել չեմ, ասաց Փուրբանը իւր եղբօրը, ուրեմն դու կարող ես քո կնոջ հետ մնալ այդ խրճիթի մէջ, ես չեմ թողնել որ գաք իմ ապարանքս:„

Այս խօսքերը ասելուց յետոյ՝ Թագաւորը մտաւ կառքի մէջ, թողնելով Լէնժենուին տարապայման ուրախութեան մէջ:

„Այժմ էլի քեզ անբաղդ ես կարծո՞ւմ մեր ընկնելով, ասաց հովուհին Արշալոյսին: Եթէ այդ դիպուածը պատահած չլինէր քեզ, Թագաւորին հաճոյ կ'թուէիր և եթէ մերժելու լինէիր պսակուել նորա հետ՝ սպանել կըտար նա Լէնժէնուին:

—Դուք իրաւունք ունիք այդպէս ասելու, սիրելի մայրիկ, պատասխանեց Արշալոյսը, սակայն ես շատ տգեղ եմ դառել, և փախում եմ Թագաւորաղն փոշմանէ ինձ հետ պսակուելու:„

—Ես քեզ հաւատացնում եմ, ասաց արքայազն, որ կարելի է տգեղ երեսին հետ սովորել, բայց ո՛չ երբէք վատ բնաւորութեան հետ:„

Ես շատ հաւան եմ, քո դատողութեանը, ասաց հովուհին, բայց ես մին ջուր ունիմ կ'քսեմ Արշալոյսի երեսը, և նա վերստին կ'գեղեցկանայ:„

Յիրաւի երեք օրից յետոյ Արշալոյսի երեսը իւր սովորական երեսը դառաւ: Այս միջոցումը Փուրբան Թագաւորը, որը որ կամենում էր ամուսնանալ, շատ նկա-

րինձեր ուղարկից չքնաղագէմ աղջկերանց պատկերներ բերելու համար: Նա զմայլած մնաց Արշալոյսի քրոջ Մարիամի պատկերի վերայ, և բերելով իւր ապարանքը, ամուսնացաւ նորա հետ:

Մին տարուց յետոյ՝ Արշալոյսը մին որդի ծնեց, որին անունը Բօժուր դրին: Այս փոքր թագաւորազն իւր ծնողաց ուրախութիւնն էր: Մին օր Արշալոյսը բռնած Բօժուրին իւր գրկումը դռան մօտ, յանկարծ քնով անցաւ և երբ որ զարթեց էլ չ'գտաւ իւր որդոյն: Բարձրաձայն աղաղակ արձակեց և վազեց անտառը պտրտելու նորան: Հովուհին իմանալով որ Աստուած ամենը մեր օգտին համար է անում, վասնորոյ մխիթարեց նորան: Միւս օրը նոքա իմացին որ հովուհին ճշմարիտ էր ասել: Ղուրբանը և իւր կնիկը յուսահատուած լինելով որդի չ'ունենալուն համար, զինուորներ էին ուղարկել որ իւրեանց եղբօր որդուն սպանեն, և տեսնելով որ կարողանում չ'են գտնել երեխին՝ Արշալոյսին, Ընժենուին և հովուհուն գրին մին նաւակի մէջ և գցեցին ծովի մէջ, որպէս զի ո'չ երբէք նոցա մասին ոչինչ չ'լսեն: Այս անգամը, Արշալոյսը կարծեց որ ինքը վերջին թշուառութեան է հասել, բայց հովուհին միշտ նորա կրկնում էր որ Աստուած ամենը մեր բարութեան համար է անում:

Նաւակը երեք օրուայ միջոցումը յաջող լողաց և հասաւ մին ծովեզերեայ քաղաք: Այս քաղաքի թագաւորը մին մեծ պատերազմ ունէր և թշնամիքը պաշարեցին երկրորդ օրը այդ քաղաքը: Ընժենուն, որը որ շատ զօրեղ էր, մին քանի մարդ խնդրեց թագաւորիցը, շատ քաջութիւններ արաւ, և վերջապէս յաջողութեամբ սպանեց թշնամեաց սպարապետին: Զինուորները կորցնելով իւրեանց գլխաւորը, փախան, և թագաւորը, որը որ որդի

չ'ունէր Ընժենուին որդեգիր վեր առաւ իւր շնորհակալութիւնը նորան յայտնելու համար: Չորս տարուց յետոյ լսեցին որ Ղուրբանը տրտմութենից մեռել է այնպէս վատ կնոջ հետ պսակուելուն համար: Ժողովուրդը, որ ատում էր թագուհուն՝ ամօթալի եղանակաւ աքսորել էր նորան և դեսպան եր ուղարկել Ընժենուի մօտ, թագաւորական թագը նորան առաջարկելու համար: Ընժենու թագաւորազն իւր կնոջ և հովուհու հետ մտաւ նաւը, բայց մին սաստիկ մրրիկ բարձրանալով, մեծ ալէկոծութիւն եղաւ և նաւը հասաւ մին անապատ կղզի: Արշալոյսը իմաստնացել էր իւր հետ պատահած դէպքերը, վասնորոյ և չ'տրտմեց, այլ իմանում էր որ իւրեանց բարութեան համար է որ Աստուած թոյլ տուել է այդ նաւաբեկութիւնը: Նոքա մին մեծ փայտ կանգնեցրին ծովի եզրումը և հովուհու սպիտակ գոգնոցը գցեցին նորա վերայ, որպէսզի դրանով իմաց անեն այն տեղից անցկացող նաւերին որ գան իւրեանց օգնեն: Դէպի երեկոյնը նոքա տեսին մին կնիկ, որը որ մին փոքր երեխայ էր բերում, Արշալոյսը մտիկ արաւ թէ չ'է, իսկոյն ճանաչեց իւր Բօժուր որդոյն: Նա հարցրաւ այն կնոջիցը թէ ի՞նչ տեղ է գտել այդ երեխային: Նա ասաց որ իւր մարդը, որը որ մին ծովային աւազակ է, նորան վեր էր առել, բայց մին նաւաբեկութիւն պատահելով այդ կղզումը, ազատուել էր նա այդ երեխի հետ միասին, որուն բռնած ունէր այն ժամանակը իւր գրկումը:

Նաւերը երկու օր նոցա մարմինները պտրտելուց յետոյ, որոնց խեղդուած էին համարում՝ տեսին սպիտակ կտաւը, և գնալով այն կղզին, Ընժենու արքայազնին իւր գերդաստանովը տարին իւրեանց թագաւորու-

թիւնը։ Ինչ որ պատահում էր այնուհետև Արշալոյսի հետ էլ տրտմում չ'էր, քանզի 'ի փորձոյ իմանում էր որ այն բաները, որոնք մեզ թշուառութիւն են երևում, շատ անգամ մեր բաղտաւորութեանց պատճառ են դառնում։

ՄԱՐԻԱՄ

Այժմ ես իմանում եմ, ինչի՞ց է որ օրերը ինձ այնպէս երկար են թվում, այդ նորանից է որ ես ծոյլ եմ։

ՏԻԿԻ՞Ն

Հենց այդ է պատճառը, սիրելի, բայց եթէ կամենաք որ ո՛չ երբէք չ'ձանձրանաք, ես ձեզ ամենեցուն յայտնեմ թէ ինչպէ՞ս պիտի անցկացնէք ձեր օրերը, որպէսզի ձեզ համար կարճ երևան նոքա։ Ուստի սպասեցէք, Մարիամը պիտի ասէ մեզ իւր դասը։

ՄԱՐԻԱՄ

Մովսէսը մին օր արածացնելով իւր աներոջ խաշինքները, մօտացաւ Քորեբ սարից։ Տեսաւ նա մին վառուած մորենի, բայց այդ մորենին այրվում չ'էր։ Մովսէսը մօտենալով որ լաւ նկատէ այդ հրաշքը, յանկարծ մին ձայն լսեց նորա մէջից, որը որ ասում էր նորան։ „Հանի՛ր կօշիկներդ քանզի սուրբ է այդտեղ։ Ես Աբրահամու, Իսահակի և Յակոբի Աստուածն եմ, իմ Եգիպտոսի մէջ գտնուած ժողովուրդի ձայնը լսեցի, վասնորոյ և քեզ հրամայում եմ գնալ նոցա ազատելու, և դու կ'ասես Իսրայելացւոց թէ իմ կողմից ես գնացել։" Նախ Մովսէսը կամեցաւ փախչել, բայց Աստուած միւս անգամ հրամայեց և նորա համոզացնելու համար երկու հրաշք

գործեց։ Նորա գաւազանը օձ շինեց, և օձը՝ գաւազան, և նոյնպէս բորոտ շինեց նորա ձեռքը, երբ որ դրաւ ծոցումը և յետոյ իսկոյն բժշկեց։ Մովսէսը մին քիչ կանգնեց և վերջապէս հնազանդուեց Աստուծոյ հրամանին։ „Գնա՛ Փարաւոնի մօտ և ես կ'ուղարկեմ քո առաջ քո եղբայր Ահարօնին, որը որ հեշտութեամբ կ'խօսէ և նա կ'լինի քո օգնականը։ Մովսէսը իսկոյն թողեց Քորեբ սարը և գնաց Եգիպտոս, և ճանապարհին գտաւ Ահարօն եղբօրը, ինչպէս որ Տէր Աստուածը խոստացել էր։

ԵՒԳԵ՞ՆԻԱ

Ո՜հ, սիրելի բարեկամ, ինչպէս գեղեցիկ է այդ սրբազան պատմութիւնը։ Ես այսուհետև գիշերը և ցերեկը նորա լսելով պիտի անցկացնեմ։

ՅՈՒԼԻԱ՞ՆԷ

Ինչ որ ինձ է վերաբերում, սիրելի բարեկամ, երբ որ կարդում եմ այդ աղջկերանց ամենայն օրուայ ասած պատմութիւնները, չ'եմ կարողանում չ'դողալ երկիւղէցը։

ՏԻԿԻ՞Ն

Դու ճշմարիտ ես ասում, մենք այնպէս փոքր ենք Աստուծոյ առաջին, որ չ'ենք կարող չ'սարսափել նորա ներկայութենումը։ Մեծ յանցանք է խօսել, ծիծաղել, գլուխը շարժել այնտեղ՝ որ Աստուծոյ անունին է նուիրած, աղօթել առանց ուշադրութեան։ Երբ որ Աստուածանից խնդրուածքներ անելու լինինք, պիտի մեր միտքը հաւաքել մեր գլխումը, միշտ այս բանը մտածելով թէ „եթէ բարի հայր է, նոյնպէս գերագոյն դատաւոր էլ է։ Մնացէք բարով։

ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻՆ

Սկսենք, սիրելի աղջիկերք, կամենում եմ ձեզ մին լաւ վէպ տալ, որը որ մին քանի օր սորանից առաջ կարդացել եմ։

ԵՐԵՔ ՍՐՏԻ ՈՒԶԱԾ ԲԱՆ

Մին աղքատ մարդ իւր կնոջ հետ, մին երեկուն նըստած կրակի առաջ՝ դատողութիւն էին անում իւրեանց դրացիների բաղտաւորութեան վերայ, որոնք իւրեանցից առաւել հարուստ էին։

„Ո՛հ, եթէ կարողանայի նուաճել իմ սրտի ուզած բաները, ասաց կինը, շուտով նորանցից երջանիկ կ՚լինէի։

—„Իսկ ես, ասաց մարդը, կ՚ցանկանայի որ դիցուհիների ժամանակներումը ծնուած լինէի և նորանցից մէկին հետ հանդիպած լինէի, որ բարեհաճէր կատարելու իմ ցանկութիւնները։„

Միևնոյն վայրկենումը տեսին նորա իւրեանց սենեկումը մին չքնաղագեղ կնիկ, որը որ ասաց նոցա․ „Ես մին դիցանուշ եմ, և ձեզ խօսք եմ տալիս կատարել ձեր առաջի երեք սրտի ուզած բաները։ Բայց զգուշացէք․ վասըն զի այդ երեք բանը ցանկանալուց յետոյ՝ էլ ոչինչ չ՚եմ շնորհելու ձեզ։„ Դիցանուշը աներևութանալով, աղքատ մարդը և իւր կնիկը շատ շփոթուած մնացին։

—„Ինչ որ ինձ է վերաբերվում, ասաց կնիկը, եթէ ես իրաւունք ունենամ, գիտեմ ինչ կ՚ուզեմ։ Ես դեռ ոչինչ չ՚եմ ցանկանում, բայց ինձ այնպէս է թվում, որ գեղեցկութենից, հարստութենից և ազնուութենից առաւել լաւ բան չ՚կայ։„

„Բայց այդ բաները ունենալով մարդ կարող է հիւանդանալ, մեռնել, երիտասարդ հասակում և վշտանալ, ուրեմն առաւել օգտաւէտ կ՚լինի, եթէ ցանկանանք առողջութիւն, ուրախութիւն և երկար կեանք։„

—Իրաւ, ասաց կինը, դիցուհին պէտք էր որ մեր շատ ցանկութիւնները կատարէր, որովհետև շատ հարկաւոր բաներ ունինք խնդրելու։

„Ճշմարիտ է, ասաց մարդը, բայց գործ դնենք մեր ժամանակը։ Միտք անենք մինչև էգուց առաւօտը թէ ի՞նչ է մեզ շատ հարկաւորը և իսկոյն խնդրենք։

—Կամենում եմ ողջ գիշերը միտք անել, ասաց կինը, բայց մին քիչ տաքանանք, ըստ որում ցուրտ է։ „Այս միևնոյն վայրկենումը վեր առնելով կինը ունելին յարդարեց կրակը, և որովհետև շատ վառ ածուխ կար, ասաց առանց մտածելու․ „Ահաւասի՛կ մին լաւ չաղ կրակ, կ՚ցանկանայի մէկ արշինի չափ երշիկ ունենալ մեր ընթրիքի համար, շատ դիւրութեամբ կարող էինք նորան պատրաստել։„

Հազիւ թէ ասաց այս խօսքերը, մին էլ յանկարծ մին երշիկ վեր ընկաւ հերթի միջովը։

„Անիծուի այդպիսի որկրամոլութիւնը, իւր երշիկի հետ, ասաց մարդը, այդե՞ր քո ուզած լաւ բանը։ Մեզ երկու ցանկութիւն է մնացել անելու, ես էլ այնպէս բարկացած եմ քեզ վերայ, որ կամենում եմ որ այդ երշիկը քո քթի վերայ կպչի։„

Միևնոյն րոպէումը մարդը նշմարեց որ ինքը քան իւր կնիկը առաւել յիմար է եղել, որովհետև երշիկը իսկոյն կպչաւ ողորմելի կնկան քնթիցը:

—„Ո՛հ, ինչպէ՞ս թշուառ եմ ես, ասաց կինը, դու շատ չարասիրտ մարդ պիտի լինիս, որ ցանկացար այդ օրինակ դժբատեհ բան:

„Ես քեզ հաւատացնում եմ, սիրելի, որ ես միտք չ՛էի արել այդ մասին, պատասխանից մարդը: Բայց ինչ պէտքէ՞ անենք: Կամենում եմ մեծ մեծ հարստութիւն-ներ խնդրել դիցանուշից և քեզ համար մին ոսկի աման շինել տալ, որ քո երշիկը թաղուցանես:

—Ես ինձ կ՛սպանեմ, ասաց կինը, եթէ երշիկը իմ քնթիս վերայ ունենալով պիտի ապրեմ: Մեզ միայն մին ցանկութիւն է մնում անելու, թո՛յլ տո՛ւր որ անեմ, ապա թէ ո՛չ լուսամուտից վայր կ՛ընկնեմ:

Այս խօսքերը ասելիս գնաց լուսամուտը բացաւ, իսկ մարդը, որը որ նորան շատ սիրում էր, ասաց. „կանգնի՛ր, սիրելի, ես քեզ իրաւունք եմ տալիս ցանկանալ ինչ որ կամենաս:„

—Լաւ է, ասաց կինը, ցանկանում եմ որ երշիկը քնթիցս ցած ընկնի:„

Իսկոյն երշիկը վայր ընկաւ և կինը, որը որ խելօք էր, ասաց մարդին. „Դիցուհին ծաղր է անում մեզ վերայ և նա իրաւունք էլ ունի: Շատ կարելի է մենք թշուառ կ՛լինեինք մեր հարուստ լինելովը: Հաւատացի՛ր ինձ սիրելի, որ ոչինչ պիտոյ չ՛է մեզ ցանկանալ, այլ բաւականանանք ընդունելով ինչ որ Աստուած մեզ շնորհում է: Ուտենք ուրեմն մեր երշիկը, վասն զի միայն այդ է մնացել մեր ամեն ցանկացած բաներիցը:„

Մարդը տեսնելով որ իւր կնիկը ճշմարիտ է, ուրախութեամբ սկսաւ ճաշակել իւր ընթրիքը:

ԵՒԳԵՆԻԱ

Եթէ ես մին բան ցանկանալու լինէի և եթէ այդ էլ իմ ձեռիս լինէր, կ՛ցանկանայի որ աշխարհիս մէջ ամենից իմաստուն անձն լինէի:

ՏԻԿԻՆ

Բայց այդ բաւական չէ, իմ սիրելի, պէտք է ցանկացած նոյնպէս որ քո իմաստութիւնը կարողանաս օգտաւէտ բաներում գործածել, քանզի առանց դորա քո իմաստութիւնը կարող է քեզ անել աւելի յիմար, աւելի հպարտ և աւելի չարագործ:

ԱԴԷԼ

Իսկ ես կ՛ցանկանայի որ ամեն աղջկերանցից ընտիրն լինէի, քանզի շատ նեղութիւն եմ կրում այդ ցանկութիւնս կատարելու:

ՏԻԿԻՆ

Քո ասած խօսքին հակառակել չ՛է կարելի, շատ լաւ է: Բայց մեր արած ցանկութիւնները ո՛չ երբէք մեզ յառաջացնում չ՛են ոչ մին բանում: Այս միջոցումը պէտք է լաւ իմանաք որ ով որ ճշմարտապէս ցանկանում է բարի լինել՝ արդէն սկսում է բարի լինել: Ձեր մտքումը լաւ պահեցէ՛ք այս խօսքս սիրելիք, որ ով որ կամենում է ճշմարտապէս, այսինքն երբոր աշխատում է բարի լինել՝ և

երբ որ յանձն է առնում բոլոր նեղութիւնները: Այժմ մին քիչ աշխարհագրութեան վերայ խօսենք: Մարիամ, դու ասացիր մեր անցեալ դասի սկզբումը թէ դու մին գիրք ես գտել, որոյ մէջ գրած է այդ գիւտութեան մասին ապա տեսնենք ինչ ես սովորել:

ՄԱՐԻԱՄ

Սովորելեմ Եւրոպայի բոլոր լեռները, գլխաւոր գետե-րը, թերակղզիները և պարանոցները:

ՏԻԿԻՆ

Միայն լեռները և թերակղզիները ասա՛ մեզ այժմ:

ՄԱՐԻԱՄ

Եւրոպումը քանի շղթայ լերանց կայ, ինը մեծ և տասնըմէկը փոքր: Ինը մեծ շղթայ լերինքը են: Ուրալեան լեռները, որոնք գտնվում են Եւրոպայի և Ասիայի մէջ: Սկանդինաւեան ալպեան լեռները, որոնք գտնվում են Նորվեկիայի և Շվետի մէջ: Պիրենեան լեռները, որոնք գտնվում են Փրանսիայի և Իսպանիայի մէջ: Ալպեան լեռները, որոնք գտնվում են Փրանսիայի և Իտալիայի մէջ: Կարպատեան լեռները, որոնք գտնվում են Աւստրիայի թագաւորութեան մէջ: Բալկանեան լեռները կամ Հեմուսի շղթայ լերինքը գտնվում են Տաճկաստանումը: Ապեննեան լեռները, որոնք երկայնաձգվում են ողջ Իտալիայի միջով և Կովկասեան լեռները, որոնք տարածվում են Սև ծովից սկսած մինչև Կասպից ծովը:

Տասնըմէկ փոքր լեռներից գլխաւորները սոքա են:

Շեվիօթեան լեռները, գտնվում են Անգլիայի և Շոտլանդիայի մէջ, Ոսկեան լեռները, Եուրա և Սեվեննեան լեռները գտնվում են Փրանսիայի մէջ: Կորսիքայի լեռները: Սիէրրա—Մորենան և Աստուրիան լեռները գտնվում են Իսպանիայի մէջ:

Եւրոպումը երկու թերակղզիք կան, որոնք պարանոցներ ունին: Մէկը Պելեպոնես կամ Մորէանն է, որը որ գտնվում է Յունաստանի մէջ և միաւորվում է բուն երկրի հետ Կորնթոսի պարանոցովը, և միւսը Ղրիմն է, որը որ գտնվում է Սև ծովի հիւսիսային կողմումը և միաւորվում է բուն երկրի հետ Պերեկոպ անուանեալ պարանոցովը: Եութլանդը կամ Եուքաթանը Դանիմարքայումը նոյնպէս թերակղզի է:

ՏԻԿԻՆ

Քաջալերուի՛ր, սիրելի, շուտով մին լաւ աշխարհագէտ կ՚դառնաս: Տեսնենք այժմ այս աղջկերքը իմանում են իւրեանց դասը, սկսի՛ր Եւգենիա:

ԵՒԳԵՆԻԱ

Մովսէսը և Ահարօնը գնացին Փարաւօնի մօտ և ասացին թէ Եհովայ Աստուածը հրամայել է քեզ որ թոյլ տաս իւր ժողովուրդին գնալ անապատը, որպէս զի զոհ մատուցանեն այն տեղ իւրեանց Աստուծուն:

—„Ես ձեր Աստուծուն չեմ ճանաչում„ պատասխանեց Փարաւօնը և սկսեց առաջուանից էլ առաւել Իսրայելացւոց չարչարել: Իսրայելացիք ասում էին Մովսէսին և Ահարօնին, թէ դուք էք մեր թշուառութեան

պատճառը և տրտնջում էին նոցա դէմ։ Աստուած հրամայեց Մովսէսին կրկին անգամ գնալ Փարաւոնի մօտ։ Մովսէսի և Աստուծոյ զօրութիւնը շուտով յայտնի եղաւ Թագաւորի պալատումը։ Մովսէսը զարկելով իւր գաւազանը գետնին, իսկոյն օձ դառաւ։ Փարաւոնի մոգերը նոյնպէս իւրեանց գաւազանները օձ շինեցին, սակայն Մովսէսի օձը մոգերի օձերին կուլ տուաւ։ Սորանից յետոյ Մովսէսը թխելով իւր գաւազանովը գետերի ջրերին, իսկոյն արիւն դառին, ջրերը ապականուեցան և բոլոր ձկները սատակեցին։ Բայց որովհետև մոգերը նոյնպէս ջուրը արիւն էին շինում, Թագաւորը էլ կամենում չ'էր թոյլ տալ Իսրայէլացւոց։ Իսկոյն Աստուած հրամայեց Մովսէսին գետնի վերայ գցել իւր գաւազանը, և տեսին Եգիպտոսումը անթիւ գորտներ, որոնք մտնում էին տների, անկողինների, վառարանների մէջ, և մինչև անգամ նոյն իսկ Թագաւորի սենեակը։ Այն ժամանակը Փարաւոնը ասաց Մովսէսին. „խնդրի՛ր քո Աստուծուն որ նա սատակացնէ այս գորտներին, և ես այն ժամանակը թոյլ կ'տամ Իսրայէլացւոց որ գնան։" Մովսէսը աղաչեց Աստուծուն, և գորտները սատակեցին։ Բայց երբ որ սատակեցին, Փարաւոնը չ'կամեցաւ իւր խօստմունքը պահել։ Սորանից յետոյ Աստուած ուղարկեց նոցա համար շատ միջատներ, որոնք լցուեցան Եգիպտոսի բոլոր նահանգները։ Յետոյ էլ շատ կարկուտ եկաւ, որը որ սպանեց մարդկանց և անասնոց։ Աստուած ուղարկեց նոյնպէս ժանտախտ ամենայն մարդկանց համար և կէս օրուայ միջումն էլ պարզ չ'էին տեսնում, որովհետև երկիրը սարսափելի ամպով ծածկուել էր։ Միայն Իսրայէլացւոց երկրումը չ'էր պատահում այս ամէն թշուառութիւնները, բայց չ'մտիկ արած այս ամենայն բանի,

Փարաւոնը չ'կամեցաւ թողնել Իսրայէլացւոց։ Այն ժամանակը Աստուած ասաց Մովսէսին. „Թո՛ղ Իսրայէլացւոց ամէն գերդաստան վեր առնէ՛ մին գառն կամ թէ այծ և այս ամսոյ տասնըչորսին մորթէ և ներկէ արիւնովը իւր տան դուռը։ Թող ամենայն Իսրայէլացիք խորովեն այդ գառները կամ այծերը և ուտեն բաղարջի և դառն աղցանի հետ, ողջ պիտի ուտեն և եթէ աւելորդ մնայ, թող այրեն։ Իսրայէլացիք պիտի ուտեն այդ գառները ոտի վերայ կանգնած, շտապելով և ճանապարհի զգեստ հագած, որովհետև կամենում եմ դուրս բերել նոցա Եգիպտոսից և ամենայն տարի պիտի տօնախմբեն այդ ազատութիւնը եօթն օրուայ միջոցումը բաղարջէ հաց ուտելով։" Իսրալացիք իմանալով Աստուծոյ կամքը Մովսէսի և Ահարօնի բերանովը, կատարեցին ինչ որ հրամայել էր նոցա։ Կէս գիշերին Տէրը ուղարկեց իւր հրեշտակը, որը որ սպանեց Եգիպտացւոց անդրանիկները, Թագաւորի որդուցը սկսուած մինչև վերջի ստրուկին, բայց նա չ'սպանեց ոչովի այն տների մէջ, որոնց դռները ներկած էր գառան արիւնով։ Այն ժամանակը Փարաւոնը և ժողովուրդը աղաղակելով ասացին Իսրայէլացւոց. „Շուտով գնացէք մեր մէջից և աղօթք արէք ձեր Աստուծուն մեզ համար։ Երբ որ Իսրայէլացիք դուրս եկին Եգիպտոսից եօթն հարիւր հազար անձն էին, առանց կանանց և երեխանց։ Աստուած հրամայեց որ ամենայն տարի տօնախմբեն իւրեանց ազատութիւնը։ Ահա հենց այդ անցքի յիշատակն է, որ Իսրայէլացւոց մէջ Զատիկ է անուանվում։

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻ՛Ւ Ն

ԵՐԿՈՏԱՍԱ՛ՆԵՐՈՐԴ ՕՐ

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Տիկի՛ն, ինձ մին պատկեր են տուել և ասել են որ նորա միտքը յայտնելիս, ինձ մին լաւ պատմութիւն պիտի ասէք։ Շատ ցանկանում եմ այդ վէպը լսելու։

ՏԻԿԻ՛Ն

Մօտացի՛ր Յուլիանէ և բացատրի՛ր այս աղջկերանց այդ պատկերի միտքը։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Այդ պառաւ մարդը և կնիկը, այր և կին են որոնց կոչում են Փիլիմօն և Բաւկիս։ Այս մեծ մարդը, որը որ մին սագ ունի իւր ոտների մէջին Արամազդն է, որին հեթանոսները երկնային աստուած են անուանում։ Իսկ միւսը, որը որ նորա մօտ նստած է, նորա որդի Մերկուրիոսն է, որը որ չաստուածներին դեսպանն էր։ Ես այժմ ահա դոցա վերայ եղած առասպելաբանութիւնը պատմեմ։

Արամազդը և Մերկուրիոսը մին օր մարդոյ կերպարանքով ճանապարհ ընկան։ Նոքա իրիկնապահումը հասին մին մեծ գիւղ և խնդրեցին որ իւրեանց ողորմին գիշերուայ ասպնջականութիւն շնորհելով, բայց ոչով չկամեցաւ նոցա ընդունել։ Բոլոր դռները թակելուց յե-

տոյ՝ դիմեցին դէպ 'ի մին ղարմանով և խոտով շինած խրճիթի մօտ։ Այս խրճիթի տէրը մին ողորմելի ալևոր մարդ էր, որը որ խաղաղութեամբ ապրում էր իւր Բաւկիս կնոջ հետ,։ Չաստուածները խնդրեցին նորանցից որ իւրեանց թոյլ տան գիշերելու խրճիթումը, և նոյն բարի հոգի ծերունի կողակիցները համաձայնեցան 'ի բոլոր սրտէ նոցա ընդունելու։ Փիլիմօնը ասաց կնոջը որ ջուր պատրաստէ և լուանայ հիւրերի ոտները, և Բաւկիսը կամենալով որ շուտ վառէ կրակը՝ կոտրատեց իւրեանց խրճիթը ծածկած ոստերը։ Երբ որ ջուրը տաքցաւ, Փիլիմօնը մին փայտի տաշտ վեր առաւ, որը որ պատի վերայ կախած էր և մինչդեռ լուանում էր հիւրերի ոտները, Բաւկիսը անանուխով (мята) սրբեց սեղանը, որ լաւ հոտ փչէ և մին փայտի կտոր դրաւ սեղանի տակին, որովհետև մին քիչ կոտրած էր։ Այս խեղճ խրճիթի մէջ ամենևին աթոռ չկար, ուստի բազմեցան նստարանների վերայ։ Բաւկիսը նստարանը փոքր ինչ կակուղ շինելու համար՝ վրէն մին հին կարպետի կտոր քցեց, որով տօն օրերում իւր անկողինքը ծածկում էր։ Յետոյ վազեց պարտէզը շոր քաղելու համար, մին քիչ մեղր և մին քիչ էլ պանիր բերեց խաղողի տերևների մէջ փաթաթած։ Նոքա ամէնքը նստեցին սեղանի վերայ և Փիլիմօնը ներողութիւն խնդրեց օտարականներից այդ օրինակ վատ եղանակաւ նոցա ընդունելուն համար։ Յանկարծ Փիլիմօնը միտը բերեց որ մին սագ ունին և մաքումը որոշեց նորան մորթել հիւրերին համար լաւ ընթրիք պատրաստելու և իսկոյն վեր կացաւ իւր կնոջ հետ սագը բռնելու, բայց այդ ողորմելի թռչունը իւր անձը ազատեց այս կողմից այն կողմը թռչոտելով, այնպէս որ ողորմելի մարդիկը շատ վազ տալուցը ամե-

նելին քրտնել էին: Վերջապէս սագը թռաւ Արամազդի ոտների վերայ և այդ չաստուածը ասաց Փիլիմոնին և Բաւկիսին. «Շատ շնորհակալ եմ ձեր մարդասիրութեան վերայ, եկէ՛ք իմ հետից այս մեծ սարը:

Արամազդը իսկոյն երևեցաւ լուսափայլ ամպով շրջապատած, նոյնպէս և Մերկուրիոսը: Երբ որ բարձրացան դէպ 'ի սարը, Արամազդը ասաց նոցա. «Մտիկ արէ՛ք ձեր քամակներին: Նոքա հնազանդեցան և տեսին որ ամենևին գիւղ չ'կար, այլ նորա տեղը ջրով լցուել էր, որովհետև Արամազդը այդ գիւղի չար բնակիչներուն պատժելու համար նոցա խեղդամահ բնաջինջ էր արել այնտեղ մին լիճ բերելով: Գիւղի միջին տեսնւում էր միայն ողորմելի այր և կնոջ փոքրիկ խրճիթը, որը որ միայն պահպանուել էր: Ըստորում Փիլիմոնը և Բաւկիսը շատ առաքինասէր էին մեծապէս կարեկցութիւն ունեցան իւրեանց դրացիների թշուառութեան վերայ, թէպէտ և նոքա չարութենից 'ի զատ ոչինչ լաւութիւն չ'էին արել: Սորանից յետոյ Մերկուրիոսը ասաց նոցա «Ինձանից մին վարձատրութիւն խնդրեցէ՛ք, ես կ'կատարեմ:»

Մին քիչ մարդ և կնիկ խորհուրդ անելուց յետոյ Փիլիմոնը ասաց Արամազդին, «Որովհետև դու այդպէս բարեսիրտ ես և կամենում ես ինձ վարձատրել, խնդրեմ որ մեր փոքր խրճիթը բերէ՛ք այս սարի վերայ, նորան մին տաճար փոխէ՛ք, որտեղ քեզ պաշտօն մատուցանենք, ես քո քուրմը կ'լինիմ, իսկ Բաւկիսը քո քրմուհին և այնպէս արա՛ որ մենք երկուս միևնոյն օրումը մեռնենք. որ ոչ ես տրտմութիւն ունենամ ողբալու իմ սիրելի Բաւկիսիս մահը, և ո՛չ էլ նա արտասունք թափի իւր գողտրիկ Փիլիմոնի վերայ:»

Արամազդը նոցա խնդիրքը ճշտութեամբ կատարեց: Մին օր, երբ որ նոքա նստած էին տաճարի դռան մօտ և խօսում էին այն սիրոյ վերայ, որ պարտաւոր էին ունենալ առ չաստուածները՝ Փիլիմոնը կամեցաւ վեր կենալ, բայց տեսաւ որ ամենևին ոտներ չ'ունի, որովհետև նրանք ծառ էին դառել: Բաւկիսը կամեցաւ վեր կենալ նորան օգնելու, բայց տեսաւ որ միևնոյն դիպուածը իւր հետ էլ է պատահել: Նոքա երկու գեղեցիկ ծառեր դառին և միշտ տաճարի դռան մօտ կանգնած մնացին:

ՏԻԿԻ՛Ն

Ապրես՛ իմ սիրելի Յուլիանէ, շատ լաւ յիշողութիւն ունիս, լաւ պատմեցիր այդ առասպելաբանութիւնը, որը որ Փոնտեն բանաստեղծը ոտանաւորներով գրել է:

ԱՂՋԼ

Տիկի՛ն, Յուլիանէն ասաց թէ Արամազդը լիճ է շինել գիւղը, որոյ մէջ բնակում էին էլել չարասիրտ մարդիկը, որոնք նորա ասպնջականութիւնը մերժեցին, ես իմանում եմ ինչ է լիճը, բայց չեմ իմանում Եւրոպայի գլխաւոր լճերը որոնք են:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Ռուսաստանումը շատ լճեր կան, որոնց գլխաւորները են: Օնեկա, Իլմեն, Լադօկայ, Պէյպ և Վէրկ լճերը: Զուեցերեան դաշնակցութեան մէջ գտնւում է Կոնստանս և Ժնեւի լճերը: Ռոն գետը գնում է Ժնեւի լճի կշտովը: Գերմանիոյ մէջ շատ լճեր կան, որոնց

գլխաւորները են, Պալաթօն, Կայսիտել, Թրօն, Ամեր և Վ․ուրմ։

ՏԻԿԻ՛Ն

Այդ կ'վերջացնէ մեր այս օրուայ աշխարհագրութեան դասը։ Նուզենիա' ասա մեզ քո պատմութիւնը։

ՆՈՒԶԵ՛ՆԻԱ

Երբ որ Մովսէսը և Իսրայէլացիք մտին անապատը Տէրը հրամայեց իւր հրեշտակին նոցա առաջնորդելու։ Ցերեկը նոցա առաջ մին ամպի մէջ էր գնում, իսկ գիշերը մին հրեղէն սիւնի մէջ, որը որ նոցա լուսաւորում էր։ Այս միջոցումը Փարաւօնը փոշմանեց թողնելուն համար այնպիսի ազգին, որը որ այնքան աշխատում էր իւր համար, և բազում զօրք ժողովելով ընկաւ նոցա հետևից։ Երբ որ Իսրայէլացիք տեսին Եգիպտացւոց, վախեցան և ասացին Մովսէսին. „Ի՞նչի մեզ բերի՛ր Եգիպտոսից այս անապատը, մեզի այս տեղ յանկարծ փչացնել տալու համար։ Մի՞թէ երկիր կ'պակասէր Եգիպտոսումը որ թաղէին մեր մարմինները։" Մովսէսը խնդրեց Աստուածանից որ ողորմէ իւր ժողովուրդին։ Հրեշտակը, որը որ գնում էր նոցա առաջին, քամակ ընկաւ և կանգնեց նոցա և Եգիպտացւոց մէջ, Իսրայէլացւոց կողմը լոյս էր, որովհետև հրեղէն սիւնը նոցա լուսաւորում էր, իսկ Եգիպտացւոց կողմը գիշեր էր։ Այն ժամանակը Մովսէսը Տէրին հրամանաւը զարկեց իւր գաւազանովը կարմիր ծովին, ջուրը բաժանուեց և յատակը երևեցաւ Իսրայէլացիք ողջ գիշերը անցկացան։ Եգիպտացիք կամեցան նոյնպէս անցկենալ, բայց երբ որ Փարաւօնի հետ

մտան ծովը, ջրերը միաւորվեցան և Եգիպտացւոց խեղդամահ բնաջինջ արաւ։ Այն ժամանակը Մովսէսը, Ահարոնը և նոցա քոյր Մարիամը փառաբանութեան տաղեր երգեցին Աստուծոյ։ Այս միջոցումը Եփրայեցիք սկսեցին տրտնջալ Մովսէսի դէմ, որովհետև սովը սաստիկ չարչարում էր նոցա անապատումը։ Այս սուրբ մարդը աղաչեց Աստուծոյ որ վախճան անէ իւր ժողովուրդի կրած թշուառութեանցը։ Աստուած քառասուն տարի շարունակ մանանայ ուղարկեց նոցա համար։

ՏԻԿԻ՛Ն

Այժմ քո կարգն է, սիրելի Ադէլ։

ԱԴԷԼ

Իսրայէլացիք մին Ռափիդիմ անունով երկիր գալով, ջուր չ'գտին, և մոռանալով Աստուծոյ նոցա համար արած բոլոր հրաշքները, ասացին Մովսէսին. „Եգիպտոսից բերի՛ր մեզ որ սպանես մեր գերդաստաններովը և խաշինքներովը։" — Դուք ամենևին իմ դէմ չէք տրտնջում, ասաց Մովսէսը, այլ Աստուծոյ դէմ, բայց այսուամենայնիւ կ'խնդրեմ որ ձեզ ջուր տայ։ Յետոյ Մովսէսը իւր գաւազանովը զարկեց մին քարաժայռի, որտեղից առատ ջուր բղխեց։ Սորանից յետոյ մին Ամաղեկ անունով թագաւոր զօրաժողով շինելով եկաւ պատերազմելու Իսրայէլացւոց դէմ։ Մովսէսը հրամայեց Յեսուին զինուորներ ընտրել Իսրայէլացւոց մէջից և պատերազմել Ամաղեկի դէմ։ Պատերազմի ժամանակը Մովսէսը Ովրի հետ բարձրանալով սարը բազկատարած ձեռքերները դէպի երկինքը՝ աղաչում էր Աստուծոյ։ Եւ որովհետև բա-

զուկները վաստակած էին, ցածր թողեց։ Այդ՝ Իսրայէլացիք, որոնք յաղթող էին հանդիսացել՝ յաղթվում էին իսկոյն։ Երբ որ Մովսէսը ձեռները վեր էր թողնում։ Ցորժամ Մովսէսը տեսաւ այդ բանը, մին քարի վերայ նստեց։ Ահարոնը և Ովրը բռնեցին նորա ձեռները։ Ամաղէկ թագաւորը փախաւ։ Աստուած մին շարունակ պատերազմ բացաւ Ամաղէկացւոց դէմ և հրամայեց Մովսէսին գրել այս անցքը։

ՇԱՐԼՈՏՏԸ

Իմ սիրելի բարեկամ, ինչպէ՞ս այս աստուածաշնչի մէջ գրած բաները գեղեցիկ են, բայց որքան նոյնպէս Իսրայէլացիք ապերախտ են էլել տրտնջալով անդադար Մովսէսի դէմ, որը որ այդչափ մեծ շնորհ էր ստացել նոցա համար Տէրից, հանելով նոցա Եգիպտոսից։

ՏԻԿԻՆ

Այդ ճշմարիտ է իմ սիրելի, բայց մենք էլ այդ ժողովուրդի պէս ապերախտ ենք, որովհետև անհնազանդ ենք դառնում Տէրոջը, չմտիկ արած այն հրաշքներին, որոնց տեսնում ենք ամենայն օր։

ՄԱՐԻԵՄ

Իսկ ես հրաշքներ տեսած չեմ երբէք։

ՏԻԿԻՆ

Բայց արա՛ աչքերդ, իմ սիրելի և մտիկ արա՛ արեգակին, լուսնեակին, աստղերին, երկրի և ծովի վերայ. մտիկ

արա՛ քո վերայ։ Մենք շրջապատած ենք հրաշքներով, որոնց վերայ միտք չ՚ենք անում, որովհետև ամենայն օր տեսնում ենք նոցա։ Արեգակը, որը որ լոյս է տալի մարդկանց 'ի սկզբանէ աշխարհիս, այնպէս է տեղաւորուած, որ կարողանայ մեծ օգուտ անել մեզ։ Եթէ նա բարձր լինէր շատ՝ չէր կարողանալ տաքացնել երկրին, իսկ եթէ շատ ցածր լինէր, կ՚այրէր երկիրը և մեզ էլ նոյնպէս։ Մի՞թէ հրաշք չէ այդ, որ նա մնում է միևնոյն տեղումը այդքան երկար ժամանակից հետէ։

ՅՈՒԼԻԵՆԸ

Ես լսել եմ որ մին երկիր կայ, որտեղ արեգակը շատ ցածր է և որտեղ ջերմը անտանելի է։

ՏԻԿԻՆ

Այդ երկիրը Աֆրիկայումն է, Ամերիկայի մէջ տեղումը և նոյնպէս Ասիայի հարաւային կողմումն։ Այդ տաքութիւնը տանելի է այն կողմի բնակիչներին, որոնց Աստուած այնպէս մարմին է տուել. որ կարողանան համբերել, իսկ օտարականների համար անկարելի է։ Տեսնում էք Աֆրիկայի քարտէզի վերայ, այս երկիրը, որը որ Եգիպտոսն է, այնտեղ շատ տաք է, անձրև էլ չէ գալիս, գոնեա՛ շատ հազիւ է պատահում։

ՇԱՐԼՈՏՏԸ

Բայց ինչպէ՞ս Եգիպտացիք կարող են ապրել, ըստ որում առանց անձրևի ոչինչ բերք չէ լինում։

ՏԻԿԻ՛Ն

Այդ ճշմարիտ է, իմ սիրելի, բայց Եգիպտոսը մին շատ առատ երկիր է, և Աստուած մին Նեղոս անունով գետ է տուել նոցա: Ամենայն տարի բարձրանում է նա իւր եզերքից և ջրում է Եգիպտացւոց երկիրները ամիսներով և պտղաբեր է գործում երկիրը թողնելով մին տեսակ կաւ:

ՆԻԳԵ՛ՆԻԸ

Բայց իմ սիրելի բարեկամ, Նեղոսի ջուրը տարածուելով, կարող է լցնել երկիրները:

ՏԻԿԻ՛Ն

Ո՛չ, իմ սիրելի, դորա համար սւններ են բարձրացրած, որոնք արգելք են դառնում այդ բանին: Մնաք բարև իմ սիրելի աղջկերք:

ՉՈՐԵՔՏԱՍԱ՛ՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒ՛Ն

ԵՐԵՔՏԱՍԱ՛ՆԵՐՈՐԴ ՕՐ

ՆԻԳԵ՛ՆԻԸ

Ես շատ բան ունիմ ձեզանից հարցանելու այս օր, սիրելի բարեկամ, եթէ դուք իրաւունք կ'տաք ինձ. նախապէս կ'ցանկանայի իմանալ ինչ տեղի՞ց է գալիս անձրևը:

ՏԻԿԻ՛Ն

Ծովերից, գետերից և երկրիս մէջ գտնուած ջրերից:

ՆԻԳԵ՛ՆԻԸ

Դուք ծաղր էք անում, սիրելի բարեկամ, ծովերի և գետերի մէջ գտնուած ջրերը ի՞նչպէս կարող են երկինքը բարձրանալ:

ՏԻԿԻ՛ՆԸ (ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՎ ԹԷՅԱՐԱ՛ՆԻ ԾԱԾԿՈՑԸ)

Բայց ինչպէս է այս թէյարանի մէջ գտնուած ջուրը բարձրացել: Տեսնում էք՞ որ նորանով լցուած է ծածկոցը, չ'մոռիկ արած որ թէյարանը կիսատ է: Երբ որ ջուրը սկսում է տաքանալ, մանաւանդ եռալ, տեսնումէք որ մին տեսակ ծուխ է բարձրանում, և այն ինչ որ ձեզ ծուխ է թւում, ջրի ամենանուրբ մասն է, որին գոլորշի անուն ենք տալիս: Արդ՝ արեգակի ջերմութիւնը դէպ 'ի իրան է ձգում ջրի ամենանուրբ մասունքները, որոնք գո-

լորշի զատուած բարձրանում են օդոյ մէջ, և օդը նոցա իւր մէջ պահում է, երբ որ քիչ են, իսկ յորժամ շատ են գը-տանվում, ճնշելով օդը ցածր թափում են անձրև դա-ռած։

ՇԱՐԼՈՏՏԸ

Բայց իմ սիրելի բարեկամ, ես հաւատում չէի որ օդը կարող էր իւր մէջ պարունակել մին բան, որովհետև օ-դը համարեա՛ թէ ոչինչ է, վասն զի որչափ որ մտիկ եմ անում չորս կողմս, չեմ տեսանում նորան։

ՏԻԿԻ՞Ն

Այդ օդի մեղն չէ, այլ քո աչքերի մեղն է։ Շատ բաներ կան օդի մէջ, որոնք մենք տեսնում չենք, բայց այսուամենայնիւ կան. օրինակի աղագաւ, այս սենեակու-մը փոշի տեսնում էք՞։

ՇԱՐԼՈՏՏԸ

Ո՛չ, իմ սիրելի բարեկամ։

ՏԻԿԻ՞Ն

Վեր կա՛ց և գնա՛ մտիկ արա՛ սենեակի ծայրումը, որտեղ որ ընկած է արեգակը։

ՇԱՐԼՈՏՏԸ

Այո՛, իմ սիրելի, բազմաթիւ մանր բաներ տեսանում եմ, որոնք միշտ շարժում են։

ՏԻԿԻ՛Ն

Այդ մանր բաները շամանդաղ են անուանվում: Բոլոր օդը նորանցով լցուած է: Բայց օդի մասունքները շատ մանր են և աւելի բարակ և ահա դորա համար կարողանում չ'ենք տեսնել:

ՄԱՐԻԱՄ

Ես շատ կ'ցանկանայի իմանալ թէ օդը ի՞նչ գոյն ունի, սիրելի բարեկամ:

ԱԴԷԼ

Մի՞թէ օդը, որին մասունքները այդպէս մանր են, կարող է ունենալ գոյն:

ՏԻԿԻ՛Ն

Բարձրացրէ՛ք ձեր աչքերը դէպ 'ի երկինքը և տեսէք ի՞նչ գոյն է:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Կապոյտ է, սիրելի բարեկամ:

ՏԻԿԻ՛Ն

Ինչ որ դու երկինք ես անուանում, օդն է, որը որ հաւաքվում է և ճնշվում վերևումը: Դու չես կարող տեսնել շամանդաղները արեգակով լուսաւորուած տեղերումը, որովհետև նոքա միմեանցից շատ հեռու են և շատ մանր. Բայց ես կամենում եմ նորանցից մին մեծ

բազմութիւն բերել տալ և դու նոցա կ՚տեսնես։ (Տիկինը վեր առնելով մին աւել աւելում է սենեակը.)

ՇԱՐԼՕՏՏԸ

Ո՛հ, իմ սիրելի բարեկամ, ո՞րքան փոշի բարձրացան, կարողանում չեմ էլ պարզ տեսնել, աչքերս կուրանումեն.

ՏԻԿԻ՛Ն

Դուք այսուամենայնիւ տեսնում էք փոշիները կամ շամանդաղները, որովհետև այդ միևնոյն բանն է, վասն զի նորանցից շատ բարձրացնել տալի, և փոշւոյ այդ ամէն հատերը մէկ մէկի հետ կպչում են, այսպէս էլ դուք չէք կարողանում տեսնել ձեզի շրջապատող օդը, պատճառը որ նորա մասները միմեանց վերայ խիտ առ խիտ ճնշուած չեն, բայց օդոյ մասները այնտեղ վերևումը հաւաքվում են և այն ժամանակ դուք նոցա տեսանում էք։ Կամենում եմ ձեզ հասկացնել այդ բանը օրինակով։ Զոր օրինակ, եթէ մին բաժակի մէջ գինի ածենք, կը տեսնենք որ ամենևին կարմիր է, բայց եթէ այդ գինուցը մին կաթ մատովս վեր առնեմ, և կաթեցնեմ թաշկինակիս վերայ, կ՚տեսնենք որ էլ այնպէս կարմիր չէ երևում, ինչպէս բաժակի մէջ գտնուած գինին։ Որովհետև բաժակի մէջ եղած գինին մին մեծ քանակութիւն է, որոյ մասունքները առաւել միաւորուած են և առաւել ճնշուած քան թէ թաշկինակի վերայ գտնուածը։ Միևնոյնը կարող ենք նշմարել ապրուշումէ թելի վերայ, նա քիչ կարմիր կ՚երևայ մենակ, քան թէ կծիկի վերայ, այդ էլ միևնոյն պատճառի վերայ է հիմնուած։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես ենթադրում եմ որ օդը շատ կապոյտ մասունքներից բաղկացած մարմին է, բայց ես հաւատում չեմ որ այդ փոքր մարմինները, որոնց մասունքները այնպէս տկար են, կարող լինին բարձրացնել ջուրը, որը որ առաւել ծանր է նորանցից. որովհետև ջրի մասունքները բաւականին մեծ են և կարող եմ տեսնել:

ՏԻԿԻ՛Ն

Սիրելի Շարլոտտա՛, դու շուտով բնագէտ պիտի դառնաս: Թռչունը, առաւել ծանր է քան թէ օդը, բայց այսուամենայնիւ օդը դիւրութեամբ իւր վերայ կրում է: Քեզ պատահած կ'լինի որ անձրևից յետոյ գտնուած լինիս պարտէզի մէջ. տեսել չ'ես որ ջրի կաթիլները կախ են ընկնում ոստերից և տերևներից:

ՇԱՐԼՈՏՏԱ

Այո՛ սիրելի, շատ անգամ կանգնել եմ և մտիկ արել, մանաւանդ արեգակը նոցա վերայ ընկած ժամանակը, որոնք ինձ երևում էին ինչպէս ադամանդեայ քարեր և որոնք ամեն տերևների վերայ գտանվում են:

ՏԻԿԻ՛Ն

Ի՞նչ բան է բռնում այդ ադամանդներին, որ նոքա վեր չ'են ընկնում տերևների ծայրից: Օդն է, որը որ 'ի հարկէ առաւել ծանր է նորանցից, բայց վերջը ջրի մանր կաթիլները կաթում են. որովհետև ջրի մնացորդը, որը որ տերևների վերայ է, միաւորվում է գնդակների

հետ, և յետոյ այդ փոքրիկ գնդակները առաւել ծանրանում են քան թէ օդը և վէր են ընկնում գետնի վերայ։

ՇԱՐՂՈՏՏԵ

Ես այժմ այդ լաւ հասկացի։ Անկասկած ջուրը առաւել ծանր է օդիցը, երբ համահաւասար օդոյ և ջրոյ քանակութիւն է գտանվում, բայց այդ արգելք չ՚է դառնում որ օդոյ մին մեծ քանակութիւն կարող չլինի տանել մին քիչ ջուր։ Այդ բանը այն նաւի նման է, որոյ վերայ դուք խօսեցիք մին քանի ժամանակ սորանից առաջ։ Նաւը ինքը ըստ ինքեան առաւել ծանր է ջրիցը՝ բայց այսուամենայնիւ մին մեծ քանակութիւն ջուր կայ նաւի տակին, և հենց դորա համար է որ ջուրը կարողանում է կրել նորան իւր վերայ։

ՏԻԿԻՆ

Այս օր բաւականին խօսեցինք բնական գիտութեան վերայ, կամենում եմ այժմ մին վէպ ասել։

ՁԿՆՈՐՍ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ

Եղել է մին աղքատ մարդ, որոյ եղած չեղածը մին խրճիթ է եղել մին գետի եզերքումը։ Նա իւր օրական ապրուստը հայթայթում էր ձուկ բռնելով, բայց որովհետև քիչ ձուկ կար այդ գետումը, նորա դատածն էլ մին մեծ բան չ՚էր, և շատ անգամ նա հացով և ջրով էր իւր կեանքը պահպանում։ բայց այսուամենայնիւ բաւական էր նա իւր աղքատութեան մէջ և ունեցածիցը առաւել ոչինչ չ՚էր ցանկանում։

Մին օր նորա խելքին փչեց քաղաք տեսնել և մտա-

քումը վճռեց հեռանալ օրը գնալ այն տեղ: Երբ որ նա մտածում էր իւր անելու ճանապարհորդութեան վերայ, տեսաւ մին ուրիշ ճանապարհորդ, որը որ հարցրաւ նորանից թէ որքա՞ն հեռի է գտանվում մինչև գիւղը, որոյ մէջ կարող լինէր մին իջևան գտանել, և որոյ մէջ կարելի լինէր գիշերը անկացնել: — „Տասներկու մղոն կայ մինչև գիւղը, պատասխանեց ձկնորսը, բայց արդէն ժամանակը անց է, եթէ բարեհաճէ.ք այս գիշեր իմ խրճիթումս անցկացնելու, ուրախութեամբ կ'տամ ձեզ:" Ճանապարհորդը համաձայնեցաւ այս առաջարկութեանը: Ձկնորսը, որը որ կամենում էր նորան լաւ մեծարել՝ կրակ վառեց մին քանի ձուկ եփելու համար: Մինչ դեռ նա պատրաստում էր ընթրիքը, ծիծաղում էր, երգում էր և շատ զուարթաբարոյ էր երևում:

— „Ինչպէ՞ս դու բաղտաւոր ես, ասաց նորա հիւրը: Իմ բոլոր գոյ.քս կ'տայի քեզ պէս բաղտաւոր լինելու համար:"

„Բայց ո՞վ է քեզ արգելում այդ բանը անելու, հարցրաւ ձկնորսը: Իմ ուրախութիւնը ինձ ոչինչ չ'է արժում, և ես երբէ.ք առիթ չ'եմ ունեցել տրտմելու: Միթէ դու մեծ մեծ տրտմութիւններ ունիս, որոնք թոյլ չ'են տալիս քեզ ուրախանալ:"

— Աւա՜ղ, պատասխանեց ճանապարհորդը, բոլոր մարդիկը ինձ ամենից բաղտաւորն էին կարծում. ես վաճառական էի, շատ փող աշխատեցի և շարունակ բաւականութեան մէջ էի: Անդադար վախում էի որ չ'սնանկանամ և չ'կորցնեմ նաւերս և ապրանքներս, այդ պատճառաւ թողեցի վաճառականութիւնը և մին պաշտօն գնեցի թագաւորի մօտ: Նախ ես կարծում էի ինձ բաղտաւոր, թագաւորի աչ.քին հաճոյ երևալուս համար, բայց շու-

տով իմացի որ առաւել նորա գերին էի, քան թէ նորա սիրելին Նա ամենայն վայրկեան զրկում էր ինձ իմ զուարճութիւնիցը, իւրը կատարելու համար: Նա որսորդութիւն էր սիրում, իսկ ես հանգստութիւն, բայց այսուամենայնիւ հարկադրուած էի բոլոր օրը վազվզել անտառումը: Յետէի դառնում այնտեղից ապարանքը վաստակած և մեծ փափագով 'ի քուն մտանել:

Մին մեծ իշխան խնջոյք էր անում, պէտքէ ինձ էլ այնտեղ գտանուել Թագաւորի աչքին լաւ թուելու համար: Բայց այսուամենայնիւ Թագաւորի բարեկամութիւնը ինձ քիչ մխիթարում էր, բայց ահա՛ տասնըհինգ օր կ'լինի որ Թագաւորը իւր միտքը փոխելով՝ պալատականներից մեկին հետ նորոգ բարեկամութիւն է հաստատել: Այդ վայրկեանից սկսած տեսի որ ես կորած եմ, որովհետև բոլոր աշխարհը ասում էր թէ այդ իշխանը նորա սիրելին է դառել: Երբ որ լսեցի այդ խօսքը, տրտմութենիցս կամեցի մեռնել: Առանձնանալով իմ սենեակի մէջ ամենեին տրտմած, սկսեցի լաց լինել: Յանկարծ մին երկայն հասակաւ և զուարթ երեսով մարդ երևաց, որը որ ինձ ասաց. „Աղայէ՛ը, սիրտս ցաւում է քո դժբաղտութեան վերայ, կամենումես արդե՞օք հանգստանալ: Ձեռք վեր ա՛ռ հարստութենից և փառասիրութենից: Թողէ՛ր Թագաւորի ապարանքը և գնա՛ քո դէմ պատահած ճանապարհովը շարունակ երկու օր: Մէկ մարդոյ յիմարութիւն քեզ մին տեսարան է պատրաստում, որը որ կարող պիտի լինի բժշկել քո փառասիրութեան ախտը: Երբ որ երկու օր ճանապարհորդութիւն անես, վերստին յետ դարձիր և ես հաստատ իմանում եմ որ այն ժամանակը քեզանից պիտի կախուած լինի աւրախ և հանգիստ ապրելը:„

Ես արդէն մին բոլոր օր ճանապարհորդութիւն եմ արել այդ մարդոյ հնազանդելու համար և էքուց էլ պիտի շարունակեմ, բայց դժուար յուսալի է ինձ այն հանգստութիւնը, որը որ խոստացել է նա ինձ։

Ձկնորսը այս պատմութիւնը լսելիս, չ՚կարողացաւ չըզարմանալ այդ փառասէր մարդոյ յիմարութեան վերայ, որը որ իւր բաղտաւորութիւնը համարում էր կախուած թագաւորի խօսքերից և նորա իւր հետ լաւ վարվելուցը։ „Ես շատ ուրախ կ՚լինիմ քեզ միւս անգամ տեսնել, ասաց նա ճանապարհորդին, և տեսնել քո բժշկութիւնը։ Վերջացրո՛ւ քո ճանապարհորդութիւնը և վերադին եկ՛ իմ խըրճիթս։ Ես էլ եմ կամենում ճանապարհորդութիւն անել, քանզի ո՛չ երբէք քաղաքում էլած չ՚եմ։

—Ձեր մտադրութիւնը շատ վատ է, ասաց նորա հիւրը, որովհետև դու բաղտաւորութեան մէջ ես այժմ, ինչի՞ վրդովում ես այդ խաղաղութիւնը մին տեսարան տեսնելու համար, որը որ անշուշտ պիտի ծնել տայ քո սրտի մէջ այնպիսի ցանկութիւններ, որոնց ո՛չ մին եղանակաւ չ՚պիտի կարողանաս բաւականութիւն տալ։"

„Պարոն, պատասխանեց ձկնորսը, դու խօսում ես ինչպէս մին գեղեցիկ մատեան, բայց այդ բաները քեզ համար պահէ։ Աշխարհս լի է այդ օրինակ մարդիկներով, որոնք դիւրութեամբ խորհուրդ են տալիս ուրիշներին, մինչդեռ ինքեանք իւրեանց կատարել ես չեն կարող։"

Ճանապարհորդը ոչինչ չ՚խօսեց և միւս օրը շարունակեց իւր ճանապարհորդութիւնը։ Մինչդեռ ձկնորսը կամենում էր սկսել իւր ճանապարհորդութիւնը, երկու օրից յետոյ Աղայելը, որուն ոչինչ անսովոր բան չէր պատահել՝ վերադին յետ դարձաւ ձկնորսի խրճիթը և տե-

սաւ նորան նստած դռան մօտ, գլուխը թէք տուած ձեռների վերայ, և աչքերը դէպի գետինը ուղղած:

—„Ի՞նչի վերայ ես մտածում, հարցրաւ Ագայելը

„Մտածում եմ որ շատ դժբաղդ եմ, պատասխանեց ձկնորսը: Ի՞նչ եմ արել Աստուծոյ, որ նա ինձ այսպէս աղքատ է ստեղծել, մինչդեռ աշխարհս լցուած է հարուստ և բաղդաւոր մարդկերանցով:„

Այս միևնոյն վայրկեանումը այն մարդը, որը որ հրամայել էր Ագայելին որ ճանապարհորդութիւն անէ և որը որ մին հրեշտակ է էլել, երևաց և ասաց ձկնորսին. „Ի՞նչի դու չլսեցիր Ագայէլի խորհուրդներին. քաղաքի շքեղ երևոյթները ծնել են տուել քո սրտի մէջ ագահութիւն և փառասիրութիւն և արտաքսել են նորա մէջից ուրախութիւնը և խաղաղութիւնը: Չափաւորի՛ր քո ցանկութիւնները և դու կ՚լինիս այն ժամանակը բաղդաւոր և երջանիկ:„

—„Քեզ համար հեշտ է այդ ասել, բայց ինձ անկարելի է անել, պատասխանեց ձկնորսը, ես զգում եմ որ միշտ անբաղդ պիտի լինիմ, մինչև որ չխնդրեմ Աստուածանից փոխել իմ այժմեան դրութիւնը:„

„Այդ քո կորստեան պատճառ կ՚դառնայ, պատասխանեց հրեշտակը, ինձ հաւատացի՛ր և ունեցածիցդ աւել ոչինչ մի՛ ցանկանար:„

—Որքան որ դու խօսես, չ՚ես կարողանալ ինձ արգելել որ մին ուրիշ դրութեան չցանկանամ, պատասխանեց ձկնորսը:„

„Աստուած երբեմն լսում է փառասէր մարդկանց խնդիրքը, բայց բարկութեան մէջ է լսում և նոցա պատժելու համար միայն:„

—„Այդ քո սպառնալիքը ինձ ամենևին տարակու-

սութեան մէջ չէին կարող գցել, ասաց ձկնորսը:

„Որովհետև դու քո կորստեանդ ցանկանում ես, ես էլ համաձայնում եմ քեզ հետ պատասխանեց հրեշտակը: Երեք բան դու կարող ես ցանկանալ, Աստուած քեզ կ՚շնորհէ:"

Ձկնորսը ուրախութենից այլայլած՝ ցանկացաւ որ իւր խրճիթը մին հոյակապ արքունի դառնայ: Եւ իսկոյն նորա խնդիրքը կատարուեցաւ: Ձկնորսը ապարանքի վերայ զարմանալուց յետոյ՝ ցանկացաւ որ իւր դռան մօտ գտնուած գետը ծով դառնայ: Եւ յետոյ ցանկացաւ որ իւր նաւակը ոսկով և թանկագին քարերով լցուած նաւ դառնայ: Երբ որ նա նաւը տեսաւ, վազեց իսկոյն վայելելու համար այն հարստութիւնները, որոնց տէր էր դառել ինքը: Բայց հազիւ թէ մտաւ նա նաւի մէջ, յանկարծ մին սաստիկ մրրիկ բարձրացաւ: Ձկնորսը կամենում էր վերադառնալ նաւահանգիստը, բայց հնար չէր գտանում: Նա սկսեց անիծել իւր փառասիրութիւնը, բայց ՚ի զուր, ծովը կուլ տուաւ ձկնորսին նորա բոլոր հարստութիւններովը և հրեշտակը ասաց Աղայէլին. Թո՛ղ այդ օրինակը քեզ իմաստացնէ: Այդ մարդոյ վախճանը համարեա՛ թէ ամենայն փառասէր մարդոյ վախճանն է: Պալատը, որտեղ որ դու կենում էիր, մին հրաշակաւոր ծով է մրրիկներով և նաւակոծութիւնով հանդերձ. մինչդեռ կարող ես, շտապի՛ր հանել ծովափը, մին օր կ՚ցանկանաս հանել, բայց չես կարողանալ:"

Աղայէլը դողդողալով խօսք տուաւ հրեշտակին հնազանդել: Նա թողեց ապա թագաւորական ապարանքը, և գնաց բնակուեց մին գիւղի մէջ, և փոխանակ ցանկանալու աւելացնել իւր մեծամեծ հարստութիւնները՝ փոյթ ունեցաւ չափաւորապէս վայելել նոնք, իսկ մնա-

ցորդը բաժանեց ազգականներին։ Այնուհետև նա ուրախ և խաղաղ կեանք վարեց և չեղաւ մին այնպիսի օր որ նա չանցկացնէր առանց շնորհակալութիւն մատուցանելու Աստուծոյ, այդ օրինակ իւր անձը փառասիրութենից և ագահութենից բժշկելուն համար, որոնք թունաւորել էին նորա կեանքի բարօրութիւնը։

Այս հրաշալի վէպը մեզ հեռի տարաւ, սիրելի աղջկերք, էլ շատ ժամանակ չ'ունինք պատմելու մեր աշխարհագրութիւնը և պատմութիւնը։ Սկսի՛ր Եւգէնիա՛։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Երեք ամիս անապատումը մնալուց յետոյ՝ Իսրայելացիք գնացին Սինա անուանեալ ձորը և լսելի եղաւ Մովսէսին Աստուծոյ ձայնը սարի գագաթից։ Երկրորդ օրը առաւօտեան Իսրայելացւոց դաշտերը ամպով ծածկուեցան և Աստուած իւր բերանով փայլատակների և կայծակների միջով տուաւ տասը պատուիրանքները։ Երբայեցիք այս բանին վկայ լինելով, աւելի լաւ համարեցան որ Մովսէսը այնուհետև նոցա հետ խօսէ և ոչ թէ Տէրը։ Աստուած կանչեց Մովսէսին սարի ծայրը և սովորեցրուց նորան այն ամեն օրէնքները, որոնք վերաբերւում էին ժողովրդոց բարքին։ Մովսէսը հարկադրուեցաւ մնալ այնտեղ քառասուն օր և քառասուն գիշեր։ Այս միջոցումը խստապարանոց և անհաւատ ժողովուրդը տեսնելով որ իւրեանց առաջնորդը էլ յետ չէ դառնում՝ գնացին Ահարոնին մօտ և գայթակղաբար ստիպեցին նորան իւրեանց համար մին ոսկի որթ շինել։ Այդ գործոյ համար նոքա ընծայեցին իւրեանց կանանց ոսկի օղերը և սկսեցին պաշտել այդ կուռքին մեծաւ ուրախութեամբ, Մովսէսը Աստուծոյ կողմանէ իմանալով այդ

գայթակղութիւնը, իջաւ սարից հանդերձ երկու քարեղէն տախտակներով, որոնց վերայ գծագրուած էին Աստուծոյ ձեռամբ պատուիրանքները։ Իսկոյն նա նկատում է այդ կուռքի սեղանը, բարկանալով խորտակում է պատուիրանքների տախտակները բանակի մէջ և արձանը մոխիր շինելով, խմեցրուց բոլոր Իսրայելացւոց։ Յետ այսորիկ յանդիմանեց Ահարոնին այդ արած անհոգութեան համար և բանակի առաջ կանգնած ասաց. „Թող իմ մօտ գան, հաւատարիմ Երբայեցիքը։“ Նոյն վայրկենումը Ղևի որդիքը կանգնեցին նորա չորս կողմովը։ Մովսէսը հրամայեց վեր առնել իւրեանց սրերը, մտնել բանակի մէջ և անխնայ սպանանել ով որ պատահելու լինի, թէ բարեկամ և թէ ազգական։ Նոքա հնազանդեցան և մին վայրկենի մէջ 23000 մարդիկ կոտորեցին։ Սորանից յետոյ Մովսէսը ասաց Ղևտացւոց. „Աստուած կ'օրհնէ ձեզ, որովհետև նորա հրամանը կատարեցէք։“ Միւս օրը Մովսէսը կրկին հաւաքելով ժողովուրդը, յանդիմանեց նոցա արած այդ գայթակղութեան համար և ինքն էլ այսպէս ասաց Տէրին. „Ների՛ր նոցա յանցանքը, Տէ՛ր, կամ թէ ջնջիր ինձ կենաց գրքից . . . .“ Աստուած լսելով նորա ջերմեռանդ աղօթքը, ուղարկեց նորան Իսրայելացւոց մօտ որ ասէ թէ Աստուած 'ի շնորհս հարց նոցա պիտի տայ նոցա խոստացած երկիրը։ Այս միջոցումը Տէրը հրամայեց Մովսէսին կրկին երկու քարեղէն տախտակներ շինել, որոնց խորտակել էր նա, և կանչեց նորան սարի գագաթը, որտեղ որ մնաց նա քառասուն օր և քառասուն գիշեր։ Այն տեղից յետ դառնալիս օրէնսդիրն առաջարկեց հաւաքուած ժողովրդին Տէրին պատուիրանքները, և այս պատուիրանքների զօրութեամբը շինել տուաւ տապանակը ուխտին, հացերի

սեղանը, ոսկեայ աշտանակը և խնկոց սեղանը։ Սորանից յետոյ որոշեց քահանայական զգեստները։ Երբ որ այս ամենը վերջացաւ, Մովսէսը օրհնեց ուխտի տապանակը։ Աստուած զգալի եղանակաւ ցոյց տուաւ թէ ընդունում է այդ ամենը իւր փառաց համար, մէկ ամպ պատեց տապանակը ցոյց տալու համար թէ Աստուածային փառքով լցուած է։

ՄԱՐԻԱՄ

Իսրայելացւոց որդիքը ուղղեցին իւրեանց ընթացքը դէպ 'ի Աւետեաց երկիրը։ Նոքա կանգնեցին Խառան անուանեալ ձորումը։ Այն տեղ ժողովուրդը նեղութենից նուաղած՝ կրկին անգամ իւրեանց տրտունջները յայտնեցին Մովսէսին և նոյն ինքը Ահարոնը և Մարիամը անգամ խառն էին այդ բանումը։ Աստուած կամեցաւ վրէժը հանել նոյն իսկ Մովսէսից։ Նա խնայեց Ահարոնին քահանայապետ լինելու պատճառաւ, բայց Մարիամին մին այնպիսի բորոտութեան ախտով պատժեց, որ մին վայրկենումը բոլոր մարմինը մաշեց։ Օրէնստուն աղաղակեց Աստուծոյ իւր քրոջ բժշկութեան համար։ Բայց Տէրը կամեցաւ որ նա բաժանուի ժողովրդի միջից եօթն օրուայ ժամանակաւ։ Յետ այսորիկ նա առողջացաւ։ Այս դայթակղութիւնը հանդարտելուց յետոյ՝ խիստ մին ուրիշ ընդհանուր խռովութիւն ծագեց։ Մովսէսը տասներկու լրտեսներ էր ուղարկել Աւետեաց երկիրը և նոքա այնտեղից մին այնպիսի խաղողի ողկոյզ էին բերել, որ երկու մարդ հազիւ թէ կարող էին բարձրացնել։ Այս լրտեսների միջում նոյնպէս գտնվում էին Քաղեբ և Յեսու, որոնք յորդորում էին ժողովրդին գնալ այն երկիրը, բայց միւս լրտեսները ասում էին թէ ճշմարիտ է

որ այդ մին այնպիսի երկիր է, որտեղ որ մեղր և կաթն է բղխում, բայց այնտեղ մեզանից զօրեղ մարդիկ են բնակվում, կամ նաև հսկաներ, որոնք անշուշտ մեզ մեր կանանցը և մեր երեխանցը կ'սպանանեն։ Այն ժամանակը Իսրայելացիք ասացին. „Ի՞նչի մեզ Եգիպտոսից հանեցէք, պէտք է մեզ համար մին առաջնորդ գտնենք, որ վերստին մեզ վերադարձնէ Եգիպտոս։„ Եւ որովհետև Յեսու և Քաղէպ նոցա արգելում էին այդ բանը անելու, Իսրայելացիք կամեցան քարկոծել նոցա։ Մովսէսը և Ահարօնը ընկան Տիրոջ առաջ, ներողութիւն խնդրելու համար, բայց Տէրը ասաց. „Երդնում եմ, որ այդ ժողովուրդը պիտի մեռնէ այս անապատի մէջ, դորա քառասուն տարի պիտի այդտեղ մնան և երբ որ ամենքը կըմեռնեն՝ նոցա որդիքը կ'գնան Աւետեաց երկիրը Քաղէպի և Յեսուի հետ, որոնք հաւատացին իմ խօսքին, բայց ինչ որ վերաբերում է միւսներին, նոքա իւրեանց դիակները պիտի թողնեն այդ անապատումը։ Այն ժամանակը ժողովրդի թիւը հասնում էր մինչև վեց հարիւր հազարի։

ԵԳԷԼ

Յիրաւի Իսրայելացիք Աստուծոյ զաւակներն։ Ի՞նչպէս նոքա շարժում էին Աստուծոյ բարկութիւնը, իմանալով նորա ամենակարողութիւնը։ Ինչպէ՞ս կարելի է պատկերին երկրպագութիւն տալ։

ՏԻԿԻ՛Ն

Միթէ՞ մենք պակաս չարագործ և կոյր ենք քան Իսրայելացիք, իմ սիրելի աղջկերք, բայց ամենևին փոյթ չենք ունենում մեզ ուղղելու։ Մտածենք Աստուծոյ արդարութեան վերայ և ամենայն հնարները 'ի գործ դնենք մեր պակասութիւնները ուղղացնելու։ Մնաք բարև։

ՀԻՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻՆ

Ես խոստացել եմ որ մենք այսօր սկսենք աշխարհագրութենից. ուրեմն կ՚խօսենք Բրիտանիայի կղզիների վերայ: Բրիտանիան բաժանվում է չորս մասը, որոնք են: 1, Անգլիա, 2, Նիդերլանդիա: 3, Իռլանդիա և չորս փոքր կղզիներ որոնց գլխաւորները են: Շեթլանդ, Արկադեան, և Հերբերեան կղզիներ, որոնք գտանվում են Ատլանդեան Ովկիանոսի մէջ: Ման և Էնգլեսին գտանվումեն Իռլանդիայի ծովի մէջ: Հիլեգոլանդ գտանվում է հիւսիսային ծովի մէջ: Վիգդ Գուերնեսի և Ժերսէյ գտանվում են Մանշումը: Անգլիան բաժանվում է 52 կոմսութիւն: Մայրաքաղաքն է Լօնտարա, որը որ գտանվում է Թէմիզ գետի վերայ և որը որ Եւրոպումը ամենից բազմամարդ քաղաքն է 3,000000 բնակիչ ունի: Մենք յետոյ կ՚խօսենք Իռլանդիայի և Նիդերլանդիայի վերայ: Այդ թագաւորութիւնը անուանվում էր մին անգամ Անգլեայ կամ Ալբիոն, որտեղ որ երկու արշաւանք է արած Յուլիոս Կեսարը Քրիստոսից 53 և 54 տարի առաջ: Բայց Հռոմայեցիք ամենևին տիրապետեցին այդ երկրին Դոմեդիանոսի կայսրութեան ժամանակ: Նոքա մնացին այդ կողմումը մինչև 448 թիւը: Բրիտանիացիք նեղացած Նիդերլանդիացիներից և Պիկտերից՝ Անգլեացւոց իւրեանց օգնական կանչեցին, որոնք սկզբումը օգնեցին և ապա իւր-

եանց իշխանութեան ներքոյ դցեցին և իւրեանց անուանովը Անգլիա անուանեցին այդ երկիրը: Նախնի բնակիչները իւրեանց համար ապաստարան գտին Գաղղիացւոց երկրումը և Ֆրանսիայի նահանգներումը, որը որ իւրեանց անուամբը Բրիտանիա կոչուեցաւ: Սաքսոնացիք էլ յետոյ շատ նեղութիւններ կրեցին Դանիացւոց ձեռից, որոնք խաղաղութեամբ բնակեցան Կանուտ թագաւորի իշխանութեան ներքոյ: Սորանից յետոյ Անգլիացիք թագաւորական թագը տուին Էդուարդին, որը որ իւրեանց թագաւորի ցեղէցն էր: Այդ թագաւորի մահուանից յետոյ Նորմանդիի դուքս Գուլիոմը, որը որ աշխատում էր նորան ժառանգը դառնալ, Անգլիայի տէր դառաւ (1066 թուականին) և սկսեց կառավարել Նորմանդիայի կոմսութիւնը: Նորմանդիայի դուքսերից յետոյ Անժուի տանիցը, Պլանտաժենէտ անուանեալները թագաւորական թագը ձեռք դցեցին, որը որ այժմ Հանովը անուանեալ գերդաստանի մօտ է: Ես ասացի թէ Դանիայի դուքս Կանուտը Անգլիայի թագը առացաւ, Յուլեանէն ոչինչ չէ իմանում այդ թագաւորիցը:

ՅՈՒԼԻԱՆԷ

Ներեցէ՛ք, սիրելի բարեկամ, ես մին գեղեցիկ պատմութիւն եմ իմանում և կամենումեմ հաղորդել այս աղջկերանց:

Մին օր Կանուտ թագաւորը ծովի եզերքումն էր իւր բոլոր պալատականների հետ: Նորա պալատականները ասացին թէ թագաւորի թագաւորն ես և ծովի և ցամաքի տէրը: Կանուտը կամեցաւ ծիծաղել իւր շողոքորթութիւն անողների վերայ: Սորա համար հագաւ նա

իւր վերարկուն և նստեց ծովի եզրումը, և հէնց այս միջոցումը ծովի մակընթացութեան ժամանակն էր, այսինքն այն ժամանակն էր, երբ որ ծովը իւր տեղիցը դուրս է գալիս։ Կանուտը խօսալով ծովի հետ, ասաց. „Երկիրը, որտեղ որ ես գտնվում եմ իմն է և ես քո իշխանն եմ. ուրեմն հրամայում եմ որ մնաս քո տեղումը և ամենևին չ'մօտենաս և չ'թրջես իմ ոտներս։" Այս խօսքերը լսողները կարծեցին թէ թագաւորը յիմարացել է, ծովը իւր իշխանութեան հնազանդեցնել կամենալուն համար։ Այս միջոցումը ջուրը մօտեցաւ և թրջեց թագաւորի ոտները։ Այն ժամանակը Կանուտը վերկենալով, ասաց շողոքորթներին. „Տեսնում էք արդեօք, ի՞նչպէս ծովի տէր եմ, իմացէ՛ք որ թագաւորի կարողութիւնը շատ քիչ բան է. Աստուածանից 'ի զատ ուրիշ թագաւոր չ'կայ, որը որ կառավարումէ երկիրը և երկինքը։"

ՏԻԿԻ՛Ն

Ես շատ կ'ցանկանայի իմանալ թէ արդեօք Հարլոտտան կարո՞ղ է իւր յիշողութիւնը այնպէս լաւ 'ի գործ դնել, ինչպէս Յուլիանէն։ Կարո՞ղ է արդեօք պատմել մեզ այն վէպը, որը որ անցեալ օրը տուի իրան կարդալու։

ՀԱՐԼՕՏՏԱ

Կարծեմ որ կարող եմ, սիրելի բարեկամ։

Մին մարդ զբօսնելով դաշտումը, տեսաւ կաղիններ, որոնք շատ մեծ էին, և որոնք մանր պտուղներ էին բերում։ Միևնոյն ժամանակումը տեսաւ նա մին տունկ, որը որ ամենևին գետնին էր կպել, և որը որ դդում էր բերում իւր գլխիցը չորս անգամ մեծ։ Այդ մարդը ասաց ինքը

իրան. „Ինձ այնպէս է թվում որ եթէ ես Աստուծոյ տեղ լինէի, լաւ կ'կարգադրէի այդ բաները։ Դդումները այդ մեծ ծառերի վերայ կ'բուսացնէի, իսկ կաղինները այս փոքր ոստերի վերայ։" Մինչդեռ այսպէս միտք էր անում նա ցանկացաւ քնել, և որովհետև օդը շատ ջերմ էր, մին կաղնի ծառի տակ քնեց։ Նորա քնած ժամանակը մին հողմ բարձրացաւ և մին կաղին վայր ընկաւ քնողի քթի վերայ։ Այն մարդը զարթեց և ասաց. „Խոստովանում եմ որ ես շատ յիմար եմ և Աստուած իրաւունք ունի անելու ծառերը, ինչպէս որ կան։ Ի՞նչ պիտի անէի արդեօք այն ժամանակը, եթէ դդումը վայր ընկնէր իմ գլխիս վերայ, անշուշտ կ'ջարթէր նորան։" Այն ժամանակից սկսած, այդ մարդը առաւել իմաստուն դառաւ և սկսեց Աստուծոյ իմաստութեան վերայ զարմանալ, որով նա բովանդակ արարածը կարգի է դրած։ Ես այնուհետև մտքումս էլ անց չ'կացրուց որ և իցէ հակառակ բան Աստուծոյ տնօրէնութեան դէմ։

ՏԻԿԻ՛Ն

Ես շատ զմայլած եմ, սիրելի Հարլոտտա, քո այդ վէպը պատմելուն վերայ, այժմ տեսնում եմ որ ուշադրութիւն ես անում ընթերցմունքիդ։ Բայց պիտոյ չէ որ այդ մեզ մոռացնել տայ մեր սրբազան պատմութիւնը, ուրեմն սկսի՛ր, սիրելի Եւգենիա։

ԵՒԳԵՆԻ՛Ա

Կորխը, Դաթանը և Աբիրոնը ապստամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ, և իւրեանց հետ միաւորեցին 250 մարդ։ Նոքա նախանձում էին էնդուր համար, որ

Ահարօնը և նորա որդիքը էին միայն հրաման ստացել խունկ մատուցանելու առանց մտածելու թէ նոյն ինքն Աստուած է այդ իրաւունքը տուել: Նորա սաստիկ յանդիմանութիւններ արին Մովսէսին, բայց օրէնստուն Աստուծոյ հրամանովը ասաց ժողովրդին. „Թո՛ղ ձեզանից ամէն մէկը մին փուրվառ վեր առնէ, և Աստուած այն ժամանակը ցոյց կ'տայ ձեզ որին որ կամենումէ ընտրել:„ Մովսէսը նոյնպէս հրամայեց Ահարօնին որ վեր առնէ փուրվառը և խկոյն Աստուծոյ բերանից ասաց ժողովրդին. „Շուտով ջոկուեցէ՛ք Կորխից, Դաթանից և Աբիրոնից, ապա թէ ոչ Աստուած ձեզ էլ կ'պատժէ նոցա հետ 'ի միասին:„ Հազիւ թէ այս բաժանմունքը եղաւ, յանկարծ գետինը երկու բաժանվեցաւ և կուլ տուաւ Կորխին, Դաթանին և Աբիրոնին, և երկնքից կրակ իջանելով, այրեց Դաթանի կողմնակից 250 մարդկերանցը: Այն ժամանակը Աստուած հրամայեց Մովսէսին վեր առնել փուրվառը և նորանից թիթեղներ և տախտակներ շինել սեղանը ծածկելու համար, որպէս զի այդ թիթեղները յիշատակ լինեին Իսրայելացւոց թէ ով որ Ահարօնի ցեղեցն չէ, կարող չէ մօտանալ սեղանիցը խունկ մատուցանելու Աստուծոյ: Այս միջոցումը Իսրայելացիք տրտնջում էին Մովսէսի և Ահարօնի դէմ, որ այնքան անձանց կորստեան պատճառ դառան: Նորանից յետոյ Տէրը ասաց Մովսէսին. „Բաժանվեցէ՛ք այդ ժողովրդիցը, ըստ որում կամենում եմ կորուսանել նոցա:„ Այն ժամանակը օրէնստուն ասաց իւր եղբօրը. „Շուտով քո փուրվառի մէջ խունկ դի՛ր և վազիր ժողովրդի մէջ Աստուծոյ բարկութիւնը հանդարտեցնելու համար:„ Ահարօնը հնազանդուեց իւր եղբօրը և կանգնելով կենդանեաց և պատժուածների մէջ, հանդարտեցրուց Աստուծոյ

բարկութիւնը, և Տէրը այս վերջի ղկպուածումը 14700 անձինք կորցրուց 'ի պատիժ իւրեանց արած տրտունջներին:

ԱՂՋԻԿ

Ո՜հ Աստուած իմ, ինչպէ՜ս զարհուրելի է այդ պատմութիւնը: Մենք շատ բաղդաւոր ենք որ Աստուած էլ այդպէս սարսափելի պատուհասներ չէ անում:

ՏԻԿԻ՛Ն

Աստուած որքան որ բարի է, այնչափ չարագործներին թշնամի է: Նոքա, որոնք կամենում չ'էին հնազանդուել նորա պատուիրանքներին, թէպէտ կենդանւոյն գետնի տակը անցնում չ'են, բայց ստոյգ է որ իւրեանց մահից յետոյ այն տեղ պիտի մտնեն:

ԱՂՋԻԿ

Ես ձեզ հաւատացնում եմ, սիրելի բարեկամ, որ կամենում եմ անպատճառ ինձ ուղղել: Մինչև այսօր շատ չար եմ էլել, որովհետև միտք չ'եմ արել այդ բաների վերայ, թէպէտ և Աստուածաշունչ գիրքը կարդացել եմ, բայց ուշադրութիւն չ'եմ արել կարդացածիս վերայ: Երբ որ ուշադրութիւն անեմ, շատ յիմար պիտի լինեմ, որ շարժեմ Աստուծոյ բարկութիւնը:

ՏԻԿԻ՛Ն

Տեսնում ե՞ս ինչպէս Նա քեզ սիրում է, այդ գեղեցիկ մտադրութիւնները, այդ գեղեցիկ զատողութիւնները,

հենց ինքն է, որ քեզ տալիս է: Մի՞թէ յանցանաւոր չէիր գտանուել նորա առաջ եթէ դոնք մոռանալու լինէիր: Պատմի՛ր այժմ քո դասը:

ԱԴԷԼ

Աստուած իսկոյն Մովսէսի բերանովը ասաց ժողովրդին որ Իսրայէլացւոց ամեն ցեղի գլխաւորները մի մի գաւազան բերեն իւր մօտ պարզև: Նորան հնազանդեցան և միւս օրը Ահարոնի գաւազանը ծաղիկներ, կոկոններ և նուշեր արձակեց: Այն ժամանակը Աստուած ասաց. „Ես ընտրեցի Ահարոնին և նորա գերդաստանը ինձ խունկ մատուցանելու համար: Նորանցից 'ի զատ ոչով չէ կարող ինձ խունկ մատուցանել, բայց նոցա օգնական տալիս եմ Ղևտացւոց ինձ ընծայուած բաների վերայ խնամք տանելու համար:„ Սորանից յետոյ Իսրայէլացիք գնացին մին տեղ, որտեղ որ ջուր չկար և սկսեցին վերստին տրտնջալ: Մովսէսը և Ահարոնը ընկան Տիրոջ առաջ, որը որ այսպէս ասաց. „Մովսէսին վեր ա՛ռ քո գաւազանը և գնա՛ քո եղբօր հետ դէպի այն քարաժայռը և նորանից ջուր խնդրի՛ր: Մովսէս և Ահարոն ժողովուրդը իւրեանց առաջ դցած գնացին, բայց նոքա ուղիղ սրտով չհնազանդեցան Աստուծոյ պատուիրանքներին, և փոխանակ քարաժայռի հետ խօսելու՝ երկու անգամ զարկեցին իւրեանց գաւազանովը: Այն ժամանակը Աստուած ասաց նոցա. „Որովհետև դուք չհնազանդեցաք իմ խօսքին, դուք երկուսն էլ կ'մեռնէք առանց Աւետեաց երկիրը մտնելու:„ Աստուած հրամայեց Մովսէսին որ իւր եղբօր Ահարոնին, և եղբօր որդւոյ Եղեազարին հետ գնայ այն սարի գլուխը, որտեղ նա հրամայեց

Ահարոնին հանել իւր քահանայապետութեան բգդեստները և տալ իւր որդի Եղեազարին, որովհետև պէտք էր նա մեռնէր: Ահարոնը հնազանդեցաւ և իսկոյն մեռաւ: Մին անգամ էլ Իսրայէլացիք վերստին տրտնջացին Աստուծոյ դէմ, որը որ նոցա պատժելու համար ուղարկեց այրող օձեր: Բայց երբ որ ժողովուրդը ապաշխարեց, Աստուած հրամայեց Մովսէսին մին պղնձէ օձ շինել և բարձրացնել նորան օդոյ մէջ, ով որ այն օձերից խայթվում էր, իսկոյն առողջանում էր, երբ որ մտիկ էր անում այն բարձրացրած օձի վերայ: Այս միջոցումը Իսրայէլացիք հրաման խնդրեցին դրացի Թագաւորներից նոցա երկրի միջով անցկենալու, խոստանալով ո՛չ մէկ վնաս չհասցնել նոցա և մինչև անգամ խմելու ջրին փողն էլ հատուցանել: Բայց Թագաւորները չկամեցան կատարել նոցա խնդիրքը: Այն ժամանակը Աստուած ասաց Իսրայէլացւոց. „Պատերազմ յայտնեցէք դոցա դէմ և իմ օգնութեամբը կ'յաղթէք:„ Իսրայէլացիք հնազանդեցան և մեծ մեծ յաղթութիւններ արին:

ՆԻԳԵ՞ՆԻՐ

Աստուած շատ խստութեամբ պատժել է Մովսէսին և Ահարոնին: Արդեօք ի՞նչ մեղք գործեցին նոքա, իւրեանց գաւազանովը երկու անգամ քարաժայռին զարկելով:

ՏԻԿԻ՞Ն

Աստուծոյ ամենակարողութեան վերայ կասկածում էին: Խոստովանում եմ որ նոքա զարկելով քարաժայռին, փոխանակ ուղիղ սրտով նորանից ջուր խնդրելու այնպէս

մեծ մեղք գործեցին, քան թէ Իսրայէլացիք գործել էին այն ոսկի որթը պաշտելով: Բայց Աստուած որ և իցէ մեղք պատժում է, տարբերութիւնը միայն այս է, որ չարագործներին, որոնք իւրեանց չարասրտութենից մեղք են գործում, պատուհասում է հանդերձեալ կեանքումը, իսկ բարիներին, որոնք իւրեանց տկարութենից մեղք են գործում և զղջում են իւրեանց գործած մեղքերի վերայ, պատժում է նոցա այս կեանքումը զանազան հիւանդութիւններով, խլելով նոցա հարստութիւնները, ազգականներին և ծնողներին: Աստուած վարւում է նոցա հետ, ինչպէս մի բարի հայր իւր որդւոյը հետ, նոցա ուղղելու համար, և այսպէս նոցա հրաւիրում է դէպի ապաշխարութիւն:

ՇԱՐԼՈՏՏԱ

Ուրեմն եթէ մարդս աղքատ է լինում, կամ թէ որ և իցէ անբաղդութեան պատահում է, էնդուրի՞ց է արդեօք որ Աստուած նորա դէմ բարկացել է:

ՏԻԿԻՆ

Երբ որ Աստուած ուղարկում է այդ թշուառութիւնները չարագործներին, նոցա պատժելու համար է, և միևնոյն ժամանակումը նոցա ուղղելու համար է: Որովհետև մարդս միայն այն ժամանակն է Աստուծոյ վերայ մտածում, երբ որ գտանւում է թշուառութեան մէջ: Այդ միևնոյն վայրկենումը Աստուած ասում է չարագործների սրտի մէջ: „Այդ թշուառութիւնները, որոնք ձեզ հետ պատահեցան և որոնց դուք այդպէս մեծ էք համարում, ոչինչ է, համեմատելով այն թշուառութեան

հետ՝ որոյ մէջ դուք պիտի ընկնիք հանդերձեալ կեանքումը, եթէ ձեզ ուղղելու չլինիք: Խղճացէք ձեր վերայ, մտածեցէ՛ք ձեր արած մեղքերի և վատ բնաւորութեան վերայ, Եղէք հեզաբարոյ, ողորմած, սիրեցէք աղօթքը, արդարախոհ եղէ՛ք ուրիշների դէմ: Ես ձեզ ժամանակ եմ տալիս ձեզ ուղղելու, բայց շուտով դուք մին բոպէ էլ ժամանակ չպիտի ունենաք, դուք կ'մեռնիք և ես էլ այն ժամանակը մին գթառատ հայր չեմ լինիլ ձեզ համար, այլ մին ահարկու դատաւոր կ'լինիմ: Սիրելի Մարիամ, դու լաց ե՞ս լինում:

ՄԱՐԻԱՄ

Այո, որովհետև ինձ շատ անգամ ասում է այդ ամէնը: Ես ո՛չ մին անգամ այնպիսի մեծ սխալմունք արած չեմ, որ նորա պատիժը կրած չլինիմ հենց միևնոյն օրումը, որպիսի և իցէ տրտմութիւն զգալով:

ՏԻԿԻՆ

Այդ նորանից է, որ Աստուած քեզ սիրում է, սիրելի՛ բարեկամ: Եթէ Աստուած թշուառութիւններ է ուղարկում չարագործներին՝ նոցա դարձի բերելու համար է, իսկ բարեգործներին՝ ուղղելու համար, իսկ երբեմն էլ նոցա առաքինութիւնը փորձելու համար և նոցա առաւել առաքինի դառնալու միջոց տալու համար: Իմ միտս ունիմ որ երբ որ փոքր էի, մին վայելչագրութեան վարժապետ ունէի. շատ չարասիրտ մարդ էր դա, որը որ ամենայն օր ինձ նախատում էր, չմտիկ արած որ ես շատ փութաջանութեամբ աշխատում էի: Այդ ուսուցիչը մին գործիք էր, որով Աստուած կամենում էր պատժել իմ

սխալմունքները։ Երբ որ ես խելօք չէի լինում, ասում էի իմ մտքումս. „Ինչ այս րոպէիս պ. Գէորգը ինձ հետ կ'կռուի։" Յետոյ ջերմեռանդութեամբ աղօթում էի Աստուծոյ որ կակղացնէ այդ կատաղի մարդոյ սիրտը։ Երբեմն Աստուած լսում էր իմ աղաչանքս, բայց առաւել յաճախ պատիժ էի ստանում։ Ուսուցիչս գանգատում էր մօրս և շատ անգամ թողնումէին ինձ մենակ, մինչդեռ իմ փոքր բարեկամներս գնում էին զբօսնելու պարտէզում։ Այն ժամանակը ես լաց էի լինում ինչպէս մին յիմար. բայց երբեմն էլ Աստուծոյ էի ընծայում իմ քաշած վիշտը. վասն զի ես քաջ իմանում էի որ թէպէտ անմեղ էի պատժուած իմ վայելչագրութեան համար, յանցաւոր էի որ և էցէ մին ուրիշ բանի համար, որը որ անյայտ էր իմ մօրը։

ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻՆ

Մարիամ, շարունակիր քո պատմութիւնը։

ՄԱՐԻԱՄ

Մովաբացւոց թագաւոր Բաղակը լսելով որ Իսրայէլացիք ջարթել էին ամենայն ժողովրդոց, որոնք ընդդիմացել էին իւրեանց երկրի միջով անցկենալուն՝ ուղարկեց Բաղաամ մարգարէի հետից նորա անիծել տալու համար։ Երբ որ Բաղաամը ճանապարհ ընկաւ, Տէրին հրեշտակը արգելից նորան։ Բաղաամը տեսնում չէր հրեշտակին, բայց աւանակը, որոյ վերայ հեծած էր նա, տեսնում էր նորան և փախում էր այն սուսերից, որը որ հրեշտակը ունէր բռնած ձեռին։ Մարգարէն ծեծում էր նորան որպէս զի ստիպէ նորան առաջ գնալու, բայց խեղճ անասունը երկրի վերայ ընկաւ. այս դիպուածը էլ առաւել բարկացրուց իւր սիրտը, որը որ սկսեց ապա անխնայ ծեծել իւր գաւազանովը։ Այն ժամանակը Տէրը հրաման տուաւ աւանակին որ խօսէ, և որը որ այսպէս ասաց Բաղաամին. „Ի՞նչի ինձ ծեծում ես, մի՞թէ տեսնում չ'ես նորան, որը որ արգելում է իմ ճանապարհը։" Բաղաամը շատ զարմացաւ լսելով որ իւր աւանակը խօսումէ, բայց նորա զարմացումը էլ առաւել շատացաւ, երբ որ տեսաւ Տէրի հրեշտակը, որը որ ասաց նորան. „Եթէ այդ ողորմելի անասունը յառաջ գնացած

լինէր, ես քեզ կ'սպանէի անշուշտ, բայց այսուամենայնիւ շարունակէ՛ր քո ճանապարհը, որովհետև դու միայն այն բանը պիտի կատարես, ինչ որ հաճոյ է Աստուծոյ կամացը։" Մարգարէն նշանակեալ տեղը հասնելով, Թագաւորը հրամայեց անէծք կարդալ Իսրայելացւոց վերայ։ —Ինչո՞ւ պիտի անիծեմ այդ ժողովրդին, պատասխանեց Բաղաամը, իմ անէծքս ոչինչ բանի չպիտի ծառայէ, որովհետև Աստուած նոցա օրհնել է։" Այսու ամենայնիւ Թագաւորը տարաւ նորան երեք այլ և այլ տեղեր, բայց մարգարէն փոխանակ նոցա անիծելու, օրհնեց Իսրայելացւոց։ Բաղակը այն ժամանակը ասաց Բաղաամին։ "Ես քեզ բերել չեմ տուել այս ժողովրդին օրհնելու, ուրեմն էլ չեմ տալ քեզ այն պարգևները և հարստութիւնները, որոնք նշանակել էի քեզ համար։" Բաղաամը, որը որ շատ չարասիրտ մարդ էր, ասաց Թագաւորին. "Այնպէս արա՛ որ Իսրայելացիք կին առնեն ձեր միջիցը, էստուրով նոքա կ'մեղանչեն, պատճառ՝ Աստուած արգելել է նոցա օտար կանայք առնել։" Բաղակը հետևեց այս խորհուրդին, և Իսրայելացիք մոռանալով Աստուծոյ պատուիրանքը, կնամութիւն արին օտար ազգի հետ, որոնք ստիպեցին նոցա երկրպագութիւն անել կուռքերին։ Այն ժամանակ Աստուած հրամայեց Մովսէսին որ ժողովրդի ցեղապետների հաճութեամբը դատէ յանցաւորներին, և այս յանցանքի համար փչացան 24000 անձինք։ Այս միջոցումը նորանցից մին մարդ, բաւականին յանդուգն մտաւ մին Մադիանացի կնկան վրանի տակ։ Այն ժամանակը Եղեազար քահանայապետի որդի Փենէհեսը, սրբազան բարկութենից այլայլուած՝ սպանեց այդ մարդին և այդ կնկանը, և այդ արդարադատ գործը այնպէս հաճոյ երևեցաւ Աստուծոյ, որ Թողութիւն շը-

նորհեց բոլոր յանցանաւորներին, և իսկոյն հրամայեց Իսրայելացւոց սպանել բոլոր Մադիանացւոց, որովհետև նոքա յորդորել էին Իսրայելացւոց մեղանչելու։

ՇԱՐԼՈՏՏԷ

Շատ զարմանալի բան է մին ամբողջ ժողովրդի կոտորվելը։ Կարելի է ամենքը չէին եղած համաձայն այդ չարագործութեանը։

ՏԻԿԻՆ

Աստուած ո՛չ երբէք անիրաւ բան չէ անել, Նա ո՛չ թէ միայն այդ ժողովրդին բնաջինջ արաւ, այլ և միւսներին, որոնք բնակվում էին Աւետեաց երկրումը, որովհետև այդ ժողովուրդները չափազանց չարագործ էին և 'ի բարին չէին գործ ածել այն ժամանակը, որը որ Աստուած շնորհել էր իւրեանց ուղղելու համար։ Դորա համար Աստուած երբեմն ուղարկում էր նոցա վերայ մահտարաժամ, հուր, սով, երկրաշարժութիւն և երբեմն էլ Իսրայելացւոց սուրը, որովհետև նա ամենակարող է, մինչև անգամ տարերքն էլ միշտ հնազանդում են նորա կամացը։

ԵՒԳԵՆԻԷ

Սիրելի բարեկամ, խնդրեմ մեկնէք ի՞նչ կ'նշանակէ տարերք ասած բանը։

ՏԻԿԻՆ

Երբ որ մենք մին քիչ յառաջ գնանք, ես ձեզ ճշտիւ տեղեկութիւն կ'տամ տարերք կոչեցեալ բառի վերայ, գիտնականապէս խօսելով։ Այսօր բաւական կ'համարեմ յա-

ռաջ բերել նախնեաց այդ մասին ունեցած կարծիքը, որը որ մին տեսակ օրէնքի ուժ է ստացել ռամկաց բերանումը: Առաջուայ ժամանակներումը չորս տարերքից 'ի զատ ոչինչ չէին ճանաչում, առանց որոյ մարդս կարող չէ ապրել: Այսինքն՝ հող, օդ, հուր և ջուր:

ԵՒԳԵՆԻԷ

Եթէ մարդս այնպիսի մին տեղ բնակէր, որտեղ որ իսկի ցուրտ չ'լինէր, կարելի կ'լինէր այն ժամանակ կրակ չ'վառել և միայն կաթով կերակրուել:

ՏԻԿԻՆ

Կրակ ասելով չ'պիտի միայն իմանանք այն կրակը, որը որ մեզ տաքացնում է, այլ պիտի իմանանք նաև արեգական ջերմութիւնը, որը որ տաքացնում է բոլոր բնութիւնը և բուսացնել է տալիս բուսերը և խոտերը: Արդ՝ առանց այդ կրակի մարդս կարող չէ ապրել:

ԵՒԳԵՆԻԷ

Ինչիցն է արդեօք որ արեգակը ամառ ժամանակ առաւել տաք է, քան թէ ձմեռումը. այդ նորանից է՞ արդեօք որ ամառը առաւել մօտ ենք գտնվում արեգակին:

ՏԻԿԻՆ

Ընդ հակառակը ամառը շատ հեռու ենք արեգակից: Բայց ամառ ժամանակը արեգակը ուղղակի է արձակում մեզ վերայ իւր ճառագայթները, իսկ ձմեռն խոտորնակի եղանակաւ: Կամենում եմ ձեզ երկու խօսք ասել այդ բանը ձեզ լաւ հասկացնելու համար: Ձեր մատը

ուղղակի դրէ՛ք մոմի վերայ, այնպէս որ շատ չ'մօտացնէ՛ք, որովհետև կայրէ՛ք: Այժմ էլ խոտորնակի դրէ՛ք մոմի վերայ: Արդ՝ նկատեցէ՛ք որ դուք կարող էք առաւել մօտացնել ձեր մատը մոմիցը կողմնակի եղանակաւ քան թէ ուղղակի: Կողմնակի տաքութիւնը, որը որ հասնում է ձեր մատին, առաւել նուաղ է, քան թէ ուղղակի եկած տաքութիւնը, ահա դորանից է յառաջ գալիս ձմեռը և ամառը:

ՄԱՐԻԱՄ

Ես կ'ցանկանայի որ միշտ ամառ լինէր, ըստ որում օրերը առաւել երկայն են և առաւել գեղեցիկ են և մարդ ուրախանում է զբօսարանքներ գնալով: Ինչի՞ է պէտք ձմեռը, խնդրեմ ասէ՛ք, վասն զի երկրի վերայ ոչինչ բուսանում չ'է տարուայ այդ եղանակումը:

ՏԻԿԻՆ

Եթէ ձմեռ չ'լինէր, ամառը ոչինչ չ'էր բուսանել երկրի վերայ: Աստուած այնպէս է կարգի դրել երկիրը, որ ոչինչ անօգուտ բան չ'կայ մէջին, և եթէ այն բաները, որոնք Աստուած կարգադրել է, խանգարուելու լինէին՝ ողջ աշխարհը կ'փչանար: Դուք տեսած կ'լինիք գիւղի մէջ ցորեն. արդ քննենք տեսնենք ի՞նչպէս է բուսանում այդ ցորենը: Ձմեռը տակաւին չ'հասած՝ անձրևային ժամանակներումը ցորենը ցանում են երկրի վերայ. ցորենի հատը կակղում է և նորանից մին փոքր խոտ է բողբոջում: Եթէ այդ փոքր խոտը սկզբումը մեծ դուրս գար, էլ ուժ չ'էր ունենալ, ցուրտը վերայ կ'հասնէր և արգելք կ'դառնար փթելու և ժամանակ չէր ունենալ ինքը իւր-

եան մուցանելու: Եթէ ձմեռնից յետոյ յանկարծ վերայ հասնէր ամառը, այդ խոտը կ'չորանար և ժամանակ չէր ունենալ բուսանելու: Բայց ի՞նչ է արել արդեօք ամենաբարին Աստուած. նա նշանակել է ամառուայ և ձըմեռուայ մէջ գարունը, որը որ ո՛չ շատ տաք և ոչ շատ ցուրտ լինելով, խոտը, որը որ պարունակումէ իւր մէջ ցորենը մեծանում է և գոյանում է խոտի ծայրումը բազմաթիւ հատեր, և այդ հատերի ամեն մէկի մէջ մին հատ ցորեն է գտանվում, որը որ մեծանում է փոքր առ փոքր: Սորանից յետոյ վերայ է հասնում ամառուայ տաքութիւնը, որը որ հասցնում է նորան. հասկերը փոխում են իւրեանց գոյնը, կանանչից դառնում են դեղին, կարծրանում են, և այն նուրբ մորթոյ տակ գտանում ենք ձիւնի պէս մին սպիտակ նիւթ. գնում ենք նորան երկու քարի միջում աղալու համար, և այս այն սպիտակ փոշին է, որից որ հաց ենք թխում: Ո՜հ, ես ձեզ հաւատացնում եմ սիրելի օրիորդներ, թէ որչա՞փ զբաղմունք կ'ունենայինք արդեօք մեր կեանքումը, եթէ կամենալու լինէինք քննել բնութեան մէջ եղած բոլոր Աստուծոյ գործքերը: Այսօրուայ դասը շատ ծանր էր ձեզ համար, էնդուր փոխանակ կամենում եմ ձեզ մին գեղեցիկ վէպ պատմել, լսեցէք:

Մին տէր և մին տիկին պսակուած էին շատ տարիներից հետէ առանց որդի ունենալու, և նոքա կարծում էին որ միայն այդ է նոցա պակասում կատարեալ երջանիկ լինելու համար: Վերջապէս նոցա մին աղջիկ ծնաւ և այն կողմի բոլոր դիցանուշները եկան նորա մկրտութեան ներկայ գտանուելու և նորան պարգևներ տալու համար: Նորանցից մէկը ասաց թէ հրեշտակի պէս գեղեցիկ պիտի լինի: Միւսն թէ հրաշալի եղանակաւ պի-

տի պարգայ: Երրորդը ասաց թէ չ'պիտի հիւանդանայ երբէք: Եւ չորրորդը ասաց թէ շատ հանճար պիտի ունենայ: Մայրը շատ ուրախ էր այդ ամեն տուած պարգևների համար, գեղեցիկ, հանճարաւոր, առողջ և տաղանդաւոր, էլ ի՞նչ լաւ բան կարելի էր տալ այդ երեխային, որին անունը Ժոզեֆատայ դրին: Նստեցին ճաշի, բայց այդ մեծահանդէս ուրախութեան ժամանակ՝ եկան ասացին Ժոզեֆատայի հօրը թէ դիցանուշների թագուհին, որը որ անց էր կենում այն տեղով, կամենումէ ներս մտնել: Բոլոր դիցանուշները վեր կացան իւրեանց թագուհուն դիմաւորելու համար, բայց նա մին այնպէս խոժոռ կերպարանքով ներս մտաւ, որ ամեն այնտեղ եղողների սրտին ահու սարսափ տիրեց:—„Սիրելի քոյրեր, ասաց թագուհին, երբ որ նստեց սեղանի վերայ, մի՞թէ այդպէս էք 'ի գործ դնում այն կարողութիւնը, որը որ ըստացել էք երկնքից: Ձեզանից ո՛չ մէկը չ'է մտածել շնորհել Ժոզեֆատային սէր առ առաքինութիւն և մին բարի սիրտ: Ես պիտի աշխատեմ ձեր արած վնասին առաջը առնելու, ուստի դատապարտում եմ նորան որ մինչև քսան տարեկան հասակը համր լինի: Այս միևնոյն վայրկենումը դիցանուշը աներևութացաւ, թողնելով Ժոզեֆատայի ծնողներին չափազանց յուսահատութեան մէջ, որոնք չ'էին երևակայում թէ արդե՞օք սորանից 'ի զատ աշխարհումս առաւել մեծ տխրութիւն կ'լինի, որ մին աղջիկ ունենան, այն էլ համր լինի: Այս միջոցումը Ժոզեֆատան հրաշալի էր դառնում ամենի առաջ: Ամեն տեսակ վարժապետներ նշանակեցին նորա համար և ինքն էլ զարմանալի արագութեամբ սկսեց ուսանել: Ժոզեֆատան այնքան հանճար ունէր, որ զանազան նշաններով հասկացնում էր մօրը ինչ որ տեսնում էր կամ լսում էր:

Առաջ նոքա զմայլում էին այդ բանի վերայ, բայց յետոյ նորա հայրը, որը որ խելօք մարդ էր, ասաց կնոջը: „Սիրելի, դու թոյլ ես տալիս որ Ժոլիէտտան մի շատ վատ բնաւորութիւն վեր առնէ. նա մի փոքր լրտես է դառել, պիտի ուղղենք նորա սխալանքները, բանսարկութիւն անելուց առաւել վատ բան չկայ աշխարհումս:„ Մայրը, որ պաշտում էր Ժոլիէտտային ասաց իւր ամուսնուն, թէ դու սիրում չես այդ ողորմելի երեխային համր լինելուն պատճառաւ, և թէ նա արդէն շատ թշուառ է իւր պակասութեամբը. ուստի չեմ կարող ես նորա կամքը հակառակել: Այս միջոցումը հայրը Ժոլիէտտային մի կողմը քաշելով՝ ասաց. „սիրելի երեխայ դու ինձ նեղացնում ես: Այն բարի դիցանուշը, որը որ քեզ համր է լինել, անկասկած նախատեսել է որ դու մի բանսարկու պիտի լինիս, եւ ի՞նչու է պէտք քո համր լինելը, երբ որ դու հասկացնում ես նշաններով քո իմացածը: Իմանում ե՞ս ինչ կարող է դուրս գալ դորանից. դու քեզ ատելի կ'անես բովանդակ մարդկանց առաջ, քեզանից կ'փախչեն, ինչպէս ժանտախտից և իրաւունք էլ կ'ունենան. որովհետև դու առաւել վնասներ կ'պատճառեցնես, քան թէ այդ սարսափելի ախտը: Մի բանսարկու մարդ շփոթութիւն է քցում ամենեցուն մէջ և պատճառեցնում է սարսափելի թշուառութիւններ:„

Ժոլիէտտան առաւել փոփոխամիտ էր քան թէ չարասիրտ, բայց այսուամենայնիւ նշանացի եղանակաւ խոստացաւ իւրեան ուղղելու, նա մտադրութիւն ունէր այդ չար սովորութենից հեռանալու, բայց ստու՞գ հասարակաց առած է, որ ասվում է. „Բնականը դուրս քցիր, քառարշաւ յետ կ'դառնայ:„ (Chassez le naturel, il revient au galop.)

Երկու կամ երեք օր դեռ չ'անցկացած՝ մոռացաւ նա իւր հօր իմաստուն խրատները: Եւ սորանից ի՞նչ ծագեց. ինչ որ առաջուց նախագուշակել էր նորա մասին, իրօք էլ կատարուեցաւ. նա ատելի դառաւ բոլոր աշխարհի առաջ: Տարաբաղդաբար նորա հայրն էլ մեռաւ, երբ որ երկոտասան ամաց էր նա և ոչով էլ երեսին չէր տալիս նորա արած սխալանքը: Նա մի այնպէս բանսարկու բնաւորութիւն ստացաւ, որ մինչև անգամ ինքն էլ մըտքովը անց չէր կացնում: Բոլոր օրը անց էր կացնում ծառաների վերայ լրտեսութիւն անելով, որոնք արհամարհում էին նորան: Երբ որ նա մի պարտէզի մէջ էր գտնվում, իւրեան քնած էր ձևացնում, այնտեղ մանեկողների խօսակցութիւնը լսելու համար: Բայց որովհետև շատերը 'ի միասին էին խօսում, և նա բաւականին յիշողութիւն չ'ունէր ամենին ասածը միտը պահելու, մէկին ասածը միւսին ասածին վերայ էր դնում, մի խօսակցութեան սկիզբը գրում էր, առանց լսելու վախճանը, կամ թէ վախճանն էր գրում, առանց իմանալու սկիզբը: Մին այնպէս շաբաթ չ'էր անց կենում, որ քաղաքի մէջ քան կռիւ չ'պատահէր, և երբ որ որոնում էին այդ կռիւների պատճառը, տեսնում էին որ Ժոլիէտտայի բանսարկութենից է դուրս եկել: Կարճ ասեմ՝ իւր մօր հետ թշնամացրուց նորա բոլոր բարեկամներին:

Այս բանը տևեց մինչև նորա քսան տարեկան հասանիլը. նա անհամբերութեամբ սպասում էր արդէն այդ օրին իւր սրտի ուզածին պէս խօսելու համար: Վերջապէս հասաւ այդ օրը և դիցանուշների թագուհին նորա մօտ գալով, ասաց. „Ժոլիէտտա՛յ, տակաւին քեզ խօսելու կարողութիւն չ'տուած՝ որ անշուշտ 'ի չարը պիտի գործ ածես, կամենումեմ ցոյց տալ այն վնասները, որոնք

պատճառել ես դու քո բանաստեղծութեամբը:„ Միևնոյն փայլկենումը դրաւ Ժողլիէտայի առաջ մին հայելի, որոյ մէջ տեսաւ նա մին մարդ իւր երեք որդկերանցը հետ, որոնք ողորմութիւն էին խնդրում:

—„Ես չ'եմ ճանաչում այդ մարդուն, ասաց Ժողլիէտտան, որը որ առաջին անգամ սկսեց խօսել. ի՞նչ վնաս եմ պատճառել դորան:„

„Նա մին հարուստ վաճառական էր, պատասխանեց դիցանուշը, և իւր շտեմարանումը շատ ապրանք ունէր, բայց պատրաստ դրամ չ'ունէր, ուստի եկաւ քո հօր մօտ, նորանից մին գումար փող վեր առնելու համար: Դու լսեցիր այդ բանը և յայտնեցիր նորա դրութիւնը այնպիսի անձանց, որոնց նա փող էր պարտական: Ամենքը կամեցան իւրեանց փողը առնել, և որովհետև խաբեբայ մարդիկ էլ խառնուեցան այդ բանի մէջ, խեղճ մարդը և իւր ողորմելի երեխայքը հարկադրուեցան ողորմութիւն խնդրելու, արդէն հինգ տարի է:

—„Ո՜հ, Աստուած, ասաց Ժողլիէտտան, յուսահատուած եմ արդէն այդ օրինակ մեղք գործելուս համար, բայց ես հարուստ եմ, կամենում եմ այդ մարդուն իմ հասցրած վնասները հատուցանել, որ անշուշտ իմ անզգուշութեամբն եմ արել:„

Սորանից յետոյ Ժողլիէտտան տեսաւ մին կնիկ մէկ սենեկի մէջ, որոյ լուսամուտները երկաթի վանդակներով ամրացրած էին, նա դարմանի վերայ ընկած էր, մին սափոր ջուր և մին կտոր հաց կշտին դրած: Նորա երկար և սև մազերը ուսերի վերայ ընկած էին և նորա երեսը արտասունքով թաց էր եղած:

—Ո՜հ Տէր իմ Աստուա՜ծ, ասաց Ժողլիէտտան, ես ճանաչում եմ այդ կնիկանը, արդէն երկու տարի է որ դո-

րայ եղբայրը տարել է դորան Անգլիա և նա այնտեղից գրել է թէ իւր քոյրը մեռել է: Մի՞թէ ես ինքս եմ պատճառ դառել այդ կնկան սարսափելի վիճակին:„

„Այո՛, պատասխանեց դիցանուշը, բայց առաւել սարսափելին այն է, որ դու մին մարդոյ էլ մահուան պատճառ ես դառել, որը որ այս կնկան եղբօր ձեռամբ սպանուել է: Մի՞տդ է գալիս, որ մին իրիկուն, երբ որ գըտանվում էիր պարտէզումը, քեզ քնած ձևացրիր այդ երկու անձանց խօսակցութիւնը լսելու համար: Դու այնպէս կարծեցիր նոցա խօսակցութենիցը թէ նոքա միմեանց սիրում են և այդ բանը բոլոր քաղաքին յայտնեցիր: Այդ բանը հասաւ մինչև այդ կնկան եղբօր ականջը, որը որ ազնուական ցեղից էր և իւր ազնուատոհմութեանն էլ նախանձախնդիր՝ սպանեց այն երիտասարդ մարդուն, որը որ հասարակ ցեղից էր և իւր քրոջը տարաւ Անգլիա, որտեղ նորան իբրև մեռած հաշւեց առաւել երկար ժամանակ չարչարելու համար: Այսուամենայնիւ այդ ողորմելի կնիկը ամենևին անմեղ էր: Այն երիտասարդ մարդը խօսում էր նորա հետ այն սիրոյ վերայ որ ունէր իւր հօր եղբօր աղջկերանց մէկի վերայ և որուն ուզում էր մարդու տալ, բայց որովհետև նոքա կամաց էին խօսում, դու նոցա խօսակցութեան միայն կէսը լսեցիր և պատճառ դառիր այդ սարսափելի թշուառութեանը:„

—Ո՜հ, ասաց Ժողլիէտտան, ես էլ արժան չեմ ապրելու, ես շատ թշուառ անձն եմ:

„Համբերի՛ր, ասաց դիցանուշը, մինչև ես քեզ չեմ դատապարտած քո գործած յանցանքները լաւ ճանաչելու համար, մտիկ արա՛ ստի վերայ կանգնած և շղթաներով կապած այդ մարդոյ վերայ: Դու մին շատ անմեղ խօ-

սակցութիւն հրատարակեցիր և որովհետև դու միայն կէսն էիր լսած, կարծեցիր թէ այդ մարդը Թագաւորի թշնամիների կողմնակիցն է: Մի՛ն չարասիրտ փոփոխամիտ մարդ և քեզ պէս մին շատախօս կնիկ, որ սիրում չէր այդ ողորմելի մարդուն, որը որ այժմ բանդումն է դատանվում, սկսեցին դէս ու դէն պատմել շատ բաներ քո ասածին վերայ աւելացնելով, վերջապէս նոքա այդ մարդուն գրին բանդի մէջ, որտեղ նա պէտքէ դուրս գայ իւր վերայ այդ օրինակ զրպարտութիւններով չարախօսութիւն անողին մահակով սպանանելու համար և քեզ հետ էլ իհարկէ այնպէս պիտի վարուի ինչպէս մէկ անպիտան կնկան հետ, եթէ երբ և իցէ պատահելու լինի:„ Սորանից յետոյ դիցանուշը ցոյց տուաւ Ժողլիէտային շատ ծառաներ առանց տեղի և աւուր հացի կարօտ մնացած․ մարդիկներ, իւրեանց կնիկներից բաժանուած, երեխայք, իւրեանց հօր ժառանգութենից զրկուած և այս ամենն էլ նորա բանսարկութեանց պատճառաւ: Ժողլիէտան անմխիթար էր և խոստացաւ իւր ուղղելու, բայց դիցանուշը ասաց նորան․ „Երբեմն ժամանակը անց է կացել քեզ ուղղելու․ այն սխալանքները, որոնք մինչև քսան տարեկան դառնալը մնում են․ էլ կարելի չէ նոցա ուղղել, եթէ ցանկանալու էլ լինիս, բայց ես մին հնար եմ իմանում այդ վնասին դէմ, այսինքն լինել խուլ, կոյր և համր տասը տարուայ ժամանակաւ և մտածել այն թշուառութեանց վերայ, որոնց պատճառ ես դառել դու:„ Ժողլիէտան սիրտ չունեցաւ համաձայնելու մին այնպիսի հնարի վերայ, որը որ իւրեան այնպէս զարհուրելի էր թվում, բայց այսուամենայնիւ խոստացաւ որ ամենայն եղանակաւ կ՚աշխատի լուռ լինելու համար, բայց դիցանուշը երեսը շուռ տուաւ նորա ասածը չլսելու համար,

որովհետև նա լաւ իմանում էր որ եթէ ճշմարիտ ցանկութիւն ունենար զինքը ուղղելու, նորա միջոցները 'ի գործ կ՚դնէր: Աշխարհս լցուած են այդ օրինակ մարդիկներով, որոնք ցանկանում են իւրեանց ուղղելու, բայց այնպէս են կամենում որ ո՛չ մէկ նեղութիւն չկրեն այդ բանումը: Աստուած պիտի հրաշք գործէ 'ի շնորհս այդպիսի մարդկանց: Ահա՛ իսկապէս այդպիսիներից մինն էլ մեր Ժողլիէտան էր, որովհետև նա արհամարուած էր բոլոր մարդկերանցից, չ՚մտիկ առած իւր ընդունակութեանը, գեղեցկութեանը, իմաստութեանը և տաղանդաւոր լինելուն՝ մտքումը վճռեց գնալ բնակելու մին ուրիշ քաղաքի մէջ: Ուստի վաճառեց իւր բոլոր գոյքերը և դուրս եկաւ քաղաքից իւր մօր հետ 'ի միասին: Նա եկաւ մին մեծ քաղաք, որտեղ որ սկըզբումը զմայլած մնացին նորա չնաշխարհիկ գեղեցկութեանը վերայ: Շատ իշխաններ ցանկացան նորա հետ ամուսնանալու, որոնցից մէկին նա ընտրեց, որին որ շատ սիրում էր: Ժողլիէտան մին տարի բաղդաւորութեամբ ապրեց նորա հետ: Քաղաքը, որուն մէջ բնակում էր նա, մեծ էր, վասնորոյ շուտով չիմացան որ նա մին բանսարկու անձն է: Մի՛ն իրիկուն ընթրիքից յետոյ նորա մարդը շատ անձանց վերայ խօսեց, և 'ի միջի այլոց խօսակցութիւնը եկաւ այս ինչ մարդոյ վերայ, և ասաց նա թէ այդ մարդը շատ պատուաւոր անձն չէ, որովհետև ինքը ականատես է էլել նորա շատ վատ գործքերին: Երկու օրից յետոյ Ժողլիէտան գտնուելով մին մեծ մասկարադի մէջ (հանդէս դիմակաւորաց) մին դոմինօ հագած երիտասարդ մարդ խնդրեց իւր հետ կաքաւելու, և պարգալուց յետոյ կշտին նստեց, որովհետև շատ իմաստնապէս խօսում էր և զուարճացնում էր: Այն մարդոյ կնիկը, որոյ վերայ Ժողլիէտայի մարդը խօսել էր նախ-

ընթաց երիկունը, եկաւ նոյնպէս կաքաւելու և Ժուլիէտ-տան ասաց իւր մօտ նստած դիմակին թէ այս կնիկը շատ սիրելի է և շատ ցաւում է որ դա պսակուել է մին անպատիւ մարդոյ հետ։—„Ճանաչում էք արդեօք այն մարդուն, որին վերայ այդպէս վատ խօսում էք, հարց-րաւ դիմակը։" „Ո՛չ պատասխանեց Ժուլիէտտան, բայց իմ ամուսինս, որը որ նորան լաւ ճանաչում է, ինձ շատ վատ պատմութիւններ է արել, որոնք որ վերաբերվում են այն մարդին։" Եւ խեղճն Ժուլիէտտան սկսեց պատմել այդ պատմութիւնը, իհարկէ աւելացնելով շատ բաներ իւր վատ բնաւորութեանը համեմատ, իւր խելքը նորան ցոյց տալու համար։ Դիմակը շատ ուշադրութեամբ լսեց, և երբ որ պատմութիւնը վերջացրուց, տեղեցը վեր կացաւ գնաց։ Մին քառորդ ժամից յետոյ եկին ասացին Ժուլիէտտային թէ նորա մարդը մեռել է. վասն զի մենամարտութիւն է արել մէկ մարդի հետ, որոյ անունը վատահամբաւել է։ Ժուլիէտտան աչքերը արտասունքներով լի, վազեց դէպի այն կողմը, որտեղ որ մարդը վեր էր ընկած, որը որ մին քառորդ ժամ միայն կեանք ունեցաւ։ „Հեռացիր ինձանից, անիծեալ կնիկ, ասաց նա, այդ քո օձի լեզուն էր որ զրկեց ինձ իմ կեանքից։" Եւ քիչ ժամանակից յետոյ հոգին փչեց։ Ժուլիէտտան խելքը գլխից կորցրուց տեսնելով իւր ամուսինը մեռած և խեղճն կատաղաբար սուրը անցկացրուց իւր մարմնի միջով։ Նորա մայրը տեսնելով այդ սոսկալի տեսարանը, սարսափի մէջ ընկաւ և շուտով մեռաւ անիծելով այն մահահրաւէր նենգամտութիւնը, որը որ արել էր իւր աղջկայ համար, և որով նորա մահուան պատճառ դառաւ։

ՃԱՐՂՈՏՏԱ

Պիտի խոստովանած որ Ժուլիէտտան մին շատ չար աղջիկ է եղել, սիրելի բարեկամ։

ՏԻԿԻ՛Ն

Ամենևին ո՛չ, սիրելի, դա մին փոփոխամիտ աղջիկ էր, որը որ շատ դատարկութիւն ունէր և կամենում էր իւր իմաստութիւնը ցոյց տալ և որը որ շատ ընտիր աղջիկ կ՚լինէր, եթէ նորա մայրը ուղղէր առաջի անգամը երբ որ մին բանսարկութիւն արաւ։ Արդէն ժամանակը անցնում է, սիրելի աղջիկերք, մին քանի խօսք էլ աշխարհագրութեան վերայ խօսենք։ Յուլիանէ Անգլիայի գլխաւոր գետերը և լճերը ո՛րոնք են, խնդրեմ ասես։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Գլխաւոր գետերը սոքա են. Թամիզ, Փորտ, Շան-նան և Տրէնտ։ Իսկ լճերը, Լօխ—լօմոնդ և Լօխնէս։ Ես նոյնպէս իմանում եմ Պրուսիայի լճերը և գետերը, որոնք են Նեմեն, Վիսլա, Օդեր, և Էլբա գետերը, և Քուրիշ—գաֆ, Սթեթթիներ գաֆ լճերը։

ՏԻԿԻ՛Ն

Այսօրուայ դասը մին քիչ դժուար էր ձեզ համար, սիրելի օրիորդներ, բայց արդէն ժամանակ է միմեանցից բաժանուելու, մնաք բարով։

ԵՕԹ ԵՒ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԵՇՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻՆ

Ադէ՛լ, պատմի՛ր, դասդ, խնդրեմ։

ԱԴԷԼ

Աստուած հրամայեց Մովսէսին իւր ձեռները Յեսուի վերայ դնել և իւր հոգին տալ այդ մարդուն, որպէս զի իւր ժողովուրդը տանէ այն երկիրը, որը որ խոստացել է Աբրահամին։ Մովսէսը հնազանդեցաւ և յիշեցնել տուաւ Իսրայէլացւոց այն հրաշքները, որոնք Աստուած գործել էր նոցա սիրոյ համար։ Նա նոցա խոստացաւ որ Աստուած ո՛չ երբէք նոցա չէ թողնել, եթէ նոքա հաւատարիմ մնան և պահպանեն նորա օրէնքները։ Սորանից յետոյ բարձրացաւ Մովսէսը լերանի գագաթը, որտեղից որ տեսաւ այն երկիրը, որտեղ որ ինքը չպիտի մտնէր անհնազանդ գտանուելուն պատճառաւ։ Մովսէսը մեռաւ այդ կողմումը հարիւր և քսան տարեկան հասակում, բայց ո՛չ երբէք չկարողացան իմանալ թէ ինչ տեղ են թաղել նորա մարմինը։

ԵՒԳԵՆԻԱ

Այդ մեծ օրէնստուն բաւականին նեղութիւն կրեց իւր բոլոր կեանքումը։

ՏԻԿԻՆ

Նորա ամենայն նեղութիւնները վերջացան, նա երջանիկ է և երջանիկ էլ պիտի մնայ յաւիտեան, իհարկէ դու չէիր ցանկանալ նորա տեղ լինել, երբ որ նա այնքան նեղութիւն էր կրում, բայց այժմ ճշմարիտ չէ՞ որ շատ կ'ցանկանայիր նորա տեղ լինել։

ՇԱՐԼՕՏՏԱ

Այո՛, իմ սիրելի բարեկամ, բայց կամենումեմ խոստովանել որ շատ վախում եմ մահից։

ՏԻԿԻՆ

Դու վախումես, վասն զի, ամենայն սրտիւ չես աշխատում դարձի գալու։

ՇԱՐԼՕՏՏԱ

Ճշմարիտը ասեմ, ես ամենևին մտածում չեմ դորա վերայ, բայց շատ սիրում եմ կեանքը, մինչև այժմ մատաղահաս եմ էլած, ուրեմն կամենումեմ իմ մահից առաջ՝ ժամանակ ունենալ տեսնել աշխարհք և մին քիչ ուրախանալ նորանով։

ՏԻԿԻՆ

Ի՞նչ կ'ասէիր եթէ մին թագաւորի որդի գտնուէր բանտի մէջ, և չ'կամենար այնտեղից դուրս գալ, էնդուր համար որ դեռ մտն չէր եկել այդ տխուր պարտէզի մէջ։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես կ'ասէի թէ նա շատ յիմար պէտքէ լինէր. վասն զի անկասկած այդ բանտի պարտէզից առաւել գեղեցիկ պարտէզներ կ'գտնուէին իւր հօր թագաւորութեան մէջ։

ՏԻԿԻՆ

Դու էլ նոյնն ես անում, իմ սիրելի, ասում ես թէ կամենում չես դեռ մեռնել, որովհետև ցանկանում ես աշխարհ տեսնել. այդ ինձ յիշեցնել է տալիս մին փոքրիկ պատմութիւն որը որ մին քանի օր սորանից առաջ կարդացի։

Յոզափատ անունով մին թագաւորազն որսորդութեան ժամանակ կորցնելով ճանապարհը, մին գեղեցիկ ձայն լսեց։ Յոզափատը շատ զարմացաւ անապատի մէջ այդպիսի ձայն լսելուն համար. նա գնաց դէպի այն կողմը, որտեղից որ գալիս էր այդ ձայնը և շատ զարմացած մնաց տեսնելով որ այդ երգողը մին ողորմելի բորոտ է։ „Ով Աստուած իմ, ասաց Յոզափատը, ինչպէ՞ս կարող ես սիրտ անել երգելու այդպիսի խղճալի դրութեան մէջ։"

—Ես մեծ առիթ ունիմ ինձ մխիթարելու, պատասխանեց հիւանդը. քառասուն տարի է որ ես աշխարհք եմ եկել, այսինքն քառասուն տարի է որ իմ հոգիս կալանաւորուած է ցեխով շինած մին մարմնոյ մէջ, որը որ իւր բանտն է։ Այդ բանտի պարիսպները կտոր կտոր վեր են թափվում, շուտով իմ հոգին կ'ազատվի իմ մարմնոյ կործանմամբը։ Ես այնքան ուրախ եմ որ չեմ կարող ձեռներս չբարձրացնել դէպի երկինքը իմ ազատութիւնս տօնելու համար։"

ՄԱՐԻԱՄ

Ես շատ չեմ սիրում կեանքը, բայց վախում եմ մեռնելուց, որովհետև շատ չարասիրտ եմ էլած։

ՏԻԿԻՆ

Դու սխալ ես քեզ ուղղելու, իմ սիրելի, և բոլոր օրը աշխատում ես դորա համար. ուրեմն այդ քեզ կարող է հանգստացնել։ Աստուած բարի է, մեզանից ուրիշ աւելի բան չէ պահանջել։ Մարիա՛մ շարունակի՛ր պատմութիւնդ։

ՄԱՐԻԱՄ

Յեսուն Մովսէսից յետոյ յաջորդելով, Աստուծոյ հրամանաւը երկու լրտեսներ ուղարկեց Երիքով քաղաքը։ Նոքա գնացին Ռահաբ անունով մին կնոջ մօտ, բայց Երիքովի թագաւորը զինուորներ ուղարկեց այն կնոջ մօտ լրտեսներին բռնել տալու համար։ Զինուորները նոցա չգտին որովհետև Ռահաբը նոցա թաքուցել էր հետևեալ օրը ասաց նոցա. „Ես իմանում եմ որ դուք ճշմարիտ Աստուծոյ կողմիցն էք եկել, և նա պիտի այս քաղաքը ձեր ձեռքը մատնէ, բայց որովհետև ես ձեզ լաւութիւն եմ արել, խնդրեմ ո՛չ ինձ և ո՛չ էլ իմ գերդաստանին մին վնաս հասցնէք։" —Հաւաքի՛ր քո բոլոր գերդաստանը քո մօտ. պատասխանեցին լրտեսները, երբ որ մենք քաղաքը կ'պաշարենք՝ դու մին կարմիր լար (չուան) կախ արա՛ քո լուսամուտից, և քեզ ոչինչ վնաս չենք անել։" Սորանից յետոյ նոքա վերադարձան Յեսուի մօտ, որը որ հրամայեց ժողովրդին պատրաստուել որպէս զի

անց կենան Յորդանան գետովը: Կամուրջ չկար այդ գետի վերայ, բայց Յեսուն հրամայեց քահանաներին վեր առնել ուխտի տապանակը. հազիւ թէ նոցա ոտները կպան ջրին, յանկարծ ջուրը երկու բաժանվեցաւ, որ Իսրայէլացիք կարողանան անց կենալ և Աստուած ասաց Յեսուին. „Տասներկու քար վեր առէք այնտեղից, ինչ տեղ որ քահանաները կանգնեցին Յորդանան գետի մէջին և այդ տասներկու քարից մի սեղան կանգնեցրէ՛ք և երբ որ ձեր որդիքը հարցնելու լինին թէ այդ ի՞նչ սեղան է, դուք կ'պատասխանէք թէ այդ էնդուր համար է որ դուք ձեր միտը բերէք այն հրաշքը, որը որ Աստուած գործել է ձեր սիրոյն համար, ձեզ Աբրահամին խոստացած երկիրը առաջնորդելու ժամանակ:„ Իսրայէլացիք ամեն բանի մէջ հնազանդ մնացին Աստուծոյ պատուիրանքներին և մտան Աւետեաց երկիրը:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Աշխարհիս ո՞ր կողմումն է գտնվում Աւետեաց երկիրը, սիրելի բարեկամ:

ՏԻԿԻ՛Ն

Ցանկանում եմ ցոյց տալ ձեզ մի աշխարհագրական քարտէզի վերայ: Այդ երկիրը գտնվում է Ասիայումը, հարաւային արևելեան կողմում և այն ժամանակից հետէ երբ որ Իսրայէլացիք այն տեղ բնակեցան: Հրէաստան կոչուեցաւ. այժմ առաւել ծանօթ է մեզ Պաղեստինէ անուամբ: Եւգենիա՛, պատմի՛ր քո դասդ:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Երբ որ Իսրայէլացիք մտան Աւետեաց երկիրը, այնտեղի ցորենից հաց շինեցին և այնուհետև մանանայ չ'վէր ընկաւ երկնքից. Այս միջոցումը Յեսուն մի հրեշտակ տեսաւ, ձեռին մի սուր բռնած. և Տէրը ասաց Յեսուին. „Թո՛ղ քահանաները վեր առնեն ուխտի տապանակը և մունջ տանեն Երիքով քաղաքի մօտ վեց օրուայ մէջ և եօթներորդ օրը եօթն անգամ թող պտուտան քաղաքի չորս կողմովը և քահանաները եօթն անգամ փող հարկանեն և ժողովուրդն էլ ուրախութեան ձայներ արձակէ. իսկոյն կ'տեսնէք որ քաղաքի պարիսպները կ'կործանեն և ամենայն մարդ անարգել կ'մտնէ այդ քաղաքը: Բայց լաւ մտերումդ պահեցէք ինչ որ կամենում եմ ձեզ ասել: Այդ քաղաքի բնակիչներից ո՛չ մէկին չ'պիտի ներեմ, բացի Ռահաբին և նորա գերդաստանին: Սորանից յետոյ դուք կ'կործանէ՛ք այն քաղաքը, որովհետև նորա մէջ բնակողները ամենքն էլ չարագործ են: Ես ձեզ հրամայում եմ ոչինչ չ'պահել Երիքով քաղաքի մէջ, բայց դուք վեր կ'առնէք ոսկին, երծաթը, երկաթը և պղինձը և ինձ կ'նուիրէք, իսկ մնացորդը կ'այրէք:„ Յեսուն կատարեց Աստուծոյ հրամանը: Պարիսպները իսկոյն վեր ընկան և միայն Ռահաբը և իւր գերդաստանը փրկվեցան: Այս միջոցումը Յեսուն երեք հազար մարդ ուղարկեց թշնամեաց դէմ պատերազմելու. Իսրայէլացիք փախան և նորանցից երեսուներվեց մարդ սպանուեցաւ: Յեսուն և ժողովրդի ծերերը շատ տրտմեցան և իւրեանց երեսները գետնի վերայ դրին, բայց Աստուած ասաց Յեսուին. „Ամենևին մի՛ նեղանար, այդ պատուհասը, որը որ պատահեց ժողովրդին, նորա համար է, որ ձե-

ղանից մէկն ինձ անհնազանդ գտնուեցաւ պահելով իւր մօտ այն բաները, որոնք վեր էր առել Երիքով քաղաքից: Վիճակ քցեցէ՛ք և ես ձեր ձեռքը կ՛մատնեմ մեղաւորին և դուք կ՛քարկոծէ՛ք և յետոյ կ՛այրէ՛ք նորան, իւր վեր առած բաների հետ:“ Աքարի անունը դուրս եկաւ, որը որ Յուդայի ցեղից էր: Նա յանձն առաւ իւր մեղը և քարկոծուեցաւ:

ՏԻԿԻ՛Ն

Տեսի՞ք հիմի, սիրելի օրիորդներ, ինչպիսի զարհուրելի պատմութիւն է. դուք ձեր մեղքերը ծածկեցէք որքան որ կ՛ուզէ՛ք, բայց Աստուած ամենայն տեղ է, Նա տեսնումէ ձեր յանցանքները, և եթէ այժմ յայտնում չէ բոլոր աշխարհին, էս էլ ստոյգ իմացէ՛ք որ վերջին դատաստանի օրումը պիտի յայտնէ էնոնք:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Ի՞նչ կ՛նշանակէ վերջին դատաստան, իմ սիրելի բարեկամ:

ՏԻԿԻ՛Ն

Երկինքը, երկիրը և միւս ուրիշ բաները, որոնք որ դուք տեսնում է՛ք երկար չ՛են տեւելու, իմ սիրելի երեխայ՛ք: Կ՛գայ մին այնպիսի ժամանակ որ այս ամեն բաները պիտի կործանուեին: Այն ժամանակը բոլոր կենդանի մարդիկը կմեռնեն և այդ մարդիկը և նոքա, որոնք որ մեռել էին 'ի սկզբանէ աշխարհի, յարութիւն պիտի առնեն, երբ որ Տէրին հրեշտակը փողը կ՛հարկանէ ասելով. „Վեր կացէ՛ք մեռեալներ և եկէ՛ք 'ի դատաստան: Երբ որ բոլոր մարդիկը յարութիւն կ՛առնեն, բայց կ՛անեն մին գիրք, կամ գրուածք, որտեղ որ կ՛տեսնեն նոքա այն բարի և վատ գործքերը, որոնք մարդիկ իւրեանց կեանքի ընթացքումը գործել են: Այդ քննութիւնը անելուց յետոյ՝ Յիսուս Քրիստոսը պիտի ասէ բարեգործներին. „Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ, ժառանգել այն յաւիտենական թագաւորութիւնը, որը որ պատրաստել եմ ձեզ համար: որովհետև ես քաղցած էի, ինձ կերակրեցիք, ծարաւ էի, ինձ ջուր տուիք, մերկ էի, դուք ինձ հագցրիք, հիւանդ էի, ինձ բժշկեցիք, ես բանտումն էի, դուք գալիս էիք ինձ այցելութեան և ինձ օգնելու համար:„ Բարեգործները պիտի ասեն. „Տէ՛ր, ինչպէ՞ս այդ ամեն ծառայութիւնը արել ենք քեզ: Այն ժամանակը Քրիստոսը պիտի պատասխան տայ նոցա ասելով. „Ես ձեզ ճշմարիտը ասում եմ որ այն ամեն անգամ երբ որ դուք մին բարի գործ էք արել աղքատներին կամ թէ նեղացածներին իմ սիրոյ համար, համարեա՛ թէ ինձ համար էք արել այդ ծառայութիւնը:„ Սորանից յետոյ Նա պիտի ասէ չարագործներին. „Հեռացէ՛ք ինձանից, անիծեալներ, գնացէ՛ք այն յաւիտենական հուրը, որը որ պատրաստուած է ձեզ համար սատանների ձեռքով, որովհետև ես քաղցած էի, և դուք չ՛կամեցաք ինձ ո՛չ կերակրել, ո՛չ խմեցնել, ո՛չ հագցնել, դուք ինձ ամենևին չ՛օգնեցիք, ո՛չ այցելութիւն արիք, երբ որ ես մերկ էի, հիւանդ էի և բանտումն էի գտնվում:

Այս խօսքերը ասելիս, չարագործները պիտի ընկնեն անվերջանալի կրակի մէջ, և այնտեղ պիտի լինի լաց և կրճել ատամանց:

ՇԱՐԼՈՏՏԸ

Աստուա՜ծ իմ, եթէ ես յաճախ միտք անէի այդ ամէն բաների վերայ, որ դուք ինձ պատմում էք, ես մին սուրբ կ'լինէի։ Արդ՝ ես կամենում եմ 'ի բոլոր սրտէ դարձի գալ և էլ չ'վախենալ մահից, որովհետև ամենեին չպիտի մեռնեմ, այլ մին օր պիտի յարութիւն առնեմ։

ՆԻԳԵ՛ՆԻԸ

Իմ սիրելի բարեկամ, ինձ այնպէս է թվում որ շատ հեշտ բան է երկինքը ժառանգելը. որովհետև պիտոյ է միայն լաւութիւն անել աղքատներին։ Այդ տեսակ մարդիկը ինձ այնպէս խեղճ են գալիս, որ ես մեծաւ ուրախութեամբ իմ նախաճաշիկի կէսը նոցա կ'տայի, եթէ միայն ինձ իրաւունք տային այդ բանը անելու։

ՏԻԿԻ՛Ն

Բայց եթէ դու շատ քաղցա՞ծ լինիս, սիրելի աղջիկ։

ՆԻԳԵ՛ՆԻԸ

Ինչ փոյթ կէսը նոցա կ'տամ, միւս կէսը ես կ'ուտեմ։ Բայց ասացէք ինձ, Տիկի՛ն, ես կարծում եմ որ մին կընիկ շատ չարասիրտ պիտի լինի, եթէ բոլոր օրը բարկացած լինի, ստախօս լինի և վատ խօսէ իւր ընկերի վերայ, այդ կնիկը կարո՞ղ է արդեօք գնալ արքայութիւնը այդ ամէն գործքերի հետ, եթէ ողորմութիւն անէ նա աղքատներին և կարօտեալներին։

ՏԻԿԻ՛Ն

Ո՛չ, իմ սիրելի, բայց այդ անհնարին բան է, որ մին ողորմածասէր կնիկ գործէ այդ բոլոր սխալները, և իւրեան չ'ուղղէ։ Բայց լաւ նկատեցէ՛ք, իմ երեխայք, որ ճշմարիտ ողորմածասէր լինելու համար, պիտոյ է աստուծոյ սիրոյն համար լինել, և ոչ թէ ունայնասիրութեան համար, ուրիշներին հաւանելով կամ պարզ խօսենք՝ աղքատները ձանձրութենից ազատելու համար։ Դուք լաւ իմանում էք որ այդ օրինակ ողորմութիւնները այն ողորմութիւնները չ'են, որոնց մասին մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը ասաց։

ՇԱՐԼՈՏՏԸ

Բայց, իմ սիրելի բարեկամ, եթէ շատ փող չ'ունենան, և եթէ գերդաստան ունենան, կարող չ'են շատ ողորմութիւն անել։

ՏԻԿԻ՛Ն

Այդ ճշմարիտ է, բայց հազար ու մէկ միջոց կայ ողորմած սիրտ ունենալ առանց փող տալու։ Եթէ մին մարդ յայտնէ ձեզ իւր աղքատութիւնը, դուք կարող էք մխիթարել նորան, ծանօթացնել հարուստների հետ, և այս օրինակ դուք էլ նորան ողորմութիւն արած կ'լինիք, որովհետև օգնելն էլ ողորմութիւն անելու նշան է. Հիմիկ էլ մին քանի խօսք աշխարհագրութենից խօսենք։ Յուլիանէ՛, Նիդերլանդիան ինչպէ՞ս է բաժանվում։

ՅՈՒԼԻԱՆԷ

Երկու մասն են բաժանում, հարաւային և հիւսիս-

յին. Սկովտլանդիան բաժանվում է երեսուն երեք կոմսութիւն մայրաքաղաքն է Էդինբուրգ։

ՏԻԿԻՆ

Ինչպէ՞ս ես բաժանում Իռլանդիան։

ՅՈՒԼԻԱՆԷ

Չորս նահանգ. Մունստեր, մայրաքաղաքն է Կորգ: Լէյնստեր, մայրաքաղաքն է Դուբլին, որը որ նոյնպէս բոլոր Իռլանդիայի մայրաքաղաքն է: Ուլստեր մայրաքաղաքն է Լօնդօնդերրի: Կօննագտ, մայրաքաղաքն է Գալվէյ: Իռլանդիան բաժանվում է 32 կոմսութիւն, և ջրվում է Շանոն գետով, որը որ ընկնում է Ովկիանոսի մէջ։

ՏԻԿԻՆ

Այդ շատ լաւ է, մենք կ'շարունակենք միւս անգամ աշխարհագրութիւնը, մնաք բարև իմ երեխայք։

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՕՐ։

ՇԱՐԼՈՏՏԷ

Տիկին, հայրս ինձ մին լաւ գիրք է տուել, որոյ մէջ մին գեղեցիկ վէպ եմ կարդացել, կ'կամենաք արդեօ՞ք որ կրկնեմ այս աղջկերանց։

ՏԻԿԻՆ

Մեծաւ ուրախութեամբ, սիրելի աղջիկ։

ՇԱՐԼՈՏՏԷ

Ռօլանդ անունով մին թագաւորազն է էլել, որը որ շատ սիրում է էլել Էնժելիկ անուամբ մին թագաւորի աղջկան։ Ռօլանդը շատ պատուաւոր անձն էր, բայց և այնպէս նորան Էնժելիկը բնաւ չէր սիրում։ Նա գնում էր պատերազմ և շատ գեղեցիկ գործեր էր անում նորան հաճոյ երևալու համար։ Երբ որ պատերազմի մէջ նա գերիներ էր բռնում, նոցա ասում էր. „Ես ձեզ ազատութիւն եմ տալիս այն պայմանով որ դուք գնաք իմ կողմից Էնժելիկի մօտ և ասէք նորան որ ես ձեզ ազատութիւն եմ տուել նորա սիրոյն համար։ Երբ որ նա աղամանդներ կամ թէ ուրիշ թանկագին քարեր էր վեր առնում թշնամիներից, իսկոյն ուղարկում էր այդ թագաւորի աղջկայ համար, բայց ոչինչ չկարողացաւ Էնժելիկի սիրտը կակղացնել։ Ռօլանդը գեղեցիկ չէր դէմքով, վամորոյ և թագաւորի աղջիկը չէր կամենում պսակուել նորա հետ։

Մին օր երբ որ Էնժելիկան մօտն էր գալիս անտառու-

մը, տեսաւ գետնի վերայ ընկած մին մարդ, որոյ հարուածներով վիրաւորուած, սկզբումը նա կարծեց թէ մեռած է այդ մարդը, բայց առաւել մօտենալով տեսաւ որ դեռ շունչ կայ բերանումը, ուստի խնդրեց այնտեղ գտնուած հովիւներից որ տանեն նորան իւրեանց խրճիթը: Ընկերական խնամքով պահպանեց նորան և երբ որ առողջացաւ, իսկոյն ամուսնացաւ նորա հետ: Ռոլանդը այնպէս նեղացաւ այդ բանից, որ խելքը գլխիցը կորցրուց: Մին մեծ դիցանուշ խղճալով դորա վերայ դնաց նորա հօր եղբօր որդկերանցից մէկին մօտ, որին անունը Աստոլֆ էր, և տալով նորան իւր թեւաւոր ձին ասաց. „Հեծի՛ր այս թեւաւոր ձին, նա քեզ կ'տանէ ուղղակի լուսնեակի թագաւորութիւնը, այնտեղ դու կ'գտնես Ռոլանդ թագաւորազնի խելքը և կ'բերես քո հետ:„ Աստոլֆը հեծաւ ձին, որը որ տարաւ նորան լուսնեակի թագաւորութիւնը: Նա այն տեղ տեսաւ երեք պառաւ կնիկ, որոնք թել էին մանում: Նորանցից մէկը, որին անունը Կլօթէ էր, թելը բռնած էր ձեռքին, երկրորդը, որը որ անուանվում էր Լաքեսիս, ճախարակով շուռ էր տալիս թելը և Ատրոպէս, որը որ ամենից ծերն էր, կտրում էր թելը: „Մենք երեք քոյր ենք„ ասացին նոքա Աստոլֆին, „որ Պարկեանք ենք կոչվում: Մենք մահկանացուաց կեանքի թելը մանում ենք, երբ որ մարդս գալիս է աշխարհ, մեզանից մէկը վեր է առնում թելը, միւսը շուռ է տալիս, բայց երբ որ կտրում ենք, պիտի մեռնի այն մարդը:„ Աստոլֆը որը որ շատ սիրում էր կեանքը ասաց Պարկեանց քոյրերին. „Տիկնա՛յք, ես պատիւ ունեմ իմ յարգանքը ձեզ մատուցանելու: Բանաստեղծները ասում են թէ դուք պառաւ էք, նոքա սուտ են ասում, ես տեսնում եմ որ դուք տակաւին շատ սիրելի

էք դէմքով:„ — Երեւում է որ դու թագաւորական պալատիցն ես գալիս, ասաց նորան Կլօթէն, դու սուտ ես ասում զարմանալի յանդգնութեամբ, դու զուր ես աշխատում, մենք պառաւ ենք, շատ տարիներ ենք անցկացրել: Դու շատ կ'ցանկանայիր որ իմ քոյր Ատրոպոսը մոռանար քո կեանքի թելը կտրելու, բայց լաւ իմացի՛ր որ դու կ'մեռնես, երբ որ ճակատագիրդ, որը որ առաջնորդում է մեր միտքներին, հրամայէ կտրել: Գնաս բարով, մտածի՛ր միայն քո յանձնարարութեանդ վերայ: Քո առաջև դէմ ելած ճանապարհովը գնա՛, կ'գտնես մին տուն, մտի՛ր մէջը և մեր ծառաներից մէկը կ'տանէ քեզ ինչ տեղ պիտի գտնես Ռոլանդ թագաւորի խելքը:„ Աստոլֆը ամօթապարտ մնացած իւր արած շողոքորթութեան համար, ճանապարհ ընկաւ, և շուտով գտաւ Կլօթէի ասած տունը: Այդ տունը պահպանող ծառան ասաց նորան. „Տէ՛ր. եկ՛ ինձ հետ այս տունը և դու կ'գտնես ինչ որ կամենումես:„ Աստոլֆը մտնելով մին սենեակի մէջ, տեսաւ շատ տախտակներ շարած և այդ տախտակների վերայ բազմաթիւ նշանագիրներով շիշեր դարսած: — „Դորանցից ամեն մէկը մին մարդոյ խելք է պարունակում իւր մէջ, ասաց ծառան: գտի՛ր Ռոլանդ թագաւորի խելքը:„ — „Բայց իմ սիրելի բարեկամ, ասաց Աստոլֆը, ես զարմանումեմ այսքան բազմաթիւ շիշերի վերայ, որոնք տեսնումեմ այստեղ: Ես չէի կարծել թէ աշխարհիս երեսին այսքան յիմար մարդիկ են գտնվում:„

„Համարեա՛ թէ ոչինչ չես տեսնում, պատասխանեց սպասաւորը, այս սենեակը միայն ձեր Շարլեման թագաւորի պալատումը գտնուած յիմարների խելքերն է պարունակում իւր մէջ, բայց աշխատի՛ր գտնելու այն խելքի համար որ եկել ես:„ Աստոլֆը կարդալով այդ շի-

չերի նշանագիրները, իւր բարեկամներից շատերին անունները գտաւ, բայց ինչպէս մեծ եղաւ նորա զարմանքը, երբ որ ի մէջի այլոց կարդաց այս նշանագիրը „Ռօտօլփի խելքը„—„Ահա՛, զարմանալի բան, ասաց նա, մի՞թէ ինձ էլ են յիմարների շարքումը համարում:„—"Լաւ իմացի՛ր, ասաց նորան ծառան, որ մեծամեծ յիմարները միայն նոքա չ'են որոնք ծմակների մէջ ընկած վազ են տալիս, ինչպէս որ Ռօլանդը այլ նոքա, որոնք իւրեանց կրից ծառայ են դառած, խելացնոր են նոյնպէս: Ժլատ հարուստները, որոնք իւրեանց զրկումն հարկաւոր բաներից կամ առաքինասէր մարդկանց արհամարանքը իւրեանց վերայ են ընդունում, այս ամենը լինում է ենդուր համար որ նոքա փողը փողի վերայ դիզեն, մի՞թէ յիմար չ'են դոքա: Այն մարդը, որ կամակոր բնաւորութեամբ պարծենումէ իւրեան աղնուատոհմութեամբը, մի՞թէ յիմար չ'է նա: Դու ինքդ, պարոն Աստոլփ, որ մանում ես պատերազմների մէջ և միշտ վտանգների մէջ ես լինում, գլուխդ, ոտդ կամ թէ ձեռդ կտրել տալու, և այս էլ՝ դարտակ տեղը քո վերայ խօսել տալու համար, մի՞թէ յիմար չ'ես դու:

„Ո՛չ, պատասխանեց Աստոլփը, իմ աստիճանիս մարդը ստեղծուած է որ իւր անձը զոհէ հայրենեաց և թագաւորի կենաց համար:„

—Դու ճշմարիտ ես ասում, պատասխանեց ծառան, բայց քո անձը զոհելու ժամանակը, ո՛չ քո թագաւորի վերայ ես մտածել և ո՛չ էլ քո հայրենեաց վերայ, և ահա հենց այդ է քո յիմարութեան պատճառը, որով այդ ամեն բանը անելու ժամանակը քո վերայ խօսեցնել տալու նախատ. մտածմունքից 'ի զատ ուրիշ ոչինչ չ'ես ունեցել: Հաւատացիր ինձ և քո շիշը մինչև վերջի կաթիլը դատարկի՛ր:„

„Ես դեռ ես բաւականին խելք ունիմ, վասնորոյ քո տուած խորհուրդներին յօժարութեամբ կ'նդունիմ, ասաց Աստոլփը. ուստի բացաւ շիշը և մէկ շունչով կուլ տուաւ մէջի պարունակածը: Վերջապէս գտաւ Ռօլանդ Թագաւորի խելքը և շնորհակալութիւն անելով իւր առաջնորդին, յետ դարձաւ մեր աշխարհը:

Մեծ դժուարութիւն ունեցան Ռօլանդին բռնելու որ խմեցնեն իւր խելքը: Վերջապէս հասան իւրեանց նըպատակին, " հազիւ թէ խելքը գլուխը եկաւ, չորս կողմերին սկսաւ մտիկ տալ և շատ զարմացած մնաց տեսնելով որ ամենևին մերկանդամ էր գտանվում, և հարցրաւ թէ արդեօ՞ք ով է քցել իւրեան այդ դրութեան մէջ: Ասացին թէ Անժելիկը կորցնելու ցաւն է իւրեան այդ օրը քցել:—Անժելիկը՞, ասաց զարմացած Ռօլանդը, այն պչրող աղջի՞կը, որը որ ամբողջ օրը իւր գեղեցկութեամբըն էր զբաղուած, որը որ սիրում էր զուարճութիւն, և մոռանալով որ ինքը մին Թագաւորի աղջիկ է, պսակուել է մին երիտասարդ սրիկայի հետ (плутъ): Կարելի՞ է արդեօք որ իմ խելքս կորցնեմ այդպիսի անզգամի անձնի համար: „Բոլոր աշխարհը զարմացաւ, լսելով Ռօլանդի այդ օրինակ հանճարաւոր խօսքերը: Շատ մարդիկ միևնոյն հիւանդութեամբը բռնուած՝ խնդրեցին Աստոլփին որ սկսէ ճանապարհորդութիւն անելու նոցա համար, բայց դիցանուշը էլ կամք չ'ունեցաւ տալու իւր թևաւոր ձին:

ՑՕՒԼԻԱՆԷ

Իմ սիրելի բարեկամ, Ռօլանդ Թագաւորի մասին ոչինչ չէ յիշատակվում պատմութեան մէջ:

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, իմ սիրելի, նա Բրիտանեան Ովկիանոսի կառավարիչներից մէկն էր, Մեծն Կարոլոս Թագաւորի ժամանակը, և հետևողաբար մին մեծ նաւավար պիտի եղած լինէր, որովհետև բանաստեղծները նկարագրում են նորան մին արտաքոյ կարգի քաջութիւն ունեցող մարդ. բայց ինչ որ մեզ ուսուցանումէ պատմութիւնը նորա մասին այն է թէ նա մեռել է Ռոնսեվոյումը Լուպ II ի դաւաճանութեամբը, որը որ Կասկոնացւոց առաջնորդն էր, Պիրենեան կիրճերի մէջ, այն ժամանակը, երբ որ մեծն Կարոլոս, որը որ երևելի յաղթութիւններ արած Իսպանիայումը Սարակինացւոց Թուրքերի վերայ յետ էր դառնում իւր թագաւորութիւնը մեծ փառքով և աւարներով:

ՃԱՐԼՈՏՏԱ

Ցերևի, իմ սիրելի բարեկամ, ես շատ նեղացայ, երբ որ իմացայ թէ Ռոլանդի վերայ գրած բաները սուտ են, քանզի ես նորան շատ սիրում եմ, չ'մոռնիկ արած նորա յիմարութեանը:

ՏԻԿԻ՛Ն

Այդ նորանից է, որ դու այդ օրինակ հրաշալի բաների վերայ սէր ունիս, բայց իրօք այդպիսի ընթերցմունքները ոչինչ օգուտ չ'են բերել, կարելի է մին քանի վայրկեան նորանցով միտքը զբաղեցնել իւր ներողութիւնները փարատելու համար, բայց չ'պէտքէ իւրեան համար սովորական պարապմունք շինել, պատճառ՝ դորանով իւր միտքը կարող է սուտ սուտ բաների հաւատալու սովորացնել, և յետոյ իւր ժամանակը կ'կորցնէ, որը որ շատ թանկ աժէ իւր համար:

ՄԱՐԻԱՄ

Եթէ այդ այդպէս է, ինչի՞ցն է որ դուք հրաշալի վէպքեր էք պատմում մեզ երբեմն:

ՏԻԿԻ՛Ն

Ինդուր որ դուք տակաւին մատաղահաս էք և պէտքէ ձեզ մին քիչ զբաղեցնել: Բայց երբ որ առաւել կատարեալ կ'դառնաք, այն ժամանակը աւելի պատմութիւններ կ'պատմեմ ձեզ, քան թէ այդ օրինակ առասպելներ: Մարիա՛մ սկսի՛ր պատմել ինչ որ սովորել ես:

ՄԱՐԻԱՄ

Իսրայելացիք արդէն Աստուծոյ հրամանաւը կործանել էին Երիքով և Գայհի քաղաքները, բայց այդ երկրի թագաւորները փոխանակ հնազանդելու Տէրին՝ դաշինք կապեցին միմեանց հետ Իսրայելացւոց դէմ: Միայն Գաբաւոնացիք յանձն չ'առին այդ դաշինքը: Այս ժողովուրդը տեսնելով Աստուծոյ նոցա համար արած հրաշքները համոզուեցան իւրեանց միջումը թէ 'ի զուր է իւրեանց ընդդիմանալը, որովհետև Աստուած նոցա համար պատերազմումէ և սորա համար սկսեցին խորամանկութիւն բանեցնել: Ուստի պատգամաւորներ ուղարկեցին նոցա մօտ, որոնք պատառոտած արեխներ ունէին հագած. իւրեանց հետ առած էին չորս հաց և այնպիսի տիկեր, որոնց մէջ գինի էին ածել, մաշած և բորբոսած էին: Այդ դեսպանները հասնելով Իսրայելացւոց դաշտը, ասացին Յեսուին. „Մենք այս տեղից շատ հեռու ենք բնակվում, և մեր ժողովուրդը տեսնելով այն հրաշքները, որ Աստուած գործել է ձեզ Եգիպտոսից

դուրս բերելու համար՝ մեզ ուղարկեցին այստեղ ձեզ հետ դաշնակցութիւն անելու, այնպէս որ եթէ դուք բոլոր երկրի տէր դառնալու լինիք, մեզ ամենևին վնաս չտաք. շատ ժամանակ է որ մենք ճանապարհի վերայ ենք և ենդուրից է որ մեր կօշիկները պատռել են և մեզ հետ բերած հացը շատ հին լինելուցը փշրվումէ:» Յեսուն և Իսրայէլացւոց գլխաւորները խորհուրդ չհարցրին Տէրիցը, թէ ի՞նչ պէտքէ անել, այլ երդմամբ խաղաղութիւն հաստատեցին նոցա հետ: Մի քանի օրից յետոյ մօտեցին նոցա քաղաքները վեր առնելու համար և շատ զարմացած մնացին, երբ որ այդ ժողովուրդը նոցա ասաց. «Դուք չէք կարող մեզ ոչինչ վնաս հասուցանել, որովհետև Ամենակարողին անուամբը երդւում էք կերել խաղաղութեամբ մեզ հետ վարվելու:» Յեսուն շատ տրտմեց այս օրինակ խաբուելուն համար, բայց չկամեցաւ երդմնազանց գտնուել, ասաց Գաբաւոնացւոց. «Որովհետև մենք Աստուծոյ անուամբը երդուել ենք կերել որ ձեզ ոչինչ վնաս չհասցնենք, դուք կ'ապրէք մեր մէջ, բայց որովհետև դուք ձեր կեանքը փրկելէք ստախօսութեամբ, պէտքէ որ մեզ գերի լինիք, փայտ և ջուր բերէք Տիրոջ ծառայութիւն անելու համար:» Այն ժամանակը Գաբաւոնացիք ասացին Յեսուին. «Ի բոլոր սրտէ մենք ձեզ գերի կ'դառնանք, և ուրախութեամբ կըկատարենք ձեր հրամանը:» Ահա՛ այսպէս եղաւ որ Իսրայէլացիք ներեցին Գաբաւոնացւոց, իւրեանց տուած երդումը պահելու համար:

ԱԴԷԼ

Ողորմելի ժողովուրդ, ես վախում էի որ նոցա կապանեն Իսրայէլացիք:

ՏԻԿԻՆ

Իմ սիրելի աղջիկ, Աստուած անաչառ արդար է նա պատժում է ամէն մէկին իւր արած յանցանաց համեմատ: Օրինակը տեսնում էք Գաբաւոնացւոց մէջ, նոքա սկսեցին նորան հաւատալ և վախել նորանից: Աստի ՝Նա փոխումէ մահուան պատիժը, ծառայութեան պատժի հետ և միջոց է տալիս այդ եղանակաւ իւրեան ճանաչելու և կատարելապէս հաւատալու: Ադէ՛լ, շարունակի՛ր դասդ:

ԱԴԷԼ

Հինգ թագաւոր միաբանեցան Գաբաւոնացւոց պատժելու համար, որոնք հնազանդել էին Իսրայէլացւոց: Յեսուն իւր դաշնակիցների օգնականութեամբը հասաւ և մեծ մեծ յաղթութիւններ գործեց թշնամեաց վերայ: Տէրը զգալի եղանակաւ պատերազմեց նոցա համար և քարեղէն կարկուտ ուղարկեց, որը որ աւելի կոտորեց թշնամեաց քան թէ Իսրայէլացւոց սուրը: Բայց լառորում շատ թշնամիք էին մնացել, որոնք դեռ յաղթուած չէին և գիշերը վերայ էր հասած, Յեսուն մին կենդանի հաւատով ոգևորուած՝ ասաց. «Արեգա՛կ, էլ մի՛ յառաջ գնալ.... Կանգնի՛ր լուսի՛ն....» Եւ իսկոյն արեգակը կանգնեց երկնքի միջումը և լուսինը էլ չսկսեց շարունակել իւր ճանապարհը, մինչև որ Իսրայէլացւոց վրէժխնդրութիւնը վերջացաւ: Յեսուն յետոյ այս օրինակ շատ յաղթութիւններ գործեց, և յետոյ իւր տիրապետած երկիրները հաւասար բաժանեց Իսրայէլացւոց մէջ: Սորանից յետոյ մեռաւ հարիւր քսան տարեկան հասակումը Իսրայէլացիներից երդում առնելուց յետոյ՝ որ Աստուածանից 'ի զատ ու-

րից աստուածներ չ՚ճանաչեն, Իսրայելացւոց որդիքը չը հնազանդեցան Տէրին, վասնզի բաւական համարեցան միայն մին լոկ հարկ պահանջել կռապաշտ ժողովրդներից, որոնք բնակում էին Աւետեաց երկրումը և նոցա թողնել ազատ: Տէրը նոցա պատժելու համար՝ նոցա երեսից թողեց. և Իսրայելացիք, որ միշտ ապերախտ էին գտնվում նորից ընկղմեցան կռապաշտութեան մէջ և ընկան իւրեանց թշնամեաց լծոյ տակ:

ԵՒԳԵՆԻ՛Ա

Սիրելի բարեկամ, Աստուածաշնչի մէջ գրած է թէ Յեսուն հրամայեց արեգակին կանգնել, մի՞թէ նա համոզուած չէր որ երկիրս է շուռ եկողը և ոչ թէ արեգակը:

ՏԻԿԻ՛Ն

Յեսուն կարող էր չ՚իմանալ թէ երկիրս է ման եկողը և ո՛չ թէ արեգակը, պատճառը որ այն ժամանակի իմաստունները այդպէս էին կարծում: Ճշմարիտ է որ Յեսուն մին Աստուածազգեցիկ մարդ էր: բայց Իսրայելացւոց Աւետեաց երկիրը առաջնորդելու և նոցա յորդորելու համար որ Տիրոջ հաւատարիմ մնան, և ոչ թէ մարդկային իմաստութիւններ սովորացնելու: Այժմ մին քիչ էլ աշխարհագրութեան վերայ խօսենք: Յուլիա՛նէ ինչպիսի՞ թագաւորութիւններ են գտնվում արևելեան Բրիտանեան կղզիներումը:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Այնտեղ գտնվում է Տանեմարքան, որը որ հիւսիսա-

յին կողմից ունի Նորվեգեան: Այս վերջի թագաւորութիւնը սահմանակից է Շվեդիայի հետ արևելքից, Շվեդիայի արևելեան կողմումը գտնվում է Ռուսաստանը: Սոքա այն հինգ կողմերն են, որոնք գտնվումեն Եւրոպայի հիւսիսային կողմումը, որոնց վերայ յետոյ երկարօրէն կ՚խօսենք: 1, Մեծ Բրիտանիա. 2, Տանեմարքա. 3, Նորվեգիա. 4, Շվեդ. 5, Ռուսաստան: Նորվեգիան և Շուէտը այսօրուայ օրը միայն մին թագաւորից է կախվում:

ՇԱՐԼՈՏՏԱ

Միթէ միշտ այդպէս չէ՞ եղած, սիրելի բարեկամ:

ՏԻԿԻ՛Ն

Ո՛չ, Նորվեգիան երբեմն անկախ թագաւորութիւն լինելուց յետոյ՝ երկար ժամանակ Տանիմարքայի մին նահանգը դառաւ: Միայն հռչակաւոր Մարգարիտան կարողացաւ միաւորել այդ նահանգը Տանիմարքայի հետ:

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես շատ կ՚ցանկանայի իմանալ, Տիկի՛ն, թէ ո՞վէ էր այդ Մարգերիտան:

ՏԻԿԻ՛Ն

Տանեմարքայի թագաւոր Վալդեմեր III, իւր Մարգերիտա անունով աղջիկը ամուսնացրուց Նորվեգիայի թագաւոր Հակենի հետ: Մարգերիտան մին որդի ունեցաւ այդ թագաւորից: Երբ որ նորա մարդը և հայրը մե-

ւան՝ Մարկերիտան իւր որդուն Թագաւոր հռչակեց, և իւր մեծ քրոջ հակառակ՝ տէրութեան կառավարիչ դառաւ:

Մարկերիտան այնպէս հանճարաւոր էր, որ հիւսիսային Շամիրամ էին անուանում նորան: Նորա որդին մեռաւ, բայց նա այնպէս լաւ հաստատեց իւր իշխանութիւնը, որ չհամարձակեցան Թագաւորական Թագը նորանից յետ պահանջել: Նա այնպէս լաւ կառավարում էր, որ իւրեան ամեն հպատակները բարօրութեան մէջ էին գտնվում: Շուէտացիք միշտ հանդարտ չէին: Նոքա կամենում էին որ ո՛չ մի իշխանութիւն չունենան իւրեանց վերայ. էտուրից անդադար պատերազմներ էին լինում իւրեանց մէջ: Նոքա վերջապէս իւրեանց մաքումը որոշեցին հնազանդել Մարկարիտային, բայց անձնատուր եղան միայն այնպիսի պայմաններով, որոնք հաստատ պահեցին նոցա ազատութիւնը և օրէնքները: Մարկարիտան խոստացաւ ինչ որ նոքա ցանկանում էին. բայց երբ որ Շուէտի Թագուհի դառաւ, չ'կատարեց իւր խոստմունքը և ծիծաղեց Շուէտացւոց վերայ, երբ որ նոքա կամենում էին յիշեցուցանել նորան իւր տուած խոստմունքը: Մարկարիտայից յետոյ նստող Թագաւորները աւելի խստութեամբ չարչարեցին Շուէտացւոց, այնպէս որ նոքա վերջապէս ապստամբուեցան: Տանիմարքայի Թագաւորներից մէկը, որի անունը Կրիստիէրն էր, շատ չարասիրտ մարդ էր, պատերազմ բանալով Շուէտացւոց դէմ ստիպեց նորանց որ իւրեան Թագաւոր ճանաչեն: Նոցա մէջ գտնվում էր Գուստավ անուամբ մին երիտասարդ մարդ, որը որ շատ պատուաւոր և քաջասիրտ անձն էր, Կրիստիէրն դաւաճանութեամբ բռնեց նորան և ուղարկեց Տանիմարքայ: Կրիստիէրն մին խըն-

ճոյքի ժամանակ սպանել տուաւ բոլոր նշանաւոր մարդկանցը, նոցա մէջ սպանուեցաւ նոյնպէս Գուստավի հայրը: Գուստավը լսելով իւր հօր մահը, ապաստանեցաւ Շուէտացւոց սարերի մէջ: Որովհետև Կրիստիէրն խոստացել էր հատուցանել մին մեծ գումար փող այն մարդուն, ով որ կարողանայ սպանել նորան. Գուստավը բռնադատուեցաւ իւրեան ծածուկ պահելու և մին կոպիտ բղգեստ հագած՝ բոլոր օրը մշակելու: Այս բանը յայտնուեցաւ մին կնկան ձեռամբ, որը որ նորան ոսկեթել կարած օձիքը տեսել էր: Ուստի փախաւ գնաց մին ազնուականի տուն, որը որ իւր բարեկամներից մէկն էր համարվում: Այդ ազնուական մարդը Թողնելով նորան իւր տան մէջ, ինքը գնաց զօրք հաւաքելու, որպէս զի Կրիստիէրնի դէմ պատերազմ բաց անէ. Գուստավը այս բանին համաձայնեցաւ, բայց երբ որ այն մարդը տանիցը դուրս եկաւ, նորա կնիկը ասաց. որ իւր մարդը գնացել է զօրք հաւաքելու որ նորան բռնատրկնի: Այդ կնիկը նորան ուղարկեց իւրոյն մին քահանայի տուն, որը որ իւր բարեկամներից մինն էր, և այդ քահանան պահեց նորան եկեղեցու պահարանի մէջ և ամենայն օր նորա համար ուտելու հաց էր բերում: Սորանից յետոյ այդ քահանան շատ գիւղականների յորդորեց Գուստավի հետ Կրիստիէրնի դէմ պատերազմելու: Գիւղականները համաձայնեցան և շատ դառն նեղութիւնների համբերելուց յետոյ՝ Գուստավը ազատութիւն տուաւ Շուէտացւոց, որոնք նորան շնորհակալութիւն մատուցանելու համար, իւրեանց Թագաւորը շինեցին:

Իմ երեխայք այս պատմութիւնը կ'քաշէ մինչև երեկուն, Թաք բարև:

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ։

ՆԻԳԵՆԻԱ

Տիկի՛ն, դեռ վաղ է, մի՞թէ այսօր մեզ մին պատմութիւն չէ՛ք տալ

ՏԻԿԻՆ

Դու հրաշալի վէպքերը շատ ես սիրում, և այնպէս լաւ ես սովորում քո սրբազան պատմութիւնը, որ չեմ կարող չկատարել քո խնդիրքը։

Մին անգամ Գինդէ անունով մին թագաւոր է էլել, որը որ այնպէս ագահ էր որ իւր վերջի հպատակներից անգամ փող էր ապրում։ Սա պսակուեցաւ մին թագաւորի աղջկայ հետ, այնպիսին հետ, ինչպէս որ իւր սիրտը ուզում էր, այսինքն շատ փող ունեցող և իւրեանից առաւել ագահի հետ։ Այս թագուհին մին որդի ծնաւ, որին անունը Տիխի դրին. սորանից յետոյ մին ուրիշ որդի էլ ծնաւ, որը որ Միրտիլ անուն ստացաւ։ Տիխին իւր եղբօրից գերազանց էր, բայց թագաւորը և թագուհին կարողանում չէին դիմանալ նորան, որովհետև ազնիւ սիրտ ունէր նա, բայց Միրտիլը, որը որ ինքնահաւան և օգտածարաւ էր, թագաւորը և իւր կնիկը գժուած սիրումէին նորան, վասն զի իւրեանց նման էր։ Թագաւորի որդիքը մեծացան, և վախենալով որ Տիխին մսխէ իւրեանց փողերը, մին կոպէկ չէին տալիս ձեռքը։ Մին օր, երբ որ նա որսորդութիւն էր անում, իւր

ախոռապետներից մէկը անցկենալով մին պառաւ կնկան կշտով, քցեց նորան ցեխի մէջ։ Պառաւը կանչում էր թէ ոտս կոտրուել է, բայց ախոռապետը ծիծաղում էր նորա վերայ։ Տիխին կռուեց իւր ծառայի հետ և մօտենալով իւր հաւատարիմ պաժ Լ՚էվէյլէի հետ՝ օգնեց պառաւ կնկանը որ վերկենայ և յետոյ ամեն մէկը նորա կռներից բռնած՝ տարին իւրեան փոքրիկ խրճիթը, որոյ մէջ բնակում էր նա։ Թագաւորազն մեծ յուսահատութեան մէջ էր, փող չունենալով որ տայ այդ պառաւ կնկանը, բայց Լ՚էվէյլէն նորան ասաց. „Իմ էլած չէլածը մին ոսկի է, էն էլ ձեզ կտամ յօժարութեամբ։„—Ես ձեզ կ՚վարձատրեմ, երբ որ թագաւոր կ՚նստեմ, ասաց Տիխին, ես այդ ոսկին վեր եմ առնում որ տամ այս ծեր կնկանը։„ Տիխին յետ դառնալով ապարանքը, թագուհին նախատեց այն պառաւ կնկանը ցեխի միջից բարձրացնելուն համար։ „Մին մեծ կորուստ կ՚լինէր եթէ այն պառաւը մեռնէր„ ասաց նորան թագուհին։ „Մի՞թէ կվայե՞լէ որ թագաւորի որդին բարձրացնէ ցեխի միջից մին պառաւ կնկան։„—Տիկի՛ն, ասաց Տիխին, ես կարծումեմ որ թագաւորները միայն այն ժամանակն են մեծ լինում, երբ որ մին լաւ բան են գործում։„

„Գնա՛, կորի՛ր, ասաց նորան թագուհին, դու մին խելացնոր տղայ ես։„ Երկրորդ օրը Տիխին որսորդութենից յետ դառնալիս, գնաց տեսնէ ի՞նչպէս է այն պառաւ կնիկը։ Նորան ամենևին առողջ գտաւ և պառաւը շատ շնորհակալ գտաւ թագաւորազնի մարդասիրութեան վերայ։

—Ես տակաւին մին խնդիրք ունիմ, ասաց նորան պառաւը, ես լաւ գլեարներ և ընկուզներ ունիմ, խնդրեմ ընդունէ՛ք էնոնք։„ Թագաւորազն չկամեցաւ մերժել,

վախենալով որ պառաւը չկարծէ թէ արհամարհումէ։ "Նա կոտրատեց ապա այդ ընկուզները և շատ համով գտաւ էնոնք։

—Ըստորում այդ բաները ձեզ հաճոյ թուեցին, ասաց պառաւը, խնդրեմ մնացորդն էլ ձեզ հետ տանէք։"

Մինչդեռ պառաւ կնիկը խօսումէր, մին հաւ կանչեց և մին ձու ածեց. պառաւը աղաչեց Տիտի Թագաւորազնին որ այդ ձուն էլ հետը տանէ, որը որ շնորհակալութեամբ ընդունեց։ Այս միջոցումը Տիտին պառաւին չորս ոսկի տուաւ. Լէվէյլէն էր տուել նորան այդ գումարը, որ փոխ էր առել իւր հօրից, որը որ գիւղի մէջ մին պատուաւոր անձն էր։ Երբ որ Տիտին գնաց ապարանքը, հրամայեց խեղճ կնկան տուած ձուն, ընկուզները և գլեարները բերեն իւր ընթրիքի համար, բայց երբ որ ձուն կոտրեց, շատ զարմացաւ գտնելով նորա մէջ մին մեծ անդամանդ ակն, գլեարները և ընկուզները նոյնպէս լի էին անդամանդներով։ Մին մարդ այս բանը ասաց Թագուհուն, որը որ իսկոյն վազեց Տիտի արքայական սենեակը, նա այնպէս զմայլեցաւ այդ ադամանդների վերայ, որ մինչև անգամ գրկախառնեց Տիտիին և իւր սիրելի որդին անուանեց առաջին անգամ իւր կեանքումը։ "Կ'կամենա՞ս արդեօք այդ անդամանդները ինձ տալ, հարցրաւ Թագուհին։"

—Ինչ որ ես ունիմ ձեր իշխանութեան ներքոյ է, պատասխանեց Թագաւորազնը։"

"Դու մին բարի տղայ ես, ասաց նա, ես քեզ կվարձատրեմ։" Ապա վեր առաւ նա այս գանձերը և ուղարկեց Թագաւորազնի համար չորս ոսկի, փաթաթած մին կտոր թղթի մէջ։ Ով որ տեսնումէր այդ պարգևները, կամենումէր ծիծաղել Թագուհու վերայ, որը որ ամօթ

չէր համարում ուղարկել այդ գումարը այն ադամանդների փոխանակ, որոնք քիչ քիչ հինգ հարիւր հազար ոսկի կ'արժէին. բայց Թագաւորազնը դուրս քցեց նոցա իւր սենեակից, ասելով թէ մեծ յանդգնութիւն է ծիծաղել այդպէս իւր մօր վերայ։

Այս միջոցումը Թագուհին ասաց Գւենդէին. "Այն պառաւը, որին որ Տիտին վեր է կացրել ցեխից, անշուշտ մին մեծ դիցանուշ պիտի լինի, էքուց գնանք նորա մօտ, բայց Տիտիի փոխանակ նորա եղբօրը տանենք, որովհետև կամենում չեմ որ նա շատ սիրով կապուած մնայ այդ յիմարի հետ, որը որ այնքան խելք չունի որ պահէ այդ անդամանդները։" Միևնոյն վայրկեանումը հրամայեց նա որ կառքերը լծեն և երիվարներ վարձեն, քանզի Թագաւորի ձիեանքը վաճառել էր, որովհետև իւրեան շատ թանկ էր նստում նոցա կերակրելը։ Կառքերի մէկի մէջ բժիշկներ նստեցրուց, միւսի մէջ էլ Թագաւորի դերդաստանը նստաւ։

Երբ որ նոքա եկին պառաւ կնկան խրճիթը, Թագուհին ասաց որ եկել է ներողութիւն խնդրելու ախոռապետի արած յիմարութեան համար և իրան հետ բերել է ամենաճարտար բժիշկներ, որ ոտը առողջացնեն։ Բայց պառաւ կնիկը պատասխանեց թէ իւր ոտը արդէն առողջացել է և թէ շատ շնորհակալ է նորա մարդասիրութենից որ իրան պէս ողորմելի կնկան մօտ այցելութեան է եկել։—"Ո՛հ, ասաց Թագուհին, մենք լաւ իմանում ենք որ դուք մին մեծ դիցանուշ էք, որովհետև Տիտի Թագաւորազնին շատ անդամանդներ էք տուել։"

"Ես ձեզ հաւատացնումեմ Տիկին, պատասխանեց պառաւը որ ես Տիտիին ընկուզից, ձուից և գլեարից՝ի զատ ոչինչ չեմ տուել, որոնցից բաւականին ունիմ դեռ ես

Ձեր Մեծութեան ծառայութիւն անելու համար:»

— Շատ շնորհակալութեամբ կ'ընդունեմ ձեր պարգևները» ասաց Թագուհին, որը որ յոյս ունէր անդամանդներ ստանալու: Նա ստացաւ ուրախ այդ պարգևները պառաւին շողոքորթներ անելով, և բոլոր պալատականներն էլ իւրեանց Թագաւորին և Թագուհուն պէս մեծ մեծ գովասանութիւններ տուին այն պառաւ կնկանը: Թագուհին հարցրաւ թէ քա՞նի ամաց է.ք:

„Վաթսուն ամաց եմ„ պատասխանեց նա:

— Դուք քառասուն ամաց էք երևում, ասաց Թագուհին, և դուք տակաւին պսակուելու ժամանակ էլ ունիք, քանզի դեռ ևս շատ սիրելի էք երևում:»

Այն խօսակցութեան վերայ Միրտիլ Թագաւորազնը, որը շատ վատ կրթուած էր՝ սկսեց ծիծաղել պառաւի քնթի վերայ և ասաց թէ մեծ զուարճութիւն կ'ունենայ նորա հարսանիքումը կաքաւելու, բայց պառաւ կնիկը այնպէս ձևացրուց որպէս թէ տեսնում չէ Թագաւորազնին իւր վերայ ծիծաղիլը: Երբ որ նոքա յետ դարձան տուն, Թագուհին հրամայեց իսկոյն եփել ձուն և կոտրտել ընկուզները, բայց ձուի մէջ փոխանակ անդամանդներ գտնելու՝ հաւի ձագեր գտին, իսկ ընկուզները և զգեստները մրջիւններով լի էին: Այս բանի վերայ Թագուհին մեծ բարկութեան մէջ մտաւ: „Այդ պառաւը մին կախարդ է, ասաց նա, որը որ կամենում է ծիծաղել իմ վերայ, կամենում եմ անպատճառ նորան սպանել տալ:» Իսկոյն ժողովեց իւր մօտ բոլոր դատաւորներին այն պառաւ կնկան դատաստանը անելու համար. բայց Լ'էվէյլէն, որը որ լսել էր այս ամենը, վազեց գնաց պառաւի խրճիթը, և ասաց նորան որ իրան անձը ազատէ:

„Ողջոյն քեզ, ասաց նորան պառաւը, ի՞նչ համբաւ

ունիս արդեօք հաղորդելու, որ այդպէս շտապով եկել ես այստեղ:»

— Ա՛հ, իմ սիրելի մայր, ասաց նորան Լ'էվէյլէն, աշխատի՛ր փրկել քո անձը իմ հօր տան մէջ, որը որ շատ պատուաւոր մարդ է, նա մեծաւ ուրախութեամբ կ'ընդունի քեզ և ծածուկ կ'պահէ իւր մօտ, եթէ դու քո խրճիթի մէջ մնաս, զինուորները պիտի գան քո խրճիթը և քեզ պիտի սպանեն:»

„Ես քեզ շատ պարտաւոր եմ, պատասխանեց պառաւը, բայց ես Թագուհու չարութիւնից վախում չեմ:»

Միևնոյն վայրկենումը փոխելով պառաւի կերպարանքը, Լ'էվէյլէի առաջ երևաց իւր բնական կերպարանքովը: Լ'էվէյլէն կամեցաւ ընկնել նորա ոտները, բայց նա չթողեց նորան այդ բանը անելու:

— „Ես քեզ արգելումեմ որ ո՛չ Թագաւորազնին և ո՛չ էլ մին մարդոյ ասես քո այստեղ տեսած բաները, ասաց նորան պառաւը: Կամենումեմ քեզ վարձատրել, ինձանից մին պարգև խնդրի՛ր:»

„Տիկի՛ն, ասաց նորան Լ'էվէյլէն, ես շատ սիրում եմ իմ Տիրոջ Թագաւորազնին և 'ի բոլոր սրտէ ցանկանում եմ որ նորան օգտակար կարողանամ լինել, ուրեմն խնդրում եմ ձեզ որ աներևոյթ կարողանամ լինել, երբ որ ցանկանամ, որպէս զի կարող լինեմ իմանալ թէ որոնք են այն պալատականները, որ ճշմարիտ սիրում են իմ տիրոջը:»

— Ես քեզ տալիս եմ այդ պարգևը, ասաց նա, բայց պէտքէ նոյնպէս հաստուցանել Տիրոջ Թագաւորազնի պարտքը: Արդե՞օք քո հօրից չորս ոսկի չէ փոխ առել նա:»

„Նա էլ յետ է դարձրել, պատասխանեց հաւատարիմ Լ'էվէյլէն, քանզի իմանում է որ ամօթ է Թագաւո-

լունի համար չհատուցանել իւր պարտքը, ուստի յետ տուաւ ինձ այն չորս ոսկին, որ Թագուհին ուղարկել էր նորա համար:„

—Ես այդ իմանում եմ, պատասխանեց դիցանուշը, բայց ես նոյնպէս իմանում եմ որ Թագաւորազնը յուսահատութեան մէջ է գտնուել, իւր պարտքը հատուցանել չ'կարողանալուն համար, որովհետև նա իմանումէ որ Թագաւորազները ազնուաբար պիտի վարձատրեն և հենց այդ պարտքն է, որը որ կամենում եմ հատուցանել: Վեր ա՛ռ այս ոսկով լի քսակը և տուր քո հօրը, նա այդ քսակի մէջ կ'գտնի միևնոյն գումարը, բայց այս պայմանով միայն որ բարի գործերի վերայ գործածէ:„ Միևնոյն վայրկենումը դիցանուշը աներևոյթացաւ և Լ'էվէյլէն քսակը տարաւ իւր հօր մօտ և որուն գաղանիքն էլ իսկոյն պատմեց:

Այս միջոցումը դատաւորները, որոնց Թագուհին ուղարկել էր պառաւ կնկան դատապարտելու համար՝ մեծ տարակուսութեան մէջ ընկնելով, ասացին Թագուհուն. „Ի՞նչի համար կամենումէք որ մենք դատապարտեմք այն թշուառ կնկանը, նա ամենևին խաբել չէ Ձեր մեծութեանը, նա Ձեզ ասել է թէ ինքը մին պառաւ կնիկ է և անդամանդներ չունի:„

Թագուհին բարկութենից բորբոքուած՝ ասաց նոցա. „Եթէ դուք այն պառաւ կնկանը չ'դատապարտէք, շատ կ'ատրջանաք:„ Դատաւորները սարսափուած նորա սպառնալիքներիցը, վճռեցին որ պառաւը իբրև մին կախարդ՝ այրուի կենդանւոյն: Դատաւորներից միայն մինը դատնուեցաւ, որը որ ասաց թէ առաւել բարւոք է ինքը այրուի քան թէ մին անմեղի դատապարտութեան պատճառ դառնայ: Մին քանի օրից յետոյ Թագուհին միջոց գտաւ

այդ դատաւորին իւր պաշտօնիցը դուրս քցելու և նա հարկադրուեցաւ ողորմութիւն խնդրելու իւր կնոջ և որդկերանց հետ: Լ'էվէյլէն մին մեծ գումար փող վեր առաւ իւր հօր քսակիցը և տալով դատաւորին, խորհուրդ տուաւ նորան գնալ մին ուրիշ երկրում բնակելու: Այս միջոցումը Լ'էվէյլէն ամենայն տեղ էր գտնվում, այն ժամանակից հետէ՝ երբ որ նա աներևոյթ դառնալու իշխանութիւնը ստացել էր դիցանուշից: Նա յաճախ գընում էր Թագաւորի սենեակը. մին օր լսեց որ Թագուհին ասումէր Թագաւորին. „Մի՞թէ մենք շատ թշուառ չ'ենք որ Տիտին է մեր անդրանիկ որդին, մենք շատ գանձեր ենք դիզել, նա իսկոյն պիտի փչացնէ էնոնք, հենց որ Թագաւոր նստի. իսկ Միրտիլը, որը որ մին լաւ տնտես է, ընդ հակառակը մեր գանձերի վերայ գանձեր կարող է կուտել, մի՞թէ հնար չկայ նորա ժառանգութենից զրկելու:„—Մենք այդ մասին կ'մտածենք„ պատասխանեց Թագաւորը:„ Լ'էվէյլէն լսում էր նոյնպէս որ պալատականները Թագաւորին և Թագուհուն հաճոյ երևալու համար, չարախօսութիւն էին անում Տիտի Թագաւորազնիցը և գովում էին Միրտիլին, և յետոյ այնտեղից գալիս էին Տիտիին մօտ և ասում էին թէ Թագաւորի մօտ նորա մասին լաւ են խօսում: Բայց Տիտին, որը որ Լ'էվէյլէի օգնութեամբը իմանումէր ճշմարիտը, ծիծաղումէր իւր մտքումը նոցա վերայ և ատում էր նոցա: Պալատումը միայն չորս իշխան էին գտնվում, որոնք Տիտի Թագաւորազնի կողմնակիցն էին դառած և այդ մասին ամենևին չէին պարծենում, այլ ընդհակառակը յորդորում էին որ Թագաւորին և Թագուհուն սիրէ և նոցա հնազանդ լինի:

Այս միջոցումը մին դրացի Թագաւոր դեսպաններ էր

ուղարկել Գուէնդէի մօտ շատ ծանր գործերի համար: Թագուհին իւր սովորութեան համեմատ չ'կամեցաւ որ Տիտին դուրս գայ դեսպանների մօտ: Նա ասաց Տիտին որ գնայ գիւղումը գտնուած հօյակապ տունը, որը որ Թագաւորին էր պատկանում, որովհետև, ասում էր նա, դեսպանները անշուշտ կ'կամենան տեսնել այդ տունը և դու պիտի լաւ պատուով ընդունես նոցա:

Երբ որ Տիտին գնաց, Թագուհին պատրաստեց ինչ որ հարկաւոր էր դեսպաններին ընդունելու, իհարկէ առանց մեծամեծ ծախս անելու: Նա իւրեան հին Թավիշեայ կիսազգեստներից մինն տուաւ դերձակին որ երկու զգեստի մէջ.ք կարէ Թագաւորի և Միրտիլի համար, իսկ զգեստի աղաքը Թավիշեց կարէ, որովհետև Թագուհին մտածումէր թէ Թագաւորը և Միրտիլը երբ որ նստեն դեսպանները նոցա զգեստի մէջ.քը չ'են կարող նկատել: Աորանից յետոյ ընկուզների և գլխարների մէջ գտած ադամանդները վեր առաւ և Թագաւորի զգեստների համար կոճակներ շինել տուաւ. ձուի մէջ գտած մեծ ադամանդն էլ յարմարացրուց Թագաւորի խոյրի վերայ, իսկ միւս փոքր ադամանդները գործածուեցան Միրտիլի զգեստների վերայ կոճակների տեղ:

Գուէնդէն և իւր կնիկը նստեցին գահի վերայ իսկ Միրտիլը չոքեց նոցա ոտների տակին: Բայց հենց որ դեսպանները մտին սենեակը, իսկոյն ադամանդները չքացան և նոցա փոխարէն գլխարներ, ընկոյզներ և մի ձու երևեցան:

Դեսպանները կարծեցին թէ Գուէնդէն այդպիսի տարօրինակ եղանակաւ զգեստաւորուել է նոցա վերայ ծաղր անելու համար, ուստի բարկութեամբ դուրս եկան, ասելով թէ իւրեանց Թագաւորը ցոյց կ'տայ նոցա թէ ինքը գլխարների Թագաւոր չէ:

Թագաւորը և Թագուհին շատ խնդրեցին դեսպաններին որ յետ դառնան, բայց նոքա չ'կամեցան լսել և գնացին իւրեանց երկիրը:

—„Անշուշտ Տիտին է, որ այդ խաղը մեզանով արաւ, ասաց Թագուհին իւր մարդուն, երբ որ մենակ էր գտնվում, պէտքէ նորան ժառանգութենից զրկել և մեր Թագը Թողնել Միրտիլին:„

„Այս 'ի բոլոր սրտէ համաձայնումեմ ձեզ հետ, պատասխանեց Գուէնդէն:„

Այս միևնոյն վայրկենումը նոքա մին ձայն լսեցին, որը որ այսպէս էր բարբառում. „Եթէ դուք մինչև այդ աստիճան չարասիրտ էք, ես ձեզ երկուսի ոսկոռները կփշրտեմ:„ Նոքա շատ վախեցան, երբ որ այդ ձայնը լսեցին, որովհետև իմանում չ'էին որ Լ'էվէյլէն իւրեանց սենեակումն է և իւրեանց խօսակցութիւնը լսում է: Ուստի այնուհետև չ'համարձակեցան վնասել Տիտին, բայց պառաւին յետից մտածեցին որ նորան սպանել տան և շատ յուսահատուեցան երբ որ չ'կարողացան նորան գտնել:

Այս միջոցումը Վիոլէնաը, որը որ Գուէնդէի մօտ դեսպաններ ուղարկողն էր, կարծել էր թէ յիրաւի կամեցել է իւրեան վերայ ծաղր անել և մտքումը վճռեց նորան վրէժխնդիր լինելու համար, պատերազմ բացանել Գուէնդէի դէմ:

Գուէնդէն սկզբումը շատ նեղացաւ, որովհետև քաջութիւն չ'ունէր և վախում էր որ սպանուի, բայց Թագուհին ասաց նորան. „Մի' սրտմի'ր, մենք կ'ուղարկենք նորա դէմ Տիտին, զօրաց վերայ ընդհանուր սպարապետ կարգելով, նա շատ անխոհեմ է, անպատճառ իւր մահը կ'գտնէ այնտեղ, և այն ժամանակը Միրտիլին կ'հասնէ Թագաւորական Թագը:„

Այս հնարագիտութիւնը շատ հաճոյ թուեց թագաւորին, և Տիտին գիւղերը բերել տալով, ընդհանուր հրամանատար կարգեց զօրաց վերայ և նորա կեանքը վտանգների մէջ քցելու համար, ասաց որ կամ պատերազմէ կամ խաղաղութիւն հաստատէ:

Տիտի արքայազնը թագաւորութեան սահմանը հասնելով, մտքումը դրեց սպանել թշնամիներին, և սկսումին բերդ շինել տալ մին փոքր ճանապարհի մօտ, որտեղով որ անց պիտի կենար: Մին օր երբ որ նա մտիկ էր անում գործաւոր զինուորներին, ծարաւեց և տեսնելով որ մին աղջիկ եկաւ ջուր հանելու, նորանից ջուր խնդրեց: Այդ չքնաղագէմ աղջկայ անունը Ռիբի էր, որը որ Աբորի աղջիկն էր, որ բնակում էր մին մերձակայ սարի վերայ: Տիտին շատ անգամ խօսումէր այդ օրիորդի հետ, նորա հօր ներկայութեամբ առաջ և տեսնելով որ նա շատ հանճարաւոր էր, ասումէր ինքը իրան այսպէս. „Եթէ ես իմ գլխիս տէրը լինէի, կ'պսակուէի Ռիբիի հետ. ճշմարիտ է նա թագուհի չէ ծնուած, բայց արժանի է թագուհի դառնալու:" Նա մտքումը վճռեց շուտ շուտ նամակ գրել նորա վերայ: Բայց Ռիբին, որը որ իմանում էր, որ մին պատուաւոր աղջիկ ամենևին նամակ չ'պիտի ստանայ օտար մարդկանցից, Տիտի թագաւորազնի նամակը առանց կնիքը բանալու, տանումէր իւր հօր մօտ: Աբորը տեսնելով որ թագաւորազնը սիրում է իւր աղջկանը, հարցրաւ նորան թէ ինքն էլ սիրումէ Տիտին: Ռիբին, որը որ իւր կեանքումը ամենևին սուտ խօսած չէր, պատասխանեց թէ Տիտին այնպէս պատուաւոր անձն է, որ չէ կարող նորան չ'սիրել. և 'ի միջի այլոց ասաց թէ ես լաւ իմանում եմ որ նա չէ կարող ինձ հետ պսակուել, որովհետև ես մին խեղճ

հովուական աղջիկ եմ, ուրեմն խնդրեմ ուղարկել ինձ իմ մօրաքրոջ մօտ:" Աբոր հենց միենոյն օրումը ուղարկեց նորան, և թագաւորազնը այնպէս տրամեց նորան կորցնելուն համար, որ հիւանդացաւ: „Թագաւորազն, ասաց նորան Աբոր, ես շատ նեղացել եմ քեզ ցաւ պատճառեցնելուն համար, բայց որովհետև դու սիրում ես իմ աղջկանը, ուրեմն չ'ես կամենալ նորա անբաղդութիւնը. դու իմանում ես որ մեծ արհամարհանք է մին աղջկան համար, երբ որ մին երիտասարդ մարդոյ այցելութիւն ստանայ, որ կամենում չէ պսակուել նորա հետ:"

—Լսի'ր Աբոր, ասաց Տիտին, լաւ է որ ես մեռնեմ, քան թէ իմ հօր պատույ դէմ ներգործեմ պսակուելով առանց նորա հրամանին: Բայց իրաւունք տո'ւր ինձ քո աղջկանը պահել և քեզ հաւատացնումեմ որ կ'պսակուիմ նորա հետ, հենց որ թագաւոր նստեմ և խոստանումեմ նորան չ'տեսնել մինչև այն ժամանակը:"

Միենոյն րոպէումը դիցանուշը երևաց և շատ զարմացրուց թագաւորազնին, որովհետև ո'չ երբէք այդ կերպարանքումը տեսած չէր նորան: „Ես այն պառաւ կնիկըն եմ, որին դու օգնութիւն արեցիր, ասաց դիցանուշը: Դու այնպէս բարեսիրտ ես և Ռիբին այնպէս իմաստուն է որ ձեզ երկուսին էլ իմ պաշտպանութեան ներքոյ եմ ընդունում: Դու նորա հետ կ'պսակուիս երկու տարից յետոյ, բայց մինչև այն ժամանակը տակաւին շատ ձախորդութիւններ պիտի ունենաս: Ես քեզ խօսք եմ տալիս ամենայն ամիս քո մօտ այցելութեան գալու և Ռիբիին ինձ հետ բերելու:" Թագաւորազնը զմայլեցաւ այս խոստմունքի վերայ և մտքումը դրաւ շատ յաղթութիւն անել Ռիբիին հաճոյ երևալու համար:

Վերջին թագաւորը եկաւ պատերազմելու և Տիտին

ոչ թէ միայն յաղթող հանդիսացաւ իւր թշնամւոյ դէմ, այլ և գերի արաւ Վիօլէն թագաւորին: Խորհուրդ տուին Տիտին խլել նորա թագաւորութիւնը, բայց նա ասաց նոցա. «Ես չեմ կամենում այդ բանը անել, նորա հպատակները, որոնք անշուշտ իւրեանց թագաւորին նախապատիւ կ'համարեն մին օտարականի վերայ, կ'ապստամբեն մին օր և վերստին թագը նորան կ'հասցնեն: Վիօլէնը չ'պիտի մոռանայ երբէք իւրեան բանտը, ուստի անպակաս պիտի լինի պատերազմ, որը որ երկու ժողովրդին էլ մեծ թշուառութեան կ'հասցնէ, ընդհակառակը կամենում եմ ազատութիւն տալ Վիօլէնին իմ յօժար կամօքը. քանզի իմանում եմ որ նա վեհանձն է, նա իմ բարեկամս կ'լինի և նորա բարեկամութիւնը աւելի կ'արժէ մեզ համար քան թէ նորա թագաւորութիւնը, որը որ մեզ չէ պատկանում:»

Տիտին ինչպէս որ նախագուշակել էր, այնպէս էլ պատահեց: Վիօլէնը այնպէս զմայլեցաւ նորա վեհանձնութեան վերայ, որ երդւում կերաւ որ յաւիտենական դաշնակցութիւն կ'կապէ Գուէնդէի հետ և նորա որդուն հետ և նոցա հաւատարիմ բարեկամն կ'լինի:

Այս միջոցումը Գուէնդէն շատ բարկացաւ, երբ որ իմացաւ թէ իրան որդին ազատութիւն է տուել Վիօլէնին, առանց մեծ գումար արծաթ պահանջելու: Տիտին, որը որ սիրում էր և յարգում էր իւր հօրը, հիւանդացաւ տրտմութենից նորան անհաճոյ գտնուելու համար: Մին օր, երբ որ նա մենակ էր գտնվում իւր մահճի մէջ, առանց մտածելու թէ ամսի առաջինն է, տեսաւ որ երկու գեղեցիկ գեղձանիկ մտին լուսամուտը, և թագաւորազնը շատ զմայլեցաւ, երբ որ նոքա իւրեանց սեփհական կերպարանքը ընդունեցին և նորա աչքերին ե-

րևացին դիցանուշը և իւր սիրելի Ռիրին: Նա ուզում էր բարեմիտ դիցանուշին շնորհակալութիւն մատուցանելու, երբ որ յանկարծ թագուհին ներս մտաւ, բռնած իւր գրկումը մին մեծ կատու, որին որ շատ սիրումէր: Հենց որ թագուհին տեսաւ գեղձանիկներին ասաց թէ նոցա շատ սիրումէ և պիտի ճաշի ժամանակը ուտէ: Թագաւորազնը շատ ընդդիմացաւ, բայց պալատականները և ծառաները վազ էին տալիս գեղձանիկների հետից, չ'կամենալով հնազանդել Տիտին: Մին ծառայ վեր առաւ աւելը և գետնի վերայ քցեց ողորմելի Ռիրին: Տիտին վեր թռաւ անկողնից նորան օգնութիւն մատուցանելու համար, բայց արդէն ժամանակը անց էր կացել, որովհետև թագուհու կատուն նորա գրկից դուրս թռչելով՝ քիչ էր մնացել որ նորան իւր թաթերովը սպանէ, երբ որ դիցանուշը յանկարծ մին մեծ շան կերպարանք ընդունեց և յարձակուելով կատուի վերայ, խեղդեց նորան և իսկոյն վերկացրուց Ռիրին և երկուսն էլ միան կերպարանք ընդունած՝ փախան մին ծակով, որը որ սենեակի մին քունջումն էր գտնվում: Թագուհին անմխիթար լինելով իւր կատուի մահուան վերայ, ասաց թագաւորին թէ իւր կեանքումը մին րոպէ էլ հանգստութիւն չ'պիտի ունենայ, մինչև Տիտին ժառանգութենից չ'զրկէ և թագը չ'տայ Միրտիլին: Թագաւորը համաձայնեցաւ և ասաց որ հետևեալ օրը նորան բանտարկել կ'տայ և նորան վերաբերեալ վճիռը կ'հաստատէ:

Հաւատարիմ Լ'էվէյլէն, որը որ ծածուկ մտել էր թագաւորի սենեակը, իսկոյն եկաւ յայտնեց մի ըստ միոջէ թագաւորազնին այս ամեն բանը: Այն երկիւղը, որ նա զգաց այս միջոցին, կտրեց նորա ջերմուտանդը, և պատրաստվում էր արդէն հեծնել մին ձի և փախչել իւր

կեանքը ազատելու համար, երբ որ տեսաւ նա դլիցանուշին, որը որ այսպէս ասաց նորան. „Զանձրացել եմ արդէն քո մօր չարութիւնից, և քո հօր թուլութիւնից, ուստի կամենում եմ քեզ մին գունդ զօրք տալ. կ'գնաս նոցա կ'կալանաւորես իւրեանց պալատի մէջ և Միրտիլին նոցա հետ 'ի միասին բանտը դնել կ'տաս, և նստելով թագաւորական գահի վերայ, կ'պսակուես Ռիբիի հետ։

—Տիկին, պատասխանեց նորան Տիտին, դու իմանում ես որ ես Ռիբիին իմ կեանքից շատ եմ սիրում, բայց նորան հետ պսակուելու ցանկութիւնը ամենեւին չ'պիտի մոռացնել տայ ինձ այն՝ ինչ որ ես պարտաւոր եմ իմ հօրը և իմ մօրը։ Բարւոք է որ ես մեռնեմ, քան թէ նոցա դէմ պատերազմեմ։„

„Եհ՛, որ քեզ համբուրեմ, ասաց նորան դլիցանուշը, ես կամենումէի փորձել քո առաքինութիւնը, եթէ դու իմ առաջարկութեանս համաձայնէիր, այն ժամանակը երեսից կ'թողնէի քեզ. բայց որովհետև այդչափ քաջասրտութիւն ունեցար ընդդիմանալու, ես միշտ քո բարեկամն կ'լինիմ և կամենումեմ քեզ իմ բարեկամութեան մին ապացոյցը տալ։ Մին ծեր մարդոյ կերպարանք ընդունի՛ր և մնա ե՛կ քո թագաւորութեան մէջ, տես այն ամենանարդար բաները, որ լինում են քո խեղճ հպատակների դէմ, որպէս զի կարող լինիս դարման մատուցանել նոցա երբ որ դու թագաւոր նստես։ Լ'էվէյլէն, որը որ այդ միջոցումը պալատումը կ'մնայ, հաշիւ կ'տայ քեզ այն ամեն անցկացած բաներից քո բացակայութեան ժամանակ։„

Թագաւորազնը հնազանդեցաւ դլիցանուշին և այնպիսի բաներ տեսաւ որ գլխի մազերը փշաքաղ արին։ Արծաթով ծախում էին արդարութիւնը, մեծերը չարչարում

էին տկարներին։ Կառավարիչները կողոպտումէին ժողովրդին և այս ամենը անում էին թագաւորի անունով։

Երկու տարուց յետոյ Լ'էվէյլէն գրեց թէ Գռէնդէն մեռել է և թագուհին կամենումէ թագը Միրտիլին տալ, բայց պալատումը գտնուած չորս պատուաւոր իշխանները ընդդիմացել են այդ բանին, ասելով թէ Տիտին կենդանի է տակաւին։ Թագուհին իւր որդոյ հետ գնացել է մին նահանգ և այնտեղի բնակիչներին ապստամբեցրել է իրան հետ 'ի միասին։ Տիտին, որը որ իւրեան սեփհական կերպարանքը կրկին ստացել էր, գնաց մայրաքաղաքը և թագաւոր նստեց։ Նորանից յետոյ մին նամակ գրեց նա իւր մօր վերայ և մին լաւ թոշակ կապեց նորան և Միրտիլին համար, և խնդրեց որ ժողովրդին չ'ապստամբեցնէ։ Թագուհին, որը որ մին լաւ զօրք ունէր, պատասխանեց թէ ինքը կամենումէ թագը, ապա ո՛չ՝ ինքը կ'գայ և բռնութեամբ գլխից վեր կ'առնէ թագը։ Այս նամակը կարող չեղաւ դարձնել Տիտին իւր մօր դէմ ունեցած յարգանքը պակասցնելու, բայց այն չարագործ կնիկը իմանալով որ Վիօլէնը շատ զօրքով գալիս է Տիտիին օգնութիւն անելու, ակամայ համաձայնեցաւ։ Այս դէպքից յետոյ Տիտին ամուսնացաւ Ռիբիի հետ և նորա հպատակները շատ երջանիկ եղան այնպէս իմաստուն, մանաւանդ առաքինի թագուհի ունենալով։

ՀԱՐԼՈՏՏԱ

Իմ սիրելի բարեկամ, այդ թագաւորը կարողացաւ արդեօք իւր հպատակների դէմ եղած չարութեանց առաջը առնել։

ՏԻԿԻՆ

Հենց առաջի անգամը այդ պիտի ասեմ ձեզ։ Մեզ մնում է միայն Տիտի կեանքի վերայ խօսել, երբ որ նա թագաւոր նստեց, բայց այդ բաւականին երկար կ'լինի այսօր։ Եւ այժմ Նիգենի՛ա, պատմի՛ր դասդ։

ՆԻԳԵՆԻԱ

Իսրայէլացիք կրկին անգամ կուռքեր պաշտելու համար։ Աստուած նոցա երեսից թողեց և նոքա ընկան Մադիանացւոց և Ամաղեկացւոց լծի տակ։ Նոքա ըստրջացան և Աստուած ընտրեց նոցա ազատելու համար Յովասի որդի Գեդէոնին։ Մին հրեշտակ երևաց սորան և յայտնեց նորան իւր գալուն պատճառը թէ Աստուած հրամայել է կործանել 'ի պատիւ Բաղաամի կանգնած սեղանը։ Գեդէոնը հնազանդեցաւ։ Ժողովուրդը կամեցաւ նորան սպանել, բայց Գեդէոնի հայրը ասաց ժողովրդին. „Բաղաամի կողմը ամենևին մի՛ պահէք, եթէ նա աստուած է, թող ինքը վրէժ խնդիր լինի։ „Այս միջոցումը Մադիանացիք և Ամաղեկացիք և արևելեան ժողովուրդները անթիւ զօրք հաւաքեցին Իսրայէլացւոց դէմ։ Գեդէոնը փող հարկանելով, Իսրայէլացիներից մեծ զօրք ժողովեց, բայց Տէրը ասաց նորան. „Դու շատ զօրք ունիս, եթէ յաղթես այդ զօրքով քո թշնամիներին, ժողովուրդը կ'ասէ թէ ես արեցի այդ յաղթութիւնը և ոչ թէ Տէրի բազուկը կործանեց թշնամիներին։„ Գեդէոնը այն ժամանակը երեք հարիւր քաջ զինուորներ ընտրեց և նոցա երեք կարգ բաժանեց. նորանցից ամեն մէկը մին ձեռումը փող ունէր բռնած, իսկ միւս ձեռումը մին դատարկ կուժ, որոյ մէջ մին ջահ էին դրած։

Հանելով թշնամեաց բանակը, նոքա ածեցին փողը և կոտրատեցին կուժերը, ասելով. „Տէրին և Գեդէոնին սուրը։„ Այս խօսքերը լսելով թշնամիքը, փախան և բարձրացնելով իւրեանց սուրերը մինը միւսի դէմ, միմեանց կոտորեցին։ Այն ժամանակը Գեդէոնը ասաց Իսրայէլացւոց որ ընկնին թշնամեաց ետևէն, որոնցից նոքա հարիւր քսան հազար մարդ սպանեցին։ Այս յաղթութիւնը անելուց յետոյ՝ ժողովուրդը ասաց Գեդէոնին. „Մեր թագաւորը եղի՛ր և քեզանից յետոյ էլ քո որդին։„ Բայց Գեդէոնը պատասխանեց նոցա թէ Աստուածանից 'ի զատ ուրիշ թագաւոր չ'պիտի ունենան։ Գեդէոնը մեռաւ խորին ծերութեան մէջ, թողնելով իրանից յետոյ 71 որդի զանազան կիներից ծնուած։ Գեդէոնի մահուանից յետոյ Իսրայէլացիք հպատակեցան նորա որդկերանցից մէկին, որոյ անունը Աբիմելէք էր։ Այս չարաբարոյ մարդը սպանել տուաւ իրան բոլոր եղբօրցը, բացի ամենից կրտսերին, որուն անունն էր Յո՛վաթամ։ Այն ժամանակը Իսրայէլացիք այդ մարդասպանին իրանց թագաւոր ընտրեցին։ Յովնաթամը յանդիմանեց ժողովրդի արած ապերախտութիւնը և նոցա նախագուշակեց որ Աբիմելէքը նոցա շատ չարիք պիտի հասցնէ։ Ինչպէս նա նախագուշակել էր, այնպէս էլ պատահեց։ Աբիմելէքը շատ մարդկանց սպանել տուաւ և երբ որ պատրաստում էր կրակ դնել մին աշտարակի մէջ նորա իրա մէջ գտնուած մարդիկների հետ 'ի միասին երելու համար, մին կնիկ ջաղացի քարը քցեց նորա վերայ և մահուչափ վիրաւորեց նորան։ Աբիմելէքը հրամայեց իւր ախոռապետին որ սուրը մխէ իրան մարմնոյ մէջ, որպէս զի չ'ասեն թէ մին կնկան ձեռամը սպանուեցաւ։

ՏԻԿԻՆ

Լաւ նկատեցէ՛ք իմ սիրելի աղջկերք, թէ ինչպէ՛ս Աստուած պատժում մեղաւորներին։ Իսրայէլացոց որդիքը ապերախտ էին Գեդէոնի որդւոյ դէմ, Աստուած Աբիմելէքին գործիք արաւ նոցա պատժելու համար, յետոյ էլ նոյն ինքն Աբիմելէքին պատժեց։ Յետագայ օրը կ'շարունակենք այս պատմութիւնը։ Մնաք բարեւ սիրելի օրիորդներ։

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻՆ

Որովհետեւ ես ձեզ խոստացել եմ այսօր վերջացնել Տիւրի Թագաւորի պատմութիւնը, ահա՛ կ'կատարեմ իմ խօսքս, բայց այժմ սա քո պատմութիւնդ, Մարիամ։

ՄԱՐԻԱՄ

Աբիմելէքի մահուանից յետոյ՝ Հրէից կառավարութիւնը անցկացաւ Թողայի եւ Յայիրի ձեռքը, որոնց յաջորդեց Յեփթայէն։ Այս Յեփթայէն դուրս քշուեցաւ իւրան հայրական տանից իւր եղբայրների ձեռամբ. բայց այսուամենայնիւ 'ի բոլոր սրտէ ներեց նոցա յանցանքը եւ նոցա առաջնորդ դառաւ Փղշտացւոց եւ Ամոնհացւոց դէմ պատերազմելու համար, որոնք նեղացնում էին նոցա։ Եւ սորանից յետոյ Իսրայէլացւոց դատաւոր ընտրուեցաւ։ Պատերազմը սկսելուց առաջ՝ նա ուխտ արաւ որ եթէ յաղթութիւնը ինքը տանէ, ողջակէզ մատուցանէ Տէրին, իրան հանդէպ դուրս եկող անձնը։ Քաղաքը վերադառնալու ժամանակը ջարթեց նա թշնամիներին, եւ երբ որ յետ էր դառնում իւր բնիկ երկիրը, տեսաւ որ իւր միածին դուստրը կաքաւելով գալիս է իրան հանդէպը։ Երբ որ Յեփթայէն տեսաւ իւր աղջկանը, սիրտը կսկծեց եւ սկսեց իւր զգեստները պատռել։ Բայց երբ որ նորա աղջիկը իմացաւ իւր հօր արած ուխտը՝ յորդորեց նորան քաջասրտութեամբ որ կատարէ իւր արած խոստմունքը։ Նա միայն երկու ամիս ժամա-

նակ խնդրեց որ գնայ լեառը և իւր ընկերակիցների հետ ողբայ իւրեան մահը։ Երկու ամսից յետոյ կրկին եկաւ իւր հօր մօտ, որը որ նորան ողջակէզ արաւ Տէրին։

ՇԱՐԼՈՏՏԱ

Տիկին, մի՞թէ Յեփթայէն մին մեղք գործած կ'լինէր, եթէ չզոհէր իւրան ողորմելի աղջկանը։ Ամենաբարին. Աստուած միթէ այդ օրինակ զոհագործութիւններ է սիրում։

ՏԻԿԻՆ

Ո՛չ, իմ սիրելի, Աստուած կամենում չէ մարդոյ արիւնը։ Յեփթայէն զուր տեղը անխոհեմ ուխտ էր արել և նորա գործադրութիւնն էլ զինքն պարտաւոր էր համարում։ Նորա դիտաւորութիւնը բարի էր, բայց գործը վատ դուրս եկաւ։ Զի՛նչ և իցէ, բայց ես զարմանում եմ նորա աղջկայ քաջասրտութեան վերայ, որը որ անձնատուր եղաւ առանց տրտնջալու իւր հօր կամքին այն ժամանակ, երբ որ նորա հայրը երևելի մարդ էր դառած և ինքը պէտք էր պատիւ ստանար ամբողջ ազգը ազատողի աղջիկ լինելով։ Շարունակի՛ր Ադէլ։

ԱԴԷԼ

Յեփթայէի մահուանից յետոյ՝ Աստուած նշանակեց Սամսոնին, որը որ տակաւին չէր ծնած. իբրև ազատող վրէժխնդիր իւրան ժողովրդին։ Աստուած ուղարկեց նորա մօր մօտ մին հրեշտակ, որը որ յայտնեց նորան թէ մին Նազովրեցի որդի պիտի ունենայ, այսինքն՝ Աստուծոյ

նուիրուած, և այն երեխայի գլուխը ածելիով չ'պիտի գերծել տայ, այլ և պիտի զգուշացնէ նորան հարբեցուցիչ խմիչքներից, որոնք արգելուած են Մովսէսի օրէնքումը։ Երեխան ծնուեցաւ և Սամսոն անուն ստացաւ։ Նա մեծացաւ և շուտով իրան վերայ մին արտաքոյ կարգին ոյժ ցոյց տուաւ։ Մին օր, երբ որ նա գնում էր մին քաղաք, որը որ Փղշտացւոց էր պատկանում, ճանապարհին մին աղջիկ տեսաւ, որը որ շատ հաճոյ երևաց նորան։ Սամսոնը հրաման խնդրեց իւր հօրիցը նորա հետ պսակուելու, բայց հայրը ասաց նորան. „Մի՞թէ Իսրայէլացւոց մէջ աղջիկ չ'կայ։ Ի՞նչի համար կամենումես օտարականի հետ պսակուել։„ Սամսոնը պատասխանեց թէ այդ աղջիկը իրան դուր է գալիս։ Եւ որովհետև Աստուծոյ կամքն էր որ նա պսակուէ այդ աղջկան հետ, հայրն էլ համաձայնեցաւ։ Մին օր, երբ որ Սամսոնը գնում էր այդ աղջկայ այցելութեան, ճանապարհին մին առիւծի կորիւն տեսաւ և նորան իւր երկու ձեռների միջումը պատառոտեց։ Երկու օրից յետոյ, երբ որ վերադառնում էր նա տուն, տեսաւ որ կորիւնի մարմնոյ մէջ մեղուները մեղր էին շինել։ Սամսոնը վեր առաւ այդ մեղրիցը և տարաւ իրան ծնողների համար, բայց չ'ասաց թէ որտեղից է վեր առել։ Մինքանի օրից յետոյ իրան հարսանիքը արաւ և մին հացկերութիւն տուաւ Փղշտացւոց, որը որ շարունակեց մինչև եօթն օր։ Առաջի օրը Սամսոնը նոցա ասաց. „Ես կամենում եմ ձեզ մին հանելուկ ասել և դորա համար եօթն օր ժամանակ եմ տալիս։ Եթէ նորա միտքը իմանաք, ես ձեզ երեսուն ձեռք զգեստ կ'տամ, իսկ եթէ չիմանաք, դուք ինձ այդքան զգեստ տուէք։ Ահաւասիկ իմ հանելուկս. „Նորանից, որ ուտում էր, կերակուր դուրս եկաւ, իսկ զօրեղիցը քաղցր դուրս եկաւ։„

Այս հանելուկի միտքը իմացուաւ Սամոնի կնկան օգնութեամբը։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Մի՞թէ մեղուներն են մեղր շինում, ես այդ իմանում չէի։

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, մեղուներն են շինում մեղրը և մոմը։

ՄԱՐԻԱՄ

Մի՞թէ նոքա իւրեանց մարմնոյ մէջ մեղր կամ մոմ ունին։

ՏԻԿԻ՛Ն

Ո՛չ, բայց նոքա ծծում են ծաղիկների հիւթը, և այդ հիւթից մեղր կամ մոմ են շինում նոքա։

ԱԴԷԼ

Ինչպէ՞ս կարելի է այդ բանը, սիրելի բարեկամ, ծաղիկները դառը համ ունին, իսկ մեղրը շատ քաղցր է։

ՏԻԿԻ՛Ն

Այդ ճշմարիտ է, իմ սիրելի. ծաղիկների հիւթը դառն է. բայց մեղրաճանճը նորան շինելիս և նորա իւրան հիւթի հետ խառնելիս, քաղցրացնում է, ինչպէս որ դուք տեսնում էք։ Մեղուների թագաւորութենից՝ի զատ զարմանալի բան չկայ։ Ասում եմ որ նոքա կազմում են մին թագաւորութիւն, պատճառը որ նոցա տների ամեն մէկի մէջ՝ որոնց

փեթակ ենք ասում, ունին մի թագուհի, որը որ ուրիշների պէս աշխատում չէ և որը որ իւրան սնունդը ստանում է առանց միւսների հետ աշխատելու, միայն նորան է թոյլատրուած չ՚աշխատելը. եթէ միւսների մէջ ծուլութիւն անող լինի՝ նորան անխնայ կ՚սպանեն։ Նորանցից ամեն մէկը իւրան պաշտօնը քաջ ճանաչում է. ոմանք ըղբաղուած են փեթակը մաքրելու, ոմանք հսկում են աշխատողների վերայ, ոմանք հենց արեգակը ծագելուց բուկսուած թռչում են ծաղիկների վերայ, և շատ անգամ հեռաւոր տեղեր են գնում ծաղիկներ գտնելու համար, երբ որ նոքա իւրանց պարտաւորութիւնը կատարում են, հեշտութեամբ գտանում են այն ճանապարհը, որը որ տանում է դէպի իւրանց տունը, և բնաւ ուրիշ տուն չեն մտնում։ Վեր են առնում յետոյ ծաղիկների հիւթի այն մասը, որը որ յարմար է մոմ շինելու, և նորանով ձևակերպում են նոքա մին փոքրիկ կողով, որոյ մէջ նոքա պահում են մեղրը. առանց այդ կողովի մեղրը խասկ չէր կարող պահպանուիլ։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Իմ սիրելի բարեկամ, ո՞վ է սովորացնում մեղուներին անել այդ բանը։

ՏԻԿԻ՛Ն

Նա, որը որ սովորացնում է թռչուններին շինել իւրանց բոյնը, Նա, որը որ սովորացնում է հաւերին թէ պիտոյ է մնալ իւրանց ձուերի վերայ, եթէ կամենում են ձագեր ունենալ, Նա, որը որ սովորացնում է կատուներին թէ պիտի իւրանց քնած ձևացնեն մկներ որսալու համար։ Միով բանիւ Նա, որը որ տարածում է իւր հայրական խնամքը բոլոր արարածոց վերայ։

ԵՒԳԵՆԻԱ

Տիկի՛ն, մեր Տիտի Թագաւորականի պատմութիւնը այսօր չ'էք վերջացնիլ։

ՏԻԿԻ՛Ն (ժպտելով)

Դու շատ սիրում ես հրաշալի վէպքերը, Եւգենիա՛, հանգիստ կաց, ես պատրաստ եմ կատարելու իմ խոստմունքը։

Տիտի Թագաւորականը գահի վերայ նստելուն պէս, սկսաւ նոր նոր կարգեր դնել իւրան Թագաւորութեան մէջ, նա հրամայեց որ հարուստները և աղքատները կարող լինին մուտ ունենալ մինչև իւրան մօտ։ Նա շատ խստութեամբ պատժում էր այն հարուստներին, որոնք անարդար բան էին գործում, որպէս զի ոչ ով չ'համարձակուի խոտորուիլ իւրան պարտաւորութենիցը։ Եսպա դեսպաններ ուղարկեց նա Վիօլէն Թագաւորի մօտ շնորհակալութիւն մատուցանելու այն օգնութեան համար, որը որ պատրաստել էր իւրան համար։

Վիօլէնը ապսպարեց նորան թէ տարապայման ուրախ կ'լինի ինքը, եթէ վերստին տեսնելու լինի նորա, և եթէ կամենալու լինի գալ իւրան Թագաւորութեան սահմանները՝ ինքն էլ մեծաւ ուրախութեամբ կ'գայ նորա մօտ այցելութեան։ Տիտին համաձայնեցաւ այս առաջարկութեանը, որը որ շատ պատշաճ էր գալիս իւրան ունեցած մին զիտաւորութեանը. այսինքն շքեղացնել այն տունը, որտեղ որ առաջի անգամը տեսել էր իւրան սիրելի Բիբին։ Նա հրամայեց ապա իւրան պալատականներից երկուսին այն տան չորս կողմումը գտնուած տափերը ծախու առնել, բայց արգելեց նոցա որ ոչովին չ'ասիպեն,

որովհետև ասում էր նա. „Իմ հպատակներին բռնութիւն անելու համար չ'եմ Թագաւոր դառել և սորանից 'ի զատ ամենայն մարդ պիտի իւրան ժառանգութեան տէր լինի։„ Այս միջոցումը Վիօլէնը հասնելով երկու Թագաւորութեանց սահմանները, երկու արքունիք միմեանց հետ միաւորեցաւ։ Նոքա շատ շքեղ էին երևում։ Վիօլէնը իւրան հետ բերել էր իւրան միածին դուստրը, որին անունը Էլիզա էր, և որը որ շատ պատուաւոր աղջիկ էր և համեստ բնութեան տէր։ Իսկ Տիտին բացի իւրան ամուսնից, նոյնպէս բերել էր իւրան հօր եղբօր աղջկերանցից մէկին, որին որ Բլանկա էին անուանում և որը որ բաց 'ի չնաշխարհիկ և առաքինի լինելուց, շատ հանճարաւոր էլ էր։ Որովհետև նոքա, այսպէս ասեմ, գիւղի մէջ եղածի պէս էին գտնվում, երկու Թագաւորները տացին թէ ազատութեամբ պիտի ապրեն գիւղի մէջ։ Նոքա հրաւիրում էին կանանց և մարդկերանց իւրանց հետ 'ի միասին ընթրիք անելու և որպէս զի իւրանց միջից ծանր ծէսերը վերջացնեն, Թոյլատրեցին որ Թագաւորներին չ'ասեն Ձերդ Մեծութիւն. և որոնք ասելու լինին այդ խօսքը մին ոսկի տուգանք պիտի հատուցանեն։ Մին քառորդ ժամ էր անցկացել որ նոքա նստել էին ընթրիք անելու, մին էլ տեսին որ մին հին զգեստներ հագած մին պառաւ կնիկ ներս մտաւ։ Տիտին և Լ'էվէյլէն, որոնք ճանաչում էին նորան, վերկացան նորա հանդէպ գնալու, բայց նա աչքով արաւ, և նոքա իմացան որ դիցանուշը կամենում չէ որ իւրան ճանաչեն ուրիշները։ Պառաւ կնիկը հրաման խնդրեց Վիօլէն Թագաւորից և Թագաւորի աղջիկներից որ նորան Թոյլատրեն նրանց մօտ ներկայացնելու իւրան բարեկամներից մինին, նոցա հետ ընթրիք անելու համար։ Պառաւ կնիկը առանց քաղա-

քավարութիւն ցոյց տալու, նստեց մին ածուի վերայ, որը որ Վախլէն Թագաւորի մօտ դրած էր և որտեղ ո՛չ ով չէր համարձակւում նստել, և ասաց այդ Թագաւորին. „Որովհետև մեր բարեկամների բարեկամն էլ մեր բարեկամն է, ուրեմն հրաման տուէք որ համարձակ վարուեմ ձեզ հետ: Վախլէնը, որը որ մին քիչ դուաղ էր, նեղացաւ այդ պառաւի ընտանեկան խօսքերից, բայց ցոյց չտուաւ իրան անբաւականութիւնը: Պառաւ կնիկը յայտնեցին այն տուգանքը, որ պիտի տային Ձերդ Մեծութիւն ասելու համար: Այս միջոցումը հազիւ թէ վերկացան սեղանից, պառաւը, մօտենալով Վախլէն Թագաւորին, ասաց. „Ձերդ Մեծութիւնը նեղացածի պէս է երևում, բայց այդ մին հին սովորութիւն է, և ես արդէն ժամանակս անց եմ կացրել ինձ ուղղելու, ուրեմն Ձերդ Մեծութիւնը պիտի ներողամիտ լինի ինձ:„

—„Տուգանք, տուգանք աղաղակեց Վախլէնը, դու պիտի երկու ոսկի վճարես:„

„Թող Ձերդ Մեծութիւնը չնեղանայ, ասաց պառաւ կնիկը, ես մոռացայ որ չպիտի ասեմ Ձերդ Մեծութիւն, բայց Ձերդ Մեծութիւնը չէ մտածում որ Ձերդ Մեծութիւն ասելը արգելելով, բոլոր աշխարհին յիշեցնել էք տալիս որպէս զի միևնոյն տաղտկալի ակնածութեան մէջ գտնուէին, զոր կամենումէք ձեր միջից արտաքսել: Ես այն մասին չեմ ասում որ ազատ մնամ իմ տուգանքից, ձեզ եօթն ոսկի եմ պարտական, ահաւասիկ: Միևնոյն րոպէումը դուրս հանեց գրպանից մին քսակ, որը որ այնպէս մաշուած էր որ ասես թէ հարիւր տարուայ լինէր, և եօթն ոսկի հանեց մէջից դրեց սեղանի վերայ: Վախլէնը չէր իմանում ծիծաղի թէ նեղանայ պառաւի խօսակցութեան վերայ. նորա արիւնը սկսաւ տաքանալ,

բայց այնուամենայնիւ միջումը որոշեց իրան զսպել ակնածելով Տիտիկը և բանը հանաքին տալով, ասաց. „Իմ սիրելի մայր, քո խելքի ուզածին պէս խօսիր թէ „Ձերդ Մեծութիւն„ ասես թէ չասես միևնոյն է ինձ էլ համարի՛ր իբրև քո բարեկամներից մինը:„

—Համաձայն եմ, պատասխանեց պառաւ կնիկը, և էստուր համար է, որ ես համարձակութիւն ունեցայ Ձեզ յայտնելու իմ զգացմունքը, և ամենայն անգամ այսպէս պիտի վարվեմ, երբ որ առիթ ունենամ, որովհետև իրանց բարեկամներին արած վատ բանը յայտնելը մեծ ծառայութիւն անել է:„

„Պէտք չէ որ դու վստահանաս, ասաց Վախլէնը, քանզի գտնվում են այնպիսի վայրկեաններ, երբ որ դժուար է լինում ինձ յօժարութեամբ ընդունել այդպիսի խրատները:„

—Խոստովանեցէ՛ք, Թագաւոր, շարունակեց ծերունի կնիկը, որ դուք այդ վայրկեաններից հեռու չէք, և դուք շատ բան կ՚տայիք, որպէս զի ազատութիւն ունենայիք ուղարկելու ինձ զբօսնել ձեր սրտի ուզածին պէս, բայց փոխենք մեր խօսակցութիւնը, որովհետև ձեզ անախորժ է թվում: Իրաւունք տուեցէ՛ք որ մնեն այստեղ իմ ծառաները, որոնք մին քանի բան ունէին պարզելու այս հասարակութեանը:„

Միևնոյն վայրկեանումը պառաւը զարկեց սեղանին և ահա՛ տեսին որ դահլիճի չորս լուսամուտներումը չորս թևաւոր երեխայք մտին, որոնք աշխարհիս երեսին ամենաչքնաղ անձինք էին: Նորանցից ամեն մէկը մին թանկագին ակներով լիքը կողով ունէր բռնած իրան ձեռումը: Միևնոյն ժամանակումը Վախլէնը իրան աչքերը քցելով պառաւի վերայ, շատ զարմացաւ, տեսնելով որ կերպա-

բանափոխուած էր մին գեղեցկադէմ և հարուստ զգեստներով զարդարուած մին կնիկ:

„Ո՜հ, տիկի՛ն, ասաց նորան, ես ձեզ ընդունում էի զղեար և ընկուզ ծախող մին կնիկ, որը որ ինձ այդչափ բարկացրուց, ներեցէ՛ք որ այդքան քիչ ակնածութիւն եմ ունեցել դէպի ձեզ:

—Այդ պէտք էր ձեզ ապացուցանել որ պիտոյ է առ ո՛ և իցէ անձնը ակնածութիւն ունենալ. բայց արքա՛յ, ձեզ հաւատացնելու համար որ ես սրտումս ոչինչ ոխակալութիւն չ՛ունիմ՝ կամենումեմ ձեզ երկու պարգև տալ: Առաջինն՝ այս կուլան է, նա մին հատ անդամանդեայ քարից է շինուած, բայց արժանաւորութիւնը դորա մէջ չ՛է կայացած: Ամենայն անգամ, երբ որ ձեր բարկութիւնը շարժվելու լինի, այս կուլան ջրով լցրէ՛ք և երեք անգամ խմեցէ՛ք իսկոյն կ՛տեսնէ՛ք որ ձեր կիրքը պիտի հանդարտուի և ձեր առողջ դատողութիւնը տեղը գայ: Եթէ դուք այդ առաջին պարգևիցը օգուտ քաղէ՛ք, երկրորդին էլ կ՛արժանանաք: Ես իմանում եմ որ դուք սիրում էք Բլանկա Թագուհուն, նա էլ ձեզ շատ սիրելի է համարում, բայց վախումէ նա ձեր դիւրաշարժ բարկութենից և կ՛պսակուի ձեզ հետ միայն այն դաշամբ, երբ որ դուք գործ ածէ՛ք այդ կուլան:„

Ախօլէնը զարմացաւ, տեսնելով որ դիցանուշը այդպէս լաւ ճանաչումէր իրան պակասութիւնները և հակամիտութիւնները, յանձն առաւ թէ յիրաւի շատ երջանիկ պիտի համարի իրան, երբ որ պսակուելու լինի Բլանկայի հետ:

„Բայց շարունակեց նա, ինձ միայն մին արգելք է մնում յաղթելու, նա և եթէ Բլանկայի համաձայնութիւնը էլ ստանալու լինիմ, էլի միշտ կասկած պիտի ու-

նենամ, վախենալով թէ մի գուցէ իմ աղջկանս թագաւորական թագից զուրկ թողեմ:

—„Այդ զգացմունքը շատ լաւ է, ասաց դիցանուշը, քանզի քիչ հայրեր են գտանվում, որոնք ընդունակ են զոհելու իրանց հակամիտութիւնները իրանց որդւոց բարեբաղդութեան համար: Բայց այդ թող ձեզ արգելք չ՛դառնայ: Մոգոլանդ թագաւորը, որը որ իմ բարեկամներից մինն էր համարվում, մեռաւ առանց ժառանգի, և իմ խորհրդովս իրան թագը թողեց 'ի վայելումն Լ՛էվէյլէի: Նա թագաւոր ծնուած չ՛է, բայց արժանի է այդ պատուին, նա սիրումէ Ալիզա Թագուհուն, և նա արժանի է որ Լ՛էվէյլէի հաւատարմութեան վարձատրութիւնը դառնայ: Եթէ նորա հայրը համաձայնուի, ես վստահ եմ, որ նա առանց սրտնջանաց կ՛ընդունի այս առաջարկութիւնը:

Ալիզան կարմրեցաւ այս խօսակցութեան վերայ, յիրաւի Լ՛էվէյլէն նորան շատ սիրելի էր թուացել և ախորժանօք լսել էր, ինչ որ նորա հաւատարմութեան մասին պատմել էին:

—Տիկի՛ն, ասաց Ախօլէնը դիցանուշին, սովորեցանք արդէն անկեղծ սրտի խօսելու: Ես յարգում եմ Լ՛էվէյլէին, և եթէ ձեռներս չ՛կապէր սովորութիւնները, հարկաւորութիւն չ՛էի ունենալ նորա գլխին մին թագ տեսնել, իմ աղջիկս նորան տալու համար: Բայց մարդիկը, մանաւանդ թագաւորները պէտք է որ ընդունուած սովորութիւնները յարգութեամբ պահպանեն. և իմ աղջկանը մին սովորական ազնուականի տալը, ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ խափանել այդպիսի սովորութիւնները, որովհետև իմ աղջիկս ամենահռչակաւոր դերդաստանից է ստանում իրան ծագումը, քանզի ձեզ քաջ յայտնի է որ և-

րեք հարիւր տարիից աւելի է որ մենք բազմում ենք այդ աթոռի վերայ:„

„Թագաւոր, ասաց դիցանուշը, դուք իմանում չէք, Լ'էվէյլէի ծագումն էլ այնպէս նշանաւոր է ինչպէս և ձերը, որովհետև դուք ազգական էք և դուք յառաջ էք եկած երկու եղբօրցից, և այս մասին Լ'էվէյլէն ձեզանից էլ գերազանց է, պատճառը որ նա էրեց եղբօրից է յառաջ եկել, իսկ դուք կրտսերիցը:„

—Եթէ դուք կարողանաք այդ հաստատել, ասաց Վիօլէնը, երդնում եմ որ իսկոյն իմ աղջիկս կ'տամ 'ի կնութիւն Լ'էվէյլէի, մինչև անգամ եթէ հանդուցեալ Մոգոլանդ Թագաւորի հպատակները մերժելու լինէին իրանց վերայ նորան Թագաւոր ճանաչելու:„

„Լ'էվէյլէի տան հնութիւնը հաստատելը շատ դիւրին է, պատասխանեց դիցանուշը: Նա յառաջ է եկած Ելիսէյից՝ Յաբեթի Նոյի որդու որդիքների մեծից, որը որ իրան բնակութիւնը հաստատեց Պելոպէնոսումը, իսկ դուք ձեր ծագումը ստացել էք միենոյն Յաբեթի երկրորդ որդուցը:„

Ո՛չով չ'կարողացաւ զսպել ինքը ծիծաղելուց, տեսնելով որ դիցանուշը այդպէս յայտնի ծաղր էր անում Վիօլէնի վերայ: Նա սաստիկ բարկութեան մէջ էր սկսանում մտնել, երբ որ Բլանկան, որը որ նորան մօտ կանգնած էր ներկայացրուց անդամանդեայ կուլան: Վիօլէնը երեք անգամ խմեց, ինչպէս դիցանուշը պատուիրել էր և այդ միջոցումը մտածեց նա որ յիրաւի ամենայն մարդիկ հաւասար են ծննդեամբ, բաղդում ամենքս Նոյից ենք յառաջ եկած, և արդարև ուրիշ խտրողութիւն չ'կայ նոցա մէջ, բայց եթէ այն տարբերութիւնը, որը որ կարելի է գնել նոցա ունեցած առաքինութիւնների մէջ:

Վիօլէն Թագաւորը իրան կուլան դատարկեցնելուց յետոյ՝ ասաց դիցանուշին. „Ճշմարիտ է, տիկի՛ն, ես ձեզ շատ պարտաւոր եմ որ իմ երկու մեծ պակասութիւնները ուղղեցիք, այսինքն՝ իմ ազնուատոհմութեան վերայ ունեցած յամառութիւնս և իմ դիւրաշարժ բարկացոտ բնաւորութիւնս: Ես զարմանում եմ Ձեր ինձ տուած կուլայի ունեցած զօրութեան վերայ, քանզի որչափ որ նորանից խմումէի, այնչափ էլ զգումէի որ իմ բարկութիւնս հանդարտում էր, և այն երեք նուագում, իմ առած դատողութիւնները իմ միտքը ամենևին հանդարտեցուցին:

—Կամենում չ'եմ ձեզ խաբել, ասաց դիցանուշը. իմ ձեզ տուած կուլայի մէջ ամենևին զօրութիւն չ'կայ, և ցանկանում եմ իմացնել այս հասարակութեանը թէ ի՞նչի մէջ է կայացած երեք անգամ այդ ջուրը խմելու զօրութիւնը: Մի՛ն հանճարաւոր մարդ ամենևին իրան անձը բարկութեան մէջ չէ քցել, եթէ այդ կիրքը նորան յանկարծ պատահելու չ'լինէր և նորան մտածելու ժամանակ թողնելու լինէր: Արդ՝ մինչև որ զբաղուած են լինում այդ կուլայի մէջ ջուր ածելու և ջուրը երեք նուագումը խմելու, ժամանակ է անցկենում, ուստի մտքերը հանդարտվում են, դատողութիւնը կրկին տեղն է գալիս և երբ որ այդ գործողութիւնը վերջանում է, հանճարը ժամանակ է ունենում յաղթելու կրից:

„Ճշմարիտն ասեմ, պատասխանեց Վիօլէնը, ես այսօր աւելի բան սովորեցի, ինչ որ իմ բովանդակ կեանքումը սովորած չ'էի: Երա՛նի, քեզ Տիտի, դու աշխարհումս ամենից աւելի նշանաւոր Թագաւորն կ'լինիս, այդ օրինակ պաշտպանուհի ունենալովդ, բայց ես քեզ խնդրում եմ որ 'ի գործ դնես Տիկկինի վերայ քո ունեցած իշխա-

նութիւնը, նորան միտը քցելու որ խոստացել է իմ բարեկամը լինելու:

—Ես այդ լաւ միտս ունիմ, ասաց գլխանուշը, և այդ մասին արդէն ապացոյցներ տուած եմ իմ կողմանէ և կ՚շարունակեմ անելու այնքան՝ մինչև որ հպատակուես և յուսով եմ որ այդ պիտի շարունակվի մինչև ձեր կեանքի վերջը: Այսօր մեզ դուարճացնելու վերայ մտածենք, ձեր և Էլիզայի հարսանեաց հանդէսը տօնախմբելու համար:

Միևնոյն ժամանակումը Տիտի թագաւորին իմաց տուեցին որ այն պաշտօնակատարները, որոնց յանձն էր եղած ծախու առնել Նիբիի տունը շրջապատող հողերը և տները՝ խնդրումեն նորա հետ խօսելու: Տիտին հրամայեց նոցա ներս մտնել: Նոքա ցոյց տուեցին նորան այն գործոյ դժուարութիւնը, զոր կամենում էին անել այդ տան մէջ: „Պէտքէ որ այնտեղ աւելացնենք մին մեծ այգի և մին գեղեցիկ ծառաշարդ պարտէզ, ասացին նոքա, որը որ կատարեալ կ՚լինէր, եթէ կարողանայինք քանդելու մին փոքրիկ տուն, որը որ նոյն պարտէզի ալլէյների մէջտեղումն է գտնվում, և որը որ տգեղացնումէ յիշեալ պարտէզի գեղեցկապատշաճ յարմարութիւնը:

—„Եւ ինչի այդ տունը չ՚խլեցիք, հարցրեց Վիօլէնը, ճարտարապետների և պաշտօնակատարների հետ խօսելու ժամանակ:"

„Տէ՛ր, պատասխանեցին նոքա, մեր թագաւորը արգելել է որ և իցէ մարդոյ վերայ չ՚անել բռնութիւն և ահա՛ մին մարդ գտանուեցաւ, որը որ կամենում չ՚էր վաճառել իրան խրճիթը, թէև իրան արժէքից չորս անգամ աւելի էինք գնահատում:"

Եթէ այդ անպիտան մարդը իմ հպատակը լինէր, ասաց Վիօլէնը, նորան կախ կ՚տայի իսկոյն:

„Դուք յառաջ ձեր կուլան գարտակեցէ՛ք, ասաց նորան գլխանուշը:

—Կարծեմ կուլան չ՚պիտի կարողանայ նորա կեանքը ազատելու, պատասխանեց Վիօլէնը, և բացի դորանից մի՞թէ սոսկալի բան չ՚է որ մին թագաւոր չ՚կարողանայ իշխանութիւն անել իրան հպատակների վերայ և ստիպուած լինի թողնելու մին այնպիսի բան, որը որ կամենումէ վերջացնել. մին մարդոյ յամառութեան համար, որը որ պարտաւոր էր իրան երջանիկ համարել թագաւորի ծառայութիւն անելովը իրան համար բարօրութիւն պատրաստելուն համար:"

„Ես ձեր սաածից ո՛չ մէկը չ՚եմ անել, ասաց Տիտին ծիծաղելով, ես ձեզ հաւատացնում եմ որ այդ տունը իմ պարտիզի զարդարանքը պիտի դառնայ:

—Ո՛հ, ասաց Վիօլէնը, նա այնպիսի տեղ շինուած է, որ միշտ պարտիզի տեսքը պիտի տգեղացնէ:"

„Եւ հենց էտուր համար էլ, ասաց Տիտին, կամենումեմ որ բարձր պարիսպներով այդ տունը շրջապատուի, որպէս զի այդ մարդը իմ պարտէզը չ՚մտնի, բայց այնքան էլ բարձր չ՚եմ շինիլ, որ նորա տեսարանը արգիլեմ, քան զի իրաւունք չ՚է որ ես նորան իբրև մին բանտի մէջ պահեմ: Այդ պատը երկու կողմիցն էլ պիտի շարունակուի, և ոսկի տառերով պիտի կարդացուի այս յետագայ խօսքերը: „*Մին թագաւոր, որը որ շինել է այս պարտէզը, աւելի լաւ է համարել թողնել այդ պակասութիւնը, քան թէ զրկանք անել անարդար իրան հպատակների մէկի դէմ խլելով նորա ձեռքից հայրենական ժառանգութիւնը, որոյ վերայ բռնութիւն անելու 'ի զատ ոչինչ իրաւունք չ՚ունէր:*

—Ինչ որ ես տեսնում եմ, ինձ շփոթացնում է. ասաց Միօլէնը, խոստովանում եմ որ մինչև անգամ գիւղացիական առաքինութեանց վերայ գաղափար էլ չունիմ, որոնք մեծամեծ մարդիկներ են հանդիսացնում աշխարհիս երեսին: Այո՛, Տիմ՛, այդ պատը քո պարտէզի զարդարանքը պիտի դառնայ և այն բարի գործը, որը որ դուք անում էք նորա պատը բարձրացնելով՝ պիտի անշուշտ ձեր կեանքի պսակը լինի: Բայց ինչևյն է Տիկին, որ միշտ Տիմի թագաւորը դէպի մեծամեծ առաքինութիւնները հակամիտութիւն ունի, որոնց վերայ ես բնաւ գաղափար ես չունիմ, ինչպէս վերևումը ասացի:

„Արքա՛յ, պատասխանեց դիցանուշը, Տիմին իրան դաստիարակութիւնը ստանալով այնպիսի ծնողաց ձեռքով, որոնք որ նորան սիրում չէին, հակառակ խօսքեր լսելու սովորութիւն է ստացել իրան ծնուած օրից մինչև այսօրուայ օրը և հետևողաբար սովորութիւն է ստացել իրան կամքը ուրիշների կամացը զիջուցանելու նաև ամենաթեթև բաների մէջ: Որովհետև նա ոչինչ իշխանութիւն չունէր տէրութեան մէջ իրան հօր կենդանութեան ժամանակը և չէր կարող ոչինչ շնորհ անել ուրիշի, որովհետև իմանում էին որ թագաւորը միտք ունի նորան ժառանգութենից զրկելու, շողոքորթները արժան էլ չէին համարում նորա բնաւորութիւնը փառաբանելու, պատճառ՝ նորանից ամենևին երկիւղ կրելու առիթ չունէին ո՛չ էլ որ և իցէ մի ակնկալութիւն: Նորան թողել էին առաքինի մարդկանց իշխանութեան ներքոյ, որոնք առաքինի պարտաւորութենից ստիպուած միաւորուել էին նորա հետ և ահա՛ նոցա ընկերութեան մէջ սովորեց որ մի թագաւոր, որը որ իշխանութիւն ունի բարի գործեր անելու, պէտքէ որ ձեռները կապած ունենայ երբ որ ցան-

կանում է չարութիւն անելու, թէ նա իշխան է դառնել ազատ մարդիկների վերայ, և ո՛չ թէ ստրուկների, թէ ժողովուրդը նորան հնազանդութիւն է անում իրանց վերայ թագաւոր ընտրելով ուրիշ ոչինչ բանի համար՝ բայց եթէ իրանց հայր, օրինաց պաշտպան, զրկողներին և աղքատներին ապաւէն դառնալու համար: Դուք իհարկէ լսած չէ՞ք լինիլ երբէք այսպիսի մեծամեծ ճշմարտութիւններ. տասներկու տարեկան հասակում թագաւոր դառած, այն վարժապետները, որոնց յանձնել էին ձեր դաստիարակութիւնը՝ ուրիշ ոչինչ բանի վերայ չեն մըտածել, բայց եթէ հարստութիւն դիզելու վերայ: Նոքա ձեր հպարտութիւնը, ազնիւ մեծամտութիւն են անուանել. մին խօսքով նոքա աշխատել են մինչև այժմ ինչպէս ձեր անբաղդութեան համար, այնպէս էլ ձեր հպատակների անբաղդութեան համար, որոնց դուք համարել էք և նոցա հետ վարուել էք, ինչպէս ձեր ստրուկների հետ, պատճառը որ դուք կարծում էիք թէ նոքա ստեղծուած են միայն ձեր կրիցը ծառայելու, այն ինչ իրօք դուք այս աշխարհումս գտնվում էք միայն նոցա պաշտպանելու և պահպանելու համար:„

Միօլէնը համոզուեցաւ դիցանուշի խօսքերից և իմանալով իրա պարտաւորութիւնները, ջան 'ի գործ եդաւ իրա անձին յաղթելու որպէս զի կարողանայ այդ պարտաւորութիւնները ճշտութեամբ 'ի գործ դնելու քաջալերութիւն ստանայ Լ՛էվէյլէի և Տիմի օրինակով. որոնք պահպանեցին թագաւորական աթոռի վերայ այն առաքինութիւնները, որոնք իրանց հետ բերել էին:

ՀԱՐԼԱՏՏԸ

Տիկի՛ն, ահա՛ առաջին անգամն է, որ ես իմ կեան-

քումը այդպէս գեղեցիկ վէպ եմ լսում, այդ իմ միտս է քցել տալիս մին փոքրիկ առասպել, որը որ մին քանի օր սորանից առաջ կարդացել եմ և որը որ կ'պատմէի յօժարութեամբ այս աղջկերանց եթէ ինձ իրաւունք տայիք։

ՏԻԿԻ՛Ն

Մեծաւ ուրախութեամբ, բայց այդ կ'պատմես, երբ որ միւս անգամ կ'հաւաքուենք, որովհետև մեր միմեանցից բաժանուելու ժամը հասել է արդէն։

ՔՍԱ՛Ն ԵՒ ՄԻԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻ՛Ն

ՔՍԱ՛ՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻ՛Ն

Թո՛ղ Շարլոտտան գայ մեզ պատմէ այն պատմութիւնը, որը որ Վիօլէն և Տիտի Թագաւորի արկածները նորա միտն էին քցել և յետոյ կ'պատմենք մեր դասը։

ՇԱՐԼՈՏՏԱ

Երբեմն մին կնիկ է էլել, որը որ աշխարհումս ամենադժբաղդ անձն է էլել։ Նորա ամուսինը ամենայն օր նորան այնքան ծեծում էր, մինչև որ հիւանդացնում էր։ Այս կնիկը գնաց իրան պառաւ դրացու մօտ, որը որ համարուած էր շատ հմուտ անձը, մին քանիսն էլ ասում էին վհուկ նորան (колдунья) ըստ որում ինչ բանի որ ձեռնամուխ էր լինում, յաջողութեամբ վերջացնում էր։ Ճշմարտութիւնը այն է որ այդ կնիկը շատ խոհեմութիւն ունենալով, աշխատում էր իմանալու մարդիկների բնաւորութիւնը, որոնց հետ նա կենակից էր լինում, նոցա թոյլ էր տալիս իրանց սրտի ուզածը անելու և նախատես էր լինում այն ամեն բանի, ինչ որ նոքա ցանկութիւն ունէին անելու։ Բարեսիրտ դրացին այս խեղճ կնկան գանգատները լսեց, և որովհետև ինչպէս այդ կընկանը այնպէս էլ նորա մարդուն լաւ ճանաչումէր՝ ասաց թէ իրան բոլոր գիտութիւնները 'ի գործ կ'դնէ նորան մին ծառայութիւն անելու համար։ Նա գնաց մին ջրով լիքը սափոր բերաւ, դրաւ սեղանի վերայ, երեք անգամ

պտուտ տուաւ, մին քանի լատիներէն խօսքեր ասելով։ Յետոյ երկու կրանաչափ աղքցեց այս ջրի մէջ և այդ ջրիցը մին շէշ լցնելով՝ ասաց իրան հարևանին. „Խնամքով պահի՛ր այդ ջուրը և այն ամենայն անգամ, երբ որ տեսնում ես որ քո մարդը սկսումէ բարկանալ, իսկոյն այդ ջուրը բերանդ ա՛ռ և ինչքան ժամանակ բերանումդ ունենաս, քեզ հաւատացնումեմ որ երբէք քեզ ծեծիլ չի։ Այդ կնիկը շնորհակալ լինելով իրան հարևանից, գնաց տուն և խկութեամբ կատարեց ինչ որ պատուիրել էր իրան։ Նա այնուհետև էլ տեղի չունեցաւ կասկածել թէ այդ կնիկը մին վհուկ չլինի։ Որովհետև այն ութ օրուայ միջոցումը երբ որ այդ ջուրը նա գործ ածեց նորա մարդը ո՛չ մին անգամ նորան չ՛ծեծեց։ Նա շատ տրամեցաւ, երբ որ այդ ջուրը վերջացաւ և յետ դառնալով իրան դրացու մօտ, խնդրեց վերստին լցնել իրան շիշը։ —Դու կարօտութիւն չունիս, ասաց վհուկը, այդ ջուրը հասարակ գետի ջուր է, որին վերայ ես մին քանի ունայն խօսքեր ասացի։ „Բայց այսուամենայնիւ արգելք դառաւ իմ ամուսնուն որ ինձ չ՛ծեծէ, ասաց նա։

—Որովհետև այդ ջուրը արգելք է դառել քեզ քո մարդուն պատասխանելու, ասաց վհուկ կինը, ըստ որում դու չէիր կարող պատասխան տալ նորան որչափ որ այդ ջուրը բերանումդ պահած ունէիր։ Ուրեմն յետ դարձի՛ր քո տունը և երբ որ տեսնես որ մարդդ բարկացած է, փոխանակ նորան հայհոյելու, լռի՛ր, որպէս թէ ջուրը բերանումդ ունեցած լինիս. կ՛տեսնես իսկոյն որ նորա բարկութիւնը կ՛հանդարտուի։ Թշուառ կնիկը անսաց իրան դրացու տուած խորհուրդին, այնուհետև գործը շատ յաջող գնաց, պատճառը որ նորա մարդը էլ հակառակախօսութիւն չլսելով, իրան բարկութեան կիրքը ամե-

նելն յետ թողեց և միշտ խաղաղութեամբ անց էր կացնում օրերը իրան կնկան հետ, որուն նա սկսեց շատ սիրել հենց այն օրից։ Երբ որ նա դառաւ հանճարաւոր և համբերող։

ՏԻԿԻ՛Ն

Քու ասած պատմութիւնը շատ լաւ է, իմ սիրելի բարեկամ։ Ես կամենում եմ մին շէշ ջուր տալ Մարիամին։ Դու շատ կարօտութիւն ունես նորան, այդպէ՞ս չէ իմ սիրելի։

ՄԱՐԻԱՄ

Այո՛, բայց այսուամենայնիւ ձեզ հաւատացնումեմ որ օր ըստ օրէ ուղղում եմ ինձ։

ՏԻԿԻ՛Ն

Եթէ դու այդպէս շարունակելու լինիս, շատ ընտիր անձն կ՛դառնաս, բայց առ այժմ ասա քո պատմութիւնը։

ՄԱՐԻԱՄ

Սամսոնը այնպէս կատաղել էր իրան կնոջ դէմ, նորա դաւաճանութեան համար՝ որ յետ է դառնում իրան հօր տունը, բայց մին քանի ժամանակից յետոյ վերադառնալով նորա մօտ այցելութեան, այս կնկան հայրը ասաց նորան. „Ես այնպէս կարծեցի թէ դու քո կնկանը երեսից թողել ես և այս պատճառաւ մին ուրիշ մարդոյ հետ պսակել եմ նորան։„ —Ահա՛ Փղշտացւոց երկրորդ անիրաւութիւնը, ասաց Սամսոնը, իմ կնկանը դայթակ-

ղեցնելուց յետոյ՝ ինձանից էլ առնում են. ուստի կամենումեմ նոցա դէմ մշտնջենաւոր կռիւ բացանել:„ Սամսոնը կամենալով նորանցից վրէժը հանել, երեք հարիւր աղուէս վեր առաւ երկու երկու կապեց միմեանցից և նոցա իրան առաջը քցելով հալածեց վառած ջահեր իրանց եանէն քաշ տալով, որով հրձիգ արեցին ծիթենիները, խաղողի ծառերը և Փղշտացւոց արտերը: Սոքա իմանալով որ Սամսոնը այս բանը արել է իրանցից վրէժը հանելու համար իրան կնկան պատճառաւ, ուստի այն կնկան հետ պապհուղլին տնով տեղով էրեցին իրան սեփհական տան մէջ: Սամսոնը երբ որ մին քարայրի մէջ առանձնացաւ, Փղշտացիք արտասուախառն աչքերով գնացին Իսրայելացւոց մօտ և ասացին նոցա. „Սամսոնին մեր ձեռքը տուեցէ՛ք, ապա թէ ոչ ձեզ ամենեցուն էլ բնաջինջ կ՚անենք:„ Երեք հազար մարդ Իսրայելացիներից մօտացան Սամսոնին և ասացին նորան. „Մի՞թէ դու իմանում չ՚ես որ Փղշտացիք մեր իշխաններն են, ի՞նչի նոցա հետ այդպէս ես վարվում:„—Ես տեսնում եմ, ասաց Սամսոնը, որ դուք ինձ նոցա ձեռքը պիտի մատնէք, բայց դուք կարող էք նաև ինձ կապոտել այնպէս պինդ, ինչպէս որ ձեր սիրտը կ՚ցանկանայ:„ Երբ որ, Փղշտացիք տեսին որ իրանց թշնամու ձեռները պինդ կապած էին նոր չուաններով՝ ուրախութեան ձայներ արձակեցին, բայց Տէրի հոգին Սամսոնի մէջ, էր ուստի խորտակեց նա չուանները և որովհետև նա ոչինչ զէնք չ՚ունէր ձեռին, մին էշի ծնօտ վեր առաւ, որը որ գետնի վերայ ընկած էր և նորանով հազար Փղշտացի սպանեց: Այս յաղթութիւնը անելուց յետոյ՝ ծարաւեց և խնդրեց Աստուածանից ջուր, իսկոյն տեսաւ որ այն ծնօտի մեծ ատամներից մէկը բացվեցաւ և այնտեղից այնքան ջուր

բղխեց, որ նա իրան ծարաւութիւնը անցկացրուց: Մին օր Սամսոնը գնաց Սիլօ քաղաքը: Փղշտացիք պահապաններ դրեցին պարիսպների վերայ և բոլոր դռները փակեցին: Սամսոնը կէս գիշերին վերադառնալով տեսաւ որ քաղաքի դռները փակած են, նոցա պուկ տուաւ տեղէցը, իրան ուսերի վերայ դրաւ, և յետոյ տարաւ մին մերձակայ սարի գագաթի վերայ դրաւ: Փղշտացիք իմանալով որ Սամսոնը իրանց երկրեցը մին աղջիկ է վեր առել, ցեղի առաջնորդները գնացին նորա մօտ և ասացին. „Մենք մի մեծ գումար փող կ՚տանք քեզ, եթէ մեր ձեռքը մատնես Սամսոնին.„ Այդ աղջիկը, որին անունը Դալիլա էր, խոստացաւ այդ բանը անելու. ուստի ասաց Սամսոնին. „Ասա խնդրեմ, ինչպէս պէտքէ արած որ խլեն քեզանից քո ուժը.„ Սամսոնը իմանալով որ կամենումէ խաբել, ասաց. „Եթէ եօթն թաց առասաններով կապեն, իմ բոլոր ուժը կ՚կորցնեմ:„ Դալիլան եօթն թաց առասան վեր առաւ կապեց նորա ձեռները, մինչդեռ նա քնած էր և յետոյ ասաց. „Ահա՛ Փղշտացիք, որոնք եկան քեզ բռնելու:„ Սամսոնը զարթնանալով, կտորեց չուանները և Փղշտացիք փախան: Նա խաբեց Դալիլային եւս երկու անգամ: Այդ կինը լալով ասաց նորան. „Ես լաւ տեսնումեմ որ դու ինձ ամենեւին սիրում չ՚ես, որովհետև միշտ ինձ վերայ ծաղր ես անում:„—Եթէ իմ գլուխս ածելով վեր անեն, ասաց Սամսոնը, իմ ուժս ինձանից կ՚գնայ:„ Դալիլան օգուտ քաղելով այդ բանիցը մին մարդ բերեց, որը որ իսկոյն ածելեց Սամսոնի գլուխը նորա քնած ժամանակը և յետոյ ասաց. „Ահա՛ եկել են Փղշտացիք:„ Սամսոնը կարծումէր թէ այս անգամուանն էլ կարող է նոցա սպանել, բայց Աստուած արդէն նորան երեսից թողել էր և նա այնպէս տկար էր

դառնել, ինչպէս հասարակ մարդիկ։ Փղշտացիք նորա աչքերը հանելուց յետոյ մին ջաղացում դրեցին, որպէս զի շուռ տայ ջաղացի քարը։ Մին քանի ժամանակից յետոյ, երբ որ Փղշտացիք կատարում էին իրանց մեծ չաստուածոյ Դագոնի տօնախմբութիւնը, և երբ որ ազգի գլխաւորները և ազնուականները մին մեծ դահլիճում ուրախութիւն էին անում հրամայեցին որ Սամսոնը գայ որպէս զի իրանց զուարճացնէ։ Սամսոնը ներս մտնելով խնդրեց իրան առաջնորդին, ըստ որում կոյր էր, որ սենեակի մէջ գտնուած երկու սիւների մօտ կանգնեցնէ։ Այն մարդը նորան հնազանդեց, և երբ որ Սամսոնը այն սիւների մօտ հասաւ, ասաց Տէրին. „Տէ՛ր, հասցրու ինձ քո օգնութիւնը. ես յօժարութեամբ կ՚մեռնեմ այստեղ, եթէ դու այստեղ գտնուած Փղշտացւոց կորուսանես։ Այս խօսքերը ասելուց յետոյ՝ բռնեց երկու սիւնից և այնպէս սաստիկ շարժեց որ վէր ընկան հիւսերի վերայ և խորտակեցին նոցա գլուխները։ Այս դէպքը պատահելու ժամանակ երեք հազար մարդ կար։ Եւ այսպէս Սամսոնը մեռնելիս առաւել մարդ սպանեց, որչափ որ իրան բովանդակ կեանքումը սպանած չէր։

ՇԱՐԼՈՏՏԱ

Իմ սիրելի բարեկամ, ես զարմանում եմ թէ ինչի Սամսոնը առաջին անգամ այդ չարագործ Դալիլային աչքից չքցեց, երբ որ տեսաւ թէ նա աւիթներ է որոնում նորան մատնելու։ Նա մեծ կարօտութիւն ունէր մէկ Աստոլֆի պէս մարդու որ լուսնեակի աշխարհը գնար և նորա խելքը բերէր։

ՏԻԿԻ՛Ն

Իրաւ է, սիրելի, որովհետև ինչպէս ես ձեզ առաջուց էլ ասել եմ, կրքերը մարդուս բանականութիւնը խանգարում են։ Մենք այդ մասին շատ օրինակներ ունենք Սամսոնի պատմութեան մէջ։ Այժմ քո կարգն է Եւգենիա՛, պատմի՛ր քո դասը։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Մին Բեթղեհեմցի մարդ իրան անձը սովից ազատելու համար գնաց Մովաբացւոց երկրումը բնակեցաւ իրան Նոյէմ անունով կնոջ հետ և երկու տղերանց հետ 'ի միասին, որոնք այնտեղ երկու Մովաբացւոց հետ պսակուեցան։ Նոքա տասը տարու չափ այնտեղ բնակուեցան, և այս միջոցումը նոցա հայրը և երկու տղան մեռան։ Ուստի Նոյէմը մնաց միայնակ իրան հարսների հետ և մտքումը վճռեց վերադառնալ իրան հայրենիքը։ Նա ասաց իրան այրի հարսներին. „Յետ դարձէք ձեր հօր տունը, ես կ՚աղաչեմ Տէրին որ Նա ձեզ օրհնէ, պատճառը՝ որ դուք լաւ կենակցութիւն էք արել իմ որդւոց հետ և ինձ հետ։ Աստուած վարձահատոյց կ՚լինի ձեզ իմ որդւոց փոխանակ ուրիշ փեսաներ յարուցանելով ձեզ։ Նորա հարսներից մէկը նորա „Մնաս բարև„ ասելուց յետոյ՝ գնաց իրան հօր տունը, բայց միւսը, որին անունը Հռութ էր, ասաց նորան. „Ես ամենևին քեզ թողնելու չեմ, քո Աստուածը կ՚լինի իմ Աստուածը և քո ժողովուրդը կ՚լինի իմ ժողովուրդը, մահը միայն կարող է մեզ միմեանցից բաժանել.„ Ուստի Հռութը գնաց իրան սկեսրի հետ Բեթղեհեմ քաղաքը։ Որովհետև այդ միջոցումը հնձի ժամանակ էր, Հռութը խնդրեց Նոյէմի-

ցը որ գնայ արտը հունձ անէ իրանց համար հաց պատրաստելու։ Նախախնամութիւնը առաջնորդեց նորան մի Բոոս անունով հարուստ մարդու արտը, որը որ Հռութի հանգուցեալ մարդոյ ազգական էր։ Բոոսը երբ որ եկաւ իրան հնձողներին տեսնելու և իմանալով թէ Հռութը ո՞վ է, ասաց նորան. „Աստուած քեզ օրհնէ, իմ սիրելի աղջիկ. Նա քեզ վարձահատոյց կ՚լինի, ես վստահ եմ այդ մասին։ Դուրս չ՚գաս իմ արտից, դու կ՚հնձես իմ աղջիկներանց հետ և մեզ հետ հաց կ՚ուտես.„ Սորանից յետոյ Բոոսը հրամայեց իրան ծառաներին որ լաւ պատւով վարուեն Հռութի հետ և պատուիրեց նոցա նաև որպէս թէ դիպուածով շատ ցորեն վեր ածեն այնտեղ, որտեղ որ Հռութն էր հնձում, որպէս զի բաւականաչափ ցորեն հաւաքէ Նոյեմի համար։ Նոյեմը զմայլած Հռութի խոհեմութեան, հնազանդութեան և ջերմեռանդութեան վերայ՝ ասաց. „Սիրելի աղջիկ, ես կամենումեմ քո բարեկամութիւնը վարձատրել և քո վիճակը բարւոքել։ Բոոսը մեր ազգական է, նա պարտաւոր է քեզ հետ պսակուելու, ուրեմն գնա՛ այս երեկուն կալը, որտեղ որ նա գիշերը պիտի անցկացնէ ցորեն խարբալելու համար։ Դու քեզ չ՚ծանուցանես նորան մինչև որ իրան ընթրիքը չ՚ուտէ։„ Հռութը իրան սկեսուրի հրամանաւը արաւ այն՝ ինչ որ անձամբ ինքը չէր համարձակուիլ անելու, և երբ որ գիշերուայ միջումը գնաց Բոոսի անկողնոյ մօտ, այս մարդը զարմացած հարցրուց թէ ո՞վ ես դու, Հռութը պատասխանեց թէ ինքը ունի իրաւունք ըստ օրինաց պսակուելու նորա հետ, որովհետև նորա մերձաւոր բարեկամն է։„ Ո՛հ, սիրելի աղջիկ, ասաց Բոոսը, Աստուած օրհնէ քեզ. ես կ՚կատարեմ քո ցանկութիւնը, որովհետև դու առաքինի ես,

բայց մի ուրիշ մարդ կայ, որը որ ինձանից առաւել մերձաւոր ազգական է քեզ, ես չ՚եմ կարող պսակուել քեզ հետ մինչև որ նա հրաժարուելու չ՚լինի քեզ հետ ամուսնանալու։„ Միւս օրը Բոոսը նստելով քաղաքի դռան մօտ և վեր առնելով հետը տասներկու վկայք քաղաքի ծերերից, ասաց այն մարդուն, որը որ առաւել մօտիկ ազգական էր Հռութին. „Նոյեմի ցանկանումէ ծախել իրան մարդու ժառանգութեան մասը, եթէ կամենում ես ա՛ռ և պսակուի՛ր Հռութի հետ,„ — Ես ձեռք եմ վեր առնում նորա ժառանգութենիցն էլ նորա կնոջիցն էլ, պատասխանեց այն մարդը և միևնոյն միջոցումը հանեց իրան տրեխը, որովհետև այդ նշան էր հրաժարուելու հանգուցեալ մարդոյ ժառանգութենից։ Բոոսը վեր առաւ տրեխը և պսակուեց Հռութի հետ։ Բոլոր ժողովուրդը ասաց նորան „Աստուած տայ որ „Երջանիկ ապրես միշտ այդ կնկանը հետ և Աստուած օրհնէ ձեզ ինչպէս Ռաքելին և Լիային օրհնեց։„ Տէրը լսեց նոցա աղաչանքը, և Հռութը մի որդի ունեցաւ, որը որ Դաւթի հաւը դառաւ։

ԱՂՕԹՔ

Ո՜հ իմ Աստուած, ինչպէ՞ս այս պատմութիւնը սրտաշարժ է։

ՏԻՊԷ՛Ն

Զարմացէ՛ք, իմ սիրելի, Հռութի դէպի իրան սկեսուրը ունեցած բարեսրտութեան վերայ, նորա խոհեմութեան և ջերմեռանդութեան վերայ։ Զարմացէ՛ք նոյնպէս Բոոսի բարեպաշտութեան վերայ որ կամենում էր նո-

րան բարութիւն անել որպէս թէ զիպուածով և առանց առիպելու նորան իրանից շնորհակալ լինելու։ Լաւ նկատեցէ՛ք իմ սիրելի աշկերք. բաւական չէ միայն սիրել բարութիւնը, այլև պէտքէ 'ի գործ դնել նորան։ Երբ որ մին ծառայութիւն էք անում, հարկաւոր չէ որ նա իմանայ ձեր արած նորան այդ ծառայութիւնը, այդ մասին խօսել էս հարկաւոր չէ եթէ կարելի է, այլ պէտք է աշխատել ծածկել, որպէս թէ զիպուածով է այդ արածը և եթէ նա յայտնէ թէ դուք նորան որ և իցէ լաւութիւն էք արել, դուք նորան պէտքէ ցոյց տաք թէ դուք առաւել ուրախութիւն էք ունեցել այդ ծառայութիւնը նորան անելու ժամանակ, որչափ նա չէ զգացել ուրախութիւն այդ ծառայութիւն առնելու ժամանակ։ Ադէ՛լ հիմի էլ դու աս՛ա քո պատմութիւնը։

ԱԴԷԼ

Մին Եղկանա անունով մարդ ունեցել է մին կնիկ, որը որ անպտուղ է էլել։ Աննան աղաչեց Տէրին որ իրա տառապանացը մին փոխման դնէ իրան մին որդի տալով և խոստացաւ որ իրան կնուիրէ։ Աստուած լսեց նորան աղաչանքը և Աննան մայր դառաւ։ Այդ երեխային, որին Անունը Սամուէլ էր, ծծից կտրեցին թէ չէ, մայրը տարաւ Եղի քահանայապետի մօտ, որպէս զի ծառայէ Տէրին տաճարումը։ Քահանայապետը օրհնեց Աննային և նորա մարդուն ասելով. „Աստուած կ'շնորհէ ձեզ մին ուրիշ զաւակ սորա փոխարէն, որուն դուք Նորան էք նուիրում։„ Սորանից յետոյ Աննան երեք տղայ և երկու աղջիկ ծնեց։ Մին երեկոյ, երբ որ Սամուէլը քնած էր Տէրի տապանակի առների տակը՝ մին ձայն նորան կանչեց։ Նա այնպէս համարեց թէ քահանայապետն է կանչում, ուստի վեր կացաւ և հարցրաւ թէ ի՞նչ է կամենում։—Ես քեզ կանչել չեմ, պատասխանեց Եղին, գընա՛ տեղդ քնի՛ր։„ Միևնոյն բանը երեք անգամ մինը միւսի ետևէն պատահելով, Եղին իմացաւ որ Աստուած է Սամուէլի կանչողը, ուստի ասաց նորան թէ միւս անգամ եթէ կանչելու լինին քեզ, պատասխանի՛ր թէ. „Խօսի՛ր, Տէ՛ր, քո ծառան լսում է քեզ։„ Սամուէլը կատարեց ինչ որ քահանայապետը հրամայել էր. և Տէրը ասաց նորան. „Եղին զանցառու է գտնուել իրան որդւոց ուղղելու, վասնորոյ նորանցից ո՛չ մէկը չ'պիտի հասանի ծերութեան, որովհետև նոքա չարագործ են և նոցա հայրը բաւականացել է միայն նրանց յանդիմանելով, առանց խստութեամբ պատժելու, ինչպէս հարկն էր։„ Սամուէլը շատ ցանկացաւ չ'յայտնել այդ տեսիլքը քահանայապետին, բայց երբ որ Եղին նորան հրամայեց ասել ճըշմարիտը, Սամուէլը պատմեց նորան ամէնը, ինչ որ Տէրը իրան ասել էր։—Թո՛ղ Աստուծոյ կամքը կատարուի, ասաց Եղին։ Սորանից յետոյ Տէրը Սամուէլին հետ էր, որը որ բնակում էր Սիլօ քաղաքումը, և բոլոր ժողովուրդը իմացաւ որ նա մին մեծ մարգարէ է։

ԵՒԳԵՆԻԱ

Աստուած սպառնացաւ Եղիի որդւոց կորցնելով մինչ ծերութիւն չ'հասած, մի՞թէ այդ մին պատիժ է Աստուածանից երբ որ երիտասարդ հասակում մեռնում են, սիրելի բարեկամ։

ՏԻԿԻՆ

Այո՛, շատ անգամ, բայց պատահում է նմանապէս որ

երիտասարդ հասակում մեռնելը մին աստուածային ա-ռանձին շնորհք է լինում. Նա խլում է երեխանցը, մինչ-դեռ նոքա մին մեծ մեղք չ՛են գործած, իրա կանխագի-տութեամբը տեսնում է որ նա պիտի մին չարագործ դառ-նայ: Երբեմն էլ նմանապէս գտանվումեն այնպիսի առա-քինի երիտասարդներ, որոնք հենց իրանց առաջի դարե-րումը երկնաւոր հունձի համար հասած են լինում: Ան-ցեալ օրն կարդացի թէ մին թագաւորազն, որը որ Հա-ւարի թագաւորն պէտք էր դառնար, մեռաւ տասնըվեց տարեկան հասակումը, և ամենքը այնպէս էին կարծում թէ նա թունաւորուել է սրինգ ածելու ժամանակը: Նա աշխարհիս երեսին ամենաչքնաղ անձն էր և նորա գե-ղեցկութեան համար Փեբոս (Phebus) էին անուանում: Նա շատ առաքինի էր և փոխանակ տրտնջալու որ ինքը այդպէս շուտ մեռնում է, ասաց իրան անկողնոյ մօտ լաց-եղողներին այս գեղեցիկ խօսքերը. „Իմ թագաւորութիւ-նը այս աշխարհումս չ՛է, լաց մի՛ լինէք ինձ համար, ես գնումեմ իմ հօր մօտ:„ Տեսնում էք իմ սիրելի աղջկերք, որ այս թագաւորազնի մահը անշուշտ նորա բարեպաշ-տութեանը վարձատրութիւնն էր: Աստուած փութացել էր նորան իրա փառաց մէջ պսակելու: Խօսենք այժմ աշ-խարհագրութեան վերայ: Այսօր զբաղենք Ֆրանսիայի վերայ բայց յառաջ քան թէ սկսենք քննելու հիմկուայ դրութիւնը, ձեզ մին քանի խօսք պիտի ասեմ. թէ ինչ-պիսի դրութեան մէջ էր այդ անունը ստանալուց առաջ:

Մին անգամ այս երկիրը Գաղղիայ էր անուանվում, որոյ մէջ բնակում էին արտաքոյ կարգի զօրեղ մարդիկ. որոնք երկար ժամանակ անյաղթելի էին համարվում: Այս ժողովուրդը բազմանալով, իրանց համար ուրիշ երկրներումն էլ բնակութիւն հաստատեցին, գլխաւորա-

բար Իտալիայումը: Նոքա շատ զարհուրելի եղան Հռո-մայեցւոց համար մին քանի հարիւր տարիի չափ: Սո-րանց առաջնորդներից մէկը, որին անունը Բրեննոս էր, Հռոմայեցւոց բանակը ջարդելուց յետոյ՝ հրձիգ արաւ Հռոմը, 363 տարի նորա հիմնարկութենից յետոյ: Բայց և այնպէս յանկարծ Կամիլը Գաղղիացւոց վերայ յար-ձակուելով, և մէկ լաւ կոտորած անելուց յետոյ՝ ջարդեց և հալածեց նոցա: Ուրիշ ժամանակ Գաղղիացիք զօրք ուղարկեցին Յունաստան և Իտալիայ, բայց համարեա՛ թէ միշտ ջարդուեցան, մեծամեծ յաղթութիւններ անե-լուց և կողոպտելուց յետոյ այն երկիրները, որտեղով որ անց էին կացել. վերջապէս Յուլէոս Կեսարը նուաճեց Գաղղիան. համարեա՛ թէ տասը տարի պատերազմ ա-րաւ նոցա դէմ: Ես ձեզ արդէն իմացրի, Անգղիայի վե-րայ խօսելիս, որ Հռոմայեցւոց ուժը օր ըստ օրէ նուա-զեց. նոքա չ՛կարողացան պահպանել իրանց տիրապետած երկիրները, որոնք մինը միւսի ետևէն առնուեցան այն ազգերից, որոնք օգուտ էին քաղել նոցա թուլութենից: Մին ժողովուրդ, որոնց Վիզիգոտ էին անուանում, նո-րանցից խլեց Լանգեդոկը և Պրովենցիայի մին մասը, որը որ դուք տեսնում էք Ֆրանսիայի հարաւային կողմումը . . . . Մին ուրիշ ժողովուրդ, որը որ Բուրգե-նիօն էր ասվում, նրանց ձեռից խլեց այդ երկիրը, որը որ դուք տեսնում էք Ֆրանսիայի հարաւային կող-մումը և որը որ պարունակում է իրան մէջ Բուրգոնիայի և Դոֆինիայի նախնի նահանգները: Վերջապէս Ֆը-րանքները, որոնք Ռէյն գետի միւս եզերքումն էին բնակ-վում: Գերմանիայումը Փարամոնդի առաջնորդութեամբը 420 թուականում յարձակեցան Գաղղիացւոց վերայ և նրանց կողոպտեցին: Այս առաջնորդը, որը որ Գաղղիաց-

ւոց առաջին Թագաւորն էր համարուած՝ բաւականա-
ցաւ այսուամենայնիւ մին քանի անգամ արած այս հա-
րուստ երկրի բնակիչների կողոպուտներովը: Կլոդեան,
Մերովէն և Շիլդերիկ, նորա առաջնորդները, նոյնպէս
մին քանի անակնկալ արշաւանքներ անելով, նոյն երկրի
մին փոքր մասին տիրապետեցին: Ֆրանգները սկսեցին
այնտեղ իրանց համար բնակութիւն հաստատել Գլովիս
անունով Թագաւորի ժամանակը, որը որ հալածեց մնա-
ցած Հռոմայեցւոց, որոնք այնտեղ էին տակաւին: Վեր-
ջի ժամանակներումը Գլովիս դաշնակցութիւն հաստա-
տեց մին ուրիշ ժողովրդի հետ, որը որ Հռոմայեցւոց
համաձայնութեամբ Գաղղիացւոց երկրումն էր բնակվում:
Դոքա Անգղեացիք էին. ինչպէս մենք տեսանք Անգղիայի
վերայ խօսելիս: Նոքա բնակվում էին Բրիտանիա-
յումը որուն մին մասը նոցա էր թողել Գլովիսը: Ֆը-
րանսիայումը գտանուեցան իշխանութիւն հաստատվելուց
յետոյ երեք տուն կամ երեք ցեղ: Առաջին ցեղը կոչվում
է Մերովինգացւոց ցեղ, Մերովէի անունով, որը
որ իրան պատերազմասէր բնաւորութեամբը և քաջագոր-
ծութեամբը արժանացաւ իրան անունը յաղորդելու ա-
ռաջին ցեղի Թագաւորներին: Երկրորդ ցեղը ասվում
Կարլովինգեան ցեղ, Կարլոսի մեծի պատճառաւ,
Թէպէտ և նորա հայր Բէպինն է Թագաւորական Թա-
գը իրան տունը մտցրել: Իսկ երրորդ ցեղը կոչվում է
Գապետեան ցեղ, որը որ սկսեց Հուգ—Գապետի
ժամանակը:

Այս բանը լաւ ձեր միտը պահեցէք, սիրելի օրիորդ-
ներ: Տեսնենք այժմ ինչպէ՞ս է Ֆրանսիայի հիմիկուայ
դրութիւնը և ինչպէս են բաժանում նրան:

Հիւսիսային կողմից Ֆրանսիայի սահմաններն են:

Մանշ, Պա—դը—Կալէ, Բէլժիքա, Բաւարիա և Պը-
րուսիա, արեւելքից՝ Ռոն, Սավուայ, Ժուրա, Ռէն,
Վառ և Ալպեան սարերը. հարաւից՝ միջերկրական ծո-
վը, և Պիրենեան Թէրակղզին: Արեւմուտքից գտան-
վում Ատլանտեան Ովկիանոսը:

Նորա մակերեւոյթն 540085 քառակուսի քիլօմետր է
և նորա բնակչաց թիւը հասանում է մինչև 33,540000:

1789 Թուականից առաջ բաժանում էին Ֆրանսիան
երեսուներեք գաւառ կամ նահանգ, որոնք էին հիւսիսա-
յին կողմումը: Նորմանդիան, Պիկարդիան, Արտուան,
Իլ—դը—Ֆրանս, Շամպանիան և Ֆրանսիական Ֆլան-
դրան. արեւելքից գտանվում էին, Լօրէն, Ալզաս, Ֆրանշ
—Կոնտէ, Բուրգոնը, Լիօնէ և Դուֆինիա. հա-
րաւից սահմանակից էին Լանդեդօկ, Բուսիլօն Բէառն,
Գուիէն Գասկոնի հետ և Փուային դուքսութիւնը:
Արեւմտքից Սէնտոնժը, Անգումայի հետ, Պուատու,
Օնիս, Բրիտանիա, Անժու և Մէն Պէրշի հետ: Մէջ-
տեղումը գտանվում էին Օրլէանէ, Նիվերնէ, Բուրգո-
նէ, Օվէրնէը, Լիմուզէն, Մարշ, Բէրրի, և Տուրէն:
Ֆրանսիան այսօրուայ օրը բաժանվում է 86 Դէպար-
տամենտ, որոնցից 84ը հին նահանգներից են կազմուած:
Մէկը կազմուած է Կորսիքայի կղզեցը և միւսը Ավիօ-
նի դուքսութենից, որը որ միաւորուեցաւ Ֆրանսիայի
հետ 1791 Թուականումը: Դուք ձեր աշխարհագրական
գրքի մէջ կ՚գտնէք 86 դեպարտամենտի անունները և
նոյնպէս այն նահանգների վերայ տեղեկութիւններ, որոնց
պատկանումեն դեպարտամենտները: Դոցա մասին երկար-
օրէն խօսել չենք կարող, վասն զի շատ ժամանակ է հար-
կաւոր: Բայց արդէն ժամէ միմեանցից բաժանուելու,
մնացէք բարով:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒ՛Ն ՔՍԱ՛Ն ԵՒ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՔՍԱ՛Ն ԵՒ ՄԻԵՐՈՐԴ ՕՐ։

(Այս դասի ժամանակը մին նոր աշակերտուհի կար, Մատիլդա անունով 12 տարեկան հասակաւ։)

ՅՈՒԼԻԱ՛Ն։

Օրիորդներ, իմ սիրելի բարեկամը թոյլ է տուել ինձ որ պատմեմ ձեզ այն փոքրիկ վէպը, որը որ երեկ իրիկուն 'ի միասին կարդացեինք։

Կար մին անգամ մին կնիկ, որը որ շատ չարասիրտ անձն էր, նա չէր կարողանում ո՛չ մին ծառայ իւրան մօտ պահել, նրանց ծեծում էր և իւրան մարդուն այնպէս դժբաղդացնում էր որ մինչև անգամ նորա մահուան էլ պատճառ դառաւ։ Թէպէտ և այս կնիկը շատ գեղեցիկ էր և հարուստ, բայց այսուամենայնիւ ո՛չ ով չէր կամենում պսակուել նորա հետ, այնչափ զզուելի էր դառել ամենեցուն։ Վերջապէս մին աղնուական մարդ նորան իւրան կնիկ ուզեց։ Որովհետև այս մին պատուաւոր անձն էր, բոլոր աշխարհը ցաւեց նորա վերայ, և նորա բարեկամներից մինն ասաց թէ շատ մեծ յիմարութիւն է արել, պսակուելով այդ կատաղաբարոյ կնոջ հետ։—„Այդ մասին ամենևին մի՛ շփոթուի՛ք, պատասխանեց աղնուականը, առաւելն ամիսը չ՛լրացած նորան կ՛շինեմ այնպէս հեզիկ, ինչպէս մին գառն,։„ Հարսանեաց հանդէսը կատարուեց տիկնոջ ամարանոցումը առաւօտեան ժամը չորսին։ Եկեղեցիցը երբ որ դուրս եկին, կինը գնաց իւրան

սենեակը, զգեստները փոխելու համար, որովհետև շատ մարդիկների սպասում էր, որոնց խնդրել էր իւրան մօտ ճաշ ուտելու։ Այս կնիկը շփոթուած մնաց, երբ որ աղնուականը ասաց նորան թէ հարկաւոր չէ նոր զգեստներ հագնել. ըստ որում ինքը մտքումը վճռել է գնալ իւրան պարտէզումը ճաշ ուտել, որը որ չորս մղոն հեռու էր այնտեղից։

—„Իրաւի, պարոն, ասաց կնիկը, դու յիմարացել ես, միթէ՞ մոռացել ես որ մենք հիւրերի ենք սպասում։—Ես ամենևին հարկաւորութիւն չ՛ունիմ, պատասխանեց աղնուականը, հաշիւ տալու քեզ իմ անելու գործերի վերայ։ Սովորի՛ր հնազանդել ինձ առանց ընդդիմանալու, հեծի՛ր ուրեմն քո ձին։„ Այս կատաղած կնիկը ասաց իւրան ամուսնուն թէ կարող է նա մենակ գնալ իւր պարտէզը։ Աղնուականը առանց բարկանալու կանչեց չորս մեծ ծառայ, որոնց իւրան հետ բերել էր, և ասաց նոցա. „Եթէ տիկինը իւրան կամքով չ՛հեծնի ձին, կապեցէք նորան ձիի վերայ։„ Այս կնիկը տեսնելով որ իւրան ուժը չ՛պիտի յաղթէ նրանց, հեծաւ ձին և որքան կարող էր հայհոյանք տալով իւրան մարդոյ դէմ։ Այս միջոցումը մին շնիկ. որը որ աղնուականին շատ սիրում էր, վազելով եկաւ նորա ոտները փաթաթուելու։—Կորի՛ր, ասաց նա, ես սիրտ չ՛ունիմ ընդունելու քո փաղաքշանքները։ Այս ողորմելի շունը, որը որ հասկանում չ՛էր նորա ասածը, եկաւ երկրորդ անգամ նորա ոտների տակ ընկնելու։—Ես ամենևին սիրում չ՛եմ, ասաց աղնուականը, երբ որ ինձ հակառակում են, և վեր առնելով իւրան ատրճանակը, որը որ համետի առաջ դրած էր, դարտակեց այս խեղճ շան գլխի վերայ։ Տիկինը տեսնելով այս բանը, ասում էր կամաց ձայնիւ. կարող է ինձ հետ էլ այն-

պէս վարուի. ինչպէս այս օդորմելի շան հետ: Նրանք երեք մղոն ճանապարհորդութիւն արին առանց մին խօսք ասելու, բայց տիկինի ձին չուզենալով անց կենալ մին ծառի մօտով, որից որ վախումէր, ազնուականը հրամայեց կնոջը ցած իջնել ձիցը և յետոյ ասաց ձիին. „Ես քեզ կ'սովորացնեմ հնազանդելը: Միևնոյն ժամանակումը վեր առաւ ատրճանակը ջարթեց ձիի գլուխը մեծ անտարբերութեամբ: „Ո՜հ Աստուած իմ, ասաց կինը, խղճա՛յ իմ վերայ, արդեօք ի՞նչ պիտի լինի իմ վերջը այս կատաղած մարդոյ ձեռից, նա թէ այսօր չէ միւս օր անշուշտ պիտի սպանէ ինձի:—Միտքս փոխել եմ, ասաց ազնուականը, յետ դառնանք ամարանոցը, ես իմ ձին կամաց կամաց կ'քշեմ, որպէս զի կարող լինիս ինձ հետևելու, բայց որովհետև կամենում չեմ կորցնել ձիիս համետը, խնդրեմ տանէք նորան ձեր ուսերի վերայ: Այս կնիկը առաւել մեռած քան թէ կենդանի, վեր առաւ համետը առանց համարձակելու մին բան ասել և եկաւ հասաւ ամարանոցը արիւն քրտնքի մէջ մտած: Նորա բացակայութեան ժամանակը առաջուայ բոլոր ծառաներին դուրս էին քցել և ուրիշ սպասաւորներ էին վարձել, որոնց նա ճանաչում չ'էր և որոնցից նա սարսափումէր, որովհետև նրանք այնպիսի զարհուրելի կերպարանքներ ունէին, որ ահի դողի մէջ էին քցում նորան: Տիկինը շատ ցանկանում էր փախչել, բայց էլ հնարք չ'կար էտուր վերայ մտածելու: Ազնուականը նորան ճաշ և ընթրիք անել տուեց, չ'մտիկ անելով որ նա ախորժակ էլ չ'ունէր: Կարծես թէ մահուան դուռը ընկաւ տիկինը, երբ որ նա ասաց թէ կարող է հիմի մտնել իւր սենեակը: պառճառը որ միևնոյն ժամանակումը վեր առաւ իրան ատրճանակը: Երբ որ կինը մտաւ սենեակը, որը որ կարծում

էր թէ իրան գերեզմանն պիտի դառնայ, ազնուականը նստեց մին աթոռի վերայ և հրամայեց որ իրան կօշիկները հանէ: Այս կնիկը լռութեամբ հնազանդեցաւ: Յետոյ ազնուականը հրամայեց նստել միևնոյն աթոռի վերայ, և ինքն էլ նորա մաշիկները հանեց:

—„Իրաւունք է, ասաց նա, որ ես միևնոյն ծառայութիւնը անեմ քեզ, ինչ որ դու ինձ արեցիր, որովհետև այդպէս է իմ բնաւորութիւնը, ես վարվումեմ մարդկանց հետ այնպէս, ինչպէս իրանք են վարվում ինձ հետ: Քեզանից է կախուած այսուհետև այդ մասին ինչպիսի հնարքներ բանացնելը: Եթէ դու ինձ մին ընդդիմութիւն անելու լինիս, փոխարէնը ինձանից չորսը կ'ստանաս, բայց որչափ որ քաղաքավարութեամբ վարվելու լինիս ինձ հետ, նոյնչափ էլ սիրով կ'լինիմ ես քեզ հետ: Ուրեմն քո վարմունքը իմ վարվելուն առաջնորդ պիտի դառնայ, և քեզանից պիտի կախուի աշխարհիս երեսին ամենաերջանիկ կնիկ լինել ինձ հետ կենակից լինելով: Բայց միտդ բե՛ր որ եթէ էլի յիմարութիւններ անելու լինիս, ինձ հազար անգամ յիմար կ'գտնես քեզանից:„— Այդ չափը բաւական է, պարոն, ասաց կնիկը, քո խօսքին տէր կանգնի՛ր, եթէ իմ վարվելու եղանակները քո վարվելու ձևերին օրինակը պիտի դառնան, ինչպէս որ նըկատումեմ, ամենևին չ'պիտի տեսնեմ քեզ այն դրութեան մէջ, որ դրութեան մէջ որ այսօր տեսի: Յիրաւի այս կնիկը խորհրդածութիւն արաւ իւր արարմանց վերայ և ուղղեց իւր ամենայն պակասութիւնները, 'ի զարմացումն բոլոր աշխարհի:

ՏԻԿԻ՞Ն

Խոստովանեցէ՛ք, իմ սիրելի աղջկերք, որ այս ազնուա-

կանը շատ լաւ հնարք էր գտել: Դուք տեսնում էք օրինակի ազդաւ, որքան քաղցրութեամբ եմ վարվում ձեզ հետ, բայց այսուամենայնիւ կարող եմ ձեզ հաւաստացնել որ եթէ գտնէի ձեր մէջ մին այնպիսի աշակերտուհի, որ այս կնոջ նմանէր՝ ես էլ այնպէս կ՚վարուէի, ինչպէս այդ ավնուսիանը: Եթէ Աստուծոյ հաճոյ լինի, ես երբէք կարօտութիւն չ՚պիտի ունենամ այդ օրինակ վերջին միջոցները 'ի գործ դնելու: Դուք ամէնքդ էլ բարի և հնազանդ էք: Յուսամ որ օրիորդ Մատիլդան, որը որ եկել է մին քանի ամիս ժամանակ անցկացնելու իրա հօր եղբօր աղջկայ Յուլիանէի մօտ, կ՚հետևէ ձեր բարի օրինակին և միշտ սիրով բարեկամ կ՚մնայ:

ՄԱՏԻԼԴԱ

Յուսամ, Տիկին:

ՏԻԿԻՆ

Ինձ էլ քո բարեկամն կանչիր, ինչպէս ուրիշները, սիրելի: Եկ՛ քեզ համբուրեմ և ամենևին երկիւղ մի՛ կրիր ինձանից, որովհետև եթէ այս աղջիկերքը անեն ինչ որ ես ցանկանումեմ, ես էլ կ՚աշխատեմ նրանց գոհացնելու: Հարցրու այս մասին Մարիամին, որը որ մին ժամանակ չարաչիրտ էր, ինչպէս մին օձ, և որը որ հիմի շատ համեստ աղջիկ է դառել և այսօրուայ օրը իմ սիրելի բարեկամն է:

ՄԱՏԻԼԴԱ

Ուրեմն կարող եմ ես էլ ձեր սիրելին դառնա՞լ:

ՏԻԿԻՆ

Այո՛, եթէ քո օձի բնաւորութիւնը թողնես:

ՄԱՏԻԼԴԱ

Իմ մայրը ձեզ այս ասած կ՚լինի, և ինձ վերայ էր որ այդ չարագործ կնկան պատմութիւնը ասել տուէք Յուլիանէին:

ՏԻԿԻՆ

Հենց այդպէս է, սիրելի, կամենում չ՚եմ քեզ խաբել. իմացել ես: Բայց որովհետև դու լաւ սիրտ ունիս, ես սարսափում չ՚եմ քո սխալանքներից. մենք կ՚ուղղեմք: Եւգենիա՛ ասա՛ այժմ քո պատմութիւնը:

ԵՒԳԵՆԻԱ

Փղշտացիք Իսրայելացւոց դէմ պատերազմ բանալով, նրանց յաղթեցին: Իսրայելացիք Տիրոջ տապանակը բերին, բայց որովհետև նոքա չարագործներ էին, Աստուած նոցա չ՚օգնեց: Նոքա յաղթուեցան, ուխտի տապանակը գերի ընկաւ և հեղի քահանայապետի երկու որդիքը սպանուեցան: Փղշտացիք տապանակը իրանց Դագոն չաստուծոյ տաճարը տարին, բայց գիշերով տեսին որ կուռքը կործանուել է երեսը գետնի վերայ ընկած տապանակի առաջին: Փղշտացիք նորան վերստին իրա տեղը դրեցին բայց երկրորդ օրը գիշերով տեսին որ երեսը գետնի վերայ ընկած էր, և նորա ոտները և ձեռները, որոնք կոտրտուել էին՝ դրան շեմքումը ընկած էին: Այն օրից սկսուած նրանք ամենայն տեսակ հիւանդութիւնների մէջ ընկան այդ տապանակի պատճառաւ: Նորան ման էին ածում քաղաքից քաղաք, բայց ամենայն տեղ, որտեղով որ անց էին կացնում, մարդիկ կոտորվում էին: Ուստի

տապանակը եօթը ամիս իրանց մէջ պահելուց յետոյ՝ դըրեցին մի սայլի մէջ, որուն լծեցին երկու մատաղ կով, մատաղ հորթեր ունէին և որոնք երբէք լծի տակ ընկած չ'էին: Այն կովերը փոխանակ իրանց ախոռը գնալու, ուղղակի վեր առան Իսրայելացւոց երկրի ճանապարհը: Փղշտացիք դրել էին այս սայլի վերայ պարգևներ Աստուծոյ բարկութիւնը հանդարտեցնելու համար: Կովերը կանգնեցին մի տեղ, որտեղ որ Բեթսամիսացիք հունձ էին անում: Նրանք ուրախութեան ձայներ արձակեցին, երբ որ տեսին ուխտի տապանակը, բայց յետաքրքրութեամբ և առանց ակնածելու նրան քննելու համար Աստուած նորանցից մի մեծ մասը կոտորեց: Ուստի տարան տապանակը մի տան մէջ դրին, որտեղ որ քսան տարի մնաց: Այդ ժամանակից յետոյ Իսրայելացիք զղջանալով իրանց արած մեղքերի վերայ, դուրս քցեցին իրանց տան մէջից կուռքերը: Սամուէլը նրանց համար Աստուծոյ աղօթք արաւ, որով ողորմութիւն գտան Իսրայելացիք Աստուծոյ առաջ, և այն ժամանակից սկսած յաղթող հանդիսացան Փղշտացւոց վերայ և Սամուէլը նրանց վերայ դատաւոր էր կարգած Աստուծոյ կողմանէ: Մարգարէի ծերութեան պատճառաւ նորա որդիքը դատաւոր եղան, բայց նոքա ամենևին նմանում չ'էին իրանց հօրը, որովհետև չարագործ մարդիկ էին. կաշառ էին վեր առնում անմեղներին դատապարտելու համար, իսկ մեղաւորներին արդարացնելու համար: Իսրայելացիք ասացին Սամուէլին որ իրանց մի թագաւոր տայ, որպէս զի կարող լինի իրանց լաւ կառավարելու: Սամուէլը այս առաջարկութեանը վերայ տրտմեց, բայց այսուամենայնիւ Տէրը հրամայեց հնազանդել ժողովրդի խնդրանացը: "Նա ասաց թէ մի զոհ պատրաստել տուր և ումին որ ինքը

ընտրել է, կ'ուղարկէ: Յիրաւի Բենիամինի ցեղից մի երիտասարդ վազելով իրան կորած աւանակների ետևէն, դատաւորի առաջ անցկացաւ հէնց այն ժամանակ, երբ որ նա կատարում էր զոհագործութիւնը: Սամուէլը տեսնելով այդ երիտասարդին, նորան թագաւոր ընտրեց Իսրայելացւոց վերայ: "Նա անուանվում էր Սաւուղ, որը որ մի խեղճ անշան գերդաստանից էր: Սամուէլը հըրաւիրելով Սաւուղին իրան մօտ ընթրիք անելու՝ հրամայեց ամենաընտիր բաժինը տալ նրան, և յետոյ նորան տարաւ տան վերի աստիճանը և այնտեղ նորա վերայ ձէթ ածեց և յայտնեց որ Աստուած նորան թագաւոր է ընտրել: Յետոյ հրամայեց նորան որ եօթը օր այնտեղ մնայ: Այս միջոցումս Սամուէլը հաւաքելով ժողովուրդը վիճակ քցեց: Վիճակը ընկաւ Սաւուղի վերայ, որին որ շատ դժուարութեամբ գտին, որովհետև թաքս էր կացել: Իսրայելացիք մեծարանքով ընդունեցին նորան:

ՏԻԿԻՆ

Շարունակէ՛ր, սիրելի Մարիամ:

ՄԱՐԻԱՄ

Սաւուղը երկու տարի հանդարտութեամբ թագաւորելուց յետոյ Փղշտացւոց դէմ ունեցած ատելութիւնները նորից սկսուեցան: Այլ և այլ յարձակմունքներից յետոյ՝ Սաւուղի որդի Յովնաթանը մի արժանայիշատակ գործ արաւ: Իրան բոլոր յոյսը դնելով Աստուծոյ վերայ և հետը միայն իրան ախոռապետը վեր առած՝ մտաւ թշնամու բանակը, որտեղ որ սկզբումս քսան Փղշտացի սպանեց. և Աստուած այնպէս երկիւղ էր քցել նրանց

սրտերումը, որ նրանք միմեանց սպանում էին կամ թէ զէնքերը վեր էին ածում առաւել արագ փախչելու համար։ Սաւուղը նրանց հետը ընկաւ ասաց. „Անիծեալ լինի նա, ով որ հաց ուտէ իմ թշնամիներին յաղթելուց առաջ։ Յովնաթանը, որը որ լսել չէր այդ արգելմունքը, նեղութենից նուաղած թաթախեց իւր տէգի (копье) ծայրը մեղրահացի մէջ և դրաւ բերանը։ Յաղթութիւնը անելուց յետոյ Սաւուղը խորհուրդ հարցրաւ Տէրից իմանալու համար թէ էլի պէտք է Փղշտացւոց կոտորել թէ չ'է։ Բայց Աստուած ոչինչ պատասխան չ'տուաւ, Դորանով Սաւուղը իմացաւ թէ որև իցէ մարդ երդմնազանց է գտնուել։ Յետոյ տեղեկանալով թէ Յովնաթանն է եղել մեղաւորը, կամեցաւ նորան սպանել տալ, բայց ժողովուրդը թոյլ չ'տուեց և ստիպեց թագաւորին որ նորա յանցանքը ների։

ԵՒԳԵՆԻԱ

Ես շատ վախում էի թէ Սաւուղ կ'սպանէր Յովնաթանին։

ՏԻԿԻՆ

„Զարմացէ՛ք, այդ երիտասարդ թագաւորազնի արարմունքի վերայ։ Նա սկսումէ իրան բովանդակ յոյսը դնել Աստուծոյ վերայ և աղաչել նորան։ Նա ամենևին վախում չ'է, մտնումէ բազմաթիւ թշնամեաց բանակը ունելով հետը միայն մին մարդ։ Ի՞նչ չ'ենք կարող անել արդեօք աղօթքով և մեր Աստուծոյ վերայ դրած վստահութեամբը։ Սիրելի Մատիլդա՛, հենց այդ օրինակ դիպուածի մէջ է, որ մարդ օգնութիւն պիտի խնդրէ Աստուածանից։ Դու բազմաթիւ թշնամիք ունիս յաղ-

թելու, զորօրինակ՝ հպարտութիւնը, բարկութիւնը և կամակորութիւնը։ Բայց եթէ Աստուած քեզ հետ պատերազմի, ինչպէս Յովնաթանի և Իսրայելացւոց հետ էր պատերազմում, անշուշտ յաղթութիւնը դու կ'տանես։

ՄԱՏԻԼԴԱ

Իմ բնաւորութիւնը ձեզ շատ գեղեցիկ են նկարագրել, բայց մոռացել են ձեզ ասելու թէ շատ անգամ ստիպմամբ են ինձ բարկացնում։ Հուսկ ուրեմն, տիկին, ամեն մարդ ունի իրան բնաւորութիւնը և ձեզ հաւատացնում եմ թէ ով որ խօսումէ իմ բնաւորութեան վերայ, նա առաւել վատ բնաւորութիւն ունի։

ՏԻԿԻՆ

Քո ասածը լաւ չ'է, իմ սիրելի. քեզ քաջ յայտնի է որ դու պարտաւոր ես պահել նրանց պատիւը, որոնք որ ինձ այդ մասին յայտնել են։

ՄԱՏԻԼԴԱ

Ես իմանում եմ որ ես ակնածութիւն պիտի ունենամ առ իմ մայրը, բայց նա ոչինչ ձեզ ասած չ'էր լինի, եթէ իմ աղախինը նորա խօսել չ'տար։ Կարծում չ'եմ թէ պարտաւոր եմ ակնածութիւն ունենալ նաև մին աղախին կնկան վերայ էլ։

ՏԻԿԻՆ

Դու սխալվում ես, սիրելի, այն կնիկը, որուն որ քո մայրը դրել է քեզ մօտ, որպէս զի հսկէ քո ամենայն ա-

բարմանցը վերայ, հետևողաբար քո մօր փոխանորդն է, ուրեմն պէտք է նորան էլ հնազանդութիւն ցոյց տաս, այդ բաւական չէ, դու պարտաւոր ես ամենայն մարդոյ պատիւը անգամ պահել։ Եթէ քո բնաւորութիւնը չ՛փոխես, ոչով էլ քո պատիւը չէ պահել։

ՄԱՏԻԼԴԱ

Ես մին այնպիսի աստիճանումն եմ գտնվում, որ ամէն միջոցներ ունիմ ինձ պատուել տալու, մինչև անգամ կամենալու էլ չ՛լինին պատուել։

ՏԻԿԻՆ

Որովհետև դու ինձ ստիպումես ասելու ճշմարիտը, յայտնումեմ քեզ, որ ո՛չ թէ միայն քո աստիճանի վերայ, ակնածութիւն չ՛եմ անում, այլ և քո անձնի վերայ էլ։ Ես քեզ արհամարհումեմ առաւել քան թէ փողոցներումը ձուկ ծախող կանայքը։ Նորանցից ոչինչով դու չ՛ես զանազանվում, եթէ ո՛չ քո հպարտութեամբը։ Արդ՝ այդ մին այնպիսի յատկութիւն է որ ոչովի պատիւը պահպանել չ՛է կարող։։ Սիրելի օրիորդներ, խնդրումեմ ձեզ ամենևին բան չանել, երբ որ ձեզ հետ խօսումեմ, այլ լսել ինձ ուշադրութեամբ. ըստ որում ի միջի այլ և այլ պարտաւորութեանց, դուք պարտաւոր էք նաև ինձ հընազանդել։

ՄԱՏԻԼԴԱ

Ես մի՞թէ պարտաւոր եմ ձեզ հնազանդել և պատիւ տա՞լ։

ՏԻԿԻՆ

Այո՛, եթէ դու այդպէս անելու չ՛լինիս, այսինքն՝ ինձ պատիւ չ՛տաս, քո սրտումն միայն կարող ես, եթէ ոչ չ՛եմ կարող համբերել։ Եթէ ես քեզ համար պատժել տուի որին կեանքը քեզ համար պատժել տուի, անշուշտ ես էլ քեզ ցոյց կ՛տայի իմ իշխանութիւնը։ Ուստի ես քեզ յայտնումեմ որ ամբողջ օրը պիտի մնաս քո տեսակ անձանց հետ, այսինքն՝ անուսում մնացածների հետ, և պիտի խոհանոցումը աղախինների հետ հաց ուտես։

ՄԱՐԻԱՄ

Սիրելի Մատիլդա, եթէ դու տեսնէիր թէ ո՞րչափ զզուելի ես դառել այն րոպէից սկսած երբ այդպէս յանդգնութեամբ խօսումես իմ դաստիարակուհուս հետ՝ իսկոյն ներողութիւն կ՛խնդրէիր։

ՏԻԿԻՆ

Թո՛ղ, Մարիամ, նա արժանի չ՛է ներողութեան. բայց այսուամենայնիւ շատ ուրախ եմ որ այս բանը ձեր ներկայութենումը պատահեցաւ։ Այս դասը ձեզ առաւել բարիք կարող է հասցնել քան որչափ խօսք կարող էին ասել ձեզ հպարտութեան վերայ։

ՄԱՐԻԱՄ

Սիրելի բարեկամ, երբ որ մտածումեմ թէ եօթն ամիս առաջ ես էլ այդպէս եմ էլել՝ ինձ սարսափ է գալիս։ Որչափ ա՞րդեօք պարտաւոր եմ ձեզ՝ որ դուք ինձ օգնական եղաք ինձ ուղղացնելու։

ՏԻԿԻ՛Ն

Դու բարի կամք ունէիր, իմ սիրելի, մի՛ն կողմից էլ դու միայն եօթն ամաց էիր, հպարտութեան վիշապը, որը որ քո սրտի մէջ էր, տակաւին շատ փոքր էր, մենք նորան դիւրութեամբ յաղթեցինք, բայց այս թշուառ աղջկայ վիշապը զօրեղ է, տասներկու ամաց է և շուտով վիշապը կ՚յաղթէ նորան։ Յուլիանէ, ի՞նչի լաց ես լինում։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Իմ սիրելի բարեկամ, դուք իմանում էք որ ես շատ սիրում եմ իմ հօրեղբօր աղջկանը, ուրեմն դատեցէք թէ որչա՞փ սիրտս վիրաւորուած է նորան այդչափ չարասիրտ տեսնելով։ Մի՞թէ դա այդքան հասակը առած է, որ չ՚կարողանայ իրան ուղղացնել։

ՏԻԿԻ՛Ն

Տակաւին շատ չէ անցկացել ժամանակը, իմ սիրելի, բայց ճշմարիտ է որ նա աւելի նեղութիւն պիտի ունենայ իրան ուղղացնելու այսօր, որչափ չ՚էր ունենալ երեկ, և օրեց օր էլ աւելի պիտի դժուարանայ այդ բանը։ Յանձնում եմ ձեզ ամենեցուն էլ որ աղօթք անէք Աստուծոյ որպէս զի նորան դարձի բերէ։

(Յուլիանէն ընկնելով Տ. Դուբրելի գիրքը)

՚Ի սէր Աստուծոյ մի՛ թողէք որ իմ հօր եղբօր աղջիկը մնայ [illegible]ա հպարտութեան մէջ։ ՚Ներեցէք նորան։ Ո՛հ Աստուած իմ, եթէ նա այս գիշեր մեռնելու լինի, ի՞նչ կ՚լինի դորա հետ։

ՏԻԿԻ՛Ն

Բայց, սիրելի, եթէ ես էլ նորան ներելու լինիմ, Աստուած չ՚է ներել, եթէ նա իրա արածների վերայ փոշմանած չ՚լինի։ (Մատիլդան ընկնում է դաստիարակուհու գիրկը լաց լինելով։) Ահա՛ հպարտութիւնը, որը որ տրաքվում է։ Բաջալերւէ՛ր իմ սիրելի, եթէ դու կամենայիր խոստանալ ինձ անելու այն՝ ինչ որ ես քեզ հրամայելու լինէի, ես էլ կարող կ՚լինէի խոստանալ քեզ որ ժամանակով բարի աղջիկ կ՚դառնայիր։

ՄԱՏԻԼԴԱ

Ես ինքս էլ չ՚եմ իմանում իմ ուզածը, ես արդէն իմանումեմ որ հպարտութեան հրէշ եմ դառել, և եթէ այս օրիորդները ամենքն էլ պիտի ինձ անարգեն, դուք էլ ինձանից պիտի զզուէք և եթէ ես ինքս էլ ինձ ատելի պիտի դառնամ։

ՏԻԿԻ՛Ն

Այդ օրինակ իրան պակասութիւնները ճանաչելը բաւականին նշանակութիւն ունի, իմ աղջիկ։ Բաջալերուէ՛ր։ Դու բարեպատեհ միջոց ունիս քեզ ուղղացնելու, այդ առիթը ձեռից մի՛ քցի՛ր։

ՄԱՏԻԼԴԱ

Բայց եթէ խոստանամ ինձ ուղղացնելու, էլի խոհանոցումը աղախինների հետ հաց ուտել կ՚տամք։

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, իմ սիրելի, այս իրիկուն այնտեղ կ՚ուտես, քո

հայը, այսօրուայ արած յիմարութիւններդ պատժելու համար։ Երբ որ ճշմարտապէս մեզ ուղղացնելու փափագ ունենանք։ ՚Ի բոլոր սրտէ կ՚անենք այն ամեն բանը, ինչ որ մեզ հրամայելու լինին։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Թո՛յլ տուէք ինձ էլ այնտեղ ուտել, որպէսզի նա շատ ամօթալի չլինի։

ՏԻԿԻ՛Ն

Ես հաւան եմ ձեր սրտին, բայց պիտոյ չէ պակասացնել նորա պատիժը, նա արժանի է դորան, նա իրան անձը աղախիններից էլ աւելի շատ է ցածրացրել իրան հպարտութեամբը, և ձեզ հաւատացնում եմ որ նա գզուելի արարած է Աստուծոյ առաջին։ Ուրեմն պիտի յետ բռնանայ իրան աստիճանը այդ միջոցաւը։ Այդ բանը Աստուծոյ շնորհացը նորան կ՚արժանացնէ և նա կ՚լինի առաքինի աղջիկ, բայց դորա համար հարկաւոր է որ ուղիղ սրտով անէ։ Մատիլդա՛, ես քեզ քո կամացն եմ յանձնում։ Յիրաւի շատ ամօթալի բան է աղախինների հետ հաց ուտելը, ամօթալի է այդ՝ վասնզի նրանց հետ հաց ուտելը, իբրև պատիժ եմ սահմանում։ Յիսուս Քրիստոսը, որը որ երկնքի և երկրի թագաւորն է, մին ախոռի մէջ է ծնուել։ Մի՞թէ Նա խեղճերին իրան հետ ընկերակից չէ արած, Նա, որն որ նորա հայրն էր կոչվում, մին խեղճ հիւսն էր, թէպէտ և թագաւորական ազգից էր։

ՄԱՏԻԼԴԱ

Շատ բարի, ես հնազանդում եմ, ես այս երեկուն խոհանոցումը իմ ընթրիքը կ՚ուտեմ։

ՏԻԿԻ՛Ն

Քո յօժար կամօ՞քը, սիրելի աղջիկ։

ՄԱՏԻԼԴԱ

Այո՛, իմ յօժար կամօքը։

ՏԻԿԻ՛Ն

Ե՛կ քեզ համբուրեմ, հաշտուենք միմեանց հետ։ Ես սկսում եմ յուսալ, որովհետև վեհանձնութեամբ ես կատարում եմ նշանակած պատիժը։ Ես քեզ ներում եմ այս անգամ և բաւականանում եմ միայն քո հնազանդութեամբը։

ՄԱՏԻԼԴԱ

Դուք շատ բարեսիրտ էք՝ որ ինձ թողութիւն տուիք։ Ես ձեզ հաւատացնում եմ որ ես աւելի մեծ ամօթ եմ կրում ձեզ այդչափ նեղութիւն պատճառելուս համար։

ՄԱՐԻԱՄ

Դուք ասացիք թէ Քրիստոսի հայրը մին խեղճ հիւսն էր, ի՞նչպէս կարելի է որ նա հիւսն եղած լինի։

ՇԱՐԼՈՏՏԱ

Բաղդի այդօրինակ փոփոխութիւնը պատահում է երբեմն. իմ միտս է գալիս որ հին Աստուածաշնչի մէջ կարդացել եմ թէ Սիդօն քաղաքումը թագաւորական ցեղից մին մարդ այգեպան է էլել. Ահա՛ դորա պատմութիւնը։ Մեծն Աղէքսանդր մին սիրելի ունէր Եփեստիոն անու-

նով։ Այդ աշխարհական Թագաւորը եկաւ Սիդօն քաղաքը և Սիդօնացիք խնդրեցին որ խեղճ իրան ձեռով որ մին Թագաւոր տայ իրանց։ Աղէքսանդրն ասաց Եփեստիօնին. „Ես քեզ եմ տալիս այս Թագը, և դու կարող „ես նորան պարգևել քո բարեկամներից մէկին։„ Եփեստիօնը բնակում էր իրան երկու եղբօրց մօտ, որոնց յարգոյ բնաւորութիւնը լաւ էր գնահատել։ Նա մտածեց թէ էլ ոչինչ աւելի մեծ լաւութիւն չէ կարող անել նոցա, բայց եթէ նորանցից մէկին տալ այդ Թագը։ Երկու եղբարքը շնորհակալութիւն անելուց յետոյ ասացին թէ իրանց օրինաց համեմատ կարելի չէ նրանց բարձրանալ Թագաւորական աթոռի վերայ, որովհետև Թագաւորական ցեղից չ'են։ Եփեստիօնը զմայլած նրանց այսպիսի օրէնապահութեան վերայ, ասաց թէ ինքը այնպէս վստահ է նրանց ունեցած առաքինութեան վերայ որ իրանց է յանձնում այդ Թագը, որպէսզի իրանք Թագաւորական ցեղից մին մարդոյ, որին որ պատշաճ համարեն, տան։ Այդ քաղաքումը մին Թագաւորազն կար, բայց այնպէս չքաւոր էր դառել որ իրան բովանդակ կայքը միայն մին այգի էր, որը որ ինքը իրան ձեռով էր մշակում իրան օրական ապրուստը հայթայթելու համար։ Երկու եղբարքը գնացին այդ մարդու տունը, որը որ Աբդոլոնիմ էր կոչվում, նորան գտին կեղտոտ և պատառոտած զգեստներով և ասացին. „Թողէ՛ր քո գործը և ե՛կ բազմի՛ր քո հարց աթոռի վերայ։ Աբդոլոնիմը կարծելով թէ ծաղըր են անում իրան վերայ՝ ասաց. „Վայել չ'է ձեզ գալ իմ տունը ինձ վերայ ծաղր անելու համար։„ Եփեստիօնի եղբարքը տեսնելով որ կամենում չ'է իրանց հաւատալ, խլեցին նորա կեղտոտ զգեստները, և հագցրին Թագաւորական զգեստներ, որոնք բերել էին իրանց հետ։

Աղէքսանդրը լսելով այս դիպուածը. ցանկացաւ տեսնել այն մարդուն։ Աբդոլոնիմը նորա առաջ գնաց պարկեշտ հաստատութեամբ։ Երբ որ նա հարցրաւ թէ ի՞նչպէս պէտքէ պահպանէ իրան նոր պաշտօնը, ծերունին պատասխանեց այս գեղեցիկ խօսքերը։ „Աստուած տայ որ կարողանամ իմ մեծութիւնը այնպէս քաջութեամբ պահպանել, ինչպէս մինչև այժմ աղքատութիւնս եմ պահպանել, որովհետև մինչև այժմ ձեռներս են ինձ կերակրել. Թէպէտ և ոչինչ ունեցել չ'եմ, այսուամենայնիւ ոչինչի էլ կարօտութիւն չ'եմ ունեցել։ Աղէքսանդրն զմայլած այս պատասխանի վերայ՝ մեծամեծ պարգևներ արաւ նորան, իրա նորա վերայ ունեցած յարգանքը ցոյց տալու համար։

ՔՍԱ՛Ն ԵՒ ԵՐԵՔԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒ՛Ն

ՔՍԱ՛Ն ԵՒ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻ՛Ն

Դու շատ պիտի ուրախանաս, սիրելի Եւգենիա, որովհետեւ կամենում եմ պատմել այն հրաշալի վէպքերից մինն, որը որ դու այդչափ սիրում ես, բայց նախապէս իմացէք որ Մատիլդան հեզ է դառել ինչպէս մին գառն և միայն մին սխալ էր արել, այն էլ իսկոյն ուղղեց, ուստի ես նորան 'ի բոլոր սրտէ սիրում եմ։ Համոզված եղէք իմ սիրելի աղջկերք, որ ես այն ժամանակ միայն ուրախ եմ լինում, երբ որ կարողանում եմ գովել ձեզ արդարութեամբ. այդ ինձ համար աւելի հաճելի է քան թէ յանդիմանութիւններ անել։ Լսեցէք այժմ իմ պատմութեանը։

Եղել է մին անգամ մին դիցանուշ, որը որ կամեցել է պսակուել մին թագաւորի հետ, բայց որովհետեւ նա շատ վատ համբաւ ունէր, թագաւորն բարւոք համարեց անձնատուր լինել նորա կատաղութեանը, քան թէ լինել ամուսին մին կնկան, որին որ ոչով չէր պատւում։ Դիամանտին անունով մին բարեգութ դիցանուշ պսակել տուաւ թագաւորին մին թագաւորի աղջկայ հետ, որին որ ինքը դաստիարակել էր և խոստացաւ որ նրա Ֆիւրիի դէմ կ'պահպանէ։ Բայց քիչ ժամանակից յետոյ՝ Ֆիւրին դիցանուշների թագուհի դառաւ և նորա իշխանութիւնը, որ շատ գերազանցվում էր Դիամանտինի իշխանութենիցը՝ միջոց տուաւ նորան որ իրան վրէժը նորանից հանէ։ Թագուհւոյ ծննդեան ժամանակ այնտեղ

գտնուելով, նորան մին այնպիսի տղայ տուաւ, որին գեղջութեան նմանը չկար։ Բայց Դիամանտինը, որը որ թախ էր կացել թագուհու անկողնոյ մէջ, աշխատեց նորան մխիթարելու Ֆիւրիի գնալուց յետոյ։ „Սիրտդ պնդացրու, ասաց նա, չ'մտիկ արած քո թշնամու չարութեանը, քո որդին շատ երջանիկ պիտի լինի մին օր։ Դու նորան կ'անուանես Սպիրիտուէլ, ոչ թէ միայն նա հարկաւոր եղած իմաստութիւն կ'ունենայ, այլ և կարող կ'լինի շնորհել իմաստութիւն այն մարդուն, որին որ ամենիցը շատ պիտի սիրէ։ Այս միջոցումը փոքրիկ թագաւորազնը այնպէս գեղջ էր, որ կարելի չէր մտիկ անել նորա վերայ առանց սարսափելու թէ նորա լաց լինելու ժամանակ և թէ ծիծաղելու ժամանակ. նա այնպէս զզուելի ծամածռութիւններ էր անում, որ փոքր երեխայքը, որոնց բերում էին նորան հետ խաղալու, երկիւղ էին կրում նորանից և ասում էին. „Դա մին հրէշ է։„ Երբ որ նա չափահաս դառաւ, բոլոր աշխարհք ցանկանում էր լսել նորան խօսքերը, բայց ծածկում էին իրանց աչքերը։ Եւ ժողովուրդը, որը որ իմանում չէ բստ մեծի մասին թէ ի՞նչ են իրանք ցանկանում, մին այնպիսի ատելութիւն վեր առին Սպիրիտուէլի դէմ որ երբ որ թագուհին երկրորդ որդին ունեցաւ, ստիպեցին թագաւորին որ նրան նշանակէ իրան ժառանգը։ Սպիրիտուէլը առանց տրտնջալու տուաւ թագը իրան եղբօր և ձանձրացած մարդկանց յիմարութիւններից, որոնք միայն մարմնոյ գեղեցկութեան վերայ են մտիկ տալիս առանց մտածելու հոգւոյ գեղեցկութեան վերայ, հեռացաւ մին անապատ, որտեղ որ նուիրեց իրան կեանքը ուսման և կատարելապէս երջանիկ դառաւ։

Ֆիւրի դիցանուշի մտադրութիւնը այդ չէր. նա կա-

մենումէր որ նա ամենեւին թշուառ լինի և ահա ի՞նչ արաւ նա նորա բարեբաղդութիւնը ոչնչացնելու համար: Ֆիւրին Շարմանտ անունով մին տղայ ունէր, որին անչափ սիրում էր, թէեւ աշխարհիս երեսին ամենամեծ յիմարն էր: Որովհետեւ նա կամենումէր երջանկացնել Շարմանտին որով և իցէ եղանակաւ, մին չքնաղագէմ թագաւորի աղջիկ վեր առաւ և որպէսզի չ՚զգուի նա Շարմանտի յիմարութենից՝ ցանկացաւ որ նա էլ իրա որդւոյ պէս յիմար դառնայ: Այս թագաւորի աղջիկը, որին անունը Աստղ էր, կենակից էր լինում Շարմանտի հետ, և թէպէտ տասնըվեց ամաց էր, այսուամենայնիւ երբէք չէին կարողացել նորան կարդալ և գրել սովորեցնել: Ֆիւրին այդ աղջկայ պատկերը քաշել տուաւ և ինքը իրան ձեռով տարաւ մին փոքր տուն, որտեղ որ Սպիրիտուէլը կենումէր մին ծառայի հետ: Ֆիւրիի չարութիւնը յաջողուեցաւ: Թէպէտ և Սպիրիտուէլը իմանում էր որ Աստղը իրան թշնամու պալատումն է, բայց այնպէս սիրեց նորան որ մտքումը դրաւ նորա մօտ գնալ մին օր, բայց միեւնոյն ժամանակումը միտը բերելով իրան տգեղութիւնը, տեսաւ որ ինքը ամենաթշուառ անձն է, որովհետեւ ստոյգ իմանում էր որ շատ սարսափելի պիտի երեւայ այն գեղեցիկ աղջկայ աչքերին: Նա երկար ժամանակ հակառակ կացաւ իրան ունեցած ցանկութեանը, բայց վերջապէս իրա ցանկութիւնը յաղթեց բանականութեանը: Ուստի գնաց նա իրան սպասաւորի հետ: Այն միջոցումը Աստղը զբօսնում էր պարտէզումը Դիամանտինի, իրան դաստիարակուհու հետ: Երբ որ նա տեսաւ որ Սպիրիտուէլը մօտենում է, կամեցաւ փախչել, բայց Դիամանտինը արգելեց նորան: Աստղը ծածկեց իրա գլուխը երկու ձեռների մէջ և ասաց. „Սիրելի բա-

րեկամ, դուրս քցի՛ր այդ տգեղ մարդուն, դա սպանումէ ինձ երկիւղից:„ Սպիրիտուէլը օդում քաղեց այն վայրկեանումը, երբ որ նա աչքերը ծածկած ունէր, կամեցաւ քաղաքավարութեամբ նորան բարեւ տալ, բայց նորա խօսքերը այդ աղջկայ համար որպէս թէ լատիներէն էին, այնչափ խելք չ՚ունէր որ այդ խօսքերը կարող լինէր հասկանալ: Այս միեւնոյն ժամանակումը թագաւորազնը լսեց որ Ֆիւրին իրան իրան ամենայն ուժովը ծիծաղում էր նորա վերայ: Կարելի է՞ դուք կարծում էք թէ Սպիրիտուէլը պատշաճ գտաւ անարգական խօսքեր ասելու այդ չարաբարոյ կնկանը. նա շատ իմաստուն էր և այդ բանը իրան չէր թոյլատրել բնաւ: Նա իմանում էր որ նա ջան 'ի գործ է լինում իրան բարկացնելու, ինքը ամենեւին առիթ չտուաւ նորան իրան դէմ բարկանալու: Սպիրիտուէլը այսուամենայնիւ շատ տրտմած էր, բայց աւելի դառը եղաւ նորա վիճակը, երբ որ լսեց Շարմանտի Աստղի հետ խօսակցիլը, վասնզի նա շատ յիմար խօսքեր ասաւ, որով իրա գեղեցկութեան կէսը կորցրուց: Սպիրիտուէլը մտքումը որոշեց որ նորան ամենեւին մոռանայ և վերադառնայ իրան առանձնութեան տեղը: Նախ կամեցաւ „Մնաս բարեւ„ ասել Դիամանտինին, բայց ինչպէս մեծ եղաւ նորա զարմացումը, երբ որ դիցանուշը ասաց թէ ամենեւին պիտոյ չէ թողնել ապարանքը և թէ ինքը մին միջոց գիտէ նորան թագաւորի աղջկայ աչքին սիրելի լինելու:—Ես ձեզ շատ պարտաւոր եմ, տիկին, ասաց Սպիրիտուէլը, բայց ես չեմ շտապում պսակուելու: Ես խոստովանում եմ որ Աստղը շատ գեղեցիկ է, բայց միայն այն ժամանակը, երբ որ խօսում չէ: Ֆիւրի դիցանուշը իմ տգեղութեան կէսը բաշխից լսեցնել տալով ինձ նորա արած խօսակցութիւններից

մէկը: „Դու որչափ որ քեզ զգուշացնելու լինիս, ասաց Դիամանտինը, այսուամենայնիւ քո բաղդաւորութիւնը թագաւորի աղջկայ հետ պսակուելուցը պիտի կախուած լինի:„—Ես ձեզ հաւատացնում եմ, տիկին, որ ես երբէք այդ բանը յանձնս չեմ առնել. մինչև որ խուլ չըդառնամ և յիշողութիւնս էլ չկորցնել, եթէ ո՛չ իմ մըտքերը չեմ կարող քցել նորա արած խօսակցութիւնը: Եթէ նա կամենայ ինձ հետ պսակուել, ես պիտի միշտ ահի դողի մէջ լինիմ, երբ որ կենակից լինեմ նորա հետ, որ չլինի թէ նորանից լսեմ այդօրինակ յիմարութիւններ ամենայն անգամ, երբ որ բերանը բանայ,

„Քո երկիւղը ինձ ուրախացնումէ, ասաց Դիամանտինը, բայց քեզ մին գաղտնիք ասեմ, որը որ ինձ և քո մօրն է միայն յայտնի: Ես քեզ այն շնորհքն եմ տուել, որով դու իշխանութիւն ունիս հաղորդելու քո իմաստութիւնները այն մարդուն, որին ամենից շատ պիտի սիրես, ուստի քեզ մնումէ միայն ցանկանալ այդ բանը: Աստղը կարող է իմաստուն անձն դառնալ, այն ժամանակ կատարեալ կ'լինի նա, վասնզի բնականաբար շատ ընտիր աղջիկ է, շատ բարի էլ սիրտ ունի:„

—Ո՛հ, տիկին, ասաց Սպիրիտուէլը, դուք ինձ շատ թշուառ պիտի չինէք, Աստղը շատ սիրելի է իմ հանգստութեան համար, բայց ես այնչափ սիրելի չպիտի լինեմ նորան հաճոյ երևամ ինչ և իցէ իմ բարեբաղդութիւնս կ'նուիրեմ նորա բարեբաղդութեանը և նորա համար ցանկանումեմ այն ամեն իմաստութիւնը, որը որ ինձանից է կախուած:

„Այդ շատ վեհանձնութիւն է քո կողմանէ, ասաց Դիամանտինը, բայց երբէք առանց վարձատրութեան չէ մնալ այդ բարի գործը: Այս ապարանքի պարտէզը գնա

կէս գիշերին, վասնզի այդ այն ժամն է երբ որ Ֆիւրին ստիպուած է լինում քնելու և երեք ժամի չափ կորցնում է իրա բոլոր իշխանութիւնը:

Երբ որ Սպիրիտուէլը այնտեղից գնաց, Դիամանտինը մտաւ Աստղի սենեակը նորան տեսաւ գլուխը ձեռների մէջ դրած, ինչպէս մին մարդ, որը որ խորին մտածողութեան մէջ ընկղմած լինի:—Ո՛հ, տիկին, ասաց Աստղը, եթէ դուք իմանայիք թէ ինձ հետ ի՞նչ է պատահում, յիրաւի շատ կ'զարմանայիք, մին վայրկեան կ'լինի համարեա՛ թէ նոր աշխարհ եմ եկել, մտածում եմ, խսկում եմ և իմ մտածմունքներս մին այնպիսի ձևով կարգի են դրուած, որ ինձ մեծ բաւականութիւն են պատճառացնում և ես շատ ամաչում եմ միտս բերելով այն դժկամակութիւնը, որ ունեցել եմ գրեանց և ուսմանց դէմ:

—Դէ՛ լաւ է, պատասխանեց դիցանուշը, դու կարող ես ուղղել քո այդ պակասութիւնը, երկու օրից յետոյ Շարմանտի հետ կ'պսակուես և այն ժամանակ դու քո բաղձանաց համեմատ ուսում կ'ստանաս:

„Ո՜հ: իմ սիրելի բարեկամ, ասաց Աստղը, կարելի՞ է արդեօք որ ես դատապարտուեմ Շարմանտի հետ պսակուելու: Նա այնպէս յիմար է, որ ինձ ահի դողի մէջ է քցում, բայց ասացէք խնդրեմ ի՞նչի շուտով չհասկացայ նորա յիմարութիւնը:

—Այդ նորանից է որ դու ինքդ յիմար էիր, պատասխանեց Դիամանտինը: Ահա գալիս է Շարմանտը: Նա մտաւ այն րոպէին իրան սենեակը մին ճնճղուկի բուն գդակումը դրած: „Այս վայրկենումը, ասաց նա, թողեցի վարժապետիս տարապայման բարկութեան մէջ, որովհետև փոխանակ դաս ասելու՝ ես պարապեցայ այս թռչունքներին իրանց բունից հանելու:—Քո վարժա-

պետք իրաւունք ունի բարկանալու, ասաց Ըաղը, միթէ՞ ամօթ չէ որ քո հասակի տղան չ'իմանայ կարդալ:

„Դու էլ ինձ ձանձրացնում ես, ինչպէս նա, ասաց Շարմանը. ես ի՞նչ բան ունիմ այդ ամեն գիտութիւնների հետ, ինձ համար աւելի յարգոյ է մին փուան կամ թէ մին գնդակ քան թէ աշխարհիս բոլոր գրեանքը: Մնա՛ք բարև, ես գնում եմ փուանով խաղալու:

—Ու ես պիտի այդ յիմարի կնիկը դառնա՞մ, ասաց Ըաղը, երբ որ նա դուրս եկաւ: Ես ձեզ հաւատացնում եմ սիրելի բարեկամ, որ աւելի բարւոք կ'համարեմ մեռնելը քան թէ նորա հետ պսակուելը: Որչա՞փ տարբերութիւն կայ Սպիրիտուէլի և այս Թագաւորազնի մէջ: Յիրաւի է որ նա շատ գեղջ է, բայց երբ որ յիշում եմ նորա արած խօսակցութիւնները, ինձ այնչափ սարսափելի չէ թւում նորա տգեղութիւնը: Ի՞նչի նա Շարմանի գեղեցկութիւնը չ'ունի: Բայց ամենից յետոյ ինչո՞ւ է պէտք երեսի գեղեցկութիւնը, մին հիւանդութիւն կարող է նորան խլել, ծերութիւնը նրան անշուշտ կ'ոչնչացնէ, և ի՞նչ կ'մնայ այն ժամանակ այն մարդուն, որը որ իմաստութիւն չ'ունի: Սիրելի դաստիարակուհի, եթէ իմ ձեռնումն լինէր ինձ կենակից ջոկելը, ես առաւել այդ Թագաւորազնին նախապատիւ կ'համարէի չ'մտիկ արած նորա տգեղութեանը քան թէ այդ յիմարին, որին հետ ուզում են ինձ պսակել:

„Ես շատ ուրախ եմ տեսնելով որ դու այդպէս խոհեմութեամբ խօսում ես, ասաց Դիամանտինը, բայց ես մին խրատ ունիմ քեզ տալու. ծածկի՛ր զգուշութեամբ քո խելքը Ֆլուրիից, ամեն բան զուր կ'անցնէ եթէ դու նորան յայտնես քո միջումը եղած այդ փոփոխութիւնը:

Ըաղը համաձայնեցաւ իրան դաստիարակուհու ասած-

ներին և երբ որ կէս գիշեր դառաւ, բարեսիրտ Դիամանտինը առաջարկեց Ըաղին իրան հետ 'ի միասին իջնել պարտէզը: Նրանք նստեցին այնտեղ, շատ չ'անցաւ Սպիրիտուէլը այնտեղ եկաւ: Որչափ մեծ եղաւ նորա ուրախութիւնը երբ որ լսեց Ըաղի խօսքը և երբ համոզուեցաւ թէ այնչափ իմաստութիւն է հաղորդել նորան որքան ինքը ունեցել էր: Ըաղը իրան կողմից էլ ուրախացաւ Թագաւորազնի խօսակցութեան վերայ: Բայց երբ որ Դիամանտինը իմացրուց նրան թէ նա այդ փոփոխութեամբը պարտաւոր է Սպիրիտուէլին, նրա երախտագիտութիւնը մոռացնել տուաւ ամենևին նորա տգեղութիւնը, թէպէտև կատարելապէս տեսնում էր նորան, վասնզի լուսնեակ գիշեր էր:

—Ի՞նչպէս արդեօք ես իմ պարտքս պիտի վճարեմ, ասաց Ըաղը:

„Շատ հեշտութեամբ, պատասխանեց Դիամանտինը, երբ որ պսակուես Սպիրիտուէլի հետ քեզանից է միայն կախուած այն ժամանակ տալ նորան այնքան գեղեցկութիւն, ինչ.քան նա քեզ իմաստութիւն է հաղորդել:

—„Ինձ նա հաճոյ է թւում այնպէս, ինչպէս որ կայ, ասաց Ըաղը, ինձ փոյթ չ'է որ նա աւելի գեղեցիկ դառնայ:

„Ըհա՛ դու նորա դժբաղդութիւնները վերջացրիր, ասաց դիցանուշը, եթէ 'դու ցանկացած լինէիր նորա համար գեղեցկութիւն, այն ժամանակը Ֆլուրիի իշխանութեան ներքոյ կ'լինէիր, բայց այժմ երկիւղ չ'ունիս նրա կատաղութենիցը: Կամենումեմ տեղափոխել քեզ Սպիրիտուէլի Թագաւորութիւնը, նրա եղբայրը մեռել է և այն ատելութիւնը որը որ Ֆլուրին տպաւորել էր ժողովրդի սրտումը նրա դէմ էլ չ'կայ: Յիրաւի տեսնէն Սպիրիտուէ-

լի վերադարձը, և երբ որ երեք ամիս բնակուեցաւ իւր Թագաւորութեան մէջ, նրա կերպարանքի հետ ընդելացան և անդադար զարմանում էին նրա իմաստութեան վերայ։

ՄԱՐԻԱՄ

Բայց ի՞նչի Աստղը գեղեցկութիւն չշնորհեց Սպիրիտուէլին, ըստորում նա իմանում չէր որ այդ բանը իրան Ֆիւրի դիցանուշի իշխանութեան ներքոյ կ՚քցէ։

ՏԻԿԻ՞Ն

Ի՞նդուր որ նա խելացի անձն էր դառել և թէ մին աղջիկ, որը որ լաւ խել.քի տէր է՝ հարկաւոր չէ նորան պսակուել անպատճառ մին գեղեցիկ մարդի հետ. որովհետև գեղեցիկ մարդը համարեա՛ թէ միշտ յիմար է լինում, սիրահարուած է լինում միշտ իւր գեղեցկութեան վերայ և միշտ իրան անձնը զարդարելու վերայ է մտածում ինչպէս մին կնիկ. ուրեմն դուք կարող էք հասկանալ որ այդօրինակ մարդիկները անչափ զզուելի են իմաստուն մարդիկների առաջ։

ՄԱՏԻԼԴԱ

Այդ ճշմարիտ է, ես մին մարդ եմ ճանաչում, որը որ երեք ամբողջ ժամ իրան անձնը զարդարելով է անցկացնում, վասնորոյ նորան՝ իւր անունից ՚ի զատ՝ որը որ չ՚գիտի ասեմ, Նարկիս էլ են անուանում։

ԱԴԵԼ

Ինչ կնշանակէ այդ անունը, սիրելի։

ՏԻԿԻ՞Ն

Նարկիսը մին դիւցաբանական անձն է, ինչպէս որ առասպելաբանութիւնը պատմումէ. դա մին չափազանց գեղեցիկ մարդ է եղած, որը որ սիրահարուեցաւ իւր սեփհական կերպարանքի վերայ, երբ որ տեսաւ նորան մին ականակիտ աղբիւրի մէջ։ Իրան մօտ կանչում էր այդ գեղեցիկ դէմքը, որը որ կարող չ՚էր գալ, ինչպէս որ ձեզ էլ յայտնի է, ուստի նա այնչափ տրտմութիւն ունեցաւ նրա ջրից դուրս բերել չ՚կարողանալուն համար, որ վերջապէս մեռաւ և աստուածները նրան փոխարկեցին մին ծաղիկ։ Այն ժամանակից սկսուած երբ որ մին մարդ միայն իրան գեղեցկութեամբն էր զբաղվում, Նարկիս էին անուանում։ Այժմ աշխարհագիտութեան վերայ մին քանի խօսք ասենք։ Յուլիանէ՛, որն է այն Թագաւորութիւնը, որը որ գտանվումէ Գաղղիայի հիւսիսային արեւելքումը։

ՅՈՒԼԻԱ՞ՆԷ

Բելժիքան է, որը որ 1830 Թուականից սկսուած մէկ անկախ Թագաւորութիւն է կազմում։ 1814 Թուականումը միաւորուած էր Հոլանդիայի հետ և այս երկու երկիրները Թագաւորութիւն Ստորին աշխարհի անունով էին յայտնի, և երկար ժամանակ Աւստրիայի տանն էին պատկանում։

ԵՒԳԵ՞ՆԻԱ

Ի՞նչ էք ուզում ասել Աւստրիայի տուն ասելով, սիրելի։

ՏԻԿԻ՛Ն

Աւստրիայի տուն անելով՝ կամենում եմ յայտնել Աւստրիայի թագաւորող գերդաստանը: Պատմական աշխարհագրութիւնը լաւ իմանալու համար, պէտք է Եւրոպայի գլխաւոր թագաւորութիւնները իմանալ: Կամենում եմ միայն գլխաւոր թագաւորներից խօսել: Եւրոպայի երկու գերագոյն գերդաստանները կամ տները Աւստրիայի և Բուրբոնի տներն են, որոնց ծագումը խորին հնութեան է հասնում: Ուրիշ ժամանակ այդ մասին ձեզ հետ կը խօսեմ և ձեզ կ'ծանօթացնեմ ուրիշ թագաւորող գերդաստանների հետ, որոնք առաւել կամ պակաս նշանաւոր են մտիկ տալով իրանց հնութեան աստիճանին կամ մեծութեանը:

ՄԱՐԻԱՄ

Թոյլ տուէք ինձ, ձեզ մի խօսք ասել: Անցեալ օրը ասացիք ինձ թէ իմ նշանաւոր ցեղից լինելը այնքան յարգութիւն չ'ունի, բայց այսուամենայնիւ այսօր նկատեցնել տուէք թէ այնպիսի տներ են գտնվում, որոնք միմեանցից առաւել հին և առաւել մեծ են, ուրեմն մի բան է նշանակում մեծ տանից ծագումն ունենալը:

ՏԻԿԻ՛Ն

Այո՛, երեւելի տանից իրա ծագումը ունենալը ունի իրա նշանակութիւնը: Դուք իմանումէք որ մենք ամենքս մեր ծագումը Նոյից ենք ստացել, ուրեմն բնութեամբ ամենքս հաւասար ենք միմեանց հետ և ազգական ենք, ինչպէս Իսրայելացիք էին: Բայց այն մարդիկը, որոնք հաւասար են իրանց բնութեամբ, հաւասար չ'են հոգւոյ և մարմնոյ յատկութեամբը, և ահա՛ այդ է ազնուութիւն յառաջացնողը: Իրաւունք էր որ պատուէին մասնաւորապէս նրանց, որոնք առաւել ընտիր էին միւսներից կամ թէ նրանց՝ որոնք ունէին որ և իցէ տաղանդ, որը որ 'ի գործ էին դնում իրանց եղբարցը երջանիկ շինելու համար: Ուրեմն այդ մարդիկը իրաւացի պատիւ ստացան և նրանց որդւոց քաջալերութեան համար, որպէսզի նրանք էլ հետեւեն իրանց հարց շաւղացը, նոյնպէս և նրանց հարց յիշատակը յարգելու համար նրանց էլ էին պատիւ տալիս: Ուրեմն մի բան նշանակում է հին և ազնիւ գերդաստանից դուրս գալը, որովհետև այդ ցոյց է տալիս թէ ունեցել են նրանք մի նախահայր, որը որ իրա տաղանդներովը և ընտիր առաքինութեամբը ուրիշներից գերազանց է դառնուել, բայց նկատեցէք իմ սիրելիք, որ այդ բանը ստիպում է նրանց իրանց հարց օրինակին հետեւել, առանց որոյ իրաւունք չ'էր լինիլ պատիւ տալ նրանց ուրիշների արած առաքինութեանց համար: Ֆրանսիայումը մի վատ նախապաշարումն կայ: Եթէ մի գերդաստանի մէջ մի չարագործ գտանուի, բոլոր գերդաստանը անպատիւ է լինում, թէև շատ պատուաւոր անձինքներից էլ բաղկացած լինի, և ոչով չ'է կամենալ պսակուել այն մարդոյ քրոջ կամ աղջկայ հետ, որը որ անպատւութեամբ իրա կեանքը վերջացրել է հրապարակական տանջանաց տեղումը:

ՄԱՐԻԱՄ

Բայց այդ շատ անիրաւացի է, մի՞թէ այդ իմ մեղքը կ'լինի, եթէ հայրս, եղբայրս և հօրեղբօրորդիս վատա-

բարոյ մարդիկ լինին, միայն իմ սեփհական գործոյ համար պէտքէ որ ինձ առեն։

ՏԻԿԻՆ

Իրաւացի չէ լինիլ նոյնպէս, եթէ քեզ պատիւ տան ուրիշների գործոյ համար և մասնաւորապէս էնդուր համար որ նոքա գերագոյն արժանաւորութիւն են ունեցել և պատուաւոր անձինք են դառել։ Յիրաւի արժանաւոր բան է մին հին տանից դուրս գալը, բայց հազար անգամ առաւել փառաւոր է իրան սեփհական գործերովը մոցնել ազնուութիւնը իւր տան մէջ քան թէ ամենեին պատրաստ գտանել նրան և ոչինչ չաշխատել նրան պահպանելու համար։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ուրեմն մենք պատիւ չպիտի տա՞նք այն թագաւորներին և իշխաններին, որոնք չարագործ լինին։

ՏԻԿԻՆ

Երկու տեսակ յարգանք կայ, իմ սիրելի, այն՝ որը որ սրտումն է և որով յարգումեն առաքինի մարդկանցը, արդ՝ այդ յարգանքը միայն վայել է բարեպաշտ մարդկանցը և մենք չպիտի ունենանք այդ զգացմունքը այն թագաւորների և մեծամեծների դէմ, որոնք իրանց կեանքը եղեռնագործութեամբ են անցկացրել։ Բայց մին արտաքին յարգանք էլ կայ, որը որ կայանումէ թագաւորների և դատաւոր անձանց դէմ ունեցած հնազանդութեան մէջ։ Բարեկարգութիւնը պահանջումէ պահպանել և այս երկրորդ յարգանքը, այսինքն՝ պատուել տէրողը, իշխա-

նութիւնը և աստիճանը նաև այն ժամանակումն էլ՝ երբ որ սաստիկ ատելութիւն են ունենում այն անձին դէմ։ Բայց ժամ է արդէն կրկնելու մեր դասերը։ Սկսի՛ր Ադէ՛լ։

ԱԴԷԼ

Սամուէլը հրամայեց Սաւո՛ւղին Աստուծոյ կողմանէ պատերազմ բանալ Ամաղեկացւոց դէմ և կոտորել նրանց ամենին էլ, նոյնպէս նրանց անասուններին։ Սաւո՛ւղը և Իսրայէլացիքը յարձակուեցան Ամաղեկացւոց վերայ և յաղթող հանդիսացան, բայց նրանք ամենեին Աստուծոյ հրամանին չհնազանդեցան, որովհետև անմնաս թողեցին պարարտ անասունները և Սաւո՛ւղը խնայեց Ագագ թագաւորի կեանքը։ Աստուած ասաց Սամուէլին. „Սաւո՛ւղը արհամարհեց իմ հրամանս, վասնորոյ իմ աչքից քցում եմ և մին ուրիշ թագաւոր եմ ընտրում իմ ժողովրդիս համար։„ Սամուէլը յայտնեց Սաւո՛ւղին Տիրոջ խօսքերը։ Թագաւորը ասաց. „Մեղանչել եմ, ողորմութիւն խնդրի՛ր ինձ համար Տէրիցը։ Որովհետև մարգարէի հանդերձիցը պինդ բռնած ունէր, նրանից մին կտոր ձեռումն մնաց։ Սամուէլը երեսը շ՛ուռ տալով ասաց. „Ինչպէս որ դու իմ այս զգեստը պատռեցի՛ր և խլեցիր ինձանից այդ կտորը, նոյնպէս էլ Տէրը խլելու է քեզանից Իսրայէլացւոց թագաւորութիւնը։ Այս խօսքերը ասելուց յետոյ՝ հեռացաւ Սամուէլը և իրան բոլոր կեանքումը էլ չտեսաւ նրան։

ՆԻԳԵՆԻԱ

Սամուէլը թագաւոր ընտրեց Աստուծոյ հրամանաւը

Յեսսէի որդիներանցից մէկին, որի անունը Դաւիթ էր: Այն ժամանակից սկսած Աստուծոյ հոգին նորա մէջ էր և ընդհակառակը Սաւո՛ւղը չար դևի իշխանութեան ներքոյ ընկաւ, որը որ այնպէս ճնշում էր նորան որ կատաղում էր: Սաւուղին ասացին եթէ քնար ածեն նորա առաջ թեթևութիւն կ՚ստանայ և որովհետև Դաւիթը այդ արհեստի մէջ հմուտ էր, թագաւորը խնդրեց նրան իրա հօրիցը: Երբ որ տեսաւ նա Դաւթին, իսկոյն սիրեց նրան և իրան զէնքերը բերել տուաւ նորա համար: Ամենայն ժամանակ, երբ որ Սաւո՛ւղը դևիցը չարչարվում էր, Դաւիթը քնար էր ածում և իսկոյն թեթևութիւն էր ստանում: Այս միջոցումը Փղշտացւոց մէջ Գողիաթ անունով մին հսկայ էր գտանվում, որը որ զարհուրելի եղանակաւ սպառազինուած էր: Եկաւ նա Իսրայելացւոց հետ պատերազմ անելու, բայց ո՛չով չըհամարձակուեցաւ նորա վերայ յարձակուել: Դաւիթը հարցրաւ թէ ի՞նչ վարձ պիտի ստանայ արդեօք նա, որը որ կարող պիտի լինի սպանել այդ մարդուն: Ասացին թէ թագաւորը իրան աղջիկը նրան ՚ի կնութիւն պիտի տայ: Սաւո՛ւղը իմանալով Դաւթի արած հարցմունքը, ասաց կ՚կամենա՞յ արդեօք սպանել այդ հսկային: Դաւիթը պատասխանեց թէ այո՛, կ՚ցանկանայ: Թագաւորը իրա սեփհական զէնքերը տուաւ նորան, բայց Դաւիթը նրանց շատ ծանր գտաւ և վեր առաւ միայն իրան պարսաքարը և հինգ քար: Աստուծոյ անունը տալուց յետոյ՝ վազեց հսկայի դէմ, մին քար քցեց, որը որ մտաւ նորա ճակատի միջով և սպանեց նորան: Փղշտացիք տեսնելով հսկայի մահը՝ փախան և Իսրայելացիք նորանցից մին մեծ մասը կոտորեցին. մեծ ուրախութիւններ արեցին այս յաղթութեան համար և կանայքն էլ

երգում էին իրանց ձայները քնարների հետ յարմարացնելով և ասում էին. „Սաւո՛ւղը նրանցից հազար մարդ սպանեց, իսկ Դաւիթը տասը հազար:„ Այս խօսքերը նախանձ քցեցին թագաւորի սրտումը, որը որ սկսեց ատել Դաւթին, պատճառը որ այդ երիտասարդը ամենայն բանի մէջ յաջողութիւն էր ունենում, վասնզի Աստուած նորա հետ էր: Սաւո՛ւղի որդի Յօնաթանը իրա հօրից առաւել ճշմարիտ էր, նա Դաւթի այդօրինակ գործքի վերայ զմայլած՝ մին անձուկ բարեկամութիւն հաստատեց նորա հետ:

ՇԱՐԼՕՏՏԱ

Իմ սիրելի բարեկամ, այն նահանգների միջումը, որոնք որ Ֆրանսիայի թագաւորութիւնն են կազմում, դուք յիշատակեցիք Լօրէնայի նահանգը. ես մին տեղ կարդացել եմ որ երբեմն Լօրէնայի դուքս է էլել:

ՏԻԿԻՆ

Կամենումեմ ձեզ տալ թէ ինչպէս է էլել, որ Լօրէնը Ֆրանսիային է պատկանում: Բայց նախ և առաջ հարկաւոր է որ ես ձեզ հասկացնեմ այն տարբերութիւնը, որը որ գտանվում է *ընտրողական* և *ժառանգական* թագաւորութիւնների մէջ: *Ընտրողական* ենք ասում այն թագաւորութեանը, երբ որ թագաւորի որդիքը իրանց հօր մահուանից յետոյ թագաւոր չ՚են լինում և ժողովուրդը կարող է տալ թագը մին հասարակ մարդու: *Ժառանգական* ենք ասում այն թագաւորութեանը, երբ որ օրէնքը ստիպում է ժողովրդին ընտրել թագաւոր հանգուցեալ թագաւորի որդին կամ նորա

մերձաւոր բարեկամը: Պոլոնիայի թագաւորութիւնը ընտրողական էր, իմ սիրելիք. ժողովուրդն էր ընտրում թագաւոր, ուստի Շվեդացոց թագաւորը պատերազմ բանալով նրանց դէմ, ստիպեց որ իրանց թագաւորը արտաքսեն և մին ուրիշը նրա տեղակ ընտրեն: Այս նոր թագաւորի անունը Ստանիսլաս էր և շատ ընտիր անձն էր, բայց դուրս քցուած թագաւորը պատերազմ բանալով նորա դէմ, Ստանիսլասը էլ զօրութիւն չունեցաւ և ստիպուած եղաւ ծպտեալ եղանակաւ իւր կեանքը ազատել: Ստանիսլասը հրաշքով ազատեց իւրան կեանքը թշնամիների ձեռքից. բայց վերջապէս հալածումէն վըտանգներից յետոյ՝ ողջանդամ հասաւ մին թագաւորի երկիր, որտեղ որ անցկացրուց նա մին քանի տարի: Ստանիսլասը մին աղջիկ ունէր, որը որ իւր հօր պէս առաքինի էր: Աստուած կամեցաւ վարձատրել այս թագաւորի աղջկայ բարեպաշտութիւնը և իմաստութիւնը, վանորոյ Բուրբոնի դուքսի սրտումը, որը որ Ֆրանսիայի առաջին սպարապետն էր, խորհուրդ ծագեցրուց, պըսակեցնել նորան Լուդովիկոս XV րորդ թագաւորի հետ: Չ'մտիկ արած որ նա առաւել հասակով էր և գեղեցիկ էլ չ'էր, թագաւորը պսակուեցաւ նորա հետ և նորան շատ սիրեց, որովհետև ընտիր որակութիւններով զարդարուած էր: Մ'ին քանի ժամանակից յետոյ մին մեծ պատերազմ ծագեց, և երբ որ խաղաղութիւն հաստատուեցաւ, դաշինքը այն էր որ Լօրէնի դուքսը իւրան երկիրը տայ Ստանիսլասին և նորա փոխարէնը ստանայ մին ուրիշ արգաւանդ երկիր Իտալիայի մէջ: 1737 թուականից սկսուած Ստանիսլասը Լօրէնի դուքսը դառաւ, որտեղ որ իւրան կեանքը նուիրեց ժողովրդեան երջանկութեանը, նորա մահուանից յետոյ, որը որ եղաւ 1766 թուականին, Լօրէնայի նահանգը միաւորուեցաւ Ֆրանսիայի թագաւորութեան հետ: Ինչ որ Ստանիսլասի աղջկանն է վերաբերվում, մեռաւ նա իբրև թագուհի Ֆրանսիայի 1766 թուականումը և որովհետև իւրան թագը Աստուծոյ էր նուիրել, Աստուած էլ աւելի թանկագինը նորան շնորհեց, այսինքն՝ ժառանգական թագ, փոխանակ ընտրողական թագի:

ԱԴԷԼ

Դուք ասացիք թէ Ֆրանսիայի թագը ժառանգական է, այսինքն նշանակումէ թէ երբ որ թագաւորը մեռնի ժողովուրդը ստիպուած է լինում բազմեցնելու աթոռի վերայ նորա որդուն, նորա աղջկանը կամ նորա մերձաւոր բարեկամներից մէկին:

ՏԻԿԻՆ

Ֆրանսիայի թագաւորութեան մէջ աղջկերք չ'են կարող ժառանգել թագաւորութիւնը: Բայց այդպէս չ'է Անգղիայումը, Ռուսաստանումը, Իտալիայումը և ուրիշ թագաւորութեանց մէջ, որտեղ երբ որ թագաւորը առանց արու զաւակի մեռնումէ, նորա էրեց դուստրը նըստումէ աթոռի վերայ: Բայց արդէն ժամէ միմեանցից բաժանուելու, մնաք խաղաղութեամբ, իմ սիրելիք:

ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔՍԱՆ ԵՒ ԵՐԵՔԵՐՐՈՐԴ ՕՐ:

ԱԴԻԼ

Մի՛ն հասարակութեան մէջ երեկ լսեցի թէ տասնըիններորդ դարումն ենք, ի՞նչ կ'նշանակէ դար:

ՏԻԿԻՆ

Դար՝ հարիւր տարի է նշանակում, իմ սիրելի. Աշխարհիս բոլոր մարդիկը մին նշանաւոր արկածք են ընտրել տարիները նշանակելու համար: Ուստի Նոյի որդիքը վեր էին առել ջրհեղեղը իրանց համար թուական, այսինքն՝ այն ժամանակից սկսում են հաշուել տարիները: Յոյները իրանց ժողովներումն էին հաշվում տարիները, որ լինում էր ամեն չորս տարին մին անգամ Օլիմպիոս քաղաքումը ուստի չորս տարուայ միջումը մին Օլեմպիական էր կարդում և ասում էին. „Այս ինչ մարդ ապրեց տասներորդ կամ քսաներորդ Օլիմպիականումը: Ուրեմն Յոյների թուականը այնժամանակն էր, երբ որ հաւաքվում էին Օլիմպիոս քաղաքումը: Հռոմայեցիք վեր առին իրանց համար թուական երբ որ Հռոմ քաղաքը շինուեցաւ, ուստի նրանք ասում էին: „Մենք պատերազմ արեցինք. Հռոմ քաղաքի երկու հարիւր երրորդ թուականումը այսինքն երկու հարիւր տարի Հռոմ քաղաքի շինութենից յետոյ: Քրիստոնէից թուականը Յիսուսի Քրիստոսի ծնուելուցն էսկսում: Մարիա՛մ, կրկնի՛ր ամբողջ պատմութիւնը:

ՄԱՐԻԱՄ

Սաւո՛ւղի Դաւթի դէմ ունեցած ատելութիւնը այնքան աճեցաւ, որ մինչև անգամ մտքումը որոշեց նրան կորցնել: Նա խոստացել էր Դաւթին թէ իրան դուստրը նրան 'ի կնութեան կ'տայ, եթէ հարիւր Փղշտացի կարողանայ սպանել: Դաւիթ, որին որ Աստուած միշտ պահապան էր գտնվում, երկու հարիւր Փղշտացի ըսպանեց հարիւրի փոխանակ: Այն ժամանակումը Սաւո՛ւղը ստիպուած եղաւ իրան Մեղքող դուստրը նրան 'ի կնութեան տալու: Մին օր, երբ որ Դաւիթը քնար էր ածում նորա առաջ, Սաւո՛ւղը կամեցաւ սպանանել նորան, բայց Դաւիթը փախաւ իրան տունը և այսպէս ազատեց իրան կեանքը: Թագաւորը զինուորներ ուղարկեց նրան բռնելու, բայց Մեղքողը նորան լուսամուտովը ցածր իջեցրուց: Դաւիթը այնուհետև ապաստանուեց Սամուէլ մարգարէի մօտ, բայց Սաւո՛ւղը կատաղութենից ինքը զինքը կորցրած՝ նրա ետնէն ընկաւ, Դաւիթը այնտեղից էլ փախաւ և իմանալով Յովնաթանից թէ Սաւո՛ւղը մտքումը դրել է անշուշտ նորան կորցնել՝ գնաց Աքիմելէք քահանայապետի մօտ և խնդրեց տալ իրան մին քանի հաց և զէնքեր: Աքիմելէքը հինգ հաց տուաւ և Գողիաթի սուրը, բայց մին Եդոմացի, որը որ Սաւո՛ւղի ծառան էր, այս բանը տեսնելով, յայտնեց թագաւորին, որը որ իսկոյն հրամայեց իրա զինուորներին սպանանել քահանայապետին իրան ողջ գերդաստանովը, նոյնպէս միւս քահանաներին, որոնք քաղաքումն էին գտնվում, որի միջով անց էր կացել Դաւիթ, վասնզի նորա օգնութեամբը կարծում էր թէ նա ապստամբուել էր: Զինուորները չ'համարձակուեցան իրանց ձեռները դնել

Աստուծոյ քահանաների վերայ, բայց Սաւուղը հրամայեց իրան ծառային սրով սպանանել նրանց, որ և իսկոյն կատարեց այդ հրամանը: Սաւուղը Դաւթի ետևէն էր ընկած ամենայն տեղ, որտեղ որ կարծում էր թէ նորան կ'հանդիպէ, բայց Դաւիթը Թագաւորի հարուածներից իրա անձը միայն փախստեամբ էր ազատում: Արդ՝ մին օր, երբ որ Դաւիթը վաթսուն զինուորներով թաքն էր կացել մին քարայրի մէջ, Սաւուղը սխալուեցաւ այնտեղ մտնելու: Թագաւորը չ'տեսաւ Դաւթին, որը որ կարող էր հեշտութեամբ այն րոպէումը իրան կեանքից զրկել, բայց Դաւիթը բաւականացաւ միայն Թագաւորի զգեստից մին կտոր կտրել: Նորա այդօրինակ վեհանձնութիւնը Սաւուղի սիրտը կակղեցրուց առժամանակ, բայց շուտով նորա ատելութիւնը նորից վեր կացաւ և Դաւիթը սկսեց էլի Թափառական այստեղ այնտեղ մանգալ:

ՏԻԿԻՆ

Շարունակի՛ր, սիրելի Ադէ՛լ:

ԱԴԷԼ

Սամուէլը հենց այդ ժամանակներումը մեռաւ, և Դաւիթը առանձնանալով մին անապատի մէջ, որը որ Կարմեղոս սարից հեռու չ'էր, պսակուեցաւ Աբիգեա անունով մին կնկան հետ: Սաւուղը կրկին զօրք հաւաքեց նորան հալածելու համար: Երբ որ մին դաշտ հասին, վրանները քցեցին գիշերը այն տեղ անցկացնելու համար: Աբիները իրա զինուորներովը պահպանում էր Թագաւորի վրանը, բայց փոխանակ լաւ պահպանելու, քնով անցաւ, և Դաւիթը Աբիսա անունով մին մարդ հետը առած՝ մտաւ մինչև Թագաւորի

վրանը: Աբիսան հրաման խնդրեց իրա տէրից որ Սաւուղին սպանէ, բայց, Դաւիթը արգելեց նորան, ասելով թէ անպատուհաս չ'է կարող մնալ Տէրոջ օծեալի վերայ ձեռք դնողը: Նա բաւականացաւ միայն վեր առնել Թագաւորի բաժակը և գեղարդը (копье) և երբ որ դուրս եկաւ այնտեղից բարձր ձայնով կոչեց. Աբինե՛ր, դու շատ քաջ մարդ ես, բայց այսուամենայնիւ արժանի ես մահու Թագաւորիդ լաւ չ'պահպանելուդ համար:„ Սաւուղը այս բանը իմանալուց յետոյ Դաւթին էլի իրա որդի անուանեց խոստովանելով թէ նա իրանից առաւել առաքինի անձն է և խոստացաւ նորան էլ վնաս չ'հասցնել, բայց Դաւիթը նորան լաւ ճանաչում էր. ամենևին չ'հաւատաց նորա խօսքերին և գնաց Փղշտացւոց մօտ:

ՄԱՐԻԱՄ

Համբերութիւնս տարաւ Սաւուղը իրա խոստմունքներովը, որոնք իսկի չ'էր կատարում: Պէտքէ ճշմարիտը խոստովանած որ Դաւիթը շատ առաքինի անձն էր էլել որ յանկարծ իրա անձը չ'ազատեց մին մարդուց, որը որ այդչափ անգթութիւնով նորան հալածում էր:

ՏԻԿԻՆ

Այդ մարդը նորա Թագաւորն էր, նորա աներն էր. կարելի՞ է արդեօք որ Դաւիթն էլ նոյնպէս չար լինէր էնդուր որ Սաւուղը չար էր: Ինչ կ'լինէր արդեօք աշխարհս, երբ որ ամենայն մարդ կարծէր թէ իշխանութիւն ունի իրա վրէժը հանելու, պէտքէ այդ հոգսը մարդկանց արդարութեան թողնենք, եթէ Աստուծոյ արդարութեան էլ դիմելու չ'լինենք:

ՆԻԳԵՆԻՍ

Ասացինք թէ Դաւիթը պսակուեց Աբիգեա անունով մին կնկան հետ, բայց արդէն նա երկու ուրիշ կնիկ էլ ունէր, մի՞թէ այդ թոյլատրուած է, սիրելի բարեկամ:

ՏԻԿԻՆ

Այդ խրատունքը մին ժամանակ տուած էր, բայց այս օրուայ օրը Քրիստոնէից մէջ չ'կայ, որովհետև Քրիստոսը արգելել է:

ՅՈՒԼԻԱՆԷ

Ես այդ մասին շատ ուրախ եմ, եթէ մին մարդ կարող լինէր շատ կանայք ունենալ, երբէք ես մարդու չ'էի գնալ:

ՏԻԿԻՆ

Դու պէտքէ շնորհակալութիւն մատուցանես Աստուծոյ որ Չինաստանումը չես ծնել:

ՆԻԳԵՆԻՍ

Մի՞թէ Չինացիք շատ կանայք են պահում:

ՏԻԿԻՆ

Այո՛, և համարեա՛ թէ Ասիայի մեծ մասը նոյնպէս շատ կանայք են ունենում: Կամենում եմ ձեզ պատմել թէ Չինաստանումը ի՞նչպէս է լինում պսակը: Բայց նախապէս պէտք է իմանաք որ այնտեղի կանայքը ամե-

նևին ոտով գնում չ'են և երբէք իրանց մարդուց և հօրից 'ի զատ ուրիշ մարդ չ'են տեսնում:

ՅՈՒԼԻԱՆԷ

Ի՞նչպէս կարելի է այդ բանը. մի՞թէ մին աղջիկ ազատութիւն չ'ունի տեսնելու մին օրիորդի, երբ որ պսակուելու մտադրութիւն ունի:

ՏԻԿԻՆ

Ո՛չ թէ պսակուողներն են խառնվում այդ բանի մէջ, այլ նոցա հայրերը, մին մարդ, որը որ կամենում է պսակել իրա որդուն, գնում է մին ուրիշ մարդոյ մօտ, որը որ մին աղջիկ ունի, հարցնում է այդ աղջկայ որպէսութիւնները և եթէ պատշաճ է գտնում իրա որդւոյ համար, խնդրում է նորան հարսնացնել իրա տղի հետ: Հայրը իրա համաձայնութիւնը տալուց յետոյ՝ գալիս է իրա աղջկայ մօտ և ասում է թէ կամենում է պսակել նորան: Այն ժամանակը նորան լաւ լաւ զգեստներ են հագցնում և դնում են մին տեսակ կառքի մէջ, որը որ ծածկած է լինում, և տանում են իրա ամուսնու տունը: Ամուսինը անհամբեր սրտով սպասում է տեսնել իրա կնոջը: Երբեմն բաւական է լինում, երբեմն էլ իրա ուզածին պէս չ'է լինում կնիկը, բայց չ'կարծէք թէ այդ մասին վատ են վարվում Չինացիք իրանց կանանց հետ. որդին հօրը պատիւը պահպանում է: Նա բնակվում է իրա կընկան հետ ութ օր, և այդ ժամանակից յետոյ մարդը իրան կնոջից հրաման է խնդրում ընտրել իրա համար մին ուրիշ կնիկ այն աղախինների մէջից, որոնք տուել են իրան ծառայելու: Կինը երբէք մերժում չէ այդ խըն-

գիրքը, բայց մարդին ընտրած կինը, միշտ աղախին է մնում, իսկ հօր ընտրածը միշտ տանտիկին է լինում: Աղախնոյ որդիքը նորան մայր են կոչում և նորան միշտ հնազանդ են մնում:

ՄԱՏԻԼԴԱ

Զինչ և լցէ այդ բանը նորան փոքր 'ի շատէ կարող է մխիթարել, որովհետև միշտ տանտիկին է մնում. և եթէ աղախինները անհնազանդ լինին, կարո՞ղ է արդեօք պատժել:

ՏԻԿԻ՛Ն

Առանց կասկածանաց, իմ սիրելի, բայց այդ բանը ամենևին պատահած չէ, աղախինը իմանումէ որ պէտք է տիկինի պատիւը պահէ և աշխատէ նորա աչքը իրա և իրան որդւոց վերայ քաղցր անելու: Տանտիկինը իրա մարդու սիրտը գրաւելու համար և զինքը նորան սիրցնել տալու համար, լաւ է վարվում այն կնկան հետ, որին որ իրան մարդը ընտրել է, և առ հասարակ մեծ համաձայնութեան մէջ են ապրում այդ մարդիկը:

ԱԴԷԼ

Բայց այդ ժողովուրդները առաւել խոհեմ պիտի լինին: Ես Դենիսի կենսագրութեան մէջ կարդացել եմ, որը որ Սիրակուսա քաղաքի բռնակալն էր, թէ երկու կնիկ է ունեցել և իսկի միմեանց հետ խաղաղութեամբ ապրեցնելու գաղտնիքը չէր կարողանում գտանել:

ՏԻԿԻ՛Ն

Պատմագիրը իրաւունք ունէր այդ մասին: Դենիսը

երկու կնիկ ունէր և ամեն մէկը նորանցից երեխայք ունէին և շատ բնական էր՝ որ ջան 'ի գործ էին դնում իրանց որդիքը թագաւորացնելու, բայց Չինաստանումը այդպէս չէ. եթէ տանտիկինը երեխայք ունենայ, նրանք միշտ աղախնոյ որդկերանցից բարձր են նախադասվում: Կրթութիւնը ամեն բան հեշտացնում է. աղջիկերքը իրանց մանկութենից իմանում են որ այս բանը իրանց երկրի սովորութիւնն է, ուստի սպասում են նոքա այդ բանին և ամենևին անսովոր չէ երևում իրանց:

ԱԴԷԼ

Բայց այդ ողորմելի կանայքը շատ ձանձրութիւն պիտի կրեն, ըստ որում տանից դուրս չեն գալիս ամենևին:

ՏԻԿԻ՛Ն

Ես ձեզ ասացի թէ նրանք ոտով ման չեն գալիս, բայց նրանց ծածկած կառքերի մէջ տանում են ուրիշ կանանց մօտ այցելութիւն անելու: Այնտեղ շատ ամօթալի բան է մին կնկան հրապարակումը երևել, միայն այդ աղքատներին է թոյլատրուած: Եթէ կանայքը կամենալու լինին վազ տալ, հեռու չեն կարող գնալ իրանց ոտների պատճառաւ:

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Մի՞թէ նրանց ոտները տարբեր են մեր ոտներից, սիրելի:

ՏԻԿԻ՛Ն

Երբ որ նոքա ծնվում են, նրանց ոտները մեր ոտների

պէս են լինում, բայց նրանք խկոյն իրանց ոտների մատները ծալում են մէջղըլից և կպկպում են քողերով: Նրանց ոտների մատները թվում են թէ կպցրած լինին այնպէս. ինչպէս մեր ձեռների մատները, երբ որ մեր ձեռները կողպած լինինք: Իմացվում չէ թէ ով է սկսել այդ սովորութիւնը 'ի գործ դնելու երեխանց, բայց երևի դորանով կամեցել են իմացնել կանանց թէ վայելուչ չէ նրանց ընթանալը և թէ նրանց ճշմարիտ տեղը իրանց տներն են, որտեղ որ պէտքէ մնան իրանց որդւոց հոգսը անելու համար, և տնտեսական պարտաւորութիւնը կատարելու:

ՄԱՏԻԼԴԱ

Իմ սիրելի բարեկամ, այսօր մեզ մին հրաշալի վէպ պատմելու չէ՞ք:

ՏԻԿԻ՛Ն

Եղել է մին անգամ մին իշխան, որը որ երկու երկւորեակ աղջիկ է ունեցել և որոնց այնպէս անուններ էր տուել որ շատ պատշաճ էր գալիս այդ երկու աղջիկներին: Անդրանիկը, որը որ շատ գեղեցիկ էր, կոչվում էր Բէլոտ (1) իսկ կրտսերը, որը որ շատ գէղջ էր, անուանվում էր Լէտրոնէտ (2): Նրանց համար վարժապետներ վարձեցին և մինչև տասներկու տարեկան հասակը իրանց ուսմամբն էին պարապում, բայց այն ժամանակը նրանց մայրը մին մեծ յիմարութիւն արաւ, երբ որ առանց մտածելու թէ տակաւին շատ բան է մնում նրանց ուսանելու իրա հետ հասարակութեան մէջ սկսաւ տանել: Որովհետև այս երկու աղջկերքը սիրում

(1) Չքնաղադէմ:

(2) Խոժոռադէմ:

էին ուրախ ժամանակ անցկացնել, շատ բաւական եղան աշխարհ տեսնելով և սկսեցին այնուհետև միայն իրանց զարդարելու վերայ մտածել. նաև իրանց դասի ժամանակներումն էլ, և վերջապէս սկսեցին ձանձրանալ իրանց վարժապետներից: Նրանք հազարումէկ պատրուակ գըտին էլ չ'ուսանելու համար, ստէպ ստէպ տոմսակներ էին գրում իրանց վարժապետների վերայ, նրանց խնդրելու համար որ չ'գան դասատուութիւն անելու: Մէկ կողմիցն էլ վարժապետները տեսնելով որ այս երկու աղջկերքը էլ կամենում չ'են ուսանել, էլ փոյթ չ'ունեցան նրանց դաս տալու, որովհետև այս երկրի վարժապետները փողի համար չ'էին միայն դաս տալիս, այլ այն բաւականութեան համար, որով տեսնում էին իրանց աշակերտուհիների յառաջադիմութիւնը: Ուստի էլ չ'էին գնում այնտեղ շուտ շուտ, ինչպէս առաջ, և այս երկու աղջեկը շատ ուրախ էին այդ մասին: Նրանք այդ տեսակ իրանց կեանքը անցկացրին մինչև տասնըհինգ տարեկան հասակը և այդ հասակումը Բէլոտը այնպէս գեղեցկացել էր, որ համարեա՛ թէ ամենեցուն համար մին հրաշք էր դառել: Երբ որ մայրը իրան աղջկերանցը գիւղ տարաւ, բոլոր երկտասարդ մարդիկը գալիս էին Բէլոտին այցելութիւն անելու, մինը նորա բերանն էր գովում, մինը ձեռները, միւսը աչքերը և մին ուրիշն էլ նորա հասակը և մինչդեռ այդ օրինակ գովաբանութիւններ էին տալիս նորան, ոչով մտածում չ'էր թէ արդեօ՞ք աշխարհիս երեսին նա քոյր ունի թէ չէ: Լէտրոնէտը մեռնում էր նախանձելուց այդպէս գէղջ ծնվելուն համար և խկոյն սկսաւ ձանձրանալ հասարակութիւնից, որտեղ որ ամենայն նախամեծարութիւնը և պատիւը իրա քրոջ համար էր լինում, Ուստի նա մտքումը վճռեց ամենեին

տանից դուրս չգնալ: Մի օր, երբ որ նա հրաւիրուած էր մի ժողովքի մէջ, որը որ մի կաքաւահանդէսով (балъ) պէտք էր վերջանար, ասաց իրան մօրը թէ գլուխը ցաւում է և թէ ցանկանումէ մնալ տանը: Սկզբում սրտնեղութենից կամեցաւ մեռնել, և ժամանակը անցկացնելու համար՝ գնաց իրա մօր գրատունը մի րոման վեր առնելու և շատ նեղացաւ, երբ որ տեսաւ որ բանալիքը իրա քոյրը տարել էր հետը: Նորա հայրը նոյնպէս մի մատենադարան ունէր, բայց ուսումնական գրեանքներից էր բաղկացած, որոնց նա շատ ատում էր: Այսուամենայնիւ Լէտըրոնէտը ստիպուած էր նորանցից մէկը վեր առնելու: Նորա վերառած գիրը մի նամականի էր, որը որ բանալով, գտաւ այն, ինչ որ կամենում եմ ձեզ պատմել:

„Դուք ինձ հարցնում էք թէ ինչի՞ցն է որ գեղեցիկ „անձանց մեծ մասը յիմար են լինում: Կարծեմ որ կա- „րող եմ դորա պատճառը ասել: Այդ նորանից չէ որ „սէքս ուրիշների վերայ քիչ խելք են ունենում ծնված „ժամանակը, բայց նրանից է որ զանցառութիւն են ա- „նում իրանց միտքը մշակելու: Բոլոր կանայքը փառա- „սիրութիւն ունին և կամենում են որ ուրիշների աչքին „լաւ երևին: Մի տգեղ անձն իմանումէ որ երբէք չէ „կարող սիրելի լինել իրա գեղջութեան պատճառաւ, այդ „բանը նրան առիթ է տալիս որոշել զինքը ուրիշներից „իրա իմաստութեամբը: Ուստի նա սկսումէ շատ ուսա- „նել և վերջապէս սիրելի է դառնում չմտնիկ արած իրա „տգեղութեանը: Ընդհակառակը գեղեցիկը աշխատումէ „իրան հաճելի ցոյց տալու: Նորա ունայնասիրութիւնը „գտանումէ իրա բաւականութիւնը: Որովհետև նա եր- բէք մտածողութիւն չէ անում, նա միայն իրա գեղեց-

„կութեան վերայ է մտածում և այնպէս զբաղուած է լի- „նում իրա զարդարանքներովը, և հասարակութեան „մէջ գնալու ցանկութեամբը, որ էլ ժամանակ չէ գտա- „նում իրա խելքը մշակելու: Ուստի նա մի յիմար է „դառնում երեխայական խաղերով, տեսարաններով և շորի „կտորտանքներով զբաղուած լինելուն համար: Այս բանը „շարունակվումէ մինչև երեսուն տարին, շատ սակավ մինչև „քառասուն տարին, էն էլ եթէ ծաղիկը կամ թէ ուրիշ „հիւանդութիւն չխլէ շուտով նրա գեղեցկութիւնը: Երբ „որ նա ծերանում է, չէ կարող էլ ոչինչ ուսանել, ու- „րեմն այդ գեղեցիկ աղջիկը մնում է յիմար իրա բովան- „դակ կեանքումը, բայց ընդհակառակը այն գեղջ աղջի- „կը, որը որ շատ սիրելի է դառած՝ ծիծաղումէ ծերու- „թեան և հիւանդութեան վերայ, որոնք չեն կարողա- „ցել իրանից մի բան խլել:„

Լէտըրոնէտը այս նամակը կարդալուց յետոյ՝ որը որ կարծես թէ իրան վերայ էր գրուած, մտքումը որոշեց օգուտ քաղել այդ ամեն ճշմարտութենիցը: Սրատին յետ է խնդրում իրա վարժապետներին, իրա անձը նուիրումէ ուսման և կարդացած բաների վերայ լաւ խորհրդածութիւն է անում, որով քիչ միջոցումը շատ արժանաւոր աղջիկ է դառնում: Երբ որ ստիպուած էր լինում գնալու իրա մօր հետ հասարակութեան մէջ, միշտ նստում էր այնպիսի անձանց մօտ. որոնց մէջ նկատում էր նա հանճար, նրանց հարցմունքներ էր յառաջարկում և մտքումը պահում էր ինչ լաւ բան որ նրանցից լսում էր: Տասնըեօթ տարեկան հասակումը Լէտըրոնէտը այնպէս լաւ խօսումէր և գրում՝ որ ամենայն արժանաւոր մարդ զարմանում էր, երբ որ ծանօթանում էր նորա հետ: Այս երկու քոյրերը պսակուեցան միևնոյն օրումը: Իէ-

լոտը ամուսնացաւ մին գեղեցիկ Թագաւորազնի հետ, որը որ քսանըերկու տարեկան էր: Լէտըրոնէտն էլ պըսակուեցաւ այդ Թագաւորազնի ազգականի հետ, որը որ քառասունհինգ տարեկանից աւելի էր: Նա ճանաչել էր Լէտըրոնէտի արժանաւորութիւնը և նորան շատ պատւում էր: Բէլոտը շատ բաղդաւոր էր երեք ամուսայ միջոցում, բայց յետոյ նորա գեղեցկութիւնը սովորական դառաւ իւր մարդուն, որը որ մտածեց թէ պէտք չէ զոհել իւր անձը իւր կնկան համար: Նա գնաց որս անելու և ուրիշ էլի շատ զուարճալի զբօսանքներ արաւ, որոնց մէջ կինը մասնակից չէր լինում ամենևին. այս բաները շատ տարօրինակ էին թւում Բէլոտին, որովհետև նա համոզուած էր թէ իրան մարդը պիտի իրան միշտ սիրէ և շատ դժբաղդ համարեց իրան, երբ որ տեսաւ որ նորա սէրը օր ըստ օրէ պակասումէ: Բէլոտը այդ մասին գանգատուեց իւր մարդուն. մարդը փոխն շատ բարկացաւ, յետոյ հաշտուեցին. բայց որովհետև միևնոյն դանգատները ամենայն օր կրկնվում էին, Թագաւորազնը նեղացաւ վերջապէս նորա խօսքերին ականջ դնելուց: Բէլոտը մին որդի ծնելուց յետոյ՝ կորցրուց իւր գեղեցկութիւնը, այնպէս որ իւր մարդը, որը որ միայն սիրումէր իւր կնոջը գեղեցիկ լինելու պատճառաւ, սկսաւ էլ չսիրել նորան: Բէլոտը այս բանիս վերայ սաստիկ վիրաւորուած՝ ամենևին կորցրուց իւր գեղեցկութիւնը և որովհետև նա տգէտ էր, նորա խօսակցութիւնն էլ շատ տաղտկալի էր թւում: Երիտասարդ մարդիկը ձանձրանում էին նրանից, պատճառը որ միշտ տխուր էր լինում, հասակաւոր խելացի մարդիկն էլ նոյնպէս ձանձրանում էին նրանից, էնչուր որ յիմար էր, էնպէս որ բոլոր օրը ստիպուած էր լինում մենակ անցկացնելու: Բայց ամենից

տեսնել նորա յուսահատութիւնը աւելացրուց նորա քոյր Լէտըրոնէտը, որը որ աշխարհիս ամենաերջանիկ անձն էր դառել: Նորա մարդը խորհուրդ էր հարցնում նորանից իրան գործերի մասին և նրա տուած խորհուրդներին համեմատ էր վարվում: Ամենայն տեղ ասում էր որ Լէտըրոնէտը իրա ամենաընտիր բարեկամն է աշխարհիս երեսին: Նոյն ինքը Թագաւորազնը, որը որ խելացի մարդ էր, շատ սիրում էր իրա քենիի արած խօսակցութիւնը և ասում էր թէ կարելի չէ մին քառորդ ժամ առանց յորանջելու ժամանակ անցկացնել Բէլոտի հետ, որովհետև նա միայն իմանում է խօսել զարդարանքների և զուքսերի վերայ, որոնցից ինքը ամենևին տեղեկութիւն չունի: Իրա կնկան վերայ ունեցած այդ ատելութիւնը այնքան աճեցաւ, որ նրան գիւղ ուղարկեց, որտեղ որ նա երկար ժամանակ սկսաւ ձանձրանալ և որտեղ որ նա անշուշտ նեղութիւնից կ՚մեռնէր, եթէ նորա քոյր Լէտըրոնէտը ցաւակցութիւն չունենար ստէպ ստէպ նորա մօտ այցելութեան գնալով: Մին օր, երբ որ նա աշխատում էր մխիթարել Բէլոտին, ասաց նա նրան. „Քուրի՛կ, որտեղի՞ց է այն տարբերութիւնը, որը որ գտնվումէ իմ և քո մէջ: Ես լաւ տեսնումեմ որ դու մին խելացի անձն ես, իսկ ես մին տգէտ, բայց մինչդեռ մենք փոքր էինք, ամենքը ասում էին թէ ես էլ այնքան խելք ունիմ, որքան և դու:„ Լէտըրոնէտը իրա հետ պատահած դէպքը նորան պատմելուց յետոյ՝ ասաց. „Դու շատ նեղացած ես քո ամուսնոյ վերայ քեզ գիւղ ուղարկելուն պատճառաւ, բայց այսուամենայնիւ այդ բանը, որը որ դու համարում ես քո կեանքի մէջ առաջին թշուառութիւնը, կարող է բարուոքել քո վիճակը, եթէ ցանկանալու լինիս: Տակաւին դու տասնըինը տարեկան ես, այդ բանը ըլ-

ժուար կ՚լինէր քեզ համար, եթէ քաղաքի շփոթութեան մէջումը գտանուէիր, բայց այն միայնակութիւնը, որին մէջ դու քո կեանքը անց ես կացնում, ժամանակ է տալիս քեզ մշակելու քո խելքդ, բայց պէտք է զարդարել նորան ընթերցանութեամբ և խորհրդածութեամբ:» Բէլլոտին սկզբումը շատ դժուար թուեց հետևել իւր քրոջ խորհուրդներին, բայց յետոյ մեծ յաջողութիւն ունեցաւ այս բանի մէջ և զարմանալի յառաջադիմութիւն արաւ ամեն տեսակ գիտութիւնների մէջ. և որովհետև իմաստասիրութիւնը մխիթարում էր նորան իւր թշուառութիւնների մէջ՝ սկսաւ զարձեալ պարարտանալ և առաջուանից առաւել գեղեցիկ դառնալ. բայց այդ բանը նորան ամենևին անտարբեր էր թողնում և չէր էլ արժան համարում մինի տալու հայելու մէջ: Այս միջոցումը նորա մարդը ոչնչացնել էր տուել իւր պալատը: Այս յետին թշուառութիւնը քիչ մնաց որ նորան յուսահատացնէր, որովհետև շատ սիրում էր իւր մարդուն, բայց նորա քոյրը կարողացաւ այս բանումն էլ մխիթարել. «Մի՛ նեղանա՛ր, սիրելի քոյրիկ, ասում էր նա, ես մին հնարք եմ իմանում կրկին քո մարդուն հետ քեզ հաշտեցնելու, միայն դու հետևիր իմ տուած խորհուրդներին և ոչինչով մի շփոթուիր: Որովհետև Թագաւորազնը մին որդի ունէր Բէլլոտից, որը որ պէտք էր իւր ժառանգը լինէր, փառորդ չ՚շատակից մին ուրիշ կնիկ առնելու և մտքումը վճռեց որ իրան կեանքը ուրախութեամբ անցկացնէ: Նա շատ զուարճանում էր, երբ որ իրան քենիի խօսակցութիւնները լսում էր և ասում էր նորան թէ երբէք պըսակուելու չէ ինքը, մինչև որ չ՚հանդիպի մին այնպիսի կնկան, որը որ էնպէս իմաստուն լինի ինչպէս ինքը:»

— «Բայց եթէ նա էլ ինձ պէս տգեղ լինի, ասաց ծիծաղելով Լէտըրոնէտը:

«Ճշմարիտ եմ ասում, տիկին, պատասխանեց Թագաւորազնը, այդ բանը ամենևին չէ կարող յետ դարձնել ինձ իմ դիտաւորութենիցը. մարդ սովորում, միշտ տգեղ երեսի հետ, Ձերը ինձ էլ ընդդէմ չէ թւում սուէպ տեսնելուս համար, երբ որ խօսում էք, շատ գեղեցիկ էք երևում. Ճշմարիտը ձեզ ասեմ Բէլլոտը գեղեցիկ կնիկներին էլ ինձ զզուեցրել է, երբ որ ես նրանցից մէկի հետ պատահում եմ, չեմ համարձակում հետը խօսելու, երկիւղ կրելով թէ մի գուցէ մին յիմար խօսք բերանիցը դուրս հանէ:»

Այս միջոցումը բարեկենդանի ժամանակը վերահասաւ և Թագաւորազնը մտածեց թէ կարող է լաւ ժամանակ անցկացնել, եթէ ծպտեալ եղանակաւ գնալու լինի կաքաւահանդէս: Նա այս բանը միայն Լէտըրոնէտին յայտնեց և խնդրեց նորան որ ինքն էլ իւր հետ դիմակ (маска) դնի երեսին: Որովհետև Լէտըրոնէտը նորա քենին էր, ոչով չէր կարող ընդդիմախօս լինել, և եթէ յայտնելու էլ լինէր այդ բանը, նորա անուանը մէկ վնաս չէր կարող հասնել: Լէտըրոնէտը իրաւունք խնդրեց իւր մարդուց այնտեղ գնալու, որը որ իսկոյն ուրախութեամբ համաձայնեցաւ, մանաւանդ որ մտքումը էլ դրած ունէր Բէլլոտին հետ Թագաւորազնին հաշտեցնելու: Նա այդ աքսորուած Թագուհու վերայ նամակ գրեց իւր կըրնոջ համաձայնութեամբը, և առաջուց յայտնեց թէ Թագաւորազնը ինչպիսի զգեստներով պիտի հանդիսանայ:

Բէլլոտը կաքաւահանդէսի միջումը եկաւ նստեց իւր մարդու և քրոջ մէջ տեղ և մին շատ զուարճալի խօսակցութիւն սկսեց նրանց հետ: Սկզբումը Թագաւորազնը կարծեց թէ իրան կնոջ ձայնն է լսում, բայց այդ անծանօթ կինը որ մին քառորդ ժամ խօսեց, Թագաւորազնը

իրա կարծիքը մտքիցը փարատեց։ Մնացած գիշերը այնպէս շուտ անցկացաւ որ նա աչքերը քորեց երբ որ արեգակը ծագեց, կարծելով թէ երազի մէջ է և շատ ըզմայլած մնաց այն անծանօթ անձնի ունեցած խելքի վերայ, որուն որ չ՛կարողացաւ ոչ մին հնարքով յորդորել որ դիմակը երեսից հանէ։ Թագաւորայնի նորանից ըստացած շնորհքն այս եղաւ որ նա խոստացաւ նոյն ըզգեստներով մէկ ուրիշ անգամ էլ գալ կաքաւահանդէսը։

Թագաւորայնը ամենից առաջ գնունեցաւ այնտեղ, թէպէտև անծանօթ կինն մին քառորդ ժամ հազիւ թէ ուշացաւ նորանից յետոյ՝ նա նրա երեսը տուաւ այդչափ ուշանալուն համար և երդում կերաւ թէ շատ անհամբերութեամբ սպասում էր իրան։ Թագաւորայնը այս երկրորդ անգամը էլ տաւել զմայլած մնաց նորա վերայ և խոստովանեց Լէտորնէտոյին թէ գժուած սիրումէ այդ անծանօթ անձին։

—„Ես համոզուած եմ որ նա շատ խելքի տէր է, ասաց Լէտորնէտը, բայց եթէ դուք կամենումէք որ ես յայտնեմ ձեզ իմ զգացմունքը, վախեմ թէ նա ինձանից աւելի գեղջ լինի։ Այդ կինը իմանում է որ դուք իրան սիրում էք և վախումէ որ ձեր սէրը պակասի, երբ որ նորան երեսը տեսնէք։

„Ո՞խ, տիկին, ասաց Թագաւորայնը. ի՞նչի նա չ՛է կարողանում կարդալ իմ սրտիս մէջ։ Այն զգացմունքը, որը որ տպաւորել է ինքը նորա մէջ, ամենևին անկախ է նորա երեսի գծագրութենից։ Ես հիմնումեմ նորա հմտութեան, մտքի գերազանցութեան, մանաւանդ բարեսրտութեան վերայ։

—Ինչպէ՞ս կարող էք գտնել նորա սրտի բարութիւնը, հարցրաւ նորա խորհրդակիցը։

„Ես ասեմ ձեզ այս բոպէիս, պատասխանեց Թագաւորայնը։ Երբ որ ես նորան ցոյց տուեցի գեղեցիկ կանայք, նա նոցա գովեց անկեղծ սրտիւ, և ճարտարամտութեամբ ինձ հասկացրուց որ նրանք ունեցել են այնպիսի գեղեցկութիւններ, որ ես չ՛եմ կարողացել նկատել։ Երբ որ ես կամեցայ նորան փորձելու համար. կանանց վերայ վատ պատմութիւններ անել, նա մէկ հնարքով խօսքը շուռ տուաւ կամ իմ խօսքս կտրեց որ ինքը ուրիշ գեղեցիկ բան պատմէ այն կանանց վերայ, և վերջապէս երբ որ կամեցայ շարունակել, բերանս փակեց, ասելով թէ անտանելի է նորա համար բամբասանքը։ Դուք լաւ տեսնումէք, տիկին, որ մին կնիկ, որը որ նախանձոտ չ՛է, որին համար անտանելի է բամբասանքը, և որը որ ուրախանումէ լաւ բան խօսել մերձաւորի վերայ,՝ պէտքէ անշուշտ որ ընտիր բնաւորութեան տէր լինի և կարելի էլ չ՛է որ բարեսիրտ չ՛լինի։„

Հետևեալ կաքաւահանդէսումը Թագաւորայնը իրան ով լինելը յայտնեց անծանօթին և ասաց նորան թէ մին ուրիշ երջանկութիւն չ՛ունի յուսալու, եթէ յանձնառու չը լինի պսակուել իրա հետ։ Ակլոտը յամառեց դիմակը երեսից հանելու, որովհետև այսպէս էր խօսք կապել իրա քրոջ հետ։ Ահա խեղճ Թագաւորայնը մին անհանգստութեան մէջ։ Նա կարծումէր որ անծանօթ կինը յիրաւի մին հրէշ պիտի եղած լինի, ըստ որում այդքան երկիւղ էր կրում ցոյց տալ իրա երեսը, բայց թէպէտև շատ տգեղ անձն էր պատկերացնում նորան, բայց այսուամենայնիւ այդ տարակուսանքը ամենևին նորա սէրը և յարգանքը չ՛էր պակասացնում։ Քիչ մնաց որ Թագաւորայնը սրտնեղութենից մեռնի, երբ որ անծանօթ կինը ասաց նորան. „Ես ձեզ սիրում եմ, Թագաւորա՛յն, և խիղճ ձեր

նեղանալը չեմ ցանկանալ. բայց որքան որ մեծ է իմ սէրը առ ձեզ. այնքան էլ երկիւղ եմ կրում որ ձեզ նեղացնեմ երբ որ տեսնէք ինձ: Կարելի է որ դուք կարծումէք թէ ես մեծ մեծ աչքեր ունիմ, փոքր բերան և գեղեցիկ ատամներ, բայց եթէ իմ կերպարանքը տեսնէք, կ'խնդրեք որ շուտով դիմակս դնեմ էլի իմ երեսին: Եթէ զարհուրելի էլ չլինիմ, ես իմանում եմ որ դուք անհաստատ բնաւորութեան տէր էք: Դուք շատ սիրումէիք Բէլոտին, բայց այսուամենայնիւ նորան երեսից թողել էք:

—Ո՜հ, տիկին, ասաց Թագաւորազնը, իմ դատաւորն եղէ՛ք. ես երիտասարդ էի, երբ որ պսակուեցայ Բէլոտի հետ, և ես ձեզ խոստովանումեմ որ բոլոր օրը նրա վերայ մտիկ տալով էի զբաղում և ո՛չ թէ նորա խօսքերին ականջ դնելով, բայց երբ որ նորա ամուսինը դառայ և նորան ստէպ ստէպ տեսնելու սովորութիւնը հալածեց իմ մտքի ցնորքները, երևակայեցէք դուք հիմիկ, կարո՞ղ էր արդեօք իմ վիճակը ինձ հաճոյ թուել: Երբ որ կընկանս հետ մենակ էի գտնվում, խօսումէր այն նոր զգեստի վերայ, որը որ միւս օրը պիտի հագնէր. խօսումէր այս ինչ կնկան կօշիկների և այն ինչ կնկան թանկագին ակնեղէնների վերայ: Երբ որ հացի ժամանակ մին խելացի մարդ էր գտնվում մօտս, և երբ որ կամենումէր մին խոհեմ բանից խօսել, Բէլոտը սկսումէր յօրանջել և վերջապէս գնումէր քնելու: Ես կամեցայ նորա այդ պակասութիւնները ուղղացնել, բայց այդ բանը նորա համբերութիւնը հատացրուց: Նա այնպէս տգէտ էր, որ ինձ ահի դողի մէջ էր քցում և ամաչացնումէր ամենայն անգամ, երբ որ կամենումէր բանալ բերանը: Ինչ և իցէ, եթէ իմ ձանձրութիւնը միայն այդօրինակ անկարգութեանց մէջ կայանար, կ'համբերէի. բայց բանը այդ չէր

միայն. նա կամենումէր որ այն քնքոյշ սէրը, որը որ տպաւորել էր նա իմ սրտի մէջ, շարունակուէր իմ բովանդակ կեանքումը և ես դառնայի իրա ստրուկը: Վերջապէս նա ինձ ստիպեց որ իմ պսակը ոչնչացնեմ:„

„Խոստովանումեմ որ ողբալի վիճակի մէջ էիք գտանուել, պատասխանեց անծանօթ կինը, բայց ձեր ամեն պատմածները ինձ ամենևին ապահովացնում չեն: Դուք ասումէք՝ թէ ինձ սիրումէք, բայց կարո՞ղ էք արդեօք այնքան համարձակութիւն ունենալ պսակուելու ինձ հետ ձեր բոլոր հպատակների ներկայութեանը առանց իմ երեսը տեսնելու:„

—Թէ որ ձեր առաջարկութիւնը միայն այդ է, ապա ես ամենաբաղդաւոր անձն եմ աշխարհիս երեսին, ասաց Թագաւորազնը: Եկէ՛ք իմ ապարանքս Լէտոնետի հետ, և էքուց առաւօտը կանչել կ'տամ իմ խորհրդականներին և նրանց ներկայութեանը կ'պսակուեմ ձեզ հետ:„

Այս բանից յետոյ հրամայեց նա բոլոր պալատականներին գալ ժողովել իրա ապարանքը և իմացնել տուաւ նոյնպէս տէրութեան բոլոր նախարարներին: Թագաւորազնը սկսաւ այն անծանօթ կնկան և իրա մէջ եղած դէպքերը նրանց առաջ պատմելու և իրան խօսակցութիւնը վերջացնելուց յետոյ՝ երդում կերաւ որ բացի նրանից ուրիշ կնիկ չ'ունենայ, որպիսի և իցէ կերպարանք էլ ունենայ: Ամենքը կարծումէին թէ նա շատ տգեղ պիտի լինի, բայց ինչպէս մեծ եղաւ նրանց զարմացումը, երբ որ Բէլոտը դիմակը երեսից վեր առնելով, այնտեղ գտնուած հիւրերի առաջ այնպէս գեղեցիկ երևաց, որչափ որ մարդ կարող էր երևակայել: Բայց զարմանքը այն էր որ ո՛չ Թագաւորը, ոչ էլ ուրիշները սկզբումը նրան չ'ճանաչեցին. այնքա՜ն հանդստութիւնը և միայնակութիւնը նորան

դեղեցկացրել էին։ Կամաց ձայնիւ միայն ասումէին թէ միւս Թագուհին քիչ նմանութիւն ունէր սորա հետ։ Թագաւորազնը զմայլած այսպիսի զուարճալի եղանակաւ խաբուելուն համար, չէր կարողանում խօսել, բայց Լէտորնէտը լռութիւնը կտրեց իրա քրոջ շնորհաւորելով, որը որ վերստին իրա մարդու սիրոյն արժանի եղաւ։

—Ո՛հ, այդ չքնաղագէմ և հանճարաւոր անձը Բէլո՞տն է, ասաց Թագաւորազնը ամենեւին զարմացած։ Ինչպէ՞ս հնարքով արդեօք միաւորել է դա իրա գեղեցկութեան հետ այն խելքը և բարի բնաւորութիւնը, որոնցից զուրկ էր ամենեւին։ Ո՞ր բարեսիրտ դիցանուշ է արել արդեօք այդ հրաշագործութիւնը։

„Ոչինչ հրաշք չ՛կայ, պատասխանեց Բէլոտը, ես զանցառութեան էի տուել բնութեան ինձ պարգեւած տաղանդը, բայց միայնակեցութիւնը և իմ քրոջ տուած խորհուրդները բացին իմ աչքերը և ինձ հարկադրեցին ձեռք բերել այն շնորհքները ժամանակի միջոցաւ և շատ հիւանդութիւնների դիմանալով։

—Եւ այդ շնորհքները իմ սրտումը տպաւորեցին անհաստատ բնաւորութեան միջոցաւ մին անքակտելի սէր, ասաց Թագաւորը, ընկնելով նորա ոտները։ Յիրաւի նա իրան բովանդակ կեանքումը նրա ամենայն հաւատարմութեամբ սիրեց որ մոռացնել տուաւ իրա քաշած թշուառութիւնները։

ՇԱՐԼՕՏՏԸ

Տի՛կին, այդ վէպը շատ գեղեցիկ է, բայց չ՛լինի թէ մեզ վերայ էք ասում։

ՏԻԿԻՆ

Շատ կարելի է, բայց թէ ձեզ վերայ լինի թէ չէ, գլխաւոր բանն այն է որ դուք օգուտ քաղէք։ Բայց արդէն ժամանակ է միմեանցից բաժանուելու, մնաք բարեւ։

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐԵՔԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻՆ

Այն վէպը, որը որ վերջի անգամ ձեզ պատմեցի, մին քիչ ուշացրուց մեր պատմութիւնը. կորած ժամանակը այսօր պէտք է յետ բերենք։ Սկսի՛ր, Եւգենիա՛։

ԵՒԳԵՆԻԱ

Փղշտացիք պատերազմ բացին Սաւուղի դէմ, սա կամեցաւ խորհուրդ հարցնել Էնդօր—անունով մին կախարդ կնոջից և հրամայեց նորան որ Սամուէլ մարգարէի հոգին կանչէ։ „Զարհուրելի մարգարէի ստուերը երեւաց։ Սաւուղը հարցրուց թէ զօրքը թողնէ թէ չէ։—Ես ինչ որ առաջուց գուշակեցի, անվրէպ պատահելու է, ասաց Սամուէլը, Տէրը առնելու է քո թագաւորութիւնը, իսկ դու և քո որդիքը ինձ հետ կ՛լինիք էգուց։„ Սաւուղը զարհուրեց և տեսնելով որ թշնամիքը իրանից զօրեղ են, սուրը մխեց իրա մարմնոյ մէջ, և նորա որդիքն էլ թշնամիներից սպանուեցան։

ՄԱՐԻԱՄ

Սիրելի բարեկամ, ես միշտ երկիւղ եմ կրում մահից։ Իմ դայեակը ասել է թէ նրանք կենդանանում են. չեմ իմանում թէ որքան բաներ է պատմել ինձ այդ մասին։

ՏԻԿԻ՞Ն

Այդ նրանից է որ քո դաշնակը յիմար է եղել․ այդ մասին պատմած պատմութիւնները, ամենն էլ առասպելներ են։ Ես կարողեմ ձեզ երկու օրինակով ապացուցանել այդ բանը։

Մին ագնուական մարդ ուղարկած էր Թագաւորից Գերմանիա ծանր գործոց համար։ Նա գնում էր փոստի չորս ծառայի հետ 'ի միասին։ Երբ որ գիշերը մերձեցաւ մին գիւղի մէջ, որտեղ որ մին հիւրանոց էլ չ'կար, հարցրուց նա մին գիւղականից թէ արդեօք հնարք չկա՞յ գիշերը անցկացնելու ամարանոցումը։—Ամարանոցը երեսից թողած է, պատասխանեց գիւղականը, քաղաքից դուրս մին ապարակատէր է գտանվում, որուն տունը մին քիչ հեռի է, և որտեղ միայն ցերեկով են համարձակվում ներս մտնել, որովհետև գիշերը չար հոգիներ են գալիս այնտեղ և ծեծում են մարդկանց։„ Ագնուականը, որը որ քաջասիրտ մարդ էր, ասաց․ „Ես ամենևին չեմ վախում հոգիներից, որովհետև ես նրանցից առաւել չար եմ, և այդ քեզ ապացուցանելու համար, կ'թողնեմ ծառայքս գիւղի մէջ և ես միայնակ կ'գնամ այնտեղ։„ Բայց այսուամենայնիւ այդ նորա դիտաւորութիւնն չէր, նա յաճախ լսած էր դևերի մասին և շատ ցանկութիւն ունէր նրանց տեսնելու։ Մէկ չաղ կրակ վառել տուաւ, վերառաւ իրա ծխապամորճը և մին ծխախոտ և դրեց սեղանի վերայ չորս լցած ատրճանակ։ Գիշերի մէջ լսեց շղթաների ձայն և տեսաւ սովորականից առաւել բարձրահասակ մին մարդ, որը որ նշանացի արաւ նրան իրա մօտ գալու։ Ագնուականը արագութեամբ իրա ատրճանակներից երկուսը դրաւ գօտիի միջով, մինը դրպանումը,

և միւսը աջի ձեռումը, իսկ ձախ ձեռումը բռնելով մին ճրագ՝ գնաց երևոյթի հետիցը։ Անծանօթը վեր իջանելով սանդուղքից, մտաւ մին ընդարձականիստ այգիի մէջ։ Բայց երբ որ ագնուականը հասաւ ալէի ծայրը, յանկարծ հողը պակասեցաւ նորա ոտների տակից և ընկաւ մին փոսի մէջ։ Այն ժամանակը նա իրան արած յիմարութիւնը իմացաւ, որովհետև տեսաւ որ ոգիների իշխանութեան ներքոյ չէր ընկած, այլ տասներկու աւազակների ձեռք, որոնք խորհուրդ էին անում միմեանց թէ նրան պիտի սպանեն թէ չէ։ Ագնուականը նրանց խօսակցութենից իմացաւ որ նրանք սուտ փող կտրող են։ Ագնուականը տեսնելով իրան ինչպէս մին մուկ բռնված մկնորսակի մէջ, ձայնը բարձրացրուց և հրաման խնդրեց նրանցից խօսելու, և ասաց․ „Պարոնա՛յք, իմ վարմունքս ձեզ հաստատումէ որ ես մին թեթևամիտ մարդ եմ, բայց միևնոյն միջոցումը պիտի ձեզ հաւատացնեմ որ շատ պատուաւոր մարդ եմ, որովհետև դուք իմանումէք որ շաղփաղփ մարդը միշտ փոքրահոգի է լինում։ Ես ձեզ խոստանումեմ իմ պատուով ոչովի չ'յայտնել այս դիպուածը։ Ամենևին յանցանք մի՛ գործէ՛ք սպանելով մին մարդոյ, որը որ մտադիր չ'է ձեզ չարութիւն անելու։ Դրանից 'ի զատ ես չորս ծառայ ունիմ գիւղումը և ինձ հետ հարկաւոր նամակներ ունիմ որ պիտի թագաւորին հասցնեմ․ իմ ծառայքս այնքան կ'պտրտեն ինձ որ վերջապէս կըգտնեն։„ Այս մարդիկը այս բանը իմանալուց յետոյ՝ ասացին որ Աւետարանի վերայ երդում ուտէ որպէսզի պատմէ գիւղումը թէ՛ զարհուրելի բաներ է տեսել ամարանոցումը։ Յիրաւի նա գնաց և գիւղի մէջ շատ սարսափելի բաներ պատմեց նրանց մասին։ Տասներկու տարի ագնուականը պահեց այդ գաղտնիքը։ Մին օր, երբ որ

նա իրան բարեկամների հետ ուրախութիւն էր անում, եկին ասացին թէ մին մարդ երկու ձի առած հետը կանգնած է կամուրջի վերայ և շատ հարկաւոր բան ունի ասելու: Ազնուականը իսկոյն վերկացաւ այն բազմութեան խնջոյքի միջից և տեսաւ որ այն աւազակներից մինն, որոնց իշխանութեան ներքոյ էր ընկել:—Կանգնեցէ՛ք, պա՛րոն, ձայն արձակեց աւազակը, ես միայն մին խօսք ունիմ ձեզ ասելու: Նոքա, որոնց գաղտնիքը դու պահել ես, արդէն տասներկու տարի է, իրանց շնորհակալութիւնը ձեզ ցոյց տալու համար՝ խնդրումեն որ այս երկու ձին ընդունիք:„ Յիրաւի այդ մարդը, որը որ երկու ձին մին ծառից կապել էր, կայծակի պէս փախաւ, այս խօսքերը ազնուականին ասելուց յետոյ:

ԵՒԳԵՆԻԱ

Ես շատ համոզուել էի թէ դոքա դեւեր և սատանաներ էին, որոնք բնակում էին այդ ամարանոցումը:

ՏԻԿԻՆ

Եթէ մին քիչ դատողութիւն անենք, պիտի տեսնենք որ այդօրինակ պատմութեանց հաւատ ընծայելը ամենևին աւելորդ է: Հաւատումէ՞ք արդեօք դուք անկեղծ սրտիւ թէ Աստուած, որը որ նոյն ինքն իմաստութիւն է և նոյն ինքն բարութիւն, մարդկանց վախեցնելու համար՝ այդպիսի հրաշքներ անէ: Հաւատումէք արդեօ՞ք որ Աստուած թոյլ տայ, մին հոգւոյ, որպէս թէ գայ քնող մարդոյ ծածկոցը վերանէ և արգելէ նորան քնելու և հազար ուրիշ յիմարութիւն անելու, որոնք միայն ծաղու են արժանի: Կամենումեմ ապացուցանել

ձեզ այս այն բանով, որը որ ինձ է պատահել: Իմ բաղտիցս հաւաքուել էին չորս կողմումն ամենայիմար աղախիններ, և ես եօթն տարեկան հասակումն հինգ հարիւր պատմութիւնից աւելի էի իմանում այդօրինակ դէպքերի վերայ, որոնց ես հաւատումէի, ինչպէս Աւետարանի ճշմարտութիւններին, և այդ բանը ինձ այնպէս երկչոտ էր շինել որ մինչև անգամ իմ ստուերիցն էլ էի վախում, բայց երբ որ չափահաս դառայ, մոքումն դրեցի բժշկել ինձ այդ հիւանդութիւնիցը: Սակաւ սակաւ ազատուեցայ ես այդօրինակ տկարամտութիւնից և մին դիպուած, որը որ պատահեց ինձ հետ, կատարելապէս ինձ զգաստացրուց: Մին քանի ամսուայ ժամանակաւ գործ ունէի մին փոքրիկ քաղաքի մէջ: Այնտեղ հասնելուս պէս կանչել տուեցի մին պաստառագործ որ պատրաստէ այն սենեակը, որը որ ուզումէի վարձել: Պաստառագործը ասաց ինձ թէ ինքը կահկարասիքներով զարդարած մին փոքր տուն ունի, որը որ ամէնը մին ոսկու պատրաստ է տալու: Երկու տարի էր արդէն որ այդ տունը նորից շինուել էր. ըստորում այրուելուց յետոյ՝ երկրորդ անգամ էր շինուած, և այն տեղ մին կնիկ այրուել էր այնժամանակ, երբ եկել էր նա իրա փողը համարելու: Դրացիները մեծ խնամքով պատմեցին ինձ այս դիպուածը և ասացին թէ ամենայն գիշեր այն պառաւ կնիկը գալիս է իրա փողը համարելու: Ես սկսեցի ծիծաղել այդ մարդկանց վերայ: Բայց նոքա ասացին թէ ես իմ վստահութիւնիցը շատ խաբուած եմ և թէ այդ տունը շատ անգամ վարձուել է, բայց վարձողները երեք օրից աւելի կարողացել չ'են կենալ այնտեղ:—Ես ուրախ եմ այդ մասին, ասացի ես, և միշտ փափագ եմ ունեցել տեսնելու կամ լսելու այդպիսի մին անսովոր բան, դուցէ վերջումը

ունենամ ես այդ ուրախութիւնը։ Ինչ որ այդ տունը վարձեցի, աչքովս անցկացրի ներքին շտեմարանից սկսած մինչև խոտանոցը, որովհետև եթէ մեռած մարդկանցից վախում չ'էի, սակայն կենդանիներից էի երկիւղ կրում և այնպէս կարծեցի թէ պատուհասագործի որ և իցէ թշնամիներից մէկը իրան զուարճացնելու համար, վախցնում է մարդկանց, որպէսզի արգելէ դորանով որ ոչով նորա տունը չ'վարձի։ Ոչինչ չ'գտնելուց յետոյ՝ բոլոր օրը հանգստութեամբ անցկացրի։ Երեկոյապահին, ժամը եօթներորդին, մին խուլ ձայն լսեցի, առանց կարողանալու որոշել թէ ինչ տեղից է դուրս գալիս այդ ձայնը, որովհետև անդադար տեղը փոխումէր, բայց առաւելապէս սենեակի մէջից էր դուրս գալիս այդ ձայնը։ Այդ բանը ինձ ամենևին չ'վախցրուց և ինքս ինքեան ասացի ծիծաղելով. «Եթէ շտեմարանները աչքովս անցկացրած չ'լինէի, կ'կարծէի թէ սուտ փողեն կորում, որովհետև այդ ձայնը նմանվումէր կոքի ձայնի։ Առաւօտը ոչինչ չ'լսեցի, բայց հետևեալ գիշերը էլի շարունակուեց միևնոյն ձայնը։ Երկու շաբաթից յետոյ նկատեցի որ այդ ձայնը առաւել զօրեղ է լինում ուրբաթ օրը, այդ այն օրն է եղած, երբ որ տունը այրուել էր, հետևեալ ուրբաթ գիշերը անկողինս չմտի։ Առաւօտեան ժամը չորսին խօսելու ձայն լսեցի, որը որ թւումէր թէ երկրի տակիցն էր դուրս գալիս։ Անհամբեր սրտով սպասումէի ցերեկը. իմ մարդուն խնդրեցի որ իրա տեղեցը չ'շարժուի, ես գնացի դրացու տունը. այդ մին պանդոկ (гостиница) էր և այդ պանդոկի ախոռը տեսի որ ուղղակի մեր դահլիճի տակին էր շինուած, ինչ տեղից որ դուրս է գալիս այդ ձայնը Դուք իմանում էք, օրիորդնե՛ր, որ ձիանքը իրանց ոտները տափում են տալիս ժամանակ առ ժամանակ, ցերեկը ամենևին լսելի չ'է լինում, բայց գիշերուայ լռութեան մէջ, ամեն մին ոտի հարուածը լսելի է լինում։ Մին փայտով երեք անգամ սաստիկ գետնին զարկելուց յետոյ՝ դարձայ տուն և իմ ամուսինը ասաց թէ իմ գնացած ժամանակը երեք անկամ գետնին զարկեցին։ Ուրբաթ օրերը շուկայի օրեր էին, գիւղերից շատ մարդիկ էին գալիս, որոնք մնում էին քաղաքումը գիշերը անցկացնելու և իրանց ձիանքը այդ ախոռի մէջ կապում էին, և ահա էստուրիցն էր որ ուրբաթ օրերը ձայնը սաստկանում էր։ Շուտով իմ գլխովս անցածը ամենեցուն պատմեցի։ Շատ մարդիկ գալիս էին լսելու այդ համբաւը։ Այդ տան անունը վատահամբաւողները շատ ամօթալի մնացին։ Ես միայն մին ամիս բնակեցայ այդ տան մէջ. որովհետև այդ տունը վարձողների թիւը շատացաւ և տանուտէրը այնպէս զմայլեցաւ իմ քաջասրտութեան վերայ որ հաւլու թէ կարողացայ տալ նորա տան վարձը, տանից դուրս գալու ժամանակ։

ՑՈՒԼԻՐՆԷ

Եթէ դուք միտք չ'ունենայք այդ տան մէջ մտնելու, հաստատ պիտի հաւատայք թէ այն խեղճ կնիկն է շփոթ քցողը։

ՏԻԿԻՆ

Անշուշտ, իմ սիրելի, այն մարդիկը, որոնք անխոհեմ էին, այդպիսի յիմար բաներ պիտի մտածէին, վասնզի շատ յիմար բան էր մտածել թէ այն պառաւ կնիկը գալիս էր այն աշխարհիցը միայն էնդուր համար որ իրա փողը համարէ։ Ադէ՛լ, շարունակի՛ր։

ԱԴԷԼ.

Այդ ամեն բաներից յետոյ Դաւիթը Թագաւոր ճա-նաչուեց Յուդայի ցեղի վերայ, որից որ ինքը իրա ծա-գումը ստացել էր: Աբօր, Սաւուղի հարիւրապետներից մէկը, Դաւթի որդիքներից մինին Թագաւոր կարգեց միւս ցեղի վերայ, բայց Սաւուղի որդին վատ վարուելով Աբե-ների հետ, եկաւ սա և միացաւ Դաւթի հետ: Նաթան անունով մին մարգարէ Աստուծոյ կողմիցն եկաւ Դաւ-թի մօտ և ասաց նորան. „Աստուած հրամայել է քեզ ասել որ Նա Իսրայելացւոց Թագը քեզ է տուել և քո յաջորդները պիտի Թագաւորեն:„ Դաւիթը խոնարհուեց Աստուծոյ առաջ և գոհաբանութեան երգեր երգեց: Այս միջոցումը Դաւիթը պատերազմ ունեցաւ Փղշտացւոց հետ, բայց նա մնաց Երուսաղէմումը և իրա տեղ Յո-վաբին նշանակեց: Մին օր, երբ որ նա պալատի կտուրի վերայ ման էր գալիս, տեսաւ մին գեղեցիկ կնիկ, որը որ լուացվումէր աւազանի մէջ: Դաւիթը իմանալով որ այս Ուրիայի կնիկ Բերսաբէն է, հրովարտակ գրեց Յովա-բի վերայ, որ պատերազմի մէջ սպանել տայ Ուրիային, որպէսզի կարողանայ ամուսնանալ նորա կնոջ հետ: Յո-վաբը հնազանդեց և Ուրիայի մահից յետոյ՝ Դաւիթ ամուսնացաւ նորա այրի կնոջ հետ և նորանից մին որդի ունեցաւ: Երկու տարուց յետոյ Տէրը ուղարկեց նորա մօտ Նաթան մարգարէին, որը որ ասաց նորան. „Աս-տուած քեզ տուաւ Իսրայելացւոց Թագը ամենայն առա-տութեամբ և չ՚մտիկ արած այս բարութեանը, դու սպ-անել տուեցիր Ուրիային նորա կնոջ հետ ամուսնանա-լու համար: Ես քեզ յայտնում եմ որ սուրը ամենեին չպիտի դուրս գայ քո տանիցը:„ — Ես մեղանչեցի, պա-

տասխանեց Դաւիթը, — Աստուած էլ ներողութիւն շնոր-հեց, ասաց Նաթանը, բայց որովհետև դու գայթակղե-ցուցիր ժողովուրդին, Բերսաբէից ունեցած, որդիդ պի-տի անշուշտ մեռնի:

ՏԻԿԻՆ

Շարունակի՛ր, սիրելի Մարիամ:

ՄԱՐԻԱՄ

Բերսաբէի որդին մահուչափ հիւանդացաւ և վերջա-պէս մեռաւ: Դաւիթ հնազանդեցաւ Տիրոջ կամացը և խոնարհուեց նորա առաջ: Աստուած վարձատրեց նորա խոնարհութիւնը և նորան մին ուրիշ որդի շնորհեց Բերսաբէից, որին անունը Սողոմոն դրին և որը որ Թա-գաւորեց իրա հօր ետնէն:

Այս միջոցումը ուրիշ փորձանքներ դառնապէս վշտաց-րին Դաւթին: Բացի Սողոմոնից նա ուրիշ որդիք էլ ունէր. նրանցից մէկը, որի անունը Աբիսողոմ էր, իրա Ամոն եղբօրիցը վշտացած՝ նորան մին խնջոյքի հրաւի-րելով, սպանեց: Աբիսողոմ վախեցած իրա հօր բարկու-թենից, փախաւ մին ուրիշ Թագաւորի մօտ, որտեղ որ երեք տարի մնաց: Այդ ժամանակից յետոյ՝ Յովաբ, որը որ Դաւթի սպարապետն էր, նորան միջնորդ դառաւ և հաշտեցրուց իրա հօր հետ: Աբիսողոմը փոխա-նակ իրա հօր բարութենից սիրտը կակղացնելու՝ մտքու-մը դրաւ նորան դահաւէժ անելու: Բարձրացրուց ապս-տամբութեան դրօշակը իրա հօր դէմ և կամեցաւ Երու-սաղէմի վերայ յարձակուել: Դաւիթը իրա բարեկամների հետ 'ի միասին ազատեց իրա անձը և առանձնացաւ

Սաղովկայ սարը: Դաւթի հետ եղած մարդիկը կամենում չէին որ նա Աբիսողոմի ետևէն ընկնի: Դաւիթը հրամայեց Յովաբ զօրապետին խնայել իւր որդուն, բայց նա ամենևին չհնազանդեցաւ թագաւորի կամքը, որովհետև Աբիսողոմը մին լաւ ջարդ ստանալուց յետոյ՝ երբ որ կամենումէր փախչել, մին ծառի տակով անցկենալիս. մազերովը կախ ընկաւ, Յովաբը իւր նետովը սպանեց նորան, երբ որ համբաւը տարին Դաւթին, թագաւորը ասաց. "Երանի թէ ես մեռած լինէի և որդիս կենդանի մնար:" Յովաբը տեսնելով որ Դաւիթը սուգ էր անում, ակնածութիւնը մին կողմը դրաւ և ստիպեց նորան որ իւր երեսը ցոյց տայ ժողովրդին: Այս միջոցումը Յուդայի ցեղը փութացաւ Դաւթին Երուսաղէմ տանելու: Իսրայելացիք նախանձեցան այս բանի վերայ և մեծ մեծ վէճեր բացուեցան նոցա մէջ: Այն ժամանակը Սաբէ անունով մին մարդ փող ածեց և Իսրայելացւոց ցեղը Դաւթի դէմ ապստամբեցրուց: Յովաբը մին քաղաք պաշարեց, որին մէջ այդ մարդը բանտարկուած էր և այդ քաղաքը կ'կործանուէր անշուշտ, եթէ մին խոհեմ կնիկ այդ բանի առաջը չ'առնէր. որովհետև ժողովուրդը հաւաքելով՝ ասաց թէ շատ յիմարութիւն է ապստամբուելով մահուան դէմ գնացրաւել: Ուստի ժողովուրդը հաւաքուեցին Սաբէի դէմ, նորա գլուխը կտրել տուեցին և քցեցին պարսպիցը Յովաբի առաջը, և էստուրով վերջացաւ պատերազմը:

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես ձեզ հաւատացնում եմ, տիկին, որ ամենևին կարեկցութիւն չ'ունեցայ Աբիսողոմի վերայ, երբ որ աշխա-

տումէր կորուստնել իւր հօրը, որ այնչափ սիրումէր նորան և ներել էր արդէն նորա եղբայրասպանութեան յանցանքը:

ՏԻԿԻՆ

Շատ կարելի է որ Աբիսողոմը լաւ հակամիտութիւններով ծնած լինէր, բայց սաստիկ կրից տէր էր, և որովհետև աշխատել չ'էր իրան կրքերը չափաւորելու, հետզհետէ մինչև այդ աստիճան չարագործութեան հասաւ: Այդ միևնոյնը պատահումէ ամենին հետ, հենց քեզ էլ կ'պատահէ, եթէ քո մոլորութիւնները զսպելու չ'լինիս:

ՄԱՏԻԼԴԱ

Ինչպէ՞ս, իմ սիրելի բարեկամ, մի՞թէ ես էլ Աբիսողոմի պէս կարող եմ չարագործ դառնալ. Ճշմարիտ ասեմ այդ բանին չեմ կարողանում հաւատալ:

ՏԻԿԻՆ

Իւրաքանչիւր ոք բուռն բնաւորութեան տէր է, պէտք է համոզուած լինի որ նա կամ շատ առաքինի կ'լինի կամ շատ չարագործ: Սիրելի, եթէ դու քո կրքը յաղթելու լինիս, ինչպէս ես յոյս ունիմ, անշուշտ շատ նեղութեանց պէտքէ համբերես, բայց քո առաքինութիւնը կ'լինի հաստատուն, զօրեղ և անսասան, իսկ եթէ այդ միտքը չ'ունենաս, էլ չարութիւն չ'մնայ որ չ'անես եթէ ձեռիցդ գալու լինի: Մենք այդ մասին Գաղղիայումը շատ սոսկալի օրինակ ունեցանք անցեալ դարու վերջերումը: Մին շատ սիրելի և շատ հարուստ աղջիկ է եղել, որը որ միայն մին պակասութիւն է ունեցել: Նա

շատ սիրումէր իրա հարստութիւնը և կամենումէր իրա պէս հարուստ մարդոյ հետ պսակուել: Նա բնակումէր իրա հօրաքրոջ տանն, որը որ պահում էր նորա փողը և որը որ գիտէր իրա եղբօր աղջկայ պակասութիւնը: Տիկէտ անունով մին պարոն նորան կնութեան խնդրեց և աշխատեց նորա հօրաքրոջ սիրտը գրաւել: Այդ կնիկը, որը որ ցանկանում էր որ պ. Տիկէտը իրան փեսան դառնայ, յայտնեց այն աղջկայ պակասութիւնը, ասելով թէ այն ժամանակը միայն համոյ պիտի թուի նրան եթէ մեծ հարստութիւն ունենայ: Պ. Տիկէտը խոստովանեց թէ շատ հարուստ չէ և խնդրեց որ իրան օգնական դառնայ այն աղջկան խաբելու: Այդ կնիկը համաձայնեցաւ և 15000 ոսկի տուաւ նորան իրա եղբօր աղջկայ փողերը: Տիկէտը մին ադամանդեայ փունջ շինեց և աղջկայ անուանակոչութեան օրը ընծայեց նորան: Նա մտածեց թէ մին մարդ, որը որ կարող է այդօրինակ պարգև անել, անշուշտ Կրեսոսի պէս հարուստ պիտի լինի և համաձայնեցաւ նորա հետ պսակուել: Երբ որ նորա կինը դառաւ և երբ որ տեսաւ որ իրան խաբել է մեծ ատելութիւն ունեցաւ նորա դէմ և իրան արամութիւնը փարատելու համար մտքումը որոշեց մեծ մեծ հասարակութիւնների մէջ դտանուել: Իրա մօտ այցելութիւն եկողների միջից մինը շատ սիրելի երիտասարդ էր, որուն հետ կամեցաւ ամուսնանալ նա: Այն ժամանակ նա իրան պսակուած փայրկեանը սկսեց անիծել և ցանկանալ իրա մարդու մահը, որպէսզի այս նոր երիտասարդի հետ կարողանայ պսակուել: Առաջի անգամը, երբ որ նա այդ բանը ցանկացաւ, սխաւ սոսկալ, որովհետև նա ամենևին չար չէր դեռ, բայց երբ որ մտածեց թէ կարող է երջանիկ լինել այս նոր երիտասարդի հետ, սիրտը

սկսաւ ամենևին ապականուել և սկսաւ այնուհետև իրա մարդու մահը տեսնելու ցանկանալ: Երբ որ նա այս մըտածմունքի հետ ընտելացաւ, նկատեց որ իրան մարդը շատ առողջ է և շատ կարելի է որ իրանից էլ աւելի ապրի, ուստի մտադիր եղաւ նորան անշուշտ սպանելու: Դուք լաւ իմանումէք, իմ սիրելի՛ք, որ նորան այս գործոյ մէջ ժամանակ էր հարկաւոր այդպիսի զզուելի մըտածմունքի հետ ընտելանալու համար: Վերջապէս նա իրան նպատակին հասաւ: Աշխատ տուաւ մէկին, որպէս զի սպանէ իրան մարդուն: Վրէն ատրճանակ դարտակեցին, որով նա միայն վիրաւորուեցաւ: Որովհետև ամենեցուն յայտնի էր որ նա իրան մարդուն սիրում չ՛էր, բոլոր աշխարհը իմացաւ որ նա է նորա վրէն ատրճանակ քցիլ տուողը: Այն աղջկայ բարեկամները խորհուրդ տուեցին որ փախչի, բայց նա չ՛կամեցաւ այդ բանը վախենալով թէ մի՛ գուցէ իրա բացակայութեան ժամանակ մարդը տիրապետէ իրա հարստութեանը: Ուստի նորան բանտը դրեցին և ապա վճիռ տուեցին որ գլուխը կտրեն: Տեսնումէ՞ք արդեօ՞ք մինչ որ աստիճան կարող են հասցնել մեզ մեր կիրքերը:

ԱԳԷԼ

Սիրելի բարեկամ, այս առաւօտը մին պատկեր են ցոյց տուել ինձ. որը որ ներկայացնումէ մին թագաւոր, որին ոտների տակ մին տիկին կայ, որը որ ինչպէս երևումէ, շնորհք է խնդրում այն թշուառներին համար, որոնք ոտի վերայ կանգնած են այնտեղ շղթաները հագած, գլուխները և ոտները մերկ և չուաններ վզին քըցած: Կարողէ՞ք ա՞րդեօք դորա մեկնութիւնը ասել ինձ:

ՏԻԿԻ՛Ն

Յուլիանէն կարող է մէկնել այդ, եթէ սխալվում չեմ, այդ պատկերը պիտի ներկայացնէ Գալէս քաղաքացոց անձնանուէրութիւնը։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Անգլիայի թագաւոր Էդուարդ IIIը տիրապետեց Գալէս քաղաքին, նրան երկար ժամանակ պաշարելուց յետոյ։ Այս թագաւորը բարկացած Գալէսացոց յամառ ընդդիմակալութեան հրամայեց իրան մօտ բերել Գալէսի գլխաւոր անուոններից չորսը, որոնց կամենումէր սպանել տալ։ Կարելի է դուք կարծումէք, որ ամենայն ազնուական մարդիկ երկիւղ էին կրում որ չլինի թէ իրանց ընտրեն։ Ամենեին ոչ. իւրաքանչիւր ոք թեակոխումէր իրա արիւնը թափել հայրենիքի համար։ Նշանակուած չորս գերդաստանը գնացին Անգլիացոց թագաւորի բանակը, շապիկով, ոտները և գլուխները բաց և վզերը չուաններ քցած, բայց թագուհին, որը որ զմայլած մնաց նրանց առաքինութեան վերայ, նոցա համար շնորհ խնդրեց։ Թագաւորը դուրս անել տուաւ նրանց Գալէսից և այդ ողորմելի մարդիկը նորից օգնութիւն գտան թագուհուց և ուրիշ պալատական տիկիններից։ Անգլիացիք երկու հարիւր տարուց աւելի ունեցան իրանց իշխանութեան ներքոյ այդ քաղաքը, բայց յետոյ առնուեցաւ Գաղղիացոց ձեռքով II Հենրիկոսի թագաւորութեան ժամանակը Գիզ դուքսի ճարտարամտութեամբը, որին Բալաֆրէ էլ էին ասում։

ՇԱՐԼՕՏՏԱ

Այդ ողորմելի մարդիկը, որոնք ստիպուած էին թողնելու իրանց երկիրը և իրանց հարստութիւնը, իմ միտս են քցում մին փոքրիկ պատմութիւն, որը որ մին քանի օր սրանից առաջ կարդացել եմ, բայց անունները միտս չ'են գալիս։ Մէկ թագաւոր մին քաղաք վեր առաւ և որովհետև շատ բարկացած էր բնակիչների դէմ՝ մտադրումը դրաւ նրանց փչացնել և միայն կանանցը ներողամիտ լինել։ Ուստի հրամայեց նրանց դուրս գալ քաղաքիցը և էստուցից 'ի զատ՝ հետերը տանել իրանց ամենաթանկագին բաները։ Գուշակեցէ՛ք, օրիորդնե՛ր, թէ նրանք ի՞նչ տարած կ'լինէին իրանց հետ։

ՄԱՐԻԱՄ

Կարելի է իրանց ոսկիքը, երծաթը և գեղեցիկ զգեստները։

ՇԱՐԼՕՏՏԱ

Ո՛չ, իմ սիրելի, նրանք այնչափ խոհեմութիւն ունեցան որ այդ բանը չ'արին։ Ամենայն կնիկ իրա մարդուն շալակեց և այդպէս անցկացաւ թագաւորի առաջովը, որը որ այնպէս զմայլեցաւ այդ կանանց առաքինութեան վերայ, որ ներեց բոլոր քաղաքին։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Գալէսի պատմութիւնը իմ միտս է քցում մին ուրիշ պատմութիւն, որը որ կամենումեմ տալ ձեզ։ Դէմետրոս Պօլիօրկէտ անունով մին թագաւոր է եղել, որը որ շատ բարիք է հասցրել Աթենացոց։ Այս թագաւորը պա-

տերազմ գնալու ժամանակը, Թողեց իւր գերդաստանը Աթենացւոց մօտ: Նա յաղթուեցաւ այնտեղ և ստիպուեցաւ փախչելու: Առաջ նա մտածեց որ գայ Աթենացւոց մօտ ապաստանելու, բայց այդ ապերախտները մերժեցին նորա ընդունելու նաև ուղարկեցին նորա մօտ նորա գերդաստանը, պատասխանելով թէ նոքա Աթենքումը չեն կարող ապահով մնալ, որտեղ որ թշնամիքը կարող էին գալ և նրանց վեր առնել: Նոցա այդօրինակ վարմունքը Դեմետրոսի սիրտը վիրաւորեց: Մի քանի ժամանակից յետոյ այդ Թագաւորի բաները յաջողուելով, մեծ բանակով պաշարեց Աթենք քաղաքը: Աթենացիք համոզուած լինելով որ Դեմետրոսը ոչովի չպիտի ների, մտադիր եղան զէնքերը ձեռին մեռանել և 'ի մահ դատապարտեցին այն մարդուն, որը որ կամենալու լինի անձնատուր լինել այդ Թագաւորին, բայց նրանք չ'մտածեցին որ քաղաքումը համարեա՛ թէ ցորեն չ'կար և թէ շուտով պիտի առանց հացի մնային: Յիրաւի երկար ժամանակ սովին համբերելուց յետոյ՝ առաւել հանճարաւորները ասացին. „Բարւոք է որ Դեմետրոսը յանկարծակի մեզ սպանէ. քան թէ սովալլուկ մեռնենք, շատ կարելի էլ է որ նա գթայ մեր կանանց և երեխորց վերայ: Ուստի նոքա քաղաքի դռները բացին: Դեմետրոսը հրաման տուաւ բոլոր մարդկանցը հաւաքուել մին մեծ հրապարակի մէջ, որը որ շրջապատուած էր սուսերամերկ զինւորներով: Այն ժամանակը լսելի էր լինում քաղաքումը միայն հեծեծանքներ և ողբալի աղաղակներ: Կանայքը գրկախառնում էին իրանց ամուսինների հետ, երեխայքը իրանց հայրերի հետ և իրանց վերջին բարևը տալիս էին նրանց: Երբ որ նրանք նշանակած տեղը հասին, Դեմետրոսը մին բարձր տեղ կանգնեց և շատ սրտաշարժ

խօսքերով նրանց երեսովը տուաւ իրանց արած ապերախտութիւնը: Նա այնպէս ոգևորուած էր, որ արտասունք էր թափում նոցա հետ խօսելու ժամանակը: Նոքա լուռ կանգնած էին և սպասումէին այն վայրկեանը թէ երբ Թագաւորը հրաման կ'տայ իւր զինուորներին իրանց ըսպանելու: Նրանք շատ զարմացած մնացին, երբ որ Դեմետրոսը ասաց կամենում չ'եմ ցոյց տալ ձեզ թէ որքան մեղաւոր էք ինձ մօտ, որովհետև դուք մին թշնամի չ'էք մերժել ձեր օգնութիւնը, այլ մին Թագաւորի, որը որ ձեզ սիրում էր, և պիտի սիրէ էլի, և կամենում չ'է ձեզ վրէժխնդիր լինել: Յետ դարձէք ուրեմն ձեր տները, մինչդեռ դուք այստեղ կանգնած էիք զինուորներս իմ հրամանաւ ցորեն և հաց են տարել ձեր տները:

ՇԱՐԼՈՏՏԱ

Եթէ Աթենացիք պատուաւոր մարդիկ լինէին, անշուշտ կսկծից պիտի մեռնէին այդօրինակ բարեսիրտ Թագաւորին վշտացնելուն համար:

ՏԻԿԻՆ

Եթէ նոքա անպիտան մարդիկ էլ լինէին, Թագաւորի այսօրինակ վարմունքը կարող պիտի լինէր նրանց զգաստացնել: Միւս անգամ իմ միտս քցեցէք որ ձեզ մին լաւ պատմութիւն ասեմ, որը որ պիտի հաստատէ իմ ասածները: Մնաք բարով իմ սիրելի աղջիկերք:

ՔԱՌԱ՛Ն ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔԱՌԱ՛Ն ԵՒ ՀԻ՛ՆԳԵՐՈՐԴ ՕՐ։

ՄԱՐԻԱՄ

Սիրելի, դուք խոստացել էք մեզ մին պատմութենով սկսել այսօրուայ դասը։

ՏԻԿԻ՛Ն

Յօժարութեամբ իմ խօսքը կ՚կատարեմ։ Եղել է մին ժամանակ մին շատ տարաբաղդ հայր, որովհետև միայն մին որդի ունենալով, այդ հրէշն էլ կամեցել է իւր հօրը կեանքից զրկել։ Նա յայտնեց այդ չար մտադրութիւնը մին ծառայի, որը որ օգնական էր եղած մինչև այն օրը նորա հօր կողոպտելուն, բայց այդ սպասաւորը զարհուրած այդ օրինակ սարսափելի յանցանքից՝ գնաց ընկաւ իւր տէրոջ՝ ոտները և յայտնեց նորան, ՝իւր որդու մտադրութիւնը։ Ծերունին ծածուկ պահեց այդ սարսափելի գաղտնիքը և տեսաց իւրան որդուն թէ կամենում է նրան գիւղը տանել, որպէսզի ամուսնացնէ այնտեղ մին գեղեցիկ և հարուստ աղջկայ հետ։ Պէտք էր որ մին փոնդաւոր անտառի միջով անցկենային, որովհետև միշտ աւազակներ էին գտանվում այնտեղ։ Երբ որ անտառի մէջտեղը հասան, հայրը հրամայեց իւր որդուն ցածր իջնել ձիւցը և ասաց նորան. „Ես իմացի քո սարսափելի մտադրութիւնը, որ կամենումես ինձ սպանանել, բայց որդեա՛կ, ա՞րդեօք լաւ մտածել ես այդ գործոյ վերայ։ Եթէ քո եղեռնագործութիւնը յայտնուէր, անշուշտ

քեզ կառափնարանի (эшафотъ) վերայ կ՚սպանէին, բայց ես կամեցայ խնայել քեզ այդ վերջի չարչարանքը այստեղ բերելով։ Ազատութեամբ կարող ես այստեղ արդիւնաւորել քո մտադրութիւնը։ „Թուի՛ր, ասաց ծերունին, ձեռքը տալով մին դաշնակ, և միևնոյն ժամանակումը դէմ անելով իւր կուրծքը։ „Գո՛նեա՛ մխիթարութիւն կ՚ունենամ այս ամայի տեղումս մեռնելիս անվտանգ թողնելու քո կեանքը և քո պատիւը։ Կարելի է յիշես մին օր իմ բարերարութիւնը, խղճաս իմ վերջի բարեկամութեան վերայ և արտասուես քո հայրասպանութեան վերայ։" Այդ երիտասարդ մարդը ամաչեց իւր հօր ասած խօսքերից և անկեղծ սրտիւ ապաշխարեց և այնչափ առաքինի դառաւ, որչափ որ առաջուց եղել էր չարասիրտ։

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Մի՞թէ կարելի է որ այնպիսի չարագործ մարդ գտանուի, որ կարող լինի մտածել իւր ծնողներին սպանելու։

ՏԻԿԻ՛Ն

Մին մեծ օրէնսդէտ այնպէս էր մտածում, ինչպէս որ դու. նա պատիժ նշանակեց ամենայն տեսակ յանցանքների համար, բայց չ՚կամեցաւ ոչինչ պատիժ նշանակել հայրասպաններին համար. ըստ որում չէր կարծում թէ այդպիսի չարութիւն անող պիտի գտանուի աշխարհումս։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Ի՞նչ կ՚նշանակէ հայրասպան բառը, սիրելի։

ՏԻԿԻ՛Ն

Հայրասպան են ասում նրանց՝ որոնք սպանում են

իրանց հօրը, ինքնասպան են անում նրանց՝ որոնք սպա-
նումեն իրանք իրանց և Աստուածասպան՝ զօրօրինակ
հրեաները, որոնք սպանել տուեցին մեր Տէրին Յիսու-
սին Քրիստոսին։

ԱԴԷԼ

Մի՛թէ մի մեծ մեղք է ինքնասպանութիւնը։

ՏԻԿԻՆ

Անշուշտ, նոքա որոնք որ իրանց սպանումեն, յաւիտե-
նական դատապարտութեան ներքոյ են գտնվում, եթէ
միայն խելացնոր չլինին, ինչպէս որ պատահումէ շատ
անգամ։

ՄԱՏԻԼԴԱ

Ես լսել եմ որ միայն քաջասիրտ մարդիկն են իրանց
սպանում։

ՏԻԿԻՆ

Ընդ հակառակը, թուլամորթ մարդիկն են իրանց ըս-
պանում, որոնք այնչափ քաջասիրտ չեն այս աշխարհի
նեղութեանց համբերելու, և նախամեծար են համարում
մահուամբ ազատել իրանց կեանքը այս աշխարհի փոր-
ձութիւններից։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ես մի արկղ գրեանք եմ ստացել, և նորանցից
մէկին մէջ մի մարդու զարմանալի պատմութիւն եմ կար-
դացել, որը որ կամենումէ, էլել իրան սպանել։ Յուլիոս

Կեսարը մի քաղաք էր պաշարել, որին մէջ երկու թըշ-
նամի ունէր, որոնք շատ էին աշխատել նրան վնաս հասց-
նելու։ Այս թշնամիներից մինն, որը որ վախումէր յաղ-
թող Յուլիոսի բարկութենից, մաքումը դրաւ իրան թու-
նաւորելու, իսկ միւսը մտածեց թէ աւելի լաւ կլինի
գնալ Կեսարի մօտ, բաստրում ասումէր նա ինքը իրան
այսպէս. „Գուցէ նա ինձ կներէ և անկարելի է որ մա-
հից աւելի մի վատ բան պատահէ ինձ հետ։ Նոյնքա-
ջարութեամբ կդիմանամ ինչ եղանակաւ որ մեռնելու
էլ լինիմ, բայց պիտի անեմ այն, ինչ որ մարդուս պա-
տիւը թոյլ է տալիս։" Այս երկու մարդիկը այդպէս
տարբեր մտադրութիւններ անելուց յետոյ՝ առաջինն խնդ-
րեց մի բժշկից մէկ տեսակ դեղ թոյն որպէսզի առանց
երկար չարչարվելու մեռնի։ Երկրորդը քաղաքիցը դուրս
գնաց և ասաց Կեսարին թէ իրան անձն նորան է յանձ-
նում։ Յուլիոսը, որը որ մեծահոգի էր և վեհանձն,
գթացաւ այդ մարդու վստահութեան վերայ և ասաց.
„Շատ շնորհակալ եմ որ դու իմ մասին այդպէս լաւ
համարումն ես ունեցել, հաւատալով թէ կարող եմ քեզ
ներել, աներկիւղ կարող ես վստահ մնալ իմ առ քեզ ու-
նեցած յարգանաց և բարեբարութեանց վերայ։" Այս
մարդը փութացաւ գնալ քաղաքը իրան բարեկամի կեան-
քը փրկելու համար, եթէ տակաւին ժամանակ է մնա-
ցել։ Տեսաւ որ նա դառնաթափ անկողնոյ մէջ պառկած
էր, որպէս թէ մերձ 'ի մահ։ Այդ մարդը շատ զարմա-
ցաւ իմանալով Կեսարի մեծահոգութիւնը և շատ բար-
ջացաւ իրան թունաւորելուն համար։ Այս բարեկամը
խորհուրդ տուաւ նրան որ ուղարկէ բժշկի հետից անդ-
դամ խնդրելու համար, բայց հիւանդը չկամեցաւ այդ
բանը անել և ասաց թէ շատ ծանր հիւանդ է և միայն

մին քառորդ ժամ է մնում իրան ապրելու. այսուամենայ-
նիւ իրա բարեկամի սիրտը շահելու համար՝ համաձայ-
նեցաւ: Երբ որ բժիշկը եկաւ, սկսեց ծիծաղել և ասել
երկու բարեկամներին. „Զարմացէ՛ք մարդուս երևակա-
յութեան զօրութեան վերայ, մօտալուտ մահուան վերայ
ունեցած գաղափարը հոգեվարքութեան մէջ է քցել այս
պարոնին: Որովհետև ես Կեսարի վեհանձնութիւնը ի-
մանումէի, իմ բոլոր հարստութիւնս գրաւ կ՚դայի որ
նա անշուշտ ձեզ երկուսին էլ պիտի ներէ և էսօր հա-
մար, փոխանակ Թոյն տալու՝ տեղահան եմ տուել քեզ,
որուն յատկութիւնն է զօրացնել երկիւղի դէմ: Վ՚երկա՛ց
ուրեմն, որովհետև դու միայն մտքով ես հիւանդ:„ Յի-
բալի այս մարդը, որ իմացաւ Թէ Թոյն չէ եղել ընդու-
նածը և հետեւողաբար կեանքը ոչինչ վտանգի ենթարկ-
ուած չէ, իսկոյն առողջացաւ և տեղից վերկացաւ:
Կեսարը իմանալով այս պատմութիւնը, չկարողացաւ
զսպել զինքը ծիծաղելուց և վարձահատոյց եղաւ այն
բժշկին, որը որ այդպէս ճարտարութեամբ ապրեցրել էր
նորա կեանքը:

ՏԻԿԻՆ

Դուք տեսնումէք որ այն մարդը, որը որ կամենումէր
իրան Թունաւորել, երեւումէր Թէ մահից երկիւղ չէր
կրում, որովհետև կամու էր ընդունել Թոյնը, բայց այ-
սուամենայնիւ նա այնպէս վախումէր մահից, որ իրօք
հիւանդացել էր: Բայց այդ մասին բաւական է, ինչ որ
խօսեցինք, սիրելի օրիորդներ: Ես ձեզ առաջուց ասում
եմ որ չորս ժամին մին շատ անսովոր բան պիտի երևի
ձեզ: Յանկարծ մԹնելու է, և էլի մին քառորդ ժամից
յետոյ լուսանալու է:

ԵԻԳԵՆԻԱ

Ինչպէ՞ս այդ բանը կարող է պատահել, սիրելի:

ՏԻԿԻՆ

Ուրիշ ժամանակ կ՚մեկնեմ ձեզ այդ, այժմ Նորման-
դացւոց վերայ մին խօսք ասենք, որոնք մեր երկրի պատ-
մութեան մէջ նշանաւոր գործքեր են արած: Յուլիանէ՛,
ստվորացրու այս աղջկերանց, ինչ որ դու այդ մասին ի-
մանում ես:

ՅՈՒԼԻԱՆԷ

Այդ երկիրը, որը որ Նորմանդիա անուամբ է յայտ-
նի, ուրիշ ժամանակ Նուստրիա էին ասում. Հիւսիսի
կողմից եկած մարդիկը տուին նորան այդ անունը, որը որ
այսօր կրումէ իրա վերայ, որովհետև Նորմանդ ասած
բառը դուրս է գալիս երկու բառից նրանց լեզվով: Նոր
(nord. հիւսիս) ման (man. մարդ) այսինքն հիւսիսային
մարդիկ: Այդ մարդիկը, որոնցից մեծ մասը Դանիացիք
էին, կամ նոքա, որոնք որ Թագաւորութեան շրջակայ-
քումը բնակվող ժողովուրդներ էին, չտեղաւորվելով իրանց
երկրումը, որտեղ որ մէկ կողմիցն էլ սովորականից առա-
ւել ցուրտ էր լինում, մտադիր եղան մին ուրիշ երկրի
մէջ բնակութիւն հաստատել իրանց համար: Ուստի նո-
քա նաւերի մէջ մտան, և եկան բոլոր մերձակայ Թագա-
ւորութիւնները, որտեղ նրանք զարհուրելի աւերակներ
արեցին, մարդկանց սպանեցին, տանելով իրանց հետ կա-
նայքը և անասունները և այրելով տները և ապակա-
նելով իրանց անցկացած երկիրները: Երբ որ նրանք մին
երկիր էին աւերում մին մեծ գումար փող էին պահան-

ջում այն երկրից դուրս գալու համար, բայց հայե-
թէ հարուստ կողոպուտներով իրանց երկիրն էին վերա-
դառնում, ցանկութիւն էին քցում իրանց ընկերների սըր-
տումը, որպէսզի նրանք էլ գնան և իրանց պէս հարըս-
տանան, Գաղիան և Անգլիան շատ նեղութիւններ կրե-
լուց յետոյ Նորմանդացւոց կողմանէ, մանաւանդ Գաղ-
ղիան վերջին թշուառութեան հասաւ նրանց ձեռից, ո-
րովհետև սոքա պաշարեցին Փարիզ քաղաքը: Վերջա-
պէս Ռոլլոն անունով նրանց առաջնորդներից մէկը՝ ըն-
դունելով Քրիստոնէական հաւատը, խնդրեց Ֆրանսիա-
յի թագաւորից Նուստրիան, որը որ ամենեին քարու-
քանդ և համարեա՛ թէ անապատ էր դառած, և խոս-
տացաւ թագաւորին որ եթէ կամենալու լինի իրան այդ
երկրի վերայ դուքս շինել, և եթէ տալու լինի իրան աղ-
ջիկը 'ի կնութեան՝ ինքն էլ իրան ընկերակիցներին կ'ար-
գելէ որ էլ արշաւանք չանեն Փրանսիայի վերայ, որով-
հետև սովորաբար Սէնա գետովն էին այնտեղ մտնում,
որը որ բերանը Նուստրիայի մէջ ունի: Պէտք եղաւ
թագաւորին կատարել նորա խնդրուածքը և սա խոստա-
ցաւ պարտատաշխի անել այդ դքսութիւնը, այսինքն՝
հրապարակաւ ճանաչել որ թագաւորն է պարգևել այդ
դքսութիւնը և ամենայն անգամ, երբ որ Նորմանդիայի
դուքս դառնալու լինէր, պէտք էր որ այդ պարգևը նորոգէր:

ՄԱՏԻԼԴԱ

Սիրելի բարեկամ, կարդացել չեմ արդեօք մին տեղ
որ Նորմանդիայի դքսերից մինն Անգլիայի վերայ
թագաւոր է դառել:

ՏԻԿԻՆ

Այո՛, Յուլիանէն կ'ասէ ձեզ այդ պատմութիւնը:

ՅՈՒԼԻԱՆԷ

Անգլիայի թագաւորներից մինն առանց զաւակի մեռ-
նելով, Նորմանդիայի դուքս Գուլիլամն իրան ժառանգ
նշանակեց, որին որ Բաստարդ էլ էին ասում և որը որ
այն ժամանակից յետոյ Գուլիլամ աշխարհակալ անուա-
նեցաւ, Որովհետև այս թագաւորը շատ իշխան ազգա-
կաններ ունէր, որոնք որ աշխատումէին այդ թագը ձեռք
բցել, Գուլիլամը չ'շտապեց որ գայ նրան ընդունի: Նա
թոյլ տուաւ որ այդ իշխանները միմեանց հետ պատե-
րազմեն և երբ որ նրանք սկարացան, Գուլիլամը մին
լաւ բանակով եկաւ Անգլիան և նորան տէր դառաւ:
Ուստի Նորմանդիան Անգլիայի մին նահանգը դառաւ
և Անգլիայի թագաւորներն այդ նահանգի պատճառաւ
Ֆրանսիայի թագաւորների հպատակ կամ վասալներն
(ПАМѢЩИКЪ) էին համարվում, որոնք իրանց տէրերին պէս
զօրեղ էին և նրանց շատ նեղացնում էին: Երբ որ Անգ-
ղիայի թագաւորները Ֆրանսիայի թագաւորի տուած
խոստմունքին հակառակ մին բան էին անում իրանց
հարկը հատուցանելու ժամանակ՝ Ֆրանսիայի թագաւո-
րը իրաւունք ունէր Անգլիայի թագաւորներին իրան
դատարանը կանչելու և նրանց այնտեղ դատելու, և եթէ
նրանք մերժելու լինէին այնտեղ գալու՝ նա կարող էր
տիրապետել այն կալուածներին, որոնք ունէին նոքա
Ֆրանսիայումը: Եւ հենց այդ էր պատճառը որ Նոր-
մանդիան խլուեցաւ Անգլիաների ձեռից և միաւորեցաւ
Ֆրանսիայի հետ Անգլիացւոց մին թագաւորի ժամա-
նակ՝ որ Յ ո վ հ ա ն ն է ս ա ռ ա ն ց ե ր կ ր ի է ր ա ս վ ու մ:

ՆՒԳԵ՛ՆԻԱ

Տիկի՛ն, ես կարծումէի թէ դուք մեզանով ծաղր էիք անում, երբ որ ասումէիք թէ յանկարծ մթնելու է: Ինչի այդպէս վաղ է մթնում այսօր: Ո՛վ էր յայտնել ձեզ այդ համբաւը:

ՏԻԿԻ՛Ն

Այդ մութը պատճառեցաւ արեգակի խաւարմամբը և աստղաբաշխները յայտնել են մեզ որ այսօր ժամը չորսին պիտի այդ խաւարումն պատահէր:

ՄԱՏԻԼԴԱ

Ես չ'եմ իմանում ի՛նչ կ'նշանակէ խաւարումն և աստղաբաշխ ասած բառերը:

ՏԻԿԻ՛Ն

Յուլիա՛նէ, մեկնի՛ր այս աղջիկերանց ի՛նչ է խաւարումն:

ՅՈՒԼԻԱ՛ՆԷ

Արեգակի խաւարումն պատահումէ այն ամենայն անգամ, երբ որ լուսնեակը անց է կենում երկրի և այդ աստղի միջով. իսկ լուսնեակի խաւարումն պատահումէ այն ժամանակ, երբ որ երկիրը արեգակի և այդ աստղի մէջտեղ լինելով ծածկումէ նրան իւրան ստուերովը: Ուրիշ ժամանակ չ'էին իմանում խաւարման պատճառը և մեր նախնիքը կարծումէին թէ այդ մին մեծ անբաղդութիւն է գուշակում և չ'էին կամենում ձեռնամուխ լինել որ և

իցէ բանի խաւարման ժամանակը: Մի՛ն օր, հռչակաւոր Պերիկլէսը պատրաստուել էր նաւը մտնելու, որպէսզի գնայ պատերազմէ: Հազիւ թէ ոտը դրաւ նաւի մէջ, արեգակի խաւարումն պատահեց, նորա նաւավարը կամենում չ'էր գնալ, որովհետև կարծումէր թէ անվրէպ պիտի կորչի: Պերիկլէսը, որը որ իմաստուն մարդ էր՝ չըվախեց և ասաց իրան նաւապետին որ այդ մին սովորական բան է և թէ լուսինի արեգակի առաջը կտրելով, արգելումէ նրան որ տեսնէ: Նաւապետը այս բանից ոչինչ չ'հասկացաւ: Պերիկլէսը, որը որ համբերութենից դուրս եկաւ՝ իրան վերարկուն քցեց նրա գլխին և ասաց. „Արդեօ՞ք ինձ տեսնումես:„ — Ես չ'եմ կարող քեզ տեսնել, պատասխանեց միւսը, որովհետև քո վերարկուն, որը որ գտնվումէ քո և իմ աչքերի մէջ, արգելումէ ինձ տեսնել:„ — Տգէ՛տ, ասաց Պերիկլէսը հենց այդ է պատճառը որ դու տեսնում չ'ես արեգակը, որովհետև լուսնեակը քո աչքերի և արեգակի միջումն է, ինչպէս իմ վերարկուն իմ և քո աչքերի մէջտեղումն է գտնվում:

ՏԻԿԻ՛Ն

Հասկացի՛ր, այժմ, սիրելի Նւգենիա՛:

ՆՒԳԵ՛ՆԻԱ

Ո՛չ, իմ սիրելի բարեկամ, պատճառը որ չ'եմ հասկանում թէ ի՛նչպէս լուսինը կարող է արեգակի առաջին գտնուել և թէ ի՛նչպէս կարող են ճշտութեամբ գուշակել այն վայրկեանը, երբ որ նա այնտեղ պիտի գտնուի:

ՏԻԿԻ՛Ն

Արեգակը առաւել բարձր լինելով քան թէ լուսինը և

լուսնեակը ընթանալով՝ զարմանալի բան չէ եթէ նրանք միմեանց պատահեն: Արդ՝ ճշտիւ իմանումեն այն ճանապարհը, որով ընթանումէ լուսինը, և բաց 'ի դրանից իմանումեն նոյնպէս թէ երբէք լուսնեակը իրան ճանապարհից խոտորվում չէ. ուրեմն կարող են գուշակել այն ամեն խաւարումը, որ պիտի պատահէ, և մարդիկ, որոնք ուսանումեն այդ գիտութիւնը, աստղաբաշխ են անուանվում:

ՇԱՐԼՈՏՏԷ

Բայց ի՞նչպէս հնարեցին այդ գիտութիւնը, սիրելի:

ՏԻԿԻՆ

Հարկաւորութիւնը, որը որ արուեստների մայրն է, ծնեց առ. հասարակ ամենայն գիտութիւնները և արուեստները, բայց աստղաբաշխութիւնը դուրս եկաւ պարապութենից: Դուք լաւ պիտի ձեր մտքումը պահէք, որ նախնի մարդիկը հովիւներ են էլել: Որովհետև շատ ջերմ երկրում էին բնակվում նրանք, գիշերը դաշտումն էին անցկացնում շատ անգամ, որտեղ նոքա իրանց պարապութեան ժամանակ զուարճանումէին աստղերի վրայ մտիկ անելով: Նրանց վրայ շատ մտիկ անելով, հովիւները նկատեցին թէ այս ինչ ժամում, այս ինչ աստղեր են երևում և տեսնումէին նմանապէս որ աստղերը կանոնաւոր եղանակաւ առաջ էին գնում, և նրանք կարողացան առաջուց իմանալ այն ճանապարհը, որով ընթանումէին, և այն տեղերը, որտեղ որ նրանք պիտի մընային: Ուստի այս նկատողութիւններից իրանց համար գաղափար կազմեցին, և ճարտար մարդիկը քննութեան

տակ քցելով այդ նկատողութիւնները, նրանցից յօրինեցին գիտութիւն, որը որ փորձառութեան վերայ էր հիմնուած:

ՅՈՒԼԻԱՆԷ

Թո՞յլ տուեցէ՛ք ձեզ մին հարցմունք անել, որովհետև նախնի մարդիկը իմանումէին աստղաբաշխութիւնը, ի՞նչի Պերիկլէսի ժամանակը սարսափումէին խաւարմունքից:

ՏԻԿԻՆ

Այդ գիտութիւնը երկար ժամանակ Եգիպտոսումը պահպանուեցաւ, բայց երբէք չ'կատարելագործուեց ո՛չ Յունաստանումը և ո՛չ էլ Հռոմայեցւոց մօտ: Հանճարաւոր մարդիկը իմանումէին որ զուր տեղ էին վախում մարդիկ այդ բնական հրաշքներիցը, բայց փոխանակ այդ սնոտիա՛պաշտութեան առաջը առնելու՝ առաւել ևս նրան կենդանութիւն էին տալիս, որովհետև էատուրով նրանք իրանց ցանկացածը անել էին տալիս ժողովրդին: Սիրելի Եւգենիա, կրկնի՛ր քո դասը:

ԵՒԳԵՆԻԱ

Դաւիթը շատ տարիներ էլ թագաւորեց. բայց իրա ծերութեան ժամանակում յաղթուեցաւ փառասիրութենից: Իրա ծերութեան վերջի օրերումը նա կամեցաւ իմանալ իրա զօրութիւնը իրա հպատակների աշխարհագիրը ցանկանալով իմանալ, հակառակ ծերերի տուած խորհուրդներին: Բայց Տէրը շուտով նրան ցոյց տուաւ թէ որքան զուր է թագաւորութեան զօրութեան վերայ վստահութիւն ունենալը: Նա ուղարկեց Դաւթի մօտ

Գատ մարգարէին, որը որ նրան ասաց. „Դու պիտի երեք պատուհաս ընտրես, կամ եօթն տարուայ սով, կամ երեք ամսուայ պատերազմ կամ թէ երեք օրուայ մահ-տարաժամ:„ Դաւիթը ժանտախտը ընտրեց, որը որ երեք օրուայ մէջ եօթանասուն հազար մարդ կոտորեց: Թագաւորը այս անբաղդութենից սարսափուած՝ խոնարհեցաւ Տիրոջ առաջ և ասաց նրան. „Ինչի՞ սպանում ես այդ ոչխարներին. որոնք ամենևին անմեղ են. միայն ես եմ մեղաւորը, սպանի՛ր ինձ, Տէ՛ր, մի՛ խնայի՛ր ո՛չ ինձ և ո՛չ էլ իմ գերդաստանին, միայն գթացի՛ր իմ ողորմելի ժողովրդիս վերայ:„ Աստուծոյ բարկութիւնը հանդարտուեցաւ Դաւթի այդ օրինակ արած աղօթքի վերայ և հարուածը դադարեց: Դաւիթը տեսնելով որ իրան վախճանը կամաց կամաց մօտենում է, մեռնելուց առաջ թագաւոր օծել տուաւ Սողոմոնին:

ՏԻԿԻՆ

Մարիա՛մ, շարունակի՛ր Սողոմոնի պատմութիւնը:

ՄԱՐԻԱՄ

Սողոմոնը շատ երիտասարդ էր, երբ որ թագաւոր նստեց: Մին գիշեր Տէրը նրան երևաց և ասաց. „Ինձանից մին բան խնդրի՛ր և ես քեզ կ՚շնորհեմ:„ Սողոմոնը տեսնելով իրա երիտասարդութիւնը, խնդրեց Տէրից իմաստութիւն, ինչպէս որ վայել է թագաւորին և որը որ իրան հարկաւոր է ժողովուրդը լաւ կառավարելու համար: Տէրը հաւանեց այս խնդրքին և ասաց. „Որովհետև իմաստութիւնը դու նախամեծար համարեցիր, ո՛չ թէ միայն բոլոր թագաւորներից իմաստունն կ՚լինիս, այլ

և հարուստը և զօրեղը:„ Սողոմոնը այս տեսիլը տեսնելուց յետոյ՝ առիթ ունեցաւ մին զարմանալի վէճ դատելու ժամանակ իրան իմաստութիւնը ցոյց տալու: Երկու կնիկ մօտացան մին օր նրան և նորանցից մինն ասաց. Թագաւո՛ր, ես այդ կնկան հետ բնակվում եմ միևնոյն սենեակի մէջ և մենք ամէն մեկս մի մի փոքրիկ որդի ունէինք: Այդ կնիկը իրան որդին ճնշելով իւր անկողնոյ մէջ՝ խեղդեց նրան. երբ որ տեսաւ որ իրան որդին մեռած է, ծածուկ իմ կենդանի որդիս վերառաւ և իրան մեռած որդին ինձ մօտ դրաւ: Ես առաւօտը շատ տխրեցի, բայց մտադրութեամբ մտիկ անելով մեռած երեխայի վերայ, ճանաչեցի որ դա իմ որդիս չ՚է, այլ այդ կնկանն է:„

—Տէ՛ր, ասաց միւս կնիկը, այս չար կնիկը ձեզ խաբում է, այդ մեռածն է նրա որդին և կենդանի որդին է իմը:

Սողոմոնը տեսնելով որ նրանք միմեանց հետ համաձայնվում չ՚են, ասաց իրա պահապանին. „Այդ կենդանի երեխային երկու մասն կտրի՛ր, մին մասը մեկին և միւս կէսն էլ երկրորդ կնկանն տուր:„ Առաջի խօսող կնիկը, որը որ կենդանի երեխայի հարազատ մայրն էր, սարսափեց այս խօսքերը լսելիս և ընկնելով Սողոմոնի ոտները, ասաց նրան. „Արքա՛յ, երեխայն ողջ այդ կնկանը տուեցէ՛ք, առաւել լաւ է որ ես նրան կորցնեմ, քան թէ իմ սեփհական աչքերովը տեսնեմ նորա մահը:„ Իսկ միւս կինը համաձայնեցաւ որ երեխայն երկու մասն կտրուի: Այն ժամանակը Սողոմոնը ասաց: „Կենդանի երեխին տո՛ւր առաջինին, որովհետև նրա կարեկցութենից ճանաչեցի որ նա է երեխի հարազատ մայրը:

ՄԱՏԻԼԴԱ

Մենք պիտի խոստովանենք որ Սողոմոն մեծ մեծ

ճարտարութիւն ցոյց տուաւ այդ հանդամանքումը։ Իսկ ես ամենևին մտքովս անց չ'էի կացնել մին այդպիսի խորամանկութիւն։

ՏԻԿԻՆ

Այդ զարմանալի բան չ'է, որովհետև Աստուած քեզ այնքան իմաստութիւն չ'է տուել։ Բայց արդէն ժամանակը անց է կենում, մնաք խաղաղութեամբ։

ՔՍԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔՍԱՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

ՏԻԿԻՆ

Ես ձեզ մին համբաւ ունիմ տալու, որը. որ կարծեմ ձեզ պիտի տխրացնէ։ Կամենում եմ շուտով ձեզ թողնել, պատճառը որ հարկադրուած եմ մին անհրաժեշտ ճանապարհորդութիւն անելու։

ԱՄԵՆՔԸ Ի ՄԻԱՍԻՆ

Բայց դուք էլի յետ կ'դառնաք, սիրելի բարեկամ։

ՏԻԿԻՆ

Յուսամ, բայց ձեզ յայտնի է առածը որ ասում է „խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ“ (l'homme propose et Dieu dispose)

ՅՈՒԼԻԱՆԷ

Միայն վստահ կացէք այս բանումը, տիկին, այսինքն՝ մենք ձեզ թողնելու չ'ենք, մինչև որ հրապարակաւ խոստանալու չ'լինիք շարունակելու ձեր դասերը, որոնք միանգամայն մեր մտքերը զարդարում էին և զբաղեցնում։

ՏԻԿԻՆ

Եթէ այդ է ձեր ցանկութիւնը, սիրելի երեխայք յօժարութեամբ կ'կատարեմ, եթէ միայն այն յաղթելի ար-

գելքներ հանդիպելու չլինին։ Ես իմ գալու ժամանակը ճշտիւ չեմ իմանում և չեմ կարող նշանակել։ Բայց շատախօսութեան մէջ ենք անցկացնում մեր ժամանակը։ Ողջ՛ն, սիրելի՛ս, գտար այնտեղից, որտեղ որ այն օրը կանգնեցինք։

ԸԳԷԼ

Սողոմոնը տեսնելով վիճքը հանգիստ իրա թագաւորութեան մէջ, մտադիր եղաւ որ Տիրոջ համար անպատճառ մին տաճար կառուցանէ։ Նա եղևնափայտ (кедръ) խնդրեց Տիւրոսի թագաւոր Քիրամիցը, որը որ շատ թանկագին փայտ է, բանացրուց տաճարի վերայ, որը որ մասամբ էլ ոսկով պատել տուաւ։ Նրա մէջ գտնվում էր մին ոսկի խորան, տասը աշտանակ, և սպասների մեծ մասը թանկագին էր և շատ ճարտարութեամբ շինուած։ Երբ որ այս հոյակապ շինութիւնը վերջացաւ, Սողոմոնը փոխադրեց այնտեղ ուխտի տապանակը, որոյ մէջ գըտանվումէին քարեղէն տախտակները, որոյ վերայ Աստուած գծագրել էր իրա օրէնքները։ Սորանից յետոյ Սողոմոն տաճարը օծելու հանդէսի ժամանակ՝ շատ զոհագործութիւններ արաւ և խնդրեց Տէրից որպէսզի կամենայ այնտեղ բնակել, այսինքն մասնաւոր եղանակաւ բնակի այն տան մէջ, որը որ նրա համար էր շինել, խոստովանելով այսուամենայնիւ թէ արժանի չէ նրան այն տաճարը, որուն երկինքն էլ չէն բաւական։ Սողոմոնը աղաչեց Տէրին որ լսէ այն տաճարի մէջ աղօթքների խնդրուածքը։ Աստուած կամենալով ցոյց տալ թէ լսումէ նրա աղօթքը, յանկարծ տաճարը ամպով լցրուց, որը որ արգելեց քահանաներին կատարել առժամանակ իրանց

պաշտօնը։ Սողոմոնը ժողովուրդը օրհնելուց յետոյ՝ առանձնացաւ իրա տունը։ Միևնոյն գիշերը Տէրը երևաց նրան և ասաց. թէ լսել է նրա աղաչանքը, և հրամայեց որ հաւատարիմ մնայ իրա պատուիրանքների մէջ։ Սողոմոն մին պալատ իրա համար շինեց և միւսն էլ կնկան համար և սկսաւ ծաղկացնել վաճառականութիւնը իրա թագաւորութեան մէջ, և այնպէս յաջողութիւն ունեցաւ այդ բանումը, որ երծաթը Երուսաղէմի մէջ այնպէս հասարակ բան էր համարվում, ինչպէս քարերը։ Մինչև անգամ Սաբայի թագուհին թողեց իրա թագաւորութիւնը և եկաւ այս մեծ թագաւորի իմաստութիւնները լսելու համար։ Բայց Սողոմոնը իրա ծերութեան ժամանակ առաքինութեան ճանապարհից խոտորուեց։ Այն ժամանակը Տէրը նրան երեսից թողեց և միւսանգամ երազումը երևաց և կանխաւ իմացրուց թագաւորութեան բաժանումը, յայտնի արաւ նրան թէ տասը ցեղ Յերոբովամի մասը պիտի լինի, մինչ դեռ իրա որդին Յուդայի և Բենեամինի ցեղերին ժառանգ պիտի դառնայ։ Այս միջոցումը Սողոմոնը մեռաւ յիսուն և ութ տարեկան հասակումը և թաղուեցաւ Դաւթի քաղաքումը քառասուն տարի թագաւորելուց յետոյ։ Ասդ՝ Սողոմոնը ոչ թէ միայն ծառերի և բոյսերի վերայ էր գրել, այլ և ամենայն անասունների վերայ։ Նա յօրինել է նոյնպէս մին իմաստուն խօսքերի հաւաքումն։

ՃԱՐՂՕՏՏԷ

Ես Հ ա զ ա ր ո ւ մ ի ն գ ի շ ե ր ի մէջ կարդացել եմ որ Արաբները և Թուրքերը մեծ յարգանք են ցոյց տալիս Սողոմոնին, նրանք ասում են թէ նա իշխում էր տարրե-

դէն արարածների վերայ, և ով որ ունենար նրա մատանին նոյնպէս կարող էր իշխանութիւն անել նրանց վերայ։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Ի՞նչ կ'նշանակէ տարրեղէն արարած, սիրելի բարեկամ։

ՏԻԿԻ՛Ն

Դոքա այն արարածներն են, որոնք որ տարրերի մէջ են բնակվում, և որոնց Արաբները հաւատումեն։ Ես ձեզ ասացի թէ մեր նախնիքը միայն չորս տարրերք են ճանաչել. հուր, ջուր, օդ և հող։ Ուստի նրանք կարծում են թէ օդը լցուած է արարածներով, որոնց Սիլֆ (Sylphes) են ասում, այսինքն՝ օդոյ հոգիներ։ Գտանվումեն նոյնպէս երկրի մէջ, որոնց Գարիկ (Gnames) են ասում այսինքն հողի ոգիք։ Կրակն էլ ունի նոյնպէս բնակիչներ, որոնց Սալամանդր (Salamandres) են ասում, այսինքն հրոյ ճիւաղներ։ Իսկ որոնք որ ջրի մէջ են գտանվում, նրանց Նիմֆ (Nymphes) են ասում, այսինքն ջաւերժահարսունք։ Արաբացիք հաստատումեն թէ դոքա մարդկանցից գերազանց էակներ են, որոնց Աստուած թոյլտրել է անել մեծամեծ բարութիւններ և վնասներ, բայց միևնոյն ժամանակումը նրանք ասում են թէ աշխարհիս իմաստունները իշխանութիւն ունին այդ ոգիների վերայ, ինչպէս որ մին ժամանակ Սողոմոն ունէր, և թէ նրանք պարտաւորացնումեն այդ ոգիներին իրանց հնազանդելու առաւել ճշտութեամբ քան ստրուկները իրանց տէրերին։ Վերջապէս այդ մտացածին ոգիքը հընազանդումէին ո՛չ միայն այդ իմաստնոցը, այլ և նրանց որ յուռութք (թիլիսիմ) էին կրում իրանց վերայ։

ԱԴԷԼ

Ի՞նչ կ'նշանակէ յուռութք, սիրելի, խնդրեմ ասէք։

ՏԻԿԻ՛Ն

Դա կամ մին մատանի է կամ մին մետաղի կտոր, որուն վերայ այդ իմաստուններից մէկն մին քանի տառեր է գծագրած։

ՄԱՐԻԱՄ

Ինչ որ այդ արարածների և յուռութքների մասին ասացինք, ճշմարի՞տ է արդեօք։

ՏԻԿԻ՛Ն

Ինչպէս դիցաբանութիւնների վէպքերը, որոնք ձեզ պատմում եմ։

ԵՒԳԵ՛ՆԻԱ

Դուք ասացիք թէ թուրքերը կարծում են թէ Աստուած թոյլատրել է տարրեղէն արարածներին անել՝ մեծամեծ բարիք և վնասներ մարդկանց, միթէ՞ թուրքերը հաւատում են Աստուծոյ։ Ես կարծումէի որ նրանք շատ չարագործ մարդիկ էին, կուռքեր պաշտող։

ՏԻԿԻ՛Ն

Դու սխալվումես թուրքերը ամենևին կռապաշտ չ'են, նրանք էլ մեզ պէս պաշտումեն Աստուծոյ, բայց անհաւատարիմ են, որովհետև ընդունում չ'են Յիսուսի Քրիստոսի աստուածութիւնը։ Նրանք ասում են թէ դա մին մարգարէ է եղել որին որ Աստուած ուղարկել է

Քրիստոնէից համար ինչպէս Մովսէսը Իսրայելացւոց համար և Մահմէդն էլ իրանց համար։ Բացի դորանից Թուրքերը չարագործ չեն, ընդհակառակը բարի սիրտ ունին։

ՆԻԳԵ՛ՆԻՐ

Սիրելի բարեկամ, կ՚կամենա՞ք արդեօք ասել ով է՞ էլել Մահմէդը։

ՏԻԿԻ՛Ն

Մահմէտը մին վաճառական տղայ էր, որը որ պսակուեցաւ իրա տիրոջ այրի կնկան հետ։ Նա շատ խելքի տէր էր, քաջասիրտ և տարապայման պատուասէր։ Արովհետև նորա տոհմական վիճակը տխրում էր նրան որ մին աննշան կեանք վարի, մտքումը դրաւ ինքը իրան նշանաւոր հանդիսացնել մին նոր կրօն յօրինելով։ Այդ բանը յաջողութիւն ունեցաւ, մանաւանդ էնդուր որ այդ կողմումը բնակվող Քրիստոնեայքը տգէտ էին և գտանւումէին այնտեղ շատ Հրէայք և կռապաշտներ, որոնք նոյնպէս լուսաւորուած չէին։ Մահմէտը Քրիստոնեայքը իրան կողմը քցելու համար, շատ պատւով խօսեց Քրիստոսից, որին համարումէր մին մարգարէ, որուն արժան էր յարգել և պատուել։ Հրէից չկատաղեցնելու համար՝ նրանց ծեսերից շատերը պահեց և ասաց թէ Աստուած կայծակների և փայլատակների միջով օրէնքներ է տուել Մովսէսին, որանով կամեցել է Աստուած որ առ երկիւղի հնազանդեն իրան, բայց տեսնելով որ այս միջոցը չյաջողուեց՝ մին ուրիշ մարգարէ ուղարկեց որպէսզի նոցա իրան քաղցրութեամբ հնազանդեցնէ և այս եղանակին էլ անօգուտ դուրս գալով, իրան Մահմետին է ուղարկել որպէսզի սրոյ ուժով ստիպէ Աստծոյ

հաւատարիմ մնալու։ Այդ բանը շատ մարդիկ ժողովել տուաւ իրա չորս կողմը, որոնք մտածեցին թէ մեծամեծ բաղտաւորութեանց պիտի հանդիպին նրա կրօնին հետևելով։ Բայց թէ Մահմէտի կրօնը որ այդչափ զօրացաւ, պատճառը այն էր որ նա արգելեց իրան հետևողներին որ բնաւ չուսանեն կրօն և գիտութիւն, նա ըղձումէր որ իրա ազանդը հաստատ կ՚մնայ տգիտութեան օգնութեամբ։ Նրանց բոլոր օրէնքները սահմանափակվումէր Ղօրանի մէջ, որը որ Մահմէտի յօրինածն է։ Ահա՛ այսպէս Մահմէդ՝ մարգարէական վիճակից թագաւորական վիճակի մէջ անցաւ և թողեց իրա գահը իւր յաջորդներին։ Նրա գերեզմանը գտանվումէ Մեքքէյումը և մեծ յարգանք ունի Ասիայի ժողովրդոց մէջ, որոնք Մահմետական են։

ՅՈՒԼԻ՛ԱՆԷ

Սիրելի, թոյլ տո՛ւէք որ պատմեմ այս աղջկերանց թէ ինչ պատահեցաւ, երբ որ Մահմետականները վերառին Աղէքսանդրիա քաղաքը։

ՏԻԿԻ՛Ն

Մեծաւ ուրախութեամբ, սիրելի։

ՅՈՒԼԻ՛ԱՆԷ

Աղէքսանդրիա քաղաքումը մին հռչակաւոր մատենադարան կար, որը որ Եգիպտոսի թագաւորները մեծ խընամքով պատրաստել էին։ Այդ մեր գրեանց պէս գրեանք չէին, պատճառը որ այն ժամանակը տպագրել չէին իմանում, այլ ամէնքն էլ ձեռագիր էին։ Մահմետական-

ները այս քաղաքը առնելով, մին գիտնական, որը որ նը-
րանց զօրապետի բարեկամն էր դառած խնդրեց նրանից
այդ գրեանքը։ Զօրապետը չհամարձակուեց կատարել
նրա խնդիրքը։ Նամակ գրեց նա իրա տէրին, իմանալու
համար թէ ինչ պիտի անել այդ գրեանքը։ Ահա ինչ
պատասխանեց նորա տէրը. «Եթէ այդ ամեն գրեանց մէջ
պարունակվում են միևնոյն բաները, ինչ որ Ղուրանի
մէջ են գտանվում, աւելորդ են, ուրեմն պէտքէ այրել.
եթէ ուրիշ բաներ են գտանվում, նոյնպէս պէտքէ այրել։
Ուստի նոքա այրեցին այդ մատենադարանը, որտեղ որ
այնքան գրեանք կային որ վեց ամիս բաւականացան բաղ-
նիքներ տաքացնելու։

ՇԱՐԼՈՏՏԱ

Ո՜հ, իմ սիրելի, այդ ինչպիսի մեծ վնաս է։ Որքան
գանձեր են կորած գիտութեան համար։ Այն մարդը՝
որը որ տուել էր այդ հրամանը, արժանի է որ նորա ա-
նունը մատնուի յետագաների անարգանացը։ Ինչպէ՞ս էր
նորա անունը։

ՏԻԿԻՆ

Եթէ սխալվում չեմ, Օմար առաջին ամիրապետն էր,
Մահմետի ջերմեռանդ առաքեալներից մինն, որը որ իրա
մեծամեծ աշխարհակալութիւններով մեծապէս օգնական
եղաւ իրա կրօնը տարածելու։ Եւգենիա՛, սա՛ դասդ։

ԵՒԳԵՆԻԱ

Սողոմոնի մահուանից յետոյ՝ նորա որդի Ռոբովամը
Թագաւորական աթոռ նստեց։ Ագահ և երիտասարդ

պալատականների խորհուրդները շուտով նրան ապակա-
նեցին։ Ցեղերից տասը ապստամբուեցան և իրանց հա-
մար Յերոբովամ անունով մին Թագաւոր ընտրեցին։
Յուդայի և Բենեամինի ցեղերը միայն հաւատարիմ մը-
նացին Ռոբովամին։ Այն ժամանակից սկսուած՝ երկու
տէրութիւն կար. Իսրայելացւոց տէրութիւն, որին մէջ
Յերոբովամ էր Թագաւորում և Յուդայի տէրութիւն,
որին մէջ Ռոբովամ հաստատեց իրա բնակութիւնը Ե-
րուսաղէմում։ Յերոբովամն էլ Սիւքէմ քաղաքումը նը-
շանակեց իրա Թագաւորութեան կենդրոնը և սկսաւ կռա-
պաշտների օրէնքը պաշտել։ Մին մարգարէ յայտնեց նրան
հրապարակաւ իրա տան մօտալուտ կործանումը։ Յերո-
բովամը բարձրացրուց ձեռը մարգարէի դէմ, բայց ձեռը
իսկոյն չորացաւ. Նա խոնարհուեց Տէրի պատգամաւորի
առաջ և նորանից բժշկութիւն ստացաւ։ Այս միջոցումը
Ռոբովամը նոյնպէս ճշմարիտ Աստուծոյ ճանապարհէցը
մոլորվելով՝ կուռքերի համար խորաններ շինել տուաւ։
Երկնքի վրէժխնդրութիւնը չուշացաւ։ Եգիպտոսի Թա-
գաւոր Սավակիմը տիրապետեց Երուսաղէմին, և կողոպ-
տեց Սողոմոնի տաճարի մէջ դիզած հարստութիւնը, և
իրան ագահութիւնը բաւականացնելուց յետոյ՝ հեռացաւ
այնտեղից։ Ռոբովամը յամառեալ մնաց Աստուծոյ դէմ
իրա ապերախտութեան մէջ և շատ չանցաւ մեռաւ և
նորա որդի Աբիասը Թագաւոր ճանաչուեցաւ։

ՏԻԿԻՆ

Շարունակի՛ր, սիրելի Ադէլ։

ԱԴԷԼ

Սկզբումը Աբիասը հաւատարիմ եղաւ ճշմարիտ Աս-

տուծուն, բայց իմանալով որ Տէրը կանխաւ յայտնել էր Յերոբովամին իւր ցեղի կործանումը, բարեյաջող ժամանակ գտաւ ձեռք բերելու իւր հօրից բաժանուած ցեղերը։ Յերոբովամը իւրան զօրքին առաջնորդ դառած՝ յարձակուեցաւ Թշնամու վերայ, բայց Աբիասը բարձրացնում, իւր ձայնը դէպի Աստուած, քահանաները ածումէին փողը և Իսրայելացիք գլուխները շուռ եկած՝ փախչումէին, և Աբիասը պնդումէր Յերոբովամի ետևէն, առանց կարողանալու նրան հասնել։ Յաղթութեան վերայ ունեցած հպարտութիւնը. մահաբեր եղաւ Աբիասի համար։ Արդարութիւնը մին կողմը դրաւ և ընկնելով այն ամեն մեղաց մէջ, որոնց մէջ ընկել էր իւր հայրը, մեռաւ։ Յերոբովամը յամառեալ մնալով իւր ամբարշտութեան մէջ, մեռաւ քան երկու տարի Թագաւորելուց յետոյ և յաջորդեց բարեպաշտ Ասան, որը որ ոչնչացրուց իւր հօր Աբիասի կուռքերը Աստուծոյ պաշտօնը կրկին նորոգելով։

ՏԻԿԻՆ

Այդ ժամանակը մարգարէների ժամանակ էր, երբէք այդքան մարգարէներ եղած չէին։ Ազիա, Եղիա, Եղիսէ, Զաքարիա, Երեմիա և ուրիշ շատ մարգարէներ, որոնց միայն անունները և նշանաւոր բաներն են մնացել։ Բայց այդ միևնոյն ժամանակումը սուտ մարգարէներ էլ դուրս եկին, որոնք աշխատումէին ժողովրդի միտքը մոլորեցնելու և մոլոր յոյսերով նրանց արածացնելու։ Մարգարէները ո՛չ թէ միայն կրթումէին ժողովրդոց, այլ և տալիս էին, ինչպէս դուք նկատեցիք, աղատաբար Թագաւորներին փրկարար խրատներ, որոնց համարեա՛ թէ միշտ չէին լսում։ «Նոցա բարոյական կեանքը խիստ էր,

և նոցա վարդապետութիւնը կենդանի և ցաւակից։ Տէրի ձայնով նրանք ուղղումէին առանց վախենալու մահից, անեծքներ, այն ամբարիշտների դէմ, որոնք կործանելով ճշմարիտ Աստուծոյ սեղանը՝ զոհեր էին մատուցանում դժոխային ճիւաղներին։ Յետագայ դասումը ձեզ ընդհանուր տեղեկութիւն կ'տամ Եզայի մահից սկսուած մինչև Հրէից ազգի աշխարհիս երեսին վերայ ցրուելը։ Բայց արդէն ժամանակը անց է կենում, մնացէք բարով։

ՔՍԱ՛Ն ԵՒ ՈՒԹՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿ-ՑՈՒԹԻ՛Ւ՛Ն

ՔՍԱ՛Ն ԵՒ ԵՕԹ՛ՆԵՐՈՐԴ ՕՐ։

ՏԻԿԻ՛Ն

Այդ ի՞նչ է, Մարիա՛մ. աչքերդ կարմրած են, մի՞թէ լաց ես եղել։

ՄԱՐԻԱՄ

Ես էլ արժանի չ'եմ այս օրիորդաց կարգումն գտանուել։ Ես շատ չարագործ եմ դառել այն օրից դէսը որ ձեզ տեսած չ'եմ։

ՏԻԿԻ՛Ն

Այդ շատ վատ բան է, սիրելի, բայց դու ճանաչումես քո արած սխալանքը և փոշմանում ես, այդ արդէն մին բան է նշանակում. միայն պէտք է ուղղացնել քեզ։ Սկսի՛ր ուրեմն քո արած սխալանքը այս աղջկերանց առաջ խոստովանելով։

ՄԱՐԻԱՄ

Ես չ'եմ կարող. այդ շատ սարսափելի բան է, և այդ աղջկերքը էլ իմ երեսիս մտիկ տալ անգամ չ'են կամենալ։

ՏԻԿԻ՛Ն

՝Նոքա այնքան բարեսրտութիւն ունեցած չ'են լինել, եթէ այդ բանը իրանց մտքովն էլ անցկացնեն։ ՝Նրանք խմանումեն որ մենք ընդունակ ենք որ և իցէ մեղք գործելու և նա որը որ արհամարհէ մին մեղաւորի, որ

զղջումէ, ինքը մեծ մեղաւոր կ'դառնայ Աստուծոյ առաջ։ Ես հաւաստի եմ որ այդ քո հպարտութիւնն է որ ստիպումէ քեզ անել այդ բանը. պէտք է նորան պատժենք խոստովանելով։

ՄԱՐԻԱՄ

Դուք իրաւունք ունիք այդ ասելու, սիրելի բարեկամ, իմ հպարտութիւնս ստիպումէ ինձ որ մտիկ տամ իմ ծառաներին, ինչպէս իմ ստրուկներին, և բարկանամ երբ որ ինձ ընդդէմ են խօսում։ Երեկ շատ ուտելուց յետոյ՝ զբաղումէի հացս կտոր կտոր անելով և դէս ու դէն քցելով. մայրս ասաց աղախինին որ ձեռիցս առնէ հացը, բայց ես ասացի թէ տակաւին քաղցած եմ և կամենում եմ էլ ուտել։ Ես սուտ էի ասում, ամենևին քաղցած չ'էի, այլ իմ հակառակութենիցն էի ասում։ Իմ մայրս, որը որ այդ լաւ էր նկատում երկրորդ անգամ հրամայեց այն աղջկան առնել ձեռիցս հացը. և որովհետև նա կատարեց նորա պատուէրը, մին լաւ ապտակ հասցրի նրան և կամեցայ երեսը ճանկռտել։

ՏԻԿԻ՛Ն

Արժանի է որ ամաչումես, կամենում չ'եմ քեզ յանդիմանութիւն անել, ըստ որում տեսնում եմ որ դու ինքդ քեզ յանդիմանումես։ Յառաջ քան թէ իմ ասելը թէ ինչպէս պիտի քեզ ուղղացնես, կամենումեմ մին փոքրիկ վէպ պատմել։ Աթէնքումը ժամանակաւ Իլեզայ անունով մին աղջիկ է եղել, որը որ համարեա՛ թէ քո բնաւորութիւնն է ունեցել։ ՝Նա բազմաթիւ ստրուկների տէր էր, որոնց հետ յետին անարգութեամբ էր վարվում։ Այս ստրուկների միջումը Միրա անունով մին աղջիկ

էր գտանվում, երբ որ նորա սեննակի ծառայութիւնն էր անում, նա շատ բարեբարոյ անձն էր և չ'մոռիկ արած իրա տիրուհու անպիտան վարվելուն՝ նորա հետ շատ սիրով էր կապուած։ Եղաւ որ մին օր Եղիզան ճանապարհորդութիւն պիտի անէր ծովով, և որովհետև ճանապարհորդութիւնը շատ հարկաւոր գործոյ համար էր և գնալու տեղումն էլ շատ չպիտի մնար, հետը միայն Միրային վերառաւ։ Հազիւ թէ ծովի մէջտեղումը գըտանուեցան, յանկարծ մին սաստիկ մրրիկ վերկացաւ և նաւը իրան ճանապարհից խոտորեցրուց։ Մին քանի օր ծովի վերայ մնալուց յետոյ՝ նաւաստիները մին կղզի նըկատեցին. որովհետև նոքա իմանում չ'էին թէ ի՞նչ տեղ են գտանվում և ուտելու էլ պաշար չ'ունէին, հարկաւորուեցան այն կղզին մօտենալու։ Նաւահանգիստը մըտնելիս, մին նաւակ եկաւ նրանց հանդէպը և նաւի մէջ եղողներից հարցրին նաւակի մէջ գտնվողները նրանց անունները և ինչպիսի աստիճանի մարդիկ լինելը։ Բարձրամիտ Եղիզան գրեց իրա ազգատոհմի տիտղոսները, որոնցով մին ամբողջ թղթի երես լըրուց. նա կարծեց թէ այդ բանը կստիպէ իրան պատիւը աւելացնելու այդ մարդկանց մէջ։ Բայց ի՞նչպէս մեծ եղաւ նորա զարմացումը, երբ որ այդ մարդիկը երեսները շուռ տուին առանց նորա պատիւ ցոյց տալու։ Բայց ես առաւել նա զարմացաւ, երբ որ Միրան յայտնեց իրա անունը և ազգատոհմը, որովհետև այդ մարդիկը ամենայն կերպ յարգանք ցոյց տուին նրան և ասացին թէ կարող է հրամայել նաւի մէջ ինչպէս մին թագուհի։ Այս խօսքերիս վերայ Եղիզան համբերութենից դուրս եկաւ և ասաց իւր ստրուկին. „Ես քեզ շատ յանդուգն եմ տեսնում որ լըսում ես այդ մարդկանց պատճներին„—Խելքդ գլուխդ

հաւաքի՛ր, Տիկին, ասաց նաւավարը, ձեր հրամանքը էլ Աթենքումը չէք։ Իմացէ՛ք որ երեք հարիւրի չափ ստրուկ իրանց տէրերի բռնութենից յուսահատուած՝ իրանց կեանքը ապահովացնելու համար, եկել են այս կղզիս, որոնք մին հասարակապետութիւն են հաստատել, և այստեղ բոլոր մարդիկը հաւասար են։ Սոքա մին օրէնք են շինել, որին որ դուք էլ պիտի հնազանդվէք թէ կամայ և թէ ակամայ։ Տէրերին հասկացնելու համար թէ որքա՞ն մեղանչել են նոքա իրանց մեծութիւնը չարաչար 'ի գործ դնելով իրանց ծառաների դէմ՝ նրանց դատապարտել են ստրուկ դառնալու իրանց հերթումը։ Ով որ յօժարութեամբ հնազանդվում է, կարող է յուսալ ազատութիւն ստանալու, բայց ով որ մերժում է հնազանդելու մեր օրինացը ստրուկ է մնում յաւիտեան։ Այսօր ժամանակ ենք տալիս ձեր վատ վիճակի հետ ձեզ ընդելացնելու համար, բայց եթէ վաղը ամենափոքր տրտունջ անելու լինիք, յաւիտեան ստրուկ կ'մնաք։„ Եղիզան օգուտ քաղեց այդ թոյլատրութենից և հազարումէկ հայհոյանք արաւ այս կղզոյ և նորա բնակիչների դէմ, բայց Միրան մին վայրկեան ժամանակ ձեռք քցելով և տեսնելով որ ո՛չով իրան մտիկ չէ անում, ընկաւ իրա տիրուհու ոտները և ասաց նրան. „Մխիթարվի՛ր, տիկին, ես քո անբաղդութիւնը 'ի չարն չ'եմ գործ ածել, և քեզ միշտ յարգանք կ'տամ ինչպէս իմ տիրուհուս։„ Երկրորդ օրը նրան բերել տուեցին դատաւորների առաջ Եղիզայի հետ, որը որ նրա ստրուկն էր դառնալ։—„Միրա՛յ, ասաց առաջի դատաւորը, պէտք է քեզ յայտնենք մեր սովորութիւնները, բայց միտդ պահէ՛ր որ քո արած միայն մի զանցառութիւնը քո ստրուկ Եղիզայի կեանքը պիտի արժէ։ Հաւատարմութեամբ միայն բե՛ր այն վարմունքը, որով նա քեզ հետ վարուել է.

Աթէնքումը: Ուժ օր պիտի նորա հետ այնպէս վարուես ինչպէս նա քեզ հետ է վարուել. այդ մասին պիտի երդում ուտես հէնց այս րոպէիս: Նշանակուած ուժ օրից յետոյ դու իշխանութիւն ունիս նորա հետ այնպէս վարվելու, ինչպէս որ քեզ հաճոյ է թւում: Եւ դու Էլիզա. իմացի՛ր որ ամենափոքր ընդդիմութիւնը քեզ ստրուկ կ՚շինէ քո բովանդակ կեանքումը:

Այս խօսքերիս վերայ Էլիզան և Միրան սկսեցին լաց լինել, և Միրան ընկնելով դատաւորի ոտները խնդրեց որ երդում ուտելուցը ազատ պահէ իրան:

—Քո սիրոյն միայն այս կարող եմ անել, պատասխանեց դատաւորը, այսինքն՝ ուժ օրուայ փորձողութիւնը համառօտելով չորս օրուայ շինել, բայց էլ մի՛ խօսիր, եթէ խօսելու լինիս էլի ուժ օր պիտի շարունակես այդ փորձողութիւնը:„ Ուստի Միրան երդում կերաւ. և յայտնեցին Էլիզային որ էգուցւանից ծառայութիւնը սկսվում է: Միրայի մօտ երկու կնիկ ուղարկեցին, որոնք պէտք է գրէին նրա ամեն խօսքերը և գործքերը: Էլիզան տեսնելով որ այդ անհրաժեշտ հարկաւորութիւն է, իրա անէլքը խոհեմութեամբ սկսաւ, որովհետև չ՛մնիկ արած իրա բարձրամտութեանը, մաքումը դրաւ այնպէս ճիշտ կատարել իրա ծառայութիւնը, որ Միրան առիթ չունենայ իրա հետ վատ վարվելու, բայց նա չէր մտածում որ այդ աղջիկը պէտք էր իրա կամածին բնաւորութեան օրինակը ճշտութեամբ անէր: Հետևեալ օրը առաւօտանից Միրան թխեց զանգակը և Էլիզան քիչ մնաց որ գլուխը կտրէր անկողնից վեր թռչելու ժամանակը, Միրան մին բարկացած ձայնով ասաց նրան. „Ինչո՞վ է զբաղուած լինում այս աղջիկը. համարես՝ թէ միշտ մին քառորդ ժամից յետոյ է գալիս, երբ որ նրան կանչում եմ:—Ձեզ

հաստատցնում եմ, տիկին, որ ինչ որ ձեռումս ունէի, թողեցի, հէնց որ ձեր ձայնը լսեցի:—Եւ լսի՛ր, ասաց Միրան, գլուխդ դու միշտ արդարացնում ես և անյարմար պատասխան ես տալիս: Ինձ տո՛ւր զգեստներս որ վերկենամ:„ Էլիզան հոգոց հանելով գնաց բերեց այն զգեստները, որը որ Միրան նախնթաց իրիկունը հագել էր, բայց Միրան նորա երեսին տալով հանդերձները, ասաց. „Ի՞նչպէս յիմար է այս աղջիկը, ամեն բան պէտք է ասած նրան. միթէ՞ դու չես իմանում որ կապոյտ զգեստս եմ կամենում հագնել այսօր:„ Էլիզան երկրորդ անգամ հառաչանք քաշեց և առանց համարձակելու մին բան բերնիցը դուրս հանել. որովհետև նա լաւ միտը ունէր որ ողորմելի Միրան Աթէնքումը հարկադրուած էր համբերելու իրա ինքնահաւան բնաւորութեանը: Երբ որ նրա տիրուհին հագաւ զգեստը և երբ որ նրա նախաճաշիկը տարաւ, գնաց որ ինքն էլ նախաճաշիկ ուտէ, բայց հազիւ թէ նստեց, Միրան զանգակը թխեց և այդ բանը մին քանի անգամ պատահեց մին ժամի մէջ և էն էլ չնչին բաների համար էր որ Միրան նրան կանչում էր: Երկու ժամից յետոյ տիկինը յայտնեց որ կամենում է գնալ թատրոն և ցանկանում է զարդարուել: Նա ասաց Էլիզային թէ կամենում է մազերը մեծ մեծ գանգուրներ անել, բայց տեսաւ որ այդ բանը գլուխը շատ մեծացնում է, ուստի հրամայեց որ այդ զարդարանքը քանդէ մին ուրիշը շինելու համար. և հազիւ թէ մինչև եօթն ժամը տանից դուրս եկաւ: Էլիզան հարկադրուած էր ոտի վերայ կանգնելու բոլոր օրը և այդ բաւական չէր. հարկաւոր էր համբերելու հազարումէկ կոշտ խօսքերի, որովհետև մազերը սանդրելիս, դիպուածով մազերիցը քաշ տալուն համար, Միրան մին լաւ

ապտակ հասցրուց։ Ի՞նչ էր մնում որ Իլեզան համբե-րութենից դուրս գայ, բայց յանկարծ միտը բերեց որ ինքը տասը ապտակ էր հասցրել ողորմելի Միրային և այդ յիշատակը ստիպեց նրան լռել։ Վերջապէս Միրան այնպէս լաւ պատկերացրուց իրա տիրուհու յիմարութիւնները որ Իլեզան համբերեց նրա վարմանց ամենայն խըստութեանը։ Չորս օրից յետոյ Իլեզան նեղութենից հիւանդացաւ։ Միրան պառկեցրուց նրան իրա անկողնոյ մէջ. նրա համար ուտելի թան բերաւ և այնպէս ճշտութեամբ ծառայեց, ինչպէս որ Աթէնքումը եղած ժամանակը ծառայումէր։ Բայց Իլեզան առաջուայ մեծամտութեամբը չէր ընդունում այդ ծառայութիւնները. անկեղծ սրտի այնպէս ամաչեց իրա ստրուկի բարեսրտութենից, որ կ'համաձայնէր ինքը նրա տեղ ստրուկ լինելու բովանդակ կեանքումը որպէսզի կարող լինի ուղղելու իւր սըխալմունքները, որ արել էր նրա դէմ։

Այն նաւի մէջ, որտեղ որ Իլեզան էր գտնվում, բռնել էին մի քանի Աթէնացի բնակիչներ, բայց որովհետև նրանք իրան աստիճանի մարդիկ չէին. Իլեզան էլ նրանց հետ այնքան ծանօթ չէր։

Մի ամսից յետոյ ամենեցուն էլ մի տեղ հաւաքեցին, և այն դատաւորները, որոնք նշանակուած էին այդ մասին՝ քննեցին նրանց արարմունքը։ Նրանք հարցրեցին ստրուկ դառած տէրերից թէ ինչպէ՞ս է համոյ թվում իրանց այժմեան վիճակը։ Նրանք ամէնքն էլ հոգոց հանելով պատասխանեցին թէ շատ դժուար բան է իրանց համար հնազանդել այն անձանցը, որոնց իրանց իրանք պիտի հրամայէին։—Եւ ի՞նչի համար դուք կարծումէք թէ իրաւունք ունիք նրանց հրամայելու, հարցրեցին դատաւորները. միթէ՞ բնութիւնը ձեր և նրանց մէջ մին խա-

կական խտրութիւն է դրել։ Ստրուկները, ծառաները և տէրերը միևնոյն հօրից են ստանում իրանց ծագումը և Աստուած նրանց զանազան վիճակի մէջ դնելով, մտքովն էլ անց չ'է կացրել թէ մինը միւսից մեծ է աչքումը ծառան պիտի ջոկուի իրա տէրից իրա տէրոջ վերայ ունեցած սիրովը, իրա աշխատասիրութեամբը և հաւատարմութեամբը. պէտք է որ տէրերն էլ իրանց լաւ վարվելովը քաղցրացնեն այն, ինչ որ ստրուկի վիճակը դառնացնում է։ Դուք երկու փորձողութիւնն էլ արել էք, թող այս բանը ձեզ համար դաս դառնայ երբ որ վերադառնալու լինիք Աթէնք։ Այնպէս մի' վարվէք երբէք ձեր ծառաների հետ. ինչպէս որ չէք ցանկանալ որ ուրիշները վարուին ձեզ հետ։ Դատաւորը երեսը դարձուցանելով դէպի տէր դառած ստրուկները՝ ասաց նրանց. Օրէնքը թոյլ է տալիս ձեզ որ ազատութիւն շնորհէք ձեր ստրուկներին, բայց ստիպում չ'է։ Դուք կարող էք ձեր բովանդակ կեանքումը նրանց այստեղ պահել, դուք կարող էք Աթէնք ուղարկել և նոյնպէս իրաւունք ունիք նրանց հետ 'ի միասին այնտեղ վերադառնալու։ Նա, որը որ կամենումէ ազատութիւն շնորհել իրա առաջուայ տէրին, թո՛ղ գայ այս գրքի մէջ իրա անունը ստորագրէ։„ Դատաւորը յոյս ունէր Միրայից որ ամենից առաջ պիտի ազատութիւն շնորհէ իրա տիրուկին, բայց նա չ'շարժեցաւ իրա տեղից, նմանապէս էլ մի ուրիշ կնիկ և մի գեղեցկադէմ երիտասարդ մնացին իրանց տեղը կանգնած։ Հարցրեցին այդ կնոջից թէ ի՞նչու համար ազատութիւն չ'է տալիս իրա տիրուհուն, որը որ մի բարեսիրտ պառաւ կնիկ էր։—Ինդուր որ, պատասխանեց այն կնիկը, որին անունը Բէլեդ էր, ես նրան քսան տարի ստրուկ դառած, իրաւունք է որ այդչափ

տարի էլ փոխարէնը տէր դառնամ: Նեղացել եմ հնազանդելուց, կամենում եմ երկար ժամանակ զուարճանամ հրամանատար լինելովս։»

Միւնոյն վայրկենումը այն երիտասարդը, որին անունը Զէնոն էր: ասաց դատաւորին. «Ես ամենևին չըմտացի ստորագրելու իմ տէրի ազատութիւնը, որովհետև նա վերջացել է ստրուկ լինելուց այն վայրկենումը՝ երբ որ ես իշխանութիւն ունեցայ իմ սրտի ուզածին պէս նրա հետ վարվելու։ Ներողութիւն եմ խնդրում նորանից որ այս մի քանի օրը ստիպուած եղայ նորա հետ վատ վարվելու, որովհետև օրէնքը ստիպում էր ինձ նորա վարմանցը օրինակը անելու։ Ես ձեզ հաւատացնում եմ որ ես նորանից աւելի չարչարուեցայ: Դուք կարող էք նրան Աթէնք ուղարկել, ես պատրաստ եմ նորա հետ գնալու և իմ բովանդակ կեանքումը նորան ծառայելու, եթէ ինքը պահանջէ. վերջապէս նա ինձ ծախու է առել և չեմ կարծում թէ կարող լինիմ մին որ և իցէ դիպուածով ազատութիւն գտնեմ առանց յետ դարձուցանելու այն փողը, որով նա ինձ առել է։»

—Այդ տղան ինձ համար պատասխան տուաւ, ասաց Միրան, նորա պատմութիւնն էլ իմ պատմութեան պէս է: Փութացէ՛ք ուղարկելու մեզ Աթէնք, որովհետև յուսով եմ որ իմ սիրելի տիրուհին, որը որ արդէն ճանաչեց իմ առ նորա ունեցած սէրը՝ առաջուանից աւելի քաղցրութեամբ վարուի ինձ հետ։»

Եւլեպան ընդմիջեց Միրայի խօսքը և ասաց դատաւորին. «Ես էնդուր վաղ չխօսեցի, որ շփոթը և ամօթը կապկպումէր լեզուս։ Այդ ողորմելի աղջիկը արժանի է իւր բովանդակ կեանքումը իմ տիրուհիս լինելու, իսկ ես արժանի էլ չեմ մինչև անգամ նորա աղախինը դառնալու: Ես մինչև այժմ կարծումէի թէ ամենևին տարբեր ցեղից եմ, և ամենևին էլ չէի սխալվում: Ես գերազանց էի նրանից անունով, հարստութեամբ, հպարտութեամբ և խստասրտութեամբ իսկ նա ինձանից գերազանցվումէր իւր վեհանձնութեամբը, մարդասիրութեամբը, և համբերութեամբը: Ի՞նչ պիտի անէի արդեօք այսօրուայ օրը, եթէ նա իմ տիտղոսներս ունենար: Ես ճանաչեցի հիմիկ նորա իմ վերայ ունեցած գերազանցութիւնը: Ընդունում եմ այսու ամենայնիւ ինձ շնորհած ազատութիւնը և շնորհակալ եմ որ բարեհաճումէ ինձ հետ Աթէնք գալու, որտեղ որ առիթ կ'ունենամ իմ երախտագիտութիւնը նրան ցոյց տալու բաժանելով նորա հետ իմ բոլոր հարստութիւնս և համարելով նորան իմ ընտիր բարեկամներից մինն, որի. խորհուրդներին միշտ պիտի անսամ և պիտի աշխատեմ հետևելու նորա օրինակներին։»

Զէնոնի տէրը, որը որ տակաւին ոչինչ չէր խօսած և որին անունը Զէնոկրատ էր, մօտացաւ դատաւորներին և ասաց նրանց. «Ես Եւլեպայի ամօթապարտութեան կցորդակից եմ, ինչպէս նա, ես էլ եմ չարչարել իմ ստրուկիս, որը որ իւր ազնիւ բնաւորութեամբը շատ գերազանց էր գտնվում ինձանից, նորա պէս ես էլ ցաւում եմ ամենայն անկեղծութեամբ իմ վատ վարմանց վերայ և ինձ ուղղացնելու համար՝ կամենում եմ երջանկացնել Զէնոնի վիճակը:

Այն ժամանակը դատաւորը դատապարտեց Եւլեպային, իւր տիրուհու վերայ կարեկցութիւն չունենալուն համար ստրուկ մնալ իւր բովանդակ կեանքումը և գովասանական խօսքեր ասաց Միրային և Զէնոնին առաքինութեան վերայ և պարտաւորեց նրանց որ վերադառնան Աթէնք Զէնոկրատի և Եւլեպայի հետ: Եւլե-

պան և Զէնոկրատը մինչև Աթէնք վերադառնալը շնորհակալութիւն մատուցին այդ կղզոյ բնակիչներին և ասացին թէ երբէք մոռանալու չ'են նրանցից վերկալած դասերը։ Աթէնք վերադառնալու ժամանակ, Զէնոկրատ և Զէնոն, որոնք մասնաւոր եղանակաւ իմացան Միրայի և Եղիզայի լաւ որակութիւնները, պսակուեցան նրանց հետ Աթէնք հասնելուն պէս։ Որովհետև այս երկու ջերմեռանդ սրտերը չ'էին կամենում բաժանուել իրանց տէրերից թէպէտև ազատութիւն ստացել էին, նրանց տան ամենայն պարտաւորութիւնը իրանց վերայ վերկալան և կատարեցին ամենայն ճշտութեամբ և հաւատարմութեամբ, որ կարող էր օրինակ դառնալ այն ամենեցուն, որոնց որ նախախնամութիւնը ծառայութեան վիճակի մէջ է դրել։ Արդ՝ Մարիամ, ի՞նչ կ'պատահէր արդեօք քեզ հետ, եթէ ստրուկների կղզոյ մէջ գտանուէինք։

ՄԱՐԻԱՄ

Ի՞նչպէս, միթէ՞ իմ աղախինս ինձ կ'ճանկռտէր, միթէ՞ ապտակ կ'տար, յանդուգն և ժպիրհ և ուրիշ էստուր նման խօսքեր կ'ասէր։

ՏԻԿԻ՛Ն

Իրաւացի կ'լինէր այդ, բայց ես այդքանը պահանջում չ'եմ, սիրելի։ Այսուամենայնիւ պէտք է ուղղել այդ սխալանքը։ Էքուց ճաշի ժամանակը ձեզ մօտ կ'գամ և ձեր աղախինը քո տեղը կ'նստացնեմ որ ծառայես նրան։ Դու վախում ե՞ս Մատիլդա։

ՄԱՏԻԼԴԱ

Ինձ այնպէս է թվում, որ այդ բանը չ'պիտի կարողա-

նամ անել։ Մէկ կողմից էլ դոքա այնպէս յանդուգն են որ պատրաստ են մարդոյ պատիւը փչացնելու։ Ես կ'վախեմ նրանց ձեռքը իշխանութիւն տալուցը։

ՏԻԿԻ՛Ն

Դու սխալվում ես, սիրելի Մարիամ. այդ քո կիրքերն են, որոնք քեզ վերայ բերում են ծառաների արհամարանքը և ոչ թէ էնոնք, որ դու անում ես այդ սխալանքից քեզ ուղղացնելու։ Ուստի ես յուսով եմ որ Մարիամը կ'անէ այն՝ ինչ որ նրան ասացի։

ՄԱՐԻԱՄ

Մեծաւ ուրախութեամբ կ'անեմ։

ՏԻԿԻ՛Ն

Ե՛կ քեզ համբուրեմ, թէպէտև վատ գլուխ ունիս, այսուամենայնիւ բարեսիրտ ես։

Մեզ մնում է միայն մէկ տրադընթաց հայեցքուած քցել Հրէաստանի թագաւորութեան վերայ։ Յուդայի և Իսրայէլի թագաւորութեանց բաժանումը եղաւ 975 տարի Քրիստոսից առաջ։ Խօսենք առաջ Իսրայէլի թագաւորութեան վերայ։ Նորա առաջին թագաւորը եղաւ, ինչպէս մենք տեսինք, անբարիշտ Յերոբովամը։ Նրանից յետոյ թագաւորեց նորա որդի Նաբատը, որը որ յափշտակեց թագը։ Նեղացած բերուեցաւ աթոռից Զամբմէի ձեռքով, որուն Ամրի զօրապետն էլ զրկեց թագաւորութենից։ Այս թագաւորը տասներկու տարի իշխանութիւն անելուց յետոյ՝ թողեց թագը իրա որդւոյ Աքաաբին։ Սուրբ գիրք ասում է թէ Աքաաբը գերազան-

ցուեց ամբարշտութեան մէջ իրանից առաջ եկած բոլոր թագաւորներից: Նա պսակուեցաւ Սիդոնի թագաւորի աղջկայ անբարիշտ Յեզաբելի հետ: Եղիայ մարգարէն կանխաւ յայտնեց որ շները պիտի նրա արիւնը լիզեն և լափեն անգութ Յեզաբելի մարմինը, անմեղ Նաբովթի սպանման համար: Աքաաբը սպանուեցաւ մին պատերազմի մէջ և շները լիզեցին նորա արիւնը որ կառքից վայր էր վազում. քիչ ժամանակից յետոյ Յեզաբելը Յէուի ձեռքից լուսամուտից դուրս քցելով՝ միևնոյն կենդանիների կերակուր դառաւ: Նորա յաջորդեց իրա որդի Ոքոզիան, բայց շուտով թագը թողեց իրա եղբօր Յովրամին, որը որ նոյնպէս անբարիշտ էր, բայց չհաւատարուեց իրա հօր Աքաաբին և ոչ էլ իրա մօր Յեզաբելին: Ոքոզիան շատ պատերազմներ արաւ Յուդայի թագաւորների համաձայնութեամբ Ասորոց դէմ: Նա վիրաւորուեցաւ. Իսրայէլացւոց զօրապետ Յէուն չսպասեց մինչև նորա մեռանելը. որովհետև ինքը կամենում էր նորա տեղ թագաւորել, նրան նենգաւոր սպանեց և ինչպէս Յեզաբելի մարմինը քցեցին շների առաջ: Յէուն, որուն սպանիչ կարելի է անել, մէկ անգամումը սպանել տուեց Աքաաբի եօթանասուն որդուցը: Յէուն Աստուծոյ փառաց համար իրա ջերմեռանդութիւնը ցոյց տալուց յետոյ՝ մոլորութեանց մէջ ընկաւ և մեռաւ թողնելով թագաւոր իրա որդուն Յովաքազին: Իսրայէլացւոց թագաւորութիւնը երկար ժամանակ մարդասպանութեանց և անգթութեանց տեսարան եղաւ շարունակ մինչև Ոքիաս. այս այն ժամանակն է, երբ որ Ասորեստանի թագաւոր Սալմանասարը, Իսրայէլացւոց յաղթողը, փոխադրեց նոցա Ասորւոց և Մեդացւոց երկիրները, որտեղից նրանք ցրիւ եկան Ասիայի բոլոր հիւսիսային կողմերը և երբէք

էլ յետ չդառան իրանց երկիրը: Այսպէս վերջացաւ Իսրայէլացւոց թագաւորութիւնը 255 տարի Յուդայի թագաւորութեան բաժանուելուց յետոյ:

Խօսենք այժմ Յուդայի թագաւորութեան վերայ: Մենք տեսանք որ Սողոմոնին յաջորդեց Ռոբովամը, որոյ թագաւորութեան ժամանակ եղաւ այդ բաժանումն: Նորա յաջորդեցին Աբիաս և Ասա: Ասան թողեց թագը Յովսափատին: Սա շատ բարեպաշտ և արդար թագաւոր էր և ճշտութեամբ պահպանեց օրէնքները: Տեսնելով որ ինքը արդէն հասակը առած է՝ բազմեցրուց աթոռի վերայ իրա որդի Յովրամին, որը որ սկզբումը իրան յոյս էր տալիս, բայց երբ որ Աքաաբի աղջկայ Աթալիայի հետ պսակուեցաւ, իսկոյն չարագործ դառաւ և հրամայեց սպանանել իրա եղբօրցը: Նրան յաջորդեց իրա որդի Ոքոզիան, որը որ սպանուեցաւ Յէու թագաւորի զինուորներից, այն ժամանակ, երբ որ Իսրայէլացւոց թագաւոր Յովրամը նենգաւոր սպանուեցաւ: Նորա մայր Աթալիան կամեցաւ իրա համար թագաւորական գահը ձեռք բերելու հնար գտնել և հրամայեց հանգուցեալ թագաւորի որդւոցը սպանանել: Միայն Յովասը ազատուեցաւ, որովհետև Յովսաբէթ անունով մին քահանայապետի կնիկ մին քանի տարի պահեց նրան տաճարի մէջ: Եօթն տարի բռնակալութիւն անելուց յետոյ՝ Աթալիան սպանուեցաւ Յովասի պաշտօնակատարներից, որուն ժողովուրդը թագաւոր էր հռչակել: Յովաս սկզբումը արդարութեան ամենայն ճանապարհովը գնաց, բայց շուտով սկսեց տատանուել նորա առաքինութիւնը, և կուռքերի սեղանները կրկին կանգնել և Զաքարիա քահանայապետը սպանուեցաւ: Աստուծոյ պատուհասը շուտով երևեցաւ, Ասորիք յաղթական մտին Երուսաղէմ

և Յովասին սպանեցին իրա անկողնոյ մէջ: Նորա որդի Ամասիան սպանեց իրա հօր սպանողներին, բայց նրանից առաւել երջանիկ չդառաւ, որովհետև բարեպաշտ չէր: Նորա որդի Ոզիասը յաջորդեց նրան, բայց բորոտութենից բռնուեցաւ, վասնզի սկսաւ անօրէնութիւն անել քահանայական իշխանութեան վերայ և ստիպուած եղաւ կառավարութիւնը յանձնել իրա որդւոյ Յովաթանին, որը որ ընտիր և առաքինի անձն էր: Նորա որդի Աքազը յաջորդեց նորան, որը որ նորոգեց կռապաշտութեան ամենայն պղծութիւնները: Այդ հրէշի բովանդակ ղեկավարութեան ժամանակը ներկայացնում է միայն սուգ և աւերումն: Անակնկալ խաղաղութիւն հաստատեց Հրէաստանումը նորա որդւոյ Եզեկիասի ժամանակը, որը որ առաքինի և քաջ թագաւորներից մինն էր: Աստուած կամենալով փորձել նորա առաքինութիւնը, վերկացնել տուաւ նրա դէմ Ասորոց թագաւոր Սենեքերիմին: Եզեկիասը իրա յոյսը դրաւ Աստուծոյ վերայ, որը որ գիշերը ուղարկելով մին հրեշտակ սպանել տուաւ 185 հազար մարդ Սենեքերիմի բանակումը: Այսօրինակ արիւնհեղութենից սարսափուած՝ փախաւ Սենեքերիմը և սպանուեցաւ իրա երկու որդոց ձեռից կուռքերի երկրպագութիւն տալու ժամանակ: Եզեկիասը մեռաւ և ժողովուրդը նրրան շատ ափսոսաց: Նորա որդի Մանասէն նմանող չեղաւ նրան, կռապաշտ, սրբապիղծ և ճշմարիտ Աստուծոյ երկրպագողներին միշտ արիւնածարաւ լինելով՝ շուտով իրա մեղաց պատիժը ստացաւ: Ասորիք յարձակուեցան Հրէաստանի վերայ և երկաթի շղթաներով կապած տարին նրան Բաբիլոն, թշուառութիւնը զղջումն քցել տուաւ նորա սրտի մէջ և նրա յաղթողները 'ի գութ շարժուած նրա վերայ, ուղարկեցին կրկին թագաւորու-

թիւնը, նա իրան արած չարութիւնները մոռացնել տուաւ իրա առաքինութեամբը: Նորա որդի Ամոնը յաջորդեց նրան, որը որ հետևող եղաւ նորա մոլութեանցը և ո՛չ նրա զղջմանը և սպանուեցաւ իրա հպատակների ձեռամբ: Եզեկիասի երջանիկ օրերը երևեցան Յովսիասի թագաւորութեան ժամանակը: Նա ամենևին անհետ արաւ իրա թագաւորութեան մէջ կռապաշտութեան հետքերը: Մեռաւ երեսուն և ութ տարի թագաւորելուց յետոյ, մին վէրքից, որ ստացել էր Եգիպտոսի թագաւոր Նէքավայի դէմ պատերազմելու ժամանակ: Նորա որդի Յովափազը ամենևին հետևող չեղաւ իրա հօր բարեպաշտութեանը, նա յաղթուեցաւ Նէքավայից և գերի վարեցաւ Եգիպտոս: Յաղթողները յանձնեցին թագը նրա եղբօր Յովակիմին, որը որ ընկաւ ամենայն տեսակ մոլութեանց մէջ և ինքն էլ ինչպէս իրա եղբայրը գերի վարեցաւ Ասորեստանի թագաւոր Նաբուգոդոնոսորից: Մին քանի տարուց յետոյ՝ Յովակիմը ազատութիւն ըստացաւ խոստանալով տարուց տարի հատուցանել մին նշանակեալ հարկ: Երեք տարի հարկը տալուց յետոյ՝ Յովակիմը ապստամբուեցաւ և սպանուեցաւ: Նորա որդի Յեքոնիան, որ Յովակիմ էլ էր կոչվում, նրա տեղը թագաւոր նստեց, առանց Նաբուգոդոնոսորի համաձայնութեանը: Ասորոց թագաւորը կրկին պաշարեց Երուսաղէմը և գերի տարաւ Բաբիլոն թագաւորին, նորա մօրը, ողջ թագաւորական գերդաստանը, մեծամեծ պալատականներին և ուրիշ տասը հազար գերիներ, այնպէս որ Հրէաստանումը միայն այնքան մարդ մնաց, որոնք հազիւ բաւական էին երկրի արտերը անգործ չթողնելու: Նաբուգոդոնոսորը այնտեղ թողեց զրկուած թագաւորի եղբօր Սեդեկիային, որպէսզի կառավարէ այն թշուառ

մնացողներին: Սեդեկիասը անխոհեմութեամբ մերժեց իւր հարկը տալու իւր բարերարին: Նաբուգոդոնոսորը յարձակուեցաւ նորա վերայ, մտաւ Երուսաղէմը ջահը ձեռին բռնած և ամենեցուն սրի բերան տուաւ, կործանեց շինութիւնները և հիմնայատակ քանդեց տաճարը: Մնացած սրբազան անօթներն էլ խորտակել տուաւ, մէկ խօսքով մարգարէներից գուշակած թշուառութիւնները կատարեցան: Հրեայք մնացին գերութեան մէջ մինչև 536 Թուականը Քրիստոսի ծննդից առաջ, երբ որ Կիւրոսը դուրս բերաւ այն հռչակաւոր հրովարտակը, որով թոյլատրում էր Հրէից իրանց երկիրը վերադառնալու: Այդ ժամանակից հետէ նոքա հաստատեցին մին առանձին թագաւորութիւն, որ առաջ Պարսից ներքոյ և յետոյ Աղէքսանդրի և Ասորեստան գտնուող նորա յաջորդների ներքոյ մնաց մինչև 153 Թուականը Քրիստոսից առաջ. երբ որ Անտիոքոս—Եպիփան սկսաւ բռնակալութիւն անել նրանց վերայ: Այս թագաւորը աշխատեց կործանելու տաճարը, որը որ նորից էր շինուել և սպառսպուռ ոչնչացնելու Մովսէսի օրէնքը և բովանդակ Հրէից ազգը, բայց նա մեծ արգելք գտաւ Մակաբայեցւոց կողմանէ, իրա մտքումը դրած նպատակին հասնելու, Այդ ազգի ախոյանները Անտիոքոսի և նորա յաջորդների ամենայն հնարքները 'ի դերև հանեցին: Այս միջոցումը 61 տարի Քրիստոսից առաջ Պոմպէոսը Հրէից հարկատու շինեց Հռոմայեցւոց թագաւորութեանը: Ահա՛ այսպէս ձև կերպեցին նոքա մին փոքրիկ թագաւորութիւն Հռոմայեցւոց իշխանութեան ներքոյ, մինչև Հրէից ապստամբութիւնը 65 Թուականին Քրիստոսի ծնուելուց յետոյ. Տիտոսը Երուսաղէմը պաշարեց 70 Թուականին և հիմնայատակ կործանեց: Այն ժամանակից սկսուած ցիր ու ցան եղան Հրէաները աշխարհիս երեսին:

ՇԱՐԼՈՏՏԸ

Տեսնում եմ որ նոքա արժանի էին այդպիսի թշուառութեանց որոնք նրանց հետ պատահեցին: Պէտք է խոստովանած որ նրանք շատ յիմար էին և մեծ հակամիտութիւն ունէին դէպի կռապաշտութիւնը. Ի՞նչպէս այն ամեն հրաշքներից յետոյ որ արել էր Աստուած նրանց հարց համար գնում են երկրպագութիւն անելու ոսկեղէն որթերի, ասելով. „Ահա՛ այն աստուածները, որոնք մեզ հանեցին Եգիպտոսից. ահա՛ այն աստուածները, որոնց պիտի երկրպագենք:

ՏԻԿԻ՞Ն

Իսրայէլացիք անկասկած մեծ հակամիտութիւն ունէին դէպի կռապաշտութիւնը, բայց նրանց շրջապատող ազգերի վատ օրինակները պակաս ձեռնտու չ'էին լինում նըրանց կռապաշտութեան մէջ քցելու: Տեսնում է՞ք արդեօք, սիրելի օրիորդներ, Աստուծոյ հրամանի արդարութիւնը և իմաստութիւնը, երբ որ տալիս էր նա Հրէից Աւետեաց երկիրը մտնելու ժամանակ. „Դուք պիտի ոչնչացնէք այնտեղ բնակվող ժողովուրդներին.„ Ես տեսի այնպիսի մարդիկ, որոնք հաստատում էին թէ այդ շատ անգութ հրաման է եղել, էնդուր համար որ խորհրդածութիւն չ'էին անում այն բանի վերայ, ինչ որ պատահեցաւ Իսրայէլացւոց հետ այդ հրամանին անհնազանդ գտնուելուն համար: Ստոյգ բան է որ առաւել օգտաւէտ է մեղաւորների համար մեռնել առաջի անդամումը, երբ որ մին մեղք գործելու լինին, քան թէ մնալ աշխարհիս երեսին էլ առաւել մեծամեծ մեղքեր անելու համար: Այդ մին անիրաւ ողորմութիւն կ'լինի,

եթէ դատաւորը շնորհելու լինի այն աւաղակ մարդոյ կեանքը, որը որ ճամբումը ամեն անցկենողների սպանումէ նրան եղած չէղածը յափշտակելու համար։ Հասարակութեան վերայ ունեցած սէրը հենց այդ մարդուն համար անգամ ստիպումէ որ նորա կեանքը խլուի և եթէ մին Թագաւոր անտեղի կարեկցութեամբ կրկին շնորհէ նորա կեանքը և ազատութիւնը, ապագայ ժամանակներում եղած ամենայն մարդասպանների պատճառը ինքը կ՚լինի։ Ահա՛, այսօրինակ եղև Իսրայելացւոց կարեկցութիւնը այն ժողովրդոց դէմ, որոնց Աստուած դատապարտել էր, որովհետև նրանց յանցանքները մինչև նրանց կատարն էր հասել, քանզի Աստուած իմանումէր որ փոխանակ իրանց ուղղացնելու ապագայ ժամանակումը առիթ պիտի տան Իսրայելացւոց զանազան մեղքերի մէջ ընկնելու։

Վերջ։

Ս.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Эривань, Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Չէրի Թագաւորացն (վէպ) 6
Աշխարհիս ստեղծուիլը 21
Հետաքրքիր կնիկ 24
Կային և Աբէլ 27
Գեղամուհի և հրեշ (վէպ) 30
Ջրհեղեղ 47
Ֆատալ Ֆորտունէ (վէպ) 50
Բաբելոնի աշտարակաշինութիւնը 64
Չարմանտ Թագաւորն (վէպ) 69
Աբրահամ և Սառայ 80
Սոդոմ և Գոմոր քաղաքների այրուիլը 85
Աշխարհագրութիւն, առաջին դաս 86
Այրի կնիկը և իրա երկու աղջիկը (վէպ) . . . 87
Իսահակ և Ռեբեկայ 93
Փարոսը կամ լուսատու աշտարակը 95
Աշխարհիս եօթն հրաշքները 96
Լաբիւրինտոսը 98
Աշխարհագրութիւն, երկրորդ դաս 102
Յակոբ և Եսաւ 103
Դէզիր Թագաւորը (վէպ) 106
Յովսէփը և իրան եղբայրքը 113
Մին բարի գործ չի մնայ երբէք առանց վարձատրութեան 120
Երախտագէտ առիւծ 123
Լիկուրգ իմաստունը 126
Մովսէսը ազատվումէ ջրից 128
Աշխարհագրութիւն, երրորդ դաս 130
Արշալոյս (վէպ) 131
Աստուած երևումէ Մովսէսին 140
Երեք ցանկութիւնք (վէպ) 142

Աշխարհագրութիւն չորրորդ դաս 146
Եգիպտոսի եօթն հարուածները 147
Փիլիմոն և Բաւկիս (պատմութիւն) 150
Աշխարհագրութիւն հինգերորդ դաս 153
Կարմիր ծովի միջով անցկենալը 154
Ձկնորս և ճանապարհորդ (վէպ) 164
Տասնաբանեայ պատուիրանքները 170
Աշխարհագրութիւն վեցերորդ դաս 174
Կանուտը և իրա պալատականները 175
Մարդը և դդումը 176
Եփրայեցիք անապատում 177
Ժոլիէտտա (վէպ) 189
Աշխարհագրութիւն, եօթներորդ դաս 199
Բորոտը 202
Երիքով քաղաքի առնուիլը 203
Աստոլփի լուսնեակի մէջ ճանապարհորդութիւն անելը 211
Գաբաւօնացիք 217
Յեսուն կանգնեցնումէ արեգակին 219
Աշխարհագրութիւն ութերորդ դաս 221
Մարգարիտան Շվէտացւոց թագուհին . . . . —
Տիտի թագաւորազն (վէպ) 224
Իսրայելացիք ընկնումեն Ամաղեկացւոց և Մադիա-
նացւոց լծի տակ 240
Յեփթայէի արած ուխտը 243
Մեղուների փոքր թագաւորութիւնը 246
Տիտի թագաւորազնի կեանքը 248
Սամսոնի մահը 263
Բօօզ և Հռութ 267
Եղկանան և Աննան 270
Ֆրանսիայի պատմութիւնը 272
Չարագործ կնիկը (վէպ) 276
Սիդօնի թագաւոր Աբդոլոնիմը 291
Սպիրիտուել թագաւորազնը (վէպ) 294
Սաւուղը խնայումէ Ագագ թագաւորի կեանքը . 307
Աշխարհագրութիւն իններորդ դաս 309
Սաւուղը կամենումէ սպանել Դաւթին 313
Դաւիթը մնումէ Սաւուղի վրանը 314
Չինացւոց պսակը 317
Բէլոտ և Լեարոնէտ (վէպ) 320
Սաւուղը կանչել է տալիս Սամուէլի հոգին . . 333
Ազնուականը և երևոյթը (վէպ) 334
Դաւիթը թագաւոր է նստում 340
Դէմէտրոսի մեծահոգութիւնը 347
Նորմանդիայի պատմութիւնը 355
Աշխարհագրութիւն տասներորդ դաս 357
Պերիկլէսը և նաւավարը 358
Աստուած ուղարկումէ Դաւթի մօտ Գադ մարգարէն 361
Սողոմոնը թագաւոր է ճանաչվում 362
Սողոմոնը տաճար է շինում Երուսաղէմում . . 366
Մահմէդը 370
Աղէքսանդրեա քաղաքի մատենադարանը . . . 371
Ռոբովամը 372
Աբիասը 373
Ասան . . . . —
Սարուկների կղզին (վէպ) 377
Հրէից աշխարհքիս երեսին ցրուիլը 387

Վրիպակք տպագրութեան

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
3	16	եթէ	թէ
4	6	հաւագուին	հաւաքուին
11	12	բանդի	բանտի
12	29	երկրամոլութեամբ	որկրամոլութեամբ
16	11	շնիկը:	շնիկը
22	16	ընդունած	ընդունեց
38	7	Փոքր	փոքր
—	12	է	էր
40	10	դողդողալով	դողդողալով
42	20	եր	էր
46	3	գահլիճի	դահլիճի
—	7	բաղտաւորութիւնը	բաղդաւորութիւնը
47	5	փարձագրութեան	փարձատրութեան
56	8	կենսադրութիւն	կենսագրութիւն
—	25	ատտիճան	աստիճան
—	—	ռոճիկս:	ռոճիկ:
59	29	Գրացեօգնայի	Գրացիօզայի
73	9	միշա	միշտ
76	4	լինի	լինել
—	11	պէաք	պէտք
77	4	երիաասարդներին	երիտասարդներին
78	18	պակասութիւնրը	պակասութիւնները
80	28	Աբրհամը	Աբրահամը
81	19	Աբրհամին	Աբրահամին
84	20	քեղ	քեզ
85	16	Դովաը	Դովտը
—	28	շաա	շատ
87	12	բաղտաւոր	բաղդաւոր
88	6	աեսաւ	տեսաւ
—	15	աուած	տուած
99	13	Բաքոոը	Բաքոսը
—	21	տալսւ	տալու
—	24	խեղտուեց	խեղդուեց
100	6	հարիւրապիտ	հարիւրապետ
100	9	ել	էլ
101	27	Գաղիայ	Գաղղիայ
108	26	ուղակեց	ուղարկեց
110	14	թնթից	քնթից
112	16	եր	էր
116	27	փարձաարելու	փարձատրելու
119	7	յետոյ	Յետոյ
122	21	բաղտի	բաղդի
124	11	(барецъ)	(борецъ)
—	17	բաղտաւոր	բաղդաւոր
126	6	անբաղտ	անբաղդ
127	7	աունը	տունը
128	10	ծնուվեց	ծնվեց
132	19	բաղտաւորութեան	բաղդաւորութեան
134	21	բաղտաւոր	բաղդաւոր
135	9	բաղտաւոր	բաղդաւոր
—	27	բաղտաւորութեան	բաղդաւորութեան
140	4	բաղտաւորութեանց	բաղդաւորութեանց
142	11	բաղտաւորութեան	բաղդաւորութեան
—	12	հարուսա	հարուստ
147	2	Հարլանդիայի	Հոլանդիայի
—	—	Նուրտ	Նուրտ
—	5	Աոտուրիան	Աստուրիան
—	12	Նուեթլանդը	Նուեթլանդը
155	22	շինելով	լինելով
162	5	ել	էլ
163	2	ենթատրում	ենթադրում
165	15	բաղտաւոր	բաղդաւոր
—	16	բաղտաւոր	բաղդաւոր
—	24	բաղտաւորն	բաղդաւորն
—	29	բաղտաւոր	բաղդաւոր
166	20	դժբաղտութեան	դժբաղդութեան
167	7	բաղտաւորութիւնը	բաղդաւորութիւնը
—	15	բաղտաւորութեան	բաղդաւորութեան
168	4	դժբաղտ	դժբաղդ
—	5	Աւտուծոյ	Աստուծոյ
—	7	բաղտաւոր	բաղդաւոր

Եր.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
168	15	բաղտաւոր	բաղդաւոր
—	19	անբաղտ	անբաղդ
170	14	առաւոտեան	առաւօտեան
192	15	ել	էլ
193	5	Տարաբաղտաբար	Տարաբաղդաբար
235	7	անբաղտութիւնը	անբաղդութիւնը
240	8	համար:	համար,
252	8	ո և իցէ	որ և իցէ
253	6	բարեբաղտութեան	բարեբաղդութեան
259	14	անբաղտութեան	անբաղդութեան
—	15	անբաղտութեան	անբաղդութեան
261	12	ղրացու	դրացու
296	18	այնպես	այնպէս
298	2	բաղտաւորութիւնը	բաղդաւորութիւնը
—	6	չ՛կորցնել	չ՛կօրցնեմ
—	24	բարեբաղտութիւնս	բարեբաղդութիւնս
—	25	բարեբաղտութեանը	բարեբաղդութեանը
301	23	դժբաղտութիւնները	դժբաղդութիւնները
304	5	թագաւորութիննները	թագաւորութիւնները
305	15	դտանուել	գտանուել
322	9	մատենատարան	մատենադարան
324	6	բաղտաւոր	բաղդաւոր
—	14	դժբաղտ	դժբաղդ
326	22	թագաւրագնը	թագաւորագնը
331	13	ամենաբաղտաւոր	ամենաբաղդաւոր

681

0004728

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004728